



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԹՈՒՐԳԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ
ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 351/354
ԳՄԴ 67.99(2)116.2
Հ 872

*Տպագրվում է ԵՊՀ միջազգային
հարաբերությունների ֆակուլտետի և
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհուրդների որոշմամբ*

Խմբագրությամբ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր
Ա. Հ. Միմոնյանի և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պ.գ.դ., պրոֆեսոր **Ռ. Ա. Սաֆրաստյանի**

Հովսեփյան Լ. Ս.

Հ 872 Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և
անվտանգության ոլորտի բարեփոխումները/Լ. Հովսեփյան, -
Եր.: 2014 – 360 էջ:

Գրքում ուսումնասիրվում և դիտարկվում են Թուրքիայի Հանրապետության զինված ուժերի համալիր արդիականացման գործընթացը, դրա ռազմաքաղաքական պատճառներն ու նշանակությունը, ռազմականացման հիմնական միտումները, պաշտպանական քաղաքականությունը, անվտանգության ոլորտի բարեփոխումները՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով թուրքական, ամերիկյան մի շարք պաշտոնական փաստաթղթեր, տեղեկագրեր, ինչպես նաև այլ աղբյուրներ ու վերլուծական գրականություն:

Գիրքը նախատեսված է արևելագետների, միջազգայնագետների, պատմաբանների, ուսանողների ու ընթերցող լայն շրջանակների համար: Այն կարող է ծառայել նաև որպես օժանդակ ձեռնարկ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Տարածաշրջանային քաղաքականություն» մագիստրոսական ծրագրի շրջանակում:

ՀՏԴ 351/354
ԳՄԴ 67.99(2)116.2

ISBN 978-5-8084-1841-7

© ԵՊՀ հրատ., 2014
© Լ. Հովսեփյան, 2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЛЕВОН ОВСЕПЯН

**МОДЕРНИЗАЦИЯ ОБОРОННОГО КОМПЛЕКСА
И РЕФОРМЫ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ ТУРЦИИ**

*Рекомендовано к печати Учеными Советами Факультета Международных
отношений ЕГУ и Института Востоковедения НАН РА*

YEREVAN STATE UNIVERSITY

LEVON HOVSEPYAN

**TURKEY'S DEFENSE SYSTEM MODERNIZATION AND
SECURITY SECTOR REFORMS**

*Is recommended for publication by the Scientific Councils of the Faculty of
International Relations of YSU and the Institute of Oriental Studies of NAS RA*

ЕРЕВАН
YEREVAN
2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----- 7

ԳԼՈՒԽ 1. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՆԱԿԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

- 1.1. Թուրքիայի պաշտպանական ներուժի կայացումն ու զարգացումը Սառը պատերազմի տարիներին -----21
- 1.2. Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները Սառը պատերազմի ավարտից հետո -----42
- 1.3. Բանակի արդիականացման գործընթացը 1990-ական թվականներին -----70

ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

- 2.1. Ռազմարդյունաբերական համալիրի ստեղծումն ու կազմակերպակառուցվածքային բազայի հիմնումը -----92
- 2.2. Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման միտումները ----- 104

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱԼԻՐ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԸՍՏ ԶՈՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

- 3.1. Ցամաքային ուժերի արդիականացումն ու ռազմարդյունաբերությունը ----- 119
- 3.2. Ռազմաօդային ուժերի արդիականացման ծրագրերն ու հակաօդային պաշտպանության զարգացմանն ուղղված քայլերը -- 150
- 3.3. Ռազմածովային ուժերի արդիականացման նախագծերը ----- 199
- 3.4. Թուրքիայի «տիեզերական նախագիծը»՝ որպես բանակի արդիականացման բաղկացուցիչ ----- 213

**ԳԼՈՒԽ 4. ԹՈՒՐԶԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

4.1. Անվտանգության ու պաշտպանության ոլորտի համակարգային
բարեփոխումների խնդիրը----- 222

4.2. Ազգային անվտանգության խորհրդի օրենսդրական ու
կառուցվածքային բարեփոխումները. «քաղաքացիականացման»
գործընթաց----- 232

4.3. Ազգային հետախուզական կազմակերպության
«քաղաքացիականացման» և բարեփոխումների գործընթացը ----- 264

4.4. Անվտանգության համակարգի ընդհատակյա, անօրինական
գաղտնի կառույցներ ու կազմակերպություններ. բացահայտումների
շարք ----- 297

ԱՄՓՈՓՈՒՄ----- 309

ՀԱՎԵԼՎԱԾ ----- 316

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ----- 319

Резюме ----- 321

Summary ----- 328

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԹՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----- 332**

ՆԵՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումն ու անվտանգության ոլորտի բարեփոխումներն ընդգծված բնույթ են ստացել վերջին տասնամյակում: Թուրքական բանակի արդիականացումը, սպառազինման ծրագրերն ու տեղական ռազմաարդյունաբերության զարգացմանն ուղղված քայլերը նոր թափ ստացան հատկապես իշխող «Արդարություն և զարգացում» (այսուհետ՝ ԱԶԿ) կուսակցության կառավարման տարիներին: Դրան գուզահեռ էական քայլեր կատարվեցին անվտանգության ոլորտի բարեփոխումների հարցում, որոնք աննախադեպ էին հանրապետական Թուրքիայի պատմության մեջ:

Թուրքիայի զինված ուժերի (այսուհետ՝ ԶՈՒ, թուրք. Silahlı Kuvvetler) արդիականացման ու անվտանգության համակարգում իրականացված բարեփոխումների ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն: Թեմայի համակողմանի ուսումնասիրությունն արդիական է ոչ միայն Թուրքիայի բանակի արդիականացման ու անվտանգային ոլորտի բարեփոխումների պատմական ժամանակահատվածի հիմնական միտումներն ու քաղաքականությունը վերհանելու, այլ նաև ժամանակակից շրջանում այդ երկրի ռազմականացման միտումներն ու ծավալները վերհանելու և համարժեքորեն գնահատելու տեսանկյունից:

Թուրքիայի ԶՈՒ-ի արդիականացման միտումների ուսումնասիրումը կարևոր է այն տեսանկյունից, որ Թուրքիան վարում է տարածաշրջանում ռազմաքաղաքական ազդեցությունն ընդլայնելու և տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ձեռք բերելու քաղաքականություն, իսկ ռազմական ներուժն այդ համատեքստում դիտարկում է առաջնային գործոններից մեկը: Հաշվի առնելով իր որոշ հարևանների հետ Թուրքիայի գրեթե մշտապես լարված հարաբերությունները, վերջին շրջանում Կիպրոսի Հանրապետության ու Սիրիայի Արաբական Հանրապետության հետ լարվածության աճն

ու նրանց նկատմամբ ռազմական ուժ գործադրելու սպառնալիքները՝ առավել ակնառու են դարձնում Թուրքիայի սպառազինման, ռազմականացման վտանգավորությունը տարածաշրջանային անվտանգության ու կայունության տեսանկյունից: Մեծ հաշվով իր շրջակայքում ագրեսիվ վարքագիծը պայմանավորված է իր ռազմական ներուժից բխող մեծ ինքնավստահությունից:

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության հիմնական միտումները, ռազմաքաղաքական հավակնությունները, որոշ հարևանների նկատմամբ ագրեսիվ քաղաքականությունն ու այդ երկրի անկանխատեսելիության գործոնը՝ խիստ արդիական են դարձնում Թուրքիայի ռազմական ներուժի ու պաշտպանական քաղաքականության ուսումնասիրումը, հիմնական միտումների բացահայտումը:

Նկատի ունենալով տարածաշրջանում ընթացող ռազմաքաղաքական զարգացումները, անկայուն իրավիճակն ու լարվածության օջախները՝ արդիական է դառնում Թուրքիայի ռազմատեխնիկական քաղաքականության վերհանումն ու վերլուծությունը, ինչը հնարավորություն կտա որոշակիորեն գնահատել Թուրքիայի ռազմական ներուժն ու անկանխատեսելի զարգացումների պարագայում հնարավոր ազդեցությունը:

Թեմայի ուսումնասիրությունն առնչություն ունի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության և Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի հետ: Մասնավորապես՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ որպես արտաքին սպառնալիք նշված է, որ Ադրբեջանի Հանրապետության կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանդեպ զինված ուժի կիրառման բացահայտ սպառնալիքների պարագայում Թուրքիայի Հանրապետությունը, լինելով Ադրբեջանի ռազմավարական դաշնակիցը, նույնպես կարող է սպառնալիք ստեղծել:

Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում որպես ռազմական անվտանգության արտաքին սպառնալիքներ են նշ-

ված անվերահսկելի սպառազինման և վերազինման գործընթացը, սպառազինությունների մրցավազքը, Հայաստանի Հանրապետության սահմանների մոտ գորքերի խմբավորումների ստեղծումը, տեղաբաշխումը, դրանց խոշորամասշտաբ կուտակումները և տեղաշարժը, այդ թվում՝ գորավարժությունների անվան տակ: Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված դաշինքների ստեղծումը, ամրապնդումն ու ընդլայնումը, մասնավորապես՝ Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ռազմավարական դաշինքը, վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետությունը շրջափակելու քայլերը, որոնք դիտարկվում են որպես ուժի կիրառում, Հայաստանի Հանրապետությանը սահմանակից պետություններում ներքաղաքական միջավայրի ապակայունացումը, ներքին բախումներն ու ռազմական գործողությունները, ինչպես նաև էթնիկական հակամարտությունները, որոնք կարող են սպառնալ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությանը: Նման ձևակերպումներից ելնելով՝ ակնհայտ է, որ Թուրքիայի կողմից իրականացված և իրականացվող ռազմական արդիականացման խոշորամասշտաբ ծրագրերը սպառազինությունների նոր մրցավազքի են հանգեցնում տարածաշրջանում: Բացի այդ, Թուրքիայի և Ադրբեջանի միջև սերտ ռազմական ու ռազմատեխնիկական համագործակցությունն ուղղակի սպառնալիք է ներկայացնում Հայաստանի ազգային անվտանգությանը: Հաշվի առնելով Թուրքիայի հետ ընդհանուր սահմանի առկայությունն ու այդ երկրի արևելյան շրջաններում Թուրքիայի կողմից «Քուրդիստանի բանվորական կուսակցության» դեմ իրականացվող գործողությունները ոչ այլ ինչ են, քան ռազմական գործողություններ, և դրանք կարող են դուրս գալ վերահսկողությունից ու լուրջ ազդեցություն ունենալ տարածաշրջանային անվտանգության վրա, կարող են իրենց ազդեցությունն ունենալ նաև Հայաստանի անվտանգության վրա:

Սույն աշխատության նպատակն է, մեկ ամբողջության մեջ ուսումնասիրելով 20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին Թուրքիայի պաշտպանական ոլորտի արդիականացումը, ցույց տալ

Թուրքիայի ԶՈւ-ի համալիր արդիականացման միտումներն ու իրականացված ծրագրերը, ռազմաարդյունաբերական համալիրի կայացման ու զարգացման գործընթացը, անվտանգության ոլորտի բարեփոխումները:

Ուսումնասիրության համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Վերհանել Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները, անվտանգության մարտահրավերներն ու դրանց հակադրման հիմնական հայեցակարգային մոտեցումներն ու հրամայականները:
2. Ներկայացնել ու վերլուծել 1990-ական թթ. նախաձեռնված բանակի արդիականացման գործընթացն ու այդ ուղղությամբ իրականացված քայլերը:
3. Ուսումնասիրել ազգային ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծման հրամայականի առաջացման պատճառներն ու դրա կազմակերպչա-կառուցվածքային բազայի հիմնման քաղաքականությունն ու ծրագրերը:
4. Պաշտոնական փաստաթղթերի, տեղեկագրերի ու այլ նյութերի ուսումնասիրման միջոցով ցույց տալ ազգային ռազմաարդյունաբերության զարգացման հիմնական միտումները, գնահատել գրանցած ձեռքբերումներն ու բանակի արդիականացման գործում դրանց դերակատարությունը:
5. Ուսումնասիրել ԶՈւ-ի համակարգում իրականացված արդիականացման ծրագրերն ու ռազմատեխնիկական նախագծերն, ըստ գորքերի տեսակների՝ վերհանել սպառազինման միտումներն ու ռազմատեխնիկական համագործակցության շրջանակներն այլ երկրների հետ, ցույց տալ ռազմականացման ծավալները:
6. Ուսումնասիրել անվտանգության ոլորտում իրականացված բարեփոխումները, անվտանգության մարմինների արդիականացման ու վերափոխումների գործընթացը, բա-

նակի քաղաքական ազդեցության նվազման միտումները և այդ հարցում ԱԶԿ-ի դերակատարումը, դիտարկել Թուրքիայի անվտանգության ու պաշտպանության ոլորտում իրականացված համակարգային բարեփոխումների խնդիրը:

Աշխատությունն իր բովանդակությամբ ու հարցադրումներով առաջինն է, որտեղ փորձ է արվում ուսումնասիրել ու գնահատել Թուրքիայի ԶՈւ-ի համալիր արդիականացման գործընթացը, դրա ռազմաքաղաքական պատճառներն ու նշանակությունը, ռազմականացման հիմնական միտումները, անվտանգության համակարգի բարեփոխումները՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով մի շարք թուրքական, ամերիկյան պաշտոնական փաստաթղթեր, տեղեկագրեր, ինչպես նաև այլ աղբյուրներ ու վերլուծական գրականություն:

Աշխատության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 20-րդ դարի վերջերն ու 21-րդ դարի սկզբները: Ժամանակագրության սկիզբը հանդիսանում է 1990-ական թթ. սկիզբը, երբ Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիան նախաձեռնեց պաշտպանական նոր քաղաքականություն և ակտիվացրեց ԶՈւ-ի արդիականացման ծրագրերը: Ժամանակագրությունն ընդգրկում է մինչև 2013 թ. ներառյալ: Նման ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ շրջանում պաշտպանական ոլորտում Թուրքիայի իրականացրած արդիականացման ծրագրերն իրենց մասշտաբով ու նշանակությամբ աննախադեպ էին: Հաշվի առնելով ուսումնասիրության համար պատմական որոշակի ժամանակաշրջանի ներկայացման կարևորությունը՝ անհրաժեշտ ենք համարել հակիրճ անդրադառնալ նաև Սառը պատերազմի տարիներին Թուրքիայի պաշտպանական համակարգի կայացմանն ու զարգացմանը:

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, թուրքերեն ու անգլերեն լեզուներով տարբեր աղբյուրների ու տեղեկատվավերլու-

ծական գրականության հիման վրա: Ուսումնասիրության համար նրապես սկզբնաղբյուրներ են օգտագործվել թուրքական պաշտոնական փաստաթղթերը, տեղեկագրերն ու մի շարք զեկույցներ, ինչպես օրինակ՝ Թուրքիայի «Պաշտպանական արդյունաբերության քաղաքականությունը և ռազմավարությունը» փաստաթուղթը (Türk Savunma Sanayii Politikası ve Stratejisi), Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության գործունեության 2008-2012 թթ. տարեկան զեկույցները, «ՊԱԳՎ 2007-2011 թթ. ռազմավարական պլան»-ը (Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011), «Պաշտպանական արդյունաբերության 2012-2016 թթ. Ռազմավարական պլանը», Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարության 2008 թ. գործունեության տարեկան զեկույցը (Milli Savunma Bakanlığı, Faaliyet Raporu 2008), առանձին ռազմաարդյունաբերական ընկերությունների տարեկան հաշվետվությունները (Aselsan: Faaliyet Raporu 2008, Havelsan, 2007 Faaliyet Raporu, Makina ve Kimya Endüstrisi Genel Müdürlüğü, 2008 yılı Faaliyet Raporu), Թուրքիայի զիտական և տեխնոլոգիական հետազոտությունների կազմակերպության («TÜBİTAK») փաստաթղթերը, Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի ու գլխավոր քարտուղարության մասին օրենքը, Թուրքիայի զինված ուժերի ներքին ծառայության մասին օրենքը և այլն¹: Ռուսերեն և անգլերեն լեզուներով օգտա-

¹ Şku` Savunma Sanayii Politikası ve Stratejisi, Vizyon 2023 Projesi, Savunma, Havacılık ve Uzay Paneli, Panel Raporu, Ek-12, TÜBİTAK, Temmuz 2003, Ankara, http://www.tubitak.gov.tr/tubitak_content_files/vizyon2023/shu/EK-12.pdf; Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2008%20Yılı%20Faaliyet%20Raporu.pdf>; Savunma Sanayii Müsteşarlığı 2010 Faaliyet Raporu, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2010/files/ssm_2011.pdf; Savunma Sanayii Müsteşarlığı Faaliyet Raporu 2012, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2012%20Y%C4%B1%C4%B1%20Faaliyet%20Raporu.pdf>. Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, <http://www.sp.gov.tr/documents/planlar/SSMSP0711.pdf>; Savunma Sanayii Müsteşarlığı 2012-2016 Stratejik Plan, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Documents/SP/Sp2012_2016/index.html;

գործվել են ԽՍՀՄ Արևելագիտության ինստիտուտի տեղեկագրերը, ՌԴ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տեղեկագրերից, Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) և Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի (IISS) տարեգրքերից ու տեղեկատվական բազայից²: Որպես կարևոր սկզբնաղբյուրներ են օգտագործվել ամերիկյան ու թուրքական մի շարք տեղեկագրային հրատարակություններ, ինչպես օրինակ՝ «Human Rights Watch» կազմակերպության ու Թուրքիայի Տնտեսական ու սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (TESEV), ինչպես նաև Թուրքիայի առաջընթացի վերաբերյալ Եվրահանձնաժողովի տարեկան զեկույցները³: Թուրքիայի ռազմաարդյունաբերական նախագծերի ու սպառա-

Aselsan: Faaliyet Raporu 2008, <http://www.aselsan.com.tr>; Makina ve Kimya Endüstrisi Kurum Genel Müdürlüğü 2008 yılı Faaliyet Raporu, <http://www.mkek.gov.tr/Icerikler/KFrQEJW.pdf>; Türk Savunma, Havacılık ve Uzay Sektörü Değerlendirmesi, Vizyon 2023 Projesi, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-4, TÜBİTAK, Temmuz 2003, Ankara, http://www.tubitak.gov.tr/tubitak_content_files/vizyon2023/shu/EK-04.pdf; Türk Uzay Sektörüne İlişkin Değerlendirme, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-5, TÜBİTAK, Temmuz 2003, Ankara, http://www.tubitak.gov.tr/tubitak_content_files/vizyon2023/shu/EK-05.pdf; MGK ve MGK Genel Sekreterliği Kanunu, <http://www.mgk.gov.tr/Turkce/kanun.html>; TÜRK SİLAHLI KUVVETLERİ İÇ HİZMET KANUNU, <http://kanunlar.biz/kanunlar/1044.html>.

² Стu` Современная Турция, справочник, Москва. Изд. восточной литературы. 1958; Современная Турция. справочник, Москва. «Наука». 1965, Турецкая Республика, справочник. Москва. «Наука», 1975; Вооруженные силы и военная экономика стран Азии// Информационно-аналитический справочник-М., Институт Востоковедения РАН, 2000; The Military Balance 2009, International Institute for Strategic Studies, London: Routledge 2009; The Military Balance 2010, International Institute for Strategic Studies, London: Routledge 2010; SIPRI Arms Transfers Database, http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html; Military Expenditure, SIPRI Yearbook 2011, Armaments, Disarmament and International Security, Oxford University Press, 2011;

³ Стu` Turkey Export-Import Trade and Business Directory, International Business Publications, USA, Vol. 2, 2007; Weapons Transfers and Violations of Laws of War in Turkey, Human Rights Watch Arms Project, USA 1995; Turkey, The General Directorate of Press and Information, GAYE Matbaacılık Sanayi ve Ticaret AŞ, Ankara, October 1990; Almanak Türkiye 2006-2008: Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. A. Bayramoğlu, A. Insel, Temmuz 2009, TESEV,

զինման ծրագրերի հետ կապված փաստական տվյալների ու տեղեկատվության ստացման առումով օգտագործվել են Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության «Savunma Sanayii Gündemi» պաշտոնական պարբերականի մի քանի համարներ⁴:

Օգտագործվել են թուրք մի շարք հեղինակների հոդվածներն ու մենագրությունները: Դրանցից կարող ենք օրինակ նշել Ն. Ուսլուի, Ս. Յըլմազի, Գ. Գյուսլյուք Շենեսենի, Հ. Գերգերի, Ու. Օզդադի, Գ. Քորքմազի, Ի. Աքչայի, Ու. Ջիզրե Սաքալիօղլուի, Շ. Էրգյուվենչի, Շ. Ուրումի, Շ. Էլեքդադի, Ա. Քյուլեբիի, Մ. Աքնյուրի, Ա. Բալչըրի, Ս. Բայքալի, Ս. Չադափթայի, Է. Շիմչեքի և Ի. Բահարի հոդվածներն ու աշխատությունները⁵, որոնք անդադադառնում են Թուրքիայի պաշտ-

http://www.tesev.org.tr/Upload/Publication/e8b2801a-bde2-45a0-a736-da06acb7416c/almanak2008_02_07_09.WEB%20icin.pdf; Almanak Türkiye 2006, <http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkiye2006/turkey/244-245.htm>; Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. Ümit Cizre, DCAF-TESEV Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın, Mayıs 2006 TESEV, (280 sayfa), <http://www.tesev.org.tr/Upload/Publication/c2e4e702-300a-4b46-b48e-ba55e802087b/Almanak-2005-Turkce-Tam%20Metin.pdf>; 2003 regular report on Turkey,s progress toward EU accession, http://www.ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2003/tr_tk_final_en.pdf; 2004 regular report on Turkey,s progress toward EU accession; Commission of the European Communities Brussels, 06.10.2004; Turkey 2008 Progress Report, http://ec.europa.eu/enlargement/pdf/press_corner/key_documents/reports_nov_2008/turkey_progress_report_en.pdf; Turkey: 2012 progress report,

http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2012/package/tr_rapport_2012_en.pdf.

⁴ Stu` Türk Savunma Sanayii 2010 Yılı Performansı, Savunma Sanayii Gündemi, Sayı 15, 2/2011, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/SSM%20Dergisi/SSM_15.pdf; ALTAY Projesi, Milli İmkanlarla Modern Tank Üretimi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayi Müsteşarlığı, Temmuz 2008, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/SSM%20Dergisi/2008-7-ssm-dergi.pdf>; Milli Gemi Projesi, Denizaltı Savunma Harbi ve Keşif Karakol Gemisi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayii Müsteşarlığı, Sayı: 2, Ekim 2007.

⁵ Stu` Nasuh Uslu, The Turkish-American Relationship Between 1947 and 2003: The History of a Distinctive Alliance, Nova Science Publisher Inc., New York, 2003; Sait Yılmaz, Dünya Ordularındaki Değişim ve Türk Ordusunun Profesyonelleşmesi, [http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESESI\(3a4b\).pdf](http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESESI(3a4b).pdf), Gülay Günlük Şenesen, Türk Silahlı Kuvvetleri'nin Modernizasyon Programının Bir Değerlendirmesi,

պանական-անվտանգային քաղաքականության, բանակի հիմնախնդիրներին ու անվտանգության համակարգի բարեփոխումներին: Որոշ հեղինակներ հաճախ ցուցաբերում են խիստ ուռճացված ու գաղափարականացված մոտեցումներ Թուրքիայի տարածաշրջանային դերին ու նշանակությանն անդրադառնալիս: Աշխատության պատրաստման հարցում մեծ կարևորություն է ունեցել Բ. Օրանի խմբագրությամբ «Թուրքական արտաքին քաղաքականությունը» երկհատորյակը⁶, ինչպես նաև Գ. Գյունյուք Շենետենի «Թուրքիայի զինված

Türk Dış Politikasının Analizi, Faruk Sönmezoğlu, DER yayınları, İstanbul-2001; Haluk Gerger, Türk Dış Politikası'nın Ekonomi Politikği, Soğuk Savaş'tan Yeni Dünya Düzeni'ne, İkinci Baskı, İstanbul, Belge Yayınları 1999; Ümit Özdağ, Ersel Aydınli, Winning A Low Intensity Conflict: Drawing Lessons From The Turkish Case, Democracies and Small Wars, ed. Efraim Inbar, London, Frank Cass 2003; Goksel Korkmaz, An Analysis of Turkey's Defense Systems Acquisition Policy, MBA Professional Report, Naval Postgraduate School, Monterey, California, March 2009; İsmet Akça, Türkiye'de Askeri-İktisadi Yapı: Durum, Sorunlar, Çözümler, Haziran 2010, TESEV Yayınları, İstanbul; Umit Cizre Sakallioğlu, The Military and Politics: A Turkish Dilemma, Armed forces in the Middle East: politics and strategy, ed. Barry M. Rubin, Thomas A. Keaney, Frank Cass Publishers, 2002; Sadi Ergüvenç, Turkey's Security Perceptions, Journal of International Affairs, Vol. 3, N. 2, June-August 1998, <http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/02/SadiErguvenc.pdf>; Şebnem Üdum, Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defence, Turkish Studies Institute, Vol. 4, N. 3, 2003; Şükrü Elekdağ, 2 ½ War Strategy, Perceptions, Journal of International Affairs, Vol. 1, March May, 1996, <http://www.sam.gov.tr/perceptions/Volumel/March-May1996/212WARSTRATEGY.pdf>; Ali Külebi, Türkiye'nin Askeri Stratejisi, Gücü ve Geleceği, Türkiye Stratejik Araştırmalar Merkezi (TUSAM), 02.08.2004; Ali Külebi, Defense Concept of Turkey is Changing, April 2008, <http://www.eurasiacritic.com/articles/defence-concept-turkey-changing>; Müge Aknur, TSK'nin Dış Politika Üzerindeki Etkisi, Türkiye'nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010; Ali Balci, 1990 sonrası Türk Dış Politikası Üzerine Bazı Notlar: Avrupa Birliği ve Kıbrıs Örneği, Türkiyenin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010; Sanem Baykal, Turkey-EU Relations in the Aftermath of the Helsinki summit: An Analysis of Copenhagen Political Criteria in Light of the Accession Partnership, National program and the Regular Reports, Ankara Review of European Studies, vol. 2, No.3, 2002; Soner Çagaptay, European Union Reforms Diminish the Role of the Turkish Military: Ankara Knocking on Brussels' Door, The Washington Institute of Near East Policy, PolicyWatch#781, August 12, 2003; Şimşek E., Bahar I., Türkiye'de İstihbaratçılık ve MIT, Kum Saati Yayıncılık, İstanbul 2004;

⁶ Ştu` Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 1, (1919-1980), İstanbul, İletişim yayınları 2002; Türk Dış Politikası,

ուժերի արդիականացման ծրագրի գնահատականը» ուսումնասիրությունը⁷, որոնցում հեղինակներն անդրադարձել են Թուրքիայի բանակի արդիականացման ռազմավարությանն ու ռազմաարդյունաբերության խնդիրներին: Թուրք հետազոտողներ Մ. Աքնուրն ու Ա. Բալջըն իրենց հոդվածներում անդրադառնում են նաև 1990-ական թթ. ներքին ու արտաքին քաղաքական հարցերում թուրքական զինվորականության դերակատարությանը, նաև հրստակ ցույց տալիս հատկապես ներքին ու արտաքին քաղաքական հիմնախնդիրների անվտանգայնացման միջոցով երկրի հասարակական-քաղաքական կյանքում թուրքական բանակի մեծ դերակատարության ապահովումն ու դրանց գործադրման մեխանիզմները⁸:

Օգտագործվել են նաև թուրք բարձրաստիճան զինվորականների, պետական պաշտոնյաների հոդվածներ, հրապարակումներ ու ելույթներ⁹:

Հայրենական հեղինակներից սույն աշխատության համար օգտագործվել են Ռ. Սաֆրաստյանի, Ա. Ավագյանի, Ս. Մինասյանի,

Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 2, (1980-2001), İstanbul, İletişim yayınları 2002;

⁷ Stü` Gülay Günlük Şenesen, Türk Silahlı Kuvvetleri'nin Modernizasyon Programının Bir Değerlendirmesi, Türk Dış Politikasının Analizi, ed. Faruk Sönmezoglu, DER yayınları, İstanbul-2001;

⁸ Stü` Müge Aknur, TSK'nin Dış Politika Üzerindeki Etkisi, Türkiye'nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010, Ali Balci, 1990 sonrası Türk Dış Politikası Üzerine Bazı Notlar: Avrupa Birliği ve Kıbrıs Örneği, Türkiyenin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010.

⁹ Stü` Hikmet Sami Turk. Turkish Defense Policy. The Washington Institute For Near East Policy, March 3, 1999, <http://www.washingtoninstitute.org/media/samiturk.htm>; Suat İlhan, Geopolitical developments and the Turkish world, Eurasian Studies, TİKA, Vol. 2, N. 3, 1995.

A STATEMENT by TAFF, Defence Turkey, Vol. 2 Issue: 7, 2007; Luncheon Remarks by General İlker Başbuğ, Deputy Chief of Turkish General Staff, http://www.tsk.tr/eng/konusma/gnkurIncibsk_atckonusmasiogleyemegi_eng_06062005.htm; FNSS A Leader Company in Armored Combat Vehicles / Interview with Mr. Nail Kurt, Defence Turkey, Volume: 2, Issue:10 Year: 2008: Ռ. Թ. Էրդողանի ելույթը 2008 թ. Altay տանկերի արտադրության պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողության ժամանակ՝ <http://www.netizle.tv/video/13443/milli-tank-altay-2011-de-silahli-kuvvetlere-katiliyor>;

Մ. Մելքոնյանի, Ա. Այվազյանի, Մ. Աղաջանյանի և մի շարք այլ հեղինակների արժեքավոր հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք անդրադառնում են Թուրքիայի ռազմաքաղաքական հիմնախնդիրներին ու պաշտպանական ոլորտին¹⁰: Մասնավորապես՝ Ռ. Սաֆրաստյանն իր «Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հոլովույթներում» հոդվածների ժողովածուում հանգամանորեն ներկայացնում և վեր է հանում ժամանակակից Թուրքիայում առկա աշխարհաքաղաքական տեսություններն ու մոտեցումները քաղաքական ու գիտական շրջանակներում, որոնք հնարավորություն են տալիս ավելի հստակ պատկերացնել ինչպես Թուրքիայի արտաքին քաղաքականության, այնպես էլ պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները: Այս համատեքստում կարելի է նաև Ա. Այվազյանի «Հիմնատարեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի» մենագրությունը, որտեղ Թուրքիայի պաշտպանական ռազմավարությունը գնահատվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից¹¹:

¹⁰ Տես՝ Ռ. Սաֆրաստյան, Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հոլովույթներում /2001-2003 թվականների հոդվածներ և հարցազրույցներ/, Եր. 2003: Ա. Այվազյան, Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ, թիվ 4, 2006: Մինասյան Ա., Իսրայելա-թուրքական ռազմաքաղաքական համագործակցությունը քրդական հիմնախնդրի համատեքստում, «21-րդ դար», N. 4, Երևան, 2006: Մ. Մինասյան, Թուրքական հանրապետության զինված ուժերը, Թուրքիա. Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները.-Եր.: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր, թողարկում 1, 2007: Մ. Մելքոնյան, Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները, Հայ զինվոր, թիվ 7, 20-27 փետրվար, 1999: Ա. Այվազյան, Հայաստանի պաշտպանական հայեցակարգը, Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ա. Այվազյանի խմբ., «Հայրենատիրություն» մատենաշար 2, «Արարատ» ռազմավարական կենտրոն, Եր. 2007: Մ. Աղաջանյան, Թուրքիայի ազգային անվտանգությունը. Հայեցակարգերն ու սկզբունքները, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր 1, Եր. 2007:

¹¹ Տես՝ Ա. Այվազյան, Հիմնատարեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Մաս 1 -Եր.: Շեղ. հրատ., 2003:

Արևմտյան հեղինակներից հիշատակման արժանի են Ջ. Ջանոտիի, Ու. Հեյլի, Յ. Օ. Լեսսերի, Ու. Դարքի, Ն. Գիլբի, Ռ. Վեյցի հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնք անդրադառնում են Թուրքիայի արտաքին քաղաքական, պաշտպանական ու ռազմատեխնիկական խնդիրներին¹²: Թուրքիայի ՋՈւ-ի արդիականացման ու ռազմաարդյունաբերության մի շարք հիմնախնդիրներին են նվիրված Ս. Թուրքերթի, Ջ. Էլիսանի, Է. Շոուի, Է. Հեն-Թովի, Մ. Ռոբերտ Հիկքոքի ուսումնասիրությունները: Ամերիկացի հետազոտող Մ. Ռոբերտ Հիկքոքն իր «Գերիշխանության բարձրացումը. Թուրքիայի ռազմավարության ու ռազմական արդիականացման միջև ճեղքը» արժեքավոր ուսումնասիրության մեջ օբյեկտիվ ու անկողմնակալ անդրադարձ է կատարում հատկապես 90-ական թթ. Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հայեցակարգային առանձնահատկություններին ու բանակի արդիականացման ռազմավարությանը՝ իրավացիորեն դրանք գնահատելով որպես տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից խնդրահարույց¹³: Ամե-

¹² Stuu` Jim Zanotti, Turkey-U.S. Defense Cooperation: Prospects and Challenges, Congressional Research Service, April 8, 2011; William Hale, Turkish Foreign Policy, 1774-2000, Frank Cass, London-Portland, 2002; Ian O Lesser, Bridge or Barrier? Turkey And The West After The Cold War, Prepared for the United States Air Force and the United States Army.", RAND, 1992; William J. Durch, Constracting Regional Security: The Role of Arms Transfers, Arms Control, and Reassurance, The Century Foundation Inc., PALGRAVE, 2000; Nicholas Gilby, Turkey and the Arms Trade 1998-2002: A Precipitous Turkey's War Machine, March 2003,

<http://www.caat.org.uk/resources/publications/countries/turkey-precis-0303.pdf>; Weitz Richard, Reducing its Dependence on Foreign Arms Suppliers, Turkey Enhances Its Strategic Autonomy, Turkey Analyst, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program Joint Center, Vol. 3, No. 14, 2010, <http://www.silkroadstudies.org/new/inside/turkey/2010/100830B.html>;

¹³ Stuu` Steve Tolbert, Defense Industrial Cooperation, The DISAM Journal, Spring 1995; George B. Allison, Brian W. Daugherty, The Turkish Navy's Quest for Modernisation, The DISAM Journal, Spring 1995; Ed Shaw, The Sky is the Limit: Turkish Air Force Modernization, The DISAM Journal, Spring 1995; E. Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol. 8, No. 4 (December 2004); Michael Robert Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, Parameters, Summer 2000, <http://www.carlisle.army.mil/usawc/parameters/Articles/00summer/hickok.htm>;

րիկացի հետազոտող է. Հեն-Թովն իր «Թուրքիայի ռազմական արդիականացման քաղաքական տնտեսությունը» հոդվածում ներկայացնելով և վերլուծելով Թուրքիայի ռազմական արդիականացման քաղաքականությունը արտաքին քաղաքական ու տնտեսական փոխգործակցության համատեքստում՝ նշում է, որ բանակի արդիականացումը ոչ միայն նպատակ էր, այլ նաև որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության միջոց՝ Արևմուտքի երկրների հետ իր հարաբերություններում: Գնահատելով 1990-ական թթ. նախաձեռնված լայնամասշտաբ ռազմական արդիականացումն ու սպառազինման միտումները՝ հեղինակը գտնում էր, որ տարածաշրջանային մակարդակում Թուրքիայի հարևանների հետ ռազմական անհամաչափությունը հետագայում էլ ավելի խորանալու միտում է ունենալու¹⁴:

Ռուս որոշ հեղինակներ՝ Ա. Կոսիկովը, Ա. Գուրևը, Մ. Մառտովը, Ա. Արեշևը, Ջ. Գելմանը, Ն. Սոմովը, Ա. Ֆեդինն իրենց ուսումնասիրություններում ևս տարբեր առումներով անդրադարձել են Թուրքիայի ԶՈՒ-ի ու այլ երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցության խնդիրներին¹⁵: Հատկապես «Իսրայելի ու Մերձավոր Արևելքի ուսումնասիրման ինստիտուտի» (ИИИиБВ) շրջանակում կատարված իրավիճակային ու թեմատիկ ուսումնասիրություններում և հրապարակումներում պարբերաբար անդրադարձներ են եղել ինչպես Թուրքիայի պաշտպանական ոլորտի խնդիրներ

¹⁴ Sku՝ E. Hen-Tov, The Political Economy of Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol. 8, No. 4 (December 2004).

¹⁵ Sku՝ А. Косиков. Военно-политический потенциал Турции// Востокоевдный сборник. Вып. 2, М., 2001; А. Гурьев. Турция-Израиль: по пути укрепления военного сотрудничества. <http://www.iimes.ru/rus/stat/2006/24-01-06.htm>; А. Гурьев. О новом вертолетном тендере в Турции. ИИИиБВ, <http://www.iimes.ru/rus/stat/2005/11-03-05.htm>; Андрей Арешев, Вооруженные силы и внешнеполитический курс Турции на современном этапе, Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ա. Այվազյանի խմբ., «Հայրենասիրություն» մատենաշար 2, «Արարատ» ռազմավարական կենտրոն, Եր. 2007; 3. Гельман, «Анка»-в воздухе. Независимое военное обозрение, No. 32, (27 Августа-2 Сентября), 2010; Н. Сомов, Состояние и перспективы развития ВВС Турции// Зарубежное военное обозрение. № 4, 2009; А. Федин. Военно-морские силы Турции// Зарубежное военное обозрение. № 5, 1997.

րին, այնպես էլ ռազմատեխնիկական քաղաքականությանն ու այդ ոլորտում մի շարք երկրների հետ համագործակցության ասպեկտներին¹⁶: Մասնավորապես՝ ռուս հեղինակներից Մ. Մառտովն իր «Թուրքիայի Հանրապետության ռազմատնտեսական քաղաքականությունը և նրա համագործակցությունը արտասահմանյան երկրների հետ» հոդվածում¹⁷ բավական հարուստ փաստերով ներկայացնում է Թուրքիայի ռազմաարդյունաբերական ոլորտում արտերկրների հետ համագործակցությունն ու իրականացված ծրագրերը, ինչը, փաստորեն, այդ բնագավառում ռուսական արևելագիտության ներկայացուցիչների կողմից կատարված առաջին հիմնական ուսումնասիրություններից կարելի է համարել:

Ուսումնասիրության համար օգտագործված աղբյուրների ցանկում բավական մեծ թիվ են կազմում ինչպես թուրքական, այնպես էլ ռուսական ու արևմտյան տարաբնույթ պարբերականները, մամուլը, տեղեկատվական ու վերլուծական էլեկտրոնային կայքերը: Դրանցում գերակշռում են հատկապես թուրքական ժամանակակից մամուլն ու պարբերականները, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները (Aksiyon, Akşam, Hürriyet, Milliyet, Radikal, Sabah, Star, Yeni Şafak, Taraf, Zaman և այլն):

¹⁶ Stu՝ Об изменениях в военно-политической обстановке на Ближнем Востоке и в Северной Африке (13-19 июня 2011 года), 20.06.2011, <http://www.iimes.ru/rus/stat/2011/20-06-11a.htm>; А. Гурьев. О российско-турецком военно-техническом сотрудничестве, ИИИиБВ, 27.11.2004; М. Вихрев. "Военные профессионалы Турецкой Республики как резерв государственного управленческого аппарата", Офицерский корпус ближневосточных государств (сборник статей), ИИИиБВ, М., 2004.

¹⁷ Stu՝ М. Мартов. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами// Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии. (сборник статей), ИИИиБВ, М. 2002.

ԳԼՈՒԽ 1.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՆԱԿԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ

1.1. Թուրքիայի պաշտպանական ներուժի կայացումն ու զարգացումը Սառը պատերազմի տարիներին

Ժամանակակից Թուրքիայի ԶՈՒ-ի կազմակերպչա-կառուց-վածքային համակարգը, հիմնական սպառազինության բազան մինչև վերջին տարիները հիմնականում Սառը պատերազմի տարի-ներից մնացած ժառանգություն էր: Եվ ընդհանրապես, Թուրքիայի ժամանակակից անվտանգության-պաշտպանության համակարգի կայացումն ու զարգացումը եղել է ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո Արևմուտքի՝ հատկապես Միացյալ Նահանգների գործուն աջակ-ցությամբ: Ուստի, կարևոր ենք համարում անդրադառնալ Սառը պատերազմի տարիներին թուրքական ԶՈՒ-ի զարգացման հարցում ՆԱՏՕ-ի անդամ երկրների ցուցաբերած աջակցությանը:

Երկրորդ աշխարհամարտից հետո խորհրդայնության լար-ված հարաբերությունները Թուրքիայի՝ արևմտյան ռազմաքաղա-քական համակարգին սերտ ինտեգրվելու հիմնական պատճառնե-րից էին: ԽՍՀՄ-ի հետ լարված հարաբերություններն ու իր ռազմա-կան անվտանգության ապահովման հետ կապված մտավախու-թյունները Թուրքիայի համար առաջնահերթ դարձրեցին ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական մերձեցումն ու դաշնակցային հարաբերու-թյունների հաստատումը:

Դեռևս ՆԱՏՕ-ին անդամակցելուց առաջ ԱՄՆ-ը Թուրքիայի հետ ստորագրեց պայմանագրեր և սկսեց ռազմական ու տնտեսա-կան օգնություն տրամադրել: 1946 թ. փետրվարին ստորագրված պայմանագրի շրջանակներում Միացյալ Նահանգները Թուրքիային 10 մլն դոլար վարկ էր հատկացրել՝ ամերիկյան ռազմական նշանա-

կության ապրանքներ ձեռք բերելու համար¹⁸: 1947 թ. հուլիսի 12-ին թուրքական կառավարությունը ԱՄՆ-ի հետ ստորագրեց համաձայնագիր՝ Թուրքիային 100 մլն դոլար գումարի չափով փոխառություն հատկացնելու վերաբերյալ, որից 90 մլն-ը նախատեսված էր թուրքական ԶՈւ-ի արդիականացման ու վերակազմավորման, իսկ մնացած մասը՝ ռազմական արդյունաբերության կազմակերպման ու ռազմական նշանակության ճանապարհների կառուցման համար¹⁹:

1947-1951 թթ. ընթացքում ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրված ռազմական օգնության ընդհանուր գումարը գերազանցեց «Տրումենի դոկտրինի» շրջանակում նախատեսված չափաբաժինը՝ հասնելով մոտ 400 մլն դոլարի: 1948 թ. սկսած Թուրքիային մատակարարվեցին զգալի քանակության ամերիկյան ռազմաօդային միջոցներ՝ 490 միավոր «P-47» կործանիչ, «A-26» ուժեղացված, «C-47» տրանսպորտային ինքնաթիռ և ռազմաուսումնական ինքնաթիռներ: Նման մասշտաբի մատակարարումները զգալի օգնություն էին թուրքական ԶՈւ-ի զարգացման ու սպառազինության համալրման համար²⁰:

Թուրքիայի անվտանգության ու պաշտպանության համակարգի կայացման առումով էական նշանակություն ունեցավ ՆԱՏՕ-ին անդամակցումը: Չնայած դաշինք մտնելու մասին արձանագրությունը ստորագրվեց 1951 թ. հոկտեմբերին, Թուրքիան լիիրավ անդամ դարձավ 1952 թ. փետրվարի 18-ին՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (այսուհետ՝ ԹԱՄԺ) կողմից վավերացնելով Հյուսիսատլանտյան պայմանագիրը²¹: ՆԱՏՕ-ին Թուրքիայի անդամակցության

¹⁸ Стю` Тюрккая Атаев. США, НАТО и Турция, Изд. Прогресс, Москва 1973, с. 119-120, 201.

¹⁹ Стю` Арон Новичев. Турция. Краткая история, «Наука», Москва, 1965, с. 202.

²⁰ Стю` Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 1, (1919-1980), İstanbul, Petişim yayınları 2002, s. 535. Վերոնշյալ ինքնաթիռները չնայած հնացած էին համարվում, այդուհանդերձ, դրանք, ընդհանուր առմամբ, համարժեք էին ԽՍՀՄ-ի կործանիչներին, իսկ Անդրկովկասի իր ռազմական ուժերում ԽՍՀՄ-ը դեռևս չուներ նման որակի տեխնիկա:

²¹ Стю` Դաշինքի ստեղծումից հետո Թուրքիան քայլեր ձեռնարկեց միանալու դրան, սակայն դաշինքի անդամներ հանդիսացող Դանիան, Նորվեգիան, Բելգիան և Մեծ

քննարկումների ու բանակցությունների ժամանակ դաշինքի կազմում Թուրքիայի կարևորությունը հիմնավորելու համար Թուրքիայի իշխանությունները բավական մեծ դերակատարություն էին վերապահում իրենց պետությանը եվրաստլանտյան անվտանգության ապահովման գործում: Այդ կապակցությամբ վարչապետ Ադնան Մենդերեսը, անդրադառնալով Թուրքիայի եզակի աշխարհառագմավարական դիրքին, նշել է, որ «զինելով թուրքական բանակը, միևնույն ժամանակ, նշանակում է զինել ողջ Աստլանտյան համայնքը»²²: ՆԱՏՕ-ին անդամակցումն էական դեր խաղաց Թուրքիայի պաշտպանական համակարգի զարգացման առումով՝ հնարավորություն տալով արդիականացնել սեփական բանակի սպառազինությունն ու մեծացնել պաշտպանական ներուժը²³:

ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո զգալիորեն ավելացավ ԱՄՆ-ի կողմից Թուրքիային տրամադրվող ռազմական օգնության ծավալը: Եթե 1951 թ. ամերիկյան ռազմական օգնությունը կազմում էր 43 մլն դոլար, ապա 1952 թ. այն զգալիորեն ավելացավ՝ կազմելով 102 մլն դոլար: Դրանից հետո, որոշ տասնամյակներով այն բավականաչափ բարձր է եղել՝ 50-ականների վերջին հասնելով նույնիսկ 249 մլն դոլարի: 1950-60 թթ. ամերիկյան ռազմական օգնության ընդհանուր գումարը կազմել է 1 մլրդ 510 մլն ԱՄՆ դոլար²⁴: Միևնույն ժա-

Բրիտանիան դեմ էին Թուրքիայի անդամակցությանը և առաջարկում էին ռազմաքաղաքական համագործակցության այլ ձևաչափ: Եվ միայն աջակցելով ԱՄՆ-ին կորեական պատերազմում՝ Թուրքիան ստացավ այդ երկրի օժանդակությունը անդամակցության գործում: Տե՛ս՝ *А. Косиков. Военно-политический потенциал Турции // Востокведный сборник. вып. 2, М., 2001. с. 212-217.*

²² Տե՛ս՝ *Reem Abou-El-Fadl, Turkey's Accession to NATO: Building a 'Little America', www2.lse.ac.uk/europeanInstitute/research/ContemporaryTurkishStudies/Paper RA.pdf, p. 21.*

²³ *Илгер Туран. Турция на подеме. От неразвитой страны к региональной державе, Россия в глобальной политике, том 9, No. 5. сентябрь-октябрь 2011, с. 128.*

²⁴ *Ամերիկյան ռազմական օգնությունը Թուրքիային 1953 թ. կազմել է 151.8 մլն, 1954 թ.՝ 238.2 մլն, 1955 թ.՝ 178.2 մլն, 1956 թ.՝ 191.3 մլն, 1957 թ.՝ 152.4 մլն դոլար: 1958 թ. տրամադրված 249 մլն դոլար ռազմական օգնությունն ամենամեծն էր ողջ 50-ական թթ. ընթացքում: Տե՛ս՝ Nasuh Uslu, The Turkish-American Relationship Between 1947 and 2003: The History of a Distinctive Alliance, Nova Science Publisher Inc., New York, 2003, pp. 97-98, 99*

մանակ, ավելացավ նաև Թուրքիայի ռազմական բյուջեն և տարեց-տարի աճի տեմպեր գրանցեց:

ԱՄՆ-ը զգալի դերակատարություն ուներ ոչ միայն թուրքական բանակի՝ ժամանակի չափանիշներով վերակազմակերպման, այլ նաև անհրաժեշտ ռազմատեխնիկական կարիքների ապահովման գործում: ԱՄՆ-ի աջակցությամբ Թուրքիայում սկսեցին կառուցվել ռազմական ենթակառուցվածքներ ու բազաներ, որոնք կիրառվում էին ՆԱՏՕ-ի կողմից²⁵:

ԱՄՆ-ի աջակցությամբ որոշ քայլեր ձեռնարկվեցին նաև Թուրքիայում ռազմական նշանակության տեխնիկայի արտադրության ուղղությամբ: 1959 թ. ստորագրված երկկողմ պայմանագրով նախատեսվում էր Թուրքիայում հիմնել գործարան՝ թուրքական բանակի «M-47» մակնիշի տանկերի զենքի կառավարման համակարգերի վերանորոգման ու արդիականացման համար, իսկ 1960 թ. մարտին ստորագրվեց զինատեսակների արտադրության ծրագրի վերաբերյալ երկկողմ մեկ այլ պայմանագիր, որով ամերիկյան կողմն անհրաժեշտ արտադրական գործընթացի համար Թուրքիային էր տրամադրելու անհրաժեշտ սարքավորումներ, ծառայություններ ու տեղեկատվություն: Նախատեսվում էր իրականացնել նաև համատեղ ռազմաարդյունաբերական ծրագրեր²⁶:

1947 թ. մինչև 1960-ական թթ. Թուրքիան ԱՄՆ-ից ստացել է մոտ 3 մլրդ դոլարի օգնություն, որի մեծ մասը ծախսվել է ռազմական նպատակներով: Ցուցաբերված ամերիկյան ռազմական օգնության գումարները ծախսվում էին ամերիկյան ռազմաարդյունաբերական ընկերություններից սպառազինության ձեռքբերման համար և, փաստորեն, դրանք «հետ էին վերադառնում ԱՄՆ»²⁷: Ընդհանուր

²⁵ Стю` Турецкая Республика, справочник. Москва. «Наука», 1975, с. 304.

²⁶ Стю` A List of Treaties and Other International Agreements of the United States in Force on January 1, 2010, United States Department of State, p. 270, <http://www.state.gov/documents/organization/143863.pdf>; Turkey, Defense: Weapons Production Program, 11 U.S.T. 1322, <http://photos.state.gov/libraries/turkey/461177/pdf/11t1322.pdf>.

²⁷ Стю` Арон Новичев, նշվ. աշխ., էջ 203:

առմամբ, ԱՄՆ-ի գործուն միջամտությամբ սկսվեց թուրքական բանակի կայացումն ու զարգացումը, իսկ ՆԱՏՕ-ին անդամակցություն էականորեն բարելավեց թուրքական բանակի կազմակերպչական ու ռազմատեխնիկական վիճակը: Անկարայում Ամերիկյան ռազմական օգնության առաքելությունը գլխավորած գեներալ Փենդրլթոնն այս առումով բավական դիպուկ է նշել. «1940-ականներից մինչև 1950-ականների կեսերն ԱՄՆ-ը գրոյից վերակազմավորեց թուրքական բանակը»²⁸:

Արդեն 1950-ականների վերջին Թուրքիայի ռազմական համակարգը կառուցված էր ամերիկյան զինուժի օրինակով, իսկ օդուժի նյութական բազան ամբողջովին ամերիկյան էր²⁹:

Բացի ԱՄՆ-ից, ռազմատեխնիկական ոլորտում զգալի օժանդակություն սկսեց ցուցաբերել նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը (այսուհետ՝ ԳԴՀ): Թուրքիայում ռազմաարդյունաբերության զարգացման համար լուրջ խթան հանդիսացավ դեռ 1950-ական թթ. ԳԴՀ-ի կողմից տրամադրված 700 մլն մարկ վարկային գումարը, որի դիմաց Թուրքիան պետք է հետագայում իր իսկ արտադրության զինատեսակներ մատակարարեր ԳԴՀ-ին: Թուրքիայում ԳԴՀ-ի կարիքների համար հետևակային ու հրետանային զինատեսակների արտադրության մասին համաձայնագիրը ստորագրվել էր 1956 թ.³⁰:

1960-ական թթ. թուրքական ՋՈւ-ը շարունակում էին վերակազմավորվել ամերիկյան չափանիշներով ու վերահսկողությամբ: ՆԱՏՕ-ի երկրների օրինակով՝ թուրքական ՋՈւ-ի կազմում ստեղծվեցին ամերիկյան հրթիռային զինատեսակներով համալրված հրթիռային զորամասեր, նույնիսկ որոշ մարտական միավորներ ստացան միջուկային զենքեր կրելու միջոցներ: Օդուժը համալրվում էր ռեակ-

²⁸ Stū՝ Simon V. Mayall, Turkey: Thwarted Ambition, Institute For National Strategic Studies, National Defense University, Washington, McNair Paper 57, January 1997, p. 28.

²⁹ Stū՝ Современная Турция, справочник, Москва. Изд. восточной литературы. 1958, с. 186-189.

³⁰ Stū՝ Борис Поцхверия, Внешняя политика Турции в 60-х-начале 80-х годов XX в., Москва. «Наука», 1986, с. 50.

տիվ տեխնիկայով, իսկ ռազմական նավատորմում՝ ներդրվում նոր ռազմանավեր ու զինատեսակներ³¹: Մասնավորապես, 1963 թ. Թուրքիան ԱՄՆ-ից ստացավ «F-104» կործանիչների³² առաջին խմբաքանակը, իսկ 1964 թ. վերջին՝ առաջին «C-103» ռազմատրանսպորտային ինքնաթիռները: Եվ ընդհանուր առմամբ, 1960-ականների դրությամբ, Թուրքիայի ռազմաօդային ուժերը համալրված էին մեծամասամբ ամերիկյան արտադրության տեխնիկայով³³: Մեծ ուշադրություն էր դարձվում նաև ժամանակակից ռազմական օդանավակայանների ու ենթակառուցների շինարարությանը³⁴:

1960-ական թթ. կեսերից սկսած մեծացավ ԳԴՀ-ի դերը՝ Թուրքիային ռազմական օգնության տրամադրման ու բանակի սպառազինության արդիականացման հարցում: Հատկապես 1964 թ. երկու երկրների միջև ստորագրված ռազմական համագործակցության համաձայնագրից հետո Թուրքիան ՆԱՏՕ-ի շրջանակում սկսեց ռազմական օգնություն ստանալ նաև ԳԴՀ-ից: 1964-1970 թթ. Թուրքիան այդ երկրից ստացել է մեծ քանակությամբ սպառազինություն, այդ թվում՝ ինքնաթիռներ, մոտորանավակներ, տանկեր, զրահամեքենաներ: Մինևս այն ժամանակ, ԳԴՀ-ն սուզանավերի արտադրության պատվերներ սկսեց ստանալ Թուրքիայից: ԳԴՀ-ն ԱՄՆ-ից հետո Թուրքիայի երկրորդ խոշոր ռազմական մատակարարն էր: Թուրքիայում 1972 թ. նախաձեռնված բանակի արդիականացման

³¹ Տես՝ Նույն տեղում, էջ 44:

³² Տես՝ Վերոնիյալ արդիական ինքնաթիռների տրամադրումը Թուրքիային պայմանավորված էր Կարիքյան ճգնաժամի ժամանակ Թուրքիայի տարածքում ամերիկյան հեռահար «Jupiter» իրթիռների տեղակայմամբ, ինչի կապակցությամբ ԽՍՀՄ-ը հակահարված տալու հայտարարություն արեց: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ֆերիդուն Ջեմալ Էրքինն ամերիկյան կողմին խնդրեց արագացնել «F-104» կործանիչ ինքնաթիռների և «F-100» ումբակոծիչների պահեստամասերի մատակարարումը: Տես՝ Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 1, (1919-1980), İstanbul, İletişim yayınları 2002, s. 682-683.

³³ Տես՝ Современная Турция. справочник, Москва. «Наука». 1965, с. 222.

³⁴ Տես՝ Борис Поцхверия, նշվ. աշխ., էջ 44:

ծրագրի հետ կապված բացահայտ խոսվում էր նաև գերմանական օգնության մասին³⁵:

1966 թ. ԱՄՆ-ը Թուրքիային առաջարկեց իր կողմից տրամադրվող ռազմական օգնությունն ուղղել ցամաքային ուժերի (այսուհետ՝ ՑՈւ, թուրք. Kara Kuvvetleri) արդիականացմանը: Այդ քայլի նպատակը, մեծ հաշվով, Թուրքիայի կողմից Կիպրոսի նկատմամբ ռազմական հնարավոր ոտնձգությունը կանխելն էր: Նման առաջարկը չընդունվեց Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից և ՌԾՈւ-ի (այսուհետ՝ ՌԾՈւ, թուրք. Deniz Kuvvetleri) հրամանատարը, մեկնելով ԱՄՆ, ՌԾՈւ-ի արդիականացման հարցում կարողացավ ստանալ ամերիկյան կողմի համաձայնությունը: Փաստորեն, ԱՄՆ-ը հրաժարվեց իր մտադրությունից և նունիսկ մինչև 1969 թ. Թուրքիային վաճառեց 5 ռազմանավ, իսկ 1970 թ. Կոնգրեսը նոր սուզանավերի վաճառքի հավանություն տվեց³⁶:

1969 թ. հուլիսին Անկարայում ԱՄՆ-ի ու Թուրքիայի միջև ստորագրվեց «Համատեղ պաշտպանական համագործակցության մասին» համաձայնագիրը, ըստ որի՝ Թուրքիայի տարածքում համատեղ պաշտպանական ենթակառուցվածքները ճանաչվեցին որպես Թուրքիայի սեփականություն և անցան նրա վերահսկողության տակ: Դրանց օգտագործման համար պետք է հավանություն տար թուրքական կառավարությունը, որն իրավունք ստացավ նաև իր ազգային շահերի վտանգման դեպքում սահմանափակել բազաների գործունեությունը: Թուրքական կողմը իրավունք ստացավ նաև համատեղ ռազմական բազաներում ու կառույցներում տեղակայել սեփական զինվորական անձնակազմ³⁷: Պետք է փաստել, որ այս համաձայնագրի ստորագրումը հիմնականում պայմանավորված էր քաղաքական նկատառումներով, քանի որ հետագայում ևս դրանց հիմնական վերահսկողությունն ու օգտագործումը գտնվում էր

³⁵ Տես՝ Նույն տեղում, էջ 144-145:

³⁶ Տես՝ Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 1, (1919-1980), İstanbul, İletişim yayınları 2002, s. 701.

³⁷ Տես՝ Борис Поцхверия, նշվ. աշխ., էջ 128-129:

ԱՄՆ-ի իրավասության ներքո և, կարելի է ասել, այն մեծամասամբ ձևական բնույթ ունեցավ:

Ինչպես նշում է բրիտանացի բարձրաստիճան գինվորական, հետազոտող Ս. Վ. Մայալը՝ մինչև 1970-ական թթ. Թուրքիայում չի եղել բանակի զարգացման ծրագիր և ազգային պլան, փոխարենը «Թուրքիան ունեցել է այն, ինչ պարզապես իրեն տրվել է»³⁸: Այս առումով, իրավիճակը որոշակիորեն փոխվեց 1980-ական թթ. կեսերից: Մի կողմից Թուրքիան զարկ տվեց տեղական ռազմաարդյունաբերական ծրագրերին, մյուս կողմից էլ մեծացավ ԱՄՆ-ի ռազմական օգնությունը, և հենց այդ շրջանում թուրքական բանակը համարվեց ժամանակակից ամերիկյան սպառազինությամբ:

Հարկ է նշել, որ 1970-ական թթ. կեսերից երկու երկրների հարաբերություններում լուրջ ճգնաժամ առաջացավ: Թուրք-ամերիկյան հարաբերությունների վատթարացման ու նաև ռազմական համագործակցության ժամանակավոր դադարեցման համար առիթ դարձավ Թուրքիայի ԶՈւ-ի կողմից Կիպրոսի հյուսիսային մասի գրավումը: 1974 թ.՝ Թուրքիայի կողմից Կիպրոս գորք մտցնելուց հետո, ԱՄՆ-ի Կոնգրեսը այդ երկրին սպառազինության վաճառքի ու ռազմական օգնության արգելանք դրեց, որը տևեց 1975-1978 թթ., ինչը զգալիորեն ազդեց թուրքական բանակի պատրաստության մակարդակի վրա: Թուրքիան իր հերթին փակեց իր տարածքում ամերիկյան ռազմական ու հետախուզական հաստատությունները՝ բացառությամբ գուտ ՆԱՏՕ-ի շրջանակում գործողներից³⁹: ԱՄՆ-ի նախագահ Ջ. Ֆորդը, չնայած երկու անգամ Կոնգրեսի օրինագծի նկատմամբ կիրառեց վետոյի իրավունքը, սակայն վերջնականապես համաձայնության եկավ արգելանքի կիրառման հարցում, իսկ հետագայում Մալիտակ տունը, օգտագործելով բոլոր հնարավոր տարբերակները, ջանքեր գործադրեց՝ մեղմելու արգելանքի պայման-

³⁸ Տես՝ Simon V. Mayall, նշվ. աշխ. էջ 29:

³⁹ Տես՝ Jim Zanotti, Turkey-U.S. Defense Cooperation: Prospects and Challenges, Congressional Research Service, April 8, 2011, p. 2.

ները⁴⁰: Ի դեպ, թուրքական գորքերի կողմից Կիպրոսի հյուսիսային մասի գրավումից հետո կառուցվածքային նոր փոփոխություններ իրականացվեցին Թուրքիայի ՅՈՒՆ-ում: Թուրք-հունական լարված հարաբերությունների պատճառով 1975 թ. Թուրքիայում ստեղծվեց 4-րդ բանակը (Էգեյան), որի նպատակը Հունաստանին դիմակայելու խնդիրն էր և կոչված էր հիմնականում Էգեյան ծովում հնարավոր հակամարտության ժամանակ համակարգված ռազմական գործողություններ իրականացնել⁴¹:

1974 թ. օգոստոսի դրությամբ հիմնականում ԱՄՆ-ն, ինչպես նաև ՆԱՏՕ-ի անդամ այլ երկրներ, Թուրքիային էին մատակարարել հիմնականում ամերիկյան արտադրության հսկայական քանակությամբ սպառազինություն, այդ թվում՝ 965 միավոր մարտական ու տրանսպորտային ինքնաթիռներ, 7 սուզանավ, 3915 միավոր տանկ, 1827 միավոր զրահափոխադրիչ, 2000 հրետանային համալիր, 1370 միավոր տարբեր դասի հրթիռներ, մեծ քանակությամբ թեթև սպառազինություն և այլն⁴²: Նման քանակի սպառազինության մատակարարումներն այդ ժամանակաշրջանի համար բավական լուրջ էին: Չափազանցություն չի լինի նշել, որ հենց Հունաստանի նկատմամբ ռազմական գերակայությունն ու զգալի սպառազինության կուտակումները հնարավոր դարձրեցին թուրքական զինուժի Կիպրոս ներխուժումը:

1975 թ. հոկտեմբերին ամերիկյան վարչակազմի ճնշումների ներքո Կոնգրեսը համաձայնեց մասամբ վերացնել Թուրքիայի նկատմամբ կիրառված արգելանքը՝ սահմանափակելով միայն նվիրատվության ու վարկային վաճառքի տեսքով մատակարարում-

⁴⁰ Stü` Omer Goksel Isyar, An Analysis of Turkish-American Relations From 1945 to 2004: Initiatives and Reactions in Turkish Foreign Policy, Alternatives: Turkish Journal of International Relations, Vol. 4, No. 3, Fall 2005, p. 27. Արգելանքի կիրառման ընթացակարգերի ժամանակագրության վերաբերյալ, Richard F.Grimmett, U.S. Defense Articles and Services Supplied to Foreign Recipients: Restrictions on Their Use, CRS Report for Congress, Congressional Research Service, Updated March 14, 2005, pp. 6-7:

⁴¹ Stü` Б. Поцхверия, նշվ. աշխ., էջ 173, 176:

⁴² Stü` Nasuh Uslu, նշվ. աշխ., էջ 100:

ները: Թուրքիան, ամեն դեպքում, ի վիճակի եղավ մասամբ շրջանցել ամերիկյան սահմանափակումները սպառազինության ձեռքբերման հարցում՝ ստանալով մատակարարումներ ՆԱՏՕ-ի անդամ այլ երկրներից, հիմնականում՝ Գերմանիայից ու Իտալիայից⁴³: Գերմանիայից այդ ժամանակահատվածում հիմնականում ձեռք են բերվել 7 միավոր Jaguar ռազմական ինքնաթիռ, 3 սուզանավ, 6 «Mercure» ականագերծող նավ, տորպեդային ռումբեր, մեծ քանակությամբ «MILAN» հակատանկային հրթիռային համալիրներ, ռազմական այլ նավեր ու պահեստամասեր: Իտալիան, միևնույն ժամանակ, մատակարարել է մոտ 4 տասնյակ «F-104» ռազմական ինքնաթիռ, դրանց համար նախատեսված 200 միավոր «Sparrow» հրթիռ, 3 միավոր «Bell -212» ռազմական ուղղաթիռ և այլն⁴⁴:

1970-ական թթ. շարունակելով ռազմական ոլորտում համագործակցությունը՝ ԳԴՀ-ը մեծ ուշադրություն էր դարձնում նաև իր կողմից թուրքական ռազմաարդյունաբերության զարգացման համար ցուցաբերվող օգնությանը: Այդ երկրի կողմից Թուրքիայում ստեղծվեցին հրթիռաշինական, տանկերի ու շարժիչների վերանորոգման գործարաններ⁴⁵:

Թուրքիայի ԶՈՒ-ը 1970-ական թթ. վերջին արդիական սպառազինության լուրջ պակաս ունեցան, ինչը կառավարության ֆինանսական ծանր վիճակի ու կիրառված արգելանքի ուղղակի հետևանք էր⁴⁶: Մոտ 3 տարի տևած զենքի արգելանքի պատճառով թուրքական բանակի արդիականացմանը զգալի վնաս հասցվեց⁴⁷:

⁴³ Տես՝ William Hale, *Turkish Foreign Policy, 1774-2000*, London-Portland, Frank Cass 2002, p. 161.

⁴⁴ Տես՝ Արգելանքի տարիներին Թուրքիան Ֆրանսիայից ձեռք է բերել ռազմական ուղղաթիռների կիրառման համար նախատեսված հակատանկային ու «օդ-երկիր» դասի, իսկ Նորվեգիայից՝ Penguin հականավային հրթիռներ: Մանրամասն տես՝ SIPRI Arms Transfers Database, http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html.

⁴⁵ Տես՝ Б. Поцхверия, նշվ. աշխ., էջ 145:

⁴⁶ Տես՝ William Hale, նշվ. աշխ., էջ 161:

⁴⁷ Տես՝ Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 1, (1919-1980), İstanbul, İletişim yayınları 2002, s. 711.

Ամերիկացի հետազոտող Ջ. Զանտոին իրավացիորեն նշում է, որ արգելանքի պատճառով ԱՄՆ-ի նկատմամբ թուրքական իշխանությունների վստահության կորուստն ու դժգոհությունը դրդեցին այդ երկրին կենտրոնանալ երկու ռազմավարական առաջնահերթությունների վրա՝ բազմազանեցնել սպառազինության ձեռքբերման աղբյուրները և զարկ տալ տեղական ռազմաարդյունաբերությանը⁴⁸: Թուրքական բանակի սպառազինության համալրման նոր մոտեցումների ու ռազմաարդյունաբերության զարգացման առումով, ըստ թուրք հետազոտող Գ. Գյունլյուք Շենեսենի, էական նշանակություն ունեցավ ամերիկյան զենքի էմբարգոն, որը նյութական վնասներից զատ, օրակարգ բերեց սպառազինման հարցում բանակի ինքնաբավության անհրաժեշտության խնդիրը⁴⁹:

1976 թ. նոյեմբերին ընդունված «Ժողովրդա-հանրապետական» կուսակցության ծրագրում, որը երկու տարի անց հաստատվեց որպես Բյուլենթ Էջևիթի կառավարության ծրագիր, ի թիվս այլ հարցերի, շեշտվում էր ՆԱՏՕ-ից թուրքական ՁՈւ-ի անկախության ու ազգային ռազմաարդյունաբերության ստեղծման անհրաժեշտության մասին: Էջևիթի կառավարությունը ձգտում էր զարգացնել համագործակցությունը ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական երկրների հետ ռազմական արդյունաբերության ոլորտում՝ նպատակ ունենալով ապահովելու նրանց աջակցությունը ժամանակակից ռազմաարդյունաբերության ստեղծման ու զարգացման համար⁵⁰: 1978 թ. Էջևիթի կառավարությունն ընդունեց «Ազգային պաշտպանության ու արտաքին քաղաքականության» նոր հայեցակարգ, որի հիմնական շեշտադրումներից մեկը թուրքական բանակի սպառազինման հարցում միակենտրոն կախվածությունից ազատվելն էր: Այս առումով Թուրքիան փորձեց այլընտրանքներ փնտրել՝ նույնիսկ օրակարգում ա-

⁴⁸ Stu` Jim Zanotti, Turkey-U.S. Defense Cooperation: Prospects and Challenges, Congressional Research Service, April 8, 2011, p. 3.

⁴⁹ Stu` Gülay Günlük Şenesen, Türk Silahlı Kuvvetleri'nin Modernizasyon Programının Bir Değerlendirmesi, Türk Dış Politikasının Analizi, ed. Faruk Sönmezoğlu, DER yayınları, İstanbul-2001, s. 588.

⁵⁰ Stu` Б. Поцхверия, նշվ. աշխ., էջ 172-173, 176:

ռաջ քաշելով ԽՍՀՄ-ից գենք գնելու հարցը, ինչի նպատակով թուրքական ՋՈւ-ի բարձրաստիճան գններալը նույնիսկ բանակցությունների նպատակով Մոսկվա մեկնեց⁵¹: Չնայած դրան, ընդգծենք, որ ԽՍՀՄ-ի հետ ռազմական ոլորտում համագործակցություն չծավալվեց, և նման քայլը գուտ ԱՄՆ-ի դեմ ճնշումներ կիրառելու մարտավարություն էր: Հարկ է նշել, որ 1976 թ. հունիսի դրությամբ ԱՄՆ-ը Թուրքիայում ուներ 61 ռազմական նշանակության օբյեկտ ու ենթակառուցվածք՝ հետախուզական կայաններ, ռազմական կապի համակարգեր, ռադիոլուկացիոն կայաններ, ավիացիոն բազաներ և այլն⁵², իսկ դրանց մի մասի կիրառման նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից որպես պատասխան քայլ դրված արգելանքն անհանգստություն էր պատճառում ՆԱՏՕ-ին:

Ինչևէ, 1978 թ. արգելանքի ամբողջական վերացումից հետո վերականգնվեց ամերիկյան ռազմական օգնությունը Թուրքիային, սկսեցին վերաբացվել այդ երկրում հիմնված ամերիկյան ռազմական հաստատությունները⁵³: Նույնիսկ մեկ տարի անց ստորագրվեց երկկողմ պայմանագիր, որով ամերիկյան կառավարությունը Թուրքիային մինչև 1980 թ. կեսերը մատակարարելու էր ռազմական արտադրանք ու ծառայություններ՝ մինչև 11 մլն դոլարի չափով⁵⁴: Ռազմատեխնիկական համագործակցության հարցում Թուրքիան սկսեց նոր պահանջներ դնել ԱՄՆ-ի ու նաև ՆԱՏՕ-ի առջև: Մասնավորապես՝ թուրքական կառավարությունը համառորեն պնդում էր, որպեսզի Թուրքիան ծանոթանա և մասնակցի ՆԱՏՕ-ի ռազմաարդյունաբերական ծրագրերին, ինչպես նաև դաշինքի անդամ երկրների կողմից տեխնոլոգիական օգնություն տրամադրվի սեփական

⁵¹ Տես՝ Նոր հայեցակարգով Թուրքիայի համար առաջնային ռազմական սպառնալիք էր համարվում Հունաստանը, ոչ թե ԽՍՀՄ-ը: Տես՝ Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 1, (1919-1980), İstanbul, İletişim yayınları 2002, s. 674.

⁵² Տես՝ Nasuh Uslu, նշվ. աշխ., էջ 102-104:

⁵³ Տես՝ William Hale, նշվ. աշխ., էջ 161:

⁵⁴ Տես՝ Պայմանագրի տեքստը ԱՄՆ Պետդեպարտամենտի պաշտոնական կայքում, <http://photos.state.gov/libraries/turkey/461177/pdf/30t7299.pdf>.

ռազմասարդյունաբերության զարգացման համար: 1970-ականների վերջին Թուրքիան միացավ ՆԱՏՕ-ի օդային նախագրուշացման ու վերահսկման «AWACS» նախագծին, ըստ որի՝ դաշինքի «AWACS» ինքնաթիռներից երեքը պետք է բազավորվեին թուրքական տարածքում⁵⁵:

1970-ական թթ. վերջերին ու 1980-ական թթ. սկզբին Մերձավոր Արևելքում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ՝ ԽՍՀՄ-ի հարավային շրջաններում ռազմական պատրաստությունները, խորհրդային ազդեցության տարածումը Եթովպիայում և ռազմական ներկայության մեծացումը Սիրիայում, իրանական Իսլամական հեղափոխությունը և իսլամական արմատականության տարածման մտավախությունը տարածաշրջանում, խորհրդային զորքերի ներխուժումը Աֆղանստան, իրան-իրաքյան պատերազմն ավելի կարևորեցին Թուրքիայի դերը ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի համար, և դրանով էր պայմանավորված ամերիկյան ռազմական օժանդակության զգալի ավելացումը:

1980 թ. սկզբին ԱՄՆ նախագահ Ջ. Քարտերը Պարսից ծոցի տարածաշրջանը որակեց որպես ամերիկյան կենսական շահերի գոտի՝ հայտարարելով անհրաժեշտության դեպքում այդ տարածաշրջան ամերիկյան ռազմական ուժեր ուղարկելու մասին: Որպես դրա հետևանք՝ նախաձեռնվեց Թուրքիայում ավելի շատ «արագ արձագանքման ուժեր» կենտրոնացնելու գործընթաց, և ստեղծվեց ՆԱՏՕ-ի Կենտրոնական հրամանատարությունը (CENTCOM): ԱՄՆ-ի այդ ռազմավարության մեջ մեծ ռազմական նշանակություն էր տրված հատկապես Թուրքիայի արևելյան շրջաններին⁵⁶: Այդ իսկ պատճառով 1980-ական թթ. սկզբներին Թուրքիայի արևելյան

⁵⁵ Այդ նախագծին Թուրքիայի մասնակցության մասին հուշագիրը ստորագրվել է 1978 թ. դեկտեմբերին Թուրքիայի պաշտպանության նախարար Հ. Ըշքի կողմից: Steu` Б. Поцхверия, նշվ. աշխ., էջ 205-206, 176:

⁵⁶ Արդեն 1982 թ. Թուրքիայում «Արագ արձագանքման ուժերի» մասնակցությամբ անցկացվեցին ՆԱՏՕ-ի գորավարժություններ: Steu` Haluk Gerger, Türk Dış Politikası'nın Ekonomi Politigi, Soğuk Savaş'tan Yeni Dünya Düzeni'ne, İkinci Baskı, İstanbul, Belge Yayınları 1999, ss. 150-151, 157:

շրջաններում ԱՄՆ-ի կողմից կառուցվեցին ու արդիականացվեցին մի շարք ռազմական նշանակության օդանավակայաններ, որոնք հնարավորություն էին տալու տարածաշրջանում արագ արձագանքման ուժեր կենտրոնացնել⁵⁷:

1980 թ. մարտի 29-ին ստորագրված «Պաշտպանական և տնտեսական համագործակցության» (Defense and Economic Cooperation Agreement) թուրք-ամերիկյան մեծ պայմանագիրը նոր էջ բացեց երկու երկրների ռազմական համագործակցության ոլորտում: Պայմանագիրը նախատեսում էր անվտանգության ոլորտում ամերիկյան օժանդակություն, Թուրքիայի կողմից ԱՄՆ-ին սեփական արտադրության էլեկտրոնային ու այլ սարքավորումների մատակարարում, ռազմական համատեղ արտադրություն⁵⁸: Հիմնական պայմանագրին կից ստորագրված «Ռազմաարդյունաբերական համագործակցության լրացուցիչ պայմանագրով» (Defense Industrial Cooperation Supplementary Agreement N2) ամերիկյան կողմը պարտավորվում էր օժանդակել թուրքական ռազմաարդյունաբերության զարգացմանը, ենթակառուցվածքների ստեղծմանը, փոխանակել ռազմական անհրաժեշտ տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվություն և այլն⁵⁹:

Ամերիկյան ռազմական օգնությունը զգալիորեն ավելացավ 1980 թ. հետո՝ 80-ական թթ. ընթացքում՝ հասնելով մինչև տարեկան 700 մլն-ի⁶⁰: 1987-1992 թթ. գրանցվել է ամերիկյան ռազմական օգնության ամենամեծ ցուցանիշը, ինչը տարեկան միջին հաշվով կազմել է մոտ 425 մլն դոլար նվիրատվության, 110 մլն՝ փոխառության տես-

⁵⁷ Տե՛ս՝ Nasuh Uslu, նշվ. աշխ., էջ 105:

⁵⁸ Տե՛ս՝ Sedat Laçiner, Turgut Özal Period in Turkish Foreign policy: Özalism, USAK Yearbook of International Politics and Law 2009, ed. S. Laçiner, M. Özcan ets., Vol. 2, International Strategic Research Organization, Ankara, USAK 2009, pp. 173-174; Turkey Export-import Trade and Business Directory, International Business Publications, USA, Vol. 2, 2007, p. 267.

⁵⁹ Տե՛ս՝ Steve Tolbert, Defense Industrial Cooperation, The DISAM Journal, Spring 1995, p. 22.

⁶⁰ Տե՛ս՝ Nasuh Uslu, նշվ. աշխ., էջ 97-98, 99:

քով: Դրանց հիմնական մասն ուղղվել է թուրքական բանակի սպառազինության արդիականացմանը⁶¹:

ԳԴՀ-ի կողմից Թուրքիային ցուցաբերվող ռազմական օգնությունը ոչ միայն շարունակվեց, այլ 1980-ական թթ. ավելի ընդլայնվեց: Միայն 1981-1984 թթ. ԳԴՀ-ի կողմից Թուրքիային որպես նվիրատվություն հատկացվել էր շուրջ 600 մլն մարկ՝ հիմնականում թուրքական բանակի տանկային տեխնիկայի արդիականացման համար⁶²: 1980-ականների սկզբներից ամերիկյան ռազմական օգնությանը զուգահեռ մեծացավ նաև ԳԴՀ-ի սպառազինության մատակարարման ու ռազմատնտեսական օգնության ծավալը: 1980 թ. ընդունվեց 4-ամյա օգնության հատուկ նոր ծրագիր 600 մլն մարկ արժեքով՝ թուրքական ԶՈՒ-ի արդիականացմանն աջակցելու համար: Այդ ծրագրով նախատեսված էր Թուրքիային գերմանական տանկերի, հրթիռների, հակատանկային միջոցների մատակարարում, թուրքական բանակի տանկերի արդիականացում և սուզանավերի ու տորպեդային մոտորանավակների արտադրության ոլորտում համագործակցություն, համատեղ ռազմական տեխնոլոգիաների զարգացում: 1983 թ. արդեն սկսեցին Թուրքիային մատակարարվել տասնյակ «Leopard 1» տանկեր ու «F-104» ինքնաթիռներ: Բացի այդ, նույն թվականին թուրքական ռազմական նավատորմին հանձնվեց 2 ականակիր նավ: Քննարկվեց նաև Թուրքիայում «Leopard» տանկերի արտադրություն հիմնելու հարցը⁶³:

Թուրք-ամերիկյան ռազմատեխնիկական նախագծերն ու ամերիկյան օժանդակությունը Թուրքիային հնարավորություն տվեցին մտածել սեփական ռազմական արդյունաբերության զարգացման ոլորտում պետական քաղաքականություն վարելու և ռազմաարդյու-

⁶¹ Stu՝ Jim Zanotti, Turkey-U.S. Defense Cooperation: Prospects and Challenges, Congressional Research Service, Report for Congress, April 8, 2011, p. 39, <http://www.fas.org/sgp/crs/mideast/R41761.pdf>.

⁶² Stu՝ Duygu Bazoğlu Sezer, Turkey and the Western Alliance in the 1980s, Political and Socioeconomic Transformation of Turkey, Ed. by Atilla Eralp, Muharrem Tünay, Birol Yeşilada, Praeger Publisher, Westport, 1993, p. 222.

⁶³ Stu՝ Б. Поцхверия, նշվ. աշխ., էջ 224, 176:

նաբերական համալիրի զարգացման մասին: Չնայած երկրի զինվորական ղեկավարությունը նույնպես շահագրգռված էր տեղական ռազմաարդյունաբերության ստեղծման հարցում, այնուամենայնիվ, դրանում զգալի դերակատարություն ունեցավ Թուրքիայի վարչապետ Թ. Օզալը, որի գլխավորած կառավարության կողմից իրականացված տնտեսական բարեփոխումներն ու ռազմաարդյունաբերության ոլորտում պետական աջակցությունը նպաստեցին թուրք գործարարների կողմից այդ բնագավառում մասնավոր ներդրումների ավելացմանը⁶⁴: 80-ական թթ. սկզբից ամերիկյան վարչակազմը, վերաարժևորելով հզոր և կայուն Թուրքիայի համատեղությունն ամերիկյան ռազմավարական շահերին, էական էր համարում այդ երկրին ցուցաբերվող տնտեսական ու ռազմական օժանդակության ծրագրերը: Ըստ ԱՄՆ-ի ռազմաքաղաքական ղեկավարության՝ թուրքական ԶՈւ-ի արդիականացման ու համալրման անհրաժեշտություն էր առաջացել, որով փոխհատուցվելու էր նաև զենքի արգելանքի ընթացքում Թուրքիայի կրած նյութական ու ռազմական կորուստները: 1983 թ. Պենտագոնի գնահատումների համաձայն՝ 13 տարիների ընթացքում թուրքական բանակը ՆԱՏՕ-ի նվազագույն չափանիշներին հասցնելու համար պահանջվելու էր 18 մլրդ դոլար: Ինչպես ԱՄՆ նախագահ Ռեյգանի նախագահության, այնպես էլ ամերիկյան հաջորդ վարչակազմերի համար Թուրքիան կարևորվում էր արևմտյան ռազմաքաղաքական ու անվտանգության շահերի տեսանկյունից⁶⁵: 1980-ական թթ. սկսած՝ ամերիկյան կողմը զգալիորեն ավելացրեց ռազմական ու անվտանգության ոլորտում Թուրքիային տրվող աջակցությունը:

1980 թ. պաշտպանական համագործակցության մասին պայմանագրի ստորագրումից սկսած՝ թուրք-ամերիկյան հարաբերություններն էականորեն բարելավվեցին, ինչն անդրադարձավ նաև

⁶⁴ Stü` USAK Yearbook of International Politics and Law 2009, ed. S. Laçiner, M. Özcan ets., International Strategic Research Organization, Ankara, USAK 2009, p. 174.

⁶⁵ Stü` Nasuh Uslu, The Cooperation Amid problems: Turkish-American Relations in the 1980s, p. 17, http://www.politics.ankara.edu.tr/eski/dosyalar/MMTY/27/2_nasuh_uslu.pdf.

ռազմական ոլորտի համագործակցության նշանակալի զարգացմանը: 1981 թ. դեկտեմբերին երկու երկրները որոշեցին բարձր մակարդակի ռազմական համատեղ խումբ հիմնել՝ երկկողմ ռազմական համագործակցության զարգացման համար⁶⁶: 1982 թ. նոյեմբերին ստորագրվեց երկկողմ հուշագիր, որով նախատեսվում էր Թուրքիայի տարածքում հին ռազմական օդանավակայանների արդիականացում և Մուշում ու Բաթմանում՝ նորերի կառուցում⁶⁷:

1985 թ. լրացավ «Պաշտպանական և տնտեսական համագործակցության մասին» պայմանագրի ժամկետը, և Թուրքիան դրանում որոշ փոփոխությունների վերաբերյալ նոտա հղեց ԱՄՆ-ին: Մասնավորապես՝ թուրքական կողմը ներկայացրեց իր պահանջների ցանկը՝ մեծացնել Թուրքիայի ՋՈւ-ի արդիականացման գործում ամերիկյան օժանդակությունը, վերացնել տրամադրվող օգնության հարցում ամերիկյան Կոնգրեսի «խոչընդոտող» դերը, արտաքին ռազմական վաճառքից գոյացած պարտքերի մարումը, ռազմարդյունաբերության ոլորտում համագործակցության զարգացումը և այլն: Մասամբ համաձայնելով այդ պահանջների հետ՝ 1987 թ. մարտին ստորագրված լրացուցիչ փաստաթղթով պայմանագրի ժամկետը երկարացվեց ևս 5 տարով⁶⁸:

Այդ փաստաթղթին կից գաղտնի արձանագրությամբ, մինչև ամերիկյան «F-16» ռազմական ինքնաթիռներով թուրքական բանակի համալրումը, ԱՄՆ-ը, որպես նվիրատվություն, 40 միավոր «F-4» ինքնաթիռներ մատակարարեց Թուրքիային⁶⁹:

ԱՄՆ-ը ձեռնամուխ եղավ թուրքական ՋՈւ-ի արդիականացման ծախսատար ծրագրի իրականացմանը: Այս համատեքստում, ամենախոշոր նախագծերից մեկն ամերիկյան ու թուրքական ընկե-

⁶⁶ Stü` Birol Yeşilada, Turkish Foreign Policy toward the Middle East, Political and Socioeconomic Transformation of Turkey, Ed. by Atilla Erallp, Muharrem Tünay, Birol Yeşilada, Praeger Publisher, Westport, 1993, p. 179.

⁶⁷ Stü` Duygu Bazoğlu Sezer, նշվ. աշխ., էջ 221:

⁶⁸ Stü` Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 2, (1980-2001), İstanbul, İletişim yayınları 2002, ss. 55-57.

⁶⁹ Stü` Նույն տեղում, էջ 57:

րությունների մասնակցությամբ թուրքական օդուժի համար «F-16» ռազմական ինքնաթիռների արտադրության կազմակերպումն էր Թուրքիայում: Բացի այդ, թուրքական «ASELSAN» ռազմաարդյունաբերական ընկերությունն ամերիկյան ընկերության կողմից տրված արտոնագրի հիման վրա սկսեց բանակի կարիքների համար ռազմական հաղորդակցության ու կապի միջոցների արտադրություն: Թուրքական ԶՈւ-ի հրամանատարությունն ամերիկյան կողմի հետ Անկարայի գործարանում ռազմական ուղղաթիռների հիմնանորոգման աշխատանքներ իրականացնելու համաձայնություն ձեռք բերեց, և այդ գործարանում էլ սկսվեց ամերիկյան «UH-1» ուղղաթիռների հավաքման գործընթաց: Դրանց առաջին խմբաքանակը թուրքական բանակին մատակարարվեց 1985 թ.⁷⁰:

1981 թվականին, ամերիկյան ռազմական օգնության վրա հիմնվելով, թուրքական ԶՈւ-ի գլխավոր շտաբը (այսուհետ՝ ԳՇ, թուրք.՝ Genel kurmay) նախաձեռնեց բանակի արդիականացման ու վերակազմավորման ծրագիր: 1985-1990 թթ. այդ արդիականացման ընդհանուր ծախսերը կազմել են մոտ 15 մլրդ դոլար, որից 5 մլրդ-ը տրվել է ԱՄՆ-ի ու Գերմանիայի կողմից⁷¹:

1980-ականներին բավական մեծ էր նաև ԱՄՆ-ի կողմից սպառազինության ուղղակի վաճառքի ծավալը: Ըստ ամերիկյան պաշտոնական տվյալների՝ 1984 թ. մինչև 1990 թ. ԱՄՆ-ի կողմից «Ուղիղ առևտրային վաճառքի-Direct Comercial Sales» և «Արտաքին ռազմական վաճառքի-Foreign Military Sales» ծրագրերի միջոցով Թուրքիային վաճառվել է շուրջ 3.1 մլրդ դոլար ընդհանուր արժեքով սպառազինություն⁷²:

Թուրքական ԶՈւ-ի արդիականացման հարցում ամերիկյան կողմի շահագրգռվածությունը բխում էր առաջին հերթին ՆԱՏՕ-ի

⁷⁰ Տե՛ս՝ Birol Yeşilada, նշվ. աշխ., էջ 179-180:

⁷¹ Տե՛ս՝ Simon V. Mayall, նշվ. աշխ., էջ 78:

⁷² Տե՛ս՝ Tamar Gabelnick, William D. Hartung, and Jennifer Washburn, Arming Repression: U.S. Arms Sales to Turkey During the Clinton Administration, Joint Report of the World Policy Institute and the Federation of American Scientists, October 1999, <http://www.fas.org/asmp/library/reports/turkeyrep.htm>.

ռազմավարական շահերից, քանի որ տարածաշրջանում ընթացող ռազմաքաղաքական գործընթացները նրա քաղաքականության առաջնահերթություններից էին դարձել, իսկ թուրքական ՋՈւ-ի պատրաստության բարձր մակարդակն ուղղակի անհրաժեշտություն էր: 1980-ական թթ. Թուրքիան Իսրայելից ու Եգիպտոսից հետո ամենաշատ ամերիկյան ռազմական ու տնտեսական օգնություն ստացող երկիրն էր⁷³:

Ընդհանուր առմամբ՝ Սառը պատերազմի ժամանակաշրջանում Թուրքիան իր սեփական ռազմական ներուժով կարող էր պաշտպանվել իր հարևաններից, սակայն ԽՍՀՄ-ի դեմ այն ամբողջովին անկարող էր և հենվում էր ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի ներուժի վրա⁷⁴:

Ուսումնասիրելով Սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կողմից մշտապես տրամադրված սպառազինության տեսակներն՝ սկնհայտ է դառնում, որ Թուրքիան, չնայած ստանում էր հսկայական քանակությամբ ռազմական տեխնիկա, այդուհանդերձ, դրանց մի մասը արդեն իսկ տեխնոլոգիապես արդիական չէին: Ամերիկյան բանակում արդիական սպառազինության ներդրումից հետո գործածությունից դուրս գրված նախորդ մոդելների տեխնիկան ուղարկվել է Թուրքիա և այլ երկրներ: Ամբողջովին կախված լինելով ԱՄՆ-ի ռազմատեխնիկական մատակարարումներից ու ունենալով մեծ բանակ՝ Թուրքիան միևնույն ժամանակ նորագույն սպառազինության լուրջ պակաս ուներ⁷⁵: Ինչպես նշել է թուրք հետազոտող Թյուրքայա Աթայովը՝ Արևմուտքի կողմից Թուրքիայի ՋՈւ-ին մատակարարվող սպառազինությունը չէր համարվում առաջնակարգ ու արդիական: Թուրքիայի պաշտպանության նախարարության (այսուհետ՝ ՊՆ, թուրք. Savunma Bakanligi) բյուջեի վերաբերյալ խառը հանձնաժողովի զեկույցում նունիսկ նշված է եղել, որ թուրքական ՋՈւ-ը ոչ միայն չեն հասել ՆԱՏՕ-ի չափանիշներին, այլ ընդհանրա-

⁷³ Steu` Nasuh Uslu, The Turkish-American Relationship Between 1947 and 2003..., p. 100.

⁷⁴ Steu` Նույն տեղում, էջ 24:

⁷⁵ Steu` Նույն տեղում:

պես նվազագույն ընդունելի որակի⁷⁶: 1970-ական թթ. դրությամբ թուրքական օդուժում մեծ թիվ էին կազմում հնացած տեխնիկական միջոցները: Նույնիսկ թուրքական բանակի համար այդ ժամանակաշրջանում համեմատաբար արդիական համարվող «F-5A» կործանիչներն արդեն չէին համապատասխանում ժամանակի պահանջներին ու չափանիշներին⁷⁷:

Հարկ է նշել, որ Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցումը Թուրքիայի համար նաև անվտանգության ու պաշտպանական ռազմավարության առումով նոր փուլ բացեցին: ՆԱՏՕ-ին անդամակցումով Թուրքիան դարձավ այդ ուժային համակարգի ռազմաքաղաքական շահերի կրողն ու հետևորդը: Սառըպատերազմյան ժամանակաշրջանում թուրքական ՁՈւ-ը հստակ դերակատարություն ունեին ՆԱՏՕ-ի հարավային գծի պաշտպանության գործում՝ կանխելով Խորհրդային Միության մուտքը միջերկրածովյան շրջաններ և Մերձավոր Արևելք՝ այդպիսով իրականացնելով դաշինքի «զապման ռազմավարությունը»: Թուրքիայի տարածքը բացառիկ հարթակ էր խորհրդային միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների (ICBM) արձակումները, փորձարկումները հետևելու և էլեկտրոնային հետախուզություն ապահովելու համար⁷⁸:

ՆԱՏՕ-ի ռազմական պլանավորման հիմքում դրված էր այն մոտեցումը, թե ԽՍՀՄ-ի և վարչական պայմանագրի կազմակերպության ռազմական ուժերի հարձակման դեպքում Թուրքիան որ տարածքները պետք է պաշտպաներ և ինչպես ետ մղեր թշնամու հարվածային ուժը մինչև դաշինքի (այն է՝ ՆԱՏՕ) գորքերի ռազմական գործողությունների մեջ մտնելը: Թուրքիայի ռազմական պլանավորողները ենթադրում էին հավանական թշնամու հարվածային ուժն ընդունել հենց երկրի սահմանին, այնուհետև համակարգված նահանջով ետ քաշվել դեպի երկրի խորքերը: Այդ ժամանակաշրջա-

⁷⁶ Stü ` Тюрккая Атаев, նշվ. աշխ., էջ 234:

⁷⁷ Stü ` Турецкая Республика, справочник. Москва. «Наука», 1975, с. 364.

⁷⁸ Stü ` Sadi Ergüvenç, Turkey's Security Perceptions, Journal of International Affairs, Vol. 3, N. 2, June-August 1998, <http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/02/SadiErguvenc.pdf>, pp. 1-2.

նի Թուրքիայի պաշտպանական հայեցակարգը կրում էր գուտ պաշտպանողական բնույթ՝ հենվելով սովորական սպառազինությունամբ ռազմական գործողություններ իրականացնելու մարտավարության վրա: Ռազմական գործողությունների դեպքում միջուկային զենքի օգտագործումը գտնվում էր միայն ՆԱՏՕ-ԱՄՆ լայն իրավասության ներքո⁷⁹:

Փաստորեն, սառըպատերազմյան շրջանի հետ կապված խոսել Թուրքիայի առանձին պաշտպանական հայեցակարգի մասին ճիշտ չէ, քանի որ այն ամբողջովին տեղավորվում էր Հյուսիսատլանտյան դաշինքի և հատկապես ԱՄՆ-ի ռազմաքաղաքական հայեցակարգի ու ռազմավարության համատեքստում:

Քանի որ ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի համար Թուրքիային վերապահված էր ԽՍՀՄ-ի կողմից հավանական առաջին հարվածն ընդունելու դերը, ինչ-որ առումով նաև պատերազմադաշտ, ապա հատկապես հարձակողական սպառազինության առումով միշտ ստացել է համեմատաբար հնացած նմուշներ: Իսկ բանակի մարտունակությունը մեծ հաշվով շատ չի կարևորվել⁸⁰: Սակայն պետք է նկատել, որ Թուրքիան Մառը պատերազմի տարիներին ռազմական գերակայություն ուներ ինչպես իր մի շարք անմիջական հարևանների, այնպես էլ մերձավորարևելյան մի շարք արաբական պետությունների նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի ԶՈւ-ի զարգացման, ռազմական ենթակառուցվածքների կառուցման, սպառազինության համալրման ու շարունակական արդիականացման գործում մեծ է եղել հատկապես ԱՄՆ-ի ու ընդհանրապես ՆԱՏՕ-ի անդամ երկրների ռազմատեխնիկական ու ֆինանսատնտեսական աջակցությունն,

⁷⁹ Տես՝ Michael Robert Hickok, *Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization*, US Army War College, Parameters (Summer 2000), <http://www.carlisle.army.mil/USAWC/parameters/Articles/00summer/hickok.htm>.

⁸⁰ Դա պայմանավորված էր ոչ միայն Թուրքիայի աշխարհագրական դիրքով, այլ նաև թուրքական բանակի ավանդույթներից, կիրառման ձևաչափերից: Դեռ Օսմանյան կայսրության շրջանից թուրքական բանակները միշտ հենվել են մարդակային քանակական գործոնի վրա:

ինչը հնարավորություն տվեց Թուրքիային իր ԶՈՒ-ը շարունակաբար համալրել սպառազինությամբ: Բացի այդ, ԱՄՆ-ի ու եվրոպական մի շարք երկրների հետ ռազմաարդյունաբերության ոլորտում Թուրքիայի հետ համագործակցությունը, համատեղ մի շարք նախագծերը որոշակի ազդեցություն ունեցան Թուրքիայում ռազմաարդյունաբերական ենթակառուցվածքների զարգացման ու մասնագիտական կազմի պատրաստման վրա:

1.2. Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնական միտումները Սառը պատերազմի ավարտից հետո

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի քաղաքական և հատկապես զինվորական շրջանակները կանգնեցին արտաքին քաղաքականության, անվտանգային ու պաշտպանական քաղաքականության ⁸¹ վերանայման ու հստակեցման անհրաժեշտության առջև: Սառը պատերազմի ավարտով սկսված աշխարհաքաղաքական փոփոխություններն ու զարգացումները ստիպեցին Թուրքիա-

⁸¹ Պաշտպանական քաղաքականությունը պետության քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որը նպատակաուղղված է հավանական արտաքին թշնամուց պետության, նրա բնակչության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության պաշտպանությանը: Ամբողջականություն կազմող պաշտպանական քաղաքականությունն ունի փոխկապված, սակայն բովանդակությամբ ու իրականացման ձևերով սկզբունքորեն տարբերվող երկու բաղադրիչ. ներքին՝ կապված պետության պաշտպանական ներուժի ձևավորման ու զարգացման, ռազմական կազմակերպվածքի ստեղծման, պահպանման ու նախապատրաստման, ռազմական շինարարության և զինված բռնության միջոցների օրենքով սահմանված կիրառման հետ, արտաքին՝ կապված պետության, նրա բնակչության, ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության պաշտպանության, հնարավոր արտաքին ագրեսիայի կանխման և հետմղման, ինչպես նաև սահմանների պահպանման կամ ընդարձակման, պետության սահմաններից դուրս գտնվող որոշակի տարածաշրջաններում գերիշխանության հաստատման և պաշտպանողական կամ ագրեսիվ նվաճողական նպատակների իրականացման հետ: Տես՝ Հ. Քոթանջյան, Դ. Չիլինգարյան, Վ. Ավետիսյան, Ա. Մինասյան, «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք, Հայկական բանակ, Հ. 1-2 (59-60), 2009, էջ 10-11:

յին առավել զգուշորեն և հետևողականորեն հստակեցնել միջազգային ու տարածաշրջանային անվտանգության ու պաշտպանական քաղաքականության գերակայություններն ու նոր մարտահրավերները: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վերացավ «խորհրդային վտանգը», և Թուրքիայի համար նաև նոր հնարավորություններ բացվեցին այնպիսի տարածաշրջաններում, որոնք նախկինում «անտեսված էին» այդ երկրի ռազմաքաղաքական դեկավարության կողմից, և Թուրքիան հայտնվեց նոր ձևավորվող ռազմավարական «բնապատկերի խաչմերուկում»: Իր հերթին, փոխվեցին Թուրքիայի անվտանգության մարտահրավերներն ու սպառնալիքները⁸²:

Սառը պատերազմի ավարտը հանգեցրեց աշխարհաքաղաքական նոր վերաձևումների, ինչի արդյունքում փոխվեց տարբեր երկրների անվտանգային ու պաշտպանական քաղաքական ողջ ռազմավարությունը: Հետաառըպատերազմյան նոր ժամանակաշրջանի սկիզբը որոշ անորոշությունների առաջ կանգնեցրեց պաշտոնական Անկարային իր արտաքին և հատկապես անվտանգային-պաշտպանական քաղաքականության հետագա ուղեգծերի սահմանման և նոր ռազմավարության որդեգրման առումով: Օրակարգային խնդիր դարձավ նախ և առաջ տարածաշրջանային, անվտանգության և պաշտպանական քաղաքականության հրամայականների վերաիմաստավորումը: Թուրքիայի քաղաքական ու զինվորական շրջանակների մոտ մտավախություն կար, որ Սառը պատերազմի ավարտով Թուրքիան կկորցնի իր ռազմավարական նշանակությունն Արևմուտքի ու ԱՄՆ-ի համար և կհայտնվի տարածաշրջանային մեկուսացման վտանգի առջև: Թուրքիայում անհանգստությունն այն էր, որ իր անմիջական հարևանների կողմից կարող է ընդունվել կասկածամտությամբ կամ նույնիսկ թշնամաբար: Աշխարհաքաղաքական նոր զարգացումները Թուրքիային ստիպեցին ներգրավվել իր անմիջական տարածաշրջանային գործընթացներում, քանի որ

⁸² Stiu` F. Stephen Larrabee, Turkey as a US Security Partner, Prepared for the United States Air Force, RAND Corporation, 2008, p. 3, http://www.rand.org/pubs/monographs/2008/RAND_MG694.pdf.

այն Թուրքիայի համար և՛ նոր հեռանկարներ էր բացում, և՛ նոր մարտահրավերներ ստեղծում⁸³:

1990-ական թթ. սկզբին Թուրքիայի ռազմաքաղաքական դեկավարության համար առաջնային էին համարվում հատկապես Մերձավոր Արևելքից Թուրքիային սպառնացող մարտահրավերները: Թուրք հետազոտող Հ. Գերգերի դիպուկ բնորոշմամբ՝ Թուրքիայում 1990-ական թթ. սկզբներին միջազգային իրադրությունն ընդունվում էր որպես «ազգային շահերի համար ոչ նպաստավոր»⁸⁴: Նման անհանգստությունն առաջին հերթին բխում էր Մերձավոր Արևելքից և իր անմիջական հարևաններից: 1990 թ. ապրիլի 6-ին թուրքական «Hürriyet» պարբերականը հրապարակեց Թուրքիային իր հարևաններից սպառնացող մարտահրավերների մասին՝ նշելով, որ Թուրքիան չունի համապատասխան սպառազինություն՝ Սիրիայում, Իրաքում և Իրանում գտնվող հրթիռներին դիմագրավելու համար. «Մեր հարևանները նման են սպառազինության պահեստների»⁸⁵:

Արևմուտքի և առաջին հերթին ԱՄՆ-ի նկատմամբ իր ռազմավարական նշանակությունը, թուրք-ամերիկյան ռազմավարական հարաբերությունները նոր իրավիճակում հիմնավորելու և մերձավորարևելյան տարածաշրջանում իր ակտիվ ներգրավվածությունն ապահովելու համար կարևոր գործոն էր 1991 թ. Օոցի պատերազմում ԱՄՆ-ին Թուրքիայի կողմից ցուցաբերած ռազմական աջակցությունը⁸⁶: Հատկանշական է, որ Թուրքիան քայլեր էր ձեռնարկում դուրս գալ ավանդական քեմալական «մեկուսացման-չեզոքության և

⁸³ Stau՝ Henri J. Barkey, Turkey and The New Middle East, A Geopolitical Exploration, Reluctant Neighbour, Turkey, s Role in the Middle East, ed. Henri J. Barkey, Washington, United States Institute of Peace Press, 1996, pp. 30-31.

⁸⁴ Stau՝ Haluk Gerger, նշվ. աշխ., էջ 179:

⁸⁵ Stau՝ Նույն տեղում:

⁸⁶ Stau՝ 1990 թ. Իրաքի ներխուժումը Քուվեյթ, Թուրքիայի նախագահ Թ. Օզալին հնարավորություն տվեց ցույց տալ ԱՄՆ-ին, որ Թուրքիան դեռևս լուրջ աշխարհառամավարական դերակատարություն կարող է ունենալ ԱՄՆ-ի արտաքին ռազմավարության մեջ և մասնակցեց Իրաքի դեմ ռազմական գործողություններին: Stau՝ Dietrich Jung and Wolfgang Piccoli, Turkey at the Crossroads, Ottoman Legacies and A Greater Middle East, London & New York, 2001, p. 142:

հավաքական անվտանգության» ուղեգծից և ավելի դինամիկ դերակատարություն ստանձնել մերձավորարևելյան տարածաշրջանում: Արևմուտքի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացումը միտված էր նաև Թուրքիայի ռազմական անվտանգության երաշխիքների բարձրացմանը:

Չնայած Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի եվրաինտեգրման քաղաքականությունը մնում էր հիմնական արտաքին քաղաքական ռազմավարությունը, այնուամենայնիվ, Թուրքիան ընդունեց նոր ռազմավարություն, որով ԱՄՆ-ի ու Եվրոպայի հետ Թուրքիայի սերտ հարաբերությունները կապակցվում էին Մերձավոր Արևելքում, Մեծովյան տարածաշրջանում ու Կենտրոնական Ասիայում⁸⁷ ստանձնելիք ավելի մեծ դերակատարությամբ: ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ն հանդիսանում էին Թուրքիայի անվտանգության հիմնական երաշխավորները մերձավորարևելյան տարածաշրջանից բխող մարտահրավերների (որոնք հիմնականում առկա էին Սիրիայից, Իրաքից ու Իրանից) դիմագրավման տեսանկյունից⁸⁸: Սառը պատերազմի ավարտով Թուրքիան հստակեցրեց իր անվրտանգությանն սպառնացող մարտահրավերները՝ տարածաշրջանային ու էթնիկ հակամարտություններ, քաղաքական ու տնտեսական անկայունություն, զանգվածային ոչնչացման զենքի (այսուհետ՝ ՋՈԶ) տարածում, զենքի ու թմրամիջոցների մաքսանենգություն, միջազգային

⁸⁷ Տես՝ Կենտրոնական Ասիայում Թուրքիայի քաղաքականության վերաբերյալ, Լ. Հովսեփյան, Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 90-ական թթ. որպես եվրասիական քաղաքականության կարևորագույն ուղղություն: Ձեռքբերում, թե՛ ձախողում, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 5, Երևան 2008; Турецкая модель и обусловленность внешней политики Анкары в странах Центральной Азии стратегическими интересами запада, "Центральная Азия и Кавказ", Журнал социально-политических исследований, № 2 (62) 2009:

⁸⁸ Տես՝ Stephen J. Flanagan, Samuel J. Brannen, Turkey's Shifting Dynamics, Implications for U.S.-Turkey Relations, Center for Strategic and International Studies, CSIS, June 2008, pp. 2-8.

ահաբեկչություն, որոնց սպառնալիքը մեծ էր համարվում հատկապես Մերձավոր Արևելքից⁸⁹:

Տարածաշրջանից բխող մարտահրավերների ու ռիսկերի գնահատումների հիման վրա Թուրքիայի ԶՈւ-ի ԳՇ-ի համար որպես երկրի տարածքային ամբողջականության պահպանման, անվտանգության առաջադրանք էր դիտվում երկրի բազմաձև կատարած պաշտպանությունը⁹⁰:

1990-ական թթ. կեսերին Թուրքիայի պաշտպանական հայեցակարգը հիմնվում էր տարածաշրջանային մարտահրավերներին դիմակայելու միջոցով երկրի տարածքային ամբողջականությունն ապահովելու ռազմավարության վրա: Մտքը պատերազմի ավարտից հետո դադարելով լինել երկու ուժային համակարգերի միջև «ռազմավարական պատնեշ»՝ Թուրքիան փոխարենն իր սահմանի անմիջական հարևանությամբ ստացավ լարվածության օջախներ և «թեժ կետեր», որոնք դիտարկվում էին որպես այդ երկրի անվտանգությանն ուղղված մարտահրավերներ:

Հետստորապատերազմյան ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև 1990-ական թթ. վերջը, Թուրքիայում դեռևս գերիշխում էր ավանդական «տարածքների կորստի ու Թուրքիայի մերժման վախը», ինչը հանրապետական Թուրքիայի անվտանգության դիսկուրսի անբաժանելի մասն էր կազմում⁹¹: Մի շարք թուրք բարձրաստիճան զինվորականների հրապարակումներում Թուրքիայի նկատմամբ առկա սպառնալիքները ամբողջացվում էին տարածքային մասնատման ու տարածքների կորստի վախի մեջ⁹²: Թուրք գեներալ Ն. Շե-

⁸⁹ Stü` Şebnem Uđum, Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defence, Turkish Studies Institute, Vol. 4, N. 3, 2003, p. 73.

⁹⁰ Stü` Michael Robert Hickok, նշվ. աշխ.:

⁹¹ Stü` Pinar Bilgin, Turkey's changing security discourses: The challenge of globalisation, European Journal of Political Research 44, 2005, p. 185, <http://www.bilkent.edu.tr/~pbilgin/Bilgin-EJPR2005.pdf>.

⁹² Ժամանակակից Թուրքիայի հասարակական-քաղաքական, գիտական ու նաև զինվորական որոշ շրջանակներում շարունակվում են Թուրքիայի մասնատմանը, քայքայմանն ու տրոհմանն ուղղված արտաքին ուժերի ծրագրերի ու մտադրությունների մասին քննարկումները: Այդ երևույթը քաղաքագիտական, վերլուծական

նօղյուն համարում էր, որ Թուրքիան աշխարհում ունի ամենաշատ արտաքին թշնամիները, որոնց ցանկությունները Թուրքիայի նկատմամբ «վրեժնորությունն է», իսկ գեներալ Դ. Բայազիտը (1992-1995 թթ. Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար) նշում էր, որ արտաքին ուժերը տարածաշրջանում ուժեղ ու հզոր Թուրքիայի գոյությունը շատ դեպքերում ընկալում են որպես մարտահրավեր և որդեգրել են քրդական պետություն ստեղծելու գաղտնի քաղաքականություն: Այս համատեքստում առավել կտրուկ է արտահայտվել թոշակի անցած գեներալ Ս. Իլիանը, ըստ որի, Արևմուտքը ցանկանում է հասնել նրան, «ինչը չհաջողվեց Առաջին աշխարհամարտում, այսինքն՝ մասնատել Թուրքիան»⁹³:

Չնայած Թուրքիան դեռ անհանգստություն էր զգում ԽՍՀՄ-ի հետ նախկին սահմանի հարևանությամբ ընթացող զարգացումներից, այդուհանդերձ, ռազմավարական հիմնական առաջնահերթությունը թեքվեց դեպի հարավ՝ Իրաքից, Իրանից, Սիրիայից եկող նոր վտանգներին և քրդական հիմնախնդրին: Որոշ թուրք հետազոտողներ նշում են, որ Թուրքիայի կառավարող շրջանակներն ամենից շատ վախենում էին Թուրքիայի տարածաշրջանային մրցակիցների ու թշնամիների միջև ռազմական համագործակցության ու դաշնակցային հարաբերությունների հաստատումից: Հատկապես Հունաստանը քայլեր ձեռնարկեց «շրջափակելու» Թուրքիային՝ հարևան

գրականության մեջ ընդունված է անվանել «Սևրաֆորիա» կամ «Սևրի սինդրոմ»: Ավելի մանրամասն տես՝ Լ. Հովսեփյան, Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ: Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում, Երևան: «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն», 2012:

⁹³ Տես՝ P. Bilgin, նշվ. աշխ., էջ 183-185: Այս առումով խիստ բնորոշ էր 2007 թ. Թուրքիայի ԶՈՒ ԳՇ-ի նախկին պետ (1990-94 թթ.) Դ. Գյուրեշի այն հայտարարությունը, որ «Թուրքիան միշտ պետք է զգոն լինի, քանի որ Թուրքիայի համար միշտ առկա է մասնատման վտանգը, ինչը ցանակնում են թե՛ ԱՄՆ-ը, թե՛ ԵՄ-ն, որոնց համար նախընտրելի է Թուրքիայի փոքրացումը»: Տես՝ ABD-AB, Türkiye'nin bölünmesini istiyor, Milliyet, 04.11.2007, Doğan Gureş Paşa'dan şok iddia; <http://www.ensonhaber.com/gundem/90989/dogan-gures-pasadan-sok-iddia.html>. Ըստ թուրքական ընկալումների՝ դա մի հաղթաթուղթ է Թուրքիայի դեմ արտաքին ուժերի կողմից, որոնք օգտագործվում են այդ երկրից տարբեր զիջումներ ստանալու համար:

երկրների հետ երկկողմ ու բազմակողմ ռազմական համագործակցություն հաստատելու միջոցով⁹⁴: 1990-ական թթ. առաջին կեսին Հունաստանը ռազմական ոլորտում համագործակցության պայմանագրեր ստորագրեց ու սերտ հարաբերություններ հաստատեց Բուլղարիայի, Սիրիայի, Իրանի ու Ռուսաստանի, իսկ 1996 թ.՝ նաև Հայաստանի հետ: Նման իրավիճակն անհանգստացրեց Թուրքիային, որն էլ սկսեց հակակշիռներ գտնել նման ռազմաքաղաքական վերաձևումներին⁹⁵:

1990-ական թթ. Թուրքիայի ռազմական ոլորտի պատասխանատուները Ռուսաստանը, Հունաստանը, Իրաքը, Իրանը և Սիրիան դիտում էին որպես Թուրքիայի հիմնական սպառնալիքներ՝ էլեկտրոլայդ երկրների կողմից Թուրքիայի նկատմամբ տարածքային հավակնություններից և թուրքական սահմանին ռազմական ուժեր կենտրոնացնելու նրանց ռազմական կարողություններից⁹⁶: Նախկինում Թուրքիայի արտգործնախարարության քարտուղարի տեղակալ և Վաշինգտոնում այդ երկրի դեսպան Շ. Էլեքդաղն, ամենայն հավանականությամբ արտահայտելով զինվորականության մոտեցումները, Թուրքիայի հարևաններից Հունաստանը և Սիրիան դասում էր որպես սպառնալիք ներկայացնող երկրներ, որոնք տարածքային պահանջներ, հավակնություններ ունեին Թուրքիայից: Ըստ նրա՝ սառը պատերազմյան շրջանի համեմատ Թուրքիան 90-ական թթ. սկզբին գտնվում էր բազմակողմ ռազմական գործողությունների մեջ ներքաշվելու սպառնալիքի առջև ու պետք է պատրաստ լիներ անհրաժեշտության դեպքում իր հարևաններից որևէ մեկի հետ ռազմական գործողությունների մեջ մտնել: Հուսալի և ամուր պաշտպանությունն ստիպում էր Թուրքիային ընդունել Էգեյան և հարավային ճակատներում միաժամանակ համարժեք, պաշտպանունակ և արա-

94 اورکلی ج.، استراتژی امنیت ملی ترکیه، شماره ۷/۳، وزارت فرهنگ و آموزش عالی، پژوهشکده مطالعات راهبردی، تهران، ۱۳۸۰، ص ۱۳

95 Stü` Nasuh Uslu, Turkish foreign policy in the post-cold war period, Nova Publishers, New York, 2004, pp. 3-4. Stü` u İsmail Kemal Kirisci, Post Cold-War Turkish Security and the Middle East, Middle East Review of International Affairs, Vol. 1, No. 2, July 1997:

96 Stü` M. Robert Hickok, նշվ. աշխ.:

գորեն վերակազմավորվելու ներուժ ունեցող ռազմական ուժերի վրա հիմնված ռազմավարություն: 1990-ական թթ. Թուրքիայի ռազմական հայեցակարգը կառուցված էր այսպես կոչված «երկու և կես» պատերազմի ռազմավարության հիման վրա: Այդ հայեցակարգի համաձայն՝ Թուրքիան պետք է պատրաստ լիներ լայնածավալ ռազմական գործողություններ մղելու միաժամանակ երկու ճակատներում՝ Էգեյան և հարավային, ինչպես նաև երկրի ներսում⁹⁷: Դատելով այդ ժամանակաշրջանի իրավիճակից, ամենայն հավանակա-նությամբ, վտանգավոր էին համարվում հունական և սիրիական ճակատները: Երկրի ներսում ռազմական գործողությունների իրա-կանացումն ուղղված էր քուրդ զինյալների՝ Քրդստանի բանվորա-կան կուսակցության (այսուհետ՝ ՔԲԿ-ՔԿԿ) գրոհայինների դեմ: Պաշտպանական ռազմավարության համաձայն՝ թուրքական ՋՈւ-ը պետք է լինեին լավ մարզված, կազմակերպված, սպառազինված և իրենց առջև ունենային երկու կարևոր խնդիր: Նախ՝ Թուրքիայի ՑՈւ-ն ու օդուժը պետք է ի վիճակի լինեին կանգնեցնել հրետանային հզոր հարձակումները երկու ուղղություններից, այնուհետև անց-նեին ամուր պաշտպանության: Իսկ հատուկ նշանակության զորա-միավորումներն ու ժանդարմերիան, արագ արձագանքման ուժերի վրա հիմնվելով, իրականացնեին հակագործողություններ երկրի ներսում: Ռազմական նման պլանավորման համատեքստում նավա-տորմը պետք է Բոսֆորի նեղուցում հսկողություն և նախնական պաշտպանություն իրականացներ: Ենթադրվում էր, որ պատերազմը վարվելու է բուն Թուրքիայի տարածքում, և այդ երկրի ՋՈւ-ից պա-հանջվում էր մարտավարական շարժունակություն, մինչդեռ թշնա-մու երկրի խորքերը հասնելու մարտավարությունը վճռական չէր համարվում⁹⁸: Այն, որ Սիրիայի հետ պատերազմը բավական հավա-նական էր այդ տարիներին, հաստատեց Թուրքիայի ՋՈւ-ի ԳՇ նախ-

⁹⁷ Stü` Şükrü Elekdağ, 2 ½ War Strategy, Perceptions, Journal of International Affairs, Vol. 1, March-May, 1996, <http://www.sam.gov.tr/perceptions/Volume1/March-May1996/212WARSTRATEGY.pdf>.

⁹⁸ Stü` M. Robert Hickok, նշվ. աշխ.:

կին պետ Յ. Բյույուքանըթը 2009 թ. նոյեմբերին Բեյքենթի համալսարանի ռազմավարական հետազոտությունների կենտրոնում ունեցած իր ելույթում, ըստ որի՝ 90-ական թթ. կեսերին Թուրքիան և Սիրիան գտնվել են պատերազմի շեմին, և թուրքական բանակն ավարտել էր բոլոր պատրաստությունները պատերազմի համար⁹⁹:

Թուրք ռազմական վերլուծաբան Ա. Քյուլեբին, Թուրքիայի պաշտպանական քաղաքականության վերաբերյալ իր հետազոտության մեջ, 1990-ական թթ. և դրանից հետո Հայաստանը¹⁰⁰ նույնպես ընդգրկում էր Թուրքիայի ռազմական անվտանգության տեսանկյունից խնդրահարույց երկրների ցանկում: Ըստ նրա՝ Թուրքիայի անվտանգության առումով մարտահրավերների ու սպառնալիքների փոփոխականությունն ու առաջնահերթությունն ըստ երկրների ժամանակի հետ ստացել է ավելի ընդգծված բնույթ: Մինչև 1990-ական թթ. Թուրքիայի անվտանգության հիմնական սպառնալիքները բխում էին Հունաստանից, Սիրիայից և նախկին Խորհրդային ճամբարից: Իրավիճակը փոխվեց 1990-ականն թթ., երբ մարտահրավերների առումով առաջնային դարձավ Հունաստան-Հայաստան-Սիրիա «առանցքը»: 1999 թ. հետո Թուրքիային ուղղված սպառնալիքները բխում էին Հունաստանից ու Հայաստանից և Հյուսիսային

⁹⁹ Տես՝ Suriye ile kanlı savaş hazırlığı, <http://www.haber3.com/turkiye-rusya-savas-senaryolari--521850h.htm>.

¹⁰⁰ Տես՝ Թուրքական «Քադիր Հաս» համալսարանի կողմից 2013 թ. վերջերին Թուրքիայի արտաքին քաղաքականության նկատմամբ հանրային ընկալումներն ու մտնեցումները պարզելու նպատակով կատարված սոցիոլոգիական հետազոտության համաձայն՝ հարցվածների 7.2 %-ը Հայաստանը համարել է Թուրքիայի համար սպառնալիք ներկայացնող երկիր: 2011թ. անցկացված սոցիոլոգիական հետազոտությունը շարունակում են դիտվել որպես Թուրքիային թշնամի երկրներ: Ցանկում Հայաստանին հաջորդել են Հունաստանը (6.5 %) և Կիպրոսի Հանրապետությունը (3.9 %): Հետազոտության արդյունքներով՝ Թուրքիայի համար սպառնալիք ներկայացնող երկրների ցանկը գլխավորել են ԱՄՆ-ը (41.7 %), Իսրայելը (37.1 %), Սիրիան (23.9 %) և Իրանը (18.4 %): Ռուսաստանը որպես սպառնալիք է համարել հարցվածների 10.6 %-ը: Տես՝ <http://sites.khas.edu.tr/tdpkaa/>;

<http://www.aksam.com.tr/yasam/dunyada-turkiyenin-en-yakin-dostu-azerbaycan/haber-266493>.

Իրաքում քրդական ինքնավարությունից¹⁰¹: Հարկ է նշել, որ Հայաստանին ռազմական անվտանգության տեսանկյունից մարտահրավեր դիտարկելը, պայմանավորված էր ոչ այնքան Հայաստանի ռազմական ներուժի ու Թուրքիայի դեմ հավանական ռազմական գործողություններ վարելու գործոնով, այլ ավելի շուտ՝ ՀՀ-ում ռուսական ռազմաբազաների առկայությամբ, Արցախյան հիմնախնդրով ու Ադրբեջանի պաշտպանության նպատակով հնարավոր ռազմական գործողությունների մեջ ներքաշվելու հանգամանքով:

Թուրքիայում 1990-ական թթ. ընթացքում արտաքին քաղաքականության հիմնախնդիրները դիտարկվում էին ռազմական անվտանգության դիրքերից: Թուրք հետազոտող Հ. Գերգերի բնորոշմամբ՝ արտաքին քաղաքականության ու ազգային շահերի «ռազմականացումը», բացի այն, որ անվտանգայնացման (*securitization*) ուղղակի հետևանք էր շատ դեպքերում, ապահովեց նաև զինվորականության վճռական խոսքի իրավունքը: Թուրքիայի որոշ հարևաններից շարունակական ռազմական սպառնալիքի առկայության փաստարկներով արտաքին քաղաքականության ուժեղացման հիմնական պայմանը դիտարկվում էր Թուրքիայի ռազմական համարժեք ուժերի գոյությունը: Թուրքիայի արտաքին քաղաքականությունն ուղղակի այդ ժամանակաշրջանում կապվում էր ռազմական ներուժի հետ: Ինչպես նշել է Թուրքիայի ԳՇ պետ Դ. Գյուրեշը՝ որքան հզոր լինի պետության բանակը, այնքան ազդեցիկ ու ուժեղ կլինի նաև արտաքին քաղաքականությունը¹⁰²: 1990-ական թթ. զինվորականության դերակատարությունը երկրի արտաքին քաղաքականության օրակարգի ձևավորման ու որոշումների կայացման գործում էականորեն աճեց: Դա առավել ընդգծված բնույթ էր կրում հատկապես արտաքին քաղաքականության այնպիսի խնդիրներում, որոնք դիտարկվում էին անվտանգության տեսանկյունից: Թուրք

¹⁰¹ Տես՝ Ali Külebi, Defence Concept of Turkey is Changing, April 2008, <http://www.eurasiacritic.com/articles/defence-concept-turkey-changing>.

¹⁰² Տես՝ Ali Balci, 1990 sonrası Türk Dış Politikası Üzerine Bazı Notlar: Avrupa Birliği ve Kıbrıs Örneği, Türkiyenin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010, s. 92.

բարձրաստիճան զինվորականներն իրենց ելույթներում հաճախակի էին անդրադառնում արտաքին քաղաքականության այնպիսի հիմնախնդիրների, ինչպիսիք էին Կովկասում Ռուսաստանի դերը, թուրք-ռուսական հարաբերությունները, թուրք-հունական, թուրք-իրանական հարաբերությունները¹⁰³: 1994 թ. Թուրքիայի ՋՈւ ԳՇ պետ Դ. Գյուրեշն իր ելույթներից մեկում քննադատեց Կովկասում ռուսական ազդեցության մեծացումը՝ նշելով, որ Ռուսաստանը Թուրքիայի համար ավելի մեծ սպառնալիք է ներկայացնում, քան Սառը պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը¹⁰⁴:

1997 թ. փետրվարին Թուրքիայի ՋՈւ ԳՇ պետի տեղակալ Չելվիք Բիրը Վաշինգտոնում հայտարարում է, որ Իրանը հանդիսանում է ահաբեկչական պետություն՝ մեղադրելով իսլամական հեղափոխության արտահանման, ԶԲԿ-ին աջակցության և միջուկային սպառազինության արտադրության մեջ¹⁰⁵: Ի դեպ, 1997 թ. փետրվարի 28-ի ռազմական հեղաշրջման դատական գործի շրջանակներում դիտարկված Թուրքիայի Անվտանգության խորհրդի 1997 թ. փետրվարյան արձանագրություններից մեկում փաստվում էր, որ 1990-ականներին Թուրքիայի համար Իրանի Իսլամական Հանրապետությունը մարտահրավեր էր ներկայացնում կրոնական գործոնով պայմանավորված, ինչի համար առաջարկվում էր առանց այդ երկրի հետ բարիդրացիական ու տնտեսական հարաբերությունների վրնասման Իրանի «վտանգավոր» քայլերի ու գործողությունների դեմ միջոցառումների փաթեթ ներդնել¹⁰⁶:

Ընդհանուր առմամբ, կիպրական հիմնախնդրի գոյությունը, ավելի ուշ քրդական զինյալ պայքարը երկրի զինվորական բյուրոկրատիայի ձեռքին Թուրքիան գլոբալիզացիայի ազդեցությունից հե-

¹⁰³ Ştu` Müge Aknur, TSK'nin Dış Politika Üzerindeki Etkisi, Türkiye'nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010, s. 134-135.

¹⁰⁴ Ştu` Müge Aknur, TSK'nin Dış Politika Üzerindeki Etkisi, Türkiye'nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010, s. 135

¹⁰⁵ Ştu` Նույն տեղում:

¹⁰⁶ Ştu` MGK tutanakları ortaya çıktı !, <http://www.haber3.com/mgk-tutanaklari-ortaya-cikti-haberi-2211114h.htm>.

ռու պահելու և ազգայնական կողմն ուժեղացնելու գործընթացում գործիքների դեր էին կատարում: Վերոնշյալ խնդիրները նաև *անվտանգայնացման* միջոցով ռազմական վերնախավի կողմից երկրի հասարակական-քաղաքական կյանքում իրենց ազդեցիկ դիրքն ապահովելու լայն հնարավորություններ էին ընձեռում¹⁰⁷:

1990-ական թթ. վերջին Թուրքիայի ՑՈւ-ի հրամանատար Հ. Քըվրքթոլուն (1998-2002 թթ. ՁՈւ-ի ԳՇ պետ) սահմանեց Թուրքիայի նկատմամբ առկա մարտահրավերները, այն է՝ տարածաշրջանային և էթնիկ հակամարտությունները, ՁՈԶ-ի տարածումը, կրոնական ծայրահեղականությունը, թմրանյութերի շրջանառությունը և միջազգային ահաբեկչությունը¹⁰⁸: Խուսափելով տալ կոնկրետ երկրների անուններ որպես Թուրքիային ուղղված սպառնալիքների աղբյուր՝ բարձրաստիճան զինվորականն ընդգծել է, որ երկրի բանակը պետք է ի վիճակի լինի «գործել արտաքին և ներքին սպառնալիքների դեմ, որոնք վտանգում են Թուրքիայի տարածքային ամբողջականությունն ու հանրապետական կարգը»¹⁰⁹: Թուրքական պաշտպանական հայեցակարգում 1990-ական թթ. վերջին սկզբունքային նոր ռազմավարություն հայտնվեց, ըստ որի՝ երկրի ՁՈւ-ը պատրաստ են լինելու կանխել Թուրքիայի դեմ հարձակումներն ու սպառնալիքները մինչև բուն թուրքական տարածքին հասնելը: Անկարայի պաշտպանական հայեցակարգի «առաջնային-վաղահաս պաշտպանության» (*forward engagement-forward defense*) ռազմավարությունը ենթադրում էր ռազմական գործողությունների սկսման դեպքում դրանք կանխել երկրի սահմաններից դուրս՝ զինված գործողությունները փոխադրելով թշնամու տարածք¹¹⁰: «Վաղահաս

¹⁰⁷ Տես՝ Ali Balci, 1990 sonrası Türk Dis Politikası Uzerine Bazi Notlar: Avrupa Birliği ve Kibris Ornegi, Turkiyenin Degisen Dis Politikasi, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayin, 2010, s. 94.

¹⁰⁸ Տես՝ Փաստորեն, անվտանգային-պաշտպանական մարտահրավերները Թուրքիան փորձում էր սահմանել ՆԱՏՕ-ի առաքելություններին համահունչ, ընդունել նաև միջազգային անվտանգության հիմնական ոլորտները:

¹⁰⁹ Տես՝ M. Robert Hickok, նշվ. աշխ.:

¹¹⁰ Տես՝ Նույն տեղում:

պաշտպանության» հայեցակարգային մոտեցման կիրառման ձև կարելի է համարել Թուրքիայի ՋՈւ-ի կողմից Հյուսիսային Իրաքում - անդրսահմանային ռազմական գործողությունները քուրդ զինյալների դեմ, որոնք ավելի ընդգրկուն բնույթ ստացան հատկապես 1990-ական թթ.¹¹¹:

Թուրքական պաշտպանական նոր ռազմավարության մեջ համընդհանուր անվտանգության ու պաշտպանության սկզբունքների հետ միասին ներառվեց կանխարգելիչ հարվածի (անգլ. *preventive strike*, թուրք. *ön alıcı vuruş*) սկզբունքը, որն ընդհանուր առմամբ նախատեսում էր «առաջնային ճակատային պաշտպանություն» և «ճգնաժամային իրավիճակներում ներքին անվտանգության ապահովման համալիր միջոցառումներ»¹¹²:

Թուրքիայի պաշտպանական քաղաքականության պարզաբանման նպատակով անհրաժեշտ է դիտարկել նաև անվտանգության հայեցակարգային այն մոտեցումները, որոնք ուղղակիորեն կապված են պաշտպանության հետ:

2005 թ. հոկտեմբերի 24-ին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ԱԱԽ, թուրք. *Milli Güvenlik Kurulu*) նիստում ընդունվեց երկրի ազգային անվտանգության հայեցակարգը, որը պաշտոնապես կոչվում է «Ազգային անվտանգության քաղաքական փաստաթուղթ» (այսուհետ՝ ԱԱՔՓ, թուրք.՝ *Milli Güvenlik Siyaset Belgesi*): Այդ հայեցակարգի բնորոշիչ գիծը կարելի է համարել և այն, որ Թուրքիայի անվտանգության հարցերը դիտարկվում էին ոչ միայն մյուս երկրների հետ միջպետական հարաբերությունների պրիզմայի միջով, այլև Թուրքիային ու նրա շահերին սպառնալիք

¹¹¹ Թուրքական բանակի կողմից առաջին անդրսահմանային սահմանափակ օդային մրակոծություններն իրականացվել են 1983 թ., իսկ 1990-ական թթ. դրանք արդեն լայնամասշտաբ ռազմական գործողությունների վերածվեցին: Բացի այդ, 1991 թ. հետո Թուրքիան ռազմական ստորաբաժանում էր պահում Հյուսիսային Իրաքում: Ավելի մանրամասն տես՝ Funda Keskin, Turkey's Trans-Border Operations in Northern Iraq: Before and after the Invasion of Iraq, Research Journal of International Studies- Issue 8, November, 2008, pp. 61-62:

¹¹² Sıkı Ali Külebi, Türkiye'nin Askeri Stratejisi, Gücü ve Geleceği, Türkiye Stratejik Araştırmalar Merkezi (TUSAM), 02.08.2004.

ներկայացնող հավանական վտանգավոր տարածաշրջանների, տարածաշրջանային հակամարտությունների ու տարբեր արմատական կազմակերպությունների գործունեության առկայության տեսանկյունից¹¹³:

Անդրադառնալով պաշտպանական բաղադրիչին՝ ԱԱՔՓ-ի վերջնական տարբերակում ամրագրված էր այն դրույթը, որ Թուրքիան կարող է որպես պատերազմի սկսման պատճառ որակել Հունաստանի կողմից Էգեյան ծովում տարածքային ջրերի մինչև 12 մղոն ընդարձակումը: Հայեցակարգում նաև նշվում էր, որ այդ ծովի ավելի քան 100 վիճելի կղզիների հարցում չպետք է որևէ զիջում անել, այլ անհրաժեշտ է վարել ազգային շահերի պաշտպանության վճռական քաղաքականություն: Հնարավոր ռազմական վտանգների ևս մեկ շրջան էր նշվում Հյուսիսային Իրաքը: Այստեղ հետաքրքրություն էր ներկայացնում այն իրողությունը, որ փաստաթղթում քրդական պետության կազմավորման հնարավորությունը չէր դիտվում որպես ռազմական գործողությունների սկսման փաստարկ, այլ Հյուսիսային Իրաքն ընդհանուր առմամբ գնահատվում էր ճգնաժամային ռիսկայնության տեսանկյունից: Միաժամանակ, շեշտվում էր, որ Քիրքուկի ու թուրքմենների նկատմամբ քրդական խմբավորումների գործողությունները կարող են լուրջ խնդիր առաջացնել, ինչը սպառնալիք է հանդիսանում ողջ մերձավորարևելյան տարածաշրջանի կայունության և անվտանգության համար¹¹⁴: Կարելի է նշել, որ սա անվտանգության սպառնալիքի ՆԱՏՕ-ական ձևակերպման ձև է համարվում և, փաստորեն, դրանով Թուրքիան Իրաք ներխուժելու միջազգային իրավական հիմքերն էր ապահովում, քանի որ թուրքական ՋՈւ-ն ինտենսիվորեն ռազմական գործողություններ էին իրականացնում Հյուսիսային Իրաքում, և հնարավոր լայնամասշտաբ գործողությունները չէին բացառվում:

¹¹³ Տե՛ս՝ А. Гурьев, Новая концепция национальной безопасности Турции, <http://www.iimes.ru/rus/stat/2005/07-11-05.htm>, 07.11.2005.

¹¹⁴ Տե՛ս՝ MGK Milli Siyaset Belgesi` ni görüştü, Ortadoğu, 22.06.2005.

Ըստ թուրքական մամուլում հայտնված տեղեկությունների՝ փաստաթղթի նախագծում սպառնալիքների ու մարտահրավերների ներկայացման առումով կոնկրետ երկրներ չէին նշվել, այդուհանդերձ, Հունաստանի, Սիրիայի, Իրանի ու Իրաքի հետ հարաբերություններում հիմնական քաղաքական ուղեգծերի հետ կապված շեշտադրումներ էին ամրագրվել¹¹⁵: Թուրքական «Sabah» պարբերականի հրապարակած տեղեկատվության համաձայն՝ հայեցակարգում շեշտվում էր Իրանի ու Իրաքի հետ բարիդրացիական հարաբերությունների շարունակման, Իրաքի տարածքային ամբողջականության ու Քիրքուկի հատուկ կարգավիճակի պահպանման, տարածաշրջանում քրդական խմբավորումների հետ արտաքին ուժերի հարաբերություններն ուշադրությամբ հետևելու անհրաժեշտության մասին: Սիրիայի տարածքային պահանջների պատճառով Հաթայի շրջանը, իսկ Պոնտոսի նկատմամբ հունական պահանջների պատճառով Սևծովյան արևելյան շրջանները փաստաթղթում նշված էին որպես «զգայուն տարածաշրջաններ»¹¹⁶: Խոսելով հայեցակարգի գաղտնիության մասին՝ վարչապետ Ռ. Թ. Էրդողանը նշել էր, որ հայեցակարգում հիշատակվում են Թուրքիային հարեվան և ոչ հարևան մի շարք պետություններ, «կան ներքին ու արտաքին քաղաքականությանն առնչվող դրույթներ, որոնք վերաբերում են այդ երկրներին, և նրանց այդ դրույթները կարող են անհանգստացնել, ուստի ազգային շահերի տեսանկյունից այդ փաստաթուղթը պետք է լինի գաղտնի»¹¹⁷: Թուրքիայի վարչապետի նման հայտարարությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ հայեցակարգում Թուրքիայի անմիջական հարևան և այլ պետություններ ուղղակի դիտարկվում էին Թուրքիայի նկատմամբ մարտահրավերների տեսանկյունից: Այդ հայեցակարգում, հավանաբար, ամրագրված է եղել դեռ հետսառըպատերազմյան աշխարհաքաղաքական իրավիճակի

¹¹⁵ Sbu` MGK Milli Siyaset Belgesi` ni görüştü, Ortadoğu, 22.06.2005.

¹¹⁶ Sbu` Kırmızı çizgiler` de değişiklik yok, Sabah, 15.11.2005.

¹¹⁷ Sbu` А. Гурьев, Новая концепция национальной безопасности Турции, <http://www.iimes.ru/rus/stat/2005/07-11-05.htm>, 07.11.2005.

այն մոտեցումը, որ Թուրքիան իր հարևան երկրներից սպասում է ուղղակի կամ ոչ ուղղակի սպառնալիքներ: Կարելի է ենթադրել, որ հայեցակարգի ռազմավարությունից բխող քայլերն իրենց մեջ պարունակում էին արտաքին քաղաքականության սադրիչ ու ոչ կառուցողական դրույթներ, որոնք դրանց զաղտնիությունն առավելագույն կերպով պահպանելու անհրաժեշտություն էին առաջացնում:

2006 թ. թուրքական ՁԼՄ-ներում տեղեկատվություն հայտնվեց, որ Թուրքիայի պաշտպանական հայեցակարգի հիմքում դրված է այն սկզբունքը, որ Թուրքիան հետայսու պետք է պատրաստ լինի իրականացնել «1.5 պատերազմի ռազմավարություն»՝ նախկինում դրված «2.5 պատերազմի ռազմավարության» փոխարեն: Այն ենթադրում էր միաժամանակ պատերազմել մի որևէ պետության հետ և պայքարել իր երկրում ահաբեկչության դեմ՝ նկատի ունենալով քուրդ զինյալներին: Գնահատելով իրենց շրջապատող պետությունները, նրանցից բխող վտանգները՝ Թուրքիայում եկել էին այն եզրակացության, որ երկու ճակատով Թուրքիային պատերազմ չի սպառնում: Ի տարբերություն նախկին մոտեցումների՝ Թուրքիան իրական սպառնալիք չէր տեսնում ոչ Բալկաններից, ոչ էլ Կովկասից¹¹⁸: Թուրք-հունական, ինչպես նաև թուրք-սիրիական հարաբերությունները բավական բարելավվել էին, և Թուրքիայի համար վտանգ էին ներկայացնում Հյուսիսային Իրաքում հասունացող զարգացումները: Քրդական խնդրի նկատմամբ թուրքական զինվորական վերնախավն ավելի զգայուն էր և կողմնակից էր արմատական ու վճռական գործողությունների: Այս առումով զինվորականության ընդհանուր մոտեցումներն ի ցույց դրեց Թուրքիայի ԶՈւ-ի ԳՇ պետ Յ. Բյույուքանըթը, ով, 2008 թ. անդրադառնալով Թուրքիայի ներքին ու արտաքին մարտահրավերներին,

¹¹⁸ Slev` Արմենայրես, 28.03.2006: Об изменениях в военно-политической обстановке на Ближнем Востоке и в Северной Африке (13-19 июня 2011 года), Институт изучения Ближнего Востока, <http://www.iimes.ru/rus/stat/2011/20-06-11a.htm>:

նշել էր, որ Հյուսիսային Իրաքում քրդական պետությունն ուղղակի իր ազդեցությունն է ունենալու այդ երկրի անվտանգության վրա¹¹⁹:

2010 թ. սկզբներին Թուրքիայի կառավարությունը ձեռնամուխ եղավ ԱԱԲՓ-ի փոփոխություններին¹²⁰: Փետրվարին վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ փաստաթղթում իրականացվելու են վերախմբագրումներ¹²¹: Հոկտեմբերի 27-ին ԱԱԽ-ի նիստում հավանության արժանացած նոր հայեցակարգն ընդունվեց կառավարության նոյեմբերի 22-ին կայացած նիստում¹²²:

Հայեցակարգի բովանդակության ու դրույթների հետ կապված պաշտոնական որևէ հայտարարություն կամ հաղորդագրություն չի եղել, և միայն տարբեր ՋԼՄ-ներում հայտնվեցին դրա բովանդակությանն առնչվող որոշ դիտարկումներ ու հրապարակումներ: Հայեցակարգի ընդունման վերաբերյալ հոկտեմբերի 27-ի ԱԱԽ-ի պաշտոնական հաղորդագրության մեջ նշվում էր միայն, որ փաստաթուղթը քննարկվել և հավանության է արժանացել ԱԱԽ-ի նիստում և որոշում կայացվել ներկայացնել կառավարության երաշխավորմանը¹²³: Նոր հայեցակարգում անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի տեսանկյունից առաջնային մարտահրավերներ էին շարունակում մնալ անջատողականությունն ու քրդական ահաբեկչությունը: Արտաքին քաղաքականության ու անվտանգության մասով փաստաթղթում հիշատակվում էին տարածաշրջանում Իսրայելի կողմից ապակայունարար գործողություններն ու նրա հետ հարաբերությունների խնդիրը, Հյուսիսային Իրաքում քրդական զարգացումները, Իրանի միջուկային ծրագրերը, Հունաստանի հետ

¹¹⁹ Տես՝ Büyükanıt' tan tehdit değerlendirilmesi, Star, 04.04.2008.

¹²⁰ Տես՝ ԱԱԲՓ-ն վերախմբագրվում է ամեն 5 տարին մեկ:

¹²¹ Տես՝ Milli Güvenlik Siyaseti Belgesi yenileniyor,

<http://www.cnnturk.com/2010/turkiye/02/01/milli.guvenlik.siyaseti.belgesi.yenileniyor/561871.0/index.html>, 01.02.2010.

¹²² Տես՝ Milli Güvenlik Siyaset Belgesi kabul edildi, Hürriyet, 22.11.2010.

¹²³ Տես՝ Թուրքիայի ԱԱԽ հոկտեմբերի 27-ի նիստի պաշտոնական հաղորդագրությունը՝ 2010 Yılı MGK Toplantılarının Basın Bildirileri, Ekim 27,

<http://www.mgk.gov.tr/Turkce/basinbildiri2010/27ekim2010.html>.

Էգեյան ծովում առկա հիմնախնդիրները¹²⁴: Կառավարող կուսակցությանը մոտ կանգնած թուրքական «Yeni Şafak» թերթի հրապարակման համաձայն՝ հայեցակարգի խմբագրման արդյունքում՝ Թուրքիայի հարևան 4 երկրներ՝ Հունաստանը, Ռուսաստանը, Իրաքն ու Իրանը սպառնալիք ներկայացնող երկրների ցանկից: Նախկինում սպառնալիք ներկայացնող այդ երկրներն արդեն ճանաչվում էին որպես համագործակցության ու «ընդհանուր տեսլականի» վրա հիմնված դաշնակիցներ: Էգեյան ծովի տարածքային ջրերում Հունաստանի կողմից 12 մղոն ընդարձակումն այլևս չէր դիտվում որպես պատերազմի առիթ, իսկ Իրանից իսլամական հեղափոխության արտահանումը չէր դիտվում որպես մարտահրավեր¹²⁵:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի կողմից նման քայլը պայմանավորված էր առավելապես քարոզչական նպատակներով ու միջազգային հանրության շրջանում իր դրական իմիջի ձևավորման, երկրի համար ռազմավարական փաստաթուղթ համարվող ան-

¹²⁴ Տես՝ Yeni 'Gizli Anayasa' hazır,

<http://www.etha.com.tr/Haber/2010/10/04/politika/yeni-gizli-anayasa-hazir/>, 04.10.2010.

¹²⁵ Տես՝ Yeni Kırmızı Kitap'a MGK onayı, Yeni Şafak, 28.10.2010. Հարկ է այստեղ նշել, որ որոշ ռուսական ու իսրայելական լրատվամիջոցներ իրենց հրապարակումներում նշել են, թե իբր Թուրքիայի համար սպառնալիք կամ մարտահրավեր ներայացնող երկրների ցանկից հանվել է նաև Հայաստանը, իսկ փոխարենը՝ Իսրայելն ամրագրվել որպես սպառնալիք ներկայացնող երկիր: Տես՝ Turkey lists Israel as a 'threat to its interests', <http://www.haaretz.com/print-edition/news/turkey-lists-israel-as-a-threat-to-its-interests-1.322031>; Turkish document defines Israel as 'central threat', <http://www.jpost.com/MiddleEast/Article.aspx?id=193322>; Турция исключила Армению и Грузию из списка своих внешних угроз, <http://chechnya.kavkaz-uzel.ru/articles/176389/>. Որոշ հայկական լրատվամիջոցներ, ուղղակի հղում անելով իսրայելական կամ ռուսական տարբեր տեղեկատվական աղբյուրների, այդ ցուցակում են ընդգրկել նաև Հայաստանը: Տես՝ Հայաստանը հանվել է Թուրքիայի «Կարմիր գրքից», <http://www.azatutyun.am/archive/news/20101101/2031/2031.html?id=2206884>;

<http://news.am/arm/news/36519.html>: Տվյալ ժամանակահատվածում թուրքական ազդեցիկ բոլոր պարբերականներից և ոչ մեկը այդ առումով չէր հիշատակել Հայաստանը: Տես՝ 4 ülke düşman listesinden çıkarılıyor,

<http://www.ntvmsnbc.com/id/25125264>; Yeni MGK'dan yeni 'Kırmızı Kitap'a onay, Radikal, 28.10.2010; Yeni Kırmızı Kitap'a MGK onayı, Yeni Şafak, 28.10.2010; 12 mil artık savaş nedeni değil, Sabah, 23.08.2010.

վըտանգության հայեցակարգի հետ արտաքին քաղաքականության սկզբունք հռչակած «գրո խնդիրներ» հարևանների հետ հայեցակարգային մոտեցման համապատասխանությունն ակնհայտ դարձնելու ձգտումներով: Ի տարբերություն 2005 թ., երբ հայեցակարգի մշակման ու քննարկման գործընթացում գաղտնի տեղեկություններ էին հայտնվել մամուլում, այս անգամ ուղղակի հատուկ ուղղորդմամբ որոշ դրույթներ հրապարակվեցին:

Այժմ անդրադառնանք 21-րդ դարի առաջին տասնամյակում Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմնադրույթներին: ԶՈւ-ի ԳՇ-ի պաշտոնական կայքում «Պաշտպանական քաղաքականությունը» խորագրում ամրագրված էր. «Երկբևեռ աշխարհակարգի ավարտից հետո Բալկաններում, Կովկասում և Մերձավոր Արևելքում ուժային վակուումը մեծացրեց գլոբալ հավակնություններն ու այդ տարածաշրջանների աշխարհաքաղաքական խոցելիությունը: Թուրքիան, որը գտնվում է Կովկասի, Մերձավոր Արևելքի և Բալկանների նման անկայուն տարածաշրջանների կենտրոնում, իր պաշտպանական քաղաքականության հիմքում դնում է ազգային անկախության, տարածքային ամբողջականության և երկրի կենսական շահերի պաշտպանությունը»¹²⁶: Թուրքիայի պաշտոնական պաշտպանական քաղաքականության հռչակած հիմնական նպատակներն էին՝ դառնալ տարածաշրջանային տերություն և տարածաշրջանային հավասարակշռության գործոն, տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովման գործում ներդրում ունեցող երկիր, մշակել իր սեփական ռազմավարությունն ու անվտանգությունը, տարբեր պետությունների հետ համագործակցությանն ու մերձեցմանն ուղղված նախաձեռնությունների առաջաջում և իրականացում: Ազգային անվտանգության քաղաքականության նպատակներն էին՝ տարածաշրջանում լարվածության թուլացմանը նպաստելը, հակամարտությունների խաղաղ կարգավորմանն աջակցելը, ժողովրդավարության ու

¹²⁶ Տես՝ Թուրքիայի ԶՈւ-ի պաշտոնական կայք՝ http://www.tsk.mil.tr/eng/genel_konular/savunmapolitikasi.htm:

օրենքի նկատմամբ հարգանքի ընդլայնումը, անվտանգության և կայուն իրավիճակի հաստատումը¹²⁷:

Գնահատելով ստեղծված նոր աշխարհաքաղաքական պայմանները, միջազգային ու տարածաշրջանային անվտանգության նոր հրամայականները, անվտանգության համաչափ և անհամաչափ, բազմաչափ և բազմակողմ սպառնալիքները՝ Թուրքիայի զինվորականությունը հստակեցրեց Թուրքիայի անվտանգությանն առնչվող այդ ռիսկերը: 2005 թ. Թուրքիայի ԶՈւ-ի ԳՇ պետ Ն. Օզքոքը (2002-2006 թթ. ԶՈւ-ի ԳՇ պետ) թուրքական զինվորական ամսագրերից մեկին տված հարցազրույցում անդրադարձել էր երկրի համար սպառնալիք ներկայացնող մարտահրավերներին: Դրանք էին՝ անջատողական և հետադիմական գործողությունները, միջազգային սահաբեկչությունը, թմրանյութերի շրջանառությունը և անօրինական միգրացիան որպես անհամաչափ և հարևան երկրներում հնարավոր անկայունությունները, Հյուսիսային Իրաքում անցանկալի իրադարձությունները¹²⁸, Կովկասում անկայունությունը, ջրի հիմնախնդիրը Մերձավոր Արևելքում և ԶՈԶ-ի տարածումը¹²⁹

¹²⁷ Sıkı \ Almanak Türkiye 2006, <http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkiye2006/turkey/244-245.htm>, s. 244.

¹²⁸ Բարձրաստիճան զինվորականն առաջին հերթին որպես սպառնալիք նկատի ունի Իրաքի տարածքային ամբողջականության խախտումն ու քրդական պետության ստեղծման հնարավորությունը:

¹²⁹ Պաշտոնավարման ժամկետը լրանալու կապակցությամբ 2006 թ. օգոստոսին կազմակերպված միջոցառման ժամանակ Ն. Օզքոքն իր ելույթում մանրամասն կանգ առավ նաև միջուկային սպառնալիքի վրա: Ըստ նրա՝ Թուրքիայի համար չափազանց կարևոր սպառնալիք են ներկայացնում այն երկրները, որոնք ունեն կամ պատրաստվում են ունենալ միջուկային զենք և էթե հնարավոր չլինի այդ հարցը լուծել դիվանագիտական ճանապարհով, ապա Թուրքիան կհանդիպի լուրջ մի մարտահրավերի: Նրա խոսքերով՝ խնդրի չլուծման դեպքում Անկարան կկորցնի մերձավորարևելյան տարածաշրջանում իր ռազմավարական գերակայությունը: Գեներալը ոչ մի երկրի անուն չի տվել, սակայն պարզ է, որ խոսքը վերաբերել է Իրանին: Թուրք զինվորականությունը մեկ անգամ ևս նշեց, որ դեմ է Իրանի միջուկային ծրագրին և դա դիտարկվում է որպես սպառնալիք Թուրքիայի անվտանգությանն ու սպագային: Օզքոքի ելույթից հետոնում է նաև, որ Թուրքիան նույնպես կարող է միջուկային զենք ստեղծել տարածաշրջանային գերակայության կամ գոնե հա-

որպես համաչափ սպառնալիքներ¹³⁰: 2005 թ. իր ելույթներից մեկում Թուրքիայի ՁՈւ ԳՇ պետի տեղակալ Ի. Բաշբուլը (2008-2010 թթ. ՁՈւ-ի ԳՇ պետ) հստակ նշել է, որ Իրանի միջուկային ծրագիրը անհանգստացնում է Թուրքիային, և ընդհանրապես ՁՈՁ-ի տարածումը Մերձավոր Արևելքում Թուրքիայի անվտանգությանն ուղղակի սպառնալիք է ներկայացնում¹³¹:

Ընդհանուր առմամբ, 2000-ական թթ. առաջին տասնամյակում Թուրքիայի պաշտպանական ռազմավարությունը հիմնվում էր չորս հիմնական սկզբունքների վրա.

1. հակազդում. այնպիսի ՁՈւ-ի պահպանում, որոնք ի վիճակի են ետ մղել Թուրքիայի անկայունության ու անորոշության շրջակայքից բխող սպառնալիքները,
2. հակամարտությունների կառավարմանը ռազմական մասնակցություն և օժանդակություն. ներգրավվածություն Թուրքիայի անվտանգությանն առնչվող հակամարտություններին, անհամաձայնությունների խաղաղ լուծում դիվանագիտական, տնտեսական և այլ միջոցներով, թուրքական ՁՈւ-ի պատրաստություն՝ լարվածությունների թուլացման, դրանք զինված բախման վերածվելու կանխում և ազդեցորի սահմանափակում,
3. առաջնային պաշտպանություն. հավանական հարձակման շուտափույթ կանխում և արտաքին սպառնալիքի չեզոքացում,

վասարակշռության պահպանման անհրաժեշտությունից ելնելով: Տես՝ Ա. Շաքարյան, Թուրքիան մինչ օրս այդպիսի սպառնալիքների տարափի տակ չէր ընկել, <http://www.zhamanak.com>, 30.08.2006:

¹³⁰ Տես՝ Ordu değışime hazir, Milliyet, 03. 05.2005.

¹³¹ Հետաքրքիր էր նաև այն, որ թուրք գեներալը հասկացնել էր տալիս, որ Թուրքիայի համար, առավելապես բարձրագույն զինվորականության, Իրանի թեոկրատական ռեժիմը որոշ առումով անհնազատացնում է Թուրքիային, քանի որ ոչ վաղ անցալում այդ երկիրն օգտագործում էր այն տարածաշրջանում իր ազդեցությունը տարածելու նպատակով: Տես՝ Luncheon Remarks by General Ilker Başbuğ, Deputy Chief of Turkish General Staff,

http://www.tsk.tr/eng/konusma/gnkurIIncibsk_atckonusmasiogleyemegi_eng_06062005.htm.

4. հավաքական անվտանգություն. ակտիվ մասնակցություն և ներգրավվածություն միջազգային և տարածաշրջանային դաշինքներում, կազմակերպություններում ՆԱՏՕ-ի և Արևմտաեվրոպական միության առաջնորդությամբ: Այս դրույթը ենթադրում է նաև Թուրքիայի արտաքին քաղաքականությանն ու ազգային անվտանգության սկզբունքներին համապատասխան իր ռազմական ուժերի միջոցով օժանդակություն ցուցաբերել միջազգային կազմակերպություններին, դաշինքներին և առանձին պետություններին, ռազմական ոլորտին առնչվող համագործակցության, տեխնիկական և կրթական օժանդակության ապահովման շարունակականություն¹³²:

Թուրքիայի պաշտպանական հայեցակարգն ու ռազմավարությունը ենթադրում էին այնպիսի անվտանգության համակարգի առկայություն, որն ի վիճակի կլինի առավել արդյունավետ արձագանքել և հակահարված տալ ժամանակակից մարտահրավերներին ու արտաքին վտանգներին: Թուրքական ՁՈւ-ի բարեփոխումների շրջանակում հետևողականորեն իրականացվում էր մարտական հզորության մեծացման ռազմավարություն բանակի շարժունակության, կրակային և հարվածային ուժի բարձրացման հիման վրա: Բանակի ստորաբաժանումների բարեփոխումների արդյունքում նախատեսվում էր կրճատել ՑՈՒ-ի թվաքանակը՝ միաժամանակ բարձրացնելով նրա մարտունակությունը և արագ արձագանքման հնարավորությունը¹³³:

Թուրքիան, որպես սեփական պաշտպանական քաղաքականության բաղադրիչ, լուրջ ուշադրություն էր դարձնում տարբեր հակամարտություններում խաղաղարար գործողությունների իրականացմանն ու ներգրավվածությանը: Թուրքական ՁՈւ-ը խաղաղա-

¹³² Տես՝ Թուրքիայի Ազգային պաշտպանության նախարարության պաշտոնական կայք՝ <http://www.msb.gov.tr/Birimler/GnPPD/GnPPDBeyazKBol1Kis2.htm>.

¹³³ Տես՝ Լևոն Հովսեփյան, Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմարդյունաբերությունը, Եր., Հեղ. հրատ. 2010, էջ 22-23:

րար ուժերի շրջանակում սկսած 1950 թ-ից մասնակցել են հետևյալ գործողություններին. 1950 թ. կորեական պատերազմին, 1993 թ. Սոմալիում, Բոսնիա-Հերցեգովինայում բռնկված կոնֆլիկտներում, 1999 թ. Ալբանիայում, 2001 թ. Մակեդոնիայում, 2006 թ. Լիբանանում: Ներկայումս Թուրքիան ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Բոսնիա և Հերցեգովինայում (ALTHEA), Կոսովոյում (KFOR), Աֆղանստանում (ISAF), Սուդանի Դարֆուրի շրջանում իրականացվող խաղաղարար գործողություններում, ինչպես նաև ռազմական դիտորդական առաքելություններում Հելվոնում, Վրաստանում, Սուդանում և Պաղեստինում¹³⁴: Հարկ է նկատել, որ սրանք զուտ խաղաղարար առաքելություններ չէին, այլ նաև լուրջ մարտական գործողություններ:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունն ու անվտանգության և պաշտպանական ռազմավարության հայեցակարգերը կրում են ինչպես միջազգային ու տարածաշրջանային զարգացումների, այնպես էլ աշխարհաքաղաքական գնահատականների ու ըմբռնումների տրամաբանությունը: Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիայի անվտանգության վերաբերյալ ռազմաքաղաքական պատկերացումները զգալի չափով կրում էին «աշխարհագրական դետերմինիզմի» ազդեցությունը, որով էլ պայմանավորվում է այդ երկրի առանձնահատուկ շահերն ու անվտանգության կարիքները¹³⁵:

Թուրքիայի քաղաքականությունն անվտանգության ու պաշտպանության ոլորտում զգալիորեն կրում է այդ երկրի աշխարհագրական դիրքի ու աշխարհաքաղաքական միջավայրի ազդեցությունը: 1990 թ. մարտին, թուրքական լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում անդրադառնալով նոր աշխարհաքաղաքական իրավիճակում Թուրքիայի ռազմավարական նշանակությանն

¹³⁴ Stü` Almanak Türkiye 2006, s. 246-247, <http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkiye2006/turkey/246-247.htm>; Stü` նաև Defence White Paper 2000, Ministry of National Defence of Turkey, <http://www.msb.gov.tr>.

¹³⁵ Stü` P. Bilgin, նշվ. աշխ., էջ 185-186:

ու դերին՝ Թուրքիայի ԶՈւ ԳՇ պետ Ն. Թորումթայը նշել է, որ աշխարհագրական դիրքը երկրի ռազմավարության սահմանման կարևոր գործոններից է և հաշվի առնելով միջերկրածովյան, սևծովյան տարածաշրջաններում ու Մերձավոր Արևելքում գերտերությունների հետաքրքրությունները՝ Թուրքիայի ռազմավարական արժեքը կպահպանի իր կարևորությունը¹³⁶: 1990-ական թթ. կեսերից Թուրքիայի գիտական, քաղաքական քննարկումներում սկսեց լայն տարածում գտնել նաև այսպես կոչված «եվրասիական հայեցակարգը»: Այն ընդունվում էր որպես Թուրքիայի արտաքին քաղաքականությունն, աշխարհաքաղաքական ռազմավարությունն ու ազգային անվտանգությունն արտացոլող հիմնական հայեցակարգերից¹³⁷: Ուսումնասիրելով թուրք զինվորականության աշխարհաքաղաքական հայացքներն ու մտտեցումները, կարելի է ասել, որ «եվրասիական հայեցակարգը» կարևոր տեղ է զբաղեցնում նաև Թուրքիայի զինվորականության շրջանում: Այդ երկրի ՊՆ-ի կողմից պատրաստված «Defence White Paper 2000» ուղենիշային փաստաթղթում Թուրքիայի աշխարհաքաղաքական, աշխարհառազմավարական դերին վերաբերող բաժնում նշված էր, որ «երեք մայրցամաքները միմյանց միացնող և շատ կարևոր աշխարհառազմավարական նշանակություն ունեցող Թուրքիան միաժամանակ նաև եվրոպական, ասիական, բալկանյան, մերձավորարևելյան, միերկրածովյան և սևծովյան, ավելի կարճ ասած՝ եվրասիական երկիր է: Թուրքիան այդ եվրասիական գոտում գտնվելով կենտրոնական դիրքում՝ քաղաքական, անվտանգության և տնտեսական առումով մեծ դերակատարություն և նշանակություն է ձեռք բերել»¹³⁸:

¹³⁶ Տես՝ Haluk Gerger, նշվ. աշխ., էջ 180:

¹³⁷ Թուրքիայում «Եվրասիա» հասկացության շուրջ քաղաքական մտտեցումների մասին ավելի մանրամասն տես՝ Ռուբեն Սաֆրաստյան, Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև...: Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հոլովույթներում: (2001-2003 թթ. հոդվ. ու հարցազրույցներ), Երևան: Զանգակ-97, 2003: Ruben Safrastyan, The Concept of Eurasia and Turkey's Regional Strategies, 24.05.2005, <http://www.globalpolitician.com/2761-turkey>.

¹³⁸ Տես՝ Defence White Paper 2000,

<http://www.msb.gov.tr/Birimler/GnPPD/GnPPDBeyazKBollKis2.htm>.

Այս համատեքստում առավել ամբողջական էր Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի ձևակերպումը. «Թուրքիան, որը շրջապատված է երեք ծովերով և միմյանց է կապում երկու աշխարհամասերը, եզակի ռազմավարական աշխարհագրական դիրք ունի: Իր դիրքի շնորհիվ Թուրքիան միաժամանակ պատկանում է մի քանի տարածաշրջանների: Թուրքիան Եվրասիա կոչվող նոր քաղաքական աշխարհագրության հենց էպիկենտրոնն է հանդիսանում»¹³⁹:

Բարձրաստիճան զինվորականները կիսում էին քաղաքական գործիչների այն մոտեցումը, որ Թուրքիան եվրասիական երկիր է և պետք է իրականացնի համարժեք քաղաքականություն: 1999 թ. Ելույթ ունենալով Վաշինգտոնում՝ Թուրքիայի պաշտպանության նախարար Հ. Սամի Թյուրքը նշել է. «Շրջապատված լինելով երեք ծովերով և միմյանց կապելով երկու աշխարհամասերը՝ Թուրքիան եզակի և աշխարհագրորեն ռազմավարական դիրք է գրավում: Թուրքիան ոչ միայն իր հայացքն ուղղել է դեպի Արևմուտք, այլ նաև ավանդական կապեր է պահպանում մուսուլմանական երկրների հետ: Նրա արմատները գնում են Կենտրոնական Ասիա, Մերձավոր Արևելք, Անատոլիա և Եվրոպա: Թուրքիան եվրասիական երկիր է»¹⁴⁰: Թուրքական բանակի թոշակառու գեներալ Շ. Էրգյուվենչն իր հոդվածում անդրադարձել է Թուրքիայի աշխարհագրական-ռազմավարական դիրքին՝ ընդգծելով, որ աշխարհագրական դիրքն ու ռազմական ներուժը կազմում են երկրի ռազմական ու ռազմավարական արժեքը: Թուրքիայի աշխարհագրական դիրքը դիտվում է որպես «նախանձելի ռազմավարական-ռազմական արժանիք»: Այն հնարավորություն է տալիս Թուրքիային գործել որպես վճռական փոխադրամիջոցների կամուրջ կամ խոչընդոտ և ապահովել բնական ռե-

¹³⁹ Stü` Süleyman Demirel, Turkey and NATO at The Threshold of a New Century, Perceptions, Journal of International Affairs, Volume IV - Number 1, March-May 1999, p. 2.

¹⁴⁰ Stü` Hikmet Sami Turk. Turkish Defense Policy. The Washington Institute For Near East Policy, March 3, 1999, <http://www.washingtoninstitute.org/media/samiturk.htm> (Բյուլենթ Էջնիթի գլխավորած կառավարությունում 1999 թ. հունվար-մայիս ամիսների ընթացքում է պաշտպանության նախարարի պաշտոնը, որից հետո դարձել արդարադատության նախարար):

սուրսներին հասնելու ամենահեշտ և կարճ ճանապարհ: Թուրքիան կարող է ազդեցություն գործել իր անմիջական տարածաշրջանների վրա: Նման աշխարհագրական դիրքը կարող է առավելություն դիտվել, սակայն անհրաժեշտության դեպքում պահանջում է ուժեղ պաշտպանունակություն (ռազմական ուժեր)¹⁴¹: Մեկ այլ գեներալ՝ Սուլաթ Իլհանը, Թուրքիան անվանում էր որպես «սահմանների երկիր»¹⁴²:

Թուրքիայի ԶՈՒ-ի ԳՇ Գլխավոր պլանավորման և սկզբունքների մշակման ղեկարտամենտի ղեկավար, գեներալ-լեյտենանտ Հ. Աքըն Զորլուի բնորոշմամբ՝ Թուրքիան իր աշխարհառազմավարական դիրքով լինելով եզակի երկիր, գտնվելով երեք մայրցամաքների «խաչմերուկում», հանդիսանալով Էներգետիկ տարանցիկ տարածք, միաժամանակ երաշխավորված չլինելով այդ տարածաշրջաններից եկող տարբեր մարտահրավերներից ու սպառնալիքներից՝ հարկադրված է ունենալու 21-րդ դարի ռազմական ու քաղաքական պահանջներին համապատասխանող ԶՈՒ¹⁴³: 2009 թ. դեկտեմբերին Տրապիզոնում կայացած մամլո ասուլիսի ժամանակ Թուրքիայի ԶՈՒ ԳՇ պետ Ի. Բաշբուղը նշել է. «Մեր երկրի շրջակայքը լի է խնդիրներով, և այդպիսի աշխարհագրության մեջ գտնվող ոչ հզոր պետությունները կենսունակ չեն: Ազգային հզորության հիմնական սկզբունքներից

¹⁴¹ Տես՝ S. Ergüvenç, նշված աշխ., էջ 2-3:

¹⁴² Պահեստագործի գեներալ Ս. Իլհանն իր հոդվածում նշում է, որ «Թուրքիան կազմում է երեք մայրցամաքներից կազմված աշխարհի կղզու կենտրոնը և այն բանալու դեր է կատարում՝ հյուսիսը բացելով դեպի հարավ, հարավը՝ հյուսիս, արևելքը՝ արևմուտք, արևմուտքը՝ արևելք: Այն Բալկանները, Կովկասը և Մերձավոր Արևելքը միացնող և բաժանողն է: Աշխարհագրական դիրքը տարածաշրջանում ամեն հնարավոր փոփոխության պայմաններում ավելի մեծ կարևորություն է ստանում»: Տես՝ Suat İlhan, Geopolitical developments and the Turkish world, Eurasian Studies, TİKA, Vol. 2, N. 3, 1995, p. 25:

¹⁴³ Թուրքիայի ԶՈՒ ԳՇ-ի գլխավոր պլանավորման և սկզբունքների մշակման ղեկարտամենտի ղեկավար, գեներալ Հ. Աքըն Զորլուի ելույթը ՊԱԳՎ-ի հիմնադրման 20-ամյակին նվիրված կոնֆերանսում: Տես՝ ՊԱԳՎ-ի պաշտոնական կայք՝

http://www.ssm.gov.tr/browser_tr.asp?srcURL=library/docs/tr/kurumsal/SSM_20_yil.htm.

մեկը ռազմական ուժն է: Ազդեցիկ և հզոր ՁՈւ-ն ուղղակի կապված են երկրի գոյության հարցի հետ»¹⁴⁴:

Թուրքական բանակի բարեփոխումների շրջանակում իրականացվում էին հեռանկարային ծրագրեր, որոնք ենթադրում էին նաև կառուցվածքային վերափոխումներ ՁՈւ-ի համակարգում: ՁՈւ-ի արդիականացումը ենթադրում էր ՅՈւ-ի մասնակի վերակառուցում և կրճատում, սպառազինության արդիականացում, ռազմաօդային (այսուհետ՝ ՌՕՈւ, թուրք. Hava Kuvvetleri) և ՌԾՈւ-ի ընդհանուր արդիականացում: Ռազմական ուժի պաշտպանունակությունը բարձրացնելու համար ձեռնարկված արդիականացման ռազմավարությունը ենթադրում էր հետևյալ հնարավորությունների յուրացման և զարգացման նպատակ. որոշիչ ռազմական ուժի, հրամանատարական հսկման, պատերազմական, համակարգչային, հետախուզական-հսկողական համակարգերի, շարժական կրակային ուժի, բարձր տեխնոլոգիական զենքերի և համակարգերի գոյություն, ցանկացած պայմանում գիշեր-ցերեկ մարտական գործողություններ իրականացնելու, խաղաղ վիճակից արագորեն պատերազմականի անցման հնարավորություն, զանգվածային ոչնչացման զենքերի դեմ հակաօդային և հակահրթիռային պաշտպանության համակարգերի առկայություն, բազմակողմ անհամաչափ սպառնալիքների դեմ ռազմական գործողություններ վարելու, դաշնակցային կամ միացյալ գործողություններ իրականացնելու կարողություն¹⁴⁵:

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի պաշտպանական քաղաքականությունը փորձում էր հարմարվել տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական նոր իրողություններին և փոքրիշատե հստակեցնել սեփական պաշտպանունակության հնարավորությունները նոր մարտահրավերների առումով: Հետ սառը պատերազմյան ժամանակաշրջանում Թուրքիայի պաշտպանական քաղաքականության հիմքում ընկած էր ՁՈւ-ի շարունակական հզո-

¹⁴⁴ Sku` Genelkurmay Başkanı'ndan sert sabah mesajları..., Milliyet, 17.12.2007.

¹⁴⁵ Sku` Թուրքիայի ազգային պաշտպանության նախարարության պաշտոնական կայք՝ <http://www.msb.gov.tr>.

րացման ու տարածաշրջանում ռազմական գերակայության հասնելու սկզբունքը:

Մերձավոր Արևելքում տեղի ունեցած զարգացումները, Մադամ Հուսեյնի վարչակարգի տապալումը, Սիրիայի շարունակական թուլացումն ու Արևմուտքի կողմից մեկուսացման քաղականությունը, Իրանի միջազգային մեկուսացումը բարենպաստ հող նախապատրաստեցին Թուրքիայի համար՝ տարածաշրջանային գերտերության կարգավիճակ ձեռք բերելու և ռազմաքաղաքական ազդեցությունը մեծացնելու առումով: Թուրքական հավակնոտ տարածաշրջանային արտաքին քաղաքականության ռազմավարության մեջ կարևորագույն դեր էր վերապահված այդ երկրի ՋՈւ-ին¹⁴⁶, որի շարունակական սպառազինումն ու արդիականացումը դիտվում էր որպես տարածաշրջանային դերակատարության բարձրացման կարևորագույն գործոններից: Ինչ վերաբերում է Թուրքիայի ներկա պաշտպանական ու անվտանգային քաղաքականության միտումներին, ապա այն տարածաշրջանային և գլոբալ հարթակում շարունակում է մնալ Արևմտյան առանցքի՝ ՆԱՏՕ-ի հավաքական անվտանգության հայեցակարգի ու շահերի տիրույթում: Թուրքիայի արտաքին ու պաշտպանական քաղաքականության առումով առանցքի փոփոխություն մեծ հաշվով չի եղել: Ինչպես նշված է Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական կայքում՝ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում էլ Թուրքիայի արտաքին, պաշտպանական ու անվտանգային քաղաքականության մեջ ՆԱՏՕ-ի կարևորությունը մնացել է անփոփոխ ու մշտական¹⁴⁷: Վերջին տարիներին Թուրքիայի քաղաքական դեկավարությունը սկսել է անվտանգության հայեցակարգն ու քաղաքականությունը դիտարկել ավելի լայն գործոնների համատեքստում և ձերբազատվել նախկին այն մոտե-

¹⁴⁶ Տես՝ Մերգեյ Մինասյան, Թուրքական Հանրապետության զինված ուժերը, Թուրքիա. Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները. Եր.: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր, թողարկում 1, 2007, էջ 51-52:

¹⁴⁷ Տես՝ Թուրքիայի ԱԳՆ պաշտ. կայք՝ http://www.mfa.gov.tr/i_-turkey_s-security-perspective_-historical-and-conceptual-background_-turkey_s-contributions.en.mfa.

ցումներից, որ անվտանգությունը հիմնված է ռազմական ուժի վրա: Նախկին բարձրաստիճան զինվորական Ս. Էրգյուվենչը դեռևս 90-ականների վերջին քննադատում էր Թուրքիայի անվտանգության հայեցակարգը, որը բացառապես հիմնված էր ռազմական ուժի ու պաշտպանության վրա: Ըստ նրա՝ 21-րդ դարում Թուրքիայի անվտանգության հայեցակարգը պետք է լինի ավելի բազմակողմ և համընդգրկուն, քանի որ հետագայում անհնար է լինելու հարևանների հետ խնդիրները լուծել ռազմական ճանապարհով¹⁴⁸: Ընդհանուր առմամբ, Թուրքիան փորձում էր աշխարհաքաղաքական նոր միջավայրում հանդես գալ որպես անվտանգություն ապահովող (*security provider*) երկիր, ստանձնել տարածաշրջանային լուրջ դերակատարություն, ինչի համար առաջնահերթ են դառնում արտաքին քաղաքականության, տնտեսական հզորության ու պաշտպանական-անվտանգության համակարգի փոխկապակցվածության ու զուգորդվածության ապահովումը:

1.3. Բանակի արդիականացման գործընթացը 1990-ական թվականներին

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի սահմանների մոտ անկայունության օջախներն ու անորոշությունը թուրքական զինվորական վերնախավի համար առաջնահերթություն դարձրեցին ռազմական հզոր մեքենայի կառուցումն՝ ի հայտ եկող տարածաշրջանային նոր մարտահրավերներին ու թուրքական պետության ունիտարությունը վտանգող ներքին անջատողականությանը դիմակայելու համար¹⁴⁹:

¹⁴⁸ Տես՝ P. Bilgin, նշվ. աշխ., էջ 193:

¹⁴⁹ Տես՝ Ümit Cizre Sakallioğlu, *The Military and Politics: A Turkish Dilemma, Armed Forces in the Middle East: Politics and Strategy*, ed. Barry M. Rubin, Thomas A. Keaney, Frank Cass Publishers, 2002, p. 191.

Մառը պատերազմի ավարտով ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակն ու Թուրքիայի տարածաշրջանային անվտանգության մտավախությունները, հատկապես Մերձավոր Արևելքում իր անմիջական սահմանների երկայնքով, բանակի համալիր արդիականացման ծրագրի խթան հանդիսացան: ՆԱՏՕ-ի սպառազինության փոխանցման ծրագրի շրջանակներում տրամադրված սպառազինությունը լուրջ աջակցություն էր թուրքական ՋՈւ-ի արդիականացման առումով: Բացի այդ, 1990-ականների սկզբներին մեծ խմբաքանակի սպառազինության ձեռքբերումը բարձրացրեց տեղական ռազմաարդյունաբերության ապագա ծրագրերի ու առկա սպառազինության նորոգման ու արդիականացման մասին մի շարք հարցադրումներ¹⁵⁰:

Ընդհանուր առմամբ, 1990-ականների սկզբներին թուրքական բանակի մարտական պատրաստության ու ռազմական գործողություններ վարելու առումով «ուղենիշային» փորձառություն եղավ ՆԱՏՕ-ի կազմում 1991 թ. Ծոցի պատերազմին Թուրքիայի մասնակցությունը¹⁵¹: Դեռ պատերազմից առաջ թուրքական ՋՈւ-ի ԳՇ-ը խիստ զգուշավոր դիրքորոշում որդեգրեց Թուրքիայի մասնակցությունը Ծոցի պատերազմին: Թուրքական զինվորական վերնախավը բացահայտ կասկածանքով էր վերաբերում իր տարածքներից դուրս ռազմական ուժեր կենտրոնացնելու և պահելու կամ նույնիսկ Իրաքի հետ սահմանին լայնամասշտաբ, արագընթաց, մոբիլ

¹⁵⁰ Sten` Ian O Lesser, Bridge or Barrier? Turkey And The West After The Cold War, Prepared for the United States Air Force and the United States Army.", RAND, 1992, pp. 29-30.

¹⁵¹ Տես` Թուրքիայի օժանդակությունը Ծոցի պատերազմում ներառում էր դեպի Միջերկրական ծով գնացող իրաքյան նավթամուղի փակումը, դաշնակցային ուժերի կողմից ռազմագործողությունների իրականացման համար իր տարածքի ռազմաբազաների օգտագործման թույլտվությունը, Իրաքի հետ սահմանային շրջաններում շուրջ 150 հազարանոց զորքի կենտրոնացումը (ապահովելով իրաքյան բանակի մի հատվածի «պարտադրված» տեղաբաշխումը հյուսիսում) և մասնակցությունը ՆԱՏՕ-ի ռազմածովային գործողություններին: Sten` Ali Karaosmanoglu, The Evolution of the National Security Culture and the Military in Turkey, Journal of International Affairs, Vol. 54, No. 1, Fall 2000, p. 211:

գործողություններ իրականացնելու հնարավորություններին ու կարողություններին: Եվ իրականում, Ծոցի պատերազմը ակնհայտ դարձրեց Թուրքիայի ՋՈւ-ի ժամանակակից չափորոշիչներով մարտական գործողություններ վարելու անպատրաստությունը¹⁵²: Ընդ որում, այն ՆԱՏՕ-ի եզակի երկրներից էր, եթե ոչ միակը, որը ռազմական գործողությունների առումով չհամապատասխանեց այդ պահանջներին: Պատերազմին Թուրքիայի մասնակցությանը դեմ էր երկրի բարձրագույն զինվորականությունը, որը պնդում էր «ակտիվ չեզոքության» պահպանման անհրաժեշտության մասին: Հենց այդ հարցում քաղաքացիական իշխանությունների հետ հակասության ու լարվածության պատճառով էլ հրաժարական տվեց ՋՈւ-ի ԳՇ պետ Նեջիփ Թորումթայը: Այդուհանդերձ, երկրի նախագահ Թ. Օզալի միանձնյա որոշմամբ՝ թուրքական կողմն ակտիվ մասնակցություն ունեցավ պատերազմին¹⁵³:

Փաստորեն, Ծոցի պատերազմում Թուրքիայի մասնակցությունը և զինուժի տեղաշարժը 1974 թ. Կիպրոսի հյուսիսային հատվածի գրավումից հետո ամենամեծն էր, ինչն էլ ի ցույց դրեց թուրքական բանակի թերությունները: Այդ «դասերը» Թուրքիայի ՋՈւ ԳՇ-ին դրդեցին բանակում մի շարք բարեփոխումներ ձեռնարկել՝ բարձրացնելու բանակի օպերատիվ կարողությունները: Մասնավորապես՝ 1990-ական թթ. սկզբներին քայլեր ձեռնարկվեցին ՑՈՒ-ը կրճատելու, դիվիզիոնային կառուցվածքը փոխելու և հիմնականում բրիգադային համակարգին անցնելու ուղղությամբ, ինչը հետապնդում էր ավելի արագաշարժ ու մոբիլ միավորումների ստեղծման նպատակ: Ամերիկյան օրինակով, քայլեր կատարվեցին թուրքական օդուժի կիրառման հեռավորությունը և թուրքական տարածքից դուրս ռազմական գործողություններ իրականացնելու հնարավորությունները մեծացնելու ուղղությամբ¹⁵⁴: Կարելի է նշել, որ 1990-ականների սկզբին թուրքական ՋՈւ-ում կազմակերպչակառուցվածքային, հա-

¹⁵² Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 30:

¹⁵³ Տե՛ս՝ Birol Yeşilada, նշվ. աշխ., էջ 182:

¹⁵⁴ Տե՛ս՝ Ian O Lesser, նշվ. աշխ., էջ 30-31:

մակարգային խոշորամասշտաբ, էական փոփոխություններ չեղան, և այն մեծամասամբ պահպանեց իր կառուցվածքային ձևը: Բանակի արդիականացման հիմնական մասը վերաբերում էր նորագույն սպառազինության ձեռքբերմանն ու առկա տեխնիկայի արդիականացմանը:

1990-ական թթ. սկզբներին Թուրքիայի հարավ-արևելքում և Իրաքի հյուսիսում քրդական զինյալների դեմ Թուրքիայի ԶՈւ-ի ԳՇ պետ Դ. Գյուրեշի բնորոշմամբ «ցածր ինտենսիվության» մարտական գործողությունների փորձը նույնպես ցույց տվեց, որ չնայած ՅՈւ-ի քանակային մեծությանն ու տեխնիկական հագեցվածության աճին՝ առկա էին լուրջ խնդիրներ¹⁵⁵: Ի դեպ, բավական ճիշտ է թուրք հետազոտող Հ. Գերգերի այն մտտեցումը, որ այդ «ցածր ինտենսիվության» մարտական գործողություններն աստիճանաբար վերածվեցին ՅՈւ-ի, ՌՕՈւ-ի, հարյուր հազարավոր զինվորների, ժանդարմերիայի, ոստիկանական ուժերի մասնակցությամբ ու տանկերի, ուղղաթիռների, հրետանու և ծանր սպառազինության գործադրմամբ շարունակական ռազմական գործողությունների¹⁵⁶:

ՔԲԿ-ի զինյալ պայքարի ակտիվացումն ու աշխարհագրության ընդլայնումը 1990-ական թթ. սկզբներին լուրջ խնդիրներ հարուցեցին թուրքական ԶՈւ-ի համար: Առաջին հերթին թուրքական բանակը երկրի հարավ-արևելքում բազավորված զինյալների դեմ գործողությունների համար ժամանակակից ռազմական տեխնիկայի խիստ անբավարարություն ուներ, և այդ բացը սկսեց լրացվել հատկապես Միացյալ Նահանգների կողմից 1989 թ. սկսած մատակարարվող ռազմական ուղղաթիռներով, որոնք անմիջապես անցան մարտական գործողությունների քրդաբնակ շրջաններում: 1990 թ. թուրքական բանակն ստացավ արդիական «Super Cobra» ռազմական ուղղաթիռների առաջին խմբաքանակը, որոնք ուղարկվեցին հարավ-արևելյան շրջաններ: Մինչև 1990-ականների կեսերը ևս

¹⁵⁵ Տե՛ս՝ Մերգեյ Մինասյան, Թուրքական Հանրապետության զինված ուժերը..., էջ 57-58:

¹⁵⁶ Տե՛ս՝ Haluk Gerger, նշվ. աշխ., էջ 164:

ձեռք բերվեցին այդ ուղղաթիռներից, որոնց մի մասը նույնպես անցավ մարտական գործողությունների¹⁵⁷:

1990-ական թթ. սկզբներին ԲԲԿ-ի զինյալ պայքարն արդեն լուրջ մարտահրավեր էր թուրքական պետության անվտանգությանը: Թուրքիայի ԶՈւ-ի ԳՇ պետ Դ. Գյուրեշը հայտարարեց, որ փոխվել են թուրքական ԶՈւ-ի առաջնահերթությունները՝ հաշվի առնելով հնարավոր մարտահրավերները, և այն, որ ներքին սպառնալիքի հարցն ամենաառաջնայինն է (*քրդական զինյալ պայքարը, անջատողականությունը-Լ.Հ.*)¹⁵⁸:

Թուրքիայի ռազմական արդիականացման հիմքերը դրվեցին հասկապես 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի իրադարձություններից հետո, քանի որ Թուրքիայի զինվորական շրջանակները պարզ հասկացան, որ երկրի ԶՈւ-ն իրենց թույլ և արդեն հնացած սպառազինությամբ չեն կարող դիմագրավել 21-րդ դարի մարտահրավերներին¹⁵⁹: Ինչպես իրավացիորեն նշել է թուրք բարձրաստիճան զինվորական, փորձագետ Է. Թաթլըն՝ «Մինչև 1990-ական թթ. Թուրքական բանակը մեծ, սակայն վատ սպառազինված ուժ էր»¹⁶⁰: Չնայած թվաքանակի մեծությանն ու նաև ռազմատեխնիկական հագեցվածությանը, Թուրքիայի ԶՈւ-ն զգալիորեն զիջում էին եվրոպական շատ երկրների՝ հասկապես նորագույն ու ժամանակակից սպառազինության պակասի տեսանկյունից:

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի ԶՈւ-ը ժամանակի անվտանգության միջավայրին համապատասխանեցվելու ուղղությամբ քայլեր ձեռնարկեցին չորս հիմնական ոլորտներում՝ վերակազմավորում, անվտանգության ոլորտի վերաձևավորում,

¹⁵⁷ Տես՝ Ümit Özdağ, Ersel Aydınli, *Winning A Low Intensity Conflict: Drawing Lessons From The Turkish Case, Democracies and Small Wars*, ed. Efraim Inbar, London, Frank Cass 2003, p. 120.

¹⁵⁸ Տես՝ Ümit Özdağ, Ersel Aydınli, նշվ. աշխ., էջ 120:

¹⁵⁹ Տես՝ E. Hen-Tov, *The Political Economy of Turkish Military Modernization*, *Middle East Review of International Affairs*, Vol. 8, No. 4 (December 2004) p. 50.

¹⁶⁰ Տես՝ Erdal Tatli, *Turkey Turns Cold to European Defense: Implications for Western Security*, *The Washington Institute for Near East Policy, Policy Watch#1376*, June 2 2008, p. 1.

ռազմական կրթություն ու դաստիարակություն և արդիականացում: ԶՈւ-ի վերակազմավորումն իրականացվում էր ՅՈՒ-ում սպառազինության արդիականացման և մասնակի թվակազմի կրճատման, ՌՕՈւ և ՌԾՈւ-ում՝ հիմնականում սպառազինության արդիականացման միջոցով¹⁶¹:

Թուրքիայի զինվորական ղեկավարությունը, հաշվի առնելով մարտական գործողությունների փորձառությունը Ծոցի պատերազմում և քրդական գրոհայինների դեմ, վեր հանեց թուրքական բանակի կազմակերպչական ու ռազմատեխնիկական ոլորտում թույլ օղակները: Մասնավորապես նշվում էր թուրքական բանակում հետախուզական-հարվածային ուղղաթիռների, ցածր բարձրության օդային թիրախների հայտնաբերման ռադիոտեղորոշման կայանների, մեծ հեռահարության հակաօդային պաշտպանության (այսուհետ՝ ՀՕՊ) համալիրների ու տրանսպորտային ինքնաթիռների, տիեզերական հետախուզության համակարգերի, կառավարման ու տեղեկատվական բարձր տեխնոլոգիական համակարգերի բացակայության կամ դրանց անբավարար քանակության մասին¹⁶²:

Թուրքիայի ռազմական գերատեսչության համար հրատապ դարձավ սպառազինության արդիականացման ընդգրկուն ծրագրերի իրականացումը: Բանակի սպառազինության արդիականացման ծրագիրը, որը պետք իրականացվեր 1991-2000 թթ., կազմելու էր 20 մլրդ դոլար¹⁶³: Բանակի արդիականացման, սպառազինության ձեռքբերման գործընթացով էր պայմանավորված 1990-ականներին Թուրքիայի ռազմական ծախսերի աստիճանական աճը:

Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում Արևմուտքում սպառազմականացման կամ սպառազինության կրճատման միտումներին հակառակ՝ Թուրքիան սպառազինման մի նոր մակարդակի վրա էր գտնվում: Եթե 1985-1996 թթ. ժամանակահատվածում

¹⁶¹ Stü` Sait Yılmaz, Dünya Ordularındaki Değişim ve Türk Ordusunun Profesyoneleşmesi, s. 6, [http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESI\(3a4b\).pdf](http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESI(3a4b).pdf).

¹⁶² Stü` U. Մինասյան, Թուրքական Հանրապետության զինված ուժերը..., էջ 57-58:

¹⁶³ Stü` Nasuh Uslu, Turkish foreign policy in the post-cold war period..., p. 125.

ՆԱՏՕ-ի եվրոպական հատվածում ռազմական ծախսերը տարեկան միջինը 1 % նվազում են գրանցել, ապա այդ նույն շրջանում թուրքական ռազմական ծախսերի տարեկան միջին աճը կազմել է 4 %: Միևնույն ժամանակ, Թուրքիայի կողմից ուղղակի ներկրման, նվիրատվության ու արտադրության ճանապարհով ընդհանուր սպառազինության ձեռքբերման արժեքի ցուցանիշի համեմատության տեսանկյունից պատկերն ավելի խոսուն է՝ տարեկան գրանցելով միջինը 14 % աճ՝ ի տարբերություն Եվրոպայում 3 % նվազման¹⁶⁴: Ամերիկացի հետազոտող Մ. Ռոբերտ Հիկքոքն իրավացիորեն նշում է, որ մինչ ՆԱՏՕ-ի անդամները կրճատում էին իրենց ռազմական ուժերը, Անկարան շարունակում էր մեծացնել ռազմական ծախսերը՝ նույնիսկ ունենալով հետագա տասնամյակների ռազմական ծախսերի պլանները¹⁶⁵:

1990 թ. հուլիսին ԳՇ պետ Ն. Թորումթայը հայտարարեց, որ Թուրքիան պլանավորել է իրականացնել ԶՈւ-ի արդիականացում՝ մեծացնելով զրահատեխնիկայի թվաքանակն ու ուժը, ձեռք բերելով ավելի շատ հարվածային ուղղաթիռներ ու արդիականացնելով ՀՕՊ միջոցներն ու հետախուզության ու տեղեկատվական համակարգերը: Նույն թվականի դրությամբ՝ Թուրքիան ուներ մոտ 10 ռազմատեխնիկական ծրագիր, այդ թվում՝ ռազմական մեքենաների ու էլեկտրոնային պայքարի համակարգերի արտադրության, որոնց ընդհանուր արժեքը գնահատվում էր 10 մլրդ դոլար¹⁶⁶:

1992-1996 թթ. ժամանակահատվածում Թուրքիան սպառազինության ներկրման ծավալների առումով եղել է առաջատարներից ՆԱՏՕ-ի անդամ երկրների շարքում, իսկ Մերձավոր Արևելքում զիջել է միայն Սաուդյան Արաբիային¹⁶⁷: 1994 թ. Թուրքիան ԱՄՆ-ից,

¹⁶⁴ Տես՝ Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 585:

¹⁶⁵ Տես՝ M. Robert Hickok, նշվ. աշխ.:

¹⁶⁶ Տես՝ Turkey to pursue military modernization despite reduced threat, Defense Daily / July 31, 1990.

¹⁶⁷ Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 586: Ըստ «SIPRI»-ի տվյալների՝ 1994-99 թթ. Թուրքիան Թայվանից ու Սաուդյան Արաբիայից հետո զբաղեցրել է երրորդ տեղը՝ որպես ամենաշատ սովորական սպառազինություն ստացող երկիր: Տես՝ Meltam

Մեծ Բրիտանիայից և Հունաստանից հետո ուներ ամենամեծ ռազմական բյուջեն երկրի ՀՆԱ-ի համամասնությամբ, իսկ սպառազինության ներկրման ծավալների ցուցանիշով աշխարհում զբաղեցնում էր 6-րդ տեղը¹⁶⁸: Նման սպառազինման հարցում դեր են խաղացել մի շարք գործոններ: Առաջինը Թուրքիային զենքի վաճառքի հարցում այլ երկրների կողմից երկարաժամկետ վարկային կամ հետագա վճարման պայմաններն էին: Երկրորդը՝ սպառազինության վաճառք իրականացնող երկրների կողմից զեղչերի կիրառումն էր, որի նպատակը վաճառքի ծավալների մեծացումն ու սեփական ռազմական արդյունաբերության զարգացմանը խրախուսելն էր: Մյուս կողմից էլ «Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրի» (այսուհետ՝ ԵՍԶՈւՊ) ստորագրումն էր, որին հետևեց եվրոպական երկրներից, հատկապես Գերմանիայից, սպառազինության տարբեր խմբաքանակների մատակարարումը Թուրքիային¹⁶⁹:

ԵՍԶՈւՊ-ի ստորագրումից առաջ Թուրքիայի ԶՈւ-ի ԳՇ պետ Ն. Թորումթայը հայտարարեց, որ եթե այդ պայմանագիրն ընդունվի, Թուրքիայից կարող են ակնկալել կրճատելու տանկերի, հրետանային համակարգերի ու ավիացիայի թիվը, սակայն Թուրքիան ցանկացած պայմաններում կձեռնարկի բոլոր միջոցներն իր անվտանգությունն ու ազգային ամբողջականությունը պաշտպանելու համար: Նա շեշտել է նաև, որ Թուրքիան, պայմանագրի հետ կապված կկրճատի արդեն հնացած սպառազինությունը, բայց դա չի ենթադրում, որ կիրաժարվի անհրաժեշտ արդիականացման ծրագրերից¹⁷⁰:

Müftüler-Bac, Turkey's Role in the EU's Security and Foreign Policies, Security Dialogue, Vol. 31, No. 4, December 2000, p. 496:

¹⁶⁸ Տե՛ս՝ Kemal Kirisci, Post Cold-War Turkish Security and The Middle East, Middle East Review of International Affairs, Vol. 1, No. 2 - July 1997, <http://meria.idc.ac.il/journal/1997/issue2/jv1n2a6.html>.

¹⁶⁹ Տե՛ս՝ Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 586:

¹⁷⁰ Տե՛ս՝ Turkey to pursue military modernization despite reduced threat, Defense Daily / July 31, 1990.

1990 թ. նոյեմբերին ստորագրված ԵՍԶՈՒՊ-ն բավական շահեկան դարձավ Թուրքիայի համար: Մի կողմից պայմանագրին մաս կազմող եվրոպական երկրները, ընդունված սահմանափակումների հետեվանքով Թուրքիային որպես նվիրատվություն մատակարարեցին իրենց սպառազինության ավելցուկները, մյուս կողմից էլ պայմանագրի սահմանափակումները չտարածվեցին Թուրքիայի հարավ-արևելյան շրջանների վրա, ինչը հնարավորություն տվեց այդ տարածքներում մեծ քանակությամբ սպառազինություն կենտրոնացնել¹⁷¹:

1990-ական թթ. կեսերին արդեն հստակ քայլեր էին ձեռնարկվում երկարաժամկետ լայնածավալ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Այդ ծրագրի շրջանակներում թուրքական բանակին ու ռազմական արդյունաբերությանը մինչև 2007 թ. նախատեսվել էր հատկացնել շուրջ 27 մլրդ դոլար¹⁷²:

1996 թ. ապրիլին Թուրքիայի զինվորականությունը հրապարակեց թուրքական ՋՈՒ-ի լայնամասշտաբ արդիականացման 30-ամյա պլանի մասին, որի ընդհանուր արժեքը կազմելու էր 150 մլրդ դոլար¹⁷³: Դրա նպատակն էր հիմնովին արդիականացնել օդուժն ու ռազմածովային ուժերը՝ ձեռք բերելով հարյուրավոր ժամանակա-

¹⁷¹ Stü` Stü u Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 2, (1980-2001), İstanbul, İletişim yayınları 2002, s. 207; Treaty on Conventional Armed Forces in Europe, <http://www.osce.org/library/14087>.

¹⁷² Stü` А. Гурьев. Турция-Израиль: по пути укрепления военного сотрудничества. <http://www.iimes.ru/rus/stat/2006/24-01-06.htm>.

¹⁷³ Stü` 2011թ. հոկտեմբերին թուրքական «Zaman» պարբերականի համաձայն՝ ՊԱԳՎ-ում երկար տարիներ ինժեներ աշխատած Ահմեթ Նեջիփ Բոյնուեդրին 1990-ականների երկրորդ կեսին բանակի սպառազինման հայտերն ուսումնասիրելու համար դիմել էր թուրքական դատարան՝ ժամանակի գլխավոր շտաբի պետ Հուսեյն Քըվըբթոլուին, ԳՇ երկրորդ պետ Չելիք Բիրին և այլոց մեղադրելով սպառազինման հայտերին ու նախագծերին նրանց կամայական միջամտությունների մեջ: Դատարան ներկայացված փաթեթում նշված էր, որ գեներալ Չ. Բիրի կողմից 1996 թ. բանակի արդիականացման 150 մլրդ դոլար արժողության պլանի նախաձեռնումից հետո, այդ ջանքերի չտապալման համար ուղղակիորեն միջամտել է մի շարք ռազմական նախագծերին՝ ցուցաբերելով կամայականություն ու անձնական շահի հետապնդում: Stü` Ahmet Dönmez, 28 Şubat'ın askerî ihaleleri Anayasa Mahkemesi'nde, Zaman 11.10.2011:

կից ինքնաթիռներ, ուղղաթիռներ ու տասնյակ նոր ռազմական նավեր: Վարչապետ Նեջմեթթին Էրբաքանի գլխավորած կառավարությունը, սակայն, չէր շտապում վավերացնել այդ պլանը, և միայն մի քանի ամիս հետո փոխվարչապետ Թանսու Չիլլերը հրաման ստորագրեց այդ պլանի առաջին մասի մեկնարկի վերաբերյալ՝ առաջնահերթ համարելով ռազմական ու տրանսպորտային ուղղաթիռների տեղական արտադրությունը¹⁷⁴: Այդ գումարը ծախսվելու էր ըստ գորքերի տեսակների, որից 60 մլրդը ցամաքային, 25 մլրդը՝ ռազմածովային, 65 մլրդն էլ՝ ՌՕՈւ-ի կարիքների համար¹⁷⁵: Նախատեսված էր այդ ներդրումների մի զգալի հատվածն ուղղել երկրի ներքում բանակի կարիքների ապահովմանը և լուրջ դերակատարություն տալ թուրքական ռազմաարդյունաբերական համալիրին¹⁷⁶: Հարկ է նշել, որ վերոնշյալ 150 մլրդ դոլարը ամբողջովին իրատեսական գումար է, քանի որ եթե դիտարկում ենք Թուրքիայի ռազմական բյուջեից տարեկան սպառազինության ուղղությամբ հատկացվող մասնաբաժինը, որը կազմում է միջինը 3-5 մլրդ դոլար, ապա ստացվում է 30 տարվա մեջ 105-ից 150 մլրդ դոլար: Այստեղ հարկ է ընդգծել, որ բացի բյուջետային հատկացումներից, հնարավոր է նաև այս գումարի մեջ արտաբյուջետային միջոցների ներգրավումը ևս, որոնք հիմնականում ուղղվում են ռազմաարդյունաբերական նախագծերին:

Արդիականացման ռազմավարության հիմքում էական և հիմնական դերակատարություն տրվեց երկրի ռազմաարդյունաբերական համալիրին: 1996 թ. թուրքական ռազմական արդյունաբերության ընկերությունների ներկայացուցիչների հետ Թուրքիայի նա-

¹⁷⁴ Stü ` William J. Durch, *Constructing Regional Security: The Role of Arms Transfers, Arms Control, and Reassurance*, The Century Foundation Inc., PALGRAVE, 2000, p. 111.

¹⁷⁵ Stü ` Amikam Nachmani, *What Says the Neighbour to the West? On Turkish-Greek Relations*, *TURKEY in World Politics: An Emerging Multiregional Power*, ed. Barry Rubin and Kemal Kirişci, Lynne Rienner Publishers, USA, 2001, p. 79.

¹⁷⁶ Stü ` Makina Imalat Sanayii Özel İhtisas Komisyonu Raporu, Sekizinci Beş Yıllık Kalkınma Planı, Ankara 2000, http://ekutup.dpt.gov.tr/imalatsa/makina/I_oik552.pdf; Erdal İpekesen, *Yeni savunma sanayi profili*, http://www.tempodergisi.com.tr/kose/erdal_ipekesen/05665/.

խագահ Ս. Դեմիրելի անցկացրած խորհրդակցության ժամանակ մանրամասն ուսումնասիրվել են ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանն ուղղված հետագա պլանները, որի արդյունքում ՊՆ-ի կողմից մշակվել էր այդ ուղղությամբ իրականացվելիք քայլերի վերաբերյալ առանձին փաստաթուղթ¹⁷⁷:

Մառը պատերազմի ավարտից հետո՝ 1990-ական թթ. բավական մեծ է եղել ԱՄՆ-ի դերը թուրքական բանակին սպառազինության մատակարարելու գործում, ինչն աննախադեպ էր նույնիսկ Մառը պատերազմի տարիների համեմատությամբ: Ըստ ամերիկյան պաշտոնական տվյալների՝ 1990-1997 թթ. ընթացքում «Ուղիղ առևտրային վաճառքի-DCS» և «Արտաքին ռազմական վաճառքի-FMS» ծրագրերի միջոցով ԱՄՆ-ի կողմից Թուրքիային մատակարարվել է շուրջ 4.7 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ սպառազինություն¹⁷⁸:

ԱՄՆ-ից ձեռքբերված սպառազինության ընդհանուր արժեքը միայն 1995 թ. կազմեց 536 մլն դոլար, ինչն ամենացածր ցուցանիշն էր ողջ 90-ականների ընթացքում: Ամենամեծ արժեքը գրանցվեց 1997 թ.՝ կազմելով 1 մլրդ 270 մլն դոլար: Ողջ 1990-ականներին ԱՄՆ-ից ձեռքբերված սպառազինության ընդհանուր արժեքը կազմել է մոտ 8 մլրդ դոլար¹⁷⁹:

Միաժամանակ ավելացավ նաև ռազմական բյուջեն: Թուրքիայի ռազմական բյուջեն 1991 թ. ավելանալով կազմեց 4.8 մլրդ դոլար՝ 1990 թ. 3.4 մլրդ-ի փոխարեն, և այդ ցուցանիշը բավական բարձր էր նախորդ տարիների բյուջեից: 1992 թ. դրությամբ Թուրքիայի ռազմական ծախսերը կազմել են պետական բյուջեի մոտ 12.5 %-ը: Ռազմական ծախսերի ավելացումը պայմանավորված էր երկու

¹⁷⁷ Տե՛ս՝ Ավելի մանրամասն՝ А. Косиков, նշվ. աշխ., էջ 212-217:

¹⁷⁸ Տե՛ս՝ Tamar Gabelnick, William D. Hartung, and Jennifer Washburn, *Arming Repression: U.S. Arms Sales to Turkey During the Clinton Administration*, Joint Report of the World Policy Institute and the Federation of American Scientists, October 1999, <http://www.fas.org/asmp/library/reports/turkeyrep.htm>.

¹⁷⁹ Տե՛ս՝ Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 2, (1980-2001), İstanbul, İletişim yayınları 2002, s. 287.

հանգամանքով: Առաջինը՝ Թուրքիան խիստ անհանգստացած էր նախկին ԽՍՀՄ-ի հետ իր սահմանի երկայնքով երկարաժամկետ անկայունության հնարավորությունից ու Մերձավոր Արևելքից բխող անվտանգության ռիսկերից: Երկրորդը՝ Թուրքիան ձեռնարկում էր երկարաժամկետ ռազմական արդիականացման քայլեր, որոնց անհրաժեշտությունն ու հրամայականն ի հայտ եկան Օոցի պատերազմի փորձառությունից¹⁸⁰: Բավական մեծ գումարներ էին հատկացվում նորագույն սպառազինության ձեռքբերման նպատակով:

1990-ական թթ. սկզբներից սպառազինության ձեռքբերման հարցում Թուրքիան քայլեր ձեռնարկեց այդ աղբյուրները դիվերսիֆիկացնելու ուղղությամբ: Չնայած հիմնական մատակարարները շարունակում էին մնալ ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ի անդամ երկրները, 90-ականներին հայտնրվեցին նոր երկրներ, ինչպես օրինակ՝ Ռուսաստանը, Չինաստանը, Իսրայելը, որոնց մատակարարումներն էական նշանակություն չունեցան Թուրքիայի սպառազինության ընդհանուր տեսակարար կշռում: 1990-ականների սկզբներին և կեսերին Թուրքիան որոշ խմբաքանակի ռազմական տեխնիկա ձեռք բերեց ՌԴ-ից՝ հիմնականում զրահամեքենաներ, ռազմական ուղղաթիռներ: Իսկ 90-ականն թթ. երկրորդ կեսից չինական ընկերությունների հետ համագործակցության ու տեխնոլոգիաների հիման վրա իրականացվեցին հրթիռահրետանային համալիրների արտադրական ծրագրեր¹⁸¹:

1992 թ. դեկտեմբերից մինչև 1995 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում հիմնականում զինատեսակների արտադրության ու արդիականացման ոլորտում Թուրքիան մի շարք պայմանագրեր ստորագրեց ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Հոլանդիայի, Իսրայելի, Ռուսաստանի, Պակիստանի հետ: Սպառազինության ձեռքբերման մասին ստորագրված պայմա-

¹⁸⁰ Տե՛ս՝ Ian O Lesser, նշվ. աշխ., էջ 27-28:

¹⁸¹ Տե՛ս՝ SIPRI Arms Transfers Database, http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html.

նագրերում առյուծի բաժինը պատկանում էր ամերիկյան ռազմաար-
դյունաբերական ընկերություններին¹⁸²:

Օոցի պատերազմից հետո ԱՄՆ-ի կողմից Թուրքիային ցուցա-
բերված ռազմատնտեսական օգնությունը ցույց տվեց Թուրքիայի
ռազմավարական նշանակությունն Արևմուտքի համար հատկապես
Մերձավոր Արևելքում, Բալկաններում ու Կենտրոնական Ասիայում:
1990-ական թթ. սկզբներին ԱՄՆ-ն սկսեց արդիականացնել թուր-
քական բանակը ՆԱՏՕ-ի սպառազինության փոխանցման ծրագրի
շրջանակում: Այդ շրջանում Թուրքիային մատակարարվել են «M-
60» և «Leopard» տանկեր, տարբեր դասի զրահամեքենաներ ու
փոխադրամիջոցներ, հրետանային համալիրներ, «Cobra» և այլ դասի
ուղղաթիռներ, «F-4» ռազմական ինքնաթիռներ, Roland դասի հրթիռ-
ներ և այլն: ԱՄՆ-ը մեծացրեց Թուրքիային տրամադրվող տնտեսա-
կան ու ռազմական օգնության ծավալը՝ 1991 թ. 515 մլն դոլարից այն
հասցնելով 804 մլն-ի 1992 թ.: Հետագայում տնտեսական օգնության
ծավալը կրճատվեց, բայց ռազմականը շարունակվեց մինչև 1995
թ.¹⁸³: «Human Rights Watch» կազմակերպության կողմից Թուրքիա-
յում մարդու իրավունքների վիճակի քննադատությունն ու քրդերի
դեմ թուրքական պետության քաղաքականության պատճառով¹⁸⁴
1990-ականների կեսերին ԱՄՆ-ը հրաժարվեց մի շարք զինատե-
սակներ վաճառել Թուրքիային: Մասնավորապես՝ 1996 թ. գարնանը
Սպիտակ տունը հրաժարվեց Թուրքիային վաճառել 10 միավոր
«AH-1 W Super Cobra» ռազմական ուղղաթիռներ, ինչից հետո էլ
թուրքական կողմը հրաժարվեց այդ գործարքից և սկսեց այլ մատա-
կարարների հետ բանակցել՝ ռազմական ուղղաթիռների համատեղ

¹⁸² Տես՝ Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 603:

¹⁸³ Տես՝ Rachel Prager, Turkish-American Relations: Historical Context and Current Issues, Georgetown University, 2003, p. 6,

<http://www.tusiad.us/content/uploaded/Prageltusiadsubmission.pdf>

¹⁸⁴ Տես՝ Human rights watch world report 1997: Events of 1996, USA, p. 326.

արտադրության համար: ԱՄՆ-ը հրաժարվեց նաև մատակարարել «Perry» դասի 3 ֆրեգատները¹⁸⁵:

Ընդհանուր առմամբ, թե՛ Մերձավոր Արևելքում սպառազինության աճող մրցավազքին և թե՛ Հունաստանի սպառազինմանը գուրընթաց Թուրքիան փորձում էր մեծացնել նաև իր ԶՈւ-ի սպառազինության բազան: Հատկապես Իրանի հրթիռային տեխնոլոգիաների զարգացման, Սիրիայի ու Հունաստանի սպառազինման միտումները խիստ անհագնաստացնում էին Թուրքիային, որն էլ, որպես հակակշիռ դրանց, փորձում էր գտնել ռազմաքաղաքական դաշնակցային հարաբերություններ և մեծացնել իր ռազմատեխնիկական բազան:

Երկար ժամանակ պահպանվում էր ուժային հավասարակշռությունը Հունաստանի ու Թուրքիայի միջև, ինչն էլ մեծ հաշվով կանխում էր պատերազմի հնարավորությունը: Սակայն 1980-ականներից սկսած և հատկապես 1990-ականներին արդեն մեծ թափ ստացած Թուրքիայի սպառազինման տեմպերը փոխեցին նախկինում եղած ուժային հավասարակշռությունը՝ հոգուտ Թուրքիայի: 1990-ական թթ. սկզբներից Թուրքիայի պաշտպանական ծախսերն զգալիորեն ավելացան և գերազանցեցին հունականին, իսկ 90-ականների կեսերին կազմեցին Հունաստանի ծախսերի գրեթե կրկնակին: 1996 թ. թուրքական պաշտպանական ծախսերը կազմեցին մոտ 10 մլրդ, իսկ հունականը՝ 5.7 մլրդ ԱՄՆ դոլար¹⁸⁶:

¹⁸⁵ Տես՝ William J. Durch, *Constructing Regional Security: The Role of Arms Transfers, Arms Control, and Reassurance*, The Century Foundation Inc., PALGRAVE, 2000, p. 112. Տվյալ շրջանում այդ ռազմական ուղղաթիռները խիստ անհրաժեշտություն էին Թուրքիայի համար՝ երկրի հարավ-արևելքում ու Հյուսիսային Իրաքում քուրդ զինյալների դեմ գործողություններ իրականացնելու համար: Տես՝ նաև Kemal Kirisci, *Turkey and the United States: Ambivalent Allies*, *Middle East Review of International Affairs*, Vol. 2, No. 4 - November 1998, pp. 23-24:

¹⁸⁶ Տես՝ Evaghorou L. Evaghoras, *The Economics of Defence of Greece and Turkey: A Contemporary Theoretical Approach for States Rivalry and Arms Race*, Center for International Politics Thessaloniki, <http://files.mgkworld.net/cipt/docs/CIPTEvaghorouDefEcoGRTR.pdf>, p. 24. 1980-ական թթ. վերջի համեմատությամբ՝ 1990-ական թթ. վերջին Թուրքիայի ռազմական ծախս-

Արդեն 1990-ական թթ. կեսերին թուրքական բանակն զգալի առավելություն ձեռք բերեց հունականի նկատմամբ: Բացի բանակի թվաքանակը, որը միշտ զգալիորեն գերազանցել է հունական բանակին, բարձրացավ նաև թուրքական բանակի սպառազինման մակարդակը՝ հատկապես ՌՕՈՒ-ում ու ՌԾՈՒ-ում: Հաշվի առնելով ուժային այդ փոփոխությունը՝ 1996 թ. Հունաստանի վարչապետ Կոստաս Սիմիտիսը հայտարարեց հունական ՁՈւ-ի սպառազինման 5-ամյա ծրագրի մասին՝ շուրջ 17 մլրդ դոլար գումարի չափով¹⁸⁷: Այս համատեքստում նշենք, որ Թուրքիան և Հունաստանը հատկապես 90-ական թթ. սկսած ունեին ռազմական ծախսերի ամենաբարձր ցուցանիշը Եվրոպայում ՀՆԱ-ի համամասնությամբ, ինչը շարունակվեց նաև հետագա տարիներին: Դա պայմանավորված էր ինչպես փոխադարձ անվտանգության մարտահրավերների ընկալմամբ, այնպես էլ ռազմական գործողությունների մեջ ներքաշվելու ռիսկայնությամբ: 1999 թ. Հունաստանի ռազմական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 4.8 %-ը, իսկ Թուրքիայինը՝ 4.2 %-ը, այն դեպքում, երբ ՆԱՏՕ-ի անդամ պետություններում միջին ցուցանիշը կազմում էր 2.4 %¹⁸⁸: 2003-2004 թթ. Հունաստանի ռազմական ծախսերը կազմել են երկրի ՀՆԱ-ի մոտ 4.1 %-ը (6.5 մլրդ դոլար), իսկ Թուրքիայինը՝ համապատասխանաբար 4.9 %-ը (9.2 մլրդ դոլար)¹⁸⁹: Ի տարբերություն Հունաստանի, որի համար ռազմական մարտահրավերը բխում էր առավելապես Թուրքիայից, թուրքական կողմի

սերը ավելի քան կրկնապատկվեցին: Այսպես՝ 1988-89 թթ. դրանք կազմել են համապատասխանաբար մոտ 5.3 և 6.1 մլրդ, իսկ 1998-99 թթ.՝ 10.9 և 12 մլրդ դոլար:

¹⁸⁷ Haralambos Athanasopoulos, Greece, Turkey and the Aegean Sea, A Case Study in International Law, Mcfarland Publishers 2001, pp. 110-111. Թուրքիայի ու Հունաստանի ռազմական ծախսերի ու մրցավազքի վերաբերյալ տես՝ Thanos P. Dokos, Tension-Reduction and Confidence-Building in Aegean, Turkish-Greek Relations: The Security Dilemma in Aegean, Ed. M. Aydın and K. Ifantis, London-New York: Routledge 2004, pp. 126-127:

¹⁸⁸ Տես՝ Evaghorou L. Evaghoras, նշվ. աշխ., էջ 10:

¹⁸⁹ Տես՝ Համեմատության համար նշենք, որ Արևելյան Եվրոպայի երկրներում այդ ցուցանիշը բավական ցածր էր: Օրինակ՝ Բուլղարիայում (2.4%), Հունգարիայում (1.9%), Լեհաստանում (2%), Ռումինիայում (2.3%): Տես՝ Anthony Forster, Armed Forces and Society in Europe, Palgrave Macmillan, 2006, pp. 54-55

համար նման մարտահրավերների աշխարհագրությունն ավելի մեծ էր:

1990-ական թթ. կեսերին, Էգեյան ծովի տարածքային ջրերի սահմանների հետ կապված, բավական սրվեցին Թուրքիայի ու Հունաստանի հարաբերությունները, և երկու երկրները դարձյալ հայտնվեցին պատերազմի շեմին: Թուրքիան Հունաստանի կողմից Էգեյան ծովում իր տարածքային ջրերը մինչև 12 մղոն հեռավորության վրա տարածելու հայտարարությունը որակեց որպես «casus belli», և թուրքական խորհրդարանը կառավարությանն օժտեց ռազմական գործողություններ վարելու լիազորությամբ: Էգեյան ու Մարմարա ծովերում թուրքական կողմն անցկացրեց «Efes-95» անունը կրող լայնամասշտաբ ծովային ու օդային զորավարժություններ¹⁹⁰: Հունաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունները ծայրաստիճան սրվեցին հատկապես 1996 թ. Էգեյան ծովի Բմիա (Քարդաք) կղզու պատկանելության խնդրի ու նույն թվականին հունական կործանիչի կողմից Էգեյան ծովում խոցված թուրքական «F-16» կործանիչի պատճառով: 1997 թ. Թուրքիայի ՌԾՈՒ-ի հրամանատար Գ. Էրքայան հայտարարեց, որ Հունաստանի կողմից Էգեյան ծովում իր ջրային սահմանների հեռավորությունը 12 մղոն տարածելու պարագայում «Թուրքիան վճռականորեն կքննարկի թուրքական տարածքին մոտ որոշ հունական կղզիներ գրավելու մասին»¹⁹¹:

Գրեթե նույն ժամանակաշրջանում Կիպրոսի Հանրապետության սպառազինման միտումներն ու Հունաստանի հետ պաշտպանական պակտի ստորագրումը, Հունաստանի ու Սիրիայի միջև ռազմական համաձայնագրի կնքումը, Հայաստանի ու Իրանի հետ համագործակցության զարգացումը լուրջ անհանգստություն առաջաց-

¹⁹⁰ Տես՝ Հ. Գաբրիելյան, Էգեյան հակամարտությունը թուրք-հունական հարաբերություններում, Հանրապետական-թիվ 11(86), 2010, էջ 31: Տես՝ նաև Tayyar An, Ege Sorunu ve Türk-Yunan İlişkileri: Son Gelişmeler Işığında Kara Suları ve Hava Sahası Sorunları, <http://dergiler.ankara.edu.tr/dergiler/42/468/5378.pdf>, s. 55:

¹⁹¹ Տես՝ Stergios Arapoglou, Dispute in The Aegean Sea. The Imia/Kardak Crisis, A Research Report Submitted to the Faculty, Air Command and Staff College, Air University, April 2002, p. 9, <http://www.dtic.mil/cgi-bin/GetTRDoc?AD=ada420639>.

րին Թուրքիայում, և Անկարան վերանայեց Արևելյան Միջերկրակա- նում իր անվտանգության խնդիրներն ու ռազմական հնարավորու- թյունները: Ռազմական առումով Անկարայի համար խիստ մտահո- գիչ դարձավ հատկապես 1997 թ. Կիպրոսի կողմից ռուսական «S-300» ՀՕՊ համալիրների ու դրան հաջորդած «Tor-M1» զենիթա- հրթիռային համալիրների ձեռքբերումը¹⁹²:

Այդ պարագայում Իսրայելի հետ Թուրքիայի ռազմաքաղաքա- կան սերտ համագործակցության զարգացումն առաջին հերթին դիտվում էր որպես հակակշիռ Թուրքիայի մի շարք հարևանների միջև ծավալվող ռազմաքաղաքական համագործակցությանը: 1990- ական թթ. կեսերից ռազմատեխնիկական ու ռազմաարդյունաբերու- թյան ոլորտում սերտ համագործակցությունը Թուրքիայի և Իսրա- յելի միջև բխում էր երկու երկրների ռազմաքաղաքական շահերից¹⁹³: Ինչպես նշված է Թուրքիայի ՁՈւ ԳՇ պետի տեղակալ (1995-1998 թթ.) և Իսրայելի հետ ռազմական համագործակցության ջատագովներից ու հիմնական նախաձեռնողներից համարվող Չ. Բիրի և իսրայելցի հետազոտող Մ. Շերմանի համատեղ հոդվածում՝ «Իսրայելաթուր- քական երկկողմ ռազմական համագործակցությունը մեծացրեց

¹⁹² Stu` Spyridon Mimikos, Strategic Implications of Expanded Turkish-Israeli Military Relation, Thesis, Naval Postgraduate School, Monterey, California, December 1999, pp. 63-64, <http://www.dtic.mil/cgi-bin/GetTRDoc?AD=ADA374018>; Fuat Aksu, Türk-Yunan İlişkilerinde Güvenlik ve Güven Artırma Çabaları,

<http://www.yildiz.edu.tr/~faksu/Fuatyayinlar/trgr-guvenlik.pdf>, ss. 17-18. Հունաստանը, հաշվի առնելով Թուրքիայի հետ լարված հարաբերությունները, «S-300» ՀՕՊ համա- լիրներ տեղակայեց Կիպրոսում, և թուրքական կողմը դա ընկալեց որպես հարձակո- ղական սպառազինություն, ինչն էլ ավելի սրեց իրավիճակը: Հետագայում հունական կողմը դրանք փոխադրեց Կրետե և որոշ ուսումնասիրողներ այդ քայլը որակեցին որպես թուրք-հունական հարաբերությունների լարվածության թուլացմանն ուղղված քայլ: St` u Ayten Gundogdu, Identities in Question: Greek-Turkish Relations in a Period of Transformation?, Middle East Review of International Affairs, Vol. 5, No. 1- March 2001, pp. 109-110 <http://meria.idc.ac.il/journal/2001/issue1/gundogdu.pdf>; Mustafa Aydın, Contemporary Turkish-Greek Relations: Constraints and Opportunities, Turkish-Greek Relations: The Security Dilemma in Aegean, Ed. M. Aydın and K. Ifantis, London- New York: Routledge 2004, pp. 33-34:

¹⁹³ Stu` Amikam Nachmani, Turkey: facing a new millenium: coping with intertwined conflicts, Manchester University Press, 2003, pp. 222-224.

զսպման միջոցով հակազդման ազդեցությունը՝ այդպիսով իսկ նվազեցնելով նրանցից մեկի դեմ ռազմական գործողություններ սաղդելու հնարավորությունները: Թուրքիայի կամ Իսրայելի դեմ ռազմական ուժ գործադրել ենթադրող պետությունները պետք է հաշվի առնեն նրանց հավաքական ուժը»¹⁹⁴:

Թուրքիայի ԶՈւ-ի սպառազինության արդիականացման ու ռազմաարդյունաբերության զարգացման գործում լուրջ դերակատարություն սկսեց ունենալ Իսրայելը: Ռազմատեխնիկական համագործակցության զարգացման անկյունաքարը հանդիսացավ 1996 թ. ռազմաարդյունաբերության ոլորտում գործակցության մասին ստորագրված համաձայնագիրն, ինչը Թուրքիային հնարավորություն տվեց իր ԶՈւ-ն ապահովել նորագույն սպառազինությամբ ու համալրել նորագույն տեխնոլոգիաներով: Մյուս կողմից, նույն ժամանակահատվածում ԱՄՆ-ի ու Եվրոպական մի շարք երկրների կողմից Թուրքիային սպառազինության մատակարարման հարցում կիրառված արգելանքն զգալի առավելություններ ապահովեց իսրայելական ռազմաարդյունաբերական ընկերությունների համար: Ինչպես նշել է թուրք գեներալ Սըթքը Օրունը՝ «ԱՄՆ-ի ու Եվրոպական երկրների կողմից Թուրքիային զենքի վաճառքի հաճախակի դադարեցումն զգալի առավելություն տվեց Իսրայելի ռազմաարդյունաբերական համալիրին»¹⁹⁵:

Թուրքիայի համար խիստ կարևոր էր այն հանգամանքը, որ ռազմաարդյունաբերության ոլորտում համաշխարհային առաջատարներից համարվող Իսրայելի հետ համատեղ նախագծերը հնարավորություն կտան ծանոթանալ նորագույն ռազմական տեխնոլոգիաներին և ներգրավվել արտադրական գործընթացում: Իսրայելական ռազմաարդյունաբերական ընկերությունները բուռն կերպով սկսեցին մասնակցել թուրքական ԶՈւ-ի սպառազինության արդիա-

¹⁹⁴ Stü` Çevik Bir and Martin Sherman, Formula for Stability: Turkey Plus Israel, Middle East Quarterly, Fall 2002, p. 30.

¹⁹⁵ Stü` Dietrich Jung, Wolfango Picolli, Turkey at the Crossroads: Ottoman Legacies and a Greater Middle East, London: Zed Books Ltd. 2001, pp. 163-164.

կանացման ծրագրերին՝ ավիացիոն միջոցների, տանկերի, հրթիռների և այլն: Գրեթե բոլոր նախագծերում Թուրքիան պնդում էր թուրքական ռազմաարդյունաբերական ընկերություններին ներգրավելու անհրաժեշտության մասին¹⁹⁶:

1990-ական թթ. Թուրքիան ռազմատեխնիկական արտադրանքի իրացման մեծ շուկա դարձավ Եսրայելի ռազմաարդյունաբերական համալիրի համար: Որոշ տվյալների համաձայն՝ 1998 թ. Դրությամբ Եսրայելի կողմից Թուրքիային սպառազինության վաճառքի գումարը գերազանցել է 1 մլրդ դոլարը¹⁹⁷:

Երկու երկրների միջև ռազմատեխնիկական ու ռազմաարդյունաբերության ոլորտում համագործակցության ամենախոշոր գործարքներից կարելի է համարել իսրայելական ընկերությունների կողմից թուրքական բանակի 54 միավոր «F-4» և 48 միավոր «F-5» ռազմական ինքնաթիռների ու «M60» տանկերի արդիականացումը: Երկու երկրների միջև իրականացվել են արտադրական համատեղ ծրագրեր, թուրքական կողմն էլ մասնակցել է իսրայելական ռազմական արդյունաբերության որոշ նախագծերի, ինչպես օրինակ՝ «Popeye» հրթիռների արտադրությունը, իսրայելական բանակի «Galil» հետևակի հրացանների, «Arrow» հակահրթիռային, «Delilaha» հեռահար հրթիռների արտադրությունը¹⁹⁸:

¹⁹⁶ Մանրամասն տես՝ Eugene Kogan, Cooperation in the Israeli-Turkish Defence Industry; Conflict Studies Research Centre; Middle East Series 05/43, Defence Academy of the United Kingdom, [http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05\(43\)-EK](http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05(43)-EK), pp. 10-11:

¹⁹⁷ Տես՝ Efraim Inbar, The Strategic Glue in the Israeli-Turkish Alignment, Turkey in World Politics, An Emerging Multiregional Power, ed. Barry Rubin, Kemal Kirisci, Colorado-London: Lynne Rienner Publishers, 2001, p. 119.

¹⁹⁸ Տես՝ Amikam Nachmani, Turkey: facing a new millenium: pp. 222-224. 1996 թ. օգոստոսին ռազմաարդյունաբերության ոլորտում ստորագրված պայմանագրով երկու երկրները պայմանավորվեցին «Popeye 2» հրթիռների համատեղ արտադրության մասին, որի արժեքը կազմում էր 100 մլն դոլար: Ավելի մանրամասն տես՝ Spyridon Mimikos, Strategic Implications of Expanded Turkishisraeli Military Relation, Thesis, Naval Postgraduate School, Monterey, California, December 1999, p. 11, <http://www.dtic.mil/cgi-bin/GetTRDoc?AD=ADA374018>. Իսրայելա-թուրքական ռազմատեխնիկական համագործակցության ծավալների վերաբերյալ պատկերացում կազմելու համար հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ ցուցանիշները: Իսրայելի ռազմաարդյունա-

Ըստ ամերիկյան տվյալների՝ ողջ 1990-ականներին Թուրքիայի կողմից սպառազինության ներկրումների ընդհանուր արժեքը կազմել է մոտ 19 մլրդ դոլար, մինչդեռ Թուրքիայի կողմից սպառազինության ատառանման ընդհանուր գումարային արժեքը չի գերազանցել 322 մլն դոլարը¹⁹⁹: 1998 թ. Թուրքիայի պաշտպանության նախարար Իսմեթ Սեզգինը, խոսելով բանակի արդիականացման մասին, նշել է. «Մենք մեծ ուշադրություն ենք դարձնում ԶՈՒ-ի արդիականացմանը: Պաշտպանական կարիքների հարցում ավելի ինքնաբավ դառնալն ու բարձր տեխնոլոգիական պաշտպանական տեխնոլոգիաների ձեռքբերումը մեր ազգային նպատակներից են»²⁰⁰:

Թուրքիայի պաշտպանական ռազմավարության համատեքստում ՅՈՒԻ-ի հրամանատար Հ. Քըվրքքոլուն, 1998 թ. շեշտելով, որ գորքերի արագ ծավալումը հեռավոր շրջաններում կենսական նշանակություն ունի այն ռիսկերի ու պատասխանատվությունների համար, որ Թուրքիան պետք է ստանձնի, առաջադրեց բանակի արդիականացման համալիր մի ծրագիր, որը պետք էրկրի սահմաններից դուրս ռազմական գործողություններ վարելու և բարձր շարժունակություն ապահովելու հնարավորությունները մեծացնել ²⁰¹ : Նման ծրագրի իրականացումն, ըստ Քըվրքքոլուի, բերելու էր

բերական համալիրի կողմից 2000 թ. ստորագրված պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմել է մոտ 2,48 մլրդ, 2001թ.՝ 2,58 մլրդ, 2002 թ.՝ 4 մլրդ, 2003 թ.՝ 3,02 մլրդ, 2004 թ.՝ 3,9 մլրդ դոլար: Այդ պայմանագրերում զգալի մասնաբաժինը՝ 20-35 %-ը, պատկանել է Թուրքիային: Տես՝ А. Гурьев. Турция-Израиль: по пути укрепления военного сотрудничества. ИИИБВ, 24.01.2006, <http://www.iimes.ru/rus/stat/2006/24-01-06.htm>.

¹⁹⁹ Տես՝ Afşin Şahin, Murat Çetinkaya, New Evidence for Turkey on the Relationship between Defense Spending and Aggregate Output, *European Journal of Social Sciences* – Volume 13, Number 3, 2010, p. 441; Nicholas Gilby, *Turkey and the Arms Trade 1998-2002: A Precipitous Turkey's War Machine*, CAAT, London, March 2003, p. 2, <http://www.caat.org.uk/resources/publications/countries/turkey-precis-0303.pdf>.

²⁰⁰ Տես՝ Nasuh Uslu, *Turkish foreign policy in the post-cold war period...*, pp. 125-126.

²⁰¹ Տես՝ Արմեն Այվազյան, Հայաստանի պաշտպանական հայեցակարգը, Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ա. Այվազյանի խմբ., «Հայրենասիրություն» մատենաշար 2, «Արարատ» ռազմավարական կենտրոն, Եր. 2007, էջ 156 (147-183): Հ. Քըվրքքոլուն 1997-98 թթ. եղել է ցամաքային գորքերի հրամանատար, իսկ 1998-2002 թթ.՝ ԶՈՒ ԳՇ պետ:

նրան, որ թուրքական բանակը կունենար այնպիսի սպառազինություն, որը առավելություն կհաստատեր թշնամու վրա նրա իսկ տարածքի խոր թիկունքում, կկիրառեր գերճշգրիտ զինատեսակներ՝ ներառյալ «երկիր-երկիր» հեռահար հրթիռներ՝ ապահովելով կրակակետերի շարունակական ու լուրջ քողարկումը²⁰²:

Հիմնավորելով ռազմական ոլորտի արդիականացման աննախադեպ ծրագրերը՝ Թուրքիայի ռազմական արդյունաբերության հարցերով պատասխանատու Յալչըն Բուրջաքը 1999-ին ասել է, որ «Այդ սպառազինությունն (Թուրքիայի կողմից ձեռք բերվող-Լ.Հ.) ուղղակի անհրաժեշտություն է: Եվրոպայում կրճատել են ռազմական ծախսերը...սակայն այդ իրավիճակը թուրքական բանակին հարիր չէ: Վարչավայի պակտի վերացումը մեզ տվեց ոչ թե կայունություն, այլ՝ անորոշություններ»²⁰³: Այս առումով բավական դիպուկ է նշել թուրք հետազոտող Ն. Ուսլուն, ըստ որի՝ «հետաառըպատերազմյան շրջանում Թուրքիայի կառավարող շրջանակները ավելի մեծ ուշադրություն էին դարձնում անվտանգությանն ու պաշտպանությանը, քան նույնիսկ Սառը պատերազմի տարիներին»²⁰⁴:

1990-ականների վերջերին շարունակվում էին ԶՈւ-ում արհեստավարժ-պրոֆեսիոնալ զինծառայողներով համալրելու աշխատանքները: 1999 թ. դրությամբ արդեն թուրքական բանակի հրթիռային, հրետանային, զենիթային համակարգերի բոլոր հաշվարկները համալրված էին արհեստավարժ զինծառայողներով: Զրահատանկային զորքերում այդ համալրվածությունը կազմում էր 40-50 %, հատուկ նշանակության զորամասերում՝ 45-60 %: Ընդհանուր առմամբ, արհեստավարժ շարային ու սերժանտական կազմը 1990-ական թթ. վերջին կազմում էր բանակի անձնակազմի մոտավորապես 20-25 %-ը: Բացի այդ, հետագա 5-6 տարիների ընթացքում նախատեսված էր ստեղծել 3 առանձին զրահատանկային կորպուս՝ ամբողջությամբ համալրված արհեստավարժ անձնակազմով: Այդ

²⁰² Տե՛ս՝ Ա. Այվազյան, նշվ. աշխ., էջ 156:

²⁰³ Տե՛ս՝ Ümit Cizre Sakallioğlu, նշվ. աշխ., էջ 191:

²⁰⁴ Տե՛ս՝ Nasuh Uslu, Turkish foreign policy in the post-cold war period..., p. 3.

կորպուսների ստեղծումից հետո արհեստավարժ բանակի անձնակազմը կկազմեր զորքի ընդհանուր քանակի մոտ 10 %-ը²⁰⁵:

1990-ական թթ. Թուրքիայի ԶՈւ-ի սպառազինության արդիականացման շրջանակում հիմնականում ԱՄՆ-ից ու եվրոպական երկրներից ձեռք բերված ռազմական տեխնիկան և ռազմամթերքը կարելի է համարել ժամանակակից և պահանջված, ինչն զգալիորեն բարձրացրեց թուրքական բանակի մարտունակությունը: Վերոնշյալը հատկապես վերաբերում է Միացյալ Նահանգներից ստացված օդային հարձակման միջոցներին ու տարատեսակ թռչող սարքերին, մասամբ նաև՝ Ֆրանսիայից ու Իտալիայից: Իսկ Գերմանիայից ձեռք բերված սպառազինությունը հիմնականում արդեն հնացած էր և էական դեր չէր կարող խաղալ մարտունակության հարցում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ ՆԱՏՕ-ին անդամակցումն ու հատկապես ԱՄՆ-ի ռազմական օժանդակությունը Թուրքիայի պաշտպանական համակարգի կայացման ու ռազմատեխնիկական համալրման հարցում էական նշանակություն ունեցան:

Սառը պատերազմի ավարտով պայմանավորված՝ Թուրքիայի պաշտպանական քաղաքականությունը վերափոխման ենթարկվեց և դրան համարժեք նախաձեռնվեցին բանակի արդիականացման ծրագրեր, որոց նպատակն էր մեծացնել Թուրքիայի ԶՈւ-ի հնարավորությունները և համապատասխանեցնել նոր աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային իրավիճակին: Իր որոշ հարևանների հետ լարված հարաբերություններն ու տարածաշրջանային անկայուն իրավիճակը Թուրքիայի ռազմականացման նոր խթան հանդիսացան:

1990-ականների սկզբից Թուրքիայի ԶՈւ-ի արդիականացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները բավական արդյունավետ եղան, ինչը հնարավորություն տվեց թուրքական բանակն ապահովել ժամանակակից սպառազինությամբ, իրականացնել կառուցվածքա-կազմակերպչական որոշ բարեփոխումներ:

²⁰⁵ Տես՝ Միքայել Մելքոնյան, Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները, Հայ զինվոր, թիվ 7, 20-27 փետրվար, 1999:

ԳԼՈՒԽ 2.

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

2.1. Ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծումն ու կազմակերպչակառուցվածքային բազայի հիմնումը

Հանրապետական Թուրքիայում 20-30-ական թթ. քայլեր ձեռնարկվեցին երկրում ռազմական գործարանների ու ձեռնարկությունների հիմնադրման ուղղությամբ, որոնք թուրքական ԶՈւ-ի համար արտադրելու էին տարբեր դասի սպառազինություն: Այդ ժամանակահատվածում բացված ռազմական գործարանների զգալի մասը մասնավոր ներդրումներով էին գործում և շատ դեպքերում դրանց գործունեությունը երկար չէր տևում: Ռազմական արդյունաբերության զարգացման առումով առաջին քայլը 1920-ական թթ. սկզբին Ռազմական գործարանների գլխավոր տնօրինության և մի շարք պետական ռազմական ձեռնարկությունների հիմնումն էր²⁰⁶, որոնք արտադրում էին Թուրքիայի բանակի համար անհրաժեշտ թեթև սպառազինություն: Մի քանի տարի հետո արդեն ստեղծվեցին տարբեր ոլորտներում գործող ռազմական գործարաններ ու ենթակառույցներ: 1920-30 ական թթ. հիմնադրվեցին թեթև զինամթերքի ու հրանոթների արտադրության ու վերանորոգման, հանդերձանքի ու զինվորական պարագաների արտադրությամբ զբաղվող գործարաններ: Այդ ժամանակաշրջանում սկսեց գործել նաև թուրքական նավաշինական «Գյոլջյուք» (Gölcük) գործարանը, որը նույնիսկ 30-ական թթ. ՌԾՈւ-ին հանձնեց թուրքական արտադրության առաջին ռազմանավերը²⁰⁷:

²⁰⁶ Տես՝ Mustafa Oğuz, Turkey's Defense Policy Making Process and its Effects on Weapons Procurement, A thesis submitted to the Graduate School of Social Sciences of Middle East Technical University, September 2009, p. 53.

²⁰⁷ Տես՝ Թուրքիայի ռազմաարդյունաբերողների միավորման կայք՝ <http://www.sasad.org.tr/sub.asp?tnm=TARIHCE>.

1925 թ. Ստամբուլի մերձակայքում հիմնադրվում է ռազմասար-
դյունաբերական գործարան, որը գործում էր բացառապես թուրքա-
կան կապիտալով: Սկզբնական շրջանում, մասնագիտական ներու-
ժի բացակայության պատճառով, գործարանում աշխատելու համար
մասնագետներ էին բերվել արտերկրներից և մասնավորապես Բուլ-
ղարիայից: Ռազմական այդ գործարանը իրականացնում էր ՌՕՌ-ի
կարիքների համար տարբեր ռումբերի, ականների ու պայթուցիկ-
ների և մի շարք այլ զինամթերքի արտադրություն: Գործարանը
իրականացնում էր նաև արտահանում մի շարք երկրներ՝ Բուլղա-
րիա, Հունաստան, Լեհաստան ու Եգիպտոս: Մասնավորապես՝ 1937
թ. փետրվարին գործարանը 1.5 մլն լիրա արժողության պայմանա-
գիր ստորագրեց՝ Հունաստանի համար ռումբեր արտադրելու վերա-
բերյալ: Հետագայում Թուրքիային ցուցաբերվող ամերիկյան և եվրո-
պական ռազմական օժանդակության հետ միասին նվազեց գործա-
րանի արդյունավետությունը, իսկ հիմնադրի մահից հետո՝ 1970 թ.
այն փակվեց²⁰⁸:

1926 թ. հիմնադրվեց օդային միջոցների արտադրությամբ
զբաղվող «TaMTAŞ» ընկերությունը, որի կողմից Կայսերիում և այլ
քաղաքներում բացված գործարաններում թուրքական օդուժի կա-
րիքներն ապահովելու նպատակով մինչև 1939 թ. հավաքվել են 110
միավոր գերմանական և ամերիկյան տիպի ռազմական ինքնաթիռ-
ներ²⁰⁹: 1930-ական թթ. բացվեցին մի քանի գործարաններ ևս, որոնք
իրականացնում էին թեթև սպառազինության ու հանդերձանքի ար-
տադրություն²¹⁰: Օդային միջոցների ոլորտում Ստամբուլում 1936 թ.
բացվեց ևս մեկ գործարան, որը, սակայն, մի քանի տարի հետո՝ 1943
թ. փակվեց: 40-ական թթ. Անկարայում, Մալաթիայում և այլ քաղաք-

²⁰⁸ Sku` Cumhuriyetin İlk ARGEcileri, <http://doludoluarge.com>; Uçak ve bombası yaptık, hatta sattık ama!.., 18.07.2007, <http://www.istasyongazetesi.com/istasyon/Haberler.aspx?HaberNo=579>.

²⁰⁹ Sku` <http://www.sasad.org.tr/sub.asp?tnm=TARHCE>

²¹⁰ Sku` Göksel Korkmaz, An Analysis of Turkey's Defense Systems Acquisition Policy, MBA Professional Report, Naval Postgraduate School, Monterey, California, March 2009, p. 34.

ներում բացվեցին օդային միջոցների արտադրության ու վերանորոգման մի քանի գործարաններ, որոնք ավելի շատ իրականացնում էին վերանորոգչական աշխատանքներ²¹¹: 1930-ականն թթ. վերջին և 40-ական թթ. սկզբին Թուրքիան, հավանաբար, լուրջ աջակցություն է ստացել այդ ոլորտում Գերմանիայից, հաշվի առնելով այն փաստը, որ գերմանական բանակի համար անհրաժեշտ սպառազինության տեսակների արտադրությունն ու վերանորոգչական աշխատանքների որոշ մասը իրականացվել են Թուրքիայի տարածքում:

Հանրապետության հռչակման սկզբնական տարիներին ռազմական արդյունաբերության ոլորտում պետական ներդրումներով հիմնվեց Ռազմական գործարանների գլխավոր տնօրինությունը, որը որոշ ժամանակ գործել է տարբեր զինատեսակների արտադրության ու օդագնացության ոլորտում: Թուրքիայում առաջին մասնավոր խոշոր ռազմաարդյունաբերական ընկերությունը բացվել է Ստամբուլում, որը թուրքական բանակի կարիքների համար իրականացրել է մի շարք զինատեսակների արտադրություն: Նավաշինության ոլորտում Գերմանիայում ինժեներական կրթություն ստացած Աթա Նուրթուն Թուրքիայում կատարել է հետազայում կառուցված «Գյոլջուք» տանկերի և սուզանավերի նախագծման աշխատանքներ: 1936 թ. թուրք ձեռնարկատեր Նուրի Դեմիրադի նախաձեռնությամբ Ստամբուլում հիմնադրված ինքնաթիռաշինական գործարանի կողմից 1940 թ. արտադրվել է 24 միավոր «NUD-36», իսկ 1944 թ.՝ «NUD-38» տրանսպորտային ինքնաթիռ: Հետագայում արդեն արևմտյան երկրների ու հատկապես ԱՄՆ-ի կողմից շարունակաբար տրամադրվող ռազմական օգնությունն ու միջոցները, ստիպեցին տարբեր գործարանների դադարեցնել իրենց գործունեությունը²¹²: Մինչդեռ Երկրորդ աշխարհամարտից հետո թուրքական արդյունաբերության մեջ զգալի առավելություն տրվեց ռազ-

²¹¹ Տես՝ <http://www.sasad.org.tr/sub.asp?tnm=TARHCE>.

²¹² Տես՝ Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, s. 73, <http://www.sp.gov.tr/documents/planlar/SSMSP0711.pdf>.

մական նշանակության գործարաններին ու ձեռնարկություններին²¹³:

Ռազմական արտադրության ոլորտում բացված գործարանները հայտնվեցին պետության ուշադրության կենտրոնում, և արդեն 50-ական թթ. պետական գերատեսչությունները ներգրավվեցին այդ գործում, որի առաջին քայլը եղավ Մեքենաշինական ու քիմիական արդյունաբերության ընկերության (MKEK) ստեղծումը: Թուրքական գործող ռազմական գործարանները 1950 թ. մարտի 15-ի որոշմամբ հանձնվեցին որպես պետական ընկերություն ստեղծված Մեքենաշինական ու քիմիական արդյունաբերության ընկերության տնօրինության ենթակայությանը²¹⁴: Չնայած պետական որոշակի միջատությանը, այդ ոլորտը դեռևս լիովին կազմակերպման լուրջ կարիք ուներ, և պետության կողմից այդ ոլորտի զարգացմանն ուղղված քայլերը նշանակալից չէին:

Թուրքական բանակի սպառազինության համալրման նոր մոտեցումների ու ռազմաարդյունաբերության զարգացման առումով էական նշանակություն ունեցավ Կիպրոսի հյուսիսային հատվածի գրավումից հետո Թուրքիայի նկատմամբ ամերիկյան զենքի էմբարգոն, ինչն օրակարգ բերեց սպառազինման հարցում այլընտրանքային տարբերակների անհրաժեշտության հարցը: 1970-ականների կեսերին անկախ ազգային ռազմական արդյունաբերություն ունենալու համար նախնական կապիտալի հավաքման ուղղությամբ առաջին քայլերն արվեցին, և անհրաժեշտ ներդրումների համար ստեղծվեցին ֆինանսական ներդրումներն ապահովող առաջին կազմակերպությունները²¹⁵: Ջորքերի տեսակների զարգացման նպատակով ստեղծվեցին ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի զարգացման հիմնադրամներ, որոնց կողմից հիմնվեցին ռազմարդյունաբերական մի քանի ընկերություններ: Դեռ 1960-ական թթ.

²¹³ Տե՛ս՝ Арон Новичев, նշվ. աշխ., էջ 208:

²¹⁴ Տե՛ս՝ Թուրքիայի ՊԱԳՎ-ի պաշտոնական կայք՝ <http://www.ssm.gov.tr/TR/kurumsal/Documents/SP/yazia3.html>:

²¹⁵ Տե՛ս՝ Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 588:

Կիպրոսի ճգնաժամի պատճառով արևմտյան երկրների կողմից զենքերի ու ռազմական տեխնիկայի ձեռքբերման մասնակի արգելանք դրվեց Թուրքիայի նկատմամբ, ինչը դրդեց այդ երկրի բանակի բարձրագույն հրամանատարությանը որոնել այլընտրանքային ուղիներ՝ անհրաժեշտ կարիքներն ապահովելու համար զարգացնել տեղական ռազմական արտադրությունը: 1970 թ. ՌՕՈՒ-ի հրամանատարությունը ստեղծեց ՌՕՈՒ-ի զարգացման հիմնադրամը, որը պետք է ծրագրեր մշակեր ու խթաներ ռազմաօդային միջոցների արտադրությանը: Նմանատիպ հիմնադրամ ստեղծվեց նաև ՅՈՒ-ի հրամանատարության կողմից, որի ջանքերով ստեղծվեցին մի քանի ռազմաարդյունաբերական ընկերություններ՝ «ASELSAN» (1975), «İŞBİR» (1979), «ASPİLSAN» (1981), «HAVELSAN» (1982), որոնք մինչև օրս լուրջ դերակատարություն ունեն թուրքական ռազմաարդյունաբերության զարգացման գործում²¹⁶:

Միայն 1970-80-ական թթ. Թուրքիայում հիմնվեց շուրջ 30 ռազմաարդյունաբերական ընկերություն, ինչին նպաստեց նաև պետական միջամտությունն ու այդ ոլորտում որդեգրած նոր ռազմավարությունը: Ռազմաարդյունաբերության զարգացումը 1970-ական թթ. վերջին և 80-ական թթ. սկզբին հայտնվեց երկրի բարձրագույն ղեկավարության ու հատկապես ՋՈՒ-ի բարձրագույն հրամանատարության ուշադրության կենտրոնում, և սկսեցին իրականացվել կազմակերպչական ու օրենսդրական մի շարք քայլեր այդ ոլորտի զարգացման նպատակով:

1975-1985 թթ. ընթացքում Թուրքիան զենքի արտադրության ոլորտում զարգացող 32 երկրների շարքում արդեն իր արտադրական բազմազանությամբ զբաղեցնում էր 5-րդ տեղը՝ չնայած ռազմական տեխնոլոգիաների ու արտադրության ծավալները դեռևս սահմանափակ էին: Այսինքն՝ նոր արդիականացման ծրագիրն սկսելիս արդեն Թուրքիան որոշակի ռազմաարդյունաբերական բազա ուներ²¹⁷:

²¹⁶ Տես՝ Թուրքիայի ռազմաարդյունաբերողների միավորման կայք՝ <http://www.sasad.org.tr/sub.asp?tnm=TARİHCİE>:

²¹⁷ Տես՝ Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 586:

Հաջորդ կարևոր քայլը եղավ այն, որ Թուրքիայի ԶՈւ-ի ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի զարգացման հիմնադրամները 1987 թ. միավորվեցին «Թուրքական զինված ուժերի զարգացման հիմնադրամի» (այսուհետ՝ ԹԶՈւԶՀ, թուրք. Türk Silahlı Kuvvetleri Güçlendirme Vakfı) ներքո²¹⁸: Նույն թվականին ԹԱՄԺ-ի կողմից ընդունված օրենքով այդ հիմնադրամը ազատվեց բոլոր տեսակի հարկային պարտավորություններից: 1987 թ. այն միավորում էր 16 ընկերություն: 2001 թ. Թուրքիայի 500 ամենախոշոր ձեռնարկությունների ցանկում ընդգրկված 6 ընկերություն պատկանում էին այդ հիմնադրամին: 2002 թ. հիմնադրամի եկամուտը կազմել է 700 մլն դոլար, որի հիմնական մասը ծախսվել է ԶՈւ-ի արդիականացման ու ռազմաարդյունաբերության զարգացման նպատակով²¹⁹: Հիմնադրամը լուրջ դերակատարություն ուներ ռազմական արդյունաբերության զարգացման ու ռազմատեխնիկական ծրագրերի իրագործման ոլորտում: Բացի այդ, հիմնադրամի կողմից Թուրքիայում պարբերաբար սկսեցին կազմակերպվել ռազմական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսներ, որոնց նպատակը թուրքական ռազմաարդյունաբերության ներկայացումն էր միջազգային ռազմատեխնիկական շուկայում: Նման ցուցահանդեսները կազմակերպվում են 1993 թ. սկսած՝ ՊՆ-ի աջակցությամբ: 1993 թ. միջև 2009 թ. Թուրքիայում կազմակերպվել են 9 լայնամասը շտաբ ցուցահանդեսներ: Նման ցուցահանդեսների կազմակերպումը ոչ միայն հնարավորություն էր տալիս ներկայացնել թուրքական ռազմաարդյունաբերական արտադրանքը, այլ նաև լուրջ հարթակ էր հանդիսանում Թուրքիայի ու տարբեր երկրների ու ընկերությունների միջև ռազմատեխնիկական ու արդյունաբերության ոլորտում նոր պայմանագրերի ու նախագծերի ստորագրման համար: Վերջին տարիներ

²¹⁸ Տես՝ Նույն տեղում, էջ 589:

²¹⁹ Տես՝ Արսեն Ավագյան, Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ, թիվ 4, 2006, էջ 67:

րին տարբեր երկրներ մեծ հետաքրքրություն են դրսևորում այդ ցուցահանդեսների նկատմամբ²²⁰:

Թուրքիայի ՋՈւ-ի սպառազինության ապահովման ու ռազմական արդյունաբերության զարգացման պետական ծրագրերի մշակման և իրագործման նպատակով ստեղծվեց հատուկ մարմին: Ռազմավարական խնդիր էր դրված երկրի բանակին անհրաժեշտ սպառազինությունն ու ռազմական տեխնոլոգիաները մշակել ու արտադրել երկրի ներսում, ինչպես նաև իրականացնել բանակի սպառազինության արդիականացման աշխատանքներ, ինչը տնտեսապես ավելի ձեռնտու էր և կախման մեջ չէր դնում երկիրը այլ պետություններից: Մինչ այդ մարմնի ստեղծումն ու օրենսդրության ընդունումը, երկրում արդեն գործում էին ռազմական արտադրության ոլորտի մի շարք ընկերություններ, որոնց գործողություններն ու ծրագրերը չէին համակարգվում պետական ծրագրերով ու հստակ ռազմավարությամբ²²¹:

1985 թ. սկսած արդիականացման 10-ամյա ծրագրով Թուրքիան լուրջ քայլ կայլ կատարեց սպառազինություն արտադրող երկիր դառնալու ճանապարհին²²²: Ոլորտի հետ կապված օրենսդրական ու կառուցվածքային նախաձեռնությունները կոչված էին նյութական բազայի վրա մշակել պետական ռազմական երկարաժամկետ նախագծեր, որոնք իրականացվում էին ՊՆ-ի կողմից: 1985 թ. ընդունված թիվ 3238 օրենքով ստեղծվեց «Պաշտպանական արդյունաբերության զարգացման և աջակցության վարչությունը (Savunma Sanayii Geliştirme ve Destekleme İdaresi Başkanlığı), որը 1989 թ. վերակազմավորվեց Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության (այսուհետ՝ ՊԱԳՎ, թուրք. Savunma Sanayii Müsteşarlığı): Նորաստեղծ այդ մարմինն իրականացնելու էր միաժամանակ թե ռազմական արդյունաբերության զարգացմանն ուղղված նախա-

²²⁰ Sku` A STATEMENT by TAFF, Defence Turkey, Vol. 2 Issue: 7, 2007, pp. 12-18:

²²¹ Sku` DEFENCE 21, Savunma Sanayii Müsteşarlığı, Mart 2008, http://www.ihracat.ssm.gov.tr/.../SAVUNMADERGILERI/DEFENCE21_DERGISI_Mart_2008.doc

²²² Sku` Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 586:

գծերը, և թե արտերկրից սպառազինության մատակարարման խնդիրները²²³:

ՊԱԳՎ-ի հիմնական պարտականություններն ու գործառույթներն էին՝ ՋՈւ-ին անհրաժեշտ զինատեսակներով ու ռազմական միջոցներով ապահովելու լայնամասշտաբ նախագծերի իրականացում՝ ազգային ռազմաարդյունաբերության և օտարերկրյա տեխնոլոգիաների համագործակցության միջոցով, առկա ազգային արդյունաբերությունը վերակազմակերպել և ինտեգրել ռազմական արդյունաբերության կարիքներին համապատասխան, իրականացնել փորձարարական ստրուկտուրային աշխատանքներ և ապահովել անհրաժեշտ ֆինանսավորումը²²⁴:

Թիվ 3238 օրենքով պետության համար առաջնահերթություն էր սահմանված առաջատար տեխնոլոգիաների վրա հիմնված ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծումը՝ թուրքական մասնավոր հատվածի ու օտարերկրյա արտադրողների հետ սերտ համագործակցությամբ²²⁵: Ռազմաարդյունաբերության կառավարման ու կազմակերպչական մեխանիզմը, որ հաստատվել էր դեռևս 1985 թ. գործում է մինչև օրս:

Ռազմաարդյունաբերության ոլորտում անհրաժեշտ ներդրումներ ու ֆինանսական աղբյուրներ ապահովելու նպատակով 1985 թ. ստեղծվեց Ռազմաարդյունաբերության աջակցման հիմնադրամ (այսուհետ՝ ՌԱԱՀ, թուրք. Savunma Sanayii Destekleme Fonu): ՋՈւ-ի զարգացման հիմնադրամի կողմից ապահովվող ֆինանսներից բացի, եկամտահարկից 5 %-ը, վառելիքի հարկից՝ 5.8 %-ը և ծխախոտի ու խմիչքի հարկերից 10 %-ը հատկացվում էին ՌԱԱՀ-ին: Այդ հիմնադրամի մյուս եկամտային աղբյուրները գոյանում էին ազգային վիճակախաղի շահույթից, բանկերի տոկոսային եկամուտներից,

²²³ Տե՛ս՝ Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu, s.14, http://www.ssm.gov.tr/TR/duyurular/kurumsal_duyurular/Pages/2008faaliyetraporu.aspx.

²²⁴ Տե՛ս՝ Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 590:

²²⁵ Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 592:

1989-93 թթ. ընթացքում նաև ՊՆ-ի ու պետական բյուջեի կողմից կատարվող հատկացումներից²²⁶:

1986-2008 թթ. ընթացքում ՌԱԱՀ-ի ընդհանուր եկամուտները կազմել են 21.945 մլրդ, իսկ իրականացրած ծախսերը՝ 18.533 մլրդ դոլար²²⁷: Միայն 2010 թ. հիմնադրամի կողմից ծախսերը հաշվարկվել էին 1.5 մլրդ դոլարի չափով²²⁸: 1987-2000 թթ. ժամանակահատվածում Թուրքիայի ռազմական ծախսերի մոտ 86 %-ն ապահովվել է բյուջեից, իսկ շուրջ 14 %-ը՝ ՌԱԱՀ-ի միջոցներից: Նույն շրջանում ընդհանուր ռազմական ծախսերի 26.7 %-ը վերաբերել է ռազմական միջոցների ձեռքբերմանը: ՌԱԱՀ-ի դերը մեծ է եղել հատկապես ռազմական միջոցների ձեռքբերման ու արտադրության գործում իրականացված ծախսերի կտրվածքով՝ կազմելով մոտ 44 %²²⁹:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի ԶՈւ-ի զարգացման, սպառազինության համալրման ու շարունակական արդիականացման գործում մեծ է եղել հատկապես ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի ռազմատեխնիկական ու ֆինանսատնտեսական աջակցությունը, ինչը հնարավորություն է տվել Թուրքիային իր ԶՈւ-ը շարունակաբար համալրել ժամանակակից սպառազինությամբ: Բացի այդ, ԱՄՆ-ի ու եվրոպական մի շարք երկրների հետ ռազմաարդյունաբերության ոլորտում Թուրքիայի հետ համագործակցությունը, համատեղ մի շարք նախագծերը լուրջ ազդեցություն ունեցան Թուրքիայում ռազմաարդյունաբերական ենթակառուցվածքների զարգացման ու մասնագիտական կազմի պատրաստման վրա: Ռազմաարդյունաբերական տարբեր նախագծերը հնարավորություն տվեցին Թուրքիային որոշակիորեն ծանոթանալ ռազմական տեխնոլոգիաներին, արտադրական գործ-

²²⁶ Sku` Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 590-591:

²²⁷ Sku` İsmet Akça, Türkiye’de Askeri-İktisadi Yapı: Durum, Sorunlar, Çözümler, Haziran 2010, TESEV Yayınları, İstanbul, s.17.

²²⁸ Sku` Sam Perlo-Freeman, Julian Cooper, Olawale Ismail, Elisabeth Skons and Carina Solmirano, Military Expenditure, SIPRI Yearbook 2011, Armaments, Disarmament and International Security, Oxford University Press, 2011, p. 175.

²²⁹ Sku` İsmet Akça, նշվ. աշխ., էջ 17:

ընթացին, ինչն էլ հետագայում հնարավորություն տվեց իրականացնել սեփական ռազմասարդյունաբերական ծրագրերը:

Գրեթե մինչև 1980-ական թթ. Թուրքիայում ինքնաթիռաշինական ոլորտի գործունեությունը սահմանափակված է եղել միայն վերանորոգչական, տեխնիկական սպասարկման բնագավառով: Թուրքիայի տնտեսության զարգացման Երրորդ հնգամյա պլանի ժամանակաշրջանում (1973-1977 թթ.) ինքնաթիռաշինական ոլորտի գործունեությունը որոշակիորեն ընդլայնվեց, ինչը կապված էր ՌՕՈւ-ի զարգացման հիմնադրամի ստեղծման ու «TUSAŞ» ընկերության հիմնադրման հետ: Այդ ընկերությունը սկզբնական շրջանում ներգրավված էր ուսումնական ինքնաթիռների հավաքման բնագավառում: 1979 թ. ընդունված որոշմամբ արդեն այդ ընկերությունն անցավ ռազմական ինքնաթիռաշինական ծրագրերի²³⁰: Նման որոշումը իրականում էական բան չփոխեց հետագա մի քանի տարիների ընթացքում, քանի որ նման հավակնությունները անհամատեղելի էին Թուրքիայի այդ շրջանի իրական հնարավորությունների հետ, ինչը պայմանավորված էր արտադրական զարգացած ենթակառուցվածքների ու առավել ևս՝ համարժեք տեխնոլոգիաների ու մասնագիտական կազմի անբավարարության հանգամանքով: Թուրքիայում ռազմասարդյունաբերության ոլորտի զարգացման առումով էական նշանակություն ունեցավ թուրք-ամերիկյան գործակցությունը: 1980-ական թթ. երկրորդ կեսից ԱՄՆ-ի աջակցությամբ Թուրքիայում սկսեցին իրականացնել ամերիկյան «F-16» ռազմական ինքնաթիռների ամբողջական հավաքման աշխատանքներ: Ամերիկյան «Boeing», «Sikorsky» և այլ խոշոր ընկերությունների հետ միասին թուրքական ընկերությունները ներգրավվեցին ռազմական մի շարք նախագծերում: Թուրքական «TUSAŞ» ընկերությունն ամերիկյան ընկերությունների հետ համագործակցության շրջա-

²³⁰ Թուրքիայի տնտեսական զարգացման Երրորդ հնգամյա պլանի հիմնական սկզբունքը անհասանելի տեխնոլոգիաների ստացման ու յուրացման նպատակով օտարերկրյա ներդրումների խրախուսումն էր: Stü Turkey, The General Directorate of Press and Information, GAYE Matbaacılık Sanayi ve Ticaret AŞ, Ankara, October 1990, p. 156:

նակներում սկսեց արտադրել և հավաքել ռազմական, տրանսպորտային ինքնաթիռներ ու ուղղաթիռներ՝ Մյուրթեդի ռազմավիագիտական գործարանում²³¹:

Ոլորտի ընկերությունների համախմբման ու գործունեության համակարգման նպատակով 1990 թ. ստեղծվեց «Ռազմաարդյունաբերողների միությունը» («SASAD»), որը ռազմաարդյունաբերության ոլորտում գործող թուրքական ընկերություններին համախմբեց իր հովանու ներքո: 1991 թ. «SASAD»-ին անդամակցում էին 21 ընկերություններ, իսկ մեկ տարի անց նրանց թիվը հասավ 33-ի: Հաջորդ տարիներին անդամակցող ընկերությունների թիվը որոշակիորեն նվազեց, ինչն, ամենայն հավանականությամբ, կապված էր այդ ընկերությունների սպասելիքների ու ակնկալիքների չարդարացման փաստի հետ: Սակայն 1997 թ. անդամ ընկերությունների թիվը կազմեց 39²³², իսկ 2002թ. արդեն «SASAD»-ին անդամակցող ընկերությունների թիվը հասավ 61-ի, 2010 թ.՝ 83-ի²³³:

Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ռազմավարությունն ու կարևոր սկզբունքներն իրենց արտացոլումը գտան 1998 թ. մայիսի 25-ին թուրքական կառավարության կողմից հաստատված «Թուրքական ռազմական արդյունաբերության քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները» փաստաթղթում (Türk Savunma Sanayii Politikası ve Stratejisi Esasları)²³⁴: Փաստաթուղթը վերաբերում էր ռազմական արդյունաբերության զարգացման ռազմավարությանն ու սպառազինության ապահովման հիմնական սկզբունքներին, ուստի կարևոր է անդրադառնալ դրանցից մի քանիսին: Ռազմական արդյունաբերության զարգացման ռազմավարությունն իրականացվում էր երկրի պաշտպանական հայեցա-

²³¹ Տե՛ս՝ <http://www.globalsecurity.org/military/world/europe/tu-ssm>.

²³² Տե՛ս՝ Gülay Günlük Şenesen, նշվ. աշխ., էջ 591:

²³³ Տե՛ս՝ İsmet Akça, նշվ. աշխ., էջ 25.

²³⁴ Savunma Sanayii Politikası ve Stratejisi, Vizyon 2023 Projesi, Savunma, Havacılık ve Uzay Paneli, Panel Raporu, Ek-12, TÜBİTAK, 2003, <http://www.vizyon2023.tubitak.gov.tr/teknolojiongorusu/paneller/savunmauzayvehavacilik/raporlar/son/EK-12.pdf>.

կարգի ու ռազմական պլանավորման ու ծրագրավորման գերատեսչական դիրեկտիվների հիման վրա²³⁵:

Ռազմաարդյունաբերական քաղաքականությունը նախատեսում էր տեղականի հետ միասին նաև օտար հատվածի համար բաց, դինամիկ կառույցով, արտահանման հնարավորություններով օժտված և միջազգային շուկայում մրցունակ, նորագույն տեխնոլոգիաներին հարմարեցված և տեխնոլոգիաներ արտադրելու հնարավորություններով օժտված, տեխնոլոգիական զարգացումներին համապատասխան սեփական կարողություններն ապահովող, Թուրքիային բարեկամ կամ դաշնակից երկրների հետ համատեղ ռազմաարդյունաբերական կայուն համագործակցությունը հնարավոր դարձնող և տարբեր քաղաքական իրավիճակներից նվազագույն չափով ազդեցություն կրող ռազմական արդյունաբերության կառույց²³⁶:

Ռազմաարդյունաբերության ռազմավարական հիմնադրույթներ էին հռչակված. որպես երկրի անվտանգության բաղադրիչ՝ թուրքական ՋՈւ-ի կարիքների կայուն ապահովում, այդ նպատակով բարձր տեխնոլոգիաներին պատկանող ռազմական միջոցների և զինատեսակների տեղական մշակումներ ու արտադրություն, արտադրական տեխնոլոգիական ու նյութական լայն բազայի ստեղծում և ազգային ռազմաարդյունաբերության ենթակառուցների ընդլայնում, տեղական հիմքի վրա սեփական տեխնոլոգիաների երկարաժամկետ զարգացում, մասնակցություն միջազգային ռազմաարդյունաբերական նախագծերին, տեղական և օտարերկրյա մրցակցության համար բաց ռազմական արդյունաբերության ենթակառուցների զարգացում:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է փաստել, որ հատկապես 1970-ական թթ. վերջերից Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության համար տեղական ռազմաարդյունաբերության զարգացման խնդիրը դարձավ առաջնային, իսկ 1980-ական թթ. կե-

²³⁵ Տե՛ս՝ Նույն տեղում:

²³⁶ Տե՛ս՝ Նույն տեղում:

սերից պետական հատուկ հոգաձության ու միջամտության շնորհիվ հնարավոր դարձավ Թուրքիայում դնել ռազմական արդյունաբերության զարգացման հիմքերը: Չնայած, որ այդ ոլորտում գործում էին նաև մասնավոր ընկերություններ, այդուհանդերձ, պետական ռազմավարությունն ու ուղղորդումը հնարավոր դարձրեց լուրջ հիմքերի վրա արտադրական գործընթաց ծավալել: Թուրքիայի ռազմարդյունաբերական համալիրի ենթակառուցվածքների ստեղծման ու տեխնոլոգիական աջակցության առումով մեծ է եղել ՆԱՏՕ-ի անդամ երկրների ու հատկապես ԱՄՆ-ի աջակցությունը:

2.2. Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման միտումները

Թուրքիայի ԶՈւ-ի արդիականացման ռազմավարության հիմքում էական դերակատարություն տրվեց երկրի ռազմաարդյունաբերական համալիրին: Հատկապես 1990-ականների կեսերից ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը դրվեց նոր հիմքերի վրա, երկրի ՊՆ-ի կողմից մշակվեց այդ ուղղությամբ իրականացվելիք քայլերի վերաբերյալ առանձին փաստաթուղթ²³⁷:

Կարող ենք նշել, որ մինչև 1990-ական թթ. սկիզբը Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրը հիմնականում ապահովում էր բանակի ռազմատեխնիկական այն կարիքները, որոնք տեխնոլոգիական ու արտադրական բարդություններ չէին ներկայացնում (հանդերձանք, սովորական հրաձգային զինատեսակներ, վառող, պայթուցիկ սարքեր, զինամթերք, կապի միջոցներ) և հիմնականում վերանորոգչական գործառույթներ էր իրականացնում: Բանակին անհրաժեշտ հիմնական տեխնոլոգիական բարդ զինատեսակներն ու սպառազինությունը ներկրվում էին ՆԱՏՕ-ի անդամ երկրների ռազմաարդյունաբերական ընկերություններից²³⁸:

²³⁷ Տե՛ս՝ А. Косиков, նշվ. աշխ., էջ 212-217:

²³⁸ Տե՛ս՝ Турецкая Республика, справочник, Москва, «Наука», 1990, с. 177.

Եթե մինչև 1990-ական թթ. Թուրքիան հիմնականում բանակի կարիքների համար գնում էր պատրաստի սպառազինություն արտերկրից, ապա 1990-ականներից սկսեց իրականացնել մի շարք համատեղ ռազմաարդյունաբերական նախագծեր այլ երկրների հետ, իսկ վերջին տարիներին իրականացնում է ռազմաարդյունաբերական ինքնուրույն մշակումներ ու արտադրություն:

Եթե 1996 թ. դրությամբ թուրքական ռազմաարդյունաբերական համալիրի կողմից իրականացվում էին շուրջ 4 տասնյակ ռազմաարդյունաբերական նախագծեր, ապա 2006 թ. դրանց թիվը կազմում էր 110` 15 մլրդ դոլար ընդհանուր արժեքով²³⁹: 2010 թ. դրությամբ իրականացվող նախագծերի թիվը կազմեց 269, իսկ նախագծերի ստորագրված պայմանագրերի ընդհանուր արժեքը` ավելի քան 24 մլրդ դոլար²⁴⁰:

2005 թ. նոյեմբերի թուրքական մամուլի տեղեկատվության համաձայն` Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն որոշում էր ընդունել ուժեղացնել երկրի թիկունքային ենթակառուցվածքները, ինչի համար մտադիր էր հետագա 10 տարիների ընթացքում 50 մլրդ դոլարի ներդրում ապահովել այդ ոլորտում: Հիմնականում պաշտպանական հիմնադրամի հաշվին կատարվելիք այդ ներդրումների շարքում էին 50 միավոր մարտավարական-հարվածային «ATAK» կոչված ուղղաթիռների և «AWACS» ինքնաթիռների ձեռքբերումը²⁴¹: Ըստ թուրքական ԶԼՄ-ների` 2005 թ. դրությամբ Թուրքիայի կապալառուական ծրագրերում տեղ էին գտել հետևյալ նախագծերը. նոր սերնդի ռազմական ինքնաթիռների, 50 միավոր մարտավարական-հարվածային, 50 միավոր ընդհանուր օգտագործման ուղղաթիռների ձեռքբերում, «Leopard-1» տիպի տանկերի արդիականացում, «Sar-35» ռազմական նավերի արդիականացում, ստորջրյա և վերջրյա հսկողության համակարգերի ներդրում,

²³⁹ Sıkı` Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, ss. 14, 22.

²⁴⁰ Sıkı` Savunma Sanayii Müsteşarlığı 2012-2016 Stratejik Plan, Ankara 2012,

http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Documents/SP/Sp2012_2016/index.html, ss. 16-17.

²⁴¹ Akşam, 21.11.2005.

ինչպես նաև անօդաչու ինքնաթիռների, նոր տեսակի ուստիկանական-պարեկային, ստորջրյա պաշտպանական, մարտական, հետախուզական, ուստիկանական և առափնյա տարածքների անվտանգության ապահովման և որոնողափրկարարական նավերի ձեռքբերման նախագծերը²⁴²: Վերոնշյալ սպառազինման ծրագրերի մասին հանգամանորեն կներկայացվի հաջորդ գլխում:

2007 թ. գործողության մեջ մտավ ՋՈւ ԳՇ-ի հավանությանն արժանացած «ՊԱԳՎ-ի 2007-2011 թթ. ռազմավարական պլանը», որը հստակեցնում էր ռազմաարդյունաբերության զարգացման ու բանակի արդիականացման համար իրականացվելիք ողջ ռազմավարական ծրագրերը և առաջնահերթությունները: Ըստ այդ ռազմավարական ծրագրի՝ երկրի ռազմատեխնիկական կարիքների ապահովման առումով առաջնահերթությունը տրվում էր տեղական հիմքի վրա մշակումներին ու արտադրական գործընթացին: Ըստ այդմ՝ ՋՈւ-ի արդիականացմանն ու ռազմական արդյունաբերության զարգացմանն ուղղված քաղաքականությունը կիրառում էր 3 մոդել.

տեղական արտադրություն, որտեղ առաջնահերթությունը տրվում էր թուրքական ընկերությունների կողմից նախագծերի մշակմանը և արտադրական բազայի ընդլայնմանը,

համատեղ կամ կոնտրցիումային արտադրություն, որտեղ, արդյունավետությունից ելնելով, կիրառվում էր այլ երկրների կամ ընկերությունների հետ համատեղ մշակումների գործողություններ,

ուղղակի գնումներ կամ համատեղ արտադրություն, ինչը ենթադրում էր պատրաստի արտադրանքի ձեռքբերում կամ համատեղ արտադրություն, որտեղ մասնակցում են թուրքական ընկերություններն ու ֆինանսական կապիտալի ներդրումները²⁴³:

Մեծ կարևորություն էր տրվում թուրքական ռազմական արտադրանքի արտահանմանը և այդ ուղղությամբ իրականացվող քայլերին: Թուրքիայի ռազմական արդյունաբերությունը գրանցեց շարունակական հաջողություններ նաև ռազմական արտադրանքի

²⁴² Տե՛ս՝ Նույն տեղում:

²⁴³ Տե՛ս՝ Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, s. 35.

արտահանման ծավալների առումով: ՊԱԳՎ-ի պետ Ս. Բայարը հայտարարեց, որ մինչև 2011 թ. թուրքական ռազմաարդյունաբերական արտադրանքի տարեկան արտահանման ընդհանուր ծավալը հասցվելու է 1 մլրդ դոլարի: Նշենք, որ 2000 թ., արտահանման ծավալը կազմելով 123 մլն դոլար, հետագա 10 տարիների ընթացքում գրեթե հնգապատկվեց: 2007 թ. դրությամբ այն կազմել է շուրջ 420, իսկ 2008 թ.՝ ավելի քան 570 մլն դոլար²⁴⁴: 2009 թ. արտահանման ծավալը կազմեց 670 մլն, իսկ 2010 թ.՝ 634 մլն դոլար²⁴⁵: 2012 թ. վերջի դրությամբ թուրքական ռազմական արդյունաբերության ու քաղաքացիական ավիացիոն արդյունաբերության արտադրանքի արտահանման ցուցանիշը կազմել է ավելի քան 1 մլրդ 300 մլն դոլար, ինչը մոտ 52 %-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը²⁴⁶: 2013 թ. այն կազմեց 1 մլրդ 390 մլն դոլար²⁴⁷:

2006-2007 թթ. ընթացքում արտահանման ծավալներով աչքի են ընկել հատկապես «Otokar», «TUSAŞ», «TEI», «HAVELSAN», «ROKETSAN» և մի քանի այլ ընկերություններ, որոնք հանդիսանում են ռազմաարդյունաբերության առաջատարները: Ռազմական արտադրանքի արտահանման տեսակարար կշռում գերիշխում էին հատկապես ռազմական մեքենաշինության և էլեկտրոնային, կապի համակարգերի ոլորտները²⁴⁸: Համեմատության համար նշենք, որ 2006 թ. Իսրայելի ռազմական արտադրանքի արտահանման ծավալները կազմել են 4.5 մլրդ դոլար, որով Իսրայելը դարձավ աշխարհի 5-րդ ռազմական արտադրանք արտահանող երկիրը՝

²⁴⁴ Տես՝ <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20081121.aspx>; Savunma Sanayii Müsteşarlığı Startejik Plan 2007-2011, s. 16.

²⁴⁵ Տես՝ Savunma Sanayii Müsteşarlığı 2010 Faaliyet Raporu, s. 72, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2010/files/ssm_2011.pdf.

²⁴⁶ Տես՝ <http://www.turksavunmasanayi.gov.tr/tr/basin/savunma-ihracati-ataga-gecti-12-11-2012-tarihli-taraf-gazetesi-haberi>

²⁴⁷ Տես՝ Turkish defense exports hit \$1.39 bln in 2013, <http://www.todayzaman.com/news-336418-turkish-defense-exports-hit-139-bln-in-2013.html>.

²⁴⁸ Տես՝ Türk Savunma Sanayisi Sektör Raporu 2008, s. 36, http://www.sasad.org.tr/dosya/eoe/SR-08-16-05-09_v5.pdf.

ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Մեծ Բրիտանիայից և Ֆրանսիայից հետո: Իսրայելական ընդհանուր ռազմական արտադրանքի շուրջ 75 %-ը արտահանվում է, և միայն 25 %-ն է բաժին հասնում այդ երկրի ԶՈւ-ին²⁴⁹: Իսրայելի պաշտպանական գերատեսչության նախնական տվյալների ու գնահատումների համաձայն՝ 2012 թ. Իսրայելի կողմից ռազմական նշանակության սարքավորումների ու սպառազինության արտահանման ընդհանուր արժեքը կազմել է մոտ 7 մլրդ դոլար, ինչը 20 %-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը²⁵⁰:

Ըստ Թուրքիայի ՊՆ-ի տվյալների՝ 2006 թ. դրությամբ այդ երկիրը սպառազինության ներմուծման ցուցանիշով աշխարհում զբաղեցրել է 11-րդ, իսկ արտահանման ցուցանիշով 21-րդ տեղը²⁵¹: Հեղինակավոր Ստոկհոլմի միջազգային խաղաղության ուսումնասիրության ինստիտուտի (SIPRI) տվյալներով՝ 2001-2005 թթ. Թուրքիան սպառազինության ներմուծման ցուցանիշով զբաղեցրել է 8-րդ, իսկ արտահանման ցուցանիշով՝ 28-րդ տեղը²⁵²: Հետագա տարիներին այս ցուցանիշները փոխվեցին ինչպես Թուրքիայի կողմից ուղղակի օտարերկրյա սպառազինության ներմուծման ծավալների նվազման, այնպես էլ թուրքական ռազմատեխնիկական արտադրանքի արտահանման աճի առումով: Այսպես՝ 2006-2010 թթ. ներմուծման ցուցանիշով այն զբաղեցրել է 14-րդ, իսկ արտահանման ցուցանիշով՝ 23-րդ տեղը²⁵³:

Ըստ 2007-2011 թթ. ռազմաարդյունաբերության զարգացման ռազմավարական պլանի՝ մինչև 2010 թ. երկրի ԶՈւ-ին անհրաժեշտ ռազմական տեխնիկայի ու սպառազինության շուրջ 50 %-ը պետք է ապահովվեր թուրքական տեղական ռազմաարդյունաբերության

²⁴⁹ Տե՛ս՝ Israel's Defense Exports Reached \$4.4B in 2006,

<http://www.defenseindustrydaily.com>, 11.01.2007.

²⁵⁰ Տե՛ս՝ Israel Arms Exports Increase in 2012,

<http://www.janes.com/products/janes/defence-security-report.aspx?id=1065975188>, 16 January 2013.

²⁵¹ Տե՛ս՝ Savunma sanayiinde ihracat atağı, Star, 02.02.2009.

²⁵² Տե՛ս՝ SIPRI Yearbook 2006, Stockholm International Peace Research Institute, Oxford University Press, 2006.

²⁵³ Տե՛ս՝ Savunma Sanayii Müsteşarlığı 2012-2016 Stratejik Plan, s. 28.

միջոցով²⁵⁴: Ըստ այդմ՝ եթե 2003 թ. տեղական ռազմաարդյունաբերության միջոցով թուրքական ՋՈւ-ի սպառազինության կարիքների ապահովման ցուցանիշը կազմում էր 25 %, ապա 2008 թ. այն հասավ շուրջ 44.2 %-ի, 2009 թ.՝ 45.7 %-ի, իսկ 2010 թ. այն գերացանցեց պետական կանխատեսումները՝ հասնելով 52.1 %-ի²⁵⁵, իսկ 2011թ.՝ 54 %-ի²⁵⁶:

ԱԶԿ-ի կառավարման ավելի քան 8 տարիների ընթացքում ՋՈւ-ի ռազմատեխնիկական կարիքների համար 24 մլրդ դոլար ընդհանուր արժողության արդիականացման ծրագրերի 90 %-ը իրականացվել է տեղական ռազմաարդյունաբերական համալիրի մասնակցությամբ: Այսինքն, արտերկրից պատրաստի սպառազինության ներկրումը հասցվել է 10 %-ի²⁵⁷:

Փաստորեն, թուրքական բանակի ռազմատեխնիկական կարիքների մոտ կեսը 2010 թ. դրությամբ ապահովվում էր տեղական ռազմական արդյունաբերության կողմից, ինչն արդեն թուրքական ռազմաարդյունաբերության զարգացման մակարդակի ու ծավալների մասին խոսուն փաստ է:

Ի դեպ, 2009 թ. որպես առաջին թուրքական ռազմաարդյունաբերական ընկերություն, «ASELSAN»-ը աշխարհի առաջատար 100 ռազմաարդյունաբերական ընկերությունների ցանկում զբաղեցրեց 86-րդ հորիզոնականը²⁵⁸: Նույն թվականին ընկերության ընդհանուր

²⁵⁴ Տե՛ս՝ Savunma Sanayii Müsteşarlığı Startejik Plan 2007-2011, s. 16.

²⁵⁵ Տե՛ս՝ Savunma Sanayii Müsteşarlığı 2010 Faaliyet Raporu, s. 71, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2010/files/ssm_2011.pdf; Türk Savunma Sanayii 2010 Yılı Performansı, Savunma Sanayii Gündemi, Sayı 15, 2/2011, s. 65, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/SSM%20Dergisi/SSM_15.pdf.

²⁵⁶ Տե՛ս՝ Savunma Sanayii Müsteşarlığı 2011 Faaliyet Raporu. S. 95

[<http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2011%20Yılı%20Faaliyet%20Raporu.pdf>].

²⁵⁷ Տե՛ս՝ Alınımızın AKıyla 8,5 yıl, AK Parti, Tanıtım ve Medya Başkanlığı, Nisan 2011, <http://www.akparti.org.tr/icraat.pdf>, s. 100.

²⁵⁸ Տե՛ս՝ Aselsan climbs six places in largest defense companies ranking, 14.08.2011, <http://www.todayzaman.com/news-253734-aselsan-climbs-six-places-in-largest-defense-companies-ranking.html>

եկամուտը կազմեց 643 մլն դոլար²⁵⁹: Այս փաստը վկայում է, որ թուրքական ռազմաարդյունաբերությունը և հատկապես առանձին ընկերություններ գրանցել են լուրջ հաջողություններ:

Հատկապես ԱԶԿ-ի կառավարման տարիներին ռազմավարական խնդիր էր դրված մեծացնել թուրքական ռազմաարդյունաբերության մասնակցության չափաբաժինը նաև միջազգային բազմակողմ և հատկապես՝ ՆԱՏՕ-ի ռազմական տարբեր նախագծերում: Նախատեսված էր մինչև 2011 թ. ՆԱՏՕ-ի ռազմաարդյունաբերական նախագծերում թուրքական մասնակցության չափը հասցնել 20 %-ի: 2008 թ. դրությամբ այդ ցուցանիշը կազմում էր 4 %²⁶⁰: ՆԱՏՕ-ի ռազմական նախագծերի հայտամրցույթներին 2007 թ. թուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունների կողմից ներկայացվել է 212 առաջարկ, մրցույթներում հաղթել են 36 ընկերություններ²⁶¹: Դաշինքի կողմից հայտարարված մրցույթների շրջանակներում ընկերությունների ստանձնած աշխատանքների ծավալը նույն թվականին կազմել է 19 մլն դոլար, ինչը բավականին ցածր ցուցանիշ էր: Թուրքական մասնակցության նման փոքր բաժինը պայմանավորված էր նրանով, որ ռազմական նախագծերում մեծամասամբ ներգրավվում են ամերիկյան ու եվրոպական առաջատար ընկերությունները, որոնք տեխնոլոգիական ու արտադրական առումով շատ ավելի զարգացած են:

2009 թ. ՊԱԳՎ-ի կողմից հաստատվեց ռազմաարդյունաբերության զարգացմանն ուղղված ռազմավարական հերթական փաստաթուղթը, որով որոշ կարգավորումներ մտցվեցին այդ ոլորտում առաջնահերթությունների ու աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: «2009-2016 թթ. ռազմաարդյունաբերության ոլորտների ռազմավարական փաստաթղթի» համաձայն՝ ռազ-

²⁵⁹ Տե՛ս՝ Aselsan Поднялась в Рейтинге "100 Крупнейших Оборонно-Промышленных Компаний Мира", 10.07.2010, <http://www.trt.net.tr/trtworlworld/ru/newsDetail.aspx?HaberKodu=48b60098-5ccc-483b-8883-5e57aa76a847>.

²⁶⁰ Տե՛ս՝ Rakamlarla türk savunma sanayi, Star, 24.02.2008.

²⁶¹ Տե՛ս՝ Savunma Sanayii Musteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu, s. 82.

մական մի շարք գործարաններ փակվելու էին, մի մասն էլ տրվելու էր մասնավոր հատվածին: Դրանք հիմնականում այն գործարաններն են, որոնք առանցքային նշանակություն չունեն ռազմական տեխնոլոգիաների ու ռազմական արտադրության ոլորտում: Հիմնական շեշտադրումը կատարվում էր ԶՈւ-ի համար անհրաժեշտ նորագույն ռազմական տեխնոլոգիաների զարգացմանը երկրի ներսում՝ չխրախուսելով արտասահմանյան ռազմական արտադրանքի կրկնօրինակումը: Այդ փաստաթղթով սահմանված էին նաև ռազմաարդյունաբերության առաջիկա 7 տարիների առաջնահերթությունները: Համաձայն դրա՝ մինչև 2012 թ. իրականացվելու էին տարբեր դասի հրացանների, ծրագրավորվող ռումբերի ու զենքերի համակարգերի, մինչև 2013 թ.՝ միջին և մեծ հեռահարության հակատանկային համակարգերի մշակումներն ու արտադրությունը: Մինչև 2016 թ. արտադրվելու են ուղղաթիռներ և ուսումնական ինքնաթիռներ, ինչպես նաև փոքր հեռահարության հակաօդային հրթիռներ: Լուրջ ուշադրություն էր դարձված անօդաչու սարքերի ուղղությամբ տարվող աշխատանքներին, արբանյակների սպասարկմանն ու այդ ուղղությամբ ուսումնասիրություններին, ինչի նպատակով ստեղծվելու էր Արբանյակների մոնտաժի և փորձարկման կենտրոն (Uydu Montaj Entegrasyon ve Test Merkezi)²⁶²:

2012 թ. հրապարակվեց ՊԱԳՎ-ի «2012-2016 ռազմավարական պլանը», ըստ որի՝ ռազմական արդյունաբերության զարգացման համար դրվեցին ապահովելիք նոր ցուցանիշներ: Մասնավորապես՝ 2016 թ. նախատեսվում է ռազմաարդյունաբերության ոլորտի ընդհանուր շրջանառությունը հասցնել 8 մլրդ դոլարի, իսկ ռազմական նշանակության արտադրանքի արտահանման ընդհանուր ծավալը՝ 2 մլրդի: Ռազմավարական առաջնահերթություն է դիտվում շարունակական զարգացում ապրող, մրցակցային ռազմական արդյունաբերության ստեղծումը և առաջատար երկրների ցանկում ընդգրկը-

²⁶² Stü` Askeri fabrikalar özel sektöre açılıyor, Akşam, 10.06.2009.

վելը²⁶³ : 2012-2016 թթ. ռազմավարական պլանով հստակեցվեց պաշտպանական ոլորտի խոշոր ու առանցքային նախագծերի իրականացման ու ավարտման ժամանակացույցը: Համաձայն պլանի՝ մինչև 2015 թ. պետք է ավարտվի թուրքական «Altay» տանկի առաջին օրինակի արտադրությունը, մինչև 2012 թ. վերջ մեծ հեռահարության հակատանկային հրթիռներն («UMTAS»), իսկ մինչև 2013 թ. ավարտը՝ միջին հեռահարության հրթիռների («OMTAS») արտադրությունը: Մինչև 2013 թ. ավարտը լազերային կառավարմամբ «CIRIT» հրթիռի զանգվածային արտադրության հետ մեկտեղ ավարտվելու է դրանց տեղադրումն արտադրվող «Atak» ուղղաթիռների վրա: «T-129 Atak» հետախուզական-հարվածային ուղղաթիռը 2013 թ. ավարտին նախատեսվում է հանձնել ՋՈւ-ին: Մինչև 2014 թ. ավարտը մարտական կիրառության են հանձնվելու նաև մարտավարական ԱԹՍ-ն և «ANKA» ԱԹՍ-ն: Փոքր և միջին հեռահարության ՀՕՊ համալիրների նախագծումը ավարտվելու է 2016 թ.: 2014 թ. նախատեսվում է ավարտել ռազմաուսումնական ինքնաթիռի նախագծման աշխատանքները, իսկ մինչև 2015 թ. կիրառության հանձնել «Hurkus» ուսումնական ինքնաթիռը: «MILGEM» թուրքական արտադրության ռազմանավերը ՌԾՈւ կմտցվեն մինչև 2016թ. վերջը, իսկ սեփական նախագծման սուզանավի արտադրության հեռանկարների վերաբերյալ հետազոտությունն ավարտվելու է մինչև 2015 թ.²⁶⁴: Այդ պլանի ռազմավարական նպատակներից է նաև միջազգային համագործակցության ձևաչափով բազմակողմ արդյունաբերական ու պաշտպանական նախագծերում թուրքական ընկերությունների ներգրավվածության ապահովումն ու մասնակցությունը: Թուրքիայի համար այս առումով կարևորվում է Եվրոպական պաշտպանական գործակալության («EDA») և Համատեղ սպառազինման հարցում համագործակցության կազմակերպության («OCCAR») շրջանակներում պաշտպանական նախագծերում

²⁶³ Տես՝ Savunma Sanayii Müsteşarlığı 2012-2016 Stratejik Plan, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Documents/SP/Sp2012_2016/index.html.

²⁶⁴ Տես՝ Նույն տեղում:

ներառվելը, ինչը հնարավորություն կտա թուրքական ընկերություններին մասնակցել կարևոր ռազմաարդյունաբերական միջազգային ծրագրերին: Չնայած ԵՄ անդամ չհանդիսանալու պատճառով «EDA»-ին Թուրքիայի անդամակցումն իրավական առումով անիրատեսական է, այդուհանդերձ, թուրքական կողմը քայլեր է ձեռնարկում OCCAR-ի հետ համագործակցության ձևաչափի հաստատման ուղղությամբ: Թուրքիայի համար առաջնային կարևորություն ունի հատկապես ՆԱՏՕ-ի ռազմատնտեսական ծրագրերում իր մասնակցության չափաբաժնի շարունակական ավելացումը²⁶⁵:

Թուրքիայի ռազմաարդյունաբերության զարգացման մակարդակը գնահատելու տեսանկյունից առանձնակի կարևորություն են ներկայացնում հատկապես ռազմական ոլորտում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներն ու այդ ուղղությամբ իրականացված ներդրումները: 2000 թ. ռազմական արդյունաբերության ոլորտում տեղական գիտահետազոտական-փորձարարական ստրուկտորային ներդրումների մակարդակը բարձրացնելու նպատակով ՊԱԳՎ-ն որդեգրեց նոր քաղաքականություն, որի նպատակներն էին՝ այդ ոլորտում գործունեության ընդլայնումն ու ուղղորդումը, ազգային տեխնոլոգիաների զարգացմանն ուղղված հիմնական գիտահետազոտական նախագծերի ու նախատիպերի մշակման խրախուսումն ու աջակցությունը, ժամանակակից ռազմաարդյունաբերության ու հաստատությունների կազմակերպումն ու աջակցությունը: Գլխավոր նպատակը ռազմական արդյունաբերության ոլորտում հետազոտական բազայի ընդլայնումն ու խրախուսումն էր²⁶⁶:

Ռազմական արդյունաբերության զարգացման գործում մեծ կարևորություն էր տրվում գիտահետազոտական-փորձարարական ստրուկտորային (թուրք. Araştırma-Geliştirme, անգլ. Research &

²⁶⁵ Տե՛ս՝ Նույն տեղում:

²⁶⁶ Տե՛ս՝ Göksel Korkmaz, նշվ. աշխ., էջ 46:

Development) աշխատանքներին²⁶⁷, ինչի նպատակը ռազմական բարձր տեխնոլոգիաների զարգացումն ու մշակումների իրականացումն էր, ռազմական արդյունաբերության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ու համակարգերի նախագծումը: Այդ նպատակով ռազմաարդյունաբերական ընկերություններն ու գիտակրթական հաստատությունները, համալսարանները հաստատել են համագործակցություն, որոնց շրջանակներում իրականացվում են գիտահետազոտական աշխատանքներ: Այդ ոլորտում առաջատարներից են համարվում Ստամբուլի տեխնիկական համալսարանը (İTÜ), Մերձավորարևելյան տեխնիկական համալսարանը (ODTÜ), Բողազքի, Բիլբենթի և Աթաթյուրքի անվան համալսարանները²⁶⁸:

Թուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունների ընդհանուր ծախսերը գիտահետազոտական-փորձարարակոնստրուկտորային մշակումների ոլորտում 2008 թ. կազմեցին շուրջ 510 մլն դոլար, ինչն աննախադեպ մեծ ցուցանիշ էր նախորդ տարիների համեմատությամբ: 2004 թ. այդ գումարը կազմել է 64 մլն դոլար²⁶⁹: 2010 թ. նախորդ տարիների համեմատությամբ թուրքական ռազմաարդյունաբերության գիտահետազոտական-փորձարարակոնստրուկտորային մշակումների ոլորտում ծախսերը կազմել են 666 մլն դոլար, ինչը մոտ 32 %-ով բարձր էր 2009 թ. ցուցանիշից²⁷⁰: Ըստ պաշտոնական տվյալների՝ ռազմական արդյունաբերության ոլորտում գիտահետազոտական-փորձարարակոնստրուկտորային ներ-

²⁶⁷ Տես՝ Դա միջոցառումների համալիր է, որը ներառում է գիտահետազոտական աշխատանքներ, փորձնական արտադրություն և նախատիպերի մշակում՝ մինչ խըմբաբանակային արտադրություն սկսելը:

²⁶⁸ Տես՝ Türk Savunma, Havacılık ve Uzay Sektörü Değerlendirmesi, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/ Ek-4, TÜBİTAK, Ankara, 2003, <http://www.vizyon2023.tubitak.gov.tr>.

²⁶⁹ Տես՝ Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu, s. 78.

²⁷⁰ Տես՝ Ümit Enginsoy, Turkish defense industry grows by 19 percent in 2010, <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=turkish-defense-industry-grows-by-19-percent-in-2010-2011-05-03>.

դրումների ընդհանուր արժեքը 2011 թ. կազմել է 672 մլն²⁷¹, իսկ 2012 թ.՝ ավելի քան 770 մլն դոլար²⁷²:

Թուրքիայում վերջին տարիներին քայլեր են ձեռնարկում ընդհանրապես գիտահետազոտական-նորարարական մշակումների զարգացման բարենպաստ պայմաններ ստեղծելու, այդ ոլորտում խոշոր ներդրումներ ապահովելու համար: Խնդիր էր դրված թուրքական ԶՈՒ-ին անհրաժեշտ զինատեսակների ու պաշտպանական համակարգերի ապահովման ոլորտում առաջնահերթությունը տալ ազգային ռազմաարդյունաբերական համալիրին և այդ ուղղությամբ մեծացնել գիտահետազոտական-կոնստրուկտորային մշակումները: Գիտահետազոտական մշակումների վրա հիմնված արտադրության առաջնահերթություններն ու քաղաքականությունը սահմանելու համար ՊՆ-ի կողմից հաստատված է Ռազմական հետազոտությունների ու տեխնոլոգիաների պլանը (Savunma Araştırma ve Teknoloji Planı- SAGTEP): Վերոնշյալ փաստաթղթով սահմանված նախագծերի իրականացումն ու աշխատանքների համակարգումն իրականացնում է ՊՆ գիտահետազոտական-կոնստրուկտորային աշխատանքների և տեխնոլոգիայի կառավարման դեպարտամենտը (Ar-Ge ve Teknoloji Dairesi Başkanlığı)²⁷³: Բացի այդ, ռազմական ոլորտում գիտական ու տեխնոլոգիական մշակումներ է իրականացնում TÜBİTAK-ը, որի ռազմական ու տիեզերական ոլորտի գիտահետազոտական աշխատանքների կառավարման հիմնադրույթները 2005 թ. հաստատվել են ՊՆ-ի կողմից: Դրա կազմում գործում են տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներ, որոնցից մի քանիսը մասնագիտացած են ռազմական տեխնոլոգիաների ոլորտում: 2008 թ. ռազմական բնագավառում գիտահետազոտական

²⁷¹ Sbu `Savunmada "Made in Turkey" damgası, Sabah, 07.05.2012

²⁷² Sbu `Savunma Sanayii Müsteşarlığı Faaliyet Raporu 2012, s. 107, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2012%20Y%C4%B1%C4%B1%20Faaliyet%20Raporu.pdf>.

²⁷³ Դեպարտամենտը ստեղծվել է դեռ 1954 թ. ԶՈՒ ԳՇ-ում, որը 1959 թ. անցավ ՊՆ-ի ենթակայությանը: Sbu`

http://www.msb.gov.tr/birimler/arge/html/05A_argeprojelerininplanlanmasi.htm.

աշխատանքների համար «TÜBİTAK»-ը ծախսել է շուրջ 60 մլն ԹԼ: 2006 թ. այդ ցուցանիշը կազմել է 44.5 մլն, իսկ 2007 թ.՝ 50 մլն ԹԼ:²⁷⁴:

2009 թ. Թուրքիայի Գիտության և տեխնոլոգիայի բարձրագույն խորհրդի²⁷⁵ (Türkiye Bilim ve Teknoloji Yüksek Kurulu) նիստում որոշում կայացվեց այդ ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների մասնակցությամբ ստեղծել Գիտության և տեխնոլոգիայի ոլորտի մարդկային ռեսուրսների կառավարման ու համակարգման կոմիտե: Ընդունված որոշման համաձայն՝ նախատեսվում էր 2013 թ. ընդհանուր գիտահետազոտական-փորձարարական ստրուկտուրային մշակումների համար հատկացվող գումարը հասցնել երկրի ՀՆԱ-ի 2 %-ի²⁷⁶: 2006 թ. Թուրքիայում գիտահետազոտական-փորձարարական ստրուկտուրային մշակումների ոլորտում իրականացված ընդհանուր ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 0.76 %-ը (4.399 մլրդ լիրա)²⁷⁷, որի 65 %-ը հատկացվել է պետության, 35 %-ը՝ մասնավոր հատվածի կողմից: Այս առումով առաջատար դիրքերում է գտնվում Իսրայելը, որի ծախսերն այդ ոլորտում նույն թվականին կազմել են 4.65 %, որի զգալի մասը բաժին է ընկել ռազմաարդյունաբերության ոլորտին²⁷⁸:

Եվրահանձնաժողովի կողմից 2008 թ. պատրաստված հատուկ զեկույցում ներկայացվեցին գիտահետազոտական մշակումներ իրականացնող առաջատար ընկերություններն ու կազմակերպությունները, որոնցում տեղ էր գտել նաև թուրքական «Koç Holding»-ը, որի ծախսերն այդ ոլորտում կազմել են ավելի քան 62 մլն եվրո: 2007 թ. ամենաշատ գումարները հատկացրել է ռազմական մեքենաշինության խոշոր «BMC» ընկերությունը, ինչը կազմել է 61 մլն ԹԼ:

²⁷⁴ Stu` Almanak Türkiye 2006-2008: Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. A. Bayramoğlu, A. Insel, Temmuz 2009, TESEV, s. 161, <http://www.tesev.org.tr>.

²⁷⁵ Stu` Հիմնվել է 1983 թ. հոկտեմբերի 4-ին:

²⁷⁶ Stu` Türkiye` den uzay yolunda dev adım, Yeni Şafak, 05.08.2009.

²⁷⁷ Stu` OECD Science, Technology and Industry Outlook 2008, p. 158,

http://www.inovacao.unicamp.br/report/inte-OECDScienceTechnologyIndustry_Outlook081215.pdf.

²⁷⁸ Stu` Նույն տեղում, էջ 170:

Ռազմական մշակումների ոլորտում աճ է գրանցում նաև «ASELSAN» ընկերությունը, որը գիտահետազոտական մշակումների ոլորտում պայմանագիր է ստորագրել ՊՆ-ի հետ, համաձայն որի՝ ընկերությունը Բիլքենթի և Մերձավորարևելյան տեխնիկական համալսարանի հետ համատեղ իրականացվող մշակումների համար պետության կողմից ստացել է 30 մլն ԹԼ օժանդակություն²⁷⁹: Ընկերությունում 2009 թ. հիմնվեցին 4 առանձին գիտահետազոտական կենտրոններ՝ տեղեկատվական-հաղորդակցման սարքավորումների, միկրոէլեկտրոնիկայի ու էլեկտրոօպտիկական միջոցների, ՌՏԿ-ների, էլեկտրոնային պատերազմի ու հետախուզական միջոցների, պաշտպանական համակարգերի տեխնոլոգիաների ոլորտում²⁸⁰: Ընկերությունը գիտահետազոտական աշխատանքներին հատկացնում է տարեկան իր շրջանառության 7 %-ը: 2007 թ. ընկերության ընդհանուր վաճառքի ծավալները կազմել են 470 մլն դոլար, իսկ արտահանումը կազմել է շուրջ 20 մլն: Ընկերության ղեկավարությունը նպատակ ունի առաջիկա տարիներին արտաքին վաճառքի տարեկան ծավալները հասցնել 100-200 մլն, իսկ ընդհանուր տարեկան շրջանառությունը՝ 1 մլրդ դոլարի²⁸¹:

²⁷⁹ Տես՝ Selçuk Oktay, “ARGE-100”, Turkish Time, Ağustos 2007, Sayı 64, http://www.turkishtime.org/files/Arastirmalar/Ar-Ge/Ar-ge_100_2007.doc. Եթե 2002 թ. Koç Holding-ի գիտահետազոտական ոլորտում ծախսերը կազմել են 70 մլն ԹԼ, ապա 2008 թ.՝ 500 մլն, իսկ 2010 թ.՝ 450 մլն ԹԼ, որով այն դարձավ Թուրքիայի խոշորագույն ընկերություններից մեկն իր գիտահետազոտական ծախսերով: Հաշվի առնելով, որ այդ հոլդինգի արտադրության մեջ ռազմաարդյունաբերությունը կարևորագույն ու նաև հիմնական ոլորտներից մեկն է, ապա այդ ծախսերի մի զգալի մասը բաժին է ընկնում հենց այդ բնագավառին: Տես՝ Türkiye'nin en çok Ar-Ge harcaması yapan holding şirketi: Koç Holding,

http://www.koc.com.tr/trtr/Yatirimci_Iliskileri/FinansalSonuclar/FaaliyetRaporlari/FaaliyetRaporlari/2010_15_Arastirma%20Gelistirme.pdf, s. 24:

²⁸⁰ Տես՝ Aselsan'da 4 AR-GE merkezi kuruldu,

<http://www.haberturk.com,16.03.2009;>

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20090316.aspx>.

²⁸¹ Տես՝ Ընկերության ընդհանուր անձնակազմի թիվը հասնում էր ավելի քան 3500-ի, որից 1500-ը ինժեներական ու մասնագիտական կազմն էր: Տես՝ u Aselsan, savunma sanayiinde dünya devleri arasında..., Milliyet, 07.09.2008.

Ինչպես իրավացիորեն նշում է ամերիկյան Հուդզոն ինստիտուտի ռազմական վերլուծաբան Ռիչարդ Վեյցը՝ Թուրքիայի կողմից ռազմաարդյունաբերական ծրագրերի ու այդ ոլորտում գիտահետազոտական մշակումների և ծախսերի նման միտումների շարունակման դեպքում կնվազի արտերկրից սպառազինության ձեռքբերման անհրաժեշտությունը, և կմեծացնի Անկարայի «ռազմավարական ինքնավարությունը»²⁸²:

Ընդհանուր առմամբ, Թուրքիան արդեն իսկ գրանցել է հաջողություններ սեփական ռազմաարդյունաբերության զարգացման ոլորտում, և դա նաև հնարավորություն է տալիս այլ երկրների հետ իրականացնել ինքնուրույն ռազմատեխնիկական համագործակցության ծրագրեր: Հիմնականում այդ երկրները (Ադրբեջան, Վրաստան, Ալբանիա, Բոսնիա, միջինասիական թյուրքալեզու երկրներ) գտնվում են Թուրքիայի ռազմաքաղաքական հետաքրքրությունների ու շահերի կենտրոնում, և թյուրքական արտադրության սպառազինության մատակարարումներն ու օժանդակությունը բարձրացնում են նախ Թուրքիայի հեղինակությունն այդ երկրների աչքում և նպաստում այդ երկրի ռազմաքաղաքական ազդեցության մեծացմանը, ինչն առավել ակնառու է հատկապես Ադրբեջանի ու Վրաստանի պարագայում: Թուրքական ռազմաարդյունաբերության զարգացումը տեղավորվում է Թուրքիայի աշխարհաքաղաքական հավակնությունների շրջանակում, որով այդ երկիրը փորձում է ոչ միայն ապահովել տարածաշրջանում իր ռազմաքաղաքական գերակայությունը, այլ նաև որոշ երկրների պարագայում լուրջ դիրքեր գրավել այդ երկրների ռազմական համակարգում: Թուրքիան մեծամասամբ արտահանում էր ռազմական փոխադրամիջոցներ, զրահամեքենաներ, հրթիռահրետանային համակարգեր, ռազմածովային միջոցներ ու թեթև սպառազինություն:

²⁸²Տե՛ս՝ Richard Weitz, Reducing Its Dependence On Foreign Arms Suppliers, Turkey Enhances Its Strategic Autonomy, Turkey Analyst, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program Joint Center, vol. 3, no. 14, 30 August 2010, <http://www.silkroadstudies.org/new/inside/turkey/2010/100830B.html>.

ԳԼՈՒԽ 3.

ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱԼԻՐ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԸՍՏ ԶՈՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

3.1. Ցամաքային ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը

ՅՈՒ-ը Թուրքիայի ԶՈՒ-ի կազմում իր թվաքանակով ու սպառազինության հագեցվածությամբ հանդիսանալով ամենամեծը, միևնույն ժամանակ թուրքական բանակի հիմնական զորքի տեսակը՝ առաջնային տեղում հայտնվեց այդ ուժերի արդիա-կանացումն ու նորագույն սպառազինությամբ համալրումը: ՅՈՒ-ը նաև առանձնանում են սպառազինության քանակային մեծությամբ ու զինատեսակների բազմազանությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ հատկապես ՅՈՒ-ի արդիականացման հարցում հիմնական դերակատարությունը տրվեց տեղական ռազմաարդյունաբերությանը և սպառազինության մի զգալի մասն սպահովում էր հենց տեղական համալիրը:

1990-ականներին արդեն թուրքական մի շարք ընկերություններ լայնամասշտաբ ակտիվ արտադրական ծրագրեր իրականացրեցին՝ ԶՈՒ-ի կարիքների ապահովման ուղղությամբ:

Թուրքական «FNSS» ընկերության²⁸³ հիմնադրման ժամանակ առաջին կարևոր խնդիրը Թուրքիայի ԶՈՒ-ի կարիքների համար

²⁸³ Ցամաքային ռազմական միջոցների արտադրության ոլորտում խոշորագույններից համարվող «FNSS» ընկերությունը հիմնադրվել է 1987 թ. որպես առանձին նախաձեռնություն «Nurol İnşaat ve Ticaret» և «FMC Corporation» ընկերությունների միջև ստորագրված պայմանագրի շրջանակներում: 2005 թ. «FNSS» դարձավ «Nurol Holding»-ի և ամերիկյան BAE Systems ընկերության համատեղ թուրք-ամերիկյան ընկերություն, որի բաժնետոմսերի 51 %-ը պատկանում է Թուրքիային: Ընկերության արտադրացանկին են պատկանում մարտական մեքենաների ընտանիքին պատկանող թրթուրավոր «ACV-300 AAPC», «ACV-300 IFV», «ACV-SIFV», ինչպես նաև անհիվավոր «Pars» զրահապատ մեքենաները: Բացի արտադրությունից, ընկերության ձեռնարկություններում իրականացվում են նաև թուրքական բանակի հնացած մարտական մեքենաների արդիականացման աշխատանքներ: Տես՝ «FNSS» ընկերության կայք՝ <http://www.fnss.com.tr>.

տարբեր դասի գրահամաքենաների (այսուհետ՝ ՋՄ) արտադրությունն էր, որում այն սկսեց լուրջ դերակատարություն ապահովել: 1988 թ. փետրվարին ՊՆ-ն ռազմական մեքենաների ձեռքբերման հայտամրցույթ հայտարարեց, և նույն թվականի մայիսին Թուրքիայի վարչապետ Թ. Օզալի անմիջական մասնակցությամբ «FNSS» ընկերության և ՊԱԳՎ-ի միջև պայմանագիր ստորագրվեց թուրքական բանակի համար 10 տարիների ընթացքում 1700 միավոր ՋՄ-ների արտադրության վերաբերյալ, որի ընդհանուր արժեքը կազմում էր շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլար: Այդ ծրագրով նախատեսված արտադրությունն ու արտադրանքի հանձնումը վերջնականապես ավարտին հասցվեց 2000 թ.²⁸⁴: Փաստորեն, այդ գործարքը ոչ միայն ընկերության հետագա զարգացման, այլ թուրքական նորաստեղծ ու զարգացող ռազմաարդյունաբերության խոշորագույն նախագծերից դարձավ:

2000 թ. ընկերությունը ՊՆ-ի հետ ստորագրեց ևս մեկ պայմանագիր, որով ստանձնեց թուրքական ՋՈւ-ի համար զինվորական անձնակազմի փոխադրումների համար նախատեսված 550 միավոր ՋՄ-ների արտադրությունը: Դրանք բանակին հանձնվեցին 2005 թ.: Նշենք, որ 2008 թ. դրությամբ ընկերության ջանքերով ՋՄ-ների տեղական բազայի արտադրությունը հասցվել էր ավելի քան 80 %-ի: Ընկերությունը կարճ ժամանակահատվածում հաջողություններ գրանցեց նաև արտադրանքի արտահանման ոլորտում, տարբեր դասի ՋՄ-ներ և հետևակի մարտական մեքենաներ (այսուհետ՝ ՀՄՄ) արտահանելով Մալայզիա, ԱՄԷ, Սաուդյան Արաբիա, Ֆիլիպիններ և այլ երկրներ²⁸⁵:

Ընկերությունը ոչ միայն կարողացավ ապահովել թուրքական ՅՈՒ-ի կարիքները, այլ նաև իր «Akinci» և «Pars» ՋՄ-ներով դուրս եկավ սպառազինությունների միջազգային շուկա, ինչը նպաստեց ոչ

²⁸⁴ Տե՛ս՝ <http://www.fnss.com.tr/v1.6/index.php?conmenu=6>.

²⁸⁵ Տե՛ս՝ «FNSS» A Leader Company in Armored Combat Vehicles / Interview with Mr. Nail Kurt, Defence Turkey, Volume: 2, Issue:10 Year: 2008, (20-26 pages); <http://www.fnss.com.tr/v1.6/index.php?conmenu=6>.

միայն ընկերության հեղինակության բարձրացմանը, այլ նաև թուրքական տեղական ռազմաարդյունաբերության զարգացմանը:

1992 թ. ռազմաարդյունաբերության ոլորտում սկսեց նախագծեր իրականացնել թուրքական «Nurol» ընկերությունը, որը բացի պատրաստի ռազմական արտադրանքից, արտադրում էր նաև այլ բաղադրամասեր, որոնք կիրառվում են ռազմաարդյունաբերության տարբեր ոլորտներում²⁸⁶:

1990-ական թթ. սկզբներին Թուրքիան Արևելյան Գերմանիայից ձեռք բերեց մոտ 300 միավոր «ԵՄ-60», «ԵՄ-80» մարտական մեքենաներ, ուղղաթիռներ, գիշերային դիտարկման սարքեր ու թեթև սպառազինություն: Ժանդարմերիան ու հատուկ նշանակության ուժերը ստացան խորհրդային արտադրության հրաձգային զենքեր, դիպուկահար հրացաններ, հակատանկային ու հրետանային համակարգեր²⁸⁷: Դրանց բազայի վրա թուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունները սկսեցին իրականացնել վերամշակումներ ու փոխակերպման աշխատանքներ: Նույն ժամանակահատվածում «Nurol» ընկերությունը սկսեց համագործակցել ռումինական Ratmil ընկերության հետ՝ խորհրդային «ԵՄ-60» զրահափոխադրիչի բազայի վրա նոր փոխադրամիջոցների արտադրության շուրջ: Երկկողմ ռազմաարդյունաբերական աշխատանքների արդյունքում ընկերությունը սկսեց արտադրել նոր զրահափոխադրիչներ, որոնք համարված էին ամերիկյան մշակման ավտոմատ փոխանցման համակարգով, դիզելային հզոր շարժիչով և այլն²⁸⁸:

²⁸⁶ Տես՝ «Nurol» ընկերության կայք, <http://www.nurolmakina.com.tr/index>. Nurol և FNSS ընկերությունները համատեղ իրականացնում էին Սաուդյան Արաբիայի ավելի քան 600 միավոր տարբեր դասի ՋՄ-ների արդիականացումն ու վերանորոգումը մինչև 2010 թ., որի ընդհանուր արժեքը կազմում էր 540 մլն դոլար: Տես՝ «Nurol», 600 Suudi zırhlısı 540 milyon dolara yeniliyor, Sabah, 05.02.2009.

²⁸⁷ Տես՝ М. Мавров, նշվ. աշխ., էջ 377-378: Richard Weitz, Reducing its Dependence on Foreign Arms Suppliers, Turkey Enhances Its Strategic Autonomy, Turkey Analyst, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program Joint Center, Vol. 3, No. 14, 2010, <http://www.silkroadstudies.org/new/inside/turkey/2010/100830B.html>.

²⁸⁸ Տես՝ М. Мавров, նշվ. աշխ., էջ 377-378.

«6x6 RN 94» մակնիշի գրահափոխադրիչը հանդիսանում էր ընկերության արտադրության առաջին ՁՄ-ն, որի բազայի վրա հետագայում արտադրվել են նույն դասի այլ մեքենաներ: Ընկերության գործարաններում իրականացվում էին նաև ՁՄ-ների համար նախատեսված տարբեր տրամաչափի հրանոթների ու հրանոթային աշտարակների արտադրություն: 2002 թ. ընկերությունն իր իսկ արտադրության մարտական մեքենաների համար սկսեց արտադրել հրանոթափողեր ու հրանոթային աշտարակներ: 2003 թ. երևան հանվեց «Toma 4x4» զինվորական անձնակազմի փոխադրումների համար նախատեսված մարտական մեքենաների նոր շարքը: Թուրքական այդ ընկերությունն առավելապես աչքի ընկավ իր «EJDER» ՁՄ-ների արտադրությամբ, որի առաջին նմուշներն արդեն պատրաստ էին 2007 թ.²⁸⁹:

2005 թ. թուրքական բանակին հատուկ ռազմական տեխնիկայի մատակարարման վերաբերյալ որոշում կայացվեց և 2007 թ. հունվարին «FNSS» ընկերությունը պայմանագիր ստորագրեց՝ Թուրքիայի ՅՈւ-ի հրամանատարության համար «շարժական լողացող գրոհային կամրջի» արտադրությունն սկսելու վերաբերյալ: Նախագծի արժեքը կազմում էր շուրջ 133 մլն դոլար, և նախատեսվում էր առաջին արտադրանքը բանակին հանձնել 2010 թ.: Համաձայն նախագծի պատասխանատուների՝ կամրջի նախագծումն ու արտադրությունն իրականացվելու էր թուրք ինժեներների կողմից²⁹⁰: Մինչև նույն ժամանակ, 2008 թ. նոյեմբերին թուրքական կողմը համաձայ-

²⁸⁹ Նոր դասի «EDJER» ՁՄ-ն նախատեսված է ինչպես անձնակազմի արագ ու շարժունակ փոխադրումների, այնպես էլ թե՛ մարտական գործողությունների ու կրակի ապահովման համար: Նախագծման և արտադրական աշխատանքները տևել են 2 տարի: Նշենք նաև, որ այս դասի թուրքական արտադրության մեքենաներ կան վրացական ՋՈՒ-ում, որոնք հատկացվել են Թուրքիայի կողմից: *Stu` Mayın Saldırılarına Karşı Türk Yapımı "Ejder", Milliyet, 03.02.2009*:

²⁹⁰ Նախագծի համաձայն՝ նախատեսվում էր 52 միավոր 8x8 Pars անիվավոր «տանկերի» արտադրություն, որոնք էլ կազմելու էին այդ գրոհային կամրջի կառուցվածքային ողջ համակարգը՝ 650 մետր երկարությամբ: Հնարավոր կլինի նաև օգտագործել որպես 150 մետր երկարությամբ առանձին 4 կամուրջներ: *Stu` http://www.gbulten.ssm.gov.tr, 31.01.2007*.

նության էր եկել Գերմանիայի հետ՝ ՑՈւ-ի համար 36 միավոր «LEGUAN» տանկային կամուրջների ձեռքբերման վերաբերյալ, որի շրջանակներում բանակցություններ էին անցկացվում Գերմանիայի պաշտպանական տեխնոլոգիաների ու մատակարարման դաշնային ծառայության ու գերմանական «Krauss-Maffei Wegmann» (KMW) ընկերության հետ: Հիմնական մոնտաժն ու հավաքման աշխատանքներն իրականացվելու էին Թուրքիայում²⁹¹:

Միաժամանակ Թուրքիան սկսեց նաև իր բանակի տանկերի արդիականացման ծրագրերը՝ իրականացնելով «Leopard 1», «M-60» և այլ դասի տանկերի արդիականացման ու տեխնիկական համալրման աշխատանքներ: Մասնավորապես, 2002 թ. ՊՆ-ի կողմից «ASELSAN» ընկերությունը ստացավ թուրքական բանակի 160 միավոր «Leopard 1A1» տանկերի արդիականացման ու կրակային համակարգի վերազինման ծրագրի իրականացման պարտավորությունը՝ 160 մլն դոլար ընդհանուր արժեքով²⁹²: Ծրագիրն ամբողջությամբ ավարտվեց 2009 թ. նոյեմբերին և, ընդհանուր առմամբ, արդիականացվեց 170 միավոր տանկ, որոնք վերազինվեցին «ASELSAN» ընկերության նախագծման կրակի կառավարման «Volkan» համակարգերով²⁹³:

2005 թ. նոյեմբերին ՊԱԳՎ-ի և Իսրայելի ռազմական արդյունաբերության ընկերության (IMI) ու իսրայելական «Elbit Systems» ընկերության միջև ստորագրված պայմանագրով՝ Իսրայելն ստանձնեց թուրքական բանակի 170 միավոր «M-60» տանկերի արդիականացման ծրագիրը՝ 688 մլն դոլար արժողությամբ: Նախատեսված էր

²⁹¹ Տես՝ Turkey buys 36 LEGUAN bridge laying armoured vehicles, http://www.army-guide.com/eng/article/article_364.html, 28.04.2009; Türk Kara Kuvvetleri'ne "Leguan" dopingi, <http://www.savunmasanayi.net>, 3 Haz, 2009.

²⁹² Տես՝ Hedef 'Türk mali' tank, Radikal, 22.09.2002. ASELSAN ընկերությունը ստանձնեց նաև այլ երկրների տանկերի արդիականացման աշխատանքները: Մասնավորապես, 2009 թ. ընկերությունը պայմանագիր ստորագրեց Չիլիի ԶՈւ-ի ռազմական գործարանի (FAMA) հետ՝ այդ երկրի բանակի 100 միավոր «Leopard» տանկերի արդիականացման վերաբերյալ: Տես՝ IDEF 09' da Aselsan, Aselsan, N 2, 2009, s. 10; Aselsan, Şili tanklarını modernleştirecek, Sabah, 29.04.2009.

²⁹³ Leopard-1 tankları modernize edildi, Star, 12.11.2009.

դրանք մի շարք բնութագրերով համապատասխանեցնել վերջին սերնդի իսրայելական տանկերին: Թուրքական տանկերի արդիականացման վերաբերյալ պայմանագիր էր կնքվել դեռևս 2002 թ., սակայն տեխնիկական պատճառներով հետաձգվել էր դրա իրագործումը: Տանկերի որոշ բաղադրամասերի արտադրությունն սկսելու էր 2006 թ. վերջին, իսկ նոր տանկերի թողարկումը՝ 2007 թ. սկզբին թուրքական Կայսերի քաղաքում: Նույն ծրագրի շրջանակներում «M-60» տանկերը հանդերձավորվելու էին մի շարք համակարգերով, որոնք օգտագործվում են իսրայելական «Merkava 4» տանկերում, և այդ 170 տանկերը նորացված ձևով Թուրքիան պետք է ստանար 2009 թ.²⁹⁴: Սակայն նախագծի իրականացումը հետաձգվեց մինչև 2011 թ., քանի որ արդիականացված տանկերի հետ կապված ի հայտ էին եկել տեխնիկական որոշ թերություններ: 2009 թ. սեպտեմբերին արդեն ավարտվել էին 100 միավոր տանկերի արդիականացման աշխատանքները, որոնք հանձնվել էին Թուրքիայի ՑՈւ-ին²⁹⁵:

Դրան զուգահեռ, Թուրքիան այլ երկրներից ձեռք էր բերում արդիական տանկեր: Ըստ թուրքական ԶԼՄ-ների՝ 2005 թ. նոյեմբերին Գերմանիան իրականացրել է 298 միավոր «Leopard-2» տանկերի վաճառքը Թուրքիային: Ավելի ուշ ԳԴՀ-ի պաշտպանության նախարարությունը հավաստել էր, որ նույն թվականի նոյեմբերին Բեռլինում կողմերը պայմանագիր են ստորագրել Թուրքիա 298 տանկ մատակարարելու մասին: Պայմանագրի համաձայն՝ պետք է մատակարարվեին մարտական այնպիսի մեքենաներ, որոնք գտնվում էին բունդեսվերի պահուստում և չէին օգտագործվում: Թուրքիան նաև առաջարկ էր ներկայացրել Բեռլինին՝ թուրքական բանակի սպառազինության մեջ գտնվող տանկերի արդիականացման վերաբերյալ²⁹⁶:

Միևնույն ժամանակ առաջ էին քաշվում հավակնոտ համարվող ռազմաարդյունաբերական ծրագրեր: Այս համատեքստում կա-

²⁹⁴ Տե՛ս՝ Hürriyet, 23.11.2005.

²⁹⁵ Տե՛ս՝ İsraililer tanklarda geri vitesi unuttu, <http://www.haberturk.com>, 07.09.2009.

²⁹⁶ Տե՛ս՝ Almanya'dan Leopard 2'ler geliyor, Milliyet, 09.11.2005.

րելի է դիտարկել թուրքական բանակի համար «հայրենական տանկերի» արտադրության նախաձեռնությունը: Կողմնորոշվելով տանկերի նոր սերնդի նախատիպի որոշման հարցում՝ Թուրքիան սեփական ԶՈՒ-ի համար 1000 միավոր նոր սերնդի տանկ արտադրելու ծրագիր հաստատեց, ինչի համար հիմնական արտադրողներ ընտրվեցին թուրքական «BMC», «FNSS» և «Otokar» ընկերությունները²⁹⁷:

Թուրքիայի ՑՈՒ-ի կարիքների համար դեռևս 1996 թ. հաստատված «Ժամանակակից տանկ» նախագիծը, սակայն, ի հայտ եկած մի շարք խնդիրների պատճառով ժամանակավորապես դադարեցվեց²⁹⁸: 1999 թ. այդ նախագծի մասնակցության վերաբերյալ բանակցություններ ընթացան նույնիսկ Ուկրաինայի հետ: Ուկրաինական կողմը բանակցություններ էր վարում Թուրքիայի հետ՝ առաջարկելով սեփական արտադրության «T-84» տանկերի վաճառք ու արտադրության կազմակերպում Թուրքիայում: Նույնիսկ խոսք էր գնում արտոնագրերի տրամադրման վերաբերյալ²⁹⁹:

Նախագծի իրականացումը, սակայն, հետաձգվեց և դրա փոխարեն 2000 թ. որոշում կայացվեց իրականացնել թուրքական բանակի «Leopard 1» և «M60» տանկերի արդիականացման աշխատանքները, ինչն ուղղակի ժամանակավոր լուծում էր՝ մինչ հիմնական տանկերի ձեռքբերման մանրամասների ճշգրտումն ու նախագծի սկսելը: 2004-2005 թթ. ՊԱԳՎ-ի ու «BMC», «FNSS» և «Otokar» ընկերությունների միջև անցկացվեցին խորհրդակցություններ՝ Թուրքիայում ժամանակակից տանկերի նախագծման ու արտադրության վերաբերյալ: Տեղական հնարավորություններով տանկերի արտադրության «ALTAY» նախագծի վերաբերյալ որոշում կայացվեց, ըստ որի՝ անհրաժեշտ տեխնոլոգիաները ձեռք էին բեր-

²⁹⁷ Տես՝ Milliyet, 18.07.2006.

²⁹⁸ Տես՝ ALTAY Projesi, Milli Imkanlarla Modern Tank Üretimi, Savunma Sanayii Gündemi, Temmuz 2008, s. 80.

²⁹⁹ Տես՝ Ուկրաինան պատրաստվում է տանկեր վաճառել Թուրքիային, Հայ գինվոր, թիվ 25, 26 հունիս-3 հուլիս 1999: Միևնույն ժամանակ, քննարկվում էր նաև Կիպրոսի Հանրապետությանը նման տանկերի վաճառքի հնարավորությունը:

վելու արտերկրից, իսկ նախագծումն ու արտադրությունն իրականացվելու Թուրքիայում³⁰⁰:

2007 թ. Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն նախագծի հիմնական կապալառու ընտրեց թուրքական «Otokar» ընկերությանը³⁰¹, իսկ արդեն 2008 թ. հուլիսին ՊԱԳՎ-ն ընկերության հետ ստորագրեց նախագծի իրականացման պայմանագիրը³⁰²:

Թուրքիան «ALTAY» անվանակոչված տանկերի արտադրության ոլորտում համագործակցություն հաստատեց Հարավային Կորեայի հետ: 2008 թ. հուլիսին հարավկորեական «Hyundai Rotem» և «Otokar» ընկերությունների միջև ստորագրված 400 մլն դոլար արժողության պայմանագրի համաձայն՝ հարավկորեական կողմը պետք է օգներ թուրքական տանկերի արտադրության գործում՝ ապահովելով անհրաժեշտ տեխնոլոգիաներով: Արտադրության մշակումներն ու սեփականության իրավունքը պատկանում էր Թուրքիային: Տանկերի նախագծման, նախատիպերի արտադրության, փորձարկումների ու որակական ստուգումների ընդհանուր բյուջեն գնահատվում էր 500 մլն դոլար, քանի որ նորագույն տեխնոլոգիական լուծումներ էին անհրաժեշտ լինելու: Նախատեսվում էր մինչև 2012 թ. ավարտել նախատիպերի արտադրությունը, և անմիջապես սկսել առաջին խմբաքանակի արտադրությունը: Ընդհանուր արտադրական գործընթացի պատասխանատվությունը դրված էր թուրքական 3 ռազմարդյունաբերական ընկերությունների վրա: «Otokar» ընկերությունը իրականացնելու էր տանկի մեխանիկական համակարգի, «ASELSAN»-ը՝ էլեկտրոնիկ սարքավո-

³⁰⁰ Տե՛ս՝ ALTAY Projesi, Milli Imkanlarla Modern Tank Üretimi, Savunma Sanayii Gündemi, Temmuz 2008, s. 80.

³⁰¹ Տե՛ս՝ Altay Main Battle Tank, Turkey, <http://www.army-technology.com/projects/altaymainbattletank/>.

³⁰² Տե՛ս՝ Tolga Akiner, Milli tank 'altay' için yola çıkıldı, Radikal, 30.07.2008.

րումների ու կապի միջոցների, իսկ «MKEK»-ը՝ հիմնական կրակա-
լին փողի ու զրահի արտադրությունը³⁰³:

ՊԱԳՎ-ի որոշմամբ «ALTAY» նախագծում որպես ենթակապա-
լառու ներգրավվեց նաև «MKEK» ընկերությունը: 2008 թ. հունիսի 29-
ին թուրքական այդ ընկերության ու «Hyundai-Rotem» ընկերության
միջև ստորագրվեց տեխնիկական օժանդակության ու տեխնոլոգիա-
ների փոխանցման մասին համաձայնագիր, ինչի շրջանակներում
այդ ընկերությունը ստանձնեց արտադրվելիք տանկերի հիմնական
զենքի համակարգի արտադրությունը: Բացի այդ, 2008 թ. նոյեմ-
բերին «ALTAY» նախագծի հիմնական կապալառու հանդիսացող
«Otokar» ընկերությունը պայմանագիր ստորագրեց «MKEK» ընկե-
րության հետ՝ տանկերի հիմնական զենքի համակարգի նախա-
գծման ու արտադրության վերաբերյալ³⁰⁴:

Նախագծի ստորագրման հանդիսավոր արարողության ժամա-
նակ Թուրքիայի վարչապետ Էրդողանը, իր ելույթում կարևորելով
թուրքական ԶՈւ-ի արդիականացման հարցում տեղական ռազմա-
արդյունաբերության զարգացումը՝ նշեց, որ «ALTAY» նախագծով
Թուրքիան իր տեղն է զբաղեցնում աշխարհի առաջատար տանկ
արտադրող երկրների ցանկում³⁰⁵:

Նոր սերնդի տանկերի արտադրության նախագիծը, կարելի է
ասել, տեղական ռազմական արտադրության ամենախոշոր ու նաև
հավակնոտ ծրագրերից էր, որ երբևէ առաջադրվել էր ՊԱԳՎ-ի
կողմից:

³⁰³ Stu` Milli tank için düğmeye basıldı, Milliyet, 30.07.2008; 500 milyon \$'lık proje OTOKAR'ın, Yeni Şafak, 30.07.2008; Türkiye'nin ilk milli tankı Altay, Otokar'la start veriyor, Sabah, 30.07.2008. Նոր արտադրվելիք տանկերը համալրված են լինելու քի-
միական, բիոլոգիական ու միջուկային հարձակումների դեմ պաշտպանական հա-
տուկ համակարգերով: Ըստ թուրք զինվորականների՝ նոր արտադրվելիք մեկ միա-
վոր տանկը իր հնարավորություններով կարող է կատարել թուրքական բանակի՝
միասին վերցրած 4 միավոր M48 տանկերի գործառույթները:

³⁰⁴ Stu` Makina ve Kimya Endüstrisi Genel Müdürlüğü, 2008 yılı Faaliyet Raporu, s. 16.

³⁰⁵ Stu` Բ. Թ. Էրդողանի ելույթը 2008 թ. Altay տանկերի արտադրության պայմանա-
գրի ստորագրման հանդիսավոր արարողության ժամանակ՝

<http://www.netizle.tv/video/13443/milli-tank-altay-2011-de-silahli-kuvvetlere-katiliyor>.

Նմանատիպ տեղական ծրագրերին զուգահեռ սպառազինության մի շարք տեսակների հարցում Թուրքիան շարունակում էր համագործակցությունն այլ երկրների հետ՝ ժամանակակից սպառազինության ձեռքբերման հարցում:

Դեռևս 1998 թ. Թուրքիայի ՊՆ-ն պայմանագիր էր ստորագրել ֆրանսիական խոշորագույն «MBDA» ընկերության հետ՝ Թուրքիայի ՅՈՒ-ին «Eryx» հակատանկային հրթիռներով ապահովելու վերաբերյալ, որի ընդհանուր արժեքը կազմում էր 404 մլն եվրո: Ըստ պայմանագրի՝ 10-ամյա ժամանակահատվածում ֆրանսիական ընկերության ու թուրքական «MKEK» ընկերության համատեղ արտադրությամբ ՋՈւ-ին պետք է մատակարարվեր 600 միավոր հակատանկային հրթիռային համակարգ և 9200 միավոր հրթիռ: 2002 թ. Ֆրանսիայում թուրք մասնագետների ներկայությամբ անցկացվեցին փորձարկումներ, որից հետո 3200 միավոր հրթիռ մատակարարվեց Թուրքիային³⁰⁶: Թուրքական զորավարժարաններում համակարգերի հետագա փորձարկումները որոշ թերություններ արձանագրեցին, ինչի մասին տեղյակ պահվեց ֆրանսիական կողմը, որից հետո ՊԱԳՎ-ն 2004 թ. չեղյալ հայտարարել նախագիծը և պահանջեց վճարված գումարի փոխհատուցում: Երկար ժամանակ կողմերի միջև տարաձայնությունները հարթելու նպատակով ֆրանսիական ընկերությունը դիմել էր միջազգային դատարան: 2008 թ. հուլիսին Միջազգային իրավարար դատարանը որոշում կայացրեց հետ վերադարձնել թուրքական կողմի վճարած գումարից (280 մլն) միայն 75 մլն-ը³⁰⁷: Ամենայն հավանականությամբ, վերոնշյալ գործարքի ձախողումից հետո Թուրքիան նման միջոցների համար նոր տարբերակներ փնտրեց:

2007 թ. հունվարին ՊԱԳՎ-ն ՅՈւ-ի հրամանատարության սպառազինության ուժեղացման շրջանակներում 80 միջին հեռահա-

³⁰⁶ Stü` Gizlice imzalanan Eryx tanksavar füzesi antlaşmasının ardındaki gerçekler, Taraf, 06.09.2009.

³⁰⁷ Stü` 430 milyon TL çöpe gitti, <http://www.haber3.com/430-milyon-tl-cope-gitti--501999h.htm>, 02.09.2009.

րության հակատանկային համալիրների (թուրք. Orta Menzilli Tanksavar Sistemi) (յուրաքանչյուր համալիրի համար 10-ական հրթիռներով) ձեռքբերման նպատակով մրցույթ հայտարարեց, որին մասնակցում էին ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերությունները³⁰⁸: Երկար ձգձգումներից հետո թուրքական կողմը կատարեց իր վերջնական ընտրությունը և չնայած, որ թուրքական սպառազինության հիմնական մասը ամերիկյան, եվրոպական ու նաև իսրայելական արտադրության են, այնուամենայնիվ նախապատվությունը տրվեց ռուսականին: 2008 թ. ապրիլին Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում հաստատվեց միջին հեռահարության հակատանկային հրթիռային համալիրների ձեռքբերման 200 մլն դոլար արժողության ծրագիրը, որտեղ թուրք զինվորականները նախապատվությունը տվեցին ռուսական «Рособоронэкспорт»-ին պատկանող «Корнет-Е» համալիրին: Ըստ նախատեսվածի՝ Թուրքիան գնեց 80 այդպիսի համալիր և 800 հրթիռ³⁰⁹: Հայտամրցույթին մասնակցում էին նաև ամերիկյան «Raytheon Tow» կոնսորցիումը և իսրայելական «Rafael» պետական արդյունաբերական ընկերությունը, որոնց մերժումը կապված է ավելի շատ այդ երկրների նկատմամբ քաղաքական ճնշում գործադրելու Թուրքիայի մարտավարական քայլի հետ:

Նման միջոցների արտադրության մեջ ներգրավված էին նաև թուրքական ընկերությունները՝ փորձելով տեղական միջոցներով իրականացնել արտադրական ծրագրեր: Թուրքական «ROKETSAN» ընկերությունը երկար ժամանակ աշխատանքներ էր իրականացնում «օդ-երկիր» դասի «Cirit 2.75» լազերային կառավարման հակատանկային հրթիռի ստեղծման ուղղությամբ, որը պետք է կիրառվի «T-129 ATAK» հարվածային ուղղաթիռների կողմից: Հրթիռների փորձարկումը հաջողությամբ անցավ 2008 թ.: 2010 թ. սկսած նախատեսվում էր սկսել դրանց խմբաքանակային արտադրությունը³¹⁰:

³⁰⁸ Տե՛ս՝ ՊԱԳՎ պաշտ. կայք՝ [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 05.02.2007.

³⁰⁹ Տե՛ս՝ ՊԱԳՎ պաշտ. կայք՝ [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 11.04.2008.

³¹⁰ Տե՛ս՝ Jereed (Cirit) (Turkey), Air-launched rockets,

2008 թ. «FNSS» և «ASELSAN» ընկերությունները արձանագրություն ստորագրեցին տարբեր դասի ՁՄ-ների համար «հեռակառավարվող ավտոմատ զրահաաշտարակների» արտադրության վերաբերյալ: Զրահաաշտարակն ու մեխանիկական բաղադրամասերը արտադրվելու էր «FNSS», իսկ էլեկտրոնային ու կրակի կառավարման, ինչպես նաև գիշերային դիտարկման համակարգը՝ «ASELSAN» ընկերության կողմից³¹¹: 2008 թ. ապրիլին Մալայզիայի մայրաքաղաք Կուալա Լումպուրում կազմակերպված «DSA 2008» միջազգային 11-րդ ռազմական ցուցահանդեսի շրջանակներում «FNSS» ընկերությունը պայմանագիր ստորագրեց՝ Մալայզիային 48 միավոր Adnan ՁՄ-ների վաճառքի վերաբերյալ, որի ընդհանուր արժեքը կազմում էր 72 մլն դոլար: Նախկինում ընկերությունն այդ երկրին է վաճառել 300 մլն դոլար արժեքով 211 միավոր «Adnan» ՁՄ-ներ, որոնցից 65 միավորի հավաքման աշխատանքներն իրականացվելու էին Մալայզիայում³¹²:

2008 թ. դեկտեմբերին Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի որոշման համաձայն՝ BMC ընկերությունը ստանձնեց թուրքական բանակի համար տարբեր դասի ռազմական մեքենաների արտադրությունն ու մատակարարումը: 2009 թ. ապրիլին ՊՆ-ի հովանու ներքո ստորագրվեց «Մարտավարական անիվավոր զրահամեքենաների նախագիծը», որի ընդհանուր արժեքը կազմում էր 300 մլն եվրո: BMC ընկերությունը ԶՈւ-ին մատակարարելու էր ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան 1850 միավոր զրահապատ (ականադիմացկուն) անիվավոր մարտական մեքենաներ: Դրանց համար որոշ բաղադրամասերի, հրանոթների ու կառավարման համակարգի արտադրությունը, ՊՆ-ի հետ ստորագրած պայմանագրի համաձայն, իրականացնելու էր

<http://www.janes.com/extracts/extract/jalw/jalwa052.html>; Jane's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 32.

³¹¹ Տես՝ TSK`ya insansız silah kulesi desteği, Haber 7, 22.03.2008, <http://www.haber7.com/yorumlar.php?id=307871>.

³¹² Տես՝ Turkish defense industry conquers Asia, Today's Zaman, 22.04.2008, http://www.army-guide.com/eng/article/article_1018.html.

«ASELSAN» ընկերությունը: Ըստ պայմանագրի՝ մեքենաները մաս-
մաս ԶՈւ-ին պետք է հանձնվեին 2 տարվա ընթացքում³¹³:

2009 թ. ապրիլին Թուրքիայում անցկացված «IDEF 2009» ռազ-
մաարդյունաբերական միջազգային ցուցահանդեսի շրջանակներում
ընկերությունը ցուցադրության հանեց իր նոր արտադրության
«BMC-350-16 Z» և «BMC-250-10 Z» բազմաֆունկցիոնալ ՁՄ-ները,
որոնք պաշտպանված են ինչպես ականների պայթյուններից, այն-
պես էլ համալրված են բալիստիկ զրահով: Ընկերության այդ նոր
մոդելները, արդեն իսկ ստորագրված պայմանագրերի համաձայն,
մարտական կիրառության էին հանձնվելու ԶՈւ-ին: Նախատեսված
էր նաև իրականացնել վաճառքն այլ երկրներին³¹⁴:

Թուրքիայի ՅՈՒ-ի կարիքների համար ՊԱԳՎ-ն 2009 թ. մեկ
այլ մրցույթ հայտարարեց, որի շրջանակներում ՅՈՒ-երը հա-
մալրվելու էին նորագույն մարտական մեքենաներով: Նախատես-
վում էր ՅՈՒ-երի համար ձեռք բերել 336 միավոր հատուկ նշանա-
կության և 1075 միավոր զինատեսակներ կրող մարտական մեքենա-
ներ ³¹⁵ : Ծրագիրն իրականացվելու էր բացառապես տեղական
ռազմաարդյունաբերության միջոցով, որի մասնակցության համար
հայտ էին ներկայացրել «FNSS», «Hema Endustri» և «Otokar» ընկերու-
թյունները: Արտադրական այդ ծրագիրը ֆինանսավորվելու էր
ՌԱԱՀ-ի կողմից³¹⁶:

2009 թ. հոկտեմբերին թուրքական «Hema Defense» և «Hattat
Holding» ընկերությունների հետ ՊԱԳՎ-ն ստորագրեց պայմանա-
գիր՝ Թուրքիայի ԶՈւ-ի համար տանկային փոխադրիչների ու կցա-
սայլերի արտադրության վերաբերյալ: Ըստ պայմանագրի՝ մինչև
2010 թ. վերջը ԶՈւ-ին էին մատակարարվելու 45 միավոր փոխա-

³¹³ Տես՝ BMC'den Savunma Bakanligi'na 300 milyon euroluk zırhlı araç, Sabah, 23.12.2008.

³¹⁴ Տես՝

http://www.armyrecognition.com/2009_mois_news_actualites/idef_2009_online_show_news_daily_exhibition_international_defence_industry_fair_information_descript.html.

³¹⁵ Տես՝ Orduya süper zırhlı araçlar geliyor, Star, 30.04.2009.

³¹⁶ Տես՝ Kara Kuvvetleri, süper zırhlı araçlarla takviye edilecek, Zaman, 30.04.2009.

դրիչ, որոնք նախատեսված էին «M-60» և նոր սերնդի տանկերի փոխադրումներն իրականացնելու համար³¹⁷:

«IDEF 2009»-ին թուրքական «Otokar» ընկերությունը ներկայացավ իր նոր զրահամեքենաներով, որոնք պատկանում են «Cobra» ՁՄ-ների ընտանիքին, սակայն ավելի կատարելագործված, անվտանգության ու պաշտպանության համակարգերով ավելի հագեցված: 2009 թ. մայիսին ընկերությունը Թուրքիայի ՊՆ-ի հետ ստորագրեց պայմանագիր, ՁՈւ-ի կարիքների համար անիվավոր մարտական մեքենաների դասին պատկանող 861 միավոր ՁՄ-ների ու ՀՄՄ-ների արտադրության վերաբերյալ, որոնք թուրքական բանակին պետք է հանձնվեին 1 տարվա ընթացքում:³¹⁸ Ի դեպ, «Otokar» ընկերության գլխավոր տնօրեն Ս. Գյորգյուչի ներկայացրած տվյալների համաձայն՝ «Otokar» ընկերության շահույթը 2008 թ. կազմել է 70 մլն դոլար, իսկ արտադրանքի վաճառքն ավելացել շուրջ 25 %-ով՝ նախորդ մի քանի տարիների համեմատությամբ: Ընկերության արտադրության ավելի քան 25 հզ. միավոր մարտական մեքենաները կիրառվում են մերձավորարևելյան, եվրոպական ու ասիական 15 երկրների ՁՈւ-ում³¹⁹:

Թուրքական «BMC» ընկերությունը իր գործունեության ընթացքում մինչև 2009 թ. ՁՈւ-ին է հանձնել սեփական արտադրության

³¹⁷ Տես՝ Yerli tank taşıyıcı araç ve römorku için imzalar atıldı,

<http://www.savunmasanayi.net>, 07.10.2009.

³¹⁸ Տես՝ Nicholas Gilby, նշվ. աշխ., էջ 4:

³¹⁹ Տես՝ Serdar Görgüç, Savunma Sanayiinde Kara Platformu, Savunma Sanayii Gündemi, Temmuz 2008, s.17; Otokar yeni nesil askeri araçlarıyla IDEF 2009 fuarına katıldı, <http://www.otokar.com.tr>, 04.05.2009. Otokar ընկերությունը ՁՈւ-ի կարիքների համար առաջին մարտական մեքենաների արտադրությունը սկսել է դեռ 1987 թ.: Ընկերության գործարաններում 1987 թ. սկսած հավաքվում և արտադրվում են «Land Rover Defender 90», 110 և 130 մոդելի ամենգնացներ և «Akrep» մարտական մեքենաները, որոնք մինչ օրս կիրառության մեջ են ՁՈւ-ի ու անվտանգության մարմինների տարբեր ստորաբաժանումներում: Այս դասի մեքենաները տարբեր տարիներին արտահանվել են մի շարք երկրներ: Թուրքական «Koc Holding» կորպորացիային պատկանող «Otokar» ընկերությունը ստեղծվել է 1963 թ., որը գործում է քաղաքացիական մեքենաշինության ու ռազմական արդյունաբերության ոլորտում: Տես՝ «Nicholas Gilby», նշվ. աշխ., էջ 4:

շուրջ 1000 միավոր ՋՄ և լոգիստիկ ապահովման 3 հզ. մեքենա: Բոլոր ստանձնած նախագծերով հանդերձ՝ ընկերության կողմից ՋՈւ-ին հանձնած մարտական մեքենաների թիվը կազմում էր շուրջ 6 հզ. միավոր³²⁰: Բացի այդ, ընկերությունը տարբեր դասի մեքենաներ էր մատակարարում ՆԱՏՕ-ի անդամ մի շարք երկրների³²¹:

Ցամաքային ռազմական միջոցների ու հատկապես տարբեր դասի ՋՄ-ների արտադրությունը համարվում է Թուրքիայի ռազմաարդյունաբերության ամենամեծ ու առավել խոստումնալից ճյուղերից: Ռազմաարդյունաբերության վերոնշյալ հատվածի աշխատանքների ընդհանուր ծավալը 2007 թ. կազմել է 300 մլն, իսկ արտահանումը՝ 120 մլն դոլար, ինչը կազմում էր ընդհանուր թուրքական ռազմաարդյունաբերական արտադրանքի արտահանման շուրջ 30 %-ը: Ռազմական մեքենաշինությունը 2009-2016 թթ. ռազմաարդյունաբերության ոլորտների ռազմավարական փաստաթղթով համարվում է առանցքային զարգացման ոլորտներից և որպես ռազմավարական նպատակ՝ նախատեսվում էր մինչև 2010 թ. հատվածի ընդհանուր աշխատանքային ծավալը հասցնել 750 մլն, իսկ արտահանումը՝ 300 մլն դոլարի³²²:

1990-ական թթ. արդեն մեծ ուշադրություն սկսեց հատկացվել ինչպես հրթիռային տեխնոլոգիաների ձեռքբերման, այնպես էլ տեղական ռազմաարդյունաբերության միջոցով արտադրությանը: Հրթիռային սպառազինության արդիականացման տեսանկյունից թուրքական բանակի համար բավական կարևոր քայլ էր մարտավարական հրթիռների ձեռքբերումը:

³²⁰ Stü` Karamehmet'in BMC'si TSK'nın ve NATO'nun araçlarını üretiyor, Akşam, 23.04.2009; TSK, BMC'nin yerli üretim zirhli araçlarıyla teröre dur diyecek!, <http://www.otogundem.net/guncel/tsk-bmcnin-yerli-uretim-zirhli-araclariyla-terore-dur-diyecek.html>, 23 Nisan 2009.

³²¹ Stü` Karamehmet'in BMC'si TSK'nın ve NATO'nun araçlarını üretiyor, Akşam, 23.04.2009.

³²² SStü` 2009-2016 Savunma Sanayii Sektörel Strateji Dokümanı, Savunma Sanayii Mustesarlığı, Nisan 2009, ss.13-16, http://www.ssm.gov.tr/TR/kurumsal/Documents/2009_SSSS.pdf.

1995 թ. վերջին ԱՄՆ-ի Կոնգրեսը թույլատրեց Թուրքիային վաճառել բանակային մարտավարական հրթիռային համալիրների («ATACMS») առաջին խմբաքանակը: Մեկ տարի անց այդ նույն հրթիռների որոշ խմբաքանակ էլ վաճառվեց Հունաստանին: Իրականում Թուրքիան ցանկանում էր այդ հրթիռների արտադրության ոլորտում համագործակցություն հաստատել ԱՄՆ-ի հետ, սակայն ամերիկյան կողմը մերժել էր տրամադրել հրթիռային շարժիչների տեխնոլոգիաները՝ պատճառաբանելով Հրթիռային տեխնոլոգիաների վերահսկման ռեժիմի պահպանման անհրաժեշտությունը³²³: Թուրքիային նման հրթիռների վաճառքն իր զեկույցում քննադատեց «Human Rights Watch» կազմակերպությունը՝ նշելով, որ չնայած անհավանական է այդ հրթիռների կիրառումը ՔԲԿ-ի դեմ, այդուհանդերձ, «նման կարևոր սպառազինության վաճառքը այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ մտահոգիչ է համարվում մարդու իրավունքների վիճակը, կարող է սխալ ուղերձ լինել թուրքական իշխանությունների համար»³²⁴: 1998 թ. ավարտվեց Թուրքիային 72 միավոր ամերիկյան մարտավարական «ATACMS» հրթիռների մատակարարումը, ինչն աննախաեպ քայլ էր, քանի որ մինչ այդ թուրքական բանակը չէր տիրապետում նման հրթիռների, մյուս կողմից էլ այդ շրջանում ամերիկյան նման սպառազինության վաճառքն օտար երկրների հազվագյուտ երևույթ էր³²⁵:

Մինչև ժամանակ, Թուրքիան 1990-ական թթ. տարբեր նախագծեր մշակեց զենիթահրթիռային համալիրների ու հրետանային նոր համալիրների ձեռքբերման, համատեղ արտադրության ու տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ: Թեև թուրքական կողմն այդ ոլորտում նախապատվությունը տալիս էր ԱՄՆ-ի հետ

³²³ Stu` William J. Durch, *Constructing Regional Security: The Role of Arms Transfers, Arms Control, and Reassurance*, The Century Foundation Inc., PALGRAVE, 2000, p. 112.

³²⁴ Stu` Human rights watch world report 1997: Events of 1996, USA, p. 325-326.

³²⁵ Stu` Turkey will join USA in fielding Army Tactical Missile System, 06.11.1996, <http://www.flightglobal.com/news/articles/turkey-will-join-usa-in-fielding-army-tactical-missile-system-9897/>; SIPRI Arms Transfers Database, http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html.

համագործակցությանը, այնուամենայնիվ, տեխնոլոգիաների տրամադրման շուրջ ստեղծված անհամաձայնությունների պատճառով, Թուրքիան, որպես այլընտրանք, պայմանագիր ստորագրեց չինական ընկերության հետ՝ «WS-1» ՀԿՌՀ-ի (այսուհետ՝ Համազարկային կրակի ռեակտիվ համալիր) համատեղ արտադրության շուրջ: 1997 թ. ստորագրված թուրք-չինական ռազմական պայմանագրով չինական կողմի աջակցությամբ Թուրքիայում «ROKETSAN» և «KALEKALIP» ընկերությունների բազայի հիման վրա 1997 թ. սկսվեց չինական «WS-1B» ՀԿՌՀ-ների նմանօրինակը հանդիսացող «T-300 KASIRGA» համալիրների արտադրությունը՝ 250 մլն դոլար ընդհանուր բյուջեով: 1998 թ. արդեն սկսվեց դրանց մատակարարումը ցամաքային զորքերին և մատակարարվեց 5 մարտկոց: 2009 թ. թուրքական բանակի սպառազինության մեջ գտնվում էր մոտ 30 միավոր «WS-1A/B» (KASIRGA) ՀԿՌՀ³²⁶: Ի դեպ, 2010 թ. ստորագրված պայմանագրի հիման վրա Թուրքիան 2013 թ. ընթացքում Ադրբեջանին է մատակարարել շուրջ 244 մլն դոլար ընդհանուր արժողությամբ «T-300» ՀԿՌՀ-ներ³²⁷:

Հրթիռների արտադրության ոլորտում 1990-ական թթ. կեսերից համագործակցություն սկսեց ծավալվել նաև Իսրայելի ռազմաարդյունաբերական ընկերությունների հետ: Հատկապես 2003 թ. սկսեցին քայլեր ձեռնարկվել Իսրայելի հետ ՀՕՊ հրթիռների համատեղ արտադրության ուղղությամբ: Թուրքական «ROKETSAN» ընկերությունը սկսեց համագործակցել իսրայելական «Rafael» ընկերության հետ՝ «Popeye» հրթիռների համատեղ արտադրության ոլորտում: Թուրքական կողմը հետագայում էլ իր շահագրգռությունն էր հայտնում Իսրայելի ավիացիոն արդյունաբերության հետ համատեղ միջին հեռահարության «օդ-երկիր» հրթիռների, ինչպես նաև «Arrow 2» հակաբալիստիկ հրթիռային համալիրների (ATBMs) և «AGM-142

³²⁶ Տես՝ Turkish Surface to Surface Rocket and Missile Systems – II, Cont. by Arda Mevlutoglu, July 28, 2008,

http://www.acig.info/CMS/index2.php?option=com_content&do_pdf=1&id=191.

³²⁷ Տես՝ Azərbaycan'a Uzun menzilli roket sistemi ihraç edildi, <http://www.roketsan.com.tr/wp-content/uploads/2013/02/1.pdf>.

Popeye 2» «օդ-երկիր» միջին հեռահարության հրթիռների համատեղ արտադրության վերաբերյալ³²⁸:

2002 թ. հունվարի 14-ին թուրքական «Milliyet» թերթը հրապարակել էր մի հոդված, որում նշվում էր, որ Թուրքիայում արտադրված առաջին բալիստիկ հրթիռի փորձարկումն անցել է հաջող: Թերթի տեղեկատվության համաձայն՝ «J missile» կոչվող հրթիռը չինական տեխնոլոգիաների հիման վրա թուրքական «ROKETSAN» ընկերության կողմից նման առաջին արտադրանքն էր: Դրա առաջին փորձնական արձակումը կատարվել է 2001 թ. դեկտեմբերին՝ Ստամբուլի մերձակա ավազանում շրջակայքում: Ըստ թերթի հաղորդման՝ փորձարկված այդ հրթիռը հանդիսացել է չինական «M-7» հրթիռի կառավարման և ուղղորդման համակարգով ավելի կատարելագործված նախատիպը՝ 150 կմ գործողության շառավղով³²⁹: Ամենյան հավանականությամբ, այդ հրթիռը «YILDIRIM» անվանումն ստացած հրթիռն է: 1990-ականների կեսերից թուրք-չինական համագործակցության արդյունքում ստացված տեխնոլոգիաների և թուրքական «ROKETSAN» և չինական «CASIC», «CPMIEC» ընկերությունների միջև իրականացված համագործակցության շնորհիվ թուրքական արտադրության «YILDIRIM J-600T» անվանումն ստացած բալիստիկ հրթիռի փորձարկումները Թուրքիայում 2002 թ. Հաջողությամբ անցան³³⁰: Դրա հեռահարությունն, ըստ թուրքական տվյալների, հասնում է մինչև 250 կմ: Այն Թուրքիայի ՑՈւ-ի սպառազինության մեջ գտնվող ամենամեծ հեռահարության հրթիռային

³²⁸ Տե՛ս Eugene Kogan, Cooperation in the Israeli-Turkish Defence Industry; Conflict Studies Research Centre; Middle East Series 05/43, [http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05\(43\)-EK](http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05(43)-EK), p. 10-11. Isil Kazan, Turkey Between National and Theatre Missile Defense, Bulletin No. 25-Herbst 2001, <http://www.hsfg.de/abm/bulletin/pdfs/kazan1.pdf>, p. 4.

³²⁹ Տե՛ս С. Сардановский, Аспекты политической безопасности Черноморья. <http://www.bsarg.crimeainfo.com/03-Sardanovsky.rtf>.

³³⁰ Տե՛ս Project J (Yildirim, J-600T), Offensive weapons, <http://articles.janes.com/articles/Janes-Strategic-Weapon-Systems/Project-J-Yildirim-J-600T-Turkey.html>, October 27, 2011.

համալիրն էր հանդիսանում³³¹: Ըստ թուրք փորձագետների հրապարակած տվյալների՝ 2008 թ. դրությամբ դրանց թիվը թուրքական բանակում եղել է 36 միավոր³³²: Հարկ է նշել, որ որոշ մասնագետներ կասկածի տակ են դնում նման բնութագրերի հավաստիությունը: Մինչև 2007 թ. այդ նախագծի մասին գրեթե հստակ տեղեկատվություն չկար, միայն այդ նույն թվականին տեղի ունեցած շքերթի ժամանակ պարզ դարձավ, որ այդ նույն «J missile» անվանումը կրող հրթիռը հանդիսանում է մարտավարական «YILDIRIM» հրթիռային համալիրի կատարելագործված տարբերակը: Չնայած հիշյալ համալիրի մասին չկան լիարժեք տեղեկություններ, հայտնի է, որ «ROKETSAN» ընկերությունն աշխատանքներ էր իրականացնում դրանց կատարելագործման ուղղությամբ³³³:

Թուրքիայի ռազմաարդյունաբերական մի քանի ընկերություններ՝ «ROKETSAN», «ASELSAN» ու «MKEK», որոնք մասնագիտացված են ռազմական տեխնիկայի, սպառազինության ու տարբեր զինատեսակների արտադրության ոլորտում իրականացնում էին նաև արտադրական ծրագրեր հրթիռային տեխնոլոգիաների, զենիթահրթիռային համալիրների ու հրետանային համակարգերի գնագավառում:

Թուրքական «MKEK» ընկերությունը դեռևս 1990-ական թթ.-ից իրականացնում է Թուրքիայի ՑՈւ-ի կարիքների համար «T-155 Panter» հրետանային համակարգի նախագծման ու մշակման աշխատանքները, և առաջին խմբաքանակը՝ 18 միավոր, արդեն բանակին հանձնեց 2002 թ. սկզբներին: Ըստ «Jane's» բրիտանական հեղինակավոր վերլուծական կազմակերպության՝ նախագծային ու

³³¹ Sku` Operasyonda Yeni Füzeler de Denendi, <http://www.etikhaber.com>, 17.12.2007; 'Turk fuzeleri Yunanistan'ı vurabilir!', <http://www.ajansege.com>, 15.07.2008.

³³² Sku` Ali Kulebi, Defense Concept of Turkey is Changing, April 2008, <http://www.eurasiacritic.com/articles/defence-concept-turkey-changing>.

³³³ Sku` Arda Mevlutoğlu, Turkish Surface to Surface Rocket and Missile Systems – III, Air Combat Information Group (ACIG); http://s188567700.online.de/CMS/index.php?option=com_content&task=view&id=192&Itemid=47, 21.07.2008.

արտադրական աշխատանքներն, ամենայն հավանականությամբ, իրականացվել են այլ երկրների տեխնոլոգիական աջակցությամբ: Նախքան այդ, Թուրքիայում իրականացվում էին ամերիկյան «M44» և «M52» համակարգերի արդիականացման լայնածավալ աշխատանքներ³³⁴:

«MKEK» ընկերության կողմից իրականացվում է նաև «T-155 FIRTINA» հրետանային համալիրների³³⁵ արտադրությունը: 2011 թ. դեկտեմբերի դրությամբ ընկերությունը ՋՈւ-ին մատակարարել էր 197 հրետանային համալիր ³³⁶: Թուրքիայի կողմից Ադրբեջանին «MKEK» ընկերության արտադրության «T-155» հրետանային համալիրների վաճառքի վերաբերյալ պայմանագիր ստորագրվեց 2011 թ., սակայն արտադրական խոչընդոտների պատճառով դրանց մակատակարումը հետաձգվեց: 36 միավոր համալիրների մատարակարումը Թուրքիան նախատեսում է սկսել 2014 թ.³³⁷:

Հրթիռային սպառազինության արտադրության ոլորտում մասնագիտացած «ROKETSAN» ընկերությունն իր գործունեությունն սկսեց Եվրոպական կոնսորցիումի համար «Stinger» ՉՀՀ-ների «FIM-92» հրթիռների շարժիչների արտադրությամբ³³⁸: Այդ ընկերությանն էր պատկանում փոքր հեռահարության հրթիռների, ինչպես նաև

³³⁴ Տես՝ Jane's տեղեկատվա-վերլուծական խմբի կայք՝ <http://www.janes.com/articles/Janes-Armour-and-Artillery/155-mm-52-calibre-Panther-howitzer-Turkey.html>.

³³⁵ Այս համալիրներն առաջին անգամ մարտական կիրառում անցան 2012 թ. հոկտեմբերին, երբ սահմանային միջադեպի պատճառով թուրքական ՋՈւ-ը հրետակոծեցին Սիրիայի հյուսիսային սահմանային հատվածները: Տես՝ Suriye'yi Türk Firtina'sı vurdu, Sabah, 04.10.2012.

³³⁶ Makina ve Kimya Endüstrisi Kurum Genel Müdürlüğü 2011 yılı Faaliyet Raporu, s. 29, http://www.mkek.gov.tr/Icerikler/_5Rf4T_m.pdf.

³³⁷ В 2014 году начнутся поставки Т-155 «Firtina», <http://palhaber.az/news/azerbaycan/general-politics/20131209124628.html>.

³³⁸ Ընկերությունը հիմնադրվել է 1988 թ. և հիմնականում գործում է հրթիռային համալիրների, ինչպես նաև առանձին բաղադրամասերի նախագծման ու արտադրության ոլորտում: Ընկերության բաժնետերերն են Թուրքիայի ՋՈՒ գարգացման հիմնադրամբ, «ASELSAN» և «MKEK» ռազմաարդյունաբերական ընկերությունները: Տես՝ «Roketsan» ընկերության կայք՝ <http://www.roketsan.com.tr>:

հրթիռների տարբեր բաղադրիչների՝ վեկտորային կառավարման մասերի, մարտագլխիկների, կառավարման համակարգերի արտադրությունը, ինչպես նաև ՌՕՈւ-ի համար «RAPIER Mk-2» ՋՀՀ-ների հրթիռների արտադրությունն ու արդիականացումը: Ընկերությունն աշխատանքներ էր իրականացնում Թուրքիայի ՋՈւ-ի համար մեծ հեռահարության ՀՕՊ համալիրների ստեղծման համար: Հակատանկային հրթիռների ծրագրի շրջանակներում ընկերությունը թուրքական բանակին տրամադրեց սեփական նախագծման «T-122 MBRL» և «T-107 MBRL» ՀԿՌՀ, որոնց ընդհանուր թիվը 2009 թ. դրությամբ թուրքական բանակի սպառազինության մեջ կազմում էր շուրջ 90 միավոր³³⁹:

«ROKETSAN» թուրքական ընկերության տնօրեն Հ. Բայսաքը 2005 թ. վերջին հայտարարեց, որ տարբեր տեսակի հեռահար գործողության հրթիռների արտադրության համար ընկերությունն ունի բոլոր անհրաժեշտ մարդկային, գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքները:

2009 թ. փետրվարի 22-26-ը ԱՄԷ-ում անցկացված ռազմարդյունաբերական միջազգային ցուցահանդեսին մասնակցող «ROKETSAN» ընկերությունը 90 մլն դոլար արժողության պայմանագիր ստորագրեց ԱՄԷ-ի «Ալ-Ջաբեր» ընկերության հետ՝ հրթիռային համակարգերի արտադրության վերաբերյալ, որոնք ՋՈւ-ին պետք է հանձնվեին 2010 թ.: Համակարգի հիմնական մասն արտադրվելու էր Թուրքիայում, իսկ որոշ բաղադրամասեր՝ ԱՄԷ-ում: «ROKETSAN» ընկերությունը պատրաստվում էր հրթիռների արտադրության վերաբերյալ պայմանագիր ստորագրել նաև արաբական «BURKAN» ռազմարդյունաբերական ընկերության հետ³⁴⁰:

«ROKETSAN» ընկերությունը, 2009 թ. ստորագրված պայմանագրի համաձայն, որպես ենթակապալառու մասնակցելու էր «Raytheon» ընկերության կողմից ԱՄԷ-ի համար «GEM-T» հրթիռները գործողության մեջ դնող համակարգերի արտադրության ու

³³⁹ Տես՝ ընկեր կայք՝ <http://www.roketsan.com.tr/122eng.html>.

³⁴⁰ Տես՝ Hürriyet, 23.02.2009.

հավաքման գործընթացին, որն իրականացվելու էր ընկերության Անկարայի գործարանում: Փաստորեն, «ROKETSAN» ընկերությունը, հանդիսանալով «Raytheon»-ի չՕՊ նախագծերի խոշորագույն ենթակապալառուներից, համարվում է որպես տարբեր բաղադրամասերի արտադրության ու մատակարարման խոշորագույն կենտրոն³⁴¹:

«ROKETSAN» ընկերությունը վերջին տարիներին ստանձնեց փոքր և միջին հեռահարության հակատանկային հրթիռների նախագծման ու արտադրության պարտավորությունը, որ առաջադրվել էր Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում: Փոքր հեռահարության հրթիռները նախատեսված են մարտական մեքենաների վրա, իսկ միջին հեռահարության հրթիռները՝ արտադրության մեջ գտնվող «T-129 ATAK» հարվածային ուղղաթիռների վրա տեղադրվելու համար³⁴²:

Թուրքական ՁԼՄ-ների համաձայն՝ 2008 թ. դրությամբ Թուրքիայում աշխատանքներ էին ընթանում 1000 կմ հեռահարության բալիստիկ հրթիռների նախագծման ու արտադրության ուղղությամբ, որոնց արտադրությունը սկսվելու էր հետագա տարիներին: Հրթիռային նախագծերին ի պաշտոնե լավ ծանոթ թուրքական պահեստագործի գեներալ Ա. Քուլօղլուի համոզմամբ՝ չնայած, որ Թուրքիան որոշակիորեն տիրապետում էր հրթիռային տեխնոլոգիաներին և կարող էր ինքնուրույն իրականացնել աշխատանքները, այնուամենայնիվ, բարդություններ էին առկա հեռահար հրթիռների արտադրության ոլորտում: Ըստ նրա՝ ավելի իրատեսական էր համարվում մինչև 600 կմ հեռահարության հրթիռների արտադրու-

³⁴¹ Տես՝ Raytheon Names Roketsan Key Supplier for Patriot Missile Assembly, <http://raytheon.mediaroom.com/index.php?s=43&item=1254&pagetemplate=release>, Raytheon Picks Turkish Partner for Patriot Program, <http://www.defensenews.com>, 08.05.2009.

³⁴² Տես՝ Hürriyet, 07.05.2008;

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20080505.aspx>.

թյունը, որի ուղղությամբ, ըստ նրա, տարվում էին հստակ աշխատանքներ³⁴³:

Թուրքիայում մեծ հեռահարության հրթիռների արտադրությունը գտնվում է երկրի բարձրագույն իշխանության ուշադրության կենտրոնում: Հատկանշական է այն, որ Թուրքիան որոշակի խանդով է վերաբերում այդ ոլորտում Իրանի հաջողություններին: 2011 թ. դեկտեմբերին կայացած Գիտության և տեխնոլոգիայի բարձրագույն խորհրդի ժողովի ընթացքում վարչապետ Էրդողանը, օրինակ բերելով իրանական հրթիռների հեռահարությունը, անթույլատրելի էր համարել թուրքական կողմի հապաղումն այդ հարցում և բարձրաձայնել տեղական միջոցներով դրանց արտադրության անհրաժեշտության մասին³⁴⁴:

Թուրքիայի ռազմական արդյունաբերության ոլորտում և ԶՈՒ-ի արդիականացման ռազմավարության շրջանակներում կարևորություն էր տրված դեկավարման ու վերահսկողության համակարգերի, էլեկտրոնային հետախուզության ու ռազմական կապի միջոցների արտադրությանն ու գորատեսակներում դրանց ներդրմանը: Թուրքական ընկերությունները ակտիվ աշխատանքներ էին տանում ԶՈՒ-ում կապի ու տեղեկատվական, հրամանատարական հսկողության նորագույն համակարգերի ներդրման ուղղությամբ, ինչը բանակի հրամանատարության կողմից դիտվում էր որպես առաջնահերթ խնդիրներից մեկը: Բացի Թուրքիայի ԶՈՒ-ի կարիք-

³⁴³ Türkiye 1000 kilometrelik füzeler üretecek, <http://www.haberturk.com>, 2008-09-03. 2012 թ. սկզբին արդեն թուրքական լրատվամիջոցները հաղորդեցին Թուրքիայում արտադրված 300 կմ հեռահարության հրթիռի հաջող փորձարկման մասին: Ըստ «TÜBITAK»-ի տնօրեն Յ. Ալթունբաշաքի՝ հրթիռներն արտադրվել են «TÜBITAK-SAGE» ռազմական հետազոտությունների ինստիտուտի շրջանակում իրականացված աշխատանքների շրջանակում և հաջողությամբ անցել փորձարկումները: Նախատեսվում է դրանց հեռահարությունը հասցնել 500 կմ, իսկ 2014 թ. արտադրել 2500 կմ հեռահարության հրթիռներ: Sbu՝ 2.500 kilometre menzilli füze 2014'te hazır, <http://www.stargazete.com/politika/yerli-fuzede-hedef-2500-kilometre-haber-415422.htm>, 14.01.2012:

³⁴⁴ Sbu՝ Türk füzesi: hedef menzil 2500 km, Akşam, 29.12.2011, <http://www.aksam.com.tr/turk-fuzesi-hedef-menzil-2500-km--88868h.html>.

ների ապահովմանն ուղղված ծրագրերից, հիշյալ ընկերությունները տարբեր երկրների հետ ստորագրված պայմանագրերի շրջանակներում իրականացնում էին նրանց ՋՈւ-ի կապի ու տեղեկատվական համակարգերի արդիականացման աշխատանքներ ու վաճառք:

Այդ ոլորտում խոշորագույնը համարվող «ASELSAN» ընկերության գործունեության հիմնական նպատակը ՋՈւ-ի ու անվտանգության մարմինների համար կապի և էլեկտրոնային սարքավորումների տեղական արտադրությունն էր: Ընկերությունը նախագծային ու արտադրական ծրագրեր էր իրականացնում հետևյալ ոլորտներում. ռազմական և քաղաքացիական կապի միջոցներ, էլեկտրոնային պայքարի համակարգեր, ՌՏԿ-ներ, սպառազինության համակարգեր, կրակի կառավարման ավտոմատ, հրամանատարական հսկողության ու հետախուզության համակարգեր, էլեկտրասուպրիկական սարքավորումներ, կառավարման և նավիգացիայի, ավիոնիկայի համակարգեր³⁴⁵:

Տեղեկատվական համակարգերի ու ռազմական կապի միջոցների ծրագրի շրջանակներում ընկերությունը ՋՈւ-ին է հանձնել սեփական արտադրության տարբեր դասի ռազմական ռադիոընդունիչներ, ներքին տեղեկատվական հաղորդիչներ: Ընկերության արտադրացանկին է պատկանում «Մարտավարական դաշտային պաշտպանության համակարգը» (TASMUS), որն իրականացնում է ռազմական գործողությունների հսկողությունն ու կառավարումը կենտրոնի կողմից և օպերատիվ տեղեկատվություն ապահովում հրամանատարական կետի ու այլ միավորների միջև: Այդ համակարգը Թուրքիայի ՋՈւ-ում ներդրվել է 2000 թ., և ընկերությունը

³⁴⁵ Ընկերությունը ստեղծվել է 1975 թ. և հանդիսանում է Թուրքիայի ՋՈւ-ի գարգացման հիմնադրամի կազմակերպություն: «ASELSAN» ընկերությունը 1984 թ. սկսած մշակում և արտադրում էր հատուկ սարքավորումներ ու համակարգեր, ռադիոէլեկտրոնային պայքարի ու հետախուզության ոլորտում: Լուրջ հաջողություններ է գրանցել նշված ոլորտներում, ինչպես նաև ցամաքային ու օդային համակարգերի մշակումների ու արտադրության ոլորտում, որի շրջանակներում շարունակաբար իրականացվում են նախագծային նոր աշխատանքներ: Տես՝ «ASELSAN» ընկերության պաշտոնական կայք՝ <http://www.aselsan.com.tr>.

աշխատանքներ էր իրականացնում բանակի համար միացյալ օպերատիվ տեղեկատվական դաշտի ստեղծման ուղղությամբ³⁴⁶: Ընկերության կողմից նախատեսվում էր 2009 թ. ընթացքում ԶՈւ-ին հանձնել ավելի կատարելագործված («TASMUS-G») համակարգը, ինչը կոչված էր ապահովելու ցանցակենտրոն պատերազմների ժամանակակից տեսությունից բխող բանակի միացյալ տեղեկատվական դաշտը³⁴⁷: Ընկերության կողմից ԶՈւ-ում ներդրված «X-Band» արբանյակային կոմունիկացիոն համակարգը հանդիսանում է թուրքական բանակում ներդրված առաջին ռազմական արբանյակային կապի ցանցը, որը ԶՈւ-ի համար ապահովում է արագ կապի միջավայր՝ «TURKSAT-2A» արբանյակի միջոցով³⁴⁸: 2013 թ. դեկտեմբերին ՊԱԳՎ-ի և «ASELSAN» ընկերության միջև ստորագրվեց Թուրքիայի ԶՈւ-ի արբանյակային տեղեկատվական համակարգի նախագծի շրջանակներում «X-Band» արբանյակային տեղեկատվական համակարգի նախագծի վերաբերյալ պայմանագիր՝ 167 մլն դոլար ընդհանուր արժեքով³⁴⁹:

Թուրքական ԶՈւ-ում տարբեր տարիների ներդրվել են ընկերության կողմից արտադրված շարժական տեղեկատվական ռադիոռութիչ և տեղորոշիչ համակարգեր, որոնք իրականացնում են արագ և զգայուն էլեկտրոնային հետախուզություն³⁵⁰:

Ընկերությունը, ներքին անվտանգության համատեքստում, իրականացրել է նաև Ժանդարմերիայի միասնական կապի համակարգի (JEMUS) ծրագիրը: Բացի դրանից, ընկերությունն աշխատանքներ էր իրականացնում հակաօդային ռադիոտեղորոշման կա-

³⁴⁶ Տե՛ս՝ <http://www.aselsan.com.tr>.

³⁴⁷ Տե՛ս՝ Yeni Nesil Taktik Saha Muhabere Sistemi (TASMUS-G), ASELSAN, No. 1, Ankara 2009, s. 40-43.

³⁴⁸ Տե՛ս՝ Aselsan: One of the leading company in Global Defence Market, Defence Turkey, Volume 2, Issue 8, 2007, pp. 14-28.

³⁴⁹ Տե՛ս՝ Uydu muhabere sisteminde imzalar tamam, Star, 23.12.2013.

³⁵⁰ Տե՛ս՝ «ASELSAN» ընկերության պաշտոնական կայք՝ <http://www.aselsan.com.tr>:

յանների (այսուհետ՝ ՌՏԿ) ստեղծման ուղղությամբ և արդեն 2009 թ. ԶՈւ-ին այն հանձնեց առաջին թուրքական նախագծման ՌՏԿ-ն³⁵¹:

Ընկերությունը աշխատանքներ է իրականացրել Թուրքիայի ԶՈւ-ի կարիքների համար ՌՏԿ-ների արտադրության ծրագրի ոլորտում, ինչը հաստատվել էր դեռ 1991 թ. հունվարին՝ Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում: Աշխատանքների առաջին փուլում ԶՈւ-ին հանձնվեցին ցամաքային դիտարկումների համար նախատեսված շուրջ 200 ՌՏԿ-ներ «ASKARAD» նախագծի շրջանակներում: «ASKARAD» անվանումն ստացած ՌՏԿ-ները սահմանային դիտարկումների նպատակով կիրառվում են Սալայքիայի, Մակեդոնիայի, Ադրբեջանի ու ՀԿԹՀ-ի ԶՈւ-ում: «ARS-2000» մոդելի Դիտարկման և կրակի կառավարման ՌՏԿ-ն դարձավ թուրքական նախագծման ու արտադրության առաջին արտադրանքն այդ ոլորտում³⁵²:

2008 թ. հունվարից «ASELSAN» ընկերության կառուցվածքային ոլորտում նոր վերակազմավորումներ էին նախատեսված, որի արդյունքում որպես առանձին հետազոտական բաժիններ գործելու էին Պաշտպանական համակարգի տեխնոլոգիաների և ՌՏԿ, էլեկտրոնային պայքարի ու հետախուզության համակարգերի խմբային բաժինները³⁵³:

Ընկերությունը «2112 GSM» կրիպտոմոդուլների (վերձանման) նախագծի շրջանակներում իրականացրել է մշակումներ «GSM» դասի բջջային կրիպտոհեռախոսների նախագծման ոլորտում և 2007 թ. ավարտեց առաջին նախատիպերի արտադրությունը: Հեռախոսները ապահովում են գաղտնի հեռահաղորդակցություն և ապահովված են գաղտնալուծման: Նախատեսվածի համաձայն՝ խմբաքանակային արտադրությունն սկսվելու էր 2008 թ. և կիրառվելու էր անվտանգության ու պետական համակարգի բարձրաստիճան պաշ-

³⁵¹ Տես՝ Aselsan hava savunma erken ikaz radarini teslim etti, <http://www.sasad.org.tr/haberler.asp?id=99>, 12.01.2009.

³⁵² Տես՝ Նույն տեղում:

³⁵³ Տես՝ Aselsan'da yeniden yapılanma başlıyor, <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20071105.aspx>.

տոնյաների կողմից: Նախատեսվում էր Թուրքիայի կարիքների համար արտադրել 10 հզ. միավոր հեռախոս³⁵⁴:

2007 թ. մայիսին ՊՆ-ի ու «ASELSAN» ընկերության միջև ստորագրված պայմանագրի շրջանակներում ընկերությունը ստանձնեց Թուրքիայի ԶՈւ-ի համար ռադիոհամակարգերի մատակարարման գործընթացը: 18 մլն դոլար արժողության այդ ծրագիրը նախատեսվում էր ավարտին հասցնել 2010 թ.: Վերոնշյալ համակարգերը կիրառվելու էին ՑՈւ-ում և ապահովելու փոքր ստորաբաժանումների ներսում կապն ու կառավարումը³⁵⁵:

2007 թ. հունիսին ստորագրված մեկ այլ պայմանագրով «ASELSAN» ընկերությունը Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության (ՀԿԹՀ) անվտանգության մարմիններին էր մատակարարելու սեփական արտադրության ռադիոընդունիչներ³⁵⁶: Մինչև նույն ժամանակ, ընկերությունը 2006 թ. հաղթող ճանաչվեց Ուրուգվայի ԶՈւ-ի կարիքների համար ռադիոէլեկտրոնային պայքարի ու ռադիոկապի միջոցների ձեռքբերման համար հայտարարված միջազգային մրցություն: 3 մլն դոլար արժողության պայմանագրի համաձայն՝ ընկերությունն այդ երկրի բանակին էր մատակարարելու ռադիոհաճախականությունների խափանման շարժական կայաններ ու ներքին հաղորդակցման թվային ռադիոհամակարգեր³⁵⁷:

Խոստուն փաստ է այն, որ 2004-2006 թթ. ընթացքում «ASELSAN» ընկերության կողմից իրականացված միայն հետազոտական-փորձարարական ստորակտորական աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 250 մլն դոլար³⁵⁸:

Ընկերության հաջողված ծրագրերից է համարվում հակահարեկչական գործողությունների, ճգնաժամային իրավիճակների ու հետախուզական դիտարկման ոլորտում կիրառվող «Izci» ռոբոտ համակարգը, որն ստեղծվել է տեխնոլոգիական մշակումների ծրա-

³⁵⁴ Տե՛ս՝ Aselsan, TSK için kriptolu telefon üretecek, Hürriyet, 27.10.2007.

³⁵⁵ Տե՛ս՝ TSK'ya yerli mali telsiz, Hürriyet, 09.05.2007.

³⁵⁶ Տե՛ս՝ Aselsan, N. 2, Ağustos 2007, s. 25.

³⁵⁷ Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 26:

³⁵⁸ Տե՛ս՝ Aselsan, N. 2, Ağustos 2007, s. 28.

գրի շրջանակում³⁵⁹: Վերոնշյալ համակարգի հետ միաժամանակ ընկերությունն աշխատանքներ էր իրականացնում նաև վերջրյա և ստորջրյա նմանատիպ միջոցների, որոնք ստացան «Denizci» անվանումը, արտադրության ուղղությամբ, որոնք կիրառվելու են կարևորագույն նավահանգիստների, ռազմաբազաների ու հանգույցների հսկողության նպատակով³⁶⁰:

Թուրքական մեկ այլ՝ «HAVELSAN» ընկերությունը, 2006 թ. մայիսին Թուրքիայի ՊՆ-ի հետ ստորագրած պայմանագրով, ստանձնեց Թուրքիայի ՑՈւ-ի համար միասնական հրամանատարական հսկողության («C2») տեղեկատվական համակարգերի ենթակառուցվածքի («KKBSAY») զարգացման նախագիծը, որով գորքերում պետք է ամբողջովին ներդրվեր միասնական կառավարման ու տեղեկատվական համակարգ³⁶¹: Նախագիծը վերջանականապես ավարտվեց 2008 թ., և այդ համակարգը ներդրվեց ՑՈւ-ում, ինչն ապահովում է ՑՈւ-ին պատկանող ողջ տեղեկատվական համակարգերի միջև տվյալների փոխանցման միասնական դաշտ³⁶²:

«Koc Savunma» թուրքական ընկերությունը 2008 թ. ավարտեց ԶՈւ-ի Տեղեկատվական համակարգի (TBS) նախագծի աշխատանքները, և այն ներդրվեց ԳՇ-ի համակարգում: Համակարգն ապահովում է ԶՈւ ԳՇ-ի և գորքերի տեսակների հրամանատարությունների, Ժամդարմերիայի ու Առափնյա անվտանգության հրամանատարությունների, ՊՆ-ի միջև մարտավարական, թիկունքային, կադրային ու տեղեկատվական օպերատիվ տվյալների ամբողջական փոխանցումը³⁶³:

³⁵⁹ Sku` Aselsan: One of the leading company in Global Defence Market / Interview with Mr. Cengiz Ergeneman, Defence Turkey, Volume 2, Issue 8, 2007, pp. 14-28.

³⁶⁰ Sku` Aselsan'dan insansiz sistemleri, ASELSAN, N. 1, 2009, s. 26.

³⁶¹ Sku` Havelsan, 2007 Faaliyet raporu, <http://www.havelsan.com.tr/YatirimciIlliskileri/FaaliyetRapor.aspx>.

³⁶² Sku` <http://www.havelsan.com.tr/SisCoz/Projeler.aspx>.

³⁶³ Sku` TSK` dan Büyük Bilişim Projesi, <http://www.trt.gov.tr>, 2008-01-31; <http://www.kocsavunma.com/guncel.html>.

2009 թ. ռազմական տեղեկատվական համակարգերի ոլորտի ամերիկյան «Harris Corporation» ընկերությունը առաջիկայում իրականացնելու է ներդրումներ թուրքական ռազմաարդյունաբերական ոլորտում: Ըստ պայմանավորվածության՝ թուրքական կապի և ռազմական համակարգերի «Atel Telekomunikasyon» ընկերության հետ համատեղ, նախնական 2 մլն դոլար ներդրումներով, իրականացվելու են համատեղ արտադրական ծրագրեր, որոնք նախատեսվում են մատակարարել Թուրքիային ու մի շարք մերձավորարևելյան երկրների: «Atel Telekomunikasyon» ընկերությունը ստեղծվել է 1997 թ. Անկարայում, որը ներկայում երկրի տարածքում ունի 36 մասնաճյուղեր³⁶⁴:

Տեղեկատվական, կապի ու հրամանատարական հսկման համակարգերի ոլորտում սկսեցին գործունեություն ծավալել նաև նորաբաց մի շարք այլ ընկերություններ («Milsoft», «Meteksan», «ESDAS», «Gate Elektronik», «Vestel»), որոնք տարբեր նախագծերի շրջանակներում իրականացնում էին տեխնոլոգիական մշակումներ ու արտադրություն³⁶⁵:

Վերոնշյալը բավականին հետաքրքիր հետևությունների է բերում, քանի որ տեղեկատվական նման բարդ ոլորտում հաջողությունների արձանագրումը մեծ առաջընթաց կարելի է համարել ռազմաարդյունաբերության ոլորտում սկսնակ համարվող Թուրքիայի նման պետության համար:

Թեթև սպառազինության ոլորտում կարելի է ասել թուրքական ռազմաարդյունաբերությունն ինքնաբավ էր և մեծամասամբ տեղական միջոցներով էր ապահովվում բանակի կարիքները:

2007 թ. ծրագրեր էին մշակվում թուրքական բանակում մինչ օրս կիրառվող շուրջ 500 հզ. միավոր «G3» հետևակային ինքնա-

³⁶⁴ Steu` U.S. Defense Industry Firm To Invest In Turkey, <http://www.turkishpress.com>, 26.04.2009.

³⁶⁵ Վերոնշյալ ընկերությունները գործում են թուրքական կապիտալով և հանդիսանում են Թուրքիայի ռազմաարդյունաբերողների միավորման անդամ: Steu` Թուրքիայի Ռազմաարդյունաբերողների միավորման պաշտոնական կայք՝ <http://www.sasad.org.tr>:

ձիգների արդիականացման ու նորագույններով դրանց փոխարինման ուղղությամբ: Այդ առնչությամբ առաջարկ էր ներկայացվել «MKEK» ընկերությանը, և ուսումնասիրվում էին գերմանական հավաստագրի հիման վրա արտադրված «HK-33» մոդելները, որոնք ԶՈւ-ին հանձնվեցին ընդամենը 80 հզ. օրինակ և հետագա արտադրությունը նպատակահարմար չգտնվեց: Մեկ այլ առաջարկ ներկայացվեց թուրքական «Sarsılmaz» ընկերության կողմից, որն առաջարկում էր ՆUSO-ի չափանիշներին համապատասխան «M4» մակնիշի հրացաններ³⁶⁶: Ի դեպ, այդ ընկերությունը աշխատանքներ էր իրականացնում սեփական նախագծման դիպուկահար հրացանների արտադրության ոլորտում և համագործակցում ամերիկյան «Cold LC» ընկերության հետ: Արտադրանքի շուրջ 65 %-ն արտահանվում էր ավելի քան 50 երկրներ, արտահանման ամենամեծ բաժինը իրականացվում էր ԱՄՆ-ին³⁶⁷:

«MKEK» ընկերությունը 2009 թ. ստանձնեց ԶՈւ-ի կարիքներն ապահովելու նպատակով հրաձգային զինատեսակների ու ինքնաձիգների արտադրությունը՝ նախագծի իրականացման վերաբերյալ պայմանագիր ստորագրելով ՊԱԳՎ-ի հետ: Արտադրական գործընթացում որպես ենթակապալառու մասնակցություն էր ունենալու նաև թուրքական «KALEKALIP» ընկերությունը³⁶⁸:

«MKEK» ընկերությունը թուրքական «Yüksel Holding»-ի հետ համատեղ նախագծել է հեռակառավարվող ռոբոտ զենքի մի համակարգ, որի մասին տեղեկատվություն էր տրամադրվել 2008 թ. Մալայզիայում անցկացված ռազմաարդյունաբերական միջազգային ցուցահանդեսի ժամանակ: Առանց մարդու, հեռակառավարվող մեխանիկական կրակային համակարգը («İMTAKS») նախատեսված է հիմնականում հակահարձակական գործողությունների, զինվորա-

³⁶⁶ SStu` G3 piyade tüfeğinin yerine Sarsılmaz"ın önerisi M4, Star, 05.11.2007.

³⁶⁷ SStu` Sarsılmaz` a ABD` den ortak geldi, Haber 7, 26.09.2005; Yeni Şafak, 02.12.2007.

³⁶⁸ SStu` Makina ve Kimya Endüstrisi Genel Müdürlüğü, 2008 yılı Faaliyet Raporu, s. 16, <http://www.mkek.gov.tr/Icerikler/KFrQEJW.pdf>.

կան ուղեկալների պաշտպանության ու անմատչելի վայրերում մարտական գործողությունների իրականացման համար³⁶⁹:

Թուրքիայի ՊՆ-ի, Անվտանգության գլխավոր վարչության ու Ժանդարմերիայի հրամանատարության կողմից 2008 թ. «MKEK» ընկերության ստացած պատվերների ընդհանուր գումարը կազմել է շուրջ 340 մլն ԹԼ: Ընկերությունը 2008 թ. վերջին արդեն վերոնշյալ գերատեսչություններին է հանձնել պատվերների 66 %-ը: Ըստ նախնական պայմանագրերի ու նախագծերի՝ ներքին պատվերների ընդհանուր գումարը 2009 թ. կազմելու էր ավելի քան 400 մլն ԹԼ: Ընկերության 2008 թ. արտահանման ծավալները կազմել են 33 մլն 586 հզ. դոլար: 2008 թ. Ընկերությունը տարբեր դասի սպառազինություն է արտահանել Ադրբեջան, Վրաստան, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Հունաստան, Ֆինլանդիա, Իսրայել, Բուլղարիա, Ռումինիա, ԱՄԷ, Հորդանան, Եգիպտոս, Թունիս, Բրազիլիա, Կոլումբիա, Վենեսուելա, Ֆիլիպիններ, Մալայզիա, Պակիստան³⁷⁰: Ըստ Թուրքիայի ՊՆ-ի տվյալների՝ 2009 թ. հոկտեմբերի դրությամբ «MKEK» ընկերության արտահանման ծավալները աննախադեպ աճ գրանցեցին՝ հասնելով 92.5 մլն դոլարի³⁷¹: Ընկերության գլխավոր տնօրեն ՈԻ. Սիփահիօղլուն 2009 թ. վերջերին հայտարարեց, որ առաջիկայում ընկերությունը շուրջ 300 մլն ԹԼ է ներդնելու, որի շրջանակներում իրականացվելու են Թուրքիայի ԶՈՒ-ի համար նոր սպառազինության արտադրության տարբեր նախագծեր: Արտադրության ու վաճառքի ծավալներով 2008 թ. ընկերությունը թուրքական արդյունաբերական 500 խոշոր հաստատությունների մեջ գրավել է 98-րդ տեղը³⁷²:

Թուրքական «Zaman» պարբերականի համաձայն՝ 2010 թ. MKEK ընկերությունը թուրքական բանակին և անվտանգության մարմիններին է մատակարարել 246 մլն ԹԼ ընդհանուր արժողու-

³⁶⁹ Sbu` MKE'den Mehmetcik'e yeni robot silah, Zaman, 23.04.2008.

³⁷⁰ Sbu` Makina ve Kimya Endüstrisi Genel Müdürlüğü, 2008 yılı Faaliyet Raporu, s. 13.

³⁷¹ Sbu` Gönül: En önemli tehdit terör örgütü, <http://www.haber7.com>, 10.11.2009.

³⁷² Sbu` MKEK'den süper silahlar geliyor, <http://www.haber3.com>, 25.10.2009.

թյան ռազմական նշանակության արտադրանք, իսկ 2011 թ. մատակարարվելու էր ևս 134 մլն-ի արտադրանք: Սպասվում էր, որ այդ տարի ընկերության պատվերները կկազմեն 450 մլն ԹԼ: 2010 թ. ընկերությունն իր արտադրանքը վաճառել է 27 երկրների, այդ թվում՝ Ադրբեջանին, Սաուդյան Արաբիային, Հորդանանին, Յեմենին, Թունիսին, ՀԿԹՀ-ին³⁷³:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ հատկապես 2000-ական թթ. առաջին տասնամյակում Թուրքիայի ՑՈւ-ի սպառազինության ու տեխնիկայի արդիականացման գործում հիմնական դերակատարությունը տրված էր տեղական ռազմաարդյունաբերական համալիրին, որն արդեն իսկ էական դերակատարություն ուներ տեղական միջոցներով ռազմատեխնիկական պահանջարկի հիմնական մասի ապահովման գործում: Չնայած որոշ ոլորտներում առկա տեխնոլոգիական ու այլ խնդիրներին՝ ՑՈւ-ի ռազմատեխնիկական կարիքների մի զգալի մասն ապահովվում էր ազգային ռազմաարդյունաբերության կողմից, ինչը մեծ ձեռքբերում կարող է համարվել:

3.2. Ռազմաօդային ուժերի արդիականացման ծրագրերն ու հակաօդային պաշտպանության զարգացմանն ուղղված քայլերը

ՌՕՈւ-ը ժամանակակից Թուրքիայի ՁՈւ-ի գործառնությունների մեջ առանցքային տեղ են զբաղեցնում: Համալրված լինելով հիմնականում ամերիկյան արտադրության տեխնիկայով և սարքավորումներով՝ ՌՕՈւ-ն իրենց վրա կրում են նաև կիրառության և դերակատարության ամերիկյան հիմնարար սկզբունքները: Իսկ վերջիններիս մոտ ավիացիայի դերակատարությունը միշտ բարձր հիմքերի վրա է գտնվում, որը թուրքական հրամանատարությունը ճիշտ է հասկանում և գնահատում: Պատահական չէ, որ ՁՈւ-ի համալիր

³⁷³ Տե՛ս՝ MKEK, 27 ülkeye silah sattı, karımı 3'e katladı, Zaman, 19.05.2011.

արդիականացման շրջանակում զգալի ներդրումները բաժին են հասնում ռազմական ավիացիային:

ՌՕՈւ-ում իրականացված արդիականացման շրջանակում մեծամասամբ կատարվել են սպառազինման ծրագրեր, մինչդեռ անձնակազմի թվաքանակը 1990-ական թթ. սկզբի համեմատությամբ գրեթե չի փոխվել: Դեռ 1980-ական թթ. վերջի և 1990-ական թթ. սկզբի դրությամբ՝ ՌՕՈւ-ի արդիականացման ծրագրի շրջանակներում նախատեսվում էր թարմացնել օդային ուժերն ու դրանք համարել արդիական սպառազինությամբ³⁷⁴:

Կարելի է փաստել, որ Թուրքիայի օդուժի արդիականացման հիմնական գործընթացն սկսվեց 1980-ական թթ. վերջերից՝ Թուրքիայում ամերիկյան «F-16» ինքնաթիռների արտադրման, հավաքման գործընթացով, որի որոշումը կայացվել էր դեռ 1983 թ.: Թուրքական գործարաններում ամերիկյան ռազմական ինքնաթիռների հավաքման գործընթացը սկսվեց ԱՄՆ-ի աջակցությամբ ու երկկողմ ռազմական պայմանագրերի շրջանակներում, ինչը հնարավորություն էր տալիս ամերիկյան կողմին ավելի շահավետ պայմաններով իրականացնել ինքնաթիռների հավաքումն ու վաճառքը մերձավորարևելյան մի շարք երկրների: Բուն աշխատանքները սկսվել են 1987 թ. «TUSAŞ» ընկերության Անկարայի և «TEI» ընկերության Էսքիշեհիրում գտնվող շարժիչաշինական գործարաններում, ուր «Peace Onyx 1» նախագծի շրջանակներում մինչև 1999 թ. 4 մլրդ 158 մլն դոլար ընդհանուր արժողությամբ հավաքվել է 278 միավոր ռազմական ինքնաթիռ, որոնք ոչ միայն ապահովել են թուրքական բանակի կարիքները, այլ նաև արտահանվել այլ երկրներ³⁷⁵:

1994 թ. օգոստոսի Թուրքիայի ՌՕՈւ-ի հրամանատարության ³⁷⁶ հաղորդագրության մեջ նշված էր, որ «իր առջև դրված

³⁷⁴ Sbu` Турецкая Республика, справочник, Москва, «Наука», 1990, с. 90-91.

³⁷⁵ Sbu` F-16'lar 20 yıldır Türk semalarında,

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20071014.aspx>.

³⁷⁶ Թուրքիայի ՌՕՈւ-ի հիմնադրման տարեթիվն է համարվում 1911 թ., երբ Օսմանյան կայսրության պատերազմի նախարարության կառուցվածքում ստեղծվում է «Օդային հանձնաժողովը», որը, փաստորեն, Օսմանյան բանակի առաջին պաշտոն-

խնդիրները լուծելու և առաքելությունն իրականացնելու համար Թուրքիայի ՌՕՈւ-ը պետք է միջտ զգոնության բարձր մակարդակի վրա լինեն, նոր հե-ռանկարներ փնտրեն և վերացվեն թերությունները: Այդ իսկ նպատակով շարունակվել և շարունակվում են արդիականացման ծրագրերը»³⁷⁷: Հրամանատարության կողմից հետագա արդիականացման հիմնական ուղղություններն էին սահմանված՝ ժամանակակից ռազմական ինքնաթիռների ձեռքբերումն ու արտադրությունը, առկա ինքնաթիռների արդիականացումը, էլեկտրոնային պայքարի միջոցների կատարելագործումը, օդային հսկողության ու նախազգուշացման, հակաօդային պաշտպանության, կապի ու կառավարման համակարգերի արդիականացումը³⁷⁸:

Թուրքիան իր ՌՕՈւ-ի համար որպես հիմնական միջոց ընտրեց «F-16» ռազմական ինքնաթիռը, որոնցով էլ 1990-ականներին համալրվեց օդուժը: 1994 թ. դեկտեմբերի դրությամբ ՌՕՈւ-ը համալրվել էին շուրջ 160 միավոր «F-16 Block» 30/40 դասի ռազմական ինքնաթիռներով, իսկ 1996 թ. կեսերից նախատեսված էր ևս 80 միավորի մատակարարումները³⁷⁹:

1990 թ. Թուրքիան ԱՄՆ-ից ՔԲԿ-ի դեմ պայքարում կիրառելու նպատակով ձեռք բերեց 5 միավոր «Super Cobra» գերժամանակակից ռազմական ուղղաթիռներ, իսկ 1992-94 թթ. ընթացքում ևս 35 միավոր «Cobra» ուղղաթիռներ, որոնք կիրառվում էին քուրդ զինյալների

նական ռազմաօդային կազմակերպությունն էր: Հանրապետական Թուրքիայի առաջին տարիներին արդեն քայլեր էին ձեռնարկվում ժամանակակից ռազմաօդային ուժերի ստեղծման ուղղությամբ: 1944 թ. որոշում կայացվեց ռազմաօդային տարբեր միավորումները ներառել մեկ միասնական հրամանատարության մեջ և ստեղծվեց Ռազմաօդային ուժերի հրամանատարությունը, որը ԶՈւ-ի կազմում ցամաքային, ռազմածովային ուժերի հետ միասին ինքնուրույն հրամանատարության կարգավիճակ ստացավ: Տես՝ Թուրքիայի ՌՕՈւ-ի հրամանատարության պաշտոնական կայք՝ <http://www.hvkk.tsk.tr/EN/IcerikDetay.aspx?ID=19>:

³⁷⁷ Տես՝ Ed Shaw, The Sky is the Limit: Turkish Air Force Modernization, The DISAM Journal, Spring 1995, p. 17.

³⁷⁸ Տես՝ Նույն տեղում, էջ 17-18:

³⁷⁹ Տես՝ Նույն տեղում, էջ 16-17:

դեմ պայքարում: 1990-ականների առաջին կեսին թուրքական բանակը համարվեց նաև 45 միավոր ամերիկյան «Blackhawk» ռազմական ուղղաթիռներով³⁸⁰: Հետագայում էլ Թուրքիան քայլեր էր ձեռնարկում ամերիկյան «Sikorsky» ընկերությունից 50 միավոր Blackhawk ռազմական և 8 միավոր «Super Stalion» տրանսպորտային ուղղաթիռների ձեռքբերման ուղղությամբ: Գործարքի ընդհանուր գումարը գնահատվում էր 750 մլն դոլար: Թուրքական «Sabah» պարբերականն այդ կապակցությամբ 1999 թ. գրեց, որ այդ գործարքի իրագործման դեպքում Թուրքիան կվերածվի տարածաշրջանում ամենամեծ ուղղաթիռային պարկ ունեցող երկրի և ի վիճակի կլինի մեկ գիշերվա ընթացքում անհրաժեշտ շրջան ուղարկել մոտ 100 հազար զինծառայող³⁸¹: 1999-2002 թթ.՝ թուրքական ՋՈՒ-ը համարվեց 50 միավոր «Black Hawk» ռազմական ուղղաթիռներով³⁸²:

ՌՕՈՒ-ի արդիականացման խոշորագույն նախագծերի իրականացումը սկսվեց հատկապես 2000-ական թթ. կեսերից: Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն 2005 թ. որոշում կայացրեց ուժեղացնել երկրի թիկունքային ենթակառուցվածքները, ինչի համար նախատեսվում էր հետագա 10 տարիների ընթացքում 50 մլրդ դոլարի ներդրումներ կատարել այդ ոլորտում: Այդ ներդրումների շարքում էին ապագայի ռազմական ուղղաթիռներ համարվող «ATAK» կոչված 50 միավոր հարվածային ուղղաթիռների և հատկապես վերջին տարիներին շատ կիրառվող «AWACS» ինքնաթիռների ձեռքբերումը³⁸³: Թուրքիայի կապալառուական ծրագրերում տեղ գտան հետևյալ նախագծերը. ապագայի ռազմական ինքնաթիռների, 50 միավոր հարվածային ուղղաթիռների, ինչպես նաև ՋՈՒ-ի համար 50 միավոր ընդհանուր

³⁸⁰ Տես՝ SIPRI Arms Transfers Database, http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html.

³⁸¹ Տես՝ Վահրամ Պետրոսյան, Թուրքիան և ռազմականացումը, Հայ զինվոր, թիվ 14, 10-17 ապրիլի 1999:

³⁸² Տես՝ SIPRI Arms Transfers Database, http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html.

³⁸³ Տես՝ Akşam, 21.11.2005.

օգտագործման ուղղաթիռների ձեռքբերում: Թուրքիայի ռազմական ոլորտի պատասխանատուները առաջնային էին համարում ՌՕՈւ-ի սպառազինության, միջոցների կատարելագործմանն ու ավելի ժամանակակից տեխնիկայի ձեռքբերման խնդիրները:

Դեռևս 1997 թ. Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն հայտարարել էր բանակի համար 145 միավոր ռազմական, հարվածային-հետախուզական ուղղաթիռների համատեղ արտադրության և ձեռքբերման նախագծի (ATAK) մասին, որի ընդհանուր արժեքը կազմում էր շուրջ 2 մլրդ դոլար: Մրցույթին մասնակցելու հայտեր ներկայացրեցին ամերիկյան Bell Textron ընկերությունն իր «Super Cobra» և ռուսական «Рособоронэкспорт»-ն ու «Камов» գործարանը՝ իսրայելական բորտ նավիգացիոն համակարգով զինված «Ka 50-2» ուղղաթիռներով: Ի դեպ, ռուսական կողմն առաջարկել էր ավելի նպաստավոր պայմաններ՝ այլ երկրներ արտահանման նպատակով Թուրքիայում նման ուղղաթիռների արտադրություն հիմնելու համար: Չնայած առաջարկված նպաստավոր պայմաններին՝ 2004 թ. մայիսին թուրքական կողմը դադարեցրեց մրցույթն առանց հաղթող կողմին սահմանելու³⁸⁴: Ամենայն հավանականությամբ, թուրքական կողմը ենթարկվել է ամերիկյան կողմի ճնշմանը՝ թույլ չտալով ռուսական ռազմաարդյունաբերական ընկերություններին ներգրավել նման խոշոր ռազմական նախագծում:

Ելնելով ամերիկյան ընկերությունների ներդրումների համար Թուրքիայի նպաստավոր պայմաններից՝ Թուրք-ամերիկյան խորհրդի (ATC) վարչական խորհրդի նախագահ Բ. Սկոուքրոֆթը 2005 թ. հոկտեմբերին հայտարարեց, որ ցանկանում են Թուրքիան դարձնել ամերիկյան «Sikorsky» ընկերության ուղղաթիռները տարածաշրջանի երկրներին վաճառելու կենտրոն³⁸⁵: Ամերիկյան ընկերու-

³⁸⁴ Տե՛ս՝ А. Гурьев. О новом вертолетном тендере в Турции. ИИИИБВ, <http://www.iimes.ru/rus/stat/2005/11-03-05.htm>.

³⁸⁵ Տե՛ս՝ Hürriyet, 21.10.2005.

թյունները ամեն գնով փորձում էին ապահովել իրենց մասնակցությունն այդ խոշոր նախագծում:

Ավելի ուշ թուրքական բանակի համար սպառազինության ձեռքբերման առաջնային նախագծերի շարքում ՊԱԳՎ-ն շուրջ 50 ռազմական ուղղաթիռների ձեռքբերման նոր մրցույթ հայտարարեց, որին արդեն մասնակցում էին ռուսական, հարավաֆրիկյան, իտալական և ֆրանս-գերմանական ընկերությունները: Երկար ձգձգումներից հետո ֆրանս-գերմանական համատեղ «EADS Eurocopter» («Tiger»)-ը և ռուսական («Ka-50-2»)-ը դուրս մնացին մրցույթից³⁸⁶: Ի դեպ, հարկ է նշել, որ դեռ 1990-ական թթ. սկզբին Թուրքիան որպես ՆԱՏՕ-ի անդամ առաջիններից ռազմատեխնիկական ոլորտում համագործակցություն հաստատեց Ռուսաստանի հետ՝ Ռուսաստանից ձեռք բերելով «Ми-8», «Ми-17» ռազմական տրանսպորտային ուղղաթիռներ, մարտական մեքենաներ ու այլ սպառազինություն³⁸⁷:

Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլը 2006 թ. օգոստոսին հայտարարեց, որ մարտավարա-հետախուզական և հարվածային ուղղաթիռների նախագծի («ATAK») շուրջ բանակցությունները կշարունակվեն հարավաֆրիկյան «Denel Aviation» ընկերության առաջարկած «Roovalk CSH-2» և իտալական «AgustaWestland» ընկերության «A-1290» Mangusta ուղղաթիռների

³⁸⁶ Sku` Turkey Shortlists 2 Attak Helicopter, <http://www.defenceindustrydaily.com/2006/07/turkey-shortlists-2-attack-helicopters/index.php>.

³⁸⁷ Weapons Transfers and Violations of Laws of War in Turkey, Human Rights Watch Arms Project, USA 1995, pp. 36-37; Sergei Kandaurov, Russian Arms Exports to Greece, Cyprus and Turkey, Moscow Defense Brief, <http://mdb.cast.ru/mdb/2-2001/at/raeget/>. 1994 թ. ապրիլին Թուրքիայի ու Ռուսաստանի միջև ստորագրվեց ռազմատեխնիկական ու ռազմաարդյունաբերական ոլորտներում համագործակցության մասին համաձայնագիր, ըստ որի՝ ռուսական կողմը պետք է աշխատանքներ իրականացնե՞ր թուրքական ԶՈՒ-ի ռազմատեխնիկական մատակարարման ու արդիականացման գործում: Սակայն այդ համաձայնագիրը գործնականում, կարելի է ասել, չկիրառվեց և մնաց որպես ձևական փաստաթուղթ: Ռուս-թուրքական ռազմատեխնիկական համագործակցության մասին ավելի մանրամասն տես՝ Левон Овсепян. Основные тенденции и перспективы российско-турецкого военно-технического сотрудничества // Центральная Азия и Кавказ, том 14, вып. 3, СА&СС Press, Швеция, 2011, с. 46-53.

շուրջ: Կարևորություն էր ներկայացնում այն, որ երկու ընկերություններն էլ պատրաստակամություն էին հայտնել Թուրքիայի հետ հիմնել համատեղ արտադրություն, իսկ իտալական ընկերությունը նույնիսկ շահագրգռություն էր հայտնել իր գործարանը տեղափոխել Թուրքիա³⁸⁸ : Սպասվում էր, որ ուղղաթիռների ձեռքբերման միջազգային մրցույթի վերջնական արդյունքները կհրապարակվեն 2006 թ. վերջին, սակայն նույն տարվա դեկտեմբերին կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում այդ հարցով ոչ մի որոշում չկայացվեց: Թուրքական մամուլի համաձայն՝ նիստի ընթացքում կառավարության ներկայացուցիչները առաջարկել են հաղթող ճանաչել կամ հարավաֆրիկյան, կամ էլ իտալական ընկերություններից որևէ մեկին, սակայն զինվորականները պնդել են երկու կողմին էլ նախագծում ներգրավելու անհրաժեշտության մասին³⁸⁹:

«ATAK» նախագծի իրականացման վերաբերյալ վերջնական որոշումը կայացվեց 2008 թ. գարնանը: Նախապատվությունը տրվեց իտալական «AgustaWestland» ընկերությանը, որի հետ կնքված պայմանագրով նախատեսվում էր Թուրքիայում սկսել 50 միավոր (հետագայում ևս 40 միավորի արտադրության հնարավորությամբ) «T-129» ռազմական ուղղաթիռների արտադրությունը, որի գործում որպես հիմնական կապալառու էր ընտրվել թուրքական «TUSAŞ» ընկերությունը: Նախագծի արժեքը կազմում էր 1 մլրդ եվրո: Արտադրական գործընթացում մասնաբաժին էին ունենալու նաև մի շարք թուրքական ռազմաարդյունաբերական ընկերություններ, ինչպես օրինակ «ASELSAN»-ը՝ ծրագրային ապահովման ու տարբեր սարքավորումների արտադրության և «ROKETSAN»-ը՝ հրթիռային միջոցներով համալրելու գործում: Իտալական ընկերությունն ապահովելու էր թուրքական արտադրողներին տեխնոլոգիաներով ու անհրաժեշտ զիտատեխնիկական բազայով: «T-129» ռազմական ուղղաթիռների արտադրության ու արտահանման իրավասություններ

³⁸⁸ Stü ` Kara Kuvvetleri, helicopter konusunda 2 yeni firma ile anlaştı, Milliyet, 30.06.2006.

³⁸⁹ Stü ` Taktik-taaruz helikopteri ihalesinde yine karar çıkmadı, Zaman, 13.12.2006.

րը, ինչպես նաև սեփականության իրավունքը պատկանում էր Թուրքիային: Իտալական ընկերությունը նույնիսկ տարածաշրջանային կենտրոն հիմնեց Թուրքիայում՝ շուրջ 20 ին-ժեներների մշտական աշխատանքային ներգրավվածությամբ³⁹⁰:

Որպես առաջին քայլ՝ 50 միավոր ուղղաթիռների արտադրությունից հետո նախատեսված էր սկսել արդեն ավելի մեծ խմբաքանակի արտադրություն՝ հետագայում իրականացնելով նաև դրանց արտահանումը՝ Թուրքիան դարձնելով ռազմական ուղղաթիռների արտադրության տարածաշրջանային կենտրոն: Ըստ իտալացի մասնագետների՝ հետագա 10 տարիների ընթացքում նախագծի հաջող ընթացքի պարագայում Թուրքիան կարող է համաշխարհային շուկայում ռազմական տեխնիկայի արտահանման զգալի դերակատարություն ստանձնել³⁹¹: 2013 թ. Թուրքիայում ավարտվեց «T-129» ուղղաթիռի փորձարկումների վերջին փուլը և նախատեսվում է, որ արդեն մինչև տարեվերջ ՌՕՈՒ-ին կմատակարարվի մի քանի միավոր տեխնիկա:

Թուրքական ՋԼՄ-ների հրապարակումների համաձայն՝ «T-129» ռազմական ուղղաթիռներն Ադրբեջանի ռազմաօդային ուժերի հրամանատարության խնդրանքով, կրակային փորձարկումներ են անցնելու Նախիջևանում, ինչի վերաբերյալ ադրբեջանական կողմի հետ համապատասխան ծրագիր է կազմվում: Փորձարկումներն անցնելու են ադրբեջանական զինվորականների հսկողությամբ: Ադրբեջանը ցանկանում է դրանց հնարավորությունները դիտարկել Ադրբեջանի աշխարհագրական դիրքի ու ռելիեֆի պայմաններում, քանի որ որոշ խմբաքանակ կարող է պատվիրվել ադրբեջանական զինված ուժերի համար³⁹²: 2013 թ. սկզբներին թուրքական «Sabah» պարբերականը հրապարակեց, որ ադրբեջանական բանակի համար ռազմական ուղղաթիռների ձեռքբերման մրցույթում հաղթող է

³⁹⁰ Stu՝ 1 milyar dolarlık helikopter üretecek Türkiye ihracat merkezine dönüşecek, Hürriyet, 07.05.2008; Milli taaruz helikopteri havalanıyor, <http://www.haber3.com>, 26.10.2009.

³⁹¹ Stu՝ Türkiye՝ Atak՝ a kalktı, Yeni Şafak, 24.06.2008.

³⁹² Stu՝ ATAK՝ın büyük sınavı, Sabah, 22.01.2014.

ճանաչվել «T-129» ուղղաթիռը, և թուրքական կողմը 60 միավոր արտադրելու է այդ կարիքների համար³⁹³: Ի դեպ, Թուրքիան ցանակա՝ նում է մասնակցել Պակիստանի ՋՈւ-ի ռազմական ուղղաթիռների արդիականացման ծրագրին և այդ կապակցությամբ ուղղակի բանակցություններ էր վարում: Թուրքական կողմը ցանկանում է «T-129» ռազմական ուղղաթիռների արտահանման ուղղությամբ քայլեր ձեռնարկել, և Պակիստանի շուկան Թուրքիայի համար կարևորներից է: Պակիստանը 30-50 միավոր վերոնշյալ ուղղաթիռների գնման նախնական ցանկություն էր հայտնել: Սակայն պարզվում է, որ Թուրքիան առանց ԱՄՆ թույլտվության ու արտոնագրի չի կարող այլ երկրներին վաճառել «T-129» ուղղաթիռների շարժիչները, քանի որ դրանք ամերիկյան արտադրության են և պետք է նախօրոք ստանա ամերիկյան կողմի թույլտվությունը³⁹⁴: Իսկ ամերիկյան կողմն էլ դժվար թե ձեռքից բաց թողնի իր համար կարևոր շուկաներից մեկը:

Այսպիսով, Թուրքիան վերոնշյալ նախագծով, մի կողմից իրականացնում է երկրի բանակի ՌՕՈւ-ի համալրումը նորագույն ռազմական ուղղաթիռներով, մյուս կողմից էլ հիմնում տեղական արտադրություն՝ փորձելով յուրացնել այդ ոլորտում առաջատար տեխնոլոգիաներն ու դուրս գալ ռազմական տեխնիկայի վաճառքի համաշխարհային շուկա:

2007 թ. հունվարին Թուրքիան իր ՋՈւ-ի համար 10 բեռնատար-տրանսպորտային ուղղաթիռների գնման մրցույթ հայտարարեց: Գործարքի արժեքը գնահատվում էր շուրջ 500 մլն դոլար: Մրցույթի հիմնական հավակնորդները ամերիկյան և ռուսական ընկերություններն էին, հատկապես «Boeing» ընկերությունն իր «CH-47 Chinook», «Sikorsk» ընկերությունը՝ «CH-53 Super Stallion» և ռուսական ուղղաթիռաշինական ընկերությունն իր «Mi-26 Halo» ուղղաթիռներով: Նշենք, որ մինչև մրցույթի պաշտոնական հայտարարումը, «Boeing» ընկերությունն արդեն նախնական կա-

³⁹³ Տե՛ս՝ Türk helikopteri Azeri ordusunda, Sabah, 04.02.2013.

³⁹⁴ Տե՛ս՝ ABD ATAK-in satisina tas koyabilir!, <http://www.haber3.com/abd-atakin-satisina-tas-koyabilir-haberi-2255494h.htm>.

պեր էր հաստատել թուրքական իշխանությունների հետ՝ 10 ուղղաթիռների վաճառքի հետ կապված³⁹⁵: Թուրքական կողմը հետագայում նախապատվությունը տվեց ամերիկյան «CH-47 Chinook» ուղղաթիռներին՝ վաճառքի վերաբերյալ դիմում-առաջարկ ներկայացնելով ամերիկյան կառավարությանը: Նշենք, որ այդ ուղղաթիռների ձեռքբերմամբ թուրքական ՋՈւ-ը համալրվելու էին ծանր տրանսպորտային ուղղաթիռներով, որոնք մինչ այդ չկային բանակում: Օդային փոխադրումների համար հիմնականում կիրառվում էին ամերիկյան «S-70 Blackhawk» ուղղաթիռները³⁹⁶: 2009 թ. դեկտեմբերին Պենտագոնն արդեն դիմեց ԱՄՆ Կոնգրեսին՝ Թուրքիային շուրջ 1.2 մլրդ դոլար արժողությամբ 14 միավոր «CH-47 Chinook» ուղղաթիռներ և անհրաժեշտ այլ պահեստամասեր վաճառելու վերաբերյալ՝ հավաստիացնելով, որ «այդ գործարքը չի ազդի տարածաշրջանում ուժային հավասարակշռության վրա»³⁹⁷:

2009 թ. ապրիլին Ստամբուլում անցկացված Ռազմական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսի շրջանակներում ամերիկյան «Sikorsky» ընկերության ու թուրքական «Alp Havacılık», «TUSAŞ, Milsoft» ընկերությունների միջև ստորագրվեց համագործակցության պայմանագիր: «Sikorsky» ընկերության տնօրենի տեղակալ Ս. Էսթիլը թուրքական կողմին լայնամասշտաբ համագործակցության առաջարկ ներկայացրեց, ըստ որի, եթե թուրքական ՋՈւ-ի կարիքների համար ձեռքբերվելիք 100 միավոր ուղղաթիռների հայտամրցույթը հաղթի «Sikorsky» ընկերությունը, ապա այդ արտադրական գործընթացում կներգրավվեն նաև թուրքական ընկերությունները, ինչը հետագայում շուրջ 8 մլրդ դոլարի եկամուտ կապահովի Թուրքիայի համար, քանի որ մինչև 2017 թ. Ընկերությունը

³⁹⁵ Տես՝ Turkish Daily News, 09.01.2007.

³⁹⁶ Տես՝ Turkey plans to buy U.S. heavy lift helicopters, Turkish Daily News. 06.05.2008.

³⁹⁷ Տես՝ Turkey to Acquire CH-47F CHINOOK Helicopters,

<http://www.defencetalk.com/turkey-to-acquire-ch-47f-chinook-helicopters-23305/>; США поставят Турции 14 десантных вертолетов// Взгляд. 08.12.2009.

նախատեսում է շուրջ 32 մլրդ դոլար ընդհանուր արժողության ուղղաթիռներ վաճառել³⁹⁸:

Երկար բանակցություններից հետո 2013 թ. դեկտեմբերին ձեռք բերվեց թուրքամերիկյան համաձայնություն «TUSAŞ» ընկերության կողմից Թուրքիայում ամերիկյան «T-70 Black Hawk» ուղղաթիռների արտադրության վերաբերյալ: Վերջնական պայմանագրի ստորագրումը նախատեսված է 2014 թ. սկզբներին, որով ամերիկյան «Sikorsky» ընկերության հավաստագրով թուրքական «TUSAŞ» ընկերության գործարանում իրականացվելու է 3.5 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ համատեղ արտադրական ծրագիրը, ինչին կմասնակցեն թուրքական ռազմաարդյունաբերական այլ ընկերություններ³⁹⁹:

Միննույն ժամանակ, 2008 թ. Թուրքիան պատրաստվում էր Ռուսաստանից գնել շուրջ 1 մլրդ դոլար ընդհանուր արժողության 32 միավոր «Mi-28 Havoc» հարվածային ուղղաթիռ՝ որպես կարճաժամկետ ընտրություն մինչև «T-129» ուղղաթիռների արտադրությունը: Նման որոշում կայացվեց այն բանից հետո, երբ 2007 թ. ԱՄՆ-ի կողմից մերժվեց Թուրքիային «Cobra» և «Super Cobra» ուղղաթիռներ վաճառելու դիմումը⁴⁰⁰:

2009 թ. դրությամբ, Թուրքիան դեռ շահագրգռություն էր հայտնում ամերիկյան «Bell AH-1W Cobra» ուղղաթիռների ձեռքբերման հարցում, ինչի հետ կապված Թուրքիայի ԶՈւ-ի ԳՇ պետ Ի. Բաշբուրդի Վաշինգտոն կատարած այցի ընթացքում քննարկվեց նաև այդ հարցը: 2007 թ. ԱՄՆ-ը մերժել էր Թուրքիային վաճառել այդ նույն դասի 10 միավոր ուղղաթիռներ, ինչն, ամենայն հավանականությամբ, կապված էր «T-129» ուղղաթիռների արտադրության շուրջ թուրք-իտալական բանակցությունների հետ: Թուրքիան ցանկանում էր մինչև նոր ուղղաթիռների արտադրությունը, իր կարճաժամկետ

³⁹⁸ Sbu` IDEF-e rekor katılım, Milliyet, 28.04.2009.

³⁹⁹ Sbu` Türkiye Sikorsky üretecek, Sabah, 13.12.2013.

⁴⁰⁰ Sbu` Турция срочно закупает у России 32 вертолета Ми-28.

<http://www.izvestia.ru/news/news194579>. Նշենք, որ ռուսական ուղղաթիռների ձեռքբերման հարցում 2012 թ. դրությամբ որոշում չէր կայացվել:

կարիքների համար ձեռք բերել ամերիկյան ուղղաթիռներ, որոնք կիրառվելու էին հիմնականում քրդական գրոհայինների դեմ պայքարում⁴⁰¹:

2010 թ. ՆԱՏՕ-ի եվրոպական միասնական հակահրթիռային պաշտպանության համակարգին միանալուց և հատկապես թուրքական տարածքում ՌՏԿ-ի տեղակայման համաձայնությունից հետո թուրք-ամերիկյան ռազմատեխնիկական համագործակցությունը զարգացման նոր միտումներ սկսեց ցույց տալ: Մասնավորապես՝ 2011 թ. սեպտեմբերին թուրքական ՋԼՄ-ներում հայտնվեցին տեղեկություններ, որ Թուրքիան մի քանի կարևորագույն սպառազինության տեսակների հարցով դիմել է ԱՄՆ-ին: Ըստ «Hürriyet Daily News»-ի՝ Թուրքիայի տարածքում ՆԱՏՕ-ի ՌՏԿ-ի տեղակայումն սկսվել է օգուտներ տալ Թուրքիային ժամանակակից ամերիկյան սպառազինության ձեռքբերման համար և ԱՄՆ-ն այս համատեքստում խոստացել է այդ երկրին մատակարարել Թուրքիայի կողմից երկար սպասված արդիական «H-1W Super Cobra» ռազմական ուղղաթիռներ՝ քուրդ զինյալների դեմ պայքարի համար⁴⁰²: Նոյեմբերին ԱՄՆ-ի Կոնգրեսը հավանություն տվեց Թուրքիային 3 միավոր «Super Cobra» ռազմական ուղղաթիռների վաճառքին⁴⁰³:

2013 թ. մայիսին Թուրքիայի ՊԱԳՎ-ի և ամերիկյան «Sikorsky» ընկերության միջև նախնական համաձայնություն ձեռք բերվեց Թուրքիայում ամերիկյան «T-70 Black Hawk 109» միավոր ռազմական ուղղաթիռների արտադրություն կազմակերպելու վերաբերյալ: Նախատեսվածի համաձայն՝ պայմանագիրն ստորագրվելու է 2013 թ. վերջին: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3.5 մլրդ դոլար և

⁴⁰¹ Տես՝ Lale Sariibrahimoğlu, Turkey confident of stop-gap deal for US AH-1Ws, Jane's Defence Weekly, vol.46, issue 25, June 2009, p. 16; Turkey to buy weapons from US, Hürriyet Daily News, 28.06.2009.

⁴⁰² Տես՝ Radar deal triggers benefits in weaponry for Turkey, <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=radar-deal-triggers-benefits-in-weaponry-for-turkey-2011-10-09>.

⁴⁰³ Տես՝ ABD'den 'Super Cobra'lara onay, <http://www.dunya.com/abdden-super-cobralara-onay-137576h.htm>, 15.11.2011.

արտադրական հիմնական կապալառու է ընտրվել թուրքական «TUSAŞ» ընկերությունը: Ամերիկյան ընկերության արտոնագրի հիման վրա ուղղաթիռների արտադրության գործում ներգրավվել են նաև թուրքական «Aselsan», «TEI», «ALP Havacılık» և այլ ընկերություններ: Այդ ուղղաթիռները նախատեսված են ՑՈւ, ՌՕՈւ-ի և Հատուկ նշանակության ուժերի համար⁴⁰⁴:

Իրականացվում են նաև ՌՕՈւ-ի կործանիչների, ռազմական բազմանպատակ ինքնաթիռների արդիականացման ու բանակը նոր սերնդի կատարելագործված ինքնաթիռներով համալրելու տարբեր ծրագրեր:

Թուրքիայում ռազմական ավիացիայի ոլորտում գործող մի շարք ընկերություններ իրականացնում էին հիմնականում Թուրքիայի ԶՈւ-ի տարբեր դասի ռազմական ինքնաթիռների ու ուղղաթիռների հավաքման աշխատանքներ, առանձին սարքավորումների ու բաղադրամասերի արտադրություն⁴⁰⁵: Ռազմական ավիացիայի ոլորտում գործող ամենամեծ ընկերությունը Թուրքական ինքնաթիռաշինական ընկերությունն է («TUSAŞ»), որն իր իրականացրած ծրագրերի ու ծավալների առումով համարվում է թուրքական ամենամեծ ռազմաարդյունաբերական ընկերությունը: Ընկերությունն իր հիմնադրումից (1984 թ.) մինչև 2009 թ. իրականացրել է ավելի քան 231 մլն դոլարի վաճառք, իսկ իրականացրած և դեռևս իրականացվող նախագծերի ընդհանուր արժեքը կազմում է 8 մլրդ դոլար: Ընկերությունը տարբեր տարիներին ներգրավված է եղել «CN-235» թեթև տրանսպորտային, «SF-260D» ուսումնական ինքնաթիռների, «Cougar AS-532» փրկարարական ու տարբեր դասի բազմանպատակ

⁴⁰⁴ Steu` Kara Şahin Türkiye'de üretilecek, Sabah, 07.05.2013, 3.5 milyar dolarlık "füze" telafisi, <http://www.haber3.com/35-milyar-dolarlik-fuze-telafisi-haberi-2261991h.htm>.

⁴⁰⁵ Steu` Ռազմական ավիացիայի հիմնական գործարաններն ու ընկերություններն են Թուրքիայի ինքնաթիռաշինական ընկերությունը (TUSAŞ), որի գործարանը գտնվում է Մյուրթեղում, Էսքիշեհիրում գտնվող ավիացիոն շարժիչների արտադրության ընկերությունը (TUSAŞ Motor Sanayi, TEI), ՌՕՈւ հրամանատարության 1-ին, 2-րդ և 3-րդ ռազմավիացիոն վերանորոգման և տեխնիկական սպասարկման կենտրոնները, որոնք գտնվում են համապատասխանաբար Էսքիշեհիրում, Կայսերիում և Անկարայում:

ուղղաթիռների համատեղ նախագծային ու արտադրական բազում նախագծերում⁴⁰⁶:

1998 թ. ընկերության գործարանում ավարտվեց 52 միավոր «CN-235» թեթև տրանսպորտային ինքնաթիռների արտադրության ծրագիրը: Հետագայում ՊԱԳՎ-ն 108 մլն դոլար արժողության պայմանագիր էր ստորագրել «TUSAŞ» ու իսպանական «CASA» ընկերությունների հետ՝ հավելյալ 9 միավոր ինքնաթիռների արտադրության վերաբերյալ, որոնք պետք է հանձնվեին Թուրքիայի ՌԾՈՒ-ին ու Առափնյա անվտանգության հրամանատարությանը⁴⁰⁷:

«TUSAŞ» ընկերությունը ներգրավված է նաև «A400M» նոր սերնդի տրանսպորտային ինքնաթիռների արտադրության նախագծում: Չնայած այդ ծրագրին Թուրքիան միացել էր դեռևս 1988 թ., սակայն մասնակից երկրների կողմից որևէ վերջնական որոշում չէր կայացվում նախագծի վերաբերյալ: Գերմանիայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի ու Թուրքիայի մասնակցությամբ նախագծի վերաբերյալ վերջնական պայմանագիրն ուժի մեջ մտավ 2003 թ. մայիսին: Նման նախագծին թուրքական կողմի մասնակցությունը հասկապես կարևորվում է միջազգային խոշոր ռազմաարդյունաբերական նախագծերում Թուրքիայի ներգրավման տեսանկյունից: Ըստ պայմանագրի՝ Թուրքիան ձեռք էր բերելու 10 միավոր ինքնաթիռ 1.5 մլրդ եվրո ընդհանուր արժողությամբ, ինչի շրջանակներում էլ «TUSAŞ» ընկերությունը ստանձնեց նախագծի աշխատանքների 5.56 % մասնաբաժինը: Ընկերությունն արտա-

⁴⁰⁶ Stu՝ TUSAŞ, Türk savunma sanayi şirketleri arasında büyük başarı sağladı, Zaman, 26.04.2009. Ինքնաթիռաշինության ոլորտում տեղական հնարավորությունները մեծացնելու և առավել արդյունավետ նախագծերի իրականացման նպատակով 2007 թ. թուրքական «TUSAŞ» և օդային միջոցների համար տարբեր մոդելի շարժիչների արտադրության ոլորտում գործող թուրքական TEI ընկերությունները պայմանագիր ստորագրեցին, որով միավորեցին իրենց ջանքերը արտադրական ոլորտում: Այդ նախաձեռնության նպատակը ինքնաթիռաշինության տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացումն ու համակարգումն էր: Stu՝ TAI ve TEI güçlerini birleştiriyor,

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20070923.aspx>.

⁴⁰⁷ Stu՝ M. Maprov, նշվ. աշխ., էջ 372-373:

դրելու էր ինքնաթիռների ֆյուզելյաժի որոշ բաղադրամասեր⁴⁰⁸ : Նախատեսվում է, որ 2013-2014 թթ. ընթացքում Թուրքիայի ՌՕՈՒ-ը կստանան 2, իսկ մինչև 2018 թ.՝ մնացյալ 8 ինքնաթիռները⁴⁰⁹:

2007 թ. «TUSAŞ» ընկերության կնքած պայմանագրերով նախատեսված ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 1.2 մլրդ դոլար: Ընկերության ղեկավարության կողմից դրված ռազմավարական ծրագրով նախատեսվում է մինչև 2023 թ. ընկերության ստանձնած ծրագրերի ընդհանուր արժեքը հասցնել 20 մլրդ դոլարի և դուրս գալ միջազգային շուկա⁴¹⁰:

2006 թ. վերջին Թուրքիան ՌՕՈՒ-ի զարգացման նպատակով ԱՄՆ-ից շուրջ 2.9 մլրդ դոլար արժողության 30 միավոր «F-16 Block 52» դասի ռազմական ինքնաթիռներ և անհրաժեշտ այլ սարքավորումներ ու ծառայություններ գնելու որոշում կայացրեց, որը հետագայում հավանության արժանացավ Պենտագոնի կողմից: Այդ գործարքի հիմնական կապալառուն ամերիկյան «Lockheed Martin» ընկերությունն էր, սակայն նախատեսված էր նաև թուրքական տեղական արդյունաբերության աջակցությունը⁴¹¹: 2009 թ. փետրվարին պարզ դարձավ, որ գործարքի հետ կապված որոշ փոփոխություններ են եղել, և «Lockheed Martin» ընկերությունը Թուրքիայի ՌՕՈՒ-ին էր մատակարարելու 14 միավոր «F-16C» և 16 միավոր «F-16D» մոդելի ռազմական ինքնաթիռներ⁴¹²: Ամենայն հավանականությամբ, հենց այդ 30 միավոր «F-16» ինքնաթիռներ գնելու նպատակահարմարությունից ելնելով, Թուրքիան հրաժարվեց Իսրայելի մասնակցությամբ թուրքական օդուժի 50 միավոր «F-4 Phantom» ռազմական ինքնա-

⁴⁰⁸ Տես՝ Çok Uluslu Bir Projenin Doğuşu:A400M Projesi, Savunma Sanayii Gündemi, Ekim 2008, Sayı 6, ss. 70-78.

⁴⁰⁹ Տես՝ Türkiye gün sayıyor!, <http://ekonomi.haberturk.com/teknoloji/haber/887148-turkiye-gun-sayiyor>.

⁴¹⁰ Տես՝ ընկերության գլխավոր մենեջեր Մ. Դյորթթաշլըի հարցազրույցը Defence Turkey պարբերականին՝ Defence Turkey, Vol. 3, Issue 13, 2008.

⁴¹¹ Տես՝ Hürriyet, 13.12.2006; <http://www.defenceindustrydaily.com>, 02.10.2006.

⁴¹² Տես՝ U.S. Lockheed gets \$797 million contract for Turkish F-16 fighters, Hürriyet Daily News. 25.02.2009.

թիւների արդիականացման 500 մլն դոլար արժողության գործող ծրագրից:

Թուրքիայի ՌՕՈւ-ում 2010 թ. դրությամբ «F-16» ռազմական ինքնաթիռների թիվը գերազանցում էր 200 միավորը, որոնք 1980-90-ական թթ. արտադրվել են «TUSAŞ» ընկերության գործարանում, ինչպես նաև «TEI» ընկերության Էսքիշեհիր քաղաքի ձեռնարկությունում՝ «Lockheed Martin»-ի հետ կնքված պայմանագրերի հիման վրա⁴¹³:

Առաջնային ծրագրերի շարքում դրվեց նաև ՌՕՈւ-ի «F-16» ռազմական ինքնաթիռների արդիականացման և վերանորոգման խնդիրը: ՌՕՈւ-ի հրամանատարության ենթակայության տակ գտնվող ավելի քան 200 միավոր «F-16C» և «F-16D» ինքնաթիռների արդիականացման աշխատանքներն իրականացնելու էր ամերիկյան «Lockheed Martin» ընկերությունը՝ շուրջ 635 մլն դոլար արժողությամբ պայմանագրի շրջանակներում: Արդիականացման աշխատանքներն իրականացվելու են հիմնականում ամերիկյան ընկերության Ֆորթ Վորթի գործարանում և թուրքական «TUSAŞ» ընկերության ձեռնարկություններում: Նախատեսվում է աշխատանքներն ավարտել 2016 թ.⁴¹⁴:

Քայլեր էին ձեռնարկվում նաև Թուրքիայի ՌՕՈւ-ի հիմնական օդային միջոցների բազայի թարմացման ուղղությամբ: ՊԱԳՎ-ն երկրի պատմության մեջ ամենամեծ պաշտպանական նախագիծը հանդիսացող ՌՕՈւ-ում նոր սերնդի ինքնաթիռների կարիքի համար ավելի քան 10 մլրդ դոլար արժողությամբ 100 միավոր գերժամանակակից կործանիչներ ձեռք բերելու ծրագիր առաջադրեց: Թուրքիայի կողմից հայտարարված այդ խոշոր պաշտպանական նախագծում ներգրավելու համար մրցակցությունն ընթանում էր հատկապես ամերիկյան «Lokheed Martin» ընկերության «Joint Strike

⁴¹³ Stu՝ Turkish Daily News, 02.08.2006; The Military Balance 2010, International Institute of Strategic Studies, London: Routledge 2010, p. 166.

⁴¹⁴ Stu՝ [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 28.12.2006.

Fighter F-35» կործանիչի⁴¹⁵ և Եվրամիության անդամ մի շարք երկրների կողմից համատեղ արտադրության մեջ գտնվող «Eurofighter Typhoon» ինքնաթիռի միջև⁴¹⁶:

«Eurofighter Typhoon» ինքնաթիռներն արտադրող եվրոպական կոնսորցիումը ցանկանում էր, որ Թուրքիան ևս դառնա ինքնաթիռների արտադրության իր արդյունաբերական նախագծի բաղկացուցիչ մասը: Եթե Թուրքիան ընդուներ այդ առաջարկությունը, ապա «Eurofighter»-ի որոշ պահեստամասեր կարտադրվեին նրա տարածքում: Կոնսորցիումի առաջատար իտալական «Alenia Aeronautica» կորպորացիան Թուրքիային առաջարկեց միանալ եվրոպական այդ նախագծին՝ պատրաստակամություն հայտնելով արտոնյալ պայմաններ տրամադրել այդ երկրին: Կոնսորցիումի ղեկավարության առաջարկի համաձայն՝ 120, 80 կամ 40 ինքնաթիռների գնման պարագայում թուրքական ռազմաարդյունաբերական ընկերություններին էին հատկացվելու համապատասխանաբար 9, 6 կամ էլ 3.2 մլրդ դոլարի արտադրական պատվերներ: Առաջարկությունը տարածվելու էր թուրքական ավիացիոն արդյունաբերության բոլոր ձեռնարկությունների վրա, որոնք հետագայում իրականացնելու էին նաև ինքնաթիռների վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքները⁴¹⁷:

Երկար ժամանակ ՊԱԳՎ-ի նիստերում ինքնաթիռների ընտրության հարցում վերջնական որոշում չէր կայացվում: Այդ երկրի կառավարությունը կողմնակից էր կոմբինացված լուծման նպատակահարմարությանը. այն է՝ գործընկերություն զարգացնել «F-35 JSF» կործանիչների արտադրության ծրագրի շրջանակներում և միանալ եվրոպական «Eurofighter» կոնսորցիումին՝ ԵՄ-ին անդամակցության ճանապարհին «ռազմավարական լծակ» ձեռք բերելու

⁴¹⁵ Ավելի քան 200 մլրդ դոլար արժողությամբ այդ կործանիչների արտադրության նախագծին մասնակցում են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Նիդերլանդները, Դանիան, Նորվեգիան, Թուրքիան, Կանադան և Ավստրալիան: Արտադրվելու է 2400 կործանիչ և նախատեսվում է դրանք երկրներին հանձնել 2012 թ.:

⁴¹⁶ Տե՛ս՝ Akşam, 29.03.2006.

⁴¹⁷ Տե՛ս՝ Avrupa'lı ve ABD'li savaş uçaklarının Türkiye yarışı, Radikal, 05.12.2006.

համար: Այնինչ, զինվորական բարձրագույն հրամանատարությունը ՊԱԳՎ-ի նիստում հայտարարեց միայն «F-35» ինքնաթիռների ձեռքբերման նպատակահարմարության մասին: Զինվորականության համար հիմնավորումն այն էր, որ Թուրքիայի ՌՕՈւ-ը հիմնականում համալրված են ամերիկյան ինքնաթիռներով, և ռազմական օդաչուների պատրաստման ծրագիրը հիմնված է ԱՄՆ-ի համապատասխան համակարգի վրա: Նման ընտրությունը պայմանավորված էր նաև ֆինանսական առավել մեծ ծախսերից խուսափելու անհրաժեշտությամբ, որը կարող էր ծագել տարբեր արտադրության ինքնաթիռների ձեռքբերման դեպքում⁴¹⁸:

Թուրքիան որոշեց գնել 100 միավոր «F-35» ինքնաթիռ, որի նախնական ընդհանուր արժեքը կազմում էր ավելի քան 10 մլրդ դոլար: Ըստ նախագծի՝ առաջին ինքնաթիռները Թուրքիային կհանձնվեն 2014 թ., որոնք կփոխարինեն ներկայում օգտագործման մեջ գտնվող հնացած «F-16» և վիետնամական պատերազմի շրջանից հայտնի F-4 կործանիչ-ռմբակոծիչներին⁴¹⁹:

2006 թ. դեկտեմբերին կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում բարձրագույն զինվորականության կողմից հավանության արժանացավ «F-35 JSF» կործանիչներ ձեռք բերելու և դրանց արտադրությանը մասնակցելու որոշումը: Թուրքիան, այսպիսով, միացավ աշխարհի ամենամեծ ինքնաթիռաշինական նախագծին: Նոր սերնդի «F-35» ինքնաթիռների արտադրության գործընթացում թուրքական ռազմարդյունաբերական ընկերությունները ստանձնեցին ավելի քան 5.5 մլրդ դոլարի մասնաբաժին, որից ամենախոշորներն են՝ «TUSAŞ» ընկերությունը

⁴¹⁸ Steu` Turkish Daily News, 27.10.2006.

⁴¹⁹ Steu` A. Mc Gregor, նշվ. աշխ., էջ 13: 2012 թ. փետրվարին Թուրքիայի պաշտպանության նախարար Բ. Յըլմազը, պատասխանելով խորհրդարանական ընդդիմադիր «Ազգայնական շարժում» կուսակցության պատգամավորի հարցին, վերահաստատեց, որ Թուրքիան չի պատրաստվում հրաժարվել այդ ինքնաթիռների ձեռքբերումից և գնելու է 100 միավոր ինքնաթիռ՝ 16 մլրդ դոլար ընդհանուր արժեքով: Turkey will buy 100 F-35 fighter jets from US, Today's Zaman, 23.02.2012.

3 մլրդ 700 մլն, «TEI»-ն 630, «KALEKALIP»-ը 490, «AYESAŞ»-ը 290 և «ASELSAN»-ը՝ 180 մլն դոլար մասնաբաժնով⁴²⁰:

2009 թ. ապրիլին «Lockheed Martin» ընկերությունը 3 պայմանագիր ստորագրեց թուրքական «ALP Havacılık», «ASELSAN» և «KALE Havacılık» ընկերությունների հետ՝ ինքնաթիռների արտադրության գործընթացում ներգրավվելու վերաբերյալ⁴²¹:

«TUSAŞ» ավիացիոն ընկերությունը «Lockheed Martin» ընկերության «F-35 Lightning II» ռազմական ինքնաթիռի արտադրության խմբի առաջատար «Northrop Grumman ISS International» ընկերության (ընկերությունը ինքնաթիռների կենտրոնական ֆյուզելյաժների նախագծման և արտադրության առաջատարն է) հետ ստորագրեց պաշտոնական փաստաթուղթը, որով Թուրքիան դարձավ այդ ինքնաթիռների արտադրության մեջ ներգրավված երկրներից մեկը: 3 մլրդ դոլար արժողությամբ այդ պայմանագրի համաձայն՝ «TUSAŞ» ընկերությունն ստանձնեց արտադրվելիք կործանիչների համար ավելի քան 400 կենտրոնական ֆյուզելյաժների արտադրության գործընթացը: 2008 թ. նոյեմբերին ընկերությունը Անկարայում բացեց բաղադրամասերի արտադրությանը հարմարեցված իր նոր արտադրամասը՝ արտադրական գործընթացն իրականացնելու նպատակով⁴²²:

Ընդհանուր առմամբ, նոր՝ 5-րդ սերնդի կործանիչների ձեռքբերումն ու նաև արտադրական գործընթացում թուրքական ընկե-

⁴²⁰ Տես՝ F-35'e Türk imzası,

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20071106.aspx>.

⁴²¹ Տես՝ Lockheed Martin`den Türk sanayisine büyük katkı sağlayacak 3 anlaşma, Zaman, 28.04.2009. 2006 թ. դեկտեմբերին կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց ռազմական արդյունաբերության նախագծերում առաջնային դերակատարություն հանձնել «ASELSAN» ընկերությանը: Հատկապես այդ ընկերությունը ստանձնեց երկրի ՌՕՈւ-ի ինքնաթիռների մի մասի և Ժանդարմերիայի հրամանատարությանը պատկանող ուղղաթիռների ավիացիոն համակարգերի արդիականացման աշխատանքներն իրականացնելու պարտավորությունը: Տես՝ ՊԱԳ-Վ պաշտ. կայք՝ <http://www.gbulten.ssm.gov.tr>, 18.12.2006.

⁴²² Տես՝ Jane's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 34.

րությունների ներգրավվածությունը, կարելի է համարել թուրքական բանակի սպառազինության արդիականացման ամենակարևոր ու մասշտաբային ռազմատեխնիկական ծրագիրը⁴²³: Նման գերժամանակակից ինքնաթիռներով Թուրքիայի ՌՕՈւ-ի համալրումը էականորեն կբարձրացնի այդ երկրի ընդհանրապես ռազմական ու օդային մարտեր վարելու հնարավորությունները մասնավորապես և էականորեն հոգուտ իրեն կփոխի ուժային հավասարակշռությունն իր հարևանների հետ:

Միևնույն ժամանակ, հսկայական միջոցներ էին հատկացվում արտերկրից օդուժի հրթիռային սպառազինության ձեռքբերման ուղղությամբ: 2006 թ. օգոստոսին Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլը հայտարարեց, որ պատրաստվում են օտարերկրյա ռազմական գնումների ուղիներով ԱՄՆ-ից 139 մլն դոլար արժողությամբ «SLAM-ER Cruise» տիպի 50 հրթիռներ գնել: Ըստ թուրքական մամուլի՝ Գյոնուլը հաստատել էր Թուրքիային այդ քանակի հրթիռներ վաճառելու հարցով ԱՄՆ պաշտպանության և անվտանգության համագործակցության վարչության կողմից Կոնգրեսն ղիմելու մասին լուրը⁴²⁴:

2006 թ. տեղեկատվություն եղավ այն մասին, որ ամերիկյան «Textron Systems» ընկերությունը, որն ակտիվորեն համագործակցում է ԱՄՆ ՌՕՈւ-ի հետ, Թուրքիային է վաճառել ցամաքային ռազմական գործողությունների համար նախատեսված «CBU-105» տիպի կառավարվող «օդ-երկիր» դասի հրթիռներ՝ այդ երկրի ՌՕՈւ-ի «F-16» ռազմական ինքնուրույն վրա տեղադրելու համար⁴²⁵:

Միևնույն ժամանակ, թուրքական ընկերություններն սկսեցին իրականացնել ինքնուրույն արտադրական ծրագրեր: Թուրքական ԶԼՄ-ները տեղեկատվություն հրապարակեցին, որ 2006 թ. սկսած

⁴²³ Sku՝ Андрей Арешев, Вооруженные силы и внешнеполитический курс Турции на современном этапе, Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ա. Այվազյանի խմբ., «Հայրենաստիքություն» մատենաշար 2, «Արարատ» ռազմավարական կենտրոն, Եր. 2007, էջ 118:

⁴²⁴ Sku՝ Milliyet, 10.08.2006.

⁴²⁵ Sku՝ ՊԱԳՎ պաշտ. կայք՝ [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 05.11.2006.

«TÜBİTAK-SAGE»-ի կողմից ՌՕՈւ-ի կարքների համար իրականացվում է 180 կմ հեռահարության «օդ-ցամաք» դասի «SOM» կոչվող հրթիռների արտադրություն⁴²⁶:

Թուրքական կառավարությունը դիմել էր ԱՄՆ-ին «օդ-օդ» դասի միջին հեռահարության կատարելագործված «AIM-120C-7 AMRAAM» հրթիռներ, ինչպես նաև 2 հրթիռային կառավարման-ուղղորդման համակարգ, առանձին բաղադրամասեր ու ծառայություններ գնելու կապակցությամբ՝ 157 մլն դոլար ընդհանուր արժեքով: 2008 թ. սեպտեմբերին պարզ դարձավ, որ ԱՄՆ Պաշտպանական անվտանգության համագործակցության գործակալությունը տեղեկացրել էր Կոնգրեսին այդ վաճառքի հնարավորության մասին⁴²⁷:

2009 թ. մեկնարկեց տեղական ռազմաարդյունաբերական բազայի հիմքի վրա 1970-ական թթ. թուրքական ՌՕՈւ-ում գտնվող RF-4E ռազմական հետախուզական ինքնաթիռների արդիականացման նախագիծը: Արդիականացված այդ ինքնաթիռները ԶՈւ-ին կծառայեն մինչև 2020 թ.: 2009 թ. մայիսին արդեն ՌՕՈւ-ին հանձնվեցին նորագույն ավիացիոն կառավարման ու տեղեկատվական համակարգերով համարված 2 միավոր ինքնաթիռներ, որոնց հետախուզական ու դիտարկման համակարգերն արդիականացվել էին «ASELSAN», «MIKES» ընկերությունների համատեղ ջանքերով: Ընդհանուր առմամբ, նախատեսված է արդիականացնել 18 միավոր այդ դասի ինքնաթիռներ, որոնց աշխատանքները կավարտվեն 2010 թ.⁴²⁸:

2009 թ. օգոստոսի 10-ին ՊԱԳՎ-ի ու «TUSAŞ» ընկերության միջև ստորագրվեց Թուրքիայի ՌՕՈւ-ի «F-16» կործանիչների արդիականացման մասին պայմանագիր, որով «TUSAŞ» ընկերությունը և Առաջին ռազմաօդային տեխնիկական սպասարկման կենտրոնի

⁴²⁶ Sbu` Türk Füzesi SOM İçin Geri Sayım Başladı, <http://www.trthaber.com/haber/bilim-teknik/turk-fuzesi-som-icin-geri-sayim-basladi-24107.html>

⁴²⁷ Sbu` Zaman, 29.09.2008.

⁴²⁸ Sbu` Milli uçak modernizasyon projesi tamamlandı, Hürriyet, 08.05.2009.

հրամանատարությունը (1'nci Hava İkmal Bakım Merkezi Komutanlığı) իրականացնելու են 165 միավոր «F-16» ռազմական ինքնաթիռների արդիականացման աշխատանքները: Նույն օրը ստորագրված մեկ այլ պայմանագրով՝ «HAVELSAN» ընկերությունը ստանձնեց ՌՕՈՒ-ի հրամանատարության համար «F-16» ռազմական ինքնաթիռների վարժասարքերի արտադրության նախագիծը⁴²⁹:

2006 թ. մարտին «TUSAŞ» ընկերությունը 92 մլն դոլար արժույթյան պայմանագիր ստորագրեց ՊԱԳՎ-ի հետ՝ ՌՕՈՒ-ի համար «Hürküş» անվանումն ստացած ռազմաուսումնական ինքնաթիռների արտադրության վերաբերյալ, որոնք գործածության էին մտնելու 2011 թ.⁴³⁰: Բանակին դրանց մատակարարումը էականորեն ուշացավ: 2013 թ. դեկտեմբերին ստորագրվեց «Hürküş» ռազմաուսումնական ինքնաթիռների խմբաքանակային արտադրության վերաբերյալ պայմանագիրը, որի շրջանակում 2018-2019 թթ. ընթացքում ՋՈՒ-ին է մատակարարվելու 15 միավոր ինքնաթիռ: ՊԱԳՎ պետ Մ. Բայարը հայտարարել է, որ այդ ինքնաթիռների հիմքի վրա սկսվելու է նաև սպառազինություն կրող նմանօրինակ ինքնաթիռների արտադրություն: Թուրքիան այդ ինքնաթիռները նախատեսում է դուրս բերել նաև միջազգային շուկա⁴³¹:

2007 թ. Հարավային Կորեայի ավիատիեզերական ընկերությունը (KAI) Թուրքիայի հետ ստորագրեց 500 մլն դոլար արժողության պայմանագիր՝ հիմնական ուսումնական ինքնաթիռների վաճառքի մասին: Ըստ պայմանագրի՝ մինչև 2013 թ. թուրքական կողմին կհանձնվեն 55 միավոր «KT-1» ուսումնական ինքնաթիռներ, որոնք կփոխարինեն թուրքական բանակի ուսումնավարժական ծրագրերում շատ վաղուց կիրառվող «T-37» մոդելի ինքնաթիռներ:

⁴²⁹ Տես՝ ՊԱԳՎ պաշտ. կայք՝

<http://www.ssm.gov.tr/TR/etkinlikler/imzatoenleri/Pages/2009f16sozlesmeimza.aspx>.

⁴³⁰ Տես՝ Turkey's New Trainer, Defense Technology International, Vol. 1, N. 6, July/August 2007, p. 8; Hürkuş kanatlandı, Tercüman, 03.04.2009.

⁴³¹ Տես՝ Hürkuş'ta seri üretim başladı, <http://www.hurriyet.com.tr/ekonomi/25449933.asp>.

րին⁴³²: Ըստ պայմանագրի՝ կորեական ընկերությունը տեխնոլոգիական աջակցություն է ցույց տալու «TUSAŞ» ընկերությանը հետագայում նման ինքնաթիռների նախագծման ու արտադրության ոլորտում⁴³³:

2009 թ. ապրիլին Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլի Հարավային Կորեա կատարած այցի ընթացքում երկու երկրները պայմանագիր ստորագրեցին, որով թուրքական կողմը այդ երկրին մինչև 2011 թ. վաճառելու է թուրքական «HAVELSAN» ընկերության կողմից մշակված օդաչուների վարժեցման էլեկտրոնային մարտական ուսուցման համակարգեր (Electronic Warfare Training Systems) 97 մլն դոլար արժողությամբ: Նման համակարգերի արտադրություն «HAVELSAN» ընկերությունն արդեն իրականացրել է Թուրքիայի և Պակիստանի ՌՕՈւ-ի համար⁴³⁴: Նշենք, որ Թուրքիայի կողմից Կորեայի հանրապետություն «CN-235» թռիչքային վարժասարքերի արտահանումից հետո այդ համակարգերի վաճառքը հանդիսացավ երկրորդ խոշոր թուրքական արտահանումն այդ երկիր: Հասկապես Հարավային Կորեայի հետ Թուրքիայի վերջին տարիների ռազմատեխնիկական ոլորտում զարգացող համագործակցությունը նոր երևույթ է: Հարավկորեական ռազմաարդյունաբերական ընկերությունների հետ համագործակցության զարգացմանը թուրքական կողմի շահագրգռությունը պայմանավորված է նրանով, որ այդ երկրի հետ առավել դյուրությամբ ու նպաստավոր պայմաններով են ձեռք բերվում համաձայնությունները, և թուրքական ընկերությունները զգալիորեն օգտվում են այդ երկրի տեխնոլոգիական աջակցությունից ու յուրացնում փորձը:

⁴³² Տես՝ ՊԱԳՎ պաշտ. կայք՝

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20070807.aspx>; TAI-KAI ortaklığı ile eğitim uçağı üretilecek,

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20070720.aspxorlar>.

⁴³³ Տես՝ Güney Kore ile savunma ortaklığı,

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20070827.aspx>.

⁴³⁴ Տես՝ South Korea To Buy Turkish EWTS, <http://www.defensenews.com>, 16 Apr 2009; Havelsan'dan Kuzey Kore'ye elektronik harp sistemi ihraci, Zaman, 21.04.2009.

2010 թ. դեկտեմբերին վարչապետ Էրդողանի նախագահությամբ կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց ամբողջությամբ տեղական հիմքի վրա «ազգային ռազմական ինքնաթիռի» արտադրության վերաբերյալ և նախագծի իրականացման հիմնական դերը ստանձնեց «TUSAŞ» ընկերությանը⁴³⁵: Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլն այդ կապակցությամբ հայտարարեց, որ արտադրվելիք ինքնաթիռները թուրքական բանակում առկա «F-16» և հետագայում ձեռքբերվելիք «F-35» ինքնաթիռների հետ միասին կկազմեն թուրքական օդուժի հիմնական մասը⁴³⁶: 2011 թ. ՊԱԳՎ պայմանագիր ստորագրեց «TUSAŞ» ընկերության հետ՝ սեփական կործանիչի նախագծային մշակումների վերաբերյալ: 2013 թ. «TUSAŞ» ընկերությունը ներկայացրեց սեփական նախագծման 3 մոդելներ: Սեփական նախագծման կործանիչների արտադրությունը կարժենա շուրջ 80 մլրդ դոլար: Նախատեսված է, որ «TF-X» անվանումը ստացած կործանիչի մշակման ծրագրին

⁴³⁵ Տես՝ SAVUNMA SANAYİİ İCRA KOMİTESİ TOPLANTISI BASIN AÇIKLAMASI, 15 Aralık 2010, <http://www.ssm.gov.tr/anasayfa/hizli/duyurular/PressReleases/Sayfalar/2010aralikkssikbasinaciklamasi.aspx>

⁴³⁶ Տես՝ SSM'den sürpriz karar: Yerli savaş uçağı yapılacak, Zaman, 16.12.2010. 2011 թ. օգոստոսին արդեն ՊԱԳՎ-ն «Ռեակտիվ ուսումնական ու մարտական ինքնաթիռների նախագծման» մասին համաձայնագիր ստորագրեց «TUSAŞ» ընկերության հետ: Դրանք համալրելու են ՌՕՈւ-ի սպառազինությունը 2020 թ. հետո: TUSAŞ'la milli savaş uçağı projesi imzalandı, Hurriyet, 23.08.2011. Ըստ նախատեսվածի՝ խմբաբանակային արտադրությունն սկսվելու է 2016 թ. և 2023 թ. իրականացվելու դրանց վաճառքն այլ երկրների: Yerli savaş uçağı için altyapı hazır, Zaman, 20.12.2010. Թուրքիայի պաշտպանության նախարար Իսմեթ Յըլմազը 2011 թ. նշել է, որ ուսումնական ու ռազմական ինքնաթիռների արտադրության համար այդ երկրի պաշտպանության նախարարության բյուջեից հատկացվել է 20 մլրդ դոլար: Այդ գործընթացի շրջանակում արդեն սկսվել էին նախապատրաստական աշխատանքները, և պետական ու մասնավոր ընկերությունների հետ հստակեցվելու էին անելիքները, որոշվելու նաև արտադրության իրականացման տարաձևերը: Տես՝ Milli Savunma Bakanı Yılmaz, Türk yapımı savaş ve eğitim uçakları için 20 milyar dolarlık kaynağın ayrıldığını söyledi, <http://www.internethaber.com/turk-yapimi-ucak-icin-20-milyar-dolar-369046h.htm>:

համապատասխան կհաջողվի թուրքական արտադրության կործանիչն օդ բարձրացնել մինչև 2023 թվականը՝ Թուրքիայի Հանրապետության հիմնադրման 100-ամյակը⁴³⁷: Թուրքական կողմը ակտիվ բանակցությունների մեջ էր շվեդական «SAAB» ընկերության հետ՝ այդ կործանիչների մշակման ու արտադրության գործում տեխնիկական աջակցություն ստանալու համար: «T-129 ATAK» ռազմական ուղղաթիռների թուրք-իտալական հաջող համագործակցության օրինակով թուրքական կողմը շահագրգռված է նաև շվեդական կողմի հետ համագործակցությամբ՝ այդ ինքնաթիռների համատեղ արտադրության հարցում: Որոշ մասնագետներ ու ռազմական փորձագետներ, սակայն, Թուրքիայի կողմից սեփական նախագծման կործանիչի արտադրությանը հոռետեսորեն են մոտենում⁴³⁸: Ակնհայտ է սակայն, որ Թուրքիայի նման նախագիծը խիստ հավակնտ է, և թուրքական ռազմաքաղաքական վերնախավը գերազնահատում է սեփական ռազմաարդյունաբերական համալիրի հնարավորությունները: Դեռևս թուրքական ընկերությունները ի զօրու չեն ինքնուրույն իրականացնել «ազգային կործանիչի» մշակման ու արտադրության գործընթացը:

2010 թ. դեկտեմբերին թուրքական ՋԼՄ-ները հրապարակեցին Թուրքիայի ՌՕՈւ-ի հրամանատարության հետագա տարիների տեսլականը՝ երկրի օդուժի զարգացման վերաբերյալ: Մասնավորապես, ԳՇ-ի «Զինված ուժերի ամսագիր» պարբերականում հրապարակված Թուրքիայի ՌՕՈւ-ի հրամանատար Հասան Աքսայի հոդվածում նշվում էր, որ 2020 թ. հետո Թուրքիայի ՌՕՈւ-ը հանդիսանալու են անկախ տիեզերական ուժ, իսկ մինչև 2050 թ. իրա-

⁴³⁷ Sık Yerli savaş uçağı projesi hazır, maliyet 80 milyar dolar, <http://haber.stargazete.com/ekonomi/yerli-savas-ucagi-projesi-hazir-maliyet-80-milyar-dolar/haber-785274>.

⁴³⁸ Sık Bets open on Turkey's first fighter aircraft, <http://www.hurriyetdailynews.com/bets-open-on-turkeys-first-fighter-aircraft.aspx?pageID=238&nID=43266&NewsCatID=345>

կանացվելիք նախագծերի արդյունքում թուրքական օդուժը լինելու է ամենահզորը տարածաշրջանում⁴³⁹:

Ակտիվ աշխատանքներ ու ծրագրեր են իրականացվում նաև անօդաչու թռչող սարքերի⁴⁴⁰ (այսուհետ՝ ԱԹՍ, թուրք. *Insansız Hava Aracı*, անգլ. *Unmanned Aerial Vehicle*) արտադրության ու ձեռքբերման ուղղությամբ, ինչն, ըստ թուրք զինվորականների, էլ ավելի կբարձրացնի անհամաչափ մարտահրավերների, հատկապես քուրդ գրոհայինների դեմ պայքարի արդյունավետությունը: ԶՈւ-ի կարիքների համար տարբեր նշանակության ԱԹՍ-ների ձեռքբերումը դրված էր առաջնահերթ ծրագրերի շարքում: Թուրք զենեքավներից մեկի բնորոշմամբ՝ «որքան թուրքական բանակը համալրված լիներ հետախուզական ու սենսորային համակարգերով, այնքան էլ մեծ կլիներ քիչ ուժերի կիրառմամբ լուրջ արդյունքների հասնելը»: Թուրքիայի ԶՈւ ԳՇ-ի նախկին պետ Յ. Բյույուքանըթը մի առիթով խոստովանել էր, որ Դիարբեքիում տեղակայված 7-րդ կորպուսի հրամանատար եղած Ժամանակ, կարող էր կրճատել կորպուսը

⁴³⁹ Տես՝ *Hava Kuvvetleri Komutanı'nın 2020 ve 2050 planları*, Sabah, 20.12.2010.

⁴⁴⁰ Տես՝ Ժամանակակից ռազմական գործողություններում ծանրակշիռ դերակատարություն են ստացել ԱԹՍ-ները, որոնք կիրառվում են ռազմական օբյեկտներին հարվածելու և հետախուզական դիտարկում իրականացնելու համար և այլն: ԱԹՍ-ների առաջին խոշոր կիրառությունը կատարվել է վիետնամական պատերազմի տարիներին ԱՄՆ-ի կողմից, որի ընթացքում իրականացվել է շուրջ 3500 թռիչք և կորուստները կազմել են ընդամենը 4 %: 21-րդ դարակզբին ՆԱՏՕ-ի և Իսրայելի կողմից ԱԹՍ-ների մարտական կիրառման թատերաբեմը դարձավ Մերձավոր Արևելքը և Աֆղանստանը: Ըստ որոշ տեղեկությունների՝ 2006 թ. ՆԱՏՕ-ի Միացյալ ԶՈւ-ում ԱԹՍ-ների թիվը կազմել է մոտ 60 հազար միավոր: ԱԹՍ-ների արտադրության ոլորտում առաջատարներն են ԱՄՆ-ը և Իսրայելը, մի շարք այլ երկրներ նույնպես իրականացնում են արտադրական նախագծեր: Ավելի մանրամասն տես՝ Արծրուն Հովհաննիսյան, Մի քանի հարցեր ավիացիայից: Եր., Հեղ. հրատ., 2009; В. Исламов, Беспилотники: сто лет в воздухе// Независимое военное обозрение. № 32, 11-17 Сентябрь 2009, с. 8-9: Իսրայելից բացի, Մերձավոր Արևելքի երկրներից ԱԹՍ-ների արտադրության ծրագրեր է իրականացնում Իրանը: Շահնշեհի և Թեհրան քաղաքներում գործում են 2 հիմնական ընկերություններ՝ «Hesa» և «Qods»: «Hesa»-ի արտադրության «Ababil ԱԹՍ»-ն սկսել է արտադրվել 1986 թ. և կիրառվել Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ու Հեզբալլահի կողմից Լիբանանում: «Qods»-ին են պատկանում «Mohajer-2» և «Saegheh-2» ԱԹՍ-ները: Տես՝ *Armada International*, Issue 3, 2008, p. 28:

շուրջ 40 %-ով, եթե սպառազինության մեջ լինեին հետախուզական ու հարվածային ԱԹՄ-ներ⁴⁴¹:

Սեփական նախագծման ԱԹՄ-ների ուղղությամբ 1990-ական թթ. սկզբից ակտիվ աշխատանքներ սկսեց իրականացնել «TUSAŞ» ընկերությունը: 1992 թ. փորձարկվեց ընկերության նախատիպային առաջին ԱԹՄ-ն: Դեռևս Թուրքիայի ԶՈՒ-ում կիրառվում են ընկերության կողմից արտադրված «Turna» անօդաչու թիրախային (նպատակային) ինքնաթիռները, որոնց թիվն, ըստ թուրքական աղբյուրների, հասնում է 2 հազարի: Որպես հիմնական նախագծող՝ ընկերությունն աշխատանքներ է իրականացնում հեռահար ԱԹՄ-ների նախագծման ուղղությամբ և նախատեսում այդ ոլորտում աշխատանքներն ավարտել 2010 թ.⁴⁴²: Ընկերությունը պայմանագիր ստորագրեց Թուրքիայի ՊՆ-ի հետ՝ 2011 թ. ԶՈՒ-ին 30 միավոր հետախուզական ԱԹՄ-ներ մատակարարելու վերաբերյալ, որոնք զինված են լինելու էլեկտրաստիկական համակարգով, ինչը հնարավորություն կտա դիտարկում իրականացնել գիշերային ու վատ եղանակային պայմաններում⁴⁴³:

Դեռևս 1993 թ. Թուրքիայի ՑՈՒ-ի կարիքների սպահովման և քրդական զինյալների դեմ պայքարի նպատակով պայմանագիր ստորագրվեց ամերիկյան «General Atomics Aeronautical Systems Inc.» ընկերության հետ ԱԹՄ-ների մատակարարման վերաբերյալ, որի շրջանակներում թուրքական բանակը համալրվեց 6 նման միջոցներով ու «GNAT 750-45» մոդելի տեղային հսկողության կայանով: 1995-1998 թթ. ընթացքում թուրքական բանակին տրամադրվեց 18 միավոր «I-GNAT» արդիականացված ԱԹՄ-ներ, որոնք ԶՈՒ-ում կիրառվում են մինչև օրս⁴⁴⁴:

⁴⁴¹ Տես՝ Jane's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 34.

⁴⁴² Տես՝ TİHA ve F-35 projelerinde önemli görevler üstlendi, Cumhuriyet, 08.12.2008.

⁴⁴³ Տես՝ İşte Türk yapımı casus uçakları(TİHA), Zaman, 06.12.2008.

⁴⁴⁴ Տես՝ İnci Paket İHA Tedarik Projesi,

http://www.ssm.gov.tr/TR/Projeler/havaaraclari/havatamamlanmis/Pages/İnciPaketİHA_K.aspx; SIPRI Arms Transfers Database,

http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html.

ՊԱԳՎ-ի կողմից մեծ ուշադրություն էր դարձվում տեղական միջոցներով ԱԹՍ-ների արտադրության նախագծերին: 2004 թ. Մեկ-նարկեց «Թուրքական ԱԹՍ» (TIHA) նախագիծը, որտեղ որպես հիմնական կապալառու ներգրավվեց «TUSAŞ» թուրքական ընկերությունը: Նախագծի տարբեր ոլորտներում ու համակարգերի նախագծման գործում ենթակապալառու ընկերություններն են «ASELSAN»-ը, «Milsoft»-ը, «Savronik»-ը, «STM»-ը, «STD»-ն⁴⁴⁵: Ընկերությունը նախագծել է «Tiha-A» միջին հեռահարության ԱԹՍ-ն, որը պետք է առաջին անգամ օդ բարձրանար 2009 թ.: Նախատեսված էր հետագայում իրականացնել նաև դրանց վաճառքն այլ երկրներին: Դրա բազայի հիման վրա արտադրվելու են բարձր հեռահարության «Tiha-B» ԱԹՍ-ները: Ընկերությունը նախագծել է նաև փոքր մարտավարական «Gözcü» անվանակոչված ԱԹՍ-ները⁴⁴⁶:

2007 թ. թուրքական բանակին մատակարարվեցին փոքր դասի ԱԹՍ-ներ, որոնց նախագծումն ու արտադրությունն իրականացվել էր տեղական «Global Teknik», «Ortadoğu Teknik Üniversitesi-SATEK» և «Kalekalıp Baykar» ընկերությունների կողմից: 2010 թ. դրությամբ «Kalekalıp-Baykar» և «Vestel» ընկերությունների կողմից իրականացվում էր «Մարտավարական ԱԹՍ-ների արտադրության նախագիծը», որի շրջանակներում նախատեսվում էր ՅՈՒԻ-ին տրամադրել հետախուզական դիտարկման մարտավարական ԱԹՍ-ներ⁴⁴⁷:

ԱԹՍ-ների նախագծման ու արտադրության ոլորտում վերջին մի քանի տարիներին աշխատանքային ծրագրեր էր իրականացնում նաև թուրքական «Vestel» ընկերությունը: 2009 թ. ապրիլին ընկերության տնօրինությունը հայտարարեց, որ ավելի քան 6 տարի տևած աշխատանքներից հետո ավարտվել է սեփական նախագծման առա-

⁴⁴⁵ Sıu` Sapmaz, Akıncı, Ardiç, Aleçakır, Türkiye’de İnsansız Hava Aracı (İHA) Uygulamaları, II. ULUSAL HAVACILIK VE UZAY KONFERANSI, İTÜ, 15-17 Ekim 2008, İstanbul.

⁴⁴⁶ Stıu` Andy Nativi, Ankara bulks up industry and export, Defense Technology International, Vol. 1, No. 7, September 2007, p. 30.

⁴⁴⁷ Sıu` Taktik İHA Geliştirme Projesi,

http://www.ssm.gov.tr/TR/Projeler/havaaraclari/prjgrpiha/Pages/TaktikIHAGelistirme_K.aspx.

ջին ԱԹՄ-ի նախատիպի արտադրությունը, որի մշակման համար ընկերությունը ներդրել է 20 մլն դոլար: Ըստ ընկերության պատասխանատուների՝ այն հիմնականում նախատեսված է հետախուզական դիտարկումներ իրականացնելու համար: Փորձարկումների հաջող ընթացքի դեպքում ընկերությունը պայմանագիր էր ստորագրելու Թուրքիայի ՊՆ-ի հետ՝ խմբաքանակային արտադրության վերաբերյալ⁴⁴⁸: 2009 թ. հոկտեմբերի 13-ին Սինոփ քաղաքի մերձակայքում «Vestel» ընկերության արտադրության «Karayel» անվանակոչված հետախուզական ԱԹՄ-ի առաջին փորձարկումն անհաջողության մատնվեց: ԱԹՄ-ն հենց առաջին թռիչքի ժամանակ ցած ընկավ 1200 մ բարձրությունից: Նույն թվականի ապրիլի 30-ին անհաջող ավարտ ունեցավ նաև «Baykar» ընկերության արտադրած «Çaldıran» անունն ստացած հետախուզական ԱԹՄ-ի առաջին փորձարկումը⁴⁴⁹: Սակայն 2010 թ. նոյեմբերին թուրքական լրատվամիջոցները հրապարակեցին, որ «Vestel» ընկերությունը հաղթող է ճանաչվել թուրքական բանակի կարիքների ապահովման համար ԱԹՄ-ների հայտարարված մրցույթում և սեփական արտադրության ԱԹՄ-ներ է մատակարարելու բանակին⁴⁵⁰: Նույն թվականի հունվարին վարչապետ Էրդողանի մասնակցությամբ կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստի ժամանակ որոշում կայացվեց թուրքական բանակի կարիքների համար ձեռք բերել թուրքական արտադրության 12 միավոր «ÇALDIRAN» ԱԹՄ-ներ: Հունիս ամսին արդեն թուրքական ՋԼՄ-ները տեղեկացրեցին, որ վերոնշյալ համակարգը առաջիկայում պատրաստ է

⁴⁴⁸ Sbu` Vestel 20 milyon dolara insansız uçak geliştirdi denemeyi Efes'te yapacak, Hürriyet, 20.04.2009.

⁴⁴⁹ Sbu` Yerli 'heron'lar sapır sapır dökülüyor, Radikal, 13.10.2009; Bir tane daha düştü, Hürriyet, 13.10.2009.

⁴⁵⁰ Sbu` Vestel'in İHA'sı TSK ihalesini kazandı, 29.11.2010,

<http://www.haber7.com/haber/20101129/Vestelin-İHAsi-TSK-ihalesini-kazandi.php>.

լինելու թուրքական բանակում անցելու մարտական կիրառության⁴⁵¹:

2007 թ. տեղեկատվություն հայտնվեց, որ թուրք ինժեներների կողմից նախագծվել է «Malazgirt» անվանումն ստացած անօդաչու ուղղաթիռ, որի նախատիպը գտնվում է ՊՆ պատասխանատուների կողմից ուսումնասիրման փուլում⁴⁵²:

Ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով թուրքական կողմը քայլեր էր ձեռնարկում արտերկրից հետախուզական ԱԹՍ-ների ձեռքբերման ուղղությամբ: Մասնավորապես՝ 2005 թ. Թուրքիան 183 մլն դոլար արժեքով պայմանագիր ստորագրեց Իսրայելի հետ՝ Իսրայելի Ավիացիոն արդյունաբերության ընկերության («IAI») ու «Elbit Systems» ընկերությունների համատեղ արտադրության 10 միավոր «Heron» հետախուզական ԱԹՍ-ների գնման վերաբերյալ⁴⁵³: Ըստ պայմանագրի՝ թուրքական ԶՈւ-ը ստանալու էին 10 միավոր Heron ԱԹՍ-ներ, որոնք իսրայելական կողմը տրամադրելու էր 2008 թ. վերջին: Սակայն, թուրք-իսրայելական հարաբերություններում ի հայտ եկած քաղաքական տարաձայնությունների պատճառով, իսրայելական կողմը նույնիսկ փորձ կատարեց չեղյալ հայտարարել այդ պայմանագիրը: Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլի Իսրայել կատարած այցի ընթացքում ձեռքբերված պայմանավորվածություններով արդեն դրանք պետք է Թուրքիային հանձնվեին 2009 թ. ապրիլին⁴⁵⁴:

Իսրայելի կողմից Թուրքիային «Heron» ԱԹՍ-ների մատակարարման ձգձգման պատճառով գերակայությունը տրվեց տեղական

⁴⁵¹ Տե՛ս՝ Ситуация в Турции: июнь 2010 г., ИИИБВ, 28.06.2010, <http://www.iimes.ru/rus/stat/2010/14-07-10a.htm>.

⁴⁵² Տե՛ս՝ Türkiye'nin ilk insansız helikopteri: Malazgirt, <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20070820.aspx>.

⁴⁵³ Տե՛ս՝ Türk HERON'lar görevde, <http://www.ssm.gov.tr>, 04.12.2008.

⁴⁵⁴ Տե՛ս՝ Gönül: 8 Heron da geliyor, Sabah, 28.01.2009.

արտադրանքի միջոցով բանակի կարիքներն ապահովելուն և աշխատանքներն այդ ուղղությամբ ավելի արագացվեցին⁴⁵⁵:

2010 թ. հունիսին թուրքական «TUSAŞ» ընկերության տնօրեն Մուհարեմ Դյորթքաշլըն հայտարարեց, որ ընկերության արտադրության «Male» անվանումն ստացած միջին հեռահարության ԱԹՄ-ն արդեն պատրաստ է իրականացնել փորձնական թռիչքներ՝ նշելով, որ 2011թ. սկսած դրանք առաջին հերթին կմատակարարվեն բանակին, իսկ հետո նաև կվաճառվեն Թուրքիայի բարեկամ ու դաշնակից երկրներին⁴⁵⁶:

Անկարայում 2010 թ. հուլիսին Թուրքիայի ԶՈւ ԳՇ պետ Ի. Բաշբուղի ու պաշտպանության նախարար Վ. Գյոնուլի մասնակցությամբ տեղի ունեցավ «TUSAŞ» ընկերության արտադրության «ANKA» անունն ստացած ԱԹՄ-ի առաջին հանդիսավոր ցուցադրությունը⁴⁵⁷: Թուրք զինվորականները նախատեսում էին այն կիրառել քուրդ զինյալների դեմ պայքարի ու հատկապես Հյուսիսային Իրաքում քրդական գրոհայինների տեղաշարժերը հետևելու համար: Պակիստանն ու ևս մի քանի երկրներ արդեն այդ ԱԹՄ-ների ձեռքբերման պատվերներ էին տվել Թուրքիային⁴⁵⁸:

Թուրքական կողմը, մինևույն ժամանակ շահագրգռված էր ամերիկյան «MQ-9 Reapers» հարվածային ԱԹՄ-ների ձեռքբերմամբ, ինչի նպատակով 2009 թ. փետրվարին պաշտոնապես դիմել էր ԱՄՆ-ին: Ամերիկյան «General Atomic» ընկերության արտադրության այդ ինքնաթիռները իրենց լավագույնս էին

⁴⁵⁵ Տես՝ Turkey Speeds Up Works For Its Own UAVs, 18.05.2009, <http://www.turkishweekly.net/news/77195/turkey-speeds-up-works-for-its-own-uavs.html>.

⁴⁵⁶ Տես՝ Yerli insansız hava aracı Male, test uçuşu yapacak, Hürriyet, 30.06.2010, <http://www.hurriyet.com.tr/ekonomi/15176894.asp>.

⁴⁵⁷ Տես՝ Türk insansız hava aracı hangardan çıktı, Hürriyet, 16.07.2010, <http://www.hurriyet.com.tr/gundem/15337738.asp>. Թուրքիայի ՊՆ-ն նախատեսում էր բանակի կարիքների համար ընդհանուր թվով 20 միավոր «ANKA» ԱԹՄ-ների պատվեր տալ թուրքական ընկերությանը:

⁴⁵⁸ Տես՝ Захар Гельман. «Анка»-в воздухе. Независимое военное обозрение, No. 32, (27 Августа-2 Сентября), 2010, с. 12.

դրստորել Աֆղանստանում և Իրաքում ամերիկյան ԶՈւ-ի իրականացրած ռազմական գործողությունների ժամանակ, ուստի թուրքական ռազմական պատասխանատուների համար դա լավագույն միջոցներից կարող էր լինել քրդական զինյալների ոչնչացման նպատակով ձեռնարկվող ռազմական գործողությունների համար: 2011 թ. սեպտեմբերին ամերիկյան «The Washington Post» պարբերականը գրեց, որ ԱՄՆ-ի վարչակազմը քննարկում է Թուրքիային կիրառման նպատակով ամերիկյան «Predator» հարվածային ԱԹՄ-ների տրամադրման հարցը՝ ՔԲԿ-ի զինյալների դեմ պայքարում կիրառման նպատակով՝ նշելով, որ Թուրքիան ամենաշատը հենց նման համակարգերի կարիքն ունի⁴⁵⁹: Արդեն նույնամյակին թուրքական ԶԼՄ-ները տեղեկատվություն տարածեցին, որ 4 միավոր «Predator» ԱԹՄ-ները Իրաքից փոխադրվել են Թուրքիա՝ տեղակայվելով Ինջիրլիքի ռազմաբազայում⁴⁶⁰:

Ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության մեջ լուրջ ուշադրություն էր դարձված ԱԹՄ-ների նախագծման ու արտադրության առաջնահերթությանը՝ հետագայում միջազգային շուկայում հաջողություններ գրանցելու հեռանկարով: ԱԹՄ-ների արտադրության տեղական բազայի զարգացումը հիմնականում ներառում էր հետևյալ համակարգերը.

փոքր ԱԹՄ-ներ (Mini İHA)

մարտավարական ԱԹՄ-ներ (Taktik İHA)

օպերատիվ ԱԹՄ-ներ (Operatif İHA)

ռազմավարական ԱԹՄ-ներ (Stratejik İHA)

հարվածային, մարտական ԱԹՄ-ներ (Taarruzi, Muharip İHA):

⁴⁵⁹ Տես՝ U.S. considering Ankara's request to base Predators in Turkey to fight a Kurdish group in northern Iraq, http://www.washingtonpost.com/world/national-security/us-considering-ankaras-request-to-base-predators-in-turkey-to-fight-a-kurdish-group-in-northern-iraq/2011/09/09/gIQA5R1fIK_story.html.

⁴⁶⁰ Տես՝ 'Predator'lar görecek ama vurmayacak, Radikal, 15.11.2011. Ըստ ամերիկյան ու թուրքական ԶԼՄ-ների՝ Թուրքիան 2012 թ. դրությամբ դեռ քայլեր էր ձեռնարկում ԱՄՆ-ից ձեռք բերել նաև «Reapers» ժամանակակից հարվածային ԱԹՄ-ներ, որոնք իրենց հնարավորություններով ու սպառազինվածությամբ զգալիորեն գերազանցում են «Predator»-ներին: Տես՝ Mesut Çevikalp, Havada dijital kuş devri!, Aksiyon, 11.06.2012:

Որպես ռազմավարական խնդիր էր դրված ամբողջությամբ տեղական ռազմաարդյունաբերության միջոցներով մինչև 2010 թ. ամբողջական համակարգի արտադրությունը, 2011 թ.՝ օպերատիվ ԱԹՄ-ների հանձնումը: Ռազմավարական ու հարվածային ԱԹՄ-ների նախագծման, զարգացման ու արտադրության ոլորտում որպես նպատակ առաջադրված էր մինչև 2010 թ. ապահովել մասնակցությունը միջազգային կոնսորցիումներին ու արտերկրների հետ համատեղ նախագծերին⁴⁶¹:

2010 թ. հուլիսին թուրքական «Sabah» պարբերականը հրապարակեց, որ թուրքական արտադրության ԱԹՄ-ներն արդեն մարտական կիրառություն էին անցնում Թուրքիայում: Չնշելով ԱԹՄ-ների անունները՝ պարբերականը հայտնում էր, որ այդ միջոցները կիրառվում են թուրք-իրաքյան սահմանին՝ քուրդ զինյալների դեմ պայքարում ու սահմանային հսկողության ոլորտում⁴⁶²: Որոշ թուրքական աղբյուրներ էլ հայտնեցին, որ Թունջելիում կիրառված ԱԹՄ-ների միջոցով հնարավոր է եղել կանխել զինյալների ծրագրած հարձակումները թուրքական ժանդարմերիայի դեմ⁴⁶³:

Թուրքիայի ՌՕՈՒ-ի արդիականացման գործում իր էական դերն ունեցավ հատկապես ԱՄՆ-ի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը: Օդուժի զարգացման նպատակով ձեռք բերված և պատվիրված սպառազինության մի զգալի մասն ուղղակի ամերիկյան արտադրության էր և ժամանակակից: 2008 թ. փետրվարին ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսի հետ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը նշեց, որ Թուրքիայի համար ԱՄՆ-ը կարևոր դաշնակից է հանդիսանում նաև այդ երկրի ԶՈՒ-ի արդիականացման գործում սերտ ու երկարաժամկետ համագոր-

⁴⁶¹ Sıkı ` 2009-2016 Savunma Sanayii Sektorel Strateji Dökümanı, Savunma Sanayii Müsteşarlığı, Nisan 2009, s. 26, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Documents/2009_SSSS.pdf.

⁴⁶² Sıkı ` Türk malı İHA'lar Cudi'de, Sabah, 19.07.2010.

⁴⁶³ Sıkı ` İHA'lar Tunceli'de görevde, 25.10.2010, <http://www.haber3.com/ihalar-tuncelide-gorevde-615343h.htm>.

ծակցության առումով՝ փաստելով ռազմասարդյունաբերության ոլորտում երկկողմ բարձր մակարդակի համագործակցությունը: Հատկապես նա շեշտեց թուրքական ՌՕՈՒ-ի սպառազինության, ժամանակակից տեխնիկայի արտադրության ու մատակարարման հարցում ամերիկյան կողմի աջակցության մասին⁴⁶⁴: Միաժամանակ, Թուրքիան սկսեց համագործակցություն զարգացնել նաև մի քանի այլ երկրների հետ, ինչպես օրինակ՝ Իտալիայի, Հարավային Կորեայի և այլն:

Թուրքիայում որոշում կայացվեց վերանայել նաև երկրի հակաօդային պաշտպանության վիճակը, իրականացնել արդիակա-նացման քայլեր և ստեղծել սեփական հակահրթիռային պաշտպա-նությունը, ինչը շատ բանով կապված էր սպառազինությունների աճող մրցավազքի և Մերձավոր Արևելքում ՋՈԶ-ի ու հրթիռային տեխնոլոգիաների տարածման խնդիրների հետ⁴⁶⁵: Հարկ է նշել, որ դեռ Սառը պատերազմի տարիներին թուրքական ՋՈՒ-ը զգալիորեն թույլ են եղել հակաօդային պաշտպանության տեսակետից և ի տարբերություն ՆԱՏՕ-ի անդամ այլ երկրների՝ Թուրքիան գալիորեն զիջել է թե այդ սպառազինության թե տեսակների, և թե տեխնո-լոգիական առումներով: Թուրքիայի հետսառըպատերազմյան պաշտպանական ռազմավարության այն մոտեցումը, որ երկրի ՋՈՒ-ը պետք է պատրաստ լինեն կանխել Թուրքիայի դեմ հարձակում-ներն ու սպառնալիքները մինչև թուրքական տարածքին հասնելը, ենթադրում էր նաև երկրի օդային տարածքի ու հակահրթիռային պաշտպանության կայուն ու ժամանակակից համակարգի առկա-յություն, եթե հաշվի առնենք վերջին տարիներին մերձավորարևել-յան տարածաշրջանում սպառազինությունների աճող մրցավազքն ու հրթիռային տեխնոլոգիաների զարգացումը: Թուրքիայի ռազմա-կան ղեկավարության համար տարածաշրջանում անկանխատեսելի

⁴⁶⁴ Տես՝ Secretary Gates Press Conference with Turkey's Ministry of Defense, February 28, 2008, <http://www.defense.gov/transcripts/transcript.aspx?transcriptid=4162>.

⁴⁶⁵ Տես՝ Սերգեյ Մինասյան, Բարայելա-թուրքական ռազմաքաղաքական համագոր-ծակցությունը քրդական հիմնախնդրի համատեքստում, «21-րդ դար», N. 4, Երևան, 2006, էջ 86:

զարգացումների հնարավորության պարագայում խիստ հրատապ խնդիր դարձավ զարգացած ՀՕՊ համակարգի ստեղծումը, քանի որ տարածաշրջանում անվերահսկելի դարձած հրթիռային տեխնոլոգիաների տարածումն ու հատկապես Իրանի կողմից բալիստիկ հրթիռների զարգացումը թուրքական ռազմաքաղաքական շրջանակների կողմից դիտարկվում էին որպես երկրի անվտանգությանն ուղղված մարտահրավերներ: Դեռևս 1990-ական թթ. Թուրքիան լուրջ անհանգստություն էր հայտնում Իրանի, Իրաքի ու նաև Սիրիայի կողմից քիմիական ու կենսաբանական զենքերի ու հրթիռների զարգացման հնարավորությունների կապակցությամբ: Ինչպես նշում է թուրք հետազոտող Ֆ. Սյունեգոլյուն՝ Թուրքիայի հարևանները ոչ միայն տիրապետում էին հեռահար հրթիռների, այլ նաև կատարելագործում դրանք, մինչդեռ Թուրքիան գուրկ էր նման հարձակողական միջոցներից և բավական անհանգիստ էր իրեն գգում ⁴⁶⁶ : Թուրքիան Մերձավոր Արևելքում լրջորեն գիտակցեց բալիստիկ հրթիռների լայնամասշտաբ կիրառման մարտահրավերները Օոցի պատերազմում, երբ Իրաքն սկսեց օգտագործել «Scud-Bs» և «Al-Husseini» հրթիռները, իսկ հետագայում արդեն լուրջ մտավախություններ սկսեց առաջ բերել Իրաքի կողմից ՋՌՋ օգտագործման հավանականությունը ⁴⁶⁷ : Թուրքիայի համար լուրջ մարտահրավեր էր ներկայացնում նաև Իրանի կողմից հրթիռային տեխնոլոգիաների զարգացումը, միջուկային ոլորտում իրանական ծրագրերն ու տարածաշրջանային զարգացումների անկանխատեսելիության գործոնը:

Հարկ է նշել, որ Թուրքիայի ՀՕՊ միջոցները բավական հին էին և չէին կարող լրջորեն պաշտպանել երկրի օդային տարածքները: 1950-ական թթ. երկրորդ կեսին Թուրքիան ԱՄՆ-ից ստացավ ՀՕՊ «Nike Ajax/Hercules» համալիրներ ու մեծ քանակությամբ հրթիռներ,

⁴⁶⁶ Stü` Sönmezoglu Faruk, Turkey and the World in the 21st Century, Turkish Foreign Policy in Post Cold War Era, ed. Idris Bal, BrownWalker Press, USA, 2004, p. 92.

⁴⁶⁷ Stü` Şebnem Udum, Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defence, Turkish Studies, Vol. 4, No. 3, 2003, p. 76.

որոնք թուրքական բանակի առաջին ՀՕՊ հեռահար միջոցներն էին: 1970-ականների կեսերին թուրքական տարածքի ՀՕՊ-ն ուժեղացնելու նպատակով ԱՄՆ-ի կողմից տրամադրվեցին օդային հսկողության ռադիոլուկացիոն կայաններ: 1980-ական թթ. կեսերին մատակարարվեց մոտ 800 միավոր «Redeye» մոդելի կրովի հակաօդային միջոց, իսկ 1990-ականների առաջին կեսին Գերմանիան տրամադրեց ևս 300 միավոր նույն համակարգերից⁴⁶⁸:

1990-ականների սկզբներին թուրքական բանակը համալրվեց մոտ 470 միավոր «FIM-92 Stinger» կրովի ՀՕՊ միջոցներով: Հետագայում՝ 1996 թ. թուրքական ՀՕՊ-ը համալրվեց 14 միավոր Rapier համալիրներով ու 500-ից ավել հրթիռներով, որոնք այդ շրջանում թուրքական բանակի կարևոր ու հիմնական ՀՕՊ միջոցներն էին: 1990-ական թթ. Զգալիորեն ուժեղացվեց նաև ծովային ՀՕՊ-ը՝ ամերիկյան ու եվրոպական համակարգերի ձեռքբերմամբ⁴⁶⁹:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի ՀՕՊ-ը զգալիորեն թույլ էր և նորագույն միջոցների խիստ կարիք էր զգացվում, հատկապես հեռահար ՀՕՊ համալիրների բացակայության պարագայում:

ՀՕՊ հեռահար համակարգի ստեղծման ուղղությամբ 2006 թ. հունիսին վարչապետ Էրդողանի նախագահությամբ գումարված Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց երկրի ՀՕՊ-ն ուժեղացնելու համար սկսել արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործումը⁴⁷⁰, փոքր ու միջին հեռահարության համալիրների ու պաշտպանական միջոցների արտադրության գործում գերակայությունը տալով տեղական ընկերություններին⁴⁷¹: Նպատակը կայանում էր

⁴⁶⁸ Տես՝ SIPRI Arms Transfers Database,

http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html.

⁴⁶⁹ Մասնավորապես՝ 1995-96 թթ. ռազմանավերի համար նախատեսված «Aspide» համալիրի 72 միավոր հրթիռների ձեռքբերումն Բուսալիայից լուրջ քայլ էր օդային պաշտպանության ամրապնդման առումով: Տես՝ «SIPRI Arms Transfers Database»՝ http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html:

⁴⁷⁰ Տես՝ Turkish Daily News, 01.04.2007.

⁴⁷¹ Տես՝ Zaman, 18.02.2006.

նրանում, որ թուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունները, համագործակցելով աշխարհի առաջատար ընկերությունների հետ, յուրացնեն ՋՀՀ-ների ստեղծման բարդ ու գիտատեխնիկական գործընթացը՝ հետագայում իրականացնելով ինքնուրույն աշխատանքներ:

ՀՕՊ ամրապնդման ու զարգացման ծրագրի շրջանակներում Թուրքիան նախատեսում էր իր ՑՈւ-ի համար ձեռք բերել 45 փոքր հեռահարության համալիրներ («T-LALADMIS»), հետագայում ևս 45 համալիրների ձեռքբերման հավանականությամբ, և ևս 12 համալիրներ՝ ՌՕՈւ-ի համար: Դրանք հիմնականում կոչված էին ապահովել ռազմական բազաների պաշտպանությունը: Այդ համալիրների արտադրական ծրագիրն իրականացվում էր «ROKETSAN» ընկերության կողմից: Ձեռքբերվելիք միջին հեռահարության համալիրները («T-MALADMISO») պաշտպանելու են օդային տարածքը ռազմական ինքնաթիռներից: Փոքր հեռահարության ՋՀՀ-ների պահանջարկի որոշ մասը Թուրքիան փորձում է ապահովել տեղական ռազմաարդյունաբերության միջոցով: Մասնավորապես՝ 2001 թ. Թուրքիայի ՊՆ-ն «ASELSAN» ընկերության հետ 256 մլն դոլար արժուողության պայմանագիր ստորագրեց՝ բանակային ՀՕՊ համալիրների մատակարարման վերաբերյալ, որով ՋՈւ-ին մատակարարվելու էին 70 միավոր «Atilgan և 78» միավոր «Zırkın» (11 միավորը՝ ՌՕՈւ-ի համար): Մատակարարումը բանակին սկսվեց 2004 թ.⁴⁷²: ՀՕՊ միջոցների կարիքների մի որոշ մասը ապահովվեց «ASELSAN» ընկերության արտադրության «Atilgan» և «Zırkın» տեսակի համալիրներով: Մինչև 2009 թ. ՋՈւ-ին արդեն հանձնվել էին ավելի քան 100 նման համալիրներ և նախատեսվում էր 2010 թ. մատակարարել ևս 48 համալիրներ⁴⁷³: Բրիտանական «Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտի» («IISS») կողմից հրատարակված «The Military Balance» տարեգրքի համաձայն՝ 2010 թ.

⁴⁷² Shtu՝ Н. Сомов. Состояние и перспективы развития ВВС Турции// Зарубежное военное обозрение. № 4, 2009, с. 63.

⁴⁷³ Shtu՝ Jane's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 32.

դրությամբ թուրքական ցամաքային ուժերում արդեն կիրառության մեջ էին գտնվում 148 համալիրներ⁴⁷⁴:

Հարկ է նշել նաև, որ 2005 թ. ԱՄՆ-ից ձեռք բերվեցին համեմատաբար ժամանակակից համարվող «I-HAWK» արդիականացված միջին հեռահարության ՀՕՊ 8 համալիրներ՝ մոտ 175 հրթիռներով⁴⁷⁵, ինչը միտված էր ժամանակավորապես ամրապնդել ՀՕՊ պաշտպանությունը, մինչև հեռահար նոր համակարգերի ձեռքբերումը:

2010 թ. հունիսին կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի ընդունած որոշման համաձայն՝ 2011 թ. հունիսին ՊԱԳՎ-ի ու «ASELSAN» ընկերության միջև ստորագրվեց պայամանագիր՝ բանակի կարիքների համար փոքր ու միջին հեռահարության ՀՕՊ համալիրների արտադրության վերաբերյալ⁴⁷⁶: 2013 թ. հոկտեմբերին Թուրքիայում անցակցվեցին այդ համալիրի առաջին փորձարկումները: Արտադրական ծրագիրն իրականացվում էր Փոքր հեռահարության հակաօդային պաշտպանության հրթիռային համակարգ (HISAR-A) նախագծի շրջանակներում: Արտադրությունն իրականացնում է հիմնականում «Aselsan» ընկերությունը սակայն դրանում ներգրավված է նաև «Roketsan» ընկերությունը: Նախատեսված է, որ ԶՈւ-ն այդ համալիրներով կհամալրվեն 2017 թ.⁴⁷⁷:

ՀՕՊ հեռահար համակարգերի ձեռքբերման համար 2006 թ. Թուրքիայի կողմից հայտարարված միջազգային հայտամրցութի մասնակցության հայտ ներկայացրեցին ամերիկյան («Patriot»)-ը, ռուսական («С-300ПМУ-2 Фаворит»)-ը և ամերիկա-իսրայելական համատեղ արտադրության («Arrow-2») ԶՀՀ-ները: Թուրքիան պլա-

⁴⁷⁴ Տես՝ The Military Balance 2010, International Institute of Strategic Studies, London: Routledge 2010, p. 165

⁴⁷⁵ Տես՝ SIPRI Arms Transfers Database, http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html:

⁴⁷⁶ Արտադրական այդ ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է ավելի քան 325 մլն եվրո: Տես՝ Milli füze üreteceğiz, Sabah, 21.06.2011:

⁴⁷⁷ Տես՝ İlk yerli füze HISAR-A başarıyla denendi, Sabah, 08.10.2013.

նավորում էր 2006-2009 թթ. ընթացքում գնել մեծ հեռահարության 4 համալիր՝ 800 մլն դոլար ընդհանուր արժողությամբ, իսկ 2010-2014 թթ. գրեթե նույն արժողությամբ ձեռք բերել չՕՊ հեռանկարային 4 համալիրներ: Ռուսական կողմի հետ Թուրքիայի ռազմական ներկայացուցիչները ռուսական գործարան կատարած այցի ընթացքում քննարկել են նաև պաշտպանական տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցեր⁴⁷⁸: 2008 թ. վերջին Ռուսաստանի պաշտպանության նախարար Ա. Սերդյուկովի՝ Թուրքիա կատարած այցի ընթացքում քննարկվել են երկկողմ ռազմական համագործակցության մի շարք հարցեր, այդ թվում նաև՝ Թուրքիայում չՕՊ համակարգերի ներդրման խնդիրները, որի ընթացքում Ռուսաստանի պաշտպանության նախարարը վերահաստատել է համալիրների վաճառքի ռուսական առաջարկը⁴⁷⁹: Ըստ թուրքական և ռուսական աղբյուրների՝ բանակցություններ էին ընթանում նույնիսկ Թուրքիային «С-400 Триумф» չՕՊ համալիրների հնարավոր վաճառքի շուրջ, ինչը հաստատել է նաև «Рособоронэкспорт»-ի ներկայացուցիչը⁴⁸⁰: Ավելի վաղ, ռուսական լրատվամիջոցների տեղեկատվության համաձայն, Ստամբուլում 2009 թ. ապրիլին անցկացված Ռազմական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսի (IDEF) ժամանակ Թուրքիային «С-400 Триумф» համալիրների հնարավոր վաճառքի հետ կապված հար-

⁴⁷⁸ Stu՝ Правительство Турции приняло решение о проведении тендера на закупку средств ПВО большой дальности. <http://www.arms-tass.su>; 21.02.2006.

⁴⁷⁹ Stu՝ Turkish, Russian ministers discuss proposals on air defense system, <http://www.hurriyet.com.tr/english/world/10395591.asp>. Նշենք, որ դեռևս 2000 թ., երբ ամերիկյան կողմը հավանություն չէր տալիս Թուրքիային ներգրավվել «Arrow 2» համալիրների ամերիկախարայելական համատեղ արտադրության ծրագրում, Ռուսաստանը առաջարկել է «S-300» չՕՊ համալիրներ վաճառել Թուրքիային ու նաև համատեղ արտադրություն իրականացնել: Stu՝ Russia offers Turkey upgraded, longer-range S-300s, Hürriyet Daily News, 03.04.2000:

⁴⁸⁰ Stu՝ Russia in talks to sell Turkey air defense systems, company confirms, <http://www.hurriyet.com.tr/english/world/11540318.asp>.

ցերը քննարկվել են ռուսական ռազմական պատվիրակության ղեկավար Ա. Աքսենովի և ՊԱԳՎ-ի պետ Մ. Բայարի միջև⁴⁸¹:

Երկար ժամանակ վերջնական որոշում չէր կայացվում, և 2008 թ. մայիսին Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն վերջնականապես վերահաստատեց ՀՕՊ հեռահար համալիրների ձեռքբերման անհրաժեշտությունը, որի ընթացքում հաստատվեց նաև չինական համալիրի մասնակցությունը հայտամրցությին: Մինչև 2010 թ. թուրքական բանակում մարտական հերթապահության մեջ գրեթե չկային մեծ հեռահարության ՀՕՊ համալիրներ: Թուրքիայի օդային տարածքը հսկում էին փոքր հեռահարության «Rapier», «Stinger», «Atilgan» և «Zıpkın», ինչպես նաև միջին հեռահարության «I-Hawk» արդիականացված ՉՀՀ-ները⁴⁸²:

Թուրքական աղբյուրների համաձայն՝ որոշ առումներով նախապատվությունը տրվում էր ռուսական համալիրներին, սակայն այդ խնդրի շուրջ վերջնական մոտեցում չկար⁴⁸³:

ԱՄՆ-ն առանձին բանակցություններ էր վարում Թուրքիայի հետ՝ «Patriot Advanced Capability-3» մակնիշի կատարելագործված 6 ՉՀՀ-ների վաճառքի շուրջ, որի արժեքը կազմում է շուրջ 1 մլրդ դոլար⁴⁸⁴: Ամերիկյան առաջատար «Lockheed Martin» ընկերությունը

⁴⁸¹ Stu՝ Turkey hopes to buy S-400 air defense systems from Russia, RIA Novosti, 27.04.2009.

⁴⁸² Stu՝ ՊԱԳՎ պաշտ. կայք՝ <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20080501.aspx>.

⁴⁸³ Նույն տեղում:

⁴⁸⁴ Թուրքական մամուլի հաղորդումը՝ ԱՄՆ-ի հայկական և հունական լրբին ձեռնարկումներ էր սկսել ռազմական այդ գործարքը խոչընդոտելու համար: Նրանք նամակ էին հղել Կոնգրեսի ռազմական ծառայությունների և միջազգային հարաբերությունների հանձնաժողովներին ու առանձին կոնգրեսականներին, որտեղ ասվում էր, որ զենքերի վաճառքով ռազմական հավասարակշռությունը Կիպրոսում կխախտվի, և որ այդ զենքերով հնարավոր է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում Ադրբեջանին աջակցող Թուրքիան սպառնա Հայաստանին: Ասվում էր, որ այդ վաճառքը չի կարող ծառայել ԱՄՆ շահերին և արժեքներին, և որ հրթիռների վաճառքի հետ կապված ծրագիրը պետք է վերանայվի: Stu՝ Milliyet, 15.05.2006:

բանակցություններ էր վարում թուրքական «ASELSAN» և «ROKETSAN» ռազմաարդյունաբերական ընկերությունների հետ՝ տեխնոլոգիաների տրամադրման շուրջ:

Ի դեպ, դեռևս 1999 թ. Թուրքիան ձեռք էր բերել ամերիկյան բանակային երկրորդ մոդիֆիկացիայի «PAC-2» ՋՀՀ-ների առաջին մարտկոցը: Բացի այդ, թուրքական ընկերությունները մասնակցել են նաև Իսրայելում «Arrow 2» ՋՀՀ-ների մշակման ու արտադրական գործընթացում, ինչի արդյունքում էլ Թուրքիան ակնկալում էր ձեռք բերել նման համալիրներ⁴⁸⁵:

Թուրքական կողմը, որոշ առումներով առավելությունը տալով ռուսական համալիրին, միանշանակ կամենում էր ընդգծել իր քաղաքական կամքը՝ լինել ԱՄՆ-ի ճնշումներից դուրս: Սակայն, մյուս կողմից, եթե թուրքական ղեկավարությունը կամենում է ստեղծել երկրի համատարած ՀՕՊ-ի դաշտ, մոտավորապես համակարգային ընդհանուր ՀՕՊ-ի համակարգի նման, ապա ռուսական համալիրներով նման համակարգ ստեղծելը բավականին դժվար կլինի: Համատարած ՀՕՊ-ի դաշտ ստեղծելը, որը կարող է նաև երաշխավորել ՀՀՊ, կարելի է միայն ամերիկյան սարքավորումների և համալիրների այն միասնությամբ, որոնք արդեն կիրառվում են մեկ տեղեկատվական և համագործակցության դաշտում: Թուրքիան արդեն հետաքրքրություններ էր ներկայացնում ՀՀՊ-ի այն բաղադրամասերի նկատմամբ, որոնց առկայությունը առաջադրված խնդիրը լուծելու համար պարտադիր է: Մասնավորապես, հզոր ՀՕՊ համակարգի կիրառության համար Թուրքիան ամերիկյան «Boeing» ընկերության հետ ստորագրված պայմանագրի և «Խաղաղության արձիվ» (թուրք. Barış Kartalı) ծրագրի շրջանակներում 2009 թ. ձեռք էր բերելու 2 միավոր Օդային վերահսկողության և կառավարման համակարգեր («AWACS»), իսկ ևս 2 միավորը նա-

⁴⁸⁵ Սերգեյ Մինասյան, Իսրայելա-թուրքական ռազմավարական համագործակցության ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների վրա, Թուրքիա. Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրներ, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր, Շ. 1, Երևան 2007, էջ 122; Տես՝ նաև Независимое военное обозрение, 31.10.2003:

խատեսվում էր կիրառության հանձնել 2010 թ.⁴⁸⁶ : Թուրքական ՌՕՌԻ-ի համար պատվիրված այդ համակարգերի արտադրական գործընթացում մասնակցում էր նաև թուրքական «TUSAŞ» ընկերությունը⁴⁸⁷: 1.5 մլրդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողության այդ ծրագրի հետ կապված՝ Թուրքիայի ԶՈւ-ին «AWACS»-ների հանձնումը նախատեսված ժամկետից հետաձգվեց⁴⁸⁸ : 2013 թ. Թուրքիայում տեղի ունեցան «AWACS» ինքնաթիռների փարձարկումները, որոնք, ըստ թուրքական լրատվամիջոցների, անցել էին հաջողությամբ: Նախատեսվում է, որ 4 միավոր այդ համալիր-ինքնաթիռները կհամալրեն Քոնիայում տեղակայված 3-րդ հիմնական ռազմաօդային բազան: Այդ ինքնաթիռների դիտարկման տիրույթում են լինելու էգեյան, սևծովյան, միջերկրածովյան շրջանները, մերձավորարևելյան տարածաշրջանը, Իրանը և ԱՊՀ տարածքի մի մասը⁴⁸⁹: Սա, արդեն, տարածաշրջանում նոր սպառազինություն է, և Թուրքիային այն լուրջ առավելություններ կարող է տալ:

Նշենք, որ Թուրքիայի ՌՕՌու-ը որոշակի փորձառություն ունեն վերոնշյալ համակարգերի կիրառման ոլորտում, մասնավորապես, դեռևս 80-ական թթ. ՆԱՏՕ-ի կողմից Թուրքիայի տարածքում ՆԱՏՕ-ական «AWACS»-ների կիրառման բազա է հիմնադրվել⁴⁹⁰:

Սպասվում էր, որ ՊԱԳՎ-ն կհրապարակի փոքր հեռահարության ՀՕՊ համալիրների ծրագրի վերաբերյալ իր պայման-առաջարկությունները՝ նախագծին հետաքրքրություն դրսևորող օտարերկրյա ընկերությունների համար: Այն փորձում էր պարզել, թե որտեղ և ինչպես կարող են տեղական ընկերություններն աջակցել ծրագրին, քանի որ նախատեսվում էր արտադրության մեջ զգալի

⁴⁸⁶ Sbu ` Yerli Awacs'lar 2009'da hizmete girecek, <http://www.ulasimonline.com>, 12.12..2008.

⁴⁸⁷ Sbu ` Turkey to Purchase AWACS From Boeing Company, http://english.peopledaily.com.cn/200206/06/eng20020606_97246.shtml, 06.06.2002.

⁴⁸⁸ Sbu ` AWACS'ların teslimatı gecikti Boeing'e ceza kesilecek, Sabah, 21.04.2009

⁴⁸⁹ Sbu ` Awacs'lar Sınırda Kus Uçurtmayacak, <http://www.habervakti.com/haber-detay/awacs-lar-sinirda-kus-ucurtmayacak/14102013-091650>.

⁴⁹⁰ Sbu ` Awacs Base Open in Turkey, The New York Times, 26.10.1983.

մասնաբաժին հատկացնել տեղական ռազմաարդյունաբերական ընկերություններին: Նշենք, որ 2012 թ. նոյեմբերի դրությամբ Թուրքիայում ՀՕՊ համալիրների ընտրության հետ կապված դեռևս չէր ընդունվել որոշում:

Թուրքիայի ՀՕՊ համակարգի արդիականացման ծրագրի շրջանակներում ՊԱԳՎ-ին առաջարկ-փաթեթ ներկայացվեց հարավաֆրիկյան «Denel» ընկերության կողմից, որն առաջարկում էր «երկիր-օդ» դասի «Umkhonto» կոչվող հրթիռներ վաճառել այդ երկրին: Նման առաջարկի հետ կապված տեխնոլոգիական հնարավորություններն ու պայմաններն ուսումնասիրվեցին «ROKETSAN» ընկերության մասնագետների կողմից՝ Հարավաֆրիկյան հանրապետություն կատարած այցի ընթացքում⁴⁹¹: Չնայած վերջնական որոշում այդ հարցում չկար, այնուամենայնիվ, թուրքական ընկերությունը պատրաստակամություն հայտնեց համատեղ արտադրության շուրջ ծրագրեր մշակելու վերաբերյալ:

«ASELSAN» ընկերությունը երկար տարիներ աշխատանքներ էր իրականացնում ՀՕՊ ՌՏԿ-ների ստեղծման ուղղությամբ և արդեն 2009 թ. ԶՈւ-ին այն հանձնեց առաջին թուրքական նախագծման ՌՏԿ-ն, որն ուներ 30 կմ հայտնաբերման հնարավորություն: «ASELSAN»-ի ՀՕՊ զարգացման նախագծերի մեջ առաջնային տեղ էին զբաղեցնում «2009 SERDAR ավիամերձ հսկողության ՌՏԿ-ի», «2011 TIHA SAR», «2011 նավերի որոնման և կրակի կառավարման ՌՏԿ-ի», «2012 ՀՕՊ ՌՏԿ-ի», «2016 բազմաֆունկցիոնալ ՌՏԿ-ի» ծրագրերը, որոնք իրականացվում էին ընկերության ինժեներական լայն բազայի վրա⁴⁹²: 2009 թ. Հունվարին «ASELSAN» ընկերությունը ավելի քան 4 տարի տևած աշխատանքներից հետո Թուրքիայի ՅՈՒՆ-ի հրամանատարությունը հանձնեց տեղական արտադրության առաջին ՌՏԿ-ն, որը որպես հիմնական միջոց կիրառվելու է ՅՈՒՆ-ի

⁴⁹¹ Տե՛ս՝ <http://www.gbulten.ssm.gov.tr>, 10.10.2006.

⁴⁹² Տե՛ս՝ KKK, ilk milli radarı teslim aldı,

<http://www.cnnturk.com.tr/2009/bilim.teknoloji/teknoloji/01/10/kkk.ilk.milli.radari.teslim.aldi/508354.0/index.html>.

ՀՕՊ հսկողության ու նախագուշացման «HERIKKS» անվանումն ստացած համակարգի շրջանակներում: Հանձնման պաշտոնական արարողության ժամանակ Թուրքիայի պաշտպանության նախարար Վ. Գյոնուլը, շեշտելով «ASELSAN» ընկերության հաջողություններն այդ ոլորտում, ցանկություն է հայտնել թուրքական արտադրության ՌՏԿ-ները վաճառել նաև այլ երկրներին⁴⁹³:

Թուրքիան, ունենալով մեծ բանակ, արժանի ուշադրություն էր դարձնում բոլոր զորատեսակների սպառազինության զարգացմանը, կատարելագործմանը՝ ինչպես արտասահմանից ձեռք բերելով, այնպես էլ սեփական արտադրության միջոցով: Թուրքական բանակը, մշտական ռազմական գործողություններ վարելով լեռնային տարածքներում, լավ փորձի հետ համատեղում է նաև նորագույն ռազմական տեխնոլոգիաները: Դրանով հանդերձ, թուրքական ղեկավարությունը, այնուամենայնիվ, ճիշտ կռահելով ապագայի պատերազմներում օդային հարձակման միջոցների աննախադեպ աճող դերը, պատշաճ ուշադրություն է դարձնում նաև ՌՕՈւ-ի և հատկապես ՀՕՊ-ի զարգացմանը: Լուրջ ուշադրություն էր դարձվում ՌՕՈւ-ի տարբեր զորամիավորումների օպերատիվ-մարտական պատրաստվածության կատարելագործմանը՝ ինչպես առանձին, այնպես էլ ՆԱՏՕ-ի ընդհանուր ՌՕՈւ-ի հետ համատեղ մարտական գործողությունների վարման պլանների մշակմամբ: ՀՕՊ համակարգի մարտական պատրաստության բարձրացման նպատակով իրականացվել են «Mavi ok», «Sarp» տարեկան զորավարժություններն ու հատուկ նշանակության վարժանքներ⁴⁹⁴: Թուրքիան ցանկանում էր ձեռք բերել ոչ միայն արդիական ու հզոր ՉՀՀ-ներ, այլ նաև օդային ղեկավարման կետեր, ինչպես ինքնաթիռների, այնպես էլ օդապարիկների ու ԱԹՄ-ների տեսքով: Այդ ուղղությամբ իսրայելական և ամերիկյան մասնագետների հետ տեղի էին ունենում ակտիվ քննարկումներ: Թուրքական ընկերությունների ուշա-

⁴⁹³ Տե՛ս՝ Aselsan hava savunma erken ikaz radarini teslim etti, <http://www.aselsan.com.tr>.

⁴⁹⁴ Տե՛ս՝ H. Комов, նշվ. աշխ., էջ 63:

դրությունից դուրս չէին մնում հատկապես ԱԹՍ-ներն իրենց մեծ հնարավորություններով:

Փաստորեն, թուրքական ռազմաքաղաքական շրջանակները հստակ հասկանում են, որ երկրին հարկավոր է բազմաշերտ և հուսալի պաշտպանություն երկնքից, ինչը միայն կարող են ապահովել օդային ղեկավարման կետերը՝ հզոր ՋՀՀ-ների և կործանիչ ինքնաթիռների համատեղ գործողություններն ապահովող միասնական տեղեկատվական դաշտով: «ASELSAN» ընկերությունը, Թուրքիայի ՊԱԳՎ-ի հետ միասին, ձեռնամուխ էր եղել ՋՈւ-ի տարբեր գորատեսակների միջև միասնական տեղեկատվական համակարգի ստեղծմանը, որը ռազմական գործողությունների ժամանակ ապահովելու է օդային, ռազմածովային միջոցների ու ՑՈւ-ի միջև օպերատիվ հաղորդակցություն⁴⁹⁵:

Նման հուսալի հաղորդակցային համակարգ առայժմ կիրառվում է ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և մասամբ էլ՝ Իսրայելի ՋՈւ-ում: Դրանով մի քանի անգամ կբարձրանա թուրքական ՋՈւ-ի ընդհանուր և առանձին ստորաբաժանումների կառավարման արդունավետությունը: Այս ամենը տարածաշրջանի համար նոր չափանիշ է, նոր մրցակցություն: Թուրքական ՋՈւ-ի որակի նման բարձրացման դեպքում տարածաշրջանում միանգամից կարող է փոխվել առանց այն էլ փիխրուն հավասարակշռությունը: Առհասարակ ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման և բանակը նոր մարտահրավերներին համապատասխանեցնելու թուրքական մոդելը մեր տարածաշրջանում բավականին ուսանելի է: Այն նոր մրցակազմ է տարածաշրջանի համար, որից դուրս մնալը ցանկացածի համար պարտության նախանշան է: ՀՀ ՋՈւ-ը ևս ակամայից հայտնվել են այդ մրցակազմի մեջ: Հայկական ՋՈւ-ը, հիմնականում ռազմատեխնիկական խնդիրը լուծելով ներկրամաբ, մեծապես կախված են արտաքին գործոնից: Այդ պատճառով, ավելի իրատեսական է համարվում ժամանակի ընթացքում, համագործակցելով արտասահմանյան ընկերությունների հետ, ստեղծելով միասնական նա-

⁴⁹⁵ Stu՝ Tankçı, gemi komutanı ve pilot birbiriyle konuşabilecek, Hürriyet, 17.04.2009.

խագծեր, մասամբ յուրացնել որոշ զինատեսակների արտադրության գաղտնիքները: Հատկապես խոսքը վերաբերվում է ՅՈՒ-ի բազմատեսակ հրթիռային սպառազինությանը (հակատանկային հրթիռային համալիրներ, հրետանային բազմատեսակ հրթիռային համալիրներ, ՀՊՊ-ի փոքր հեռահարության համալիրներ և այլն): Բացի դրանից, ամերիկյան նոր կործանիչների (F-35) Թուրքիայում հայտնվելը տարածաշրջանում կարող է զգալիորեն փոխել հավասարակշռությունը, իսկ ՀՀ-ն թե միայնակ, թե ՌԴ-ի ռազմավարական համատեղ ծրագրերի մի մասով, ներգրավվելու է այս ամենում:

Թուրքիայի հեռահար ՀՊՊ համակարգի զարգացման առումով բավական լուրջ քայլ էր ՆԱՏՕ-ի եվրոպական միասնական ՀՀՊ համակարգին միանալը: 2010 թ. նոյեմբերի 19-20-ը Լիսաբոնում կայացած ՆԱՏՕ-ի զագաթնաժողովում ընդունվեց դաշինքի նոր ռազմավարական հայեցակարգը, որով հավանություն տրվեց ՆԱՏՕ-ի եվրոպական միասնական ՀՀՊ համակարգի ստեղծմանը⁴⁹⁶: Թուրքիան համաձայնեց իր տարածքում տեղակայել ՀՀՊ ռադիոտեղորոշման կայան⁴⁹⁷:

⁴⁹⁶ Տես՝ Missile Defense and NATO's Lisbon Summit, <http://fpc.state.gov/documents/organization/154176.pdf>. Չնայած իր առաջ քաշած նախապայմաններին՝ Թուրքիան հավանություն տվեց և միացավ այդ ծրագրին: Բսկ նախապայմանների առաջադրումն ուղղակի մարտավարական հնարք էր, որով Թուրքիան փորձում էր մեծ հաշվով մեղմել հատկապես իրանական կողմի անհանգստությունն ու ի ցույց դնել տարածաշրջանային գործընթացներում իր «հետևողականությունը»: Այս առումով բավական հետաքրքիր էր 2012 թ. փետրվարին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոզ Ռասմուսենի հարցազրույցներից մեկում կատարած այն հայտարարությունը, որ Թուրքիան ինքն է ցանկացել, որ ՆԱՏՕ-ի հակահրթիռային պաշտպանության ՌՏԿ-ն տեղակայվի իր տարածքում: Տես՝ Füzeye kalkanını Türkiye istemiyor!, Radikal, 11.02.2012.

⁴⁹⁷ Տես՝ 2011 թ. սեպտեմբերի 2-ին Թուրքիայի ԱԳՆ-ն տարածեց հաղորդագրություն այն մասին, որ Թուրքիայի տարածքում նախատեսվում է տեղակայել ՆԱՏՕ-ի ՀՀՊ ռադիոտեղորոշիչ կայան, իսկ սեպտեմբերի 14-ին Թուրքիան ու ԱՄՆ-ը ստորագրեցին հուշագիր թուրքական տարածքում ՌՏԿ-ի տեղակայման մասին: 2011թ. վերջին արդեն ՌՏԿ-ն տեղակայվել է Քյուրեջիքում և 2012 թ. հունվարից սկսել գործել:

Տես՝ u Turkey, US sign agreement on NATO radar deployment, <http://www.todayozaman.com/news-256744-turkey-us-sign-agreement-on-nato-radar>

ՆԱՏՕ-ի եվրոպական ՀՀՊ համակարգին Թուրքիայի մաս կազմելը վերջին տարիների ՆԱՏՕ-Թուրքիա ռազմաքաղաքական համագործակցության ամենակարևոր և էական քայլերից էր: Թուրքիայի միանալան այդ համակարգին և համաձայնությունն իր տարածքում տեղակայել ռադիոտեղորոշիչ կայան կարելի է համարել վերջին 10 տարվա ժամանակահատվածում թուրք-ամերիկյան ռազմաքաղաքական համագործակցության ամենակարևոր զարգացումը: Հարկ է նկատել, որ վերջին տարիներին ինչպես ՆԱՏՕ-Թուրքիա համագործակցությունը, այնպես էլ ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները թևակոխել էին որոշակի անվստահության հարթություն: Հատկապես ՆԱՏՕ-ի ու Անկարայի միջև հարաբերությունների խաթարման առումով էական դարձավ իրաքյան պատերազմը, երբ 2003 թ. մարտին Թուրքիան մերժեց ՆԱՏՕ-ին՝ իր տարածքն օգտագործել Իրաքի դեմ պատերազմում: 2003 թ. հուլիսին Իրաքի Սուլեյմանիյա քաղաքում ամերիկյան ուժերի կողմից թուրքական հատուկ նշանակության ուժերի 11 զինձառայողների կալանավորման դեպքը Թուրքիայի ԶՈւ-ի գլխավոր շտաբի պետ Հ. Օզքոթը բնորոշեց որպես թուրքական և ամերիկյան ԶՈւ-ի միջև վստահության ճգնաժամ՝ նշելով, որ չի կարծում, թե դա ուղղակի տեղային մի միջադեպ է⁴⁹⁸: Այդ իրադարձությունները, չնայած կային ավելի խորքային պատճառներ, շրջադարձային էին ինչպես թուրք-ամերիկյան հարաբերությունների, այնպես էլ թուրքական ռազմաքաղաքական դեկավարության նոր ռազմաքաղաքական հայեցակարգի ու մոտեցումների որդեգրման առումով: 2008 թ. օգոստոսի վրաց-ռուսական պատերազմից հետո թուրքական կողմը մերժեց ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի ռազմածովային ուժերին Վրաստանին մարդասի-

deployment.html; NATO radar system in Turkey up, running, <http://www.hurriyetdailynews.com/nato-radar-system-in-turkey-up-running.aspx?PageID=238&NID=11474&NewsCatID=338>.

⁴⁹⁸ Ştu Altunışık B. Meliha, Özlem T., Turkey: challenges of continuity and change, London:

Routledge Curzon, 2005, p. 119.

րական օգնություն տրամաադրելու նպատակով սևծովյան նեղուցներով Սև ծով մտնել⁴⁹⁹:

Լիսաբոնյան գազաթնաժողովն ու եվրոպական ՀՀՊ համակարգին Թուրքիայի միանալը ցույց տվեցին, որ չնայած Անկարայի անկախ արտաքին քաղաքականության փորձերին՝ այդ երկիրը դեռևս գտնվում է ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական ազդեցության տակ և, համենայն դեպս, չի կարող էականորեն շեղվել նրանց իսկ ռազմաքաղաքական ուղեգծից: Ակնհայտ է, որ այս քայլով Թուրքիան մի շարք կարևոր «փոխհատուցումներ» է ստացել նրանցից: Անկարան իր արևմտյան դաշնակիցներին հասկացրել է, որ եվրոպական ՀՀՊ-ին միանալով, կարող է լուրջ խնդիրներ ունենալ Ռուսաստանի ու հատկապես Իրանի հետ, այդ համատեքստում գնում է «բավական վտանգավոր քայլի», ուստի դրա դիմաց պետք է Թուրքիան փոխհատուցվի: Թուրք-ամերիկյան հարաբերությունների դինամիկան, մերձավորարևելյան տարածաշրջանում թուրքական ակտիվությունը վկայում են այն մասին, որ Թուրքիան Արևմուտքի՝ հատկապես ԱՄՆ-ի կողմից, ստացել է գործողությունների որոշակի ազատություն: Եթե դիտարկում ենք վերջին շրջանում Թուրքիայի գերակտիվությունը՝ նրա ներգրավածությունը մերձավորարևելյան զարգացումներում, նկատում ենք, որ Թուրքիայի հիմնական նպատակը Մերձավոր Արևելքում որոշում կայացնող տերության կարգավիճակի ձեռքբերումն է: Անկարան իր հետապնդած շահերն ու նպատակները փորձում է զուգորդել Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի շահերի հետ, միևնույն ժամանակ փորձելով օգտագործել տարածաշրջանում վերջիններիս լծակները: Որոշակի լծակներ, թելադրանքներ, կամ հավանություններ ստանալով Արևմուտքից, Թուրքիան փորձում է առաջ տանել իր աշխարհաքաղաքական խաղը:

⁴⁹⁹ Տես՝ Լևոն Հովսեփյան, «Եվրասիականությունը» և աշխարհագրական դետերմինիզմի հիմնավորումները թուրքական զինվորականության շրջանակներում /Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVIII.-Եր.: Զանգակ-97, 2011, էջ 197-198:

Թուրքիան լայնամասշտաբ նախագծերի միջոցով փորձում է ստեղծել ՌՕՈւ-ի ու ՀՕՊ-ի զարգացած ու ինտեգրացված մի համակարգ, որն առաջին հերթին համալրվում է նորագույն ռազմական տեխնիկայով ու սպառազինությամբ: Այդ համակարգում լուրջ տեղ է հատկացված ռազմական ոլորտի տեխնոլոգիական նոր միջոցներին՝ ԱԹՄ-ներ, հետախուզական արբանյակ, հետախուզական օդապարիկներ: Չնայած Թուրքիան լիովին չի տիրապետում նորագույն տեխնոլոգիաներին, այնուամենայնիվ քայլեր է ձեռնարկում դրանց նախագծման ու արտադրության ուղղությամբ: Արտադրական գործընթացում թուրքական կողմը դեռևս զգալի կախվածություն ունի առաջատար երկրներից և ամեն կերպ ջանում է այդ երկրների օգնությամբ յուրացնել նրանց փորձն ու պատրաստել սեփական կադրերը:

Մինչև հիմա, դեռևս թուրքական ռազմարդյունաբերությունը հեռահար ՀՕՊ և ՀՀՊ միջոցների նույնիսկ բաղադրամասերի արտադրության ոլորտում հաջողություն չի գրանցել և դրանց ձեռքբերման համար միջազգային մրցույթ էր հայտարարել: Նշենք, որ աշխարհում շատ ավելի հզոր գիտատեխնիկական բազա ունեցող երկրներ կան, սակայն դեռ ոչ մի պետություն բացի ԱՄՆ-ից և Ռուսաստանից ինքնուրույն չի ստեղծել մեծ հեռահարության ՁՀՀ:

2013 թ. սեպտեմբերի 26-ին երկար տարիներ ձգձումից հետո Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց այդ երկրի պաշտպանական արդիականացման ոլորտում ամենաեական հայտամրցություն հաղող ճանաչել չինական «CPMIEC» ընկերությանը և 4 մլրդ դոլար արժողության նախագծի իրականացման վերաբերյալ սկսել պայմանագրերի ստորագրումը չինական կողմի հետ⁵⁰⁰: Թուրքիան նախատեսում է հեռահար ՀՕՊ համալիրների թուրք-չինական համատեղ արտադրություն կազմակերպել:

Չինական ընկերությանը հաղթող ճանաչելու առաջնային պայմանը Թուրքիայի տարածքում այդ համալիրների համատեղ

⁵⁰⁰ Stu` 4 milyar dolarlık füze ihalesi Çinli firmanın, Zaman, 27.09.2013.

արտադրության կազմակերպումն և տեխնոլոգիաների ստացումն է, քանի որ ամերիկյան ու ռուսական ընկերությունները տեխնոլոգիաների հարցում շոյալ չեն: Եթե դիտարկենք Թուրքիայի ՌՕՌ-ի ու ՀՕՊ համակարգի միասնական դաշտ ստեղծելու ջանքերը, ապա տրամաբանորեն պետք է ընտրություն կատարվեր հոգուտ ամերիկյան համալիրների, եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ Թուրքիան 2010 թ. միացել էր ՆԱՏՕ-ի միասնական եվրոպական հակահրթիռային պաշտպանության համակարգին և իր տարածքում տեղակայել ՀՀՊ ռադիոտեղորոշիչ կայան: Այդ որոշումը հետևանք կլինի նաև թուրքական զարգացող ռազմաարդյունաբերության համար մի շարք այլ ոլորտներում չինական ընկերությունների ներգրավմանը համատեղ նախագծերում: Փաստորեն, նման կարևոր հայտամարտայթի երկար տարիներ ձգձգումը պայմանավորված էր մրցույթին մասնակցող կողմերից առավելագույնն ստանալու ակնկալիքով, և փաստորեն, չինական կողմի առաջարկները բավարարել են Թուրքիային: Այս որոշման մեջ առաջնայիններից է նաև այն, որ Թուրքիան ձգտում է միջին ու մեծ հեռահարության բալիստիկ հրթիռների արտադրության ոլորտում չինական տեխնոլոգիաներ ստանալ: Ներկայում Թուրքիայում ընթանում են միջին ու մեծ հեռահարության բալիստիկ հրթիռների նախագծման աշխատանքները, իսկ դա այնպիսի ոլորտ է, որ առանց լուրջ տեխնոլոգիական աջակցության գրեթե անհնար կարող է լինել Թուրքիայի պարագայում: Դեռևս 1990-ականներից սկսած ոչ ԱՄՆ-ը, ոչ էլ եվրոպական առաջատար ընկերությունները չեն համաձայնել Թուրքիային նման սպառազինություն վաճառել, և առավել ևս՝ տեխնոլոգիաներ տրամադրել, ուստի չինականը Թուրքիայի համար դիտվում է որպես նախընտրելի տարբերակ:

Մեծ հաշվով թուրքական ԶՈւ-ի արդիականացումն ավելի ակնառու և մասշտաբային է դառնում հատկապես ՌՕՈւ-ում: Արդիականացման տարբեր ծրագրերն ու ժամանակակից օդային սպառազինության ձեռքբերումները միտված են տարածաշրջանում ապահովելու Թուրքիայի օդային գերակայությունը:

3.3. Ռազմաճովային ուժերի արդիականացման նախագծերը

Թուրքիայի ՌԾՈՒ-ը⁵⁰¹ հանդիսանում են ՁՈՒ-ի հիմնական գորքի տեսակներից մեկը և քանակական ու մարտական հնարավորություններով ու համալրվածությամբ համարվում են տարածաշրջանում ամենամեծն ու մարտունակը: ԽՍՀՄ փլուզումից ու խորհրդային Սևծովյան նավատորմի՝ Ռուսաստանի Դաշնության ու Ուկրաինայի միջև բաժանումից հետո, թուրքական ՌԾՈՒ-ը դարձան ամենահզորը Սև ծովում: Հետսառքպատերազմյան շրջանում թուրքական ՌԾՈՒ-ը ստացան ավելի ընդգրկուն ու մասըջտաբային գործառույթներ, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային նոր զարգացումներին համարժեք Թուրքիայի անվտանգության ու պաշտպանության առումով: Թուրքիայի՝ որպես տարածաշրջանային դերակատարի հավակնությունները, տարածաշրջանային էներգետիկ, հաղորդակցային նախագծերն ու ռազմաքաղաքական զարգացումները Թուրքիայի զինվորական ու քաղաքական իշխանությունների համար էլ ավելի կարևոր դարձրեցին սևծովյան տարածաշրջանում թուրքական հզոր նավատորմի ու մարտունակ ու նորագույն սպառազինությամբ համալրված ՌԾՈՒ-ի գերակայությունը:

1980-ական թթ. վերջին Թուրքիայի ՌԾՈՒ-ի կազմում հիմնականում ամերիկյան ու գերմանական հնացած ռազմանավերն էին,

⁵⁰¹ Տես՝ Թուրքիայի ՁՈՒ ԳՇ-ում 1928 թ. մինչև 1949 թ. որպես Օովային վարչություն գործող ռազմաճովային հրամանատարությունը 1949 թ. օգոստոսի 15-ի Բարձրագույն զինվորական խորհրդի (Yüksek Askeri Şura) որոշմամբ վերակազմավորվեց ՌԾՈՒ հրամանատարության: 1961 թ. ՌԾՈՒ-ի հրամանատարության կառուցվածքը փոփոխությունների ենթարկվեց և այն կազմվեց 4 հիմնական՝ Նավատորմի, Հյուսիսային ծովային շրջանի, Հարավային ծովային շրջանի և Օովային ուսումնական հրամանատարություններից: 1995 թ. Օովային ուսումնական հրամանատարությունը վերանվանվեց Օովային ուսումնակրթական հրամանատարության: Վերոնշյալ կառուցվածքը գործում է մինչև օրս: Տես՝ Թուրքիայի ՌԾՈՒ-ի հրամանատարության պաշտոնական կայք՝

<http://www.dzkk.tsk.tr/turkce/tarihimiras/geneltarihce.php>:

որոնք վերջին անգամ արդիականացվել էին 1960-70-ական թթ., սակայն դրանց քանակը մեծ չէր: ՌԾՈւ-ի արդիականացման ու վերակազմավորման ծրագրերով նախատեսվում էր մեծացնել ռազմանավերի թիվը, իրականացնել առկա տեխնիկայի արդիականացում և նորագույն զենքի տեսակների համալրում: Նորագույն ռազմանավերի ու սպառազինության համալրումը նախատեսվում էր իրականացնել ինպես արտասահմանյան օգնության, այնպես էլ ուղղակի զնումների միջոցով: Միննույն ժամանակ քայլեր էին ձեռնարկվում ազգային նավաշինական հիմքի վրա արտադրությունը մեծացնելու ուղղությամբ⁵⁰²:

1990-ական թթ. Սև ծովում թուրքական ռազմական նավատորմի մեծությունն ու ավելի մեծ դերակատարությունն ապահովելու հավակնությունները մտահոգություն առաջացրեցին Ռուսաստանում, ինչի մասին 1994 թ. իր հոդվածում արտահայտվեց ռուս ծովակալ Ալեքսեյ Կալինինը՝ նշելով, որ «թուրքական նավատորմը Սև ծովի իրական տերը դառնալու հնարավորություն ունի, և նրա հզորությունը հետևողականորեն մեծանում է»: Ըստ նրա հրապարակած տվյալների՝ 1994 թ. վերջերին թուրքական ռազմական նավատորմի նավերի ընդհանուր թիվը մոտեցել է շուրջ 260-ի⁵⁰³:

Ռազմածովային նավատորմը հիմնականում համալրված էր արևմտյան երկրների արտադրության նավերով, որոնք Թուրքիային են տրամադրվել ռազմական օգնության տարբեր ծրագրերի շրջանակներում: ՌԾՈւ-ի հրամանատարության համար առաջնահերթ խնդիր էր դիտվում տարբեր դասի ռազմական նավերի արդիականացումը, տեղական ռազմաարդյունաբերության ու այլ երկր-

⁵⁰² Տես՝ Турецкая Республика, справочник, Москва, Изд. «Наука», 1990, с. 92-93.

⁵⁰³ Տես՝ Maria Drohobysky, Crimea: dynamics, challenges and prospects, Rowman & Littlefield Publishers Inc., USA, 1995, p. 170. Ըստ բրիտանական «The Military Balance» հեղինակավոր տեղեկագրի տվյալների՝ 2010 թ. դրությամբ Թուրքիայի ռազմական նավատորմում առկա տարբեր ռազմանավերի թիվը կազմել է 197 միավոր: Թուրքիայի ռազմական նավատորմի կազմում էին՝ 14 սուզանավ, 23 ֆրեգատ, 22 սկանավերթող ու սկանապատող նավ, 46 բազմաֆունկցիոնալ դեսանտային նավ, 43 պարեկային ու առափնյա ռազմանավ և այլն: Տես՝ The Military Balance 2010, International Institute of Strategic Studies, London: Routledge 2010, pp. 165-166:

ների հետ համատեղ արտադրական նախագծերն ու ռազմական ուժի հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, քանի որ հրամանատարության սպառազինության մեծ մասն արդեն հնացած էր և արդիականացման ու համալրման կարիք էր զգում:

Թուրքական նավատորմի արդիականացման ծրագիրը մեկնարկեց դեռևս 1985 թ., քանի որ ՌԾՈւ-ի սպառազինությունը բավական հին էր և չէր համապատասխանում ժամանակի չափանիշներին: 1990-ական թթ. թուրքական նավատորմը զգալիորեն արդիականացվեց հիմնականում ամերիկյան կողմի տրամադրած աջակցության շնորհիվ: Նոր ռազմական նավերի ու սուզանավերի արտադրությունը, ինչպես նաև ԱՄՆ-ից նորագույն ռազմանավերի ձեռքբերումը զգալիորեն բարձրացրեցին ՌԾՈւ-ի մարտական հնարավորությունները, որոնք արդեն թույլ էին տալիս համակարգված գործել ՆԱՏՕ-ի առաքելությունների ու գործողությունների շրջանակներում⁵⁰⁴: ԱՄՆ-ի աջակցությամբ նաև արդիականացվեց ՌԾՈւ-ի սպառազինությունն ու ռազմական, այդ թվում՝ հրթիռային համակարգերը:

1980-90 ական թթ. Թուրքիայի ազգային նավաշինական գործարաններում Գերմանիայի աջակցությամբ իրականացվել է «ATILAY» և «PREVEZE» դասի 6 սուզանավերի արտադրությունը, ինչպես նաև այդ երկրից ձեռք բերվել «MEKO 200» դասի 4 ֆրեգատ, 8 միավոր «Doğan» հրթիռային մոտորանավակ: 1990-ական թթ. դեռևս շարունակվում էր մի քանի սուզանավերի, ֆրեգատների ու հրթիռային մոտորանավակների արտադրությունը⁵⁰⁵: ՌԾՈւ-ի համալրման գործում զգալի աջակցություն է տրամադրել հատկապես ԱՄՆ-ը: Չնայած Թուրքիան ցանկանում էր ԱՄՆ-ից ձեռք բերել «Perry» դասի ռազմական նավեր, այդուհանդերձ մատակարարման որոշ խնդիրների պատճառով, 1992 թ. թուրքական կողմը դիմեց ԱՄՆ-ին՝

⁵⁰⁴ Տես՝ George B. Allison, Brian W. Daugherty, The Turkish Navy's Quest for Modernisation, The DISAM Journal, Spring 1995, p. 10, http://www.disam.dsc.mil/pubs/Vol%2017_3/Allison.pdf.

⁵⁰⁵ Տես՝ А. Федин. Военно-морские силы Турции// Зарубежное военное обозрение. № 5, 1997, с. 43-44.

«Knox» դասի ռազմանավեր մատակարարելու համար: 1994 թ. հուլիսին թուրքական Գյոլջյուք ռազմածովային բազայում Թուրքիայի նախագահի ու վարչապետի մասնակցությամբ նավերը հանդիսավորությամբ հանձնվեցին ՌԾՈՒ-ի հրամանատարությամբ⁵⁰⁶: 1990-ական թթ. երկրորդ կեսին ԱՄՆ Կոնգրեսը վավերացրեց ավելի վաղ ընդունված որոշումը, որով Թուրքիային որպես ռազմական օգնություն հատկացվեց «Oliver Hazard Perry» (FFG-7) դասի 3 ֆրեգատ⁵⁰⁷:

Տարբեր երկրների հետ համագործակցությամբ թուրքական ռազմական նավատորմի արդիականացման նոր փուլ սկսվեց, որտեղ հիմնական առաջնահերթությունը տրվեց տեղական նավաշինական բազայի զարգացմանը: ՌԾՈՒ-ի արդիականացման, նոր միջոցներով համալրման ու տեխնոլոգիական ժամանակակից ռազմական համակարգերի զարգացման ուղղությամբ հատկացվում էին զգալի գումարներ: Թուրքիայում սկստիվ գործունեություն էին ծավալում մի քանի ռազմաարդյունաբերական ընկերություններ, որոնք մասնագիտացած են ծովային միջոցների ու նավաշինության ոլորտում⁵⁰⁸:

2006 թ. ՊԱԳՎ-ն տեղական նավաշինական ընկերությունների կողմից 16 միավոր պարեկային նավերի արտադրության մրցույթ հայտարարեց, որին փաթեթ-առաջարկներ ներկայացրեցին թուրքական մի քանի ընկերություններ, այդ թվում՝ «Dearsan»-ը, «RMK Marine»-ը, «Gelik Tekne»-ն⁵⁰⁹: Տարբեր նշանակության ռազմական նավերի արտադրության ոլորտում խոշորագույններից համարվող 1980 թ. հիմնադրված «Dearsan Gemi İnşaat Sanayi» թուրքական ընկե-

⁵⁰⁶ Տես՝ George B. Allison, Brian W. Daugherty, նշվ. աշխ., էջ 11:

⁵⁰⁷ Տես՝ А. Федин, նշվ. աշխ., էջ 44-45:

⁵⁰⁸ Տես՝ Ստամբուլում, Գյոլջյուքում և Իզմիրում գործում են ՌԾՈՒ-ին պատկանող նավաշինական ու վերանորոգչական գործարանները, պետական նավաշինական ձեռնարկությունը, «Yonca-Onuk», «Dearsan», «SEDEF», «RMK» մասնավոր ընկերությունները, որոնք հանդիսանում են «SASAD»-ի անդամներ և «YILDIZ» արտասահմանյան համատեղ կազմակերպությունը:

⁵⁰⁹ Տես՝ Donanmaya 16 yeni bot, Sabah, 03.05.2006.

րությունը հիմնականում իրականացրել է «Aquila Tug» տիպի նավերի ու քիմիական տանկերների արտադրություն: 2006 թ. այդ ընկերությունը հաղթող ճանաչվեց Թուրքիայի ՌՕՈւ-ի համար 16 միավոր նոր տիպի պարեկային նավերի արտադրության համար հայտարարված մրցույթում: Արտադրվելիք այդ նավերը համալրված են լինելու 40 մմ երկփողանի հրանոթով, 12.7 մմ մեխանիկական հրափողով, ստորջրյա հրթիռային պաշտպանության ու ջրային ականների վնասազերծման համակարգերով⁵¹⁰: Ընկերության վերակազմավորման արդյունքում ստեղծվել է Մարտական համակարգերի բաժին, որում ներգրավված են ՌՕՈւ-ի թոշակառու սպաներ ու ռազմական ինժեներներ: Ընկերությունը առաջիկայում նախատեսում է մեծացնել ռազմական նավերի արտադրական բազան:

Մեկ այլ թուրքական «Yonca-Onuk» ընկերությունն իր արտադրական գործընթացում իրականացնում էր տարբեր դասի մոտորանավակների արտադրություն, որոնք կիրառվում են հիմնականում առափնյա անվտանգության ոլորտում: Ընկերության արտադրացանկին են պատկանում «MRTP 15», «MRTP 16» մոդելի արագ արձագանքման մոտորանավակները, «MRTP 16 Ս» փրկարարական, «MRTP 29» պարեկային մոտորանավակներն ու «MRTP 33» պարեկային-հարձակողական նավը, որը հանդիսանում է «Onuk MRTP 29» (KAAN 29) նավի արդիականացված տարբերակը⁵¹¹:

Թուրքական «RMK Marine» նավաշինական ընկերությունը հիմնադրվել է 1974 թ., որը 1997 թ. միացավ թուրքական խոշորագույն «Koc Holding» կոնցեռնին: Հիմնականում ընկերությունը իրականացրել է առևտրային ու տրանսպորտային նավերի արտադրություն, իսկ վերջին տարիներին սկսել է լուրջ ուշադրություն դարձնել ռազմական նավաշինությանը: Ընկերությունը 2007 թ. պայմանագիր ստորագրեց ՊԱԳՎ-ի հետ, որով ստանձնեց ԱԱՀ-ի որոնողափրկարարական նավերի արտադրության 352.5 մլն եվրո արժողության նախագծի իրականացման պատասխանատվությունը, որի շրջա-

⁵¹⁰ Տես՝ «Dearsan» ընկերության կայք՝ <http://www.dearsan.com.tr>.
⁵¹¹ Տես՝ Yonca-Onuk ընկերության կայք՝ <http://www.yonca-onuk.com>.

նակներում արտադրվելու են 4 միավոր նման դասի նավեր: Նավերի հրամանատարական հսկման ու կապի համակարգերը մշակվելու էին «ASELSAN» ընկերության կողմից: Առաջին միավորը նախատեսված էր ԱԱՀ-ին հանձնել 2010, իսկ մյուսները՝ 2011 թ.⁵¹²: 2009 թ. հունվարին պայմանագիր ստորագրվեց իտալական «Oto Melara» ընկերության հետ՝ վերոնշյալ նավերի համար 40 մմ տրամաչափի երկփողանի հրանոթի մատակարարման վերաբերյալ⁵¹³:

2008 թ. դրությամբ Թուրքիան ԱՄՆ-ից ռազմական օժանդակության տեսքով ստանալու էր Perry դասի 2 ֆրեգատ: Դրանցից մեկը այդ երկրին էր տրամադրվելու որպես ռազմական օգնություն, իսկ մյուսը՝ վաճառքի տեսքով: 2007 թ. ԱՄՆ-ի կողմից մշակվել էր դաշնակից երկրների կարիքների համար ռազմական նավերի տրամադրման ծրագիր, և դրա շրջանակում էլ Թուրքիային առաջարկվել էր վերոնշյալ տեսակի նավերը: Նշենք, որ Թուրքիան նախորդ տարիներին ԱՄՆ-ից ձեռք էր բերել 8 միավոր նման ռազմանավ, և նախատեսվող այդ ֆրեգատների հետ միասին դրանց ընդհանուր թիվը ՌԾՈՒ-ում կազմում է 10 միավոր⁵¹⁴:

Թուրքիան նաև լուրջ ներդրումներ էր կատարում սուզանավերի ձեռքբերման ուղղությամբ: 1980-ականներին թուրքական նավատորմի սուզանավերը նույնպես բավական հին էին և հիմնականում Երկրորդ աշխարհամարտից մնացած: Սուզանավերի ձեռքբերման գործում Թուրքիան սկսեց համագործակցել հատկապես Գերմանիայի հետ: 1975 թ. սկսած Թուրքիան ձեռք էր բերել գերմանական արտադրության սուզանավեր, որոնց մի մասն արտադրվել էր թուրքական «Gölcük» նավաշինարանում: 1990-ական թթ. նախատեսված էր նավատորմին մատակարարել ավելի կատարելագործված 4 սուզանավ⁵¹⁵:

⁵¹² Sbu` Koç ilk kez askere 4 gemi yapacak, Hürriyet, 17.01.2007 .

⁵¹³ Sbu` Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayii Müsteşarlığı, Sayı 7, Mart 2009, s. 91.

⁵¹⁴ Sbu` ABD'den Türk Deniz Kuvvetleri'ne iki fırkateyn daha (D-TSK Gemi), Sabah, 05.08.2008.

⁵¹⁵ Sbu` Turkish Navy – Modernization,

<http://www.globalsecurity.org/military/world/europe/tu-navy-modernization.htm>.

Թուրքական նավատորմի նոր սուզանավերի ձեռքբերման համար հայտարարված մրցույթի շրջանակներում 2008 թ. հուլիսին Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում հաղթող ճանաչվեց գերմանական «HDW» և անգլիական «MFI» ընկերությունների համատեղ նախաձեռնությամբ արտադրված «U-214» մոդելի սուզանավը: Թուրքական կողմը ձեռք էր բերելու 6 միավոր նման սուզանավ, որի ընդհանուր արժեքը կազմում է 2.5 մլրդ եվրո: Հիմնական արտադրության գործընթացում մասնակցելու էին նաև թուրքական ընկերությունները: Մասնավորապես, այդ սուզանավերի որոշ համակարգեր ու կապի միջոցներն արտադրվելու էին թուրքական «ASELSAN», «HAVELSAN», «TÜBITAK» ընկերությունների կողմից⁵¹⁶:

2009 թ. ապրիլին «ASELSAN» ընկերությունը պայմանագիր ստորագրեց իտալական առաջատար «Finmeccanica» ընկերության մաս կազմող «WASS» կազմակերպության հետ՝ նոր տեսակի սուզանավերի պաշտպանական համակարգերի համատեղ զարգացման վերաբերյալ: Պայմանագրի համաձայն՝ թուրքական և իտալական ընկերությունները «WASS» կազմակերպության արտադրության «Black Shark» տորպեդոներն ինտեգրացնելու են Թուրքիայի համար ձեռք բերվելիք նոր սուզանավերի հակատորպեդային պաշտպանության համակարգին: Ըստ այդ ընկերությունների ներկայացուցիչների՝ հետագա համագործակցության արդյունքում հնարավոր է սկսել տորպեդոների համատեղ արտադրության ծրագրեր⁵¹⁷:

Միննույն ժամանակ Թուրքիայի ՌԾՈւ հրամանատարությունը դիմել էր ԱՄՆ-ին 100 միավոր «MK-54» տեսակի տորպեդոներ գնելու վերաբերյալ, որոնց ընդհանուր արժեքը կազմում էր 105 մլն դոլար: Ձեռքբերվելիք այդ հրթիռները նախատեսված էին «Perry» տեսակի ֆրեգատների ու ՌԾՈւ-ի «S-70B SEAHAWK» ուղղաթիռներ-

⁵¹⁶ Տես՝ 2.5 milyar euroluk denizalti ihalesi de bitti, Sabah, 22.07.2008. Սուզանավերը թուրքական ՌԾՈւ-ին են հանձնվելու 2015 թ. սկսած՝ տարեկան մեկ միավոր:

⁵¹⁷ Տես՝ Turk Aselsan agrees deal with Finmeccanica unit, ASIAN DEFENCE, 30.04.2009.

րի կողմից կիրառման համար⁵¹⁸: 2007 թ. հուլիսին ԱՄՆ Կոնգրեսը հավանություն տվեց Պենտագոնին՝ Թուրքիային վաճառել շուրջ 51 «Block II Tactical Harpoon» հականավային հրթիռներ, ինչպես նաև առանձին սարքավորումներ և անհրաժեշտ ծառայություններ տրամադրել 159 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Ձեռք բերված հրթիռներն օգտագործվելու են երկրի ՌԾՈՒ-ի կողմից՝ թարմացնելով և ավելի ուժեղացնելով ՌԾՈՒ-ում գոյություն ունեցող հրթիռային արսենալը⁵¹⁹:

2009 թ. «ROKETSAN» ընկերությունն «ASELSAN» ընկերության հետ աշխատանքներ սկսեց «ATMACA» անվանումը ստացած հականավային հրթիռային համալիրների արտադրության նախագծի իրականացման ուղղությամբ, որի արժեքը կազմում էր 80 մլն եվրո⁵²⁰:

Նույն թվականին ՋՈՒ ԳՇ-ի հավանության արժանացավ և ՊԱԳՎ-ի ու թուրքական ընկերությունների միջև ստորագրվեց 24 մլն եվրո արժողությամբ «Ազգային ծանր տորպեդոների զարգացման նախագիծը»: Մեկ տարի անց թուրքական «ROKETSAN» և հարավկորեական «LIG Next» ընկերությունների միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր, ըստ որի՝ հարավկորեական ընկերությունը տեխնոլոգիական աջակցություն էր ցույց տալու թուրքական նախագծի իրականացման ժամանակ: Նախագիծն իրականացվում էր Թուրքիայի Ռազմածովային ուժերի հետազոտական կենտրոնի հրամանատարության (ARMERKOM) տնօրինությամբ՝ «ROKETSAN» ընկերության ու «TÜBITAK»-ի մասնակցությամբ⁵²¹: 2012 թ. արդեն արտադրվել էր ՌԾՈՒ-ի կարիքների համար «AKYA» անվանակոչված տորպեդոների առաջին խմբաքանակը⁵²²:

⁵¹⁸ Sbu` Türkiye, ABD'den 100 torpido alıyor, Milliyet, 25.04.2007.

⁵¹⁹ Sbu` US missile sales to Turkey clears congress, Turkish Daily News, 02.07.2007.

⁵²⁰ Sbu` İlk Türk Milli Gemisavar Füzesi "ATMACA", Savunma ve Havacılık, Sayı 137, 2010, s. 105. 2012 թ. դրությամբ դեռևս աշխատանքները ընթացքի մեջ էին:

⁵²¹ Sbu` Hakkı Arıs, Ibrahim Sünnetçi, Mavi Vatan En İyi Şeklinde Savunmak, Savunma ve Havacılık, Sayı 148, 2012, s. 36

⁵²² Sbu` Milli silahlarımız, Sabah, 20.06.2012.

«HAVELSAN» ընկերության կողմից նախագծվել և մշակվել է նավերի ինտեգրացված պատերազմի կառավարման համակարգ (GENESIS), որն ի վիճակի է ինքնուրույն հայտանաբերել նշանակետերը, նավին սպառնացող հրթիռներն ու տորպեդոները, ինչպես նաև իրականացնում է մարտական ղեկավարման ու կառավարման գործառույթներ՝ օդային, վերջրյա և ստորջրյա ռազմական գործողությունների ժամանակ: 2010 թ. դրությամբ ընկերությունն իրականացնում էր Թուրքիայի ՌԾՈՒ-ի 8 նավերի՝ նման համակարգով համալրման աշխատանքներ: Առաջին համակարգի փորձարկումն ու հանձնումն իրականացվել է 2007 թ., իսկ ևս 2-ինը՝ 2008 թ.: Նախագիծը նախաձեռնվել էր Թուրքիայի ՌԾՈՒ-ի «Perry» ֆրեգատների համալրման համար: Ընկերությունը նման համակարգերի ներդրման ու այլ երկրներ արտահանման հետ կապված համագործակցում է թուրքական նավաշինական ընկերությունների ու ամերիկյան «RAYTHEON» ընկերության հետ: Համագործակցությունը հիմնականում նախատեսում է համակարգերը ներդնել տարբեր երկրների ՌԾՈՒ-ի «FFG 7» դասի ֆրեգատների համար⁵²³:

«HAVELSAN» ընկերությունը 2007 թ. պայմանագիր ստորագրեց բրիտանական «Ultra Electronic» ընկերության հետ՝ ՌԾՈՒ-ի նավերի համար «SEA SENTOR» հակատորպեդային պաշտպանության համակարգերի արտադրության ու ձեռքբերման վերաբերյալ⁵²⁴:

Թուրքիայում նոր դասի պարեկային նավերի արտադրության կապալառու թուրքական «Dearsan» ընկերության ու «ASELSAN»-ի միջև 2008 թ. ստորագրվեց համագործակցության պայմանագիր, ինչի շրջանակում ընկերությունը ստանձնեց արտադրվելիք 16 միավոր պարեկային նավերի էլեկտրասպառնակական ուղղորդիչների, միասնական տեղեկատվական համակարգերի ու կրակի կառավար-

⁵²³ Sıkı \ Havelsan, Genesis'in ihracını hedefliyor, Radikal, 24.02.2009.

⁵²⁴ Sıkı \ Deniz Kuvvetleri'ne yeni savunma sistemi,

<http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20070814.aspx>.

ման համակարգերի ու կայունարարով մեխանիկական հրանոթների բազայի արտադրությունն ու դրանց տեղակայումը նավերին⁵²⁵:

ՌԾՈՒ-ի համար ինտեգրացված մարտական համակարգերի ուղղությամբ աշխատանքներ էր իրականացնում նաև «ASELSAN» ընկերությունը «AMICOS» (ASELSAN Modular Integrated Combat System) նախագծի շրջանակներում, որը նախատեսում էր ռազմական նավերը համալրել մարտի վարման ինտեգրացված համակարգով, որը ներառում է էլեկտրոնային պայքարի, մարտի վարման վերջրյա և ստորջրյա, հրթիռային, տորպեդային ու հակատորպեդային համակարգերի, ինչպես նաև ՌՏԿ-ների, էլեկտրասօստիկական սարքավորումների և կապի ու կառավարման միջոցների միասնական դաշտ⁵²⁶:

Ընկերությունն իրականացնում էր նաև ռազմական նավերի տեղեկատվական համակարգերի արդիականացման աշխատանքներ, որի շրջանակում 2010 թ. դրությամբ ավարտել էր ՌԾՈՒ-ին պատկանող 4 հարձակողական նավերին այդ համակարգերի արդիականացումը: ՌԾՈՒ հրամանատարության ու ընկերության համագործակցության արդյունքում իրականացվում էին ռազմական նավերի համար էլեկտրասօստիկական համակարգերի, ջերմային ու լազերային դիտարկման միջոցների («ASIR-D») արտադրության ու նավերին դրանց հարմարեցման աշխատանքներ: 2006 թ. մայիսին ՊԱԳՎ-ի ու «ASELSAN» ընկերության և ՌԾՈՒ-ի հրամանատարության հետազոտական կենտրոնի հրամանատարության («ARMERKOM») միջև ստորագրված պայմանագրով իրականացվում է ռազմանավերի (հետախուզական) 76 մմ տրամաչափի հրանոթների կրակի կառավարման համակարգերի («TAKS») արտադրության ծրագիրը⁵²⁷:

2007 թ. հուլիսին «ASELSAN» ընկերությունը 85 մլն դոլար արժողության պայմանագիր ստորագրեց ՊԱԳՎ-ի հետ՝ ՌԾՈՒ-ի

⁵²⁵ Տե՛ս՝ Deniz Platformlarında Aselsan, ASELSAN, Sayı 76, Temmuz 2008, s. 70.

⁵²⁶ Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 34-35:

⁵²⁷ Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 50-52:

կարիքների համար ստորջրյա և վերջրյա հսկողության ու հայտնաբերման (Surveillance and Detection) համակարգի նախագծի (YUNUS) իրականացման վերաբերյալ, որը 24-ժամյա անընդմեջ հատուկ դիտարկում ու վերահսկողություն է իրականացնելու ռազմածովային բազաներում ու կարևորագույն նավահանգիստներում⁵²⁸:

Թուրքիայի ՌԾՈՒ-ի կողմից սկսվեց իրականացվել լայնամասշտաբ մի նախագիծ, որի շրջանակներում Թուրքիայում արտադրվելու են 12 միավոր բազմաֆունկցիոնալ հետախուզական ռազմանավեր: Նավերի արտադրության «MILGEM» (թուրք. Milli Gemi-Ազգային նավ) նախագիծը մեկնարկել է 1993 թ. ՌԾՈՒ-ի հրամանատարության կողմից և 1996 թ. նավերի նախագծման հետ կապված սկսեց աշխատանքներ իրականացնել Ստամբուլի տեխնիկական համալսարանի («İTÜ») հետ:

2000 թ. մայիսին ՊԱԳՎ-ի կողմից նավերի նախագծման ու արտադրության ոլորտում հիմնական ընկերությունների մասնակցության մրցույթ հայտարարվեց, որը սակայն 2001 թ. չեղյալ համարվեց և միայն 2004 թ. որոշում կայացվեց առաջին նավի նախատիպի աշխատանքներն սկսելու մասին: Նախագծի հետագա ընթացքի հստակեցման վերաբերյալ 2005 թ. հունվարին ՊԱԳՎ-ի ու ՌԾՈՒ հրամանատարության միջև ստորագրվեց արձանագրություն: Նավի նախատիպի նախագծման, արտադրության ու համալրման, անհրաժեշտ համակարգերի, սարքավորումների ու ծառայությունների մատակարարման գործընթացն սկսվեց 2005 թ. հունիսին՝ ՊԱԳՎ-ի կողմից Ստամբուլի տեխնիկական համալսարանի նավաշինության ու ծովային գիտությունների ֆակուլտետի հետ կնքված պայմանագրով, որին հաջորդեցին մի շարք այլ պայմանագրեր «TÜBITAK»-ի տարբեր գիտահետազոտական ինստիտուտների, «TÜRK Loydu», «ASELSAN», «STM» և «MTU» ընկերությունների հետ: Նախագծի հետ կապված վերջին պայմանագիրը ստորագրվել է 2007 թ. մայիսին «ASELSAN-HAVELSAN» աշխատանքային համա-

⁵²⁸ Վ Savunma Sanayii Gündemi, SSM, Sayı 6, Ekim 2008, s. 85.

տեղ խմբի հետ, որն իրականացնելու է նավի մարտական համակարգերի արտադրությունն ու համալրումը⁵²⁹: 2009 թ. հոկտեմբերին ստորգրված մեկ այլ՝ 86 մլն եվրո արժողության պայմանագրի շրջանակներում «ASELSAN-HAVELSAN» ընկերությունների համատեղ աշխատանքային խումբն իրականացնելու է նաև «MILGEM» նախագծով արտադրվելիք 2-րդ ռազմանավի մարտական համակարգերի մատակարարումը⁵³⁰: 2008 թ. սեպտեմբերին ՌԾՈՒ-ի Ստամբուլի նավաշինական հանգույցում ծով իջեցվեց «MILGEM» նախագծով արտադրված նախատիպ հանդիսացող «Heybeliada» անունն ստացած առաջին ռազմանավն⁵³¹ ու ականազերծող «Akçay» նավը, և մեկնարկվեց «Büyükkada» անունը կրող երկրորդ նավի շինարարության սկիզբը⁵³²: 2011 թ. սեպտեմբերին հանդիսավոր արարողությամբ «Heybeliada» ռազմանավը հանձնվեց ՌԾՈՒ-ի նավատորմին: Այդ կապակցությամբ իր ելույթում վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան իր տեղն է զբաղեցնում ռազմական նավեր նախագծող ու արտադրող առաջատար 10 երկրների շարքում՝ նշելով, որ ազգային պաշտպանությունը արդյունավետ ու հնարավոր կլինի միայն ազգային արդյունաբերությամբ⁵³³:

2013 թ. սեպտեմբերի 26-ին կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց չեղյալ հայտարարել «MILGEM» ռազմական նավերի հաջորդ միա-

⁵²⁹ Տես՝ Milli Gemi Projesi, Denizaltı Savunma Harbi ve Keşif Karakol Gemisi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayii Müsteşarlığı, Sayı 2, Ekim 2007, ss. 74-79.

⁵³⁰ Տես՝ MILGEM-2'nin savaş sistemi ASELSAN ve HAVELSAN'dan, Zaman, 13.10.2009.

⁵³¹ Տես՝ Թուրքիայի համար 250 մլն դոլար արժեքած «Heybeliada» ռազմանավն ունի 99 մ. երկարություն, որի վրա կարող է տեղակայվել 1 միավոր ուղղաթիռ: Այն համալրված է լինելու վերջրյա և ստորջրյա մարտական գործողությունների ու ՀՀՊ և ՀՕՊ, հետախուզական դիտարկման, կապի ու հրամանատարական հսկման ու կտավարման ժամանակակից համակարգերով, ՌՏԿ-ներով ու լազերային նախագուշացման կայաններով, հրանոթային ու հրթիռային զենքերով: Տես՝ Milli Gemi Projesi, Denizaltı Savunma Harbi ve Keşif Karakol Gemisi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayii Müsteşarlığı, Sayı 2, Ekim 2007, ss. 74-79.

⁵³² Տես՝ İlk milli savaş gemisi denize indirildi, Zaman, 27.09.2008; Savaş gemisine kardeş geliyor, <http://www.haber7.com>, 31.05.2009.

⁵³³ Տես՝ İlk milli savaş gemisi denize indi, Hürriyet, 27.09.2011.

վորների արտադրության նախագիծը և նոր հայտամրցույթ հայտարարել⁵³⁴: Արտադրված և հետագայում արտադրվելիք ռազմանավերը մարտական հերթապահություն են իրականացնելու ծովային կարևոր ու ռազմավարական նշանակության գոտիներում՝ ապահովելով ռազմաբազաների ու նավահանգիստների հսկողությունն ու պաշտպանությունը:

Ընդհանուր առմամբ, ռազմական նավաշինության ոլորտում փորձ է արվում անցնել ինքնուրույն նախագծերի՝ դրանցում ներագրավվելով նաև մասնավոր ընկերություններին, որոնք հիմնականում գործում էին առևտրային նավերի արտադրության ոլորտում: Դա տարիների ընթացքում հնարավորություն կտա համախմբել մասնագիտական ու ենթակառուցվածքային ռեսուրսները նոր որակի նախագծերի համար: Չնայած մի շարք ռազմանավերի ու մոտորանավակների արտադրության ոլորտում թուրքական ընկերությունները հասել են որոշ հաջողությունների, այնուամենայնիվ, դեռևս զգալիորեն օգտվում են արտասահմանյան մի շարք երկրների տեխնոլոգիական հնարավորություններից, ինչպես օրինակ՝ սուզանավերի արտադրության ոլորտում:

Այսպիսով, Թուրքիան մեծ ուշադրություն է դարձնում ՌԾՈւ-ի զարգացմանը, մշտապես այն մարտունակ վիճակում պահելուն և ՆԱՏՕ-ական առաջատար համակարգերի հետ համապատասխանեցնելուն: ՌԾՈւ-ի արդիականացման ծրագրերը կարևորվում են նաև այն հանգամանքով, որ Թուրքիան ձգտում է դառնալ էներգետիկ-տրանզիտային կարևոր կենտրոն, ինչի հետ կապված այն զգալիորեն պետք է մեծացնի իր ծովային տարածքների ու գոտիների, նավահանգստային ու ռազմավարական կենտրոնների անվտանգությունը: Հատկանշական է այն փաստը, որ Թուրքիայի ընդհանուր արտաքին առևտրի շուրջ 90%-ն իրականացվում է ծովային ուղիներով⁵³⁵:

⁵³⁴ Տես՝ ՊԱԳՎ պաշտ. կայք,

http://www.ssm.gov.tr/anasayfa/hizli/duyurular/PressReleases/Sayfalar/20130926_SSIK.aspx

⁵³⁵ Տես՝ Jane's Defence Weekly, Vol. 46, Issue 15, 15 April 2009, p. 34.

Պատահական չէ, որ 2008 թ. օգոստոսի վրաց-օսական 5-օրյա պատերազմից հետո Թուրքիայի ՌԾՈւ-ի հրամանատարությունը նախատեսում էր նոր ռազմաբազա հիմնել սևծովյան Տրապիզոն նավահանգստում՝ տարածաշրջանում ռազմավարական դիտարկումներ իրականացնելու նպատակով⁵³⁶: Բացի այդ, զարգացած ու հզոր ՌԾՈւ-ի գոյությունը զգալի չափով պայմանավորված է սևծովյան տարածաշրջանում աշխարհաքաղաքական անկայուն իրավիճակի առկայությամբ ու իր ռազմական նավատորմի գերակայության ապահպանման ձգտումներով, Էգեյան ու Միջերկրական ծովում Հունաստանի հետ մրցակցությամբ, Կիպրոսի հիմնախնդրով ու հնարավոր անկանխատեսելի զարգացումներով:

3.4. Թուրքիայի «տիեզերական նախագիծը»՝ որպես բանակի արդիականացման բաղկացուցիչ

Թուրքիայի ԶՈւ-ի արդիականացման լայնամասշտաբ ծրագրերի համատեքստում ռազմավարական կարևորություն է ներկայացնում տիեզերական հետազոտությունների հավակնոտ նախագծի առաջադրումը, որը նախատեսում է տիեզերքի ուսումնասիրման համար անհրաժեշտ ենթակառուցվածքի, գիտահետազոտական բազայի ստեղծում:

Դեռևս 2001 թ. մարտին Թուրքիայի կառավարությունը որոշում էր կայացրել «Թուրքական տիեզերական կազմակերպության» ստեղծման մասին (թուրք. Türk Uzay Kurumu): Ի կատարումն այդ որոշման՝ ՌԾՈւ-ի հրամանատարությունը ձեռնամուխ եղավ խորհրդի կազմակերպման ու օրենսդրական դաշտի ստեղծման ուղղությամբ, և 2002 թ. ընդունվեց «Ազգային տիեզերական գործակալության մասին» օրենքը: Նույն թվականին այդ նպատակներով

⁵³⁶ Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 35:

հատկացվեց շուրջ 250 մլն դոլար⁵³⁷: Իր ելույթներից մեկում Թուրքիայի ԶՈւ ԳՇ-ի պետ Հ. Օզքոչը (2002-2006 թթ.), անդրադառնալով տիեզերական նախագծին, նշել է, որ «Թուրքիայի ԶՈւ-ի տեսլականը 2000 թ. հետո տեղափոխվում է տիեզերք»: Իսկ բանակի զեներալ Ջ. Ասփարուքը տիեզերական ծրագիրը Թուրքիայի համար համարում էր ժամանակի պահանջ և գտնում, որ առանց այդ հնարավորությունների օգտագործման ՌՕՈւ-ը ժամանակի ընթացքում կարող են կորցնել ռազմական գործողությունների արդյունավետությունը⁵³⁸: Վերոնշյալ զինվորականների տեսակետների իրավացիությունն ապացուցվեց նաև ժամանակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՆԱՏՕ-ի առաջադեմ երկրների ՌՕՈւ-ը տիեզերական համակարգերի շնորհիվ կարողացել են ապահովել կիրառական բարձր արդյունավետություն, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը դեռևս 2000-ականների սկզբներին խնդիր դրեց ընդօրինակել այդ հնարավորությունները՝ չնայած առաջադրված նպատակները Թուրքիայի համար, մեծ հաշվով, համարվում էին անիրականանալի: Նման հավակնոտ ծրագրերի առաջադրումն ու նպատակները պայմանավորված էին նաև թուրքական օդուժի՝ քրդական գրոհայինների դեմ անարդյունավետ կիրառության փորձի հաշվարկմամբ:

Թուրքիայի «Ազգային տիեզերական հետազոտությունների նախագիծը» 2005 թ. մշակվել է Թուրքիայի գիտության և տեխնոլոգիայի բարձրագույն խորհրդի կողմից, ապա հաստատվել ԱԱԽ-ի կողմից, և հետագայում լայնորեն ուսումնասիրության ենթարկվել Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստերում: Ծրագրի իրականացումը դրվեց Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների կազմակերպության («TÜBITAK») վրա, որը պետք է համագործակցեր ԶՈւ ԳՇ-ի, ՌՕՈւ

⁵³⁷ Sıkı, Türk Uzay Sektörüne İlişkin Değerlendirme, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-5, Ankara, 2003, <http://www.vizyon2023.tubitak.gov.tr>.

⁵³⁸ Sıkı, TSK: Vizyonumuzu uzaya taşıdık, NTV, 06.05.2003.

հրամանատարության, տրանսպորտի նախարարության, ինչպես նաև համալսարանների հետ⁵³⁹:

2005 թ. հունիսին կայացած ԱԱԽ-ի նիստում քննարկվել են նաև տիեզերական ու պաշտպանական ոլորտի նախագծերին առնչվող հարցեր: ԴՄԻՏԱԿ-ի ղեկավարությամբ իրականացվելիք 2005-2014 թթ. «Ազգային տիեզերական հետազոտությունների նախագծի» համար որոշում կայացվեց 1 մլրդ ԼԹԼ բյուջեի հատկացման վերաբերյալ⁵⁴⁰:

Թուրքիայի ԶՈՒ ԳԾ-ը քայլեր էր ձեռնարկում նաև սեփական կապի արբանյակն ունենալու ուղղությամբ: 2004 թ. ԳԾ-ի ներկայացուցիչները հանդիպումներ ունեցան «Türksat A.Ş.» ընկերությունում՝ ծանոթանալով արբանյակային նախագծերին: Բանակի հրամանատարությանը հետաքրքրում էր, թե 2011 թ. «Türksat 1C» արբանյակի գործողության ժամկետը լրանալուց հետո ինչպես պետք է ապահովվի Թուրքիայի ԶՈՒ-ի արբանյակային կապը, և սեփական արբանյակն ունենալու տարբերակներ էր փնտրում⁵⁴¹: 2004 թ. նոյեմբերին Թուրքիայի ՌՕՈՒ-ի հրամանատարության պլանավորման և սկզբունքների մշակման վարչության ղեկավար, գեներալ Աբիդին Ունալը հայտարարեց, որ ԶՈՒ-ը 2011 թ. տիեզերք է արձակելու իր առաջին արբանյակը⁵⁴²:

Թուրքիայի կողմից առաջադրված տիեզերական հավակնոտ ծրագիրը նախատեսված է ավարտին հասցնել 2015 թ.: Ծրագրով, մասնավորապես, նախատեսվում էր մինչև 2010 թ. թուրքական ՌՕՈՒ-ի սպաներից պատրաստել վեց տիեզերագնացներից բաղկացած ջոկատ, մինչև 2012 թ. կառուցել ազգային տիեզերակայան⁵⁴³

⁵³⁹Տես՝ Türkiye uzaya adım atacak, Radikal, 22.06.2005; İşte Türkiye'nin Uzay Hedefleri, <http://www.netpano.com/haber/608/%C4%B0%C5%9Fte/T%C3%BCrkiyenin/Uzay/Hedefleri>.

⁵⁴⁰ Տես՝ Türkiye uzaya adım atacak, Radikal, 22.06.2005.

⁵⁴¹ Տես՝ TSK kendi uydusunu yapmak istiyor, Radikal, 20.11.2004.

⁵⁴² Տես՝ TSK, 2011'de uzayda..., Radikal, 10.12.2004.

⁵⁴³ Տես՝ 2012 թ. հուլիսի 17-ին վարչապետ Էրդողանի նախագահությամբ կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում, ի թիվս այլ ծրագրերի, որոշում կայացվեց Թուրքիայում արբանյակների արձակման կենտրոն-

և 2014 թ.՝ «Ազգային հետազոտությունների արբանյակի» արձակում տիեզերք⁵⁴⁴: Հիմնական շեշտը դրվելու է հետախուզական համակարգերի օգնությամբ սահմանակից Հյուսիսային Իրաքում քուրդ զինյալների տեղաշարժերի մասին հետախուզական տվյալներ ստանալու վրա: Տիեզերական հետախուզության տեղեկատվության շնորհիվ թուրքական բանակը կանխարգելիչ միջոցներ է ձեռնարկելու երկիր գրոհայինների ներթափանցում թույլ չտալու համար, ինչպես նաև ապահովելու է տարանցիկ նավթամուղերի ու գազամուղերի անվտանգությունը⁵⁴⁵:

Տիեզերակայանի շինարարությունն իրականացվելու էր՝ Հյուսթոնում (ԱՄՆ) «NASA»-ի և Բայկոնուրում (Ղազախստան) Ռուսաստանի տիեզերական գործակալության տիեզերանավերի արձակման գործող կենտրոնների փորձի հաշվառմամբ: Մինչև 2012 թ. նախատեսված էր ավարտել մեկնարկային համակարգի շինարարությունը, որի նպատակով Անկարայի, Մերսինի, Անթալիայի և Իզմիրի վիլայեթներում ուսումնասիրվում էին հարմար տեղանքները⁵⁴⁶:

Այն Թուրքիայի կողմից դիտվում է որպես ռազմավարական կարևորության նախագիծ, ինչն առնչվում է քաղաքական, ռազմական, անվտանգության, գիտության ու տնտեսության ոլորտներին: Այն ենթադրում էր ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական բաղադրիչներ: Ընդհանուր առմամբ, այդ նախագիծը նախատեսում է քաղաքացիական-ռազմական կիրառում՝ ներառելով նաև օդային-տիեզերական պաշտպանության համակարգ⁵⁴⁷:

նակայանի կառուցման վերաբերյալ: Տե՛ս՝ Savunma Sanayii Icrası Komitesi Toplantısı Basın Açıklaması (17 Temmuz 2012), http://www.ssm.gov.tr/anasayfa/hizli/duyurular/PressReleases/Sayfalar/17072012_SsikBasinAciklamasi.aspx:

⁵⁴⁴ Տե՛ս՝ Devlet'in hayali, Akşam, 14.09.2005; IDEF 2005, <http://www.thenewanatolian.com>.

⁵⁴⁵ Տե՛ս՝ Yeni Şafak, 08.01.2007.

⁵⁴⁶ Տե՛ս՝ HA REGNUM, 06.11.2006.

⁵⁴⁷ Տե՛ս՝ Türk Uzay Sektörüne İlişkin Değerlendirme.

Ըստ թուրքական աղբյուրների՝ թուրք ինժեներների մասնակցությամբ մշակվել և արտադրվել է առաջին թուրքական տեղական արտադրության արբանյակը, որը, Ռուսաստանի հետ ստորագրված պայմանագրի համաձայն, պետք է տիեզերք ուղարկվեր 2010 թ.՝ ռուսական Օրենբուրգի շրջանում գտնվող արձակման կայանից: «RASAT» (Gözlem) անունը կրող այդ արբանյակը մշակվել և ստեղծվել է «TÜBİTAK»-ի Տիեզերական տեխնոլոգիաների հետազոտական ինստիտուտի (Uzay Teknolojileri Araştırma Enstitüsü), Պետական պլանավորման կազմակերպության (DTP) միջոցներով: Արբանյակը նախատեսված է քաղաքային պլանավորման, անտառային ու գյուղատնտեսական, ճգնաժամային իրավիճակների ու աղետների դիտարկման ու հսկողության համար, սակայն, կարող է կիրառվել նաև ռազմական մի շարք նպատակներով⁵⁴⁸: «RASAT» արբանյակը տիեզերք արձակվեց 2011 թ. օգոստոսին Ռուսաստանից⁵⁴⁹: Նույն թվականի հոկտեմբերին արդեն թուրքական ՉԼՄ-ները հրապարակեցին, որ Թուրքիայի առաջին արբանյակն արդեն պատկերներ է ուղարկում երկրի վրա գտնվող կայաններ: Թուրքական «Yeni Şafak» թերթի համաձայն՝ թուրք մասնագետներն այդ արբանյակի նախագծման ու փորձարկման հաջողությունը կարևոր էին համարում հետագա տիեզերական հետազոտությունների ու ավելի մեծ նախագծերի իրականացման առումով, ինչը հետագայում հնարավորություն կտա ռազմական ու գիտական ոլորտներում նոր ծրագրեր իրականացնել⁵⁵⁰:

Նման խոշորագույն ու միաժամանակ հավակնոտ նախագծի ստանձնումը Թուրքիայի կողմից կպահանջի ինչպես խոշոր ֆինանս-

⁵⁴⁸ «TÜBİTAK»-ի Տիեզերական տեխնոլոգիաների հետազոտական ինստիտուտը ստեղծվել է 1985 թ., որը գիտահետազոտական-կոնստրուկտորային աշխատանքներ է իրականացնում տիեզերական տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի ու տեղեկատվական տեխնոլոգիաների ու այլ ոլորտներում: *Stu` Yerli uydu RASAT 2010'da uzaya çıkıyor, Radikal, 09.09.2009:*

⁵⁴⁹ *Stu` Ve ilk yerli uydu uzayda!*, <http://ekonomi.milliyet.com.tr/ve-ilk-yerli-uydu-uzayda-/ekonomi/ekonomidetay/17.08.2011/1428051/default.htm>.

⁵⁵⁰ *RASAT uzaydan çektiği ilk görüntüleri ulaştırdı, Yeni Şafak, 18.10.2011.*

սական միջոցներ, այնպես էլ ժամանակակից նորագույն տեխնոլոգիաներ ու մարդկային մասնագիտական ռեսուրսներ այդ ոլորտում, որը ներկա դրությամբ թուրքական կողմը, կարելի է ասել, լիովին չունի և այդ նախագիծը դեռ երկար ժամանակ մեծ ջանքեր կպահանջի: Թեև, ըստ թուրքական ժամանակացույցի նախանշված ժամկետների, ծրագրի իրագործումը անիրատեսական է համարվում, այնուամենայնիվ, կարևորություն է ներկայացնում այն հանգամանքը, որ Թուրքիայում հատուկ գիտահետազոտական ինստիտուտներում ու համալսարանական շրջանակներում հիմնվում են հետազոտական խմբեր և պատրաստվում մասնագետներ:

Մինևս այն ժամանակ քայլեր էին ձեռնարկվում հետախուզական սեփական արբանյակն ունենալու ուղղությամբ: Թուրքիան ամերիկյան արբանյակային ծառայություններից հրաժարվելու նպատակով սկսեց հետախուզության և հսկողության սեփական արբանյակային համակարգի ստեղծման աշխատանքները՝ շուրջ 250 մլն դոլար ընդհանուր արժեքով: Գործարկվելիք այդ համակարգը ռազմավարական դերակատարություն կունենա, հատկապես, Քրդական բանվորական կուսակցության գործունեության հարցում հետախուզություն ապահովելու գործում⁵⁵¹:

2009 թ. հուլիսին հետախուզական արբանյակի նախագծի իրականացման վերաբերյալ պայմանագիր ստորագրվեց ՊԱԳՎ-ի ու իտալական խոշորագույն «Finmeccanica» և ֆրանսիական «Thales» ընկերությունների համատեղ «Telespazio» ընկերության միջև: Ստորագրված պայմանագրի համաձայն՝ «Telespazio» ընկերությունը 42 ամսվա ընթացքում իրականացնելու է արբանյակի արտադրության, արձակման ու փորձարկումների ծառայությունները⁵⁵²: Թուրքիայի ՌՕՈւ հրամանատարության կողմից «առաջնային ծրագիր» հռչակված արբանյակի ստեղծման մրցույթում հաղթող ճանաչվեց արբանյակային արտադրության մեջ մասնագիտացված իտալական ընկերությունը, չնայած, որ հայտամրցույթին մասնակցել են ամերիկյան,

⁵⁵¹ Akşam, 20.07.2006.
⁵⁵² İtalya katkılı Göktürk, 2012'de uzaya gidecek, Sabah, 17.07.2009.

Ֆրանսիական, իսրայելական, Ճապոնական, կորեական և այլ ռազմաարդյունաբերական ընկերություններ: Իտալական ընկերության ընտրությունը շատ բանով կախված էր նաև նրա առաջարկից, որով թուրքական իշխանություններին առաջարկվեց որոշ չափով տեղական արդյունաբերության մասնակցությունն այդ նախագծում:

Արտասահմանյան ընկերությունների հետ միասին համակարգի արտադրական գործընթացում որպես ենթակապալառու ներգրավվեցին թուրքական «TUSAŞ», «ASELSAN», «ROKETSAN» ընկերությունները և «TÜBITAK»-ը: Ըստ նախանշված ժամկետի՝ արբանյակը տիեզերք է արձակվելու 2012 թ.⁵⁵³:

2010 թ. զինվորական «Ձինված ուժերի ամսագիր» պարբերականում հրատարակած իր հոդվածում Թուրքիայի ՌՕՈՒ-ի հրամանատար Հասան Աքսայը նշել է, որ 2020-ական թթ. ՌՕՈՒ-ը կտիրապետեն անկախ տիեզերական ուժի՝ ընդգծելով, որ առաջնային նպատակներից է օդա-տիեզերական ուժերի ստեղծումը, որոնց հարցում իր ուրույն դերակատարությունն է ապահովելու տիեզերական ոլորտում գործող ազգային ռազմաարդյունաբերությունը⁵⁵⁴:

2010 թ. ԱՄՔԲ-ում իրականացված վերախմբագրումների արդյունքում դրանում առաջին անգամ ամրագրվեց տիեզերական տեխնոլոգիաների զարգացման ու հետախուզական նպատակներով արբանյակների ավելի ակտիվ կիրառության կարևորությունը⁵⁵⁵:

2011 թ. պաշտպանության նախարարության կողմից պատրաստված «Ռազմավարական փաստաթղթում» նշված էր, որ ի թիվս այլ նախագծերի՝ լուրջ տեղ է հատկացվում Պաշտպանական և տիեզերական նախագծերին և այդ նպատակով պատրաստվել է նույնիսկ 10-ամյա «Ճանապարհային քարտեզ»: Տիեզերական նախագծերի իրականացման հիմնական ղեկավարողը հանդիսանալու է «TÜBITAK»-ը: Ըստ թուրքական «Sabah» պարբերականի՝ մինչև 2020

⁵⁵³ Տե՛ս՝ Sabah, 17.07.2009.

⁵⁵⁴ Տե՛ս՝ Türk Uzay Kuvvetleri!, <http://ekonomi.haberturk.com/teknoloji/haber/583194-turk-uzay-kuvvetleri>

⁵⁵⁵ Տե՛ս՝ Yeni 'Gizli Anayasa' hazır,

<http://www.etha.com.tr/Haber/2010/10/04/politika/yeni-gizli-anayasa-hazir/>, 04.10.2010.

թ. Թուրքիան անկախ «տիեզերական ուժ» դարձնելու համար իրականացվող ծրագրերի համար նույնիսկ հատկացվել է 150 մլն դոլար⁵⁵⁶:

Հարկ է ընդգծել, որ տիեզերական հետազոտությունների ու արբանյակների նախագծման ոլորտը գտնվում է բարձրագույն իշխանությունների ուշադրության կենտրոնում: Այսպես, 2011 թ. կառավարող ԱԶԿ-ի նախընտրական ծրագրի շրջանակներում վարչապետ Էրդոհանը հայտարարեց ռազմաարդյունաբերության ոլորտում կառավարության ծրագրերի մասին՝ նշելով, որ Անկարան դառնալու է ռազմաարդյունաբերական խոշոր կենտրոն: Մասնավորապես, «ASELSAN» ընկերության կողմից շուրջ 100 մլն դոլար ներդրումների շնորհիվ Անկարայի շրջաններից մեկում կառուցվելու է «Ռադարների ու էլեկտրոնային պատերազմի նախագծման կենտրոն», իսկ ևս 100 մլն դոլարի ներդրումներով «TUSAŞ» ընկերության բազայի վրա գործելու է «Տիեզերական ու արբանյակային կենտրոն», որը ռազմական ու տեղեկատվական արբանյակների արտադրություն է իրականացնելու⁵⁵⁷:

2013 թ. Թուրքիայի ԶՈՒ ԳՇ-ը հայտարարեց, որ ՌՕՈւ-ի հրամանատարության կազմում ստեղծվել է տիեզերական խմբի հրամանատարությունը (Uzay Grup Komutanlığı), որն ընդունված տիեզերական ճանապարհային քարտեզի (Uzay Yol Haritasi) շրջանակներում իրականացնելու է արբանյակային համակարգերի նախագծերն ու ԶՈՒ-ի լրակազմ մտնող արբանյակային համակարգերի շահագործումը: Նոր հրամանատարության ստեղծման վերաբերյալ ԳՇ-ի հայտարարության մեջ նշված էր, որ նոր հրամանատարության ստեղծմամբ ՌՕՈւ-ը կվերափոխվեն նոր օդատիեզերական ուժի: Տիեզերական խմբի հրամանատարությունը կազմված է առանձին հրամանատարություններից, որոնցից առաջինը ստեղծվել է հետախուզական արբանյակի հրամանատարությունը, որը

⁵⁵⁶ Տե՛ս՝ TSK'dan dev adım, Sabah, 08.01.2012.

⁵⁵⁷ Տե՛ս՝ Başbakan Erdoğan: Ankara, savunma sanayisinde uydu ve uzay merkezi konumuna yukselecek, <http://www.turksat.com.tr/content/view/1064/237/>.

ստեղծվել էր ավելի վաղ՝ 2012 թ. ուղեծիր ուղարկված «Gokturk-2» հետախուզական արբանյակի շահագործման նպատակով⁵⁵⁸:

2012 թ. դեկտեմբերին Չինաստանի Ժիքուան տիեզերակայանից ուղեծիր ուղարկվեց դեռևս 2007 թ. արտադրության մեջ գտնվող «Gokturk-2» արբանյակը, որը այլ կարիքներից բացի, կիրառվելու է Թուրքիայի ՋՈՒ-ի հետախուզական կարիքների համար⁵⁵⁹:

Վերոնշյալից կարող ենք փաստել, որ չնայած առկա տեխնոլոգիական ու մասնագիտական խնդիրներին՝ Թուրքիան արբանյակային կապի և հետախուզության ոլորտում ինքնաբավ դառնալու հայտ է ներկայացրել, ինչը փորձում է իրականացնել այլ երկրների հետ համագործակցության միջոցով: Բացի այդ, բարձր մակարդակով առաջադրված տիեզերական հետազոտությունների նախագիծը նպատակ ունի Թուրքիան ներառելու այդ ոլորտում առաջատար համարվող երկրների ցանկում: Այդ նախագծի իրականացումը երկրի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից դիտվում է որպես Թուրքիայի ռազմական ներուժի բարձրացման ու նոր որակի հաղորդման առանցքային բաղադրիչ: Ռազմականացման միտումները, ռազմաարդյունաբերության զարգացումն ու տնտեսական ներուժը մեծացրեցին Թուրքիայի հավակնությունները նաև տիեզերական ոլորտում նախագծեր իրականացնելու առումով:

Իմի բերելով այս գլուխը, կարող ենք նշել, որ իրականացվում են լայնամասշտաբ ռազմատեխնիկական ծրագրեր գորքերի բոլոր տեսակներում սպառազինության արդիականացման ուղղությամբ: Չնայած դեռ մի շարք զինատեսակների հետ կապված Թուրքիան դեռևս օգտվում է զարգացած երկրներից, այդուհանդերձ թուրքական ռազմաարդյունաբերական ընկերություններին մեծ դերակատարություն է հատկացված բանակի արդիականացման գործում: Ռազմական արդյունաբերությունը հատկապես լուրջ դերակատար

⁵⁵⁸ Sbu ' Genelkurmay'dan 'uzay grup komutanlığı' açıklaması, Hürriyet, 25.03.2013.

⁵⁵⁹ Sbu ' Gokturk-2, was Launched from China, <http://www.turkishweekly.net/news/145862/gokturk-2-was-launched-from-china.html>.

րություն ունի ՑՈւ-ի սպառազինության ու տեխնիկայի արդիակա-
նացման գործում: Իրականացվող ծրագրերն ու սպառազինության
ձեռքբերումները զգալիորեն կբարձրացնեն Թուրքիայի ռազմական
հնարավորությունները և տարածաշրջանում ռազմական գերակ-
այության հասնելու նրա հավակնությունները:

ԳԼՈՒԽ 4.
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

**4.1. Անվտանգության ու պաշտպանության ոլորտի
համակարգային բարեփոխումների խնդիրը**

1990-ական թթ. սկզբներից բանակի արդիականացման շրջանակներում որոշ փոփոխություններ իրականացվեցին կազմակերպչակառուցվածքային առումներով: Մասնավորապես՝ ՅՈւ-ում մեծամասամբ վերացվեցին դիվիզիոններն ու գնդերը՝ դրանց փոխարեն ստեղծվելով բրիգադներ ու գումարտակներ, ինչն էլ զգալիորեն մեծացրեց ուժերի ճկունության ու մոբիլության հնարավորությունները⁵⁶⁰: ՅՈւ-ը սկսեցին կազմավորվել հիմնականում կորպուս-բրիգադային համակարգով: Աստիճանաբար դիվիզիոն կառուցվածքը փոխարինվեց ամերիկյան տիպի բրիգադներով⁵⁶¹: 1990-ական թթ. սկսած իրականացվում էր ՋՈւ-ում արհեստավարժ, պրոֆեսիոնալ զինծառայողների համալրում, ինչը հնարավորություն էր տալիս կարևորագույն ստորաբաժանումները կազմել բացառապես արհեստավարժ զինծառայողների հիմքի վրա:

Մինչև ժամանակ ընդգծենք, որ ՋՈւ-ի կառուցվածքային ձևը էական փոփոխությունների չի ենթարկվել, և պահպանել է դեռ Սառը պատերազմի տարիներին գոյություն ունեցող ընդհանուր կառուցվածքը:

2006 թ. օգոստոսին Թուրքիայի ՋՈւ-ի ԳՇ պետ նշանակված ՅՈւ-ի նախկին հրամանատար Յ. Բյույուքանըթին իր առաջին ելույթներից մեկում արդեն հայտարարեց Թուրքիայի ՅՈւ-ի կրճատման հնարավորության մասին: Ըստ այդմ՝ նախատեսվում էր «Kuvvet

⁵⁶⁰ Ştu` Sait Yılmaz, Dünya Ordularındaki Değişim ve Türk Ordusunun Profesyoneleşmesi, s. 6, [http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESSI\(3a4b\).pdf](http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESSI(3a4b).pdf).

⁵⁶¹ Ştu` Büyükanıt: "Ordu küçülecek", Sabah, 10.08.2006.

2014» ծրագրի շրջանակներում մինչև 2014 թ. մոտ 30 %-ով կրճատել ՅՈւ-ի անձնակազմը և հետագայում այն իջեցնել մինչև 180 հազարի⁵⁶²: Ըստ այդմ՝ ՅՈւ-ը կազմված էին լինելու ժամանակակից և հզոր սպառազինությամբ հագեցված բրիգադներից: Յ. Բյույուքանըթի բնորոշմամբ՝ ռազմավարական նպատակ էր դրված Թուրքիայի ՁՈւ-ը բերել այնպիսի կառուցվածքի, ինչը հնարավորություն կտար իրականացնել համաչափ և անհամաչափ ռազմական գործողություններ, ունենալ գերազույն շարժունակություն և հզոր հարվածային ուժ, ինչը կհամապատասխաներ ՆԱՏՕ-ի ժամանակակից ռազմական պահանջներին⁵⁶³:

Բարեփոխումների շրջանակում նախատեսվում էր համակարգային լուրջ փոփոխություններ իրականացնել հատկապես ՅՈւ-ում⁵⁶⁴: Ըստ առաջադրված պլանի՝ նախատեսվում էր ՅՈւ-ի 3-րդ բանակի և Էգեյան բանակի վերացում, ինչի արդյունքում մնալու էին 1-ին (Ստամբուլ) և 2-րդ (Մալաթիա) բանակները, որոնց հիման վրա պաշտպանական առումով կազմվելու էին Արևմտյան և Արևելյան հրամանատարությունները: Բացի այդ, ՁՈւ ԳՇ-ի կառուցվածքում ևս իրականացվելու էին փոփոխություններ, որի արդյունքում ստեղծվելու էր զորքերի 3 տեսակների միացյալ հրամանատարություն: Բարեփոխումների այդ գործընթացն իրականացվելու էր փուլ առ փուլ, ուստի այն երկար ժամանակ էր պահանջվելու⁵⁶⁵: Նշենք, որ այդ պլանով նախատեսված բարեփոխումները մինչև 2013 թ. վերջ չէին իրագործվել, և միգուցե, թուրքական բարձրագույն հրամանատարությունը վերջնականապես չի կողմնորոշվել սկզբունքային

⁵⁶² 2014 թ. հունվարին Թուրքիայի ԳՇ-ի կողմից հրապարակված պաշտոնական տվյալներով ՁՈւ-ի թվաքանակը կազմել է շուրջ 610 հզ.՝ ներառյալ Ժանդարմերիայի և Սռափնյա անվտանգության հրամանատարությունները: 3 հիմնական զորատեսակների ընդհանուր զինվորական անձնակազմի թվաքանակը կազմել է ավելի քան 420 հզ.: Stü Genelkurmay personel sayısını açıkladı, <http://www.haberturk.com/gundem/haber/909082-genelkurmay-personel-sayisini-acikladi>:

⁵⁶³ Stü` Org. Büyükanıt tehlikeleri sıraladı, <http://www.haber7.com>, 04.04.2008.

⁵⁶⁴ Stü` Թուրքիայի ՅՈւ-ը կազմված են 4 բանակներից, որոնք էլ բաղկացած են հիմնական 9 կորպուսներից:

⁵⁶⁵ Stü` TSK`da tarihinin en büyük değişimi, <http://www.haber7.com>, 24.08.2006.

մի շարք հարցերում, որոնք վերաբերելու են բանակի ընդհանուր կառուցվածքին ու թվաքանակին:

Բանակում իրականացվող բարեփոխումների շրջանակում առաջնահերթ դրված խնդիրներից էր բանակային գործառնություն ու ստորաբաժանումներում պայմանագրային-պրոֆեսիոնալ անձնակազմով ապահովումը: 2008 թ. դեռևս շարունակվում էին կոմանդոս բրիգադները պրոֆեսիոնալ վիճակի բերելու աշխատանքները⁵⁶⁶: 2010 թ. դրությամբ ՑՈՒ-ի կոմանդոս (հատուկ նշանակության) ստորաբաժանումները ամբողջությամբ համալրված էին լինելու պրոֆեսիոնալ զինծառայողներով: Նախատեսված է աստիճանաբար մինչև 2020 թ. Թուրքիայի ՁՈՒ-ը ամբողջովին փոխակերպել պրոֆեսիոնալ բանակի, որը հիմնված կլինի բարձր տեխնոլոգիաների ու կրակային ուժի վրա⁵⁶⁷:

2013 թ. հոկտեմբերին կառավարությունը հայտարարեց, որ Թուրքիայում պարտադիր զինվորական ծառայության ժամկետը նվազեցվում է՝ հասցվելով 12 ամսի, նախկին 15 ամսվա փոխարեն և օրենսդրական փոփոխություն նախատեսող օրինագիծը ներկայացվելու է խորհրդարանին⁵⁶⁸: Ներկա ժամկետը գործում է դեռ 2003 թ.: Երկար ժամանակ քննարկվում էր այս հարցը, սակայն հստակություն չկար կամ էլ կառավարությունը ՁՈՒ ԳՇ-ի հետ համաձայնության չէր կարողանում հասնել: Սրանք քայլեր են, որով Թուրքիան քայլ առ քայլ փորձում է անցում կատարել պրոֆեսիոնալ

⁵⁶⁶ TSK'da yeni yapılanma, Milliyet, 04.10.2008. Շուրջ 10 հազար թվաքանակ ունեցող «կոմանդոս» բրիգադները նախկինում հիմնականում համալրված էին զինակոչիկներով: Բարեփոխումների արդյունքում, դրանք կազմվելու են բացառապես «պրոֆեսիոնալ զինծառայողներով», որոնք հատուկ դպրոցներում պատրաստվելուց հետո կանցնեն ծառայության: 2010 թ. ամբողջովին պրոֆեսիոնալներով էին համալրված լինելու Բոլուի լեռնային կոմանդոս և Կայսերիում տեղակայված 1-ին, Բոլույում տեղակայված 2-րդ և Սիիրթում գտնվող 3-րդ կոմանդոս բրիգադները: Տես՝ TSK'da profesyonel orduya adım adım, Milliyet, 17.02.2009

⁵⁶⁷ Տես՝ Hedef mobil ordu, Sabah, 24.06.2003.

⁵⁶⁸ Տես՝ Genelkurmay'dan askerlik açıklaması: Uzun dönem askerlik 12 aya düşüyor, <http://sozcu.com.tr/2013/gundem/genelkurmay-uzun-donem-askerlik-12-aya-iniyor-kisa-donem-askerlik-ise-6-ay-olarak-kalacak-384003/>.

բանակի: Երկար ժամանակ քննարկվում էր ՁՈւ-ի թվաքանակի կտրուկ կրճատման և հիմնականում պայմանագրային զինծառայողներով համալրելու խնդիրը և աստիճանաբար ՁՈւ-ը համալրվում են պայմանագրային զինծառայողներով: Մակայն դեռևս թուրքական բանակում պրոֆեսիոնալ զինծառայողների թվաքանակը զգալի փոքր է, և դեռ երկար ժամանակ կպահանջվի այդ գործընթացն ավարտին հասցնելու համար: Թուրքական աղբյուրների համաձայն՝ 2012 թ. դրությամբ թուրքական բանակում պրոֆեսիոնալ զինծառայողների ընդհանուր թվաքանակը հասնում էր մոտ 200 հազարի, որից մոտ 40 հազարը կազմում էր սպայական անձնակազմը, 96 հազարը կրտսեր սպայական դասը և միայն 65 հազարը՝ պայմանագրային հիմքով ծառայողները⁵⁶⁹: 2014 թ. հունվարին ԳՇ-ը հրապարակեց ՁՈւ-ի թվաքանակի վերաբերյալ նոր տվյալներ, ըստ որի՝ պրոֆեսիոնալ զինծառայողների թիվը կազմել է ՁՈւ-ի զինվորական անձնակազմի մոտ 35 տոկոսը, իսկ ժանդարմերիայում և Առափնյա անվտանգության հրամանատարությունում՝ համապատասխանաբար 34 և 61 տոկոսը⁵⁷⁰:

2013 թ. նոյեմբերի 28-ին կայացած Բարձրագույն ռազմական խորհրդի (Yüksek Askeri Şurası, YAŞ) նիստի ժամանակ որոշում կայացվեց Թուրքիայի ՁՈւ-ի վերակազմակերպման ուղղությամբ աշխատանքների սկսման վերաբերյալ: Մասնավորապես՝ ծրագրվում է ժամանակի ընթացքում ՁՈւ-ը ամբողջովին վերակազմավորել ճկուն-մոբիլ ստորաբաժանումներից բաղկացած պրոֆեսիոնալ հիմքով բանակի, բարձրացնել դրա տեխնոլոգիական հնարավորությունները, տիրապետել միջին և մեծ հեռահարության հրթիռային միջոցների, մեծացնել միջերկրածովյան նավատորմի ռազմական ուժը, ժանդարմերիան ՁՈւ-ի ենթակայությունից հանելով այն վերաձևավորել ոստիկանական ուժերի: Որպես կարևոր որոշում ընդունվել է արևելյան միջերկրածովյան շրջանում ուժեղացնել թուրքական ռազմական նավատորմը, ինչը պայմանավորված է

⁵⁶⁹ Տե՛ս՝ Askerlikte zorunlu profesyonellik, Aksiyon, 26.11.2012.

⁵⁷⁰ Տե՛ս՝ TSK'nın personel sayısı 662 bin 719, Hürriyet, 02.01.2014.

սիրիական հիմնախնդրի հետ կապված Միջերկրական ծովում ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Չինաստանի ռազմական ներկայության աճով ու այդ շրջանի տարանցիկ կարևոր նշանակությամբ: Թուրքիայի կառավարությունը պլանավորել է ՋՈւ-ի ԳՇ-ի ենթակայության տակ գտնվող և փաստացի ՋՈւ-ի մասը համարվող Ժանդարմերիայի հրամանատարությունը ամբողջությամբ կցել ՆԳՆ-ի ենթակայությանը: Ժանդարմերիան կբաժանվի 2 հիմնական միավորների՝ ամբողջությամբ պրոֆեսիոնալ հիմքով ներքին անվտանգության ոստիկանական և սահմանային անվտանգության ու մաքսակետերի հսկողության ուժերի⁵⁷¹:

Դեռևս տարիներ առաջ ծրագրվել էր կառուցվածքային ու կադրային բարեփոխումներ իրականացնել Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարության⁵⁷² (թուրք. Jandarma Genel Komutanlığı) շրջա-

⁵⁷¹ Տես՝ Orduya yeni düzen, <http://siyaset.milliyet.com.tr/orduya-yeni-duzen/siyaset/detay/1799412/default.htm>.

⁵⁷² Ժանդարմերիան ստեղծվել է 19-րդ դարի առաջին կեսին՝ Օսմանյան Թանգիմաթի տարիներին, 1909 թ. հանձնվել ռազմական գերատեսչությանը: Այն հետագայում լուրջ դերակատարություն է ունեցել անկախության համար մղված պատերազմում: 1930 թ. ընդունված օրենքով ժանդարմերիան ստացավ իր իրավական ժամանակակից կարգավիճակը: Հատկապես 1950-60-ական թթ. իրականացվեցին մի շարք բարեփոխումներ՝ ժանդարմերիայի միավորումները վերակազմավորվեցին բրիգադային համակարգով և ստեղծվեցին շրջանային հրամանատարությունները: Հետագայում այն ստանձնեց ՔԲԿ-ի դեմ պայքարի գործողությունների պատասխանատվությունը և լայն լիազորություններ ստացավ հատկապես երկրի արևելյան ու հարավ-արևելյան նահանգներում: 1983 թ. ընդունված «Ժանդարմերիայի կառուցվածքի, պարտականությունների ու լիազորությունների» մասին օրենքի համաձայն՝ նրա հիմնական պարտականություններն են՝ հասարակական կարգի ու անվտանգության ապահովում, ահաբեկչության, մաքսանենգության դեմ պայքար, սահմանային անցակետերի պահպանություն, պարտադիր զորահավաքի հարկադրում, քրեական հետախուզություն, ինչպես նաև ՋՈւ-ի կողմից առաջ քաշված այլ հանձնարարություններ: Ժանդարմերիան հանդիսանում է Թուրքիայի ՋՈւ-ի մի մասը: Խաղաղ ժամանակ այն գտնվում է ՆԳՆ-ի ենթակայության տակ, իսկ պատերազմի ժամանակ անցնում է ՋՈւ ԳՇ ենթակայությանը:

Տես՝ Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարության պաշտոնական կայք՝ http://www.jandarma.gov.tr/ust_menu/tarihce.htm, ինչպես նաև՝ ժանդարմերիայի մասին հիմնական օրենքը՝ Jandarma Teşkilat, Görev ve Yetkileri Kanunu, <http://www.mevzuat.gov.tr/Metin.Aspix?>:

նակներում, ինչը մի կողմից կբարձրացնի նրա արդյունավետությունը, մյուս կողմից էլ կնպաստի Թուրքիայի եվրահետեզման ջանքերին: Այդ նախագիծը ենթադրում էր մինչև 2014 թ. «քաղաքացիականացնել» այն՝ ընդհանուր ղեկավարումը ՋՈւ ԳՇ-ից փոխանցել Ներքին գործերի նախարարությանը (այսուհետ՝ ՆԳՆ, թուրք. İçişleri Bakanlığı): ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության Ազգային ծրագրի պարտավորությունների շարքում նախատեսված էր ներքին անվտանգության գործառույթները հիմնականում դնել քաղաքացիական իշխանությունների վերահսկողության ու լիազորությունների շրջանակում, տվյալ պարագայում՝ ՆԳՆ-ի⁵⁷³: Չնայած Ժանդարմերիայի հրամանատարությունը հանձնվելու էր ՆԳՆ-ին, պատերազմի ժամանակ այն միանգամից անցնում էր ՋՈւ-ի ԳՇ ենթակայությանը: Ժանդարմերիայի ոլորտում իրականացվելիք բարեփոխումների գործընթացը մեկնարկել էր դեռևս 2004 թ., երբ թուրքական կողմը եվրոպական պարտավորությունների շրջանակում պետք է քայլեր ձեռնարկեր պարտադիր (ժամկետային) զինճառայողների թվաքանակի կրճատման ու քաղաքացիական վերահսկողության հաստատման ուղղությամբ, որին պետք է աջակցություն ցույց տար Մեծ Բրիտանիան: Բացի այդ, նախատեսվում էր ստեղծել Սահմանային ոստիկանության ծառայություն և որպեսզի ապահովվեր ցամաքային և ծովային սահմանային անվտանգությունը, ԵՄ-ի և Թուրքիայի ՆԳՆ-ի միջև ստորագրվեց Միավորված սահմանային անվտանգության կառավարման ռազմավարությունը: Այդ ոլորտում, սակայն, գործնական քայլեր չիրականացվեցին, ինչը պայմանավորված էր բանակի հրամանատարության կոշտ դիմադրությամբ⁵⁷⁴:

⁵⁷³ Stü ` Jandarma'da AB devrimi!, Radikal, 17.04.2009.

⁵⁷⁴ Stü ` Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, TESEV Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın, İstanbul 2006, s. 32, <http://www.tesev.org.tr>. Նշենք, որ Ժանդարմերիայի հրամանատարությունը այդ նախաձեռնության հետ կապված լուրջ դժգոհություն հայտնեց, քանի որ այն միշտ գտնվել է ՋՈւ գլխավոր շտաբի ենթակայության տակ և համարվում էր բանակի ռազմական ստորաբաժանումներից: Բացի այդ, գրեթե միշտ անհասկանալի դիմա-

2008 թ. հոկտեմբերին քուրդ գրոհայինների կողմից թուրքական զինվորական ուղեկալի վրա հարձակումները թուրքական քաղաքական ու զինվորական բարձրագույն ղեկավարությանը կանգնեցրեցին հակահարձակական պայքարի ռազմավարական նոր ուղեգծի սահմանման անհրաժեշտության առջև⁵⁷⁵: Ի դեպ, 2009 թ. նոյեմբերին ԹԱՄԺ-ում պաշտպանական բյուջեի ներկայացման ժամանակ պաշտպանության նախարար Վ. Գյոնուլը նշեց, որ ժամանակակից Թուրքիայի անվտանգությանն ուղղված ամենամեծ սպառնալիքը քրդական ահաբեկչությունն է՝ ՔԲԿ-ն⁵⁷⁶: Այդ ահաբեկչությունից հետո պարզ դարձավ, որ դրա դեմ պայքարի ռազմավարությունը էապես փոփոխության է ենթարկվելու: Կառավարության ու անվտանգության ուժերի համատեղ պատրաստված նոր ռազմավարական պլանի հիմնական դրույթը վերաբերում էր «պրոֆետիոնալ բանակին», որի գաղափարը դեռ 2007 թ. առաջ էր քաշվել ՅՈՒԻ-ի հրամանատար Ի. Բաշբուրդի կողմից: Հիմնականում սպաներով ու ենթասպաներով համալրված ժանդարմերիայի գումարտակներից ու հրամանատարական բրիգադներից 7 հազարանոց հատուկ նշանակության ուժեր էին կազմվելու, որոնք էլ պետք է

կայություն ու մրցակցություն է եղել ոստիկանության զորքերի ու ժանդարմերիայի միջև՝ լիազորությունների հստակեցման խնդիրների հետ կապված: Հատկապես 2008 թ. վերջին ահաբեկչության դեմ պայքարի նոր ռազմավարության քննարկումների ժամանակ՝ զինվորականության ներկայացուցիչները ակտիվորեն պնդում էին այդ պայքարում առաջնային դերակատարությունը ժանդարմերիայի հրամանատարությանը հանձնելու անհրաժեշտության մասին, սակայն կառավարությունը ձեռնամուխ եղավ նոր համակարգող մարմնի ստեղծմանը:

⁵⁷⁵ 2008 թ. հոկտեմբերի 3-ին թուրք-իրաքյան սահմանին տեղակայված Աքթյությունի զինվորական ուղեկալի վրա քրդական զինյալների հարձակման հետևանքով գոհվեցին թուրքական ՋՈՒ-ի 17 զինծառայողներ: Թուրքիայի ՊՆ տվյալներով՝ քրդական գրոհայինների կողմից թուրքական ուղեկալների վրա կատարվել է ավելի քան 38 հարձակում, որի պատճառով այդ երկրի բանակը կորցրել է 366 զինծառայող: Իսկ ընդհանուր առմամբ ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում 2008 թ. հոկտեմբերի դրությամբ Թուրքիայի ՋՈՒ-ն ու անվտանգության մարմինները շուրջ 7900 զոհ են տվել:

Stu` Bugüne kadar 7 bin 964 şehit verdik, <http://www.haber5.com>, 14.10.2008:

⁵⁷⁶ Stu` Bakan Gönül: PKK, Türkiye'nin güvenliğine yönelik en önemli tehdittir, Zaman, 10.11.2009.

տեղակայվեին սահմանային շրջաններում: Ժանդարմերիայի հրամանատարության հիմքի վրա ստեղծվելիք հատուկ նշանակության ուժերը հետագայում պետք է համալրվեին ևս 8 հազարով: Հայաստանի հետ Թուրքիայի սահմանից մինչև Հաթայ, թուրք-սիրիական սահմանը ներառյալ, ամբողջ սահմանի երկայնքով տեղակայվելու էին հատուկ նշանակության սահմանային ուղեկալներ⁵⁷⁷:

2008 թ. Ահաբեկչության դեմ պայքարի բարձրագույն խորհրդի (թուրք. Terörle Mücadele Yüksek Kurulu) գումարված նիստում որոշում կայացվեց ահաբեկչության դեմ պայքարի գործողությունների համակարգման նպատակով ՆԳՆ համակարգում նոր կառուցվածքային փոփոխություններ կատարել: Նիստի ընթացքում քննարկվել են օրենսդրական փոփոխություններին, անվտանգության ուժերի առջև կանգնած դժվարություններին ու բացթողումներին, անդրսահմանային գործողություններին, սահմանների անվտանգության ապահովման ոլորտում ձեռնարկվելիք ռազմավարական քայլերը, ինչպես նաև ՔԲԿ-ի արտաքին աշխարհի հետ կապերը վերացնելու, այդ ուղղությամբ դիվանագիտական ու ռազմական գործողությունների ակտիվացման խնդիրները: Ընդհանուր առմամբ, խնդիր էր դրված առավելագույն չափով ապահովել Ազգային հետախուզական կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ, թուրք. Milli Istihbarat Teşkilatı), Ժանդարմերիայի ու ՆԳՆ-ի, ինչպես նաև անվտանգության այլ մարմինների միջև համագործակցությունն ու օպերատիվ տեղեկատվության արագընթաց փոխանակումը: ԱԱԽ-ի ու Ահաբեկչության դեմ պայքարի բարձրագույն խորհրդի կողմից ընդունված որոշումների համաձայն՝ Ժանդարմերիայի հրամանատարությունն արդեն գործելու էր սահմանների անվտանգության ու գյուղական շրջաններում կարգուկանոնի հաստատման գործառույթների շրջանակում՝ վերացնելով քաղաքներում նախկին պարտականությունները: Հիմնական շեշտադրումը կատարվելու էր քրդաբնակ շրջաններում անվտանգության ապահովման վրա:

⁵⁷⁷ Տես՝ Լևոն Հովսեփյան, Թուրքիայի հակաահաբեկչական պայքարի նոր ռազմավարությունը, Հայ գինվոր, թիվ 49, 13-20 դեկտեմբերի, 2008, էջ 10:

Թուրքիայի ԱԱԽ-ի 2008 թ. հոկտեմբերի 21-ին անցկացված նիստի հիմնական քննարկման թեման էր հակաահաբեկչական պայքարի նոր մոտեցումներն ու ձեռնարկվելիք քայլերն այդ ուղղությամբ: Նիստի ընթացքում որոշում կայացվեց «ահաբեկչության դեմ պայքարի համակարգումն ավելի ուժեղացնելու համար նոր կառուցվածքային վերափոխումներ իրականացնել»⁵⁷⁸: ՆԳՆ-ի, ԶՈՒ-ի ԳՇ-ի, Անվտանգության գլխավոր տնօրինության ու ԱՀԿ-ի համատեղ առաջարկությունների հիման վրա մի օրենքի նախագիծ մշակվեց: Ըստ այդ նախագծի՝ ստեղծվելու էին երկու նոր կառույցներ՝ ՆԳՆ-ին կից, որոնք գործելու էին ղեկավարման, համակարգման, ռազմավարության սահմանման ու ընդհանուր ուսումնասիրությունների ոլորտներում: Անվտանգության գլխավոր տնօրինությանն էր միանալու Առափնյա պահպանության հրամանատարությունը, ստեղծվելու էր «սահմանային անվտանգության» առանձին վարչություն⁵⁷⁹: 2009 թ. փետրվարին Թուրքիայում ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարության բարեփոխումների շրջանակում կայացած խորհրդակցության ժամանակ հաստատվեց հակաահաբեկչական պայքարի նոր կառուցվածքային համակարգի ներդրման որոշումը: Ըստ այդմ՝ ՆԳՆ-ին կից ստեղծվում էր «Հասարակական կարգի ու անվտանգության քարտուղարություն», որի հիմնական գործառույթը լինելու էր հակաահաբեկչական պայքարի համակարգումը՝ ապահովելով անվտանգության ուժերի ու հետախուզական մարմինների միջև օպերատիվ համագործակցությունը՝ հատուկ ռազմավարական մշակումների ու ուսումնասիրությունների արդյունքում անվտանգության ուժերին ներկայացնելով հստակ գնահատականներ ու ուսումնասիրություններ, ապահովելով անհրաժեշտ ռազմավարական վերլուծություններով: 2010 թ. մարտին Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը վավերացրեց այդ կա-

⁵⁷⁸ Տես՝ 2008 Yılı MGK Toplantılarının Basın Bildirileri, 21 Ekim 2008, http://www.mgk.gov.tr/Turkce/Yazdirilabilir%20Surum/Basin%20Bildirileri/2008/21_Ekim_2008.pdf.

⁵⁷⁹ Տես՝ Լևոն Հովսեփյան, Թուրքիայի նոր մարտահրավերները, Առավոտ, 25 հոկտեմբերի 2008:

ռույցի ստեղծման ու գործունեության մասին օրենքը⁵⁸⁰: Հասարակական կարգի ու անվտանգության քարտուղարության պարտականությունն էր անընդհատ, օպերատիվ հանդիպումներ անցկացնել ԶՈՒ-ի ԳՇ-ի, ԱՀԿ-ի, Ժանդարմերիայի ու անվտանգության մարմինների բարձրաստիճան ղեկավարների հետ, լսել նրանց կարծիքներն ու առաջարկությունները, համատեղ մշակել իրականացվելիք գործողությունների ռազմավարությունն ու մարտավարությունը, անվտանգության մարմիններին ռազմավարական տեղեկատվությամբ ապահովել և նրանց միջև համակարգում հաստատել, հետախուզության կողմից ստացված տեղեկատվությունը գնահատել և համապատասխան կառույցներին տրամադրել⁵⁸¹: Բացի այդ, նույն օրենքով նախատեսվում էր ստեղծել Ահաբեկչության դեմ պայքարի համակարգման խորհուրդ՝ անվտանգության մարմինների ու այլ գերատեսչությունների միջև ահաբեկչության դեմ պայքարի համակարգումն ապահովելու ու գնահատումներ իրականացնելու նպատակով⁵⁸²:

Քրդական զինյալների հաճախակի ու հուժկու հարձակումները ակնհայտ դարձրեցին երկրի անվտանգության համակարգում առկա բացասական երևույթներն ու բացթողումները, ինչը մեկ անգամ ևս բարձրագույն հրամանատարության համար պարզ դարձրեց անվտանգության համակարգի բարեփոխումների անհրաժեշտու-

⁵⁸⁰ Stü` Gül'den Kamu Güvenliği Müsteşarlığı'na onay, Yeni Şafak, 03.03.2010.

⁵⁸¹ Stü` Kamu Düzeni Ve Güvenliği Müsteşarlığının Teşkilat ve Görevleri Hakkında Kanun, <http://www.kdgm.gov.tr/index.snet?wapp=0DC304A2-A792-4265-9B43-07A7327BE9EC>; Kamu Düzeni ve Güvenliği Müsteşarlığı 2010 Yılı Idare Faaliyet Raporu, s. 8, <http://www.kdgm.gov.tr/source.cms.docs/kdgm.web.ce/rapor.pdf>. Այդ կառույցը հիմնականում գտնվելու էր քաղաքացիական իշխանությունների վերահսկողության տակ՝ պատասխանատու լինելով վարչապետի առջև: Ի դեպ, այդ գերատեսչությանը չէր վերապահվում օպերատիվ գործողությունների իրականացման լիազորությունը, այլ ուղղակի այն դիտվում էր որպես խորհրդակցական մարմին: ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում ստեղծված համանման կառույցները ամբողջովին լիազորված են իրականացնել նաև օպերատիվ գործողություններ: Stü` Teröre karşı Güvenlik Müsteşarlığı dönemi, <http://www.cnnturk.com>, 05.02.2009; Güvenlik Müsteşarlığı kuruluşu, Hürriyet 05.02.2009.

⁵⁸² Stü` Gül'den Kamu Güvenliği Müsteşarlığı'na onay, Yeni Şafak, 03.03.2010.

թյունը: Այսպես՝ ԶՈւ ԳՇ-ի պետ Յ. Բյույուքանըթը 2009 թ. մայիսին Ստամբուլի Բեյքենթ համալսարանում հանդես եկավ հատուկ դասախոսությամբ, որտեղ քննադատության ենթարկեց բանակ-քաղաքացիական իշխանություններ հարաբերությունների մակար-դակը, ինչպես նաև երկրի անվտանգության համակարգում առկա բացասական երևույթները՝ նշելով, որ «Եթե երկրի ներսում ան-վստահություն ու կասկածանք կա տարբեր պետական կառույցների միջև, ապա այդ երկիրը, ինդրահարույց, հիվանդ պետություն է»⁵⁸³: Քննադատելով անվտանգության մարմինների ոլորտում ոչ լիարժեք համակարգվածությունն ու փոխադարձ անվստահությունը՝ նա ընդգծել է, որ Թուրքիայում Արդարադատության նախարարությունը չի վստահում ՆԳՆ-ին, ԱՀԿ-ն՝ անվտանգության գլխավոր տնօրի-նությանը և հակառակը:

Ընդհանուր առմամբ, թուրքական բանակի ու անվտանգու-թյան մարմինների կողմից քուրդ զինյալների դեմ երկրի ներսում և անդրսահմանային ռազմական գործողությունները գրեթե միշտ թուրքական բանակի հրամանատարության կողմից գնահատվել են արդյունավետ, այնուամենայնիվ, իրականությունը ցույց է տալիս, որ այդ երկրի անվտանգության մարմինների գործունեության հա-մակարգման գործում առկա են թերություններ ու բացթողումներ: Անվտանգության համակարգում իրականացված և իրականացվող կառուցվածքային ու գործառութային բարեփոխումների նպատակը անվտանգության ոլորտում առկա թերությունների ու բացթողում-ների հարթումը, առավելագույն համակարգվածության ապա-հովումն է:

⁵⁸³ Stü` Büyükanıt: Devlet hasta, Hürriyet, 04.05.2009.

4.2. Ազգային անվտանգության խորհրդի օրենսդրական ու կառուցվածքային բարեփոխումները. «քաղաքացիականացման» գործընթաց

Թուրքիայում ներքաղաքական գործընթացների և Եվրամիությանն այդ երկրի անդամակցության համատեքստում իրականացվող բարեփոխումների տեսանկյունից չափազանց մեծ կարևորություն էր տրվում հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում զինվորականության դերի սահմանափակմանն ու անվտանգության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն սահմանելուն ուղղված բարեփոխումներին: ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո զինվորականության դերի նվազմանը միտված բարեփոխումներն առաջնային նշանակություն ստացան, ինչի համար ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացը կարևոր հաղթաթուղթ հանդիսացավ այդ ուժի համար՝ բանակին քաղաքական գործընթացներից մեկուսացնելու և որպես վտանգավոր հակակշիռ ուժի չեզոքացնելու համար: Այս ուղղությամբ առաջին կարևոր քայլը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի բարեփոխումների գործընթացն էր:

Թուրքիայի զինվորականությունն էական դեր է խաղացել երկրի հասարակական-քաղաքական կյանքում, ինչն իրականացվում էր գլխավորապես ԱԱԽ-ին տրված մեծ դերակատարության միջոցով: ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության շրջանակներում հստակ պայման առաջադրվեց, որպեսզի անվտանգության համակարգն ու օրենսդրությունը համապատասխանեցվի ժողովրդավարական չափանիշներին, քանի որ երկրում արմատացած բանակ-քաղաքականություն փոխհարաբերությունները միանգամայն անհամարժեք էին ԵՄ իրողությունների հետ: Ուստի, երկրի քաղաքացիական իշխանությունները ձեռնամուխ եղան ոլորտի օրենսդրական և կառուցվածքային փոփոխություններին:

ԵՄ-ին անդամակցության ճանապարհին թուրքական կառավարությունը սահմանադրական և օրենսդրական բարեփոխումների

անցկացմանը նպատակաուղղված մի շարք միջոցառումներ ձեռնարկեց, որոնք վերաբերում էին իրավաքաղաքական տարբեր ոլորտներին՝ մարդու իրավունքներ, խոսքի ազատություն, ազգային փոքրամասնությունների իրավունքներ և այլն: Այս առումով առավել խնդրահարույց էր դիտվում երկրի անվտանգության մարմինների հանդեպ վերահսկողության սահմանման և քաղաքացիական իշխանության ու զինվորականության միջև 1960-ական թթ. արմատացած կոշտ քաղաքական փոխհարաբերությունների բարեփոխման գործընթացը⁵⁸⁴:

2003 թ. հուլիսին ԹԱՄԺ-ն ընդունեց, այսպես կոչված, «բարեփոխումների 7-րդ փաթեթը», որը ԵՄ անդամության նախապայման էր համարվում և ենթադրում էր երկրի քաղաքական կյանքում զինվորականների դերի սահմանափակում ԱԱԽ-ի բարեփոխումների միջոցով, ինչը որոշ հեղինակների տեղի ունեցածը «թավշյա հեղափոխություն» բնութագրելու առիթ տվեց: Որոշ վերլուծաբաններ էլ դա գնահատեցին որպես իշխող ԱԶԿ-ի ոչ մեծ հաղթանակ՝ զինվորական իշխանության դեմ մղվող պայքարում⁵⁸⁵: ԱԱԽ-ի միջոցով ազդեցության հատուկ լծակներ ունեցող զինվորականների դերը չէր համապատասխանում «ժողովրդավարություն երաշխավորող կառույցների կայունության» և «օրենքի գերակայության» Կոպենհագենյան չափանիշներին⁵⁸⁶: Դրա համար էլ անվտանգության ոլորտում իրականացվող ռեֆորմներն առաջադրվեցին որպես առաջնահերթ նախապայման՝ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ճանապարհին:

⁵⁸⁴ Տե՛ս՝ Barak Salmoni, Turkey's Summer 2003 Legislative Reforms: EU Avalanche, Civil-Military Revolution, or Islamist Assertion?, Strategic Insight, Vol.3, issue 9 (Sept. 2003), <http://www.ccc.nps.navy.mil>.

⁵⁸⁵ Տե՛ս՝ Justus Leicht, Turkey: Reform limits some military powers; <http://www.wsws.org/articles/2003/aug2003/turk-a19.shtml>.

⁵⁸⁶ Տե՛ս՝ Bertil V. Knudsen, The role of the military in Turkish politics, Copenhagen Un., Jan. 2005, <http://www.videt.dk/miliduty.pdf>, p. 12.

*ԱԱԽ-ի դերը հանրապետական Թուրքիայում մինչ
բարեփոխումների իրականացումը*

ԱԱԽ-ի նախատիպը հանդիսանում է 1933 թ. ապրիլին հիմնված «Պաշտպանության բարձրագույն խորհուրդը», որը ենթադրում էր խորհրդակցություններ անցկացնել պաշտպանական ոլորտի խնդիրների առնչությամբ, նախագահի կամ վարչապետի գլխավորությամբ, ԶՈւ ԳՇ պետի և նախարարների խորհրդի անդամների մասնակցությամբ⁵⁸⁷:

Այս կառույցին 1949 թ. փոխարինեց «Ազգային պաշտպանության բարձրագույն խորհուրդը», որին տրվեցին ազգային պաշտպանության ոլորտում և դրա հետ կապված տարբեր հարցերում որոշումներ կայացնելու և իրականացնելու լիազորություններ: Կառույցի պարտականությունների մեջ, մասնավորապես, մտնում էին ազգային պաշտպանական քաղաքականության մշակումը, դրա դրույթների իրականացման գործընթացի վերահսկողությունը, ազգային համընդհանուր մոբիլիզացիայի պլանի կազմակերպումն ու, անհրաժեշտության դեպքում՝ իրականացումը, նախարարների խորհրդին ազգային պաշտպանության վերաբերյալ տեսակետների ներկայացումը⁵⁸⁸:

1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո Սահմանադրությամբ ամրագրվեց և ստեղծվեց արդի ԱԱԽ-ն, որի միջոցով հետագայում սկսեց ամրապնդվել զինվորականների իշխանությունը երկրում⁵⁸⁹: Սա էլ դարձավ այն գործուն մեխանիզմը, որի շնորհիվ զինվորական վերնախավը և, հատկապես ԶՈւ ԳՇ-ը, «ամրագրեցին իրենց առաջնահերթ թև և անվիճելի դերը» քաղաքական համակարգում: 1961 թ. ընդունված Սահմանադրությունը դրեց, այսպես կոչված, երկզուխ քաղաքական համակարգի հիմքերը՝ Նախարարների խորհրդի և

⁵⁸⁷ Stü` Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, TESEV Güvenlik Sektörü Gelişmeleri Dizisi Özel Yayın -2006, s. 32.

⁵⁸⁸ Stü` ԱԱԽ պաշտոնական կայքը, http://www.mgk.gov.tr/Turkce/tarihke_2.html

⁵⁸⁹ Stü` Удо Штайнбах, История Турции, М., 2006, с. 181.

զինվորական բյուրոկրատիայի տեսքով, ինչը մշտապես վնասում էր երկրի քաղաքական կառավարմանը⁵⁹⁰:

1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո զինվորականների դերը՝ որպես երկրի անսխալական և անվտանգ պահապանների, արմատավորվեց ինչպես քաղաքական ավանդույթում, այնպես էլ հանրային ընկալման համատեքստում: Եվ որպես այս դերի հիմնավորում զինվորական վերնախավն անվտանգություն հայտնեց քաղաքացիական իշխանությանը՝ ելնելով վեջինիս՝ երկրի առջև ծագող խնդիրները լուծելու և անվտանգության սպառնալիքներին դիմակայելու անկարողությունից, ինչը հետագայում ԱԱԽ-ի ակտիվ մասնակցությամբ և կայացրած որոշումներով, հանգեցրեց մի շարք հեղաշրջումների⁵⁹¹: Երկրի քաղաքական գործընթացներում զինվորականության, այդ թվում և ԱԱԽ-ի, դերի պահպանման և հզորացման կողմնակիցները վերջիններին դիտարկում էին որպես «քաղաքական չափավորության ամրոց և քաղաքական կայունության ամուր ձեռք»⁵⁹²:

1961 թ. Սահմանադրությունը, փաստորեն, ամրագրեց ԱԱԽ ստեղծումը. 1962 թ. ապրիլին ընդունված օրենքը (111-րդ հոդվածով) խորհրդի ստեղծման իրավական հիմքը դրեց: Նորաստեղծ խորհրդի գլխավոր պարտականությունն այն էր, որ նախարարների խորհուրդ ներկայացնի երկրի անվտանգության հետ կապված որոշումների ընդունման և դրանց համակարգման հարցերի վերաբերյալ հիմնական տեսակետները⁵⁹³:

1973 թ. սահմանադրական փոփոխություններին համապատասխան ԱԱԽ-ում ուժային գերատեսչությունների՝ անդամի կարգավիճակով մասնակցող ներկայացուցիչներին գումարվեցին նաև տարբեր գորատեսակների ներկայացուցիչներ, իսկ խորհրդի կողմից կառավարությանը ներկայացվող որոշումները ստացան «հար-

⁵⁹⁰ Տե՛ս՝ Bertil V. Knudsen, նշվ. աշխ.:

⁵⁹¹ Տե՛ս՝ Mehmet Ali Birand, *Shirts of Steel, An Anatomy of the Turkish Armed Forces*. London-New York 1991, p. 79.

⁵⁹² Տե՛ս՝ Barak Salmoni, նշվ. աշխ.:

⁵⁹³ Տե՛ս՝ Նույն տեղում:

կադիր խորհրդատվական» կարգավիճակ, ինչն էլ ավելի մեծացրեց ԱԱԽ-ի դերակատարությունն ու դրանում զինվորականության ազդեցությունը⁵⁹⁴: Ինչպես նշել է դանիացի հետազոտող Բ. Կնուդսենը, 1971 թ. ռազմական հեղաշրջումից հետո ԱԱԽ-ին էլ ավելի մեծ ուժ տրվեց, որն էլ օգտագործվում էր որպես «քաղաքականության հանդեպ կոշտ վերահսկողության միջոց»⁵⁹⁵:

ԱԱԽ-ի լիազորությունների ընդլայնումը և կառուցվածքային փոփոխություններն ավելի նշանակալի դարձան 1980 թ. Մեպտեմբերյան ռազմական հեղաշրջումից հետո, երբ այդ մարմինն ամբողջովին իր ձեռքը վերցրեց երկրի կառավարումը: Իշխանությունը քաղաքական գործիչներին հանձնելուց առաջ զինվորականներն օրենսդրական և սահմանադրական փոփոխություններ նախաձեռնեցին: Թուրքիայի նոր Սահմանադրության (1982 թ.) 118-րդ հոդվածի համապատասխան՝ ընդունվեց նոր օրենք ԱԱԽ-ի մասին, ըստ որի այդ կառույցը վերակազմավորվեց՝ ստանալով էլ ավելի մեծ լիազորություններ: Խորհրդում ավելացվեց ուժային կառույցների ներկայացուցիչ զինվորականների թիվը, ինչը, բնականաբար, ընդլայնեց զինվորականների ազդեցությունը և նրանց վերահսկողությունն ընդունվող որոշումների գործընթացի վրա: 1983 թ. ընդունված օրենքը ԱԱԽ-ի և դրա քարտուղարության մասին դրույթ էր նախատեսում այն մասին, որ նախարարների խորհրդի օրակարգում «առաջնահերթ ուշադրություն» դարձվի ԱԱԽ-ի որոշումներին, ինչը հետագայում վերածվեց անվերապահ կատարման ենթակա ավանդույթի⁵⁹⁶: Փաստորեն, այդ օրենքի համաձայն՝ ստեղծվեց ԶՈՒ ԳՇ պետի վերահսկողության ներքո գտնվող և մեծաթիվ անձնակազմ ու լայն լիազորություններ ունեցող քարտուղարություն⁵⁹⁷: Ինչպես նշում է հայտնի թուրք իրավագետ Է. Օզբուդունը՝ 1982 թ. Մահ-

⁵⁹⁴ Sku` Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, Tesev Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın -2006, s. 32.

⁵⁹⁵ Sku` Bertil V. Knudsen, նշվ. աշխ., էջ 8:

⁵⁹⁶ Sku` ԱԱԽ պաշտոնական կայքը, <http://www.mgk.gov.tr>:

⁵⁹⁷ Sku` Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, Tesev Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın -2006, s. 33.

մանադրությունն ամբողջությամբ արտահայտում էր զինվորական վարչակարգի ավտորիտար արժեքներն ու ապահովում նրանց բացարձակ գերակայությունը քաղաքական համակարգում⁵⁹⁸:

1990-ական թթ. ընթացքում զինվորական վերնախավը շարունակում էր առանցքային դեր խաղալ ԱԱԽ-ում և գլխավոր քարտուղարությունում: Ջինվորականությունը ԱԱԽ ԳՔ-ն օգտագործում էր որպես կազմակերպչական միջոց՝ երկրի քաղաքացիական իշխանությունների, գործադիր իշխանության վրա ազդեցություն ապահովելու, վերահսկելու և ուղղորդելու համար: Այլ խոսքով՝ ԱԱԽ ԳՔ կատարում էր ստվերային գործադիր մարմնի գործառույթներ և անվտանգային-արտաքին քաղաքական հարցերով սեփական նախաձեռնությամբ հրապարակում խորհրդատվական տեղեկանքներ, զեկույցներ, որոնք պետք է կառավարության կողմից ընդունվեին անվերապահորեն⁵⁹⁹:

Այսպիսով, անվտանգության և ազգային պաշտպանության ապահովման նպատակով ստեղծված ԱԱԽ-ն, լայն իրավասություններ ունենալով, ժամանակի ընթացքում վերածվեց քաղաքական վարչակազմի և, ընդհանրապես, պետական-քաղաքական գործընթացների նկատմամբ զինվորական վերահսկողության բարձրագույն մարմնի:

ԱԱԽ-ի օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները

ԱԶԿ-ի իշխանության գալուց գրեթե մեկ տարի առաջ՝ 2001 թ. օգոստոսին, Թուրքիայի «Մայր հայրենիք» կուսակցության համագումարում նախկինում վարչապետի պաշտոնն զբաղեցրած Մետուք

⁵⁹⁸ Sıkı Ergun Özbudun, Democratization Reforms in Turkey, 1993-2004, Turkish Studies, Vol. 8, No. 2, June 2007, p. 179-180.

⁵⁹⁹ Sıkı Ertan Efeğil, TDP Yeni Bir Karar Verme Modeli Önerisi, Türkiyenin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayını, 2010, s. 110.

Յըլմազն⁶⁰⁰ աննախադեպ քննադատության ենթարկեց երկրում անվտանգության խնդիրների նկատմամբ դրված տաբուն՝ հայտարարելով. «Թուրքիայի վերափոխման բանալին թաքնված է «ազգային անվտանգություն» հասկացության մեջ: Եթե Թուրքիան ցանկանում է առաջընթաց ապրել, ապա պետք է հրաժարվի անվտանգության սինդրոմից: Դեպի Եվրոպա մեր ճանապարհի բանալին ազգային անվտանգության սահմանների հստակեցումն է: Թուրքիան իր ճանապարհը շարունակելու է կամ ժամանակակից աշխարհի, կամ էլ Սադամների, Միլոշեվիչների հետ»⁶⁰¹: Նա իր ելույթում քննադատեց Թուրքիայում անվտանգության նկատմամբ դրված տաբուն՝ անհրաժեշտ համարելով, որ քաղաքացիական իշխանություններն էլ հնարավորություն ունենան մասնակցել անվտանգության սահմանման ու ռազմավարության մշակման գործում: Այլ կերպ՝ նա հասկացնում էր, որ հիմնախնդիրների ուռճացված անվտանգայնացումը քաղաքական գործընթացների վերահսկողությունը կենտրոնացնում է զինվորական վերնախավի ձեռքում, ինչն էլ տեղավորվում է ավտորիտար կառավարման բնույթի մեջ: Սա քաղաքացիական իշխանության ներկայացուցչի կամ քաղաքական գործչի կողմից առաջին նման հրապարակային քայլն էր, ինչը քաղաքական դաշտում լուրջ իրարանցում առաջացրեց: Մ. Յըլմազի ելույթը հստակ ուղերձ էր երկրի քաղաքական կյանքում լուրջ դերակատարություն ունեցող զինվորականությանը: Միանգամից հետևեց ԳՇ-ի հայտարարությունը, ըստ որի՝ «կուսակցական ամբիոնը լուրջ հարթակ չէ զգայուն հարցերին անդրադառնալու համար»:

⁶⁰⁰ Մ. Յըլմազը 1983 թ. անդամակցում է Թ. Օզալի կողմից հիմնված «Մայր հայրենիք» կուսակցությանը՝ դառնալով կուսակցության փոխնախագահ: 1987-1990 թթ. Զբաղեցրել է արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Թ. Օզալի մահից հետո դարձել է կուսակցության առաջնորդ և 1990-ական թթ. ընթացքում երեք անգամ դարձել վարչապետ:

⁶⁰¹ Ulusal güvenlik tabu mu?, <http://www.aksiyon.com.tr/aksiyon/haber-8059-11-ulusal-guvenlik-tabu-mu.html>.

Այն, ինչի մասին հայտարարում էր Մ. Յըլմազը, մեծ հաշվով սկսեց իրականացնել ԱԶԿ-ն՝ իհարկե այն հարմարեցնելով նաև իր քաղաքական շահերի հետ:

Թուրքական կառավարությունը՝ ԱԶԿ-ի գլխավորությամբ, որը 2002 թ. նոյեմբերին խորհրդարանական ընտրություններից հետո մեծամասնություն կազմեց ԹԱՄԺ-ում, սկսեց զինվորականների և քաղաքական շրջանակների, ինչպես նաև անվտանգության մարմինների միջև հարաբերությունները ԵՄ չափորոշիչներին մոտեցնելու գործընթացը: Անվտանգության ոլորտի ժողովրդավարացումն առաջին հերթին ենթադրում էր զինվորականության դերի սահմանափակում երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Հենց այդ պատճառով էլ Թուրքիայում անվստահություն կար բարեփոխումների առնչությամբ, և երբեմն թվում էր, թե դրանք անհնար են: Բարեփոխումների գործընթացը դժվար իրականանալի էին համարում, քանի որ այն նախաձեռնել էր իսլամական արմատներ ունեցող և զինվորական վերնախավի վստահությունը չվայելող ԱԶԿ-ն⁶⁰²: Մակայն, հարկ է նշել, որ կառավարությունը և հատկապես իշխող կուսակցությունը չէին կարող սկսել բարեփոխումների գործընթացն առանց զինվորական վերնախավի լուր համաձայնության: Ճիշտ է թուրք վերլուծաբան Էրսել Այդընլըն, որն իր հոդվածում հավաստիացնում է, որ ԱԶԿ կառավարությունը բարեփոխումներ չէր անցկացնի առանց զինվորական շրջանակների համաձայնության, քանի որ հենց նրանք են Թուրքիայի անդամությունը ԵՄ-ին համարում երկրի վերջնական «մոդեռնիզացիան»⁶⁰³: Մեկ այլ թուրք վերլուծաբան՝ Մոներ Չաղափթայը, որպես ապացույց այն բանի, որ իշխանությունները և զինվորականները համաձայնության են եկել այս հարցում, վկայակոչում է ԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնին բարձրաստիճան զինվորականի նշանակումը (մեկ տարի ժամ-

⁶⁰² Տես՝ Bertil V. Knudsen, նշվ. աշխ., էջ 12:

⁶⁰³ Տես՝ Ersel Aydinli, Nihat Ali Özcan, Doğan Akyaz, *The Turkish Military's March Toward Europe*, *Foreign Affairs*, January/February 2006, <http://www.foreignaffairs.org/20060101faessay85108/ersel-aydinli-nihat-ali-ozcan-dogan-akyaz/the-turkish-military-s-march-toward-europe.html>.

կետով), թեև արդեն գործում էր նոր, բարեփոխված կարգը, համաձայն որի՝ այդ պաշտոնը պետք է զբաղեցնեի քաղաքացիական անձ⁶⁰⁴: Այս առումով միանգամայն բնութագրական են վարչապետ Էրդողանի՝ ԵՄ-ին ներկայացրած փաստաթղթերը, թե իբր, թուրքական պետության արդիականացման գործընթացն առաջ են մղում հենց զինվորականները⁶⁰⁵: Էրդողանի այդ հայտարարությունն առաջին հերթին նպատակ էր հետապնդում որոշակիորեն հանգստացնել բարձրագույն սպայակազմին, քանի որ առանց այդ էլ իր գլխավորած կառավարությունը վստահություն չէր ներշնչում, և զինվորականությունը վերաբերում էր կասկածամտությամբ: Բացի այդ, չնայած հնչում է հակասական, երկրի բարձրագույն զինվորականությունը, հանդիսանալով քեմալիզմի գաղափարախոսության երաշխավորն ու պահպանը, հանրապետական Թուրքիայի աշխարհիկ կարգի պահպանման, քաղաքական արդիականացման ու արևմտականացման ուղեգիծը վերագրում էր իրեն:

Թուրքիայի անվտանգության համակարգի ժողովրդավարացման, բարեփոխումների կարևոր ազդանշան հանդիսացավ 1999 թ. Հելսինկյան գագաթաժողովը⁶⁰⁶, որին հաջորդեցին ոլորտի որո-

⁶⁰⁴ Տե՛ս՝ Soner Gagaptay, European Union Reforms Diminish the Role of the Turkish Military: Ankara Knocking on Brussels' Door, The Washington Institute of Near East Policy, PolicyWatch#781, August 12, 2003, http://www.ciaonet.org/pbei/winep/policy_2003/2003_781.html.
<http://www.hri.org/news/turkey/trkpr/2003/03-06-06.trkpr.html#07>.

⁶⁰⁵ Տե՛ս՝ Erdogan: "The TSK is Leading Turkey's Modernization Process", <http://www.hri.org/news/turkey/trkpr/2003/03-06-06.trkpr.html#07>

⁶⁰⁶ 1999 թ. դեկտեմբերին ԵՄ անդամ երկրների նախագահների և վարչապետերի գագաթնաժողովում ընդունվեց ԵՄ-ի ընդլայնման մասին որոշումը: Թուրքիան պաշտոնապես ստացավ ԵՄ անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակ և պարտավորություններ ստանձնեց ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնել հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտներում: Մանրամասն տե՛ս՝ Dr. Sanem Baykal, Turkey-EU Relations in the Aftermath of the Helsinki summit: An Analysis of Copenhagen Political Criteria in Light of the Accession Partnership, National program and the Regular Reports, Ankara Review of European Studies, vol. 2, No3, 2002, pp. 15-63:

շակի բարեփոխումներ: Առաջին հիմնական փոփոխությունները վերաբերում էին Սահմանադրության 118-րդ հոդվածին: Դրանց համապատասխան՝ ԱԱԽ-ն դարձավ խորհրդատվական մարմին: 2001 թ. հոկտեմբերին մտցված այդ փոփոխություններից հետո խորհրդում ավելանալու էր կառավարության ներկայացուցիչների թիվը: ԱԱԽ-ի ընդունած որոշումները կրելու էին խորհրդատվական բնույթ և չէին ենթադրելու նախարարների խորհրդում դրանց անվերապահ ընդունում, ինչպես նախկինում էր⁶⁰⁷: Եվ այնուամենայնիվ, խորհրդի կառուցվածքային և կադրային առանձնահատկությունը, նրա գործունեության կարգը, պարտականությունների և իրավասությունների շրջանակը չէին համապատասխանում ԵՄ առաջադրած չափանիշներին, և այդ բացը լրացնելու համար թուրքական խորհրդարանը 2003 թ. ընդունեց ԵՄ նախապայմաններից հանդիսացող «բարեփոխումների 7-րդ փաթեթը»⁶⁰⁸: Այս փաստաթուղթն էական նշանակություն ունեցավ ԱԱԽ-ի պարտականությունների և իրավասությունների սահմանափակման, ինչպես նաև կառուցվածքային-կազմակերպական վերափոխումների իրականացման առումով:

Առաջին լուրջ քայլերից էին 2003 թ. օգոստոսին ԱԱԽ-ի և գլխավոր քարտուղարության մասին օրենքում մտցված փոփոխությունները՝ դրանք երկրի Հիմնական օրենքին համապատասխանեցնելու նպատակով: Այդ փոփոխությունները զգալի չափով նեղացրին ԱԱԽ-ի իրավասությունների շրջանակը, և նվազեցրին նրա

⁶⁰⁷ Stu` Türkiye Cumhuriyeti Anayasası, Yasa Kitapları Dizisi:1, İstanbul, 2003, s. 78.

⁶⁰⁸ «Բարեփոխումների 7-րդ փաթեթը» ԵՄ-ի չափանիշներին համապատասխան օրենսդրական փոփոխությունների համալիր մի ծրագիր էր, որն ուժի մեջ մտավ 2003 թ. օգոստոսի 7-ին՝ նախագահի կողմից վավերացվելուց հետո: Այդ փաթեթը նախատեսում էր մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք ընդլայնելու էին խոսքի, կրոնի ու տարբեր միությունների ազատության շրջանակները, մշակութային իրավունքները, բարեփոխելու էին ռազմական դատարանների, ինչպես նաև բանակ-քաղաքականություն հարաբերությունների օրենսդրական դաշտը՝ ռազմական ծախսերի նկատմամբ վերահսկողության սահմանման ու ԱԱԽ-ի մասին օրենքների բարեփոխումների միջոցով:

Stu` 7. UYUM YASALARI..., <http://www.belgenet.com/yasa/k4963.html>; 7. Uyum Paketi TBMM'den geçti, Radikal, 30.07.2003:

ազդեցության աստիճանը: Բարեփոխված օրենքի համաձայն՝ ԱԱԽ գլխավոր քարտուղարին նշանակում է վարչապետը, ինչն իր հերթին ենթադրում է այդ պաշտոնին քաղաքացիական անձի նշանակում: Այդուհետ խորհրդի նիստերը գումարվում են երկու ամիսը մեկ անգամ. մինչ այդ դա կատարվում էր ամիսը մեկ⁶⁰⁹: Օրենքում կատարված փոփոխություններով որոշակիորեն վերանայվեց խորհրդի լիազորությունների շրջանակը և վերախմբագրվեց ավելի հակիրճ ձևով: Ըստ օրենքի 4-րդ հոդվածի՝ «ԱԱԽ-ն երկրի ազգային անվտանգության սահմանման ու պետության անվտանգության քաղաքականության շրջանակում ընդունում է խորհրդատվական որոշումներ պետության ազգային անվտանգության քաղաքականության սահմանման, հաստատման ու իրականացման խնդիրների հետ կապված, իրականացման ոլորտում ապահովում է անհրաժեշտ համակարգումը, կառավարությանն է ներկայացնում խորհրդատվական որոշումներն ու տեսակետները, իրականացնում օրենքով վերապահված գործառույթներ»⁶¹⁰:

ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործում առաջընթացի վերաբերյալ 2003 թ. զեկույցում ընդգծվում էր, որ իրականացվող բարեփոխումներով արմատական փոփոխություններ են մտցվում ԱԱԽ-ի իրավասություններում, պարտավորություններում և գործունեության կազմակերպման մեջ: Մասնավորապես՝ ԱԱԽ-ի մասին օրենքի փոփոխությունները նեղացնում են խորհրդի գլխավոր քարտուղարի գործադիր և վերահսկողական գործառույթները: Այսպես, նա այլևս չի կարող նախագահի կամ վարչապետի անունից իրականացնել խորհրդի որոշումների և կարգադրությունների կա-

⁶⁰⁹ Stu` Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, Tesev Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın -2006, s. 33-34.

⁶¹⁰ Stu` MGK ve MGK Genel Sekreterliği Kanunu, <http://www.mgk.gov.tr/Turkce/kanun.html>. Մինչև օրենքի փոփոխությունները, ԱԱԽ-ի գլխավոր քարտուղարության լիազորությունների շրջանակը բավականին մեծ էր և առնչվում էր երկրի քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներին, ինչը հնարավորություն էր տալիս միջամտել քաղաքական կյանքին:

տարման վերահսկողությունը⁶¹¹: Գլխավոր քարտուղարի իրավասությունների սահմանափակման առումով կարևոր քայլ էր քարտուղարության պարտականությունների և աշխատանքի սկզբունքների «գաղտնի կարգի» վերացումը: Այդ կարգը նախկինում թույլ էր տալիս ԱԱԽ գլխավոր քարտուղարությանը գործել որպես «ինքնավար գործադիր իշխանություն»: Կառավարության ընդունած նոր կարգին համապատասխան ներդրվեցին քարտուղարության իրավասությունների շրջանակները, սահմանափակվեց կապը ԶՈՒ ԳՇ-ի հետ: Բացի այդ, վերացվեցին միջանկյալ գործառույթներ իրականացնող մի շարք ստորաբաժանումներ, դրանց թիվը, նախկին 11-ի փոխարեն, հասցվեց 6-ի: Դրանց շարքում էր նաև Հասարակայնության հետ կապերի նախագահությունը, որը պատասխանատու էր տեղե-կատվական-հոգեբանական բնույթի գործողությունների անցկացման համար⁶¹²:

Բարեփոխումները նվազեցրին նաև ԱԱԽ-ի ազդեցությունը հասարակական-քաղաքական տարբեր կառույցների վրա, սահմանափակեցին դրանց գործերին նրա միջամտության հնարավորությունը: Լուծարվեցին խորհրդի ներկայացուցչությունները կինո, տեսաերաժշտական արտադրանքի վերահսկողության վարչությունում, թեև ԱԱԽ-ն դեռևս ներկայացված էր հեռուստառադիոհեռարձակման բարձրագույն վարչությունում և Կրթության բարձրագույն հանձնաժողովում⁶¹³: 2004 թ., եվրահանձնաժողովի սուր քննադատությունից հետո, ԱԱԽ-ի՝ այդ հաստատությունների ներկայացուցիչները ետ կանչվեցին⁶¹⁴:

2004 թ. ԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնին քաղաքացիական անձի նշանակումն էական առաջընթաց էր ժողովրդավարական չափանիշների հաստատման գործում, զինվորական շր-

⁶¹¹ Տե՛ս՝ 2003 regular report on Turkey,s progress toward EU accession,

http://www.ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2003/rr_tk_final_en.pdf

⁶¹² Տե՛ս՝ Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, Tesev Güvenlik Sektörü Gelişmeleri Dizisi Özel Yayın -2006, s. 34.

⁶¹³ Տե՛ս՝ 2003 regular report on Turkey,s progress toward EU accession.

⁶¹⁴ Տե՛ս՝ Bertil V. Knudsen, նշվ. աշխ., էջ 13:

ջանակների հետ ԱԱԽ և ընդհանրապես քաղաքական ոլորտի փոխհարաբերություններում⁶¹⁵: Նախագահը վարչապետի ներկայացրած թեկնածուների ցուցակից հաստատում է խորհրդի գլխավոր քարտուղարին, ընդ որում՝ նախարարների կաբինետի ղեկավարը կարող է ներկայացնել միայն քաղաքացիական անձանց թեկնածություններ: Դա թույլ է տալիս իրականացնել քարտուղարության և ԱԱԽ-ի գործունեության քաղաքացիական վերահսկողություն: Բացի այդ, զգալիորեն կրճատվեց քարտուղարությունում աշխատող զինվորականների թիվը (294 աշխատակցից զինվորական էին միայն 15-ը)⁶¹⁶: Նախկինում գլխավոր քարտուղարության՝ որպես զինվորական մարմնի, մշտական ապարատը բաղկացած էր 350 գործող և պաշտոնաթող զինվորականներից, ղեկավարում էր ԶՈւ ԳՇ-ի կողմից նշանակվող զինվորական պաշտոնյան: ԱԱԽ «ապառազմականացման» և ժողովրդավարացման ճանապարհին կարևոր քայլ էր դիվանագետների նշանակումը գլխավոր քարտուղարի երկու գլխավոր խորհրդականների պաշտոնին, ինչպես նաև այն փաստը, որ 2005 թ. չերկարացվեցին քարտուղարության 20 զինվորական աշխատակիցների պայմանագրերը, որոնց իրավասությունների ժամկետն այդ ժամանակ արդեն լրացել էր⁶¹⁷:

Ներկայում Թուրքիայի ԱԱԽ-ն կարող է այս կամ այն միջոցառումն ընդունել միայն վարչապետի նախաձեռնությամբ: Նա է համակարգելու խորհրդի աշխատանքը, լուծելու ԱԱԽ-ի և դատական համակարգի առաջադրած խնդիրները: Բացի այդ, վարչապետի օգնականն իրավունք է ստանում հետևել խորհրդի որոշումների իրականացմանը⁶¹⁸: ԱԱԽ-ի և գլխավոր քարտուղարության մասին օրենքի 4-րդ հոդվածում 2003 թ. օգոստոսին մտցված փոփոխու-

⁶¹⁵ Տես՝ Turkey puts civilian over its National Security Council, reduce role, www.worldtribune.com, Dec. 3, 2004

⁶¹⁶ Տես՝ Նույն տեղում:

⁶¹⁷ Տես՝ Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, Tesev Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın -2006, s. 43.

⁶¹⁸ Տես՝ Justus Leicht, Turkey: Reform limits some military powers; <http://www.wsws.org/articles/2003/aug2003/turk-a19.shtml>.

թյուններին համապատասխան՝ վարչապետը կարող է հանձնարարել իր օգնականին նախարարների կաբինետ ներկայացնել ԱԱԽ-ի խորհրդատվական որոշումներն ու կարծիքը, ինչպես նաև կառավարության անունից համակարգել աշխատանքը և հետևել կաբինետի հավանությանն արժանացած որոշումների կատարման ընթացքին⁶¹⁹: Այսպիսով, գործադիր իշխանության գործառույթներ իրականացնող մարմինը, որում գերակշռում էին զինվորականները, դարձավ խորհրդատվական բնույթի կառույց, որը կոչված է խորհրդատվական որոշումներով օգնելու գործադիր իշխանությանը և վարչապետի աշխատակազմին: Ինչպես մամուլի ասուլիսում հայտարարել էր կադրային դիվանագետ, 2004 թ. ԱԱԽ գլխավոր քարտուղարի պաշտոնն ստանձնած առաջին քաղաքացիական անձը՝ Յ. Ալփոդանը, «իրավասությունների փոխանցումն արդեն կատարված է, և խորհուրդը ոչ թե գործադիր, այլ խորհրդատվական մարմին է»: Ըստ նրա՝ Թուրքիայում արդեն որոշված է զինվորական և քաղաքացիական իշխանության կարգավիճակը, ինչը վկայում է այն մասին, որ երկիրը շարժվում է ԵՄ չափանիշներին համապատասխանելու ուղղությամբ, և եթե բարեփոխումները չլինեին, չէր լինի նաև առաջընթաց եվրոպական այդ կազմակերպությանն անդամակցելու ճանապարհին⁶²⁰:

Բարեփոխումների ֆոնին առավել ակնհայտ դարձավ հատկապես կառավարության մասնակցությունը Թուրքիայի Ազգային անվտանգության հայեցակարգի մշակման գործում, որը հաստատվեց 2005 թ. հոկտեմբերի 24-ին: Կառավարությունը հստակորեն ընդգծում էր իր առավելությունը գաղտնի փաստաթղթի մշակման գործում՝ դրանով իսկ հասկացնելով, որ վճռական խոսքը պետք է պատկանի քաղաքացիական իշխանությանը: Սա նույնպես համապատասխանում է ԵՄ՝ երկրի քաղաքական կյանքին զինվորական

⁶¹⁹ Տես՝ Թուրքիայի ԱԱԽ և գլխավոր քարտուղարության մասին օրենքը, <http://www.mgk.gov.tr>

⁶²⁰ Տես՝ Turkey puts civilian over its National Security Council:

շրջանակների դերի սահմանափակման պահանջներին⁶²¹: Մինչ այդ անվտանգության հայեցակարգի մշակումը և հաստատումը զինվորական վերնախավի արտոնությունն էր՝ ԱԱԽ գլխավորությամբ:

ԵՄ-ն, ընդհանուր առմամբ, դրական գնահատական էր տվել այդ բարեփոխումներին, սակայն ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում առաջընթացի վերաբերյալ 2004 թ., ինչպես և նախորդ զեկույցում ընդգծվում էր, որ «զինվորականները, նախկինի պես, ազդեցություն են գործում զանազան ոչ պաշտոնական մեխանիզմների օգնությամբ. իրենց հրապարակային հայտարարություններում և ելույթներում, ինչպես նաև ԶԼՄ-ների միջոցով ԱԱԽ անդամ զինվորականները հայտնում են իրենց տեսակետը սոցիալ-քաղաքական և արտաքին քաղաքական խնդիրների վերաբերյալ»⁶²²:

Միևնույն ժամանակ, 2004 թ. զեկույցում նշվում էր, որ, օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներին զուգահեռ, քաղաքացիական իշխանությունը պետք է գործնականում կատարի վերահսկողական գործառույթներ, հատկապես ազգային անվտանգության ռազմավարության ձևավորման և իրականացման, մասնավորապես՝ հարևան երկրների հետ հարաբերությունների, ինչպես նաև զինվորական բյուջեն վերահսկելու հարցերում⁶²³:

Եվրահանձնաժողովի 2008 թ. զեկույցում Թուրքիան լուրջ քննադատության է ենթարկվել անվտանգության ոլորտի բարեփոխումների անբավարար որակի պատճառով: Անվտանգության ոլորտի հանդեպ քաղաքացիական վերահսկողության հաստատման հարցը դեռ բաց է մնում: Թուրքիայի ԶՈւ-ի բարձրագույն հրամանատարությունը նախկինի պես զգալի դեր էր խաղում քաղաքական գործընթացներում՝ կիրառելով ինչպես պաշտոնական, այնպես էլ ոչ պաշտոնական մեխանիզմներ: Բարձրաստիճան զինվորականները բացահայտ ներկայացնում էին իրենց դիրքորոշումը ներքին և

⁶²¹ Տե՛ս՝ А. Гурьев. Новая концепция национальной безопасности Турции. <http://www.noravank.am>, 2005-11-17.

⁶²² Տե՛ս՝ 2003 regular report on Turkey, s progress toward EU accession, p. 23.

⁶²³ Տե՛ս՝ 2004 regular report on Turkey, s progress toward EU accession, p. 23.

արտաքին քաղաքականության, ինչպես նաև աշխարհիկության, կրոնի դերի, քաղաքական կուսակցությունների և այլ հարցերի վերաբերյալ, որոնք նրանց իրավասության տակ չեն գտնվում⁶²⁴: Անհրաժեշտ փոփոխություններ չէին կատարվել բանակի և ԱԱԽ-ի մասին օրենքներում և դրանք պետք է կատարվեին եվրոպական չափորոշիչներին համապատասխան: Գործող օրենքները ՁՈՒ-ի ներկայացուցիչներին հնարավորություն էին տալիս տարբեր մանևրների ճանապարհով լայն լիազորություններ ստանալ ազգային անվտանգության հարցերում: Առաջխաղացում չկար ժանդարմերիայի վրա քաղաքացիական վերահսկողություն սահմանելու առումով:

Հատկապես անհանգստացնող էին համարվում թուրքական սպայակույտի՝ մամուլի և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հանդեպ վերահսկողություն սահմանելու փորձերը: 2009 թ. հունիսին թուրքական «Taraf» թերթում հրապարակվեց Թուրքիայի ՁՈՒ ԳՇ-ի գաղտնի պլանի մասին նյութ: Հրապարակումը տեղեկացնում էր, որ մշակվել էր երկրի քաղաքական և հասարակական կյանքում զինվորական շրջանակների նախաձեռնություններին վերաբերող գործողությունների պլան: Փաստաթղթի նպատակը համապատասխան հանրային կարծիքի ձևավորումն էր մի շարք հարցերի շուրջ, որոնց հանդեպ թուրքական սպայակույտը խիստ «զգայուն» էր⁶²⁵: Ինչպես նշում էին որոշ թուրքական աղբյուրներ, ԳՇ-ը նույնիսկ «սև ցուցակ» էր կազմել, որտեղ հայտնվել էին երկրում հայտնի մարդիկ, այդ թվում և ներկայիս նախագահ Ա. Գյուլը, Բ. Արընչը, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը ներկայացնող որոշ կազմակերպություններ, լրատվամիջոցներ: Նրանց մեղադրում էին «ԱՄՆ և ԵՄ տարբեր հիմնադրամներից (որոնք ցանկանում են մասնատել Թուրքիան-Լ.Հ.) ֆինանսական

⁶²⁴ Sku` Turkey 2008 Progress Report, http://ec.europa.eu/enlargement/pdf/press_corner/key-documents/reports_nov_2008/turkey_progress_report_en.pdf

⁶²⁵ Sku` İnternet andıcı ve kara propaganda, <http://www.sabah.com.tr/Yazarlar/ilicak/2011/07/22/internet-andici-ve-kara-propaganda>.

միջոցներ ստանալու և երկրի ներսում նրանց պլաններն իրականացնելու մեջ»: Մամուլում հայտնված թուրքական նավատորմի գնդապետ Դ. Չիչեքի ստորագրությամբ և 2009 թ. ապրիլի թվագրությամբ «Հետադիմականության դեմ պայքարի գործողությունների պլան» վերտառությամբ գաղտնի փաստաթուղթը պատրաստվել էր ԳԾ-ի օպերատիվ վարչության 3-րդ տեղեկատվական աջակցության բաժնում՝ ԱԶԿ-ի և հետադիմական շարժումների դեմ հոգեբանական ու տեղեկատվական պատերազմի կազմակերպման նպատակով⁶²⁶:

2013 թ. նոյեմբերին թուրքական «Թարաֆ» պարբերականը բավական ուշագրավ բացահայտում հրապարակեց, ըստ որի՝ դեռևս 2004 թ. օգոստոսին Ա.Ա.Խ-ի նիստում որոշում է կայացվել «Հետադիմականության դեմ պայքարի» մասին, որի թիրախում առաջնահերթորեն Ֆ. Գյուլենի կողմից ղեկավարվող կրոնական նուրջուական կամ այլ կերպ ասած գյուլենական շարժումը, կրոնական կազմակերպություններն էին⁶²⁷: Ընդունված որոշումը նախատեսում էր կոշտ միջոցառումներ ձեռնարկել երկրում հետադիմականության՝ առաջին հերթին գյուլենական շարժման դեմ: Եվ խորհրդի այդ որոշման տակ, ըստ պարբերականի ձեռք բերած փաստաթղթերի, ստորագրել են նաև ԱԶԿ-ական կարևոր դեմքեր, այդ թվում նաև՝ վարչապետ Էրդողանը: Իհարկե, հասկանալի է, որ այդ ժամանակ ԱԶԿ-ն և Էրդողանը, գտնվելով երկրի զինվորականության հետ լուրջ դիմակայության մեջ, չէին կարող ձեռնպահ մնալ նման քայլից: ԱԶԿ-ականներն այս բացահայտման հետ կապված հանդես եկան հայտարարությամբ՝ նշելով, որ այդ որոշումն ամեն կերպ կյանքի չի կոչվել, իրականում կիրառում չի ստացել: Սակայն դրանից հետո էլ նույն պարբերականը նոր բացահայտմամբ հանդես եկավ՝

⁶²⁶ Stü` AKP ve Gülen'i bitirme planı, <http://taraf.com.tr/haber/akp-ve-guleni-bitirme-planı.htm>.

⁶²⁷ Stü` Row between Turkish government and Gülen heats up with new document, <http://www.hurriyetdailynews.com/row-between-turkish-government-and-gulen-heats-up-with-new-document.aspx?pageID=238&nID=58670&NewsCatID=338>.

ներկայացնելով փաստաթղթեր, որ այդ շրջանի կառավարությունը, այդուհանդերձ գործողություններ է իրականացրել: Ժամանակին Թուրքիայի վարչապետի գրասենյակի քարտուղարի պաշտոնում գտնվող Օմեր Դինչերի ստորագրությամբ 2004, 2005, 2006 թ. պատկանող փաստաթղթեր են ի հայտ եկել: Ի դեպ, ԱԱԽ-ի այդ որոշման արդյունքում ձեռնարկվելիք գործողությունների համակարգումը դրվել է վարչապետի գրասենյակի ու դրան կից գործող կառույցների վրա: Եվ պարզվում է, որ այդ ժամանակաշրջանում համապատասխան գերատեսչություններին ու մարմիններին կառավարության աշխատակազմից հանձնարարականներ են իջեցվել: Նույնիսկ որոշ մարմինների կողմից կառավարության աշխատակազմ են ուղարկվել որոշման համապատասխան ձեռնարկված քայլերի վերաբերյալ զեկույցներ⁶²⁸: Փաստորեն, ի հայտ եկած նոր փաստաթղթերով հերքվեց կառավարության այն հայատարարությունը, որ իրականում այդ որոշումը գործնական կիրառություն չի ստացել: Այս բացահայտումներն ու վերջին շրջանում էրդոհան-Գյուլեն դիմակայությունը կարող է էականորեն ազդել ներթուրքական քաղաքական գործընթացների վրա՝ հատկապես 2014 թ. նախագահական ընտրությունների համատեքստում:

Ֆ. Գյուլենը Թուրքիայում բավական լուրջ ազդեցություն ու լծակներ ունի, որով կարող է ազդել ընտրական գործընթացների վրա: Իսկ վերջին շրջանում հենց ԱԶԿ-ի ներսում ինչ-որ խմորումներ կան, որոնք ընտրությունների մոտենալուն պես ավելի ցայտուն կդրսևտրվեն: ԱԶԿ-ի ներսում, նաև վերին օղակներում, Գյուլենի կողմնակիցները նույնպես շատ են, և այդ դիմակայության շարունակումը կարող է անդրադառնալ ներկուսակցական նոր գործընթացների ծավալմանը նախագահական ընտրությունների նախաշեմին և մեծացնել բաժանարար գծերը:

2009 թ. հոկտեմբերին Եվրահանձնաժողովը հրապարակեց հերթական զեկույցը, որը նույնպես անդրադառնում էր Թուրքիայի

⁶²⁸ Ştu` Gülen'i bitirme planında yeni belgeler, <http://sozcu.com.tr/2013/gundem/guleni-bitirme-planında-yeni-belgeler-415907/>.

անվտանգության ոլորտում առկա հիմնախնդիրներին և հետագա բարեփոխումների անհրաժեշտությանը: Ձեկույցի համաձայն՝ թուրքական ՁՈւ բարձրագույն հրամանատարությունը շարունակում էր տարբեր պատրվակներով միջամտել երկրի հասարակական-քաղաքական կյանքին: Այս ամենից գատ, զեկույցում նշվում էր, որ ՁՈւ ներժառայողական ոլորտին վերաբերող օրենքներում այդպես էլ լիարժեք բարեփոխումներ չեն իրականացվել, ինչը խուսանավելու հնարավորություն է տալիս ՁՈւ դեկավարությանը: Առաջընթաց չէր գրանցվել նաև անվտանգության ուժերի, ինչպես նաև ռազմական ծախսերի ու պաշտպանության բյուջեի թափանցիկության ու դրանց քաղաքացիական վերահսկողության սահմանման հարցում⁶²⁹:

Թուրքիայի կառավարության կողմից նախաձեռնված և իրականացվող բարեփոխումները կատարվում էին աստիճանական՝ փորձելով հնարավորին չափ զերծ մնալ զինվորականության դիմակայությունից:

Թուրքիայի անվտանգության ոլորտի բարեփոխումների ու քաղաքացիական վերահսկողության հաստատման ջանքերի շրջանակում ավելի ուշ օրակարգ մտցվեցին կարևոր մի շարք հարցեր: Օրենսդրական դաշտում դեռևս գործում էին փաստաթղթեր, որոնք բանակի հրամանատարությունը լիազորություն էին տալիս անհրաժեշտության դեպքում միջամտել երկրի հասարակական-քաղաքական գործընթացներին: Դրանցից էր «Անվտանգության ու հասարակական կարգի ոլորտում համագործակցության մասին» (Emniyet, Asayiş, Yardımlaşma, EMASYA) արձանագրությունը: Այն ստորագրվել էր 1997 թ. ՁՈՒ-ի ԳԾ-ի և ՆԳՆ-ի միջև, ինչը լիազորում էր ՁՈՒ-ին միջամտել քաղաքական կյանքին և իրականացնել ներքաղաքական հետախուզական գործողություններ⁶³⁰: Նշենք նաև, որ այդ արձա-

⁶²⁹ Stu` Turkey 2009 Progress Report, Brussels, 14.10.2009, p. 10-11, http://www.abgs.gov.tr/files/AB_Iliskileri/Tur_En_Realitons/Progress/turkey_progress_report_2009.pdf

⁶³⁰ Stu` Erdoğan vows to abolish EMASYA protocol, revise security priorities, Today's Zaman, 01.02.2010.

նագրությունն ստորագրվել է 1997 թ. փետրվարի 28-ի հայտնի իրադարձություններից հետո, երբ ՋՈւ-ի բարձրագույն հրամանատարության վերջնագրի արդյունքում հրաժարական տվեց իսլամամետ «Բարօրություն-*Refah*» կուսակցության կառավարությունը՝ վարչապետ Ն. Էրբաքանի գլխավորությամբ: Ի դեպ, այդ արձանագրությունը ստորագրել է ժամանակին Առաջին բանակի հրամանատար Չ. Դոդանը, ով հանդիսանում էր «Balyoz» հեղաշրջման պլանի գործով թիվ մեկ մեղադրյալը⁶³¹:

2010 թ. սկզբներին Թուրքիայի նախագահ Ա. Գյուլն ու վարչապետ Էրդողանը հայտարարեցին անվտանգության ոլորտի նկատմամբ լիարժեք քաղաքացիական վերահսկողության հաստատման անհրաժեշտության մասին՝ նշելով, որ «Անվտանգության ու հասարակական կարգի ոլորտում համագործակցության մասին» գործող արձանագրությունը հնարավորություն է տալիս ՋՈւ-ին ճգնաժամային իրավիճակներում միջամտել հասարակական-քաղաքական կյանքին: Հայտարարությունից ընդամենը մի քանի օր հետո՝ փետրվարի 4-ին, այդ արձանագրությունը չեղյալ հայտարարվեց⁶³²:

Այդ արձանագրության վերացման հետ կապված Թուրքիայի բարձրագույն ղեկավարությունը նախաձեռնությամբ հանդես եկավ այն բանից հետո, երբ թուրքական «Taraf» թերթը 2010 թ. հունվարին հրապարակեց 2003 թ. ծրագրված ռազմական հեղաշրջման պլանի (Balyoz) մասին մանրամասներ⁶³³: «EMASYA» արձանագրության չեղյալ հայտարարումից որոշ ժամանակ անց աղմկահարույց հրապարակում հայտնվեց թուրքական մամուլում, ըստ որի՝ թուրքական բոլոր հրամանատարություններին ու զորամիավորումներին է ուղարկվել գաղտնի մի հրահանգ, որում հայտնվում է, որ զանգվածային ու հասարակական իրադարձություններին միջամտության պլանավորման ու գործողությունների առումով ոչ մի փոփոխու-

⁶³¹ Տե՛ս՝ EMASYA hakkında herşey, Yeni Şafak, 25.01.2010.

⁶³² Տե՛ս՝ EMASYA Protokolü kaldırıldı, Hürriyet, 04.02.2010, Erdoğan vows to abolish EMASYA protocol, revise security priorities, Today's Zaman, 01.02.2010; EMASYA hakkında herşey, Yeni Şafak, 25.01.2010.

⁶³³ Տե՛ս՝ Darbenin adı Balyoz, Taraf, 20.01.2010

թյուն չի կատարվել արձանագրության վերացմամբ, և զինվորականությունը իր այդ պարտականությունները շարունակելու է գործադրել նահանգային կառավարման մասին օրենքի ու ԶՈւ-ի ԳՇ-ի հրամանների համաձայն⁶³⁴։ Իր հարցազրույցներից մեկում ԳՇ պետ Ի. Բաշբուղն իրենց (զինվորականության) համար ոչ էական էր համարել այդ արձանագրության վերացումը՝ փաստելով, որ զինվորականության համար դեռևս առկա են նման միջատության լիազորություններ։ Մա ևս մեկ անգամ փաստում է, որ բանակի հրամանատարության ու քաղաքացիական իշխանությունների միջև սկսված դիմակայության պայմաններում զինվորականությունը հեշտությամբ չի ցանկանում վայր դնել իր ունեցած լայն լիազորությունները և ետ դառնալ դեպի գորանոցներ։

Հասարակական գործընթացներում զինվորականության դերի սահմանափակման և կրթական համակարգում զինվորականության մշակած ծրագրերի վերափոխման տեսանկյունից կարևոր քայլ էր միջնակարգ ուսումնական հաստատություններում դասավանդվող «Ազգային անվտանգություն» առարկայի չեղյալ հայտարարումը։ 2012 թ. կառավարության և վարչապետ Էրդողանի նախաձեռնությամբ դադարեցվեց դեռևս 1979 թ. ԳՇ-ի կողմից մշակված «Ազգային անվտանգություն» առարկայի դասավանդման կանոնադրությունը⁶³⁵։ Այդ առարկան դասավանդվում էր զինվորականների կողմից և ունկնդիրներին հրամցվում հասարակական-քաղաքական կարևոր հիմնախնդիրների նկատմամբ զինվորականության մոտեցումները, քեմալիզմի գաղափարախոսությունը։ Պատահական չէ, որ այն համարվում էր դպրոցներում միլիտարիզմի պատճառ⁶³⁶։

Թուրքիայի առաջընթացի վերաբերյալ Եվրահանձնաժողովի 2012 թ. զեկույցում նշվում էր, որ ընդհանուր առմամբ ԶՈւ-ի ԳՇ-ը

⁶³⁴ Sbu` Askerden şok EMASYA kararı, Bugün, 16.04.2010.

⁶³⁵ Sbu` Milli Güvenlik dersi kaldırılıyor, <http://haber.mynet.com/guncel/milli-guvenlik-dersi-kaldiriliyor-612718-1>.

⁶³⁶ Sbu` Milli Güvenlik Dersi Kalkınca Okullarda Militarizm Bitti mi?, <http://www.bianet.org/bianet/genclik/135729-milli-guvenlik-dersi-kalkinca-okullarda-militarizm-bitti-mi>.

ձեռնպահ է մնացել երկրի քաղաքական հիմնախնդիրների նկատմամբ ուղղակի և անուղղակի միջամտություններից ու ճնշումներից: Չնչին առաջընթաց է գրանցվել նաև անվտանգության մարմինների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ամրապնդման ուղղությամբ և խորհրդանշական քայլեր իրականացվել բանակ-քաղաքացիական իշխանություններ հարաբերությունների ժողովրդավարացման հարցում⁶³⁷:

Չնայած անվտանգության ոլորտում իրականացված բարեփոխումներին, որոնցում ամենաեականը ԱԱԽ-ի քաղաքացիականացումն էր, ԱԶԿ կառավարությունը երկար ժամանակ խուսափում էր դեռևս բանակին քաղաքական միջամտության օրենսդրական հնարավորությունն ապահովող «Թուրքիայի զինված ուժերի ներքին ծառայության մասին» օրենքի փոփոխություններից: Դեռևս 2010 թ. այդ օրենքի փոփոխությունների մասին հարց էր բարձրացրել քրդամետ «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունը, հետագայում նաև՝ հիմնական ընդդիմադիր «Ժողովրդահնարապետական» կուսակցությունը: Եվ միայն 2013 թ. հունիսին կառավարության նախաձեռնությամբ խորհրդարանի օրակարգ մտցվեց «Թուրքիայի Չինված ուժերի ներքին ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը⁶³⁸:

1961 թ. հունվարին «Թուրքիայի զինված ուժերի ներքին ծառայության մասին» օրենքի ընդունմամբ, փաստորեն, ամրագրվեց երկրի քաղաքական կյանքին բանակի միջամտության դրույթը, որի 35-րդ հոդվածը հնարավորություն էր տալիս երկրի զինված ուժերին միջամտելու քաղաքական գործընթացներին: Դեռևս 1935 թ. ընդունված «Բանակի ներքին ծառայության օրենքի» մեջ նման հոդված կար և այն որոշ փոփոխություններով ուղղակի կրկնվեց 1961 թ. օրենքում: 1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջման ժամանակ հղում

⁶³⁷ Stu` Turkey: 2012 progress report, http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2012/package/tr_rapport_2012_en.pdf.

⁶³⁸ Stu` Askerlik tanımı ve 35. madde değişikliği, <http://www.hurriyet.com.tr/gundem/23597523.asp>.

էր կատարվում 1935 թ. ընդունված օրենքի 34-րդ հոդվածին, իսկ 1971 թ. մարտի 12-ի ռազմական հեղաշրջման հուշագիրը նույնպես հիմնվում էր 1961 թ. օրենքի 35-րդ հոդվածի վրա: 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման վերաբերյալ ԱԱԽ-ի հայտարարության մեջ ուղղակի հղում էր արվում նույն այդ 35-րդ հոդվածին⁶³⁹: 1961 թ. ընդունված օրենքի 35-րդ հոդվածը սահմանում է, որ «Թուրքիայի զինված ուժերի պարտականությունն է՝ հայրենիքը և սահմանադրությամբ հիմնված Թուրքիայի հանրապետության պահպանությունն ու պաշտպանությունը»⁶⁴⁰: Փոփոխությունների նախագծով այդ հոդվածը վերախմբագրվում է հետևյալ կերպ. «Զինված ուժերի պարտականությունը արտաքին մարտահրավերներից ու սպառնալիքներից հայրենիքի պաշտպանությունը, ռազմական ուժի պաշտպանունակության ու հզորացման միջոցով զսպման ապահովումը, ԹԱՄԺ-ի որոշմամբ արտերկրում գործողությունների իրականացումը և միջազգային խաղաղության ապահովմանը մասնակցությունը»⁶⁴¹: Փոփոխությունների նախագծում հստակ ամրագրվում է նաև, որ զինված ուժերի ներկայացուցիչները չեն կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ: 2013 թ. հուլիսի 13-ին ԹԱՄԺ-ի նիստում ընդունվեց օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը⁶⁴²:

Թուրքիայի առաջընթացի վերաբերյալ Եվրահանձնաժողովի 2013 թ. զեկույցն, ընդհանուր առմամբ, դրական էր գնահատել անվտանգության մարմինների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սահմանման ուղղությամբ իրականացված քայլերը՝ նշելով, որ բանակ-քաղաքականություն փոխհարաբերությունների վերափոխումը ներկայում քաղաքացիական իշխանությունների

⁶³⁹ Տես՝ ԹԱՄԺ պաշտ. կայք, <http://www2.tbmm.gov.tr/d24/2/2-0064.pdf>:

⁶⁴⁰ Տես՝ TÜRK SİLAHLI KUVVETLERİ İÇ HİZMET KANUNU, <http://kanunlar.biz/kanunlar/1044.html>.

⁶⁴¹ Տես՝ Askerlik tanımı ve 35. madde değişiyor, <http://www.hurriyet.com.tr/gundem/23597523.asp>.

⁶⁴² Տես՝ TSK 35. madde değiştirildi, <http://www.hurriyet.com.tr/gundem/23718265.asp>, 13.07.2013.

օգտին է: Զեկույցում նշվում է, որ ԶՈՒ ԳՇ-ը ձեռնպահ է մնացել երկրի քաղաքական գործընթացներին միջամտելուց: Սակայն դեռևս օրենսդրական դաշտում բարեփոխումները պետք է շարունակվեն և քայլեր ձեռնարկվեն ռազմական արդարադատության ու այլ ոլորտներում քաղաքացիական վերահսկողությունն ամրապնդելու ուղղությամբ՝ մասնավորապես անբավարար համարելով Ժանդարմերիայի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մակարդակը⁶⁴³:

Բանակ-քաղաքականություն փոխհարաբերությունների շուրջ

Զնայած ԱԱԽ-ին վերաբերող օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներին, թուրքական զինվորական վերնախավը շարունակում էր իր ազդեցությունը որոշակիորեն պահպանել քաղաքական գործընթացների նկատմամբ: ԵՄ-ը դրական էր գնահատում արված աշխատանքը, այնուամենայնիվ, հատուկ նշանակություն էր տալիս մտցված փոփոխությունների գործնական կիրառմանը, բանակի և քաղաքացիական իշխանությունների հարաբերությունների կարգավորմանը և դրանց ժողովրդավարական բնույթ հաղորդելուն:

Ներքին և արտաքին քաղաքականության որոշման, տարածաշրջանային խնդիրներում երկրի դիրքորոշումների որոշակիացման հետ կապված հարցերն ավանդաբար գտնվել են ոչ թե քաղաքացիական, այլ զինվորական վերնախավի իրավասության ներքո: Եվ մի շարք խնդիրների առկայությունը, որոնք սպայակույտը դիտարկում էր որպես սպառնալիք Թուրքիայի համար, թույլ չէր տալիս նրան թողնել թուրքական քաղաքականության առաջավոր գիծը և «ստվերի» տակ անցնել: Բացի այդ, իսլամամետ ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո քաղաքացիական և զինվորական

⁶⁴³ Stu` Turkey 2013 Progress Report, Brussels, 16.10.2013, http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2013/package/tr_rapport_2013.pdf.

վերնախավերի միջև բավական լարված հարաբերություններ էին հաստատվել, ինչի մասին կարող են վկայել բազմիցս հնչեցված մեղադրանքներն Էրդոդանի կառավարության հասցեին՝ երկրում հետադիմական տրամադրությունների աճի առումով, ինչպես նաև զգոն լինելու նախազգուշացումներն ու հորդորները:

Այսպես, 2006 թ. Թուրքիայի ԶՈւ ԳՇ պետ Յաշար Բյուլքանը իր հանդես եկավ կոշտ և կտրուկ հայտարարությամբ և նախազգուշացրեց երկրում զլուխ բարձրացնող հետադիմության և դրան ամեն գնով խոչընդոտելու անհրաժեշտության մասին⁶⁴⁴ : Սպայակույտի ներկայացուցիչները և հատկապես ԶՈւ ԳՇ պետը խիստ կտրուկ արձագանքեցին քաղաքական գործընթացներին զինվորականների միջամտության մասին ԵՄ-ից արված հայտարարություններին: Նրանք ընդգծում էին, որ պաշտպանում են ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությանն ուղղված ջանքերը, սակայն բանակը պետք է վճռական ձայնի իրավունք ունենա ազգային անվտանգության և պետության աշխարհիկ կարգի պահպանման հարցերում: Թուրքիայի «Ազգային անվտանգության մասին քաղաքական փաստաթղթում» սպայակույտն ամրագրեց թեզիսն այն մասին, որ կարվի ամեն ինչ երկրում հետադիմական տրամադրությունների աճը կանխելու համար⁶⁴⁵: Բարձրագույն սպայակազմի այսօրինակ հայտարարությունները ԵՄ-ը գնահատեց որպես զինվորական շրջանակների ուղղակի միջամտություն քաղաքական կյանքին: Թուրքական սպայակույտի արձագանքն ավելի քան կտրուկ էր: Թուրքիայի ՌԾՈւ-ի հրամանատար Եներ Քարահանօղլուն, 2006 թ. հոկտեմբերին Էլույթ ունենալով Թուրքիայի ռազմական դպրոցում, հայտարարեց, որ «թուրքական զինված ուժերը, որոնք հատուկ դեր են խաղում երկրի արդիականացման գործում, երբեք չեն զիջի ԵՄ-ին»: Նա նշեց նաև, որ բանակը ոչ մի կերպ չի հրաժարվի այդ դերից

⁶⁴⁴ Տե՛ս՝ Տե՛ս՝ <http://www.aa.com.tr>, 02.10.2006:

⁶⁴⁵ Տե՛ս՝ Turkish army rejects EU criticism of political meddling, <http://www.turkishpress.com>, 02.10.2006:

հանուն այն բանի, որ Թուրքիան մտնի ԵՄ⁶⁴⁶: Որոշ հեղինակավոր լրատվամիջոցներ զինվորականների նման հայտարարությունները ԵՄ-ին Թուրքիայի կողմից նետված մարտահրավեր անվանեցին և նշեցին, որ սպայակույտի միջամտությունը քաղաքական գործերին բացասաբար կանդրադառնա եվրոպական համայնքին անդամակցելուն ուղղված թուրքական կողմի ջանքերի վրա⁶⁴⁷:

Թուրքական բանակը ուղղակիորեն միջամտեց քաղաքական գործընթացներին հատկապես 2007 թ. նախագահական ընտրությունների կապակցությամբ: Ապրիլի 12-ին՝ նախագահական ընտրություններից առաջ, Թուրքիայի ԶՈւ ԳՇ պետ Յ. Բյույուքանը իր հանդես եկավ կոշտ հայտարարությամբ՝ նշելով, որ «հույս ունի նախագահական ընտրություններում Թուրքիայի հիմնական արժեքներին, պետության ունիտար կառուցվածքին ու աշխարհիկ-ժողովրդավար պետությանը ելությամբ, այլ ոչ խոսքով կապված նախագահի ընտրությանը»⁶⁴⁸: Սա, փաստորեն, նախագահի թեկնածու, ԱԶԿ-ական Աբդուլլահ Գյուլի դեմ զինվորականության դիրքորոշումն էր, որով ուղղակիորեն միջամտություն էր իրականացվում քաղաքական գործընթացներին:

Ըստ էության, անվտանգության և բանակի ու քաղաքացիական իշխանության հարաբերությունների ոլորտներում ձեռնարկված փոփոխությունները, ավելի կամ պակաս չափով դրանց համապատասխանեցումը ԵՄ չափանիշներին լիովին չվերացրեցին զինվորականների ազդեցությունը քաղաքական գործընթացներում:

Զինվորականության և քաղաքացիական իշխանության փոխհարաբերություններում որոշակի երկվորություն էր նկատվում: Թուրքական սպայակույտը քեմալականության գաղափարակիրն է, որի համաձայն՝ Թուրքիայի՝ որպես արևմտյան տիպի աշխարհիկ պետության, տեղը Եվրոպայում է: Այս առումով ԵՄ-ին երկրի անդա-

⁶⁴⁶ Säu` Turkish General Challenged the EU; <http://www.turkishweekley.net>, 03.10.2006:

⁶⁴⁷ Säu` <http://www.ankaajansi.com>, 28.09.2006; <http://www.turkishweekley.net>, 30.09.2006:

⁶⁴⁸ Säu` Büyükanıt'tan cumhurbaşkanı tarifi, <http://arsiv.ntvmsnbc.com/news/405388.asp>:

մակցության գործընթացը լրիվ տեղավորվում է քեմալական գաղափարախոսության շրջանակներում: Թուրք զինվորականները հիանալի հասկանում էին, որ այդ պարագայում կպակասեցվեն բանակի իրավասությունները: Սակայն բանն այն է, որ զինվորական վերահսակվր մեծ կասկածանքով էր վերաբերում ներկայիս իշխանություններին և չէր ցանկանում թողնել քաղաքական ասպարեզը, հատկապես այն պայմաններում, երբ երկրում սուր է դրված քրդական հարցը, տարածաշրջանում կարող են տեղի ունենալ անկանխատեսելի իրադարձություններ, որոնք կշոշափեն Թուրքիայի ազգային անվտանգության շահերը:

2009 թ. ապրիլին ելույթ ունենալով Ստամբուլի ռազմական ակադեմիայում՝ Թուրքիայի ՁՈւ ԳՇ պետ Ի. Բաշբուլը հիմնական շեշտադրումները կատարեց այն հարցերի վրա, որոնք առնչվում էին բանակի ու քաղաքականություն հարաբերություններին, ահաբեկչության դեմ պայքարին, ինչպես նաև երկրի աշխարհիկ կարգերին: Նա, մասնավորապես, նշեց, որ կառավարությունը պետք է լսի բանակի խորհուրդները և հաշվի նստի նրա հետ, հակառակ պարագայում քաղաքական գործիչները պատասխանատվություն կկրեն անհաջողությունների համար⁶⁴⁹: Բարձրաստիճան զինվորականը հերթական անգամ հասկացրեց, որ բանակի բարձրագույն հրամանատարությունն ուշադիր հետևում է ներքաղաքական գործընթացներին, և կառավարությունը պետք է հաշվի առնի դա: Թեև Թուրքիայում բարեփոխումներ էին իրականացվել, դրանք, այնուամենայնիվ, դեռ լիարժեք չէին ապահովում անվտանգության մարմինների և ՁՈՒ-ի հանդեպ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ստեղծումը, և զինվորական շրջանակները, ինչպես և առաջ, միջամտում են երկրի հասարակական-քաղաքական կյանքին:

Ընդհանուր առմամբ, իշխող ԱԶԿ-ի կառավարման տարիներին անվտանգության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սահմանման ուղղությամբ բավականին լուրջ քայլեր

⁶⁴⁹ Stü` Başbuğ`dan çok kritik açıklamalar, <http://www.haber3.com>, 14.04.2009:

իրականացվեցին, որոնք աննախադեպ էին հանրապետական Թուրքիայի ողջ պատմության մեջ: Նույնիսկ ոչ վաղ անցյալում հնարավոր չէր պատկերացնել, որ ինչ-որ կերպ այն էլ իսլամամետ ուղղվածության քաղաքական որևէ մի կուսակցություն կարող է այդպես ամուր պահել իշխանությունն իր ձեռքում և աստիճանաբար հաշվեհարդար տեսնել բարձրագույն սպայակազմի նկատմամբ: Թե ինչով կավարտվեր Թուրքիայում զինվորականության հասցեին կամ քեմալիզմի գաղափարախոսության ու արժեքային համակարգի դեմ արված որևէ հայտարարություն և առավել ևս բարձրաստիճան զինվորականի ձերբակալության նույնիսկ մի փորձ իշխանությունների կողմից, հայտնի է ոչ վաղ անցյալից, երբ 1998 թ. Էրդոդանը իր իսկ կրոնամուլ հայտարարությունների համար պետանվտանգության դատարանի կողմից դատապարտվեց և 4 ամիս պատիժ կրեց բանտում:

Թուրքիայում երկար ժամանակ շարունակվում էր երկու բևեռների միջև դիմակայությունը, ինչը նաև երկու տարբեր արժեքային համակարգերի բախման հետևանք էր և թե ինչով կավարտվեր դա, դժվար է ասել, սակայն բարձրագույն զինվորականությունն էլ էր հասկանում, որ փոխակերպվող աշխարհում և դեպի եվրոպական արժեքային համակարգ ձգտող Թուրքիայում աստիճանաբար իր դիրքերը պետք է վերանայվեն:

ԱԱԽ-ի բարեփոխումների շրջանակում նվազագույնի է հասցվել զինվորականության դերակատարությունն այդ մարմնում, ինչի մասին արդեն իսկ հստակ նշում են թուրք վերլուծաբաններն ու մամուլը: Սակայն իրականում դեռևս ներքին անվտանգության բնագավառում լուրջ դիրքեր ունեն ՋՈւ-ը, ինչը հնարավորություն է տալիս նաև որոշ առումներով ազդեցություն ունենալ ներքաղաքական հարցերում⁶⁵⁰: ԱԱԽ-ի հետ կապված բարեփոխումներից հետո ներկայում օրակարգային խնդիր է ողջ ռազմական-անվտանգու-

⁶⁵⁰ Sten L. Sariibrahimoğlu, Central role of Turkey's National Security Council fades away, Today's Zaman, 01.12.2008; L. Sariibrahimoğlu, Turkish Almanac Promotes Security Sector Reform, Eurasia Daily Monitor Volume: 6 Issue: 137, July 17, 2009:

թյան համակարգի բարեփոխումների իրականացումը, որով նախատեսվում է մեծացնել քաղաքացիական վերահսկողությունը՝ ներքին անվտանգության մարմինների ու ծառայությունների, ռազմական բյուջեի ու ծախսերի թափանցիկություն և վերահսկելիություն, ռազմական դատական համակարգի վերափոխումներ, բարձրաստիճան զինվորականների պատասխանատվության նոր մեխանիզմներ և այլն: Այս ամենը լայնամասշտաբ բարեփոխումների մի փաթեթ է, ինչը նախատեսում է հաստատել ժողովրդավարական վերահսկման մեխանիզմներ անվտանգային-ռազմական համակարգի նկատմամբ և երկրի ներսում ձևավորել հավասարակշռություն անվտանգության ու ժողովրդավարության միջև⁶⁵¹:

ԱԶԿ-ի կառավարման ավելի քան 10 տարիների ընթացքում հաջողվեց անվտանգության ոլորտում իրականացնել բարեփոխումներ, որոնք, փաստորեն, հաստատեցին քաղաքացիական իշխանությունների վերահսկողական մեխանիզմները անվտանգության համակարգում: Օրենսդրական ու ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքում Ռ. Թ. Էրդողանի կառավարությանը հաջողվեց Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ աննախադեպ քայլեր իրականացնել, որով բանակին զրկեց երկրի քաղաքական կյանքում ունեցած լուրջ դերակատարությունից, դրանով հանդերձ ապահովելով իր՝ որպես քաղաքական ուժի, անվտանգությունը հավանական «ռազմական միջամտություններից»: Հարկ է նշել, որ բանակի լիազորությունների նվազեցման և քաղաքական գործընթացներին միջամտելու բանակի հրամանատարության հնարավորությունների սահմանափակումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ բանակն այլևս միատարր չէ և հրամանատարությունը նախկինի պես չի կարող լիարժեքորեն հենվել դրա վրա: Նախկին ժամանակների արժեքային բաղադրիչով միատարր համարվող բանակը, որը քեմալիզմի գաղափարախոսության կրողն ու պահապանն էր, ներկայում կորցրել է այդ միատարրությունը: Ան-

⁶⁵¹ Şku` A. Davutoğlu, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, Insight Turkey, Vol. 10, No. 1, 2008, pp. 77-96.

կարայում ԱՄՆ դեսպանության գաղտնի դիվանագիտական հեռագրերում, որոնք քննության էին առել 2003 թ. թուրքական բարձրագույն սպայակազմում տիրող իրավիճակն ու կողմնորոշումները, նշվում էր, որ Թուրքիայի բարձրագույն սպայակազմն ու ԳՇ-ը գաղափարական-արժեքային, աշխարհայացքային, աշխարհաքաղաքական կողմնորոշումներով միատարր չեն: Ավելին՝ թուրքական ԳՇ-ում առկա է երեք հակամարտող խումբ: Առաջին խումբը ներկայացնում էին այսպես կոչված «ատլանտիստները», որոնք պաշտպանում են Թուրքիայի սերտ ռազմաքաղաքական դաշնակցության շարունակականությունն ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի հետ: Երկրորդ խմբում համախմբված են «ազգայնականները», որոնք հարցականի տակ են դնում ԱՄՆ-ի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների անհրաժեշտությունը, բավական անվստահաբար են մոտենում արտաքին աշխարհին ու ամենքին և պնդում են քեմալիզմի համակարգի պահպանության անհրաժեշտությունը: Մյուս խմբավորումը պայմանականորեն կարելի է կոչել «եվրասիականներ», որոնք թեն ընդհանուր գծերով ավելի մոտ են «ազգայնականներին» և համարվում են սպայակույտի ներսում ժամանակավոր դաշնակիցներ, Թուրքիայի համար արտաքին քաղաքականության ոլորտում առաջարկում են նոր այլընտրանքային դաշնակցություն Ռուսաստանի, Իրանի ու Չինաստանի հետ⁶⁵²: Ինչպես նշել է թուրքագետ Ռ. Մաֆրաստյանը՝ ներկայում բանակի բարձրագույն սպայակույտը միատարր չէ, ինչպես 10-20 տարի առաջ էր, և միջին աստիճանի սպաները կարող են չհնազանդվել գեներալներին, քանի որ նրանց թվում շատ են նաև ներկայիս իշխանության կողմնակիցները: Թուրքական բանակը միշտ զտվել է այլախոհներից, իսլամիստներից, սակայն

⁶⁵² 2011 թ. թուրքական «Taraf» թերթը հրապարակեց «Wikileaks»-ի՝ 2003 թ. Թուրքիային վերաբերող ամերիկյան արտաքին գերատեսչության դիվանագիտական գաղտնի փաստաթղթերից, որտեղ քննության էին առնվել թուրքական բանակին առնչվող մի շարք հարցեր: Տես՝ Genelkurmay'ı üye ayırmışlar!,

<http://www.haberturk.com/gundem/haber/615002-genelkurmayi-uce-ayirmislar>, 28.03.2011:

վերջին շրջանում նման գտում տեղի չի ունենում⁶⁵³: Մինչև վերջին տարիները ամեն տարի Թուրքիայի Բարձրագույն ռազմական խորհրդի նիստերում որոշում էր կայացվում բանակից հեռացնել տասնյակ սպաների՝ կրոնական հայացքների պատճառով: 2012 թ. ԹԱՄԺ-ի Հեղաշրջումների ու հուշագրերի ուսումնասիրման հանձնաժողովի պատրաստած զեկույցի համաձայն՝ 1990-2011 թթ. ընթացքում ՋՌԻ-ից կրոնական, հետադիմական հայացքների պատճառով բանակից հեռացվել է 1043 զինվորական՝ սպաներ և ենթասպաներ⁶⁵⁴:

Իսլամամետ ուժ հանդիսացող ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո առաջնահերթ խնդիր էր դիտվում այդ երկրի հետագա քաղաքական գործընթացները, քանի որ փետրվարի 28-ից ոչ այնքան երկար ժամանակ հետո իշխանության եկած ուժն ուղղակի առերեսվելու էր զինվորականության գործադրած կոշտ միջոցներին: Բանակ-քաղաքականություն փոխհարաբերությունների տեսանկյունից խնդրահարույց էին նոր քաղաքացիական իշխանության ու բանակի հրամանատարության հարաբերությունների հետագա միտումները, քանի որ բանակի համար այդ ուժը չէր կարող վստահելի լինել: Եվ իրականում բանակի հրամանատարության ու ԱԶԿ-ի միջև ձևավորվեցին լարված հարաբերություններ, իսկ նման պարագայում ԱԶԿ-ի գործիչները չէին կարող անտեսել այդ հարցը, քանի որ այն ուղղակի վերաբերելու էր հենց այդ քաղաքական ուժի գոյության ու կենսունակության խնդրին: Պատահական չէր այն, որ ԱԶԿ-ն իշխանության հենց սկզբից ձեռնամուխ եղավ բանակ-քաղաքականություն փոխհարաբերությունների օրենսդրական դաշտի վերանայմանը: Իրականում, սակայն ԱԶԿ-ն ուղղակի դիմակայության մեջ չմտավ զինվորականության կամ զինվորականության պաշտ-

⁶⁵³ Տես՝ Սաֆրաստյան. «Նախընտրական Թուրքիայում հայերի նկատմամբ կուժեղանան ճնշումները ոչ միայն պետության, այլև ազգայնական կազմակերպությունների, զինված խմբավորումների կողմից», <http://haynews.am/hy/archive-8434>:

⁶⁵⁴ Տես՝ 11 yilda 1043 asker 'irtica'dan atildi, <http://www.sabah.com.tr/Gundem/2012/12/01/11-yilda-1043-asker-irticadan-atildi>.

պանության տակ գտնվող արժեքային տարրերի հետ: Այս առումով, ինչպես նշում են որոշ հետազոտողներ, ԱԶԿ-ի համար հիմնարար էր ԵՄ-ին անդամակցության գործընթացի առաջնահերթության ապահովումը: Ինչպես նշում է թուրք հետազոտող Փ. Բիլգինը՝ ԵՄ-ն ԱԶԿ-ի ներքին քաղաքականության մեջ կիրառվող ռազմավարություն էր⁶⁵⁵: ԵՄ անդամակցության արտաքին քաղաքական գերակայությամբ ԱԶԿ-ն որոշակիորեն չեզոքացրեց զինվորականության հնարավոր դիմակայությունը, քանի որ հենց թուրքական զինվորականությունն է եղել կանգնած Թուրքիայի արևմտականացման ու արդիականացման քեմալական տեսլականի պաշտպանության ու երաշխավորի դիրքերում: ԵՄ անդամակցության գործընթացով պայմանավորված ԱԶԿ-ի բանակ-քաղաքականություն փոխհարաբերությունների ոլորտում իրականացրած բարեփոխումներով առաջին հերթին ապահովագրեց իր՝ որպես իսլամամետ քաղաքական ուժի հետագա կենսունակությունն ու նվազեցրեց բանակի հնարավոր վտանգավր դիմակայությունը: Փաստորեն, ԵՄ-ի անդամակցության գործընթացն ԱԶԿ-ի իշխանության սկզբնական շրջանում սեփական միավորի անվտանգության ապահովման հիմնարար երաշխիք էր, ինչը հնարավորություն տվեց բանակին որոշակիորեն մեկուսացնելու քաղաքական գործընթացներից և Թուրքիայի քաղաքական համակարգում կարծրատիպային համարվող քեմալիզմի արժեհամակարգի աստիճանական փոխակերպմանը⁶⁵⁶:

⁶⁵⁵ Şku` Ali Balcı, 1990 sonrası Türk Dış Politikası Üzerine Bazı Notlar: Avrupa Birliği ve Kıbrıs Örneği, Türkiye'nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010, s. 94.

⁶⁵⁶ Şku` Նույն տեղում, էջ 96-97:

4.3. Ազգային հետախուզական կազմակերպության «քաղաքացիականացման» և բարեփոխումների գործընթացը

Թուրքիայի անվտանգության համակարգում իրականացված և դեռևս իրականացվող բարեփոխումների խնդիրն առավելապես վերաբերում է անվտանգության համակարգի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սահմանմանն ու դրա նկատմամբ զինվորականների՝ նախկինում ունեցած մեծ ազդեցության նվազեցմանը: Այս համատեքստում հատուկ ծառայությունների ոլորտում ձեռնարկվող արդիականացման գործընթացը պայմանավորված է դրանց գործունեության արդյունավետության բարձրացման ու ներպետական միջգերատեսչական համակարգման հանգամանքով:

Դիտարկելով հետախուզական, հատուկ ծառայությունների կարգավիճակն ու անվտանգության համակարգում դրանց դերը, ակնհայտ է դառնում, որ դեռևս Թուրքիայի Հանրապետության սկզբնական տարիներին նման կառույցների վերահսկողության ու կառավարչական պատկանելիության խնդիրը քննարկումների, միջգերատեսչական ինտրիզների ու սուր հակամարտությունների առիթ է եղել: 1920-ական թթ. սկզբին Մուստաֆա Քեմալի հանձնարարությամբ միմյանց հետևից ստեղծվեցին մի քանի հատուկ ծառայության կազմակերպություններ, որոնք հիմնականում գտնվում էին զինվորականների վերահսկողության ներքո և չէին կրում կենտրոնացված ու համակարգված բնույթ: Դրանց մի մասը գործում էր առանձին հատուկ հանձնարարությունների ուղղությամբ: Նման խմբերի գործունեությունը չէր տալիս սպասված արդյունքը և դրանք կարճ ժամանակ անց վերացվում էին: Անկարայի կառավարությունը խնդիր դրեց ստեղծել կենտրոնացված մի հետախուզական մարմին՝ աշխատանքներն արդյունավետ ու համակարգված կազմակերպելու համար: Մ. Քեմալը գեներալ Ֆելվի Չաքմաքի առջև բարձրացրեց անհապաղ ռազմական հետախուզության մարմնի ստեղծման անհրաժեշտությունը և 1920 թ. փետրվարին ստեղծվեց «P» անվանմամբ

հայտնի «Ռազմական ոստիկանության կազմակերպությունը» (*Askeri Polis Teşkilatı*), որի ներքին գործունեությունը լուրջ դժգոհություն է առաջացնում տարբեր շրջանակներում, և 1921 թ. ապրիլին դա էլ է վերացվում: Դրա փոխարեն ստեղծվում է Հետախուզության հանձնաժողովը (*Tetkik Heyeti Amirlikleri*), որը սակայն անարդյունավետ գործելու պատճառով մեկ տարի անց Մ. Քեմալի հանձնարարությամբ լուծարվում է⁶⁵⁷:

Հարկ է նշել, որ 1920-ական թթ. ընթացքում հիմնված հատուկ ծառայությունների կադրային բազան զգալիորեն համալրված էր դեռևս երիտթուրքերի կողմից ստեղծված «Հատուկ կազմակերպության» (*Teşkilat-ı Mahsusa*) աշխատակիցներով ու ծառայողներով⁶⁵⁸: 1919 թ. իթթիհաթական գործիչներ Քարա Վասըֆի և Քարա Քեմալի կողմից նախկին «Հատուկ կազմակերպության» ծառայողների ու աշխատակիցների ներգրավմամբ Ստամբուլում ստեղծվում է «Karakol» անունը կրող գաղտնի ծառայությունը, որը սկզբնապես կոչված էր հավաքագրելու և պաշտպանելու իթթիհաթականներին: Կազմակերպությունն աչքի է ընկել նաև արևելյան շրջաններում՝ հատկապես սևծովյան տարածքներում հույների ու հայերի դեմ իրականացրած դիվերսիոն-հետախուզական գործունեությամբ: Սկզբնական շրջանում Մ. Քեմալի վերաբերմունքը դրական էր այդ կառույցի նկատմամբ, սակայն ավելի ուշ, վտանգ զգալով իթթիհաթականների դիրքերի ուժեղացումից, այդ կառույցը լուծարվում է⁶⁵⁹:

⁶⁵⁷ Stü` Şimşek E., Bahar I., Türkiye’de Istihbaratçılık ve MIT, Kum Saati Yayıncılık, İstanbul, 2004. s. 195-198.

⁶⁵⁸ «Հատուկ կազմակերպությունը» ստեղծվել է 1914 թ.՝ երիտթուրքերի կառավարման շրջանում: Այն հիմնվել է ռազմական նախարար Էնվերի կարգադրությամբ ու գործել ռազմական նախարարությանը կից: Դրա ստեղծման տարեթվի հետ կապված պատմագիտության մեջ կան տարբեր վարկածներ: Ավելի մանրամասն տես՝ Philip Hendrick Stoddard, Teşkilat-I Mahsusa, Osmanlı Devleti ve Araplar 1911-1918: Teşkilat-I Mahsusa Üzerine Bir Ön Çalışma, İstanbul, Arma yayımları 2003, s. 11, 54:

⁶⁵⁹ Կան տեղեկություններ, որ այդ կառույցը ներգրավված է եղել Մ. Քեմալի դեմ մահափորձի կազմակերպման մեջ: Մ. Քեմալը ազգայնական շարժման սկզբնական շրջանում զգալիորեն օգտվել է «Karakol»-ի ծառայություններից և շփման մեջ է եղել նաև իթթիհաթական գործիչների հետ, իսկ ավելի ուշ՝ փորձել մեկուսացնել նրանց դերն ու ներգրավվածությունը: Ավելի մանրամասն տես՝ Emine Kısıklı, Milli mücadele

1921 թ. Ս. Քեմալի հանձնարարությամբ գեներալ Ֆելվի Չաքմաքը ձեռնամուխ է լինում հետախուզական նոր կառույցի ստեղծմանը, որն էլ կարճ ժամանակ անց սկսում է պաշտոնապես գործել: «Զինված ազգային պաշտպանության խումբ» (թուրք. *Silahlı Milli Savunma Grubu*) անունը կրող այդ կազմակերպությունը 1923 թ. լուծարվում է: Դրանից հետո ստեղծված հետախուզական «Ֆելլահ» և «Մուհարիփ» խմբեր կոչված կազմակերպություններն աշխատել են Ս. Քեմալի անմիջական ենթակայությամբ և կրկին երկար կյանք չեն ունեցել⁶⁶⁰:

1926 թ. հունվարին ստեղծվում է Թուրքիայի Հանրապետության առաջին համակարգված ու պրոֆեսիոնալ հիմքի վրա ստեղծված հետախուզական կազմակերպությունը՝ «Ազգային անվտանգության ծառայությունը» (այսուհետ՝ ԱԱԾ, թուրք. *Milli Emniyet Hizmeti*), որը գտնվում էր բանակի շտաբի ենթակայության տակ: Այդ ծառայությունն ստեղծվել էր հիմնականում երկրի ներսում գործելու համար և արտաքին հետախուզությունը առաջնային չէր համարվում: Ուստի, Գերմանիայի օգնությամբ սկսվեց արտաքին հետախուզության բաժանմունքի կազմակերպման գործընթացը⁶⁶¹:

Սկսած «Հատուկ կազմակերպությունից» մինչև 1965 թ.՝ ԱՀԿ-ի ստեղծումը, թուրքական հետախուզական ծառայությունները ռազմական բնույթի էին և գտնվում էին ԶՈւ ԳՇ-ի ենթակայության տակ: Քաղաքացիական անձանց սկսեցին հետախուզական կառույցներ ընդունել 1970-ական թթ., իսկ մասամբ այն սկսեց «քաղաքացիականացվել» միայն 1990-ական թթ.⁶⁶²:

1965 թ. ընդունված օրենքով ԱԱԾ-ն վերակազմավորվում է և ստանում իր ներկայիս անվանումը՝ Ազգային հետախուզական

başlangıcında, Mustafa Kemal Paşa'nın milli hareketi, Ittihat ve Terakki faaliyetlerinden uzak tutma teşebbüsleri, Atatürk Yolu Dergisi, II/5 (1990), ss. 109-127:

⁶⁶⁰ Şimşek E., Bahar I., նշվ. աշխ., էջ 187-192:

⁶⁶¹ Նույն տեղում, էջ 199-202:

⁶⁶² Ս. Ավազյան, Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում 1920-1971 թթ. /Եր.: Հեղ. Հրատ., 2011, էջ 134-135:

կազմակերպություն (այսուհետ՝ ԱՀԿ, թուրք. *Milli Istihbarat Teşkilatı*): 1983 թ. ընդունված «Պետական հետախուզական ծառայությունների ու Ազգային հետախուզական կազմակերպության» մասին օրենքով ԱՀԿ-ն նոր կարգավիճակ ստացավ: Այդ օրենքի համաձայն՝ ԱՀԿ-ն գործելու էր անկախ քաղաքական միջամտություններից: Սակայն 1990-ական թթ. քաղաքական ուժերն օգտագործելով իրենց ձեռքում գտնվող կառավարչական լծակները հաճախ էին միջամտում ԱՀԿ-ի գործերին: Մասնավորապես՝ Թանտու Չիլլերի ու Մետուք Յըլմազի կառավարման տարիներին ԱՀԿ-ն դիտարկվում էր որպես նրանց կուսակցության կառույցներից մեկը⁶⁶³:

1960-ական թթ. սկսած ԱՀԿ-ի գործունեությունը մեծամասամբ ուղղվել է ոչ թե արտաքին հետախուզության ապահովմանը կամ պետության դեմ այլ երկրների վնասակար գործունեության չեզոքացմանը, այլ երկրի ներսում անջատողականների ու կոմունիստների «որսին»⁶⁶⁴: 1971 թ. մարտի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո լուրեր էին շրջանառվում, որ երկրի քաղաքացիական իշխանությունները ԱՀԿ-ի կողմից չեն տեղեկացվել ԶՈՒ-ի ներսում կատարվող զարգացումների ու ռազմական հեղաշրջման պատրաստությունների մասին⁶⁶⁵: Ավելին՝ փաստեր են ի հայտ եկել, որ Թուրքիայում 1970-ական թթ. վերջին ահագնացած ահաբեկչությունն ու զանգվածային սպանությունները, սադրանքները կազմակերպվել են նաև ԱՀԿ-ի կողմից՝ նպատակ ունենալով հող նախապատրաստել 1980 թ. ռազմական հեղաշրջման համար⁶⁶⁶: 1986 թ. իր հարցազրույցներից մեկում տարբեր ժամանակահատվածներում վարչապետի պաշտոնն զբաղեցրած Մուլեյման Դեմիրելը նշել է, որ ոչ 1971

⁶⁶³ Sku` Şimşek E., Bahar I., նշվ. աշխ., էջ 279:

⁶⁶⁴ Sku` Mustafa Oğuz, Turkey's Defense Policy Making Process and its Effects on Weapons Procurement, September 2009, p. 67, <http://etd.lib.metu.edu.tr/upload/12610863/index.pdf>.

⁶⁶⁵ Sku` Ecevit Kılıç, "Milli Istihbarat Teşkilatı", Almanak Türkiye 2006 - 2008, Güvenlik Sektörü ve

Demokratik Gözetim, (Ed. Ali Bayramoğlu, Ahmet Insel), TESEV, July 2008, s. 244-245.

⁶⁶⁶ Sku` Daniele Ganser, NATO's Secret Armies. Operation Gladio and Terrorism in Western Europe, Frank Cass Publishers, New York, 2005, p. 239.

թ., ոչ էլ 1980 թ. ռազմական հեղաշրջումների հնարավորության մասին ԱՀԿ-ն տեղեկատվություն չի տրամադրել այդ շրջանի վարչապետներին, որոնց անմիջական ենթակայության տակ էլ օրենքով գործել է այն⁶⁶⁷:

1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո երկրի զինվորականությունը կրկին իր ամբողջական վերահսկողության տակ վերցրեց ԱՀԿ-ն: ԶՈւ ԳՇ պետ Քենան Էվրենը երկրի նախագահի պաշտոնն զբաղեցնելուց հետո աշխատում էր ԱՀԿ-ն մշտական վերահսկողության տակ պահել⁶⁶⁸: Ինչպես նշել է 80-90-ական թթ. ԱՀԿ-ում բարձր պաշտոններ զբաղեցրած Ջևադ Օնեշը՝ ԱՀԿ-ի պատկերացումներն անվտանգության վերաբերյալ ձևավորվել են հեղաշրջումների համապատասխան, ինչն էլ արգելակել է այդ կառույցի զարգացումը⁶⁶⁹:

Մինչև 1990-ական թթ ԱՀԿ-ն գտնվել է երկրի զինվորական իշխանությունների ոչ ուղղակի ղեկավարման տակ: 1926-1965 թթ. ԱԱԾ-ի 10 ղեկավարներից 7-ը եղել են զինվորականներ և միայն «Դեմոկրատական» կուսակցության իշխանության տարիներին՝ 1950-1960 թթ. են 3-ը եղել քաղաքացիական անձինք: 1965-1992 թթ. ԱՀԿ-ի բոլոր 12 ղեկավարները եղել են զինվորականներ⁶⁷⁰:

ԱՀԿ-ի «քաղաքացիականացման» գործընթացի հիմքը դրեց Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը, և արդեն իսկ 1990-ականներից սկսած դրանում զինվորականների ազդեցությունը սկսեց աստիճանաբար նվազել: Չնայած ԱՀԿ-ն հիմնադիր օրենքի համաձայն գտնվել է կառավարության հսկողության տակ և ուղղակի կապված է եղել վարչապետի գրասենյակին, այդուհանդերձ, դրանում բավական մեծ է եղել զինվորականության ազդեցությունը: Ըստ հատուկ ծառայությունների ոլորտի թուրք մասնագետ Ու. Հրչյըլմազի՝ Թ. Օզալի կողմից 1990-ական թթ. սկզբին Թուրքիայի արտա-

⁶⁶⁷ Տե՛ս՝ Talat Turhan, Doruk Operasyonu, Sorun Yayınları, İstanbul, 1989, s. 18-19, <http://www.sosyalistarsiv.com/S-A/doruk%20operasyonu.pdf>.

⁶⁶⁸ Տե՛ս՝ Şimşek E., Bahar I., նշվ. աշխ., էջ 382:

⁶⁶⁹ Տե՛ս՝ Ecevit Kılıç, նշվ. աշխ., էջ 245:

⁶⁷⁰ Տե՛ս՝ Mustafa Oğuz, Turkey's Defense Policy Making Process and its Effects on Weapons Procurement, September 2009, p. 66, <http://etd.lib.metu.edu.tr/upload/12610863/index.pdf>.

քին քաղաքականությանը ակտիվություն հաղորդելու ջանքերն ակնհայտ դարձրեցին Թուրքիայի ռազմավարական հետախուզության թուլությունը, և կարևոր դարձավ ԱՀԿ-ն ուղղորդել դեպի արտաքին հետախուզության ոլորտ⁶⁷¹: 1980-ականներին վարչապետ Օզալի կողմից ԱՀԿ-ի նկատմամբ վերահսկողությունն իր ձեռքը վերցնելու և այն քաղաքացիականացնելու ջանքերը հանդիպում էին զինվորականության դիմադրությանը, և նրանց իսկ կողմից ԱՀԿ-ից հեռացվեցին Օզալին հավատարիմ մարդիկ⁶⁷²:

Դեռ 1980-ական թթ. վերջում Թ. Օզալի ցուցումով պատրաստվել էր նախագիծ, որով նախատեսված էր ԱՀԿ-ի կազմում մեծացնել քաղաքացիական ծառայողների թիվը, մի շարք ներքին՝ հակահետախուզական գործառույթների փոխանցում Անվտանգության գլխավոր տնօրինությանը և Ներքին գործերի նախարարության բաժիններին, ԱՀԿ-ի հիմնական ուժերի կենտրոնացում արտաքին հետախուզության ոլորտում: Նա քայլեր ձեռնարկեց վերջ տալու կազմակերպության հաստիքները կադրային զինվորականներով համալրելու վաղեմի ավանդույթին և աստիճանաբար այն վերածել քաղաքացիական գերատեսչության⁶⁷³: Կան տեղեկություններ, որ նույնիսկ Օզալի կողմից ստեղծվել է իրեն հավատարիմ հատուկ հետախուզական միավորում: Անվտանգության գլխավոր տնօրինության ղեկավար Սաֆեթ Արըքան Բեդյուքի հետ համագործակցաբար Օզալը ԱՀԿ-ի գործող ու նախկին ներկայացուցիչներից կազմված մի առանձին հետախուզական միավորում է ստեղծել, որը, սակայն, 1992 թ. վերացվել է վարչապետ Դեմիրելի ջանքերով՝ պայմանավորված այդ շրջանում նրանց միջև եղած սուր դիմակայությամբ⁶⁷⁴: Առավել հավանական է ոչ թե առանձին հետա-

⁶⁷¹ Sbu `Ufuk Hıçyılmaz, MİT'in yeni vizyonu istihbarat, Aksiyon, 15.01.2007, <http://www.aksiyon.com.tr/aksiyon/haber-19155-34-mitin-yeni-vizyonu-istihbarat.html>.

⁶⁷² Sbu `Şimşek E., Bahar I., նշվ. աշխ, էջ 384:

⁶⁷³ Sbu `A. Арутюнян, История создания турецких секретных служб и их деятельность на современном этапе, Турция: проблемы безопасности и обороны, Институт политических исследований, Ереван, 2007, стр. 147-148.

⁶⁷⁴ Şimşek E., Bahar I., նշվ. աշխ, էջ 385:

խուզական միավորի ստեղծումը, այլ իր՝ այսինքն քաղաքացիական իշխանության վերահսկողության տակ գտնվող Անվտանգության գլխավոր տնօրինության ուժեղացումը, քանի որ դեռևս զինվորականների ազդեցության տակ գտնվող ԱՀԿ-ի նկատմամբ չէր ապահովվել հիմնական վերահսկողությունը, և այն կարող էր ժամանակավոր հակակշիռ ու հավասարակշռող ուժ լինել:

Թ. Օզալի կողմից առաջին կարևոր քայլը իր մտերիմը համարվող, փորձառու և ճկուն հետախույզի համբավ ունեցող Մուստաֆա Հիրամ Աբասի նշանակումն էր ԱՀԿ-ի ղեկավարի տեղակալի պաշտոնում: Արդեն իր պաշտոնն ստանձնած Աբասը 1990 թ. Թուրքիայի նախագահ Օզալին գրած նամակում նշել է, որ ԱՀԿ-ն պետք է հավաքի անհրաժեշտ հետախուզական տեղեկատվություն, որպեսզի ուղղորդի և օժանդակի արտաքին քաղաքականությանը, մինչդեռ 1969 թ. սկսած այն դարձել էր ոստիկանական ուժ⁶⁷⁵: Դեռևս 1990-ականների թուրքական մամուլը սուր քննադատության էր ենթարկում ԱՀԿ-ին՝ նշելով, որ այն ներգրավված է ոչ միայն բռնաճնշումների ու ահաբեկումների, այլ նաև «կեղտոտ բիզնեսում», և այն պատասխանատվություն է կրում զանգվածային սպանությունների ու մարդկանց տանջանքների համար⁶⁷⁶:

Վարչապետ Ս. Դեմիրելը նույնպես ջանքեր էր գործադրում ԱՀԿ-ի վրա կառավարության հսկողությունն ու տիրապետությունը հաստատելու ուղղությամբ, և առաջին ամենամեծ քայլը 1992 թ. զինվորական չհանդիսացող կադրային դիվանագետ Սյունմեզ Քյոքսալի նշանակումն էր ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում, որը պաշտոնավարեց մինչև 1998 թ.: Դա առաջին դեպքն էր 1965 թ. հետո, երբ ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում նշանակվում էր քաղաքացիական ծառայող⁶⁷⁷: Ս. Քյոքսալի նշանակմամբ սկսվեց ԱՀԿ-ի ընդհանուր «քաղաքացիականացման» գործընթաց:

⁶⁷⁵ Տե՛ս՝ Ecevit Kılıç, նշվ. աշխ., էջ 245:

⁶⁷⁶ Տե՛ս՝ Daniele Ganser, նշվ. աշխ., էջ 243:

⁶⁷⁷ Տե՛ս՝ Ecevit Kılıç, նշվ. աշխ., 245:

Նրա պաշտոնավարման ժամանակաշրջանում ԱՀԿ-ում կատարվեցին մի շարք վերափոխումներ, բարձրացվեց ռադիոէլեկտրոնային հետախուզության համակարգի տեխնիկական հագեցվածությունը՝ նպատակ ունենալով այն հասցնել ԿՀՎ-ի ու իսրայելական «Մոսադ»-ի մակարդակին: Նրան հաջողվեց ԱՄՆ-ից ԱՀԿ-ի ռադիոէլեկտրոնային հետախուզության համար ձեռք բերել ժամանակակից բարձր տեխնոլոգիական հատուկ սարքավորումներ, որոնք որպես «ռազմավարական տեխնոլոգիաներ» արգելված էին դուրս բերել ԱՄՆ-ից⁶⁷⁸: 1990-ական թթ. ԱՀԿ-ի տեխնիկական բազայի արդիականացման ու հետախուզության կադրերի պատրաստման, ուսուցանման հարցում կարևոր դեր է խաղացել թուրք-իսրայելական համագործակցությունն անվտանգության ու հետախուզության ոլորտում⁶⁷⁹:

Ս. Քյոքսալից հետո 1998-2005 թթ. ԱՀԿ-ն ղեկավարել է կրկին ոչ զինվորական Շենքալ Աթասագունը, որը երիտասարդ տարիներից աշխատել էր ԱՀԿ-ում: Նրանից հետո ԱՀԿ-ի բոլոր ղեկավարները եղել են քաղաքացիական պաշտոնյաներ:

ԱՀԿ-ի կառուցվածքային ու գործառութային բարեփոխումներն ավելի լայն թափ ստացան հատկապես ԱԶԿ-ի իշխանության տարիներին: ԱԶԿ-ի ուշադրությունը ԱՀԿ-ի բարեփոխումների հարցում պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Նախ, Թուրքիայի ԵՄ անդամակցության շրջանակում ստանձնած պարտավորություններով պետք է բարեփոխումներ իրականացվեին անվտանգության ոլորտում ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ու թափանցիկության հաստատման ուղղությամբ: Բացի այդ, կառավարող ԱԶԿ-ն իշխանության գալուց հետո բավական բարդ հարաբերությունների մեջ էր գտնվում բարձրագույն զինվորականության հետ, ուստի ԱՀԿ-ին կառավարության լիարժեք վերա-

⁶⁷⁸ Տե՛ս՝ А. Сваранц, Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Академия гуманитарных исследований, Москва, 2002, стр. 467.

⁶⁷⁹ Տե՛ս՝ Meltem Müftüler-Bac, Turkey and Israel: An Evolving Partnership, ACPR Policy Paper, No. 47, 1998, p. 7-8; <http://www.acpr.org.il/pp/pp047-meltemE.pdf>.

հսկողության տակ առնելն ու պահելն «օրակարգային խնդիր» էր: ԱԶԿ-ի և հատկապես վարչապետ Ռ.Թ. Էրդողանի համար խիստ անհրաժեշտ էր կառավարությանը ԱԶԿ-ի լիարժեք «հավատարմության» հաստատումը՝ որպես ներքաղաքական գործընթացներում զինվորական իշխանություններին ու ԳՇ-ին հակակշիռ: Բանակ-քաղաքացիական իշխանություն դիմակայության պարագայում ԱԶԿ-ի խնդիրն առաջնահերթ կարևորություն ստացավ Էրդո-ղանի կառավարության համար:

2007 թ. հուլիսին թուրքական «Sabah» պարբերականում հրապարակված հոդվածի համաձայն՝ չնայած 1990-ական թթ. ԱԶԿ-ում զինվորականները կազմումում էին մոտ 35 %, 2007 թ. դրությամբ արդեն, շուրջ 5 հազար աշխատակից ունեցող այդ կազմակերպությունում նրանց թիվը չէր անցնում մոտ 4.5 %-ից⁶⁸⁰:

2006 թ. հետո սկսեց ԱԶԿ-ի գործունեության որոշակի թափանցիկության նշույլներ երևալ, արդեն հրապարակվում էին կազմակերպության գործունեության տարեկան զեկույցներ, բյուջեի ու կադրային վիճակագրության մասին տվյալներ:

ԱԶԿ-ին հաջողվեց իր կառավարման տարիներին ԱԶԿ-ն լիովին պահել քաղաքացիական իշխանությունների վերահսկողության տակ: Դրա վառ ապացույցը կարող է լինել 2003 թ. զինվորականների կողմից կազմակերպված ռազմական հեղաշրջման փորձի բացահայտումն ու բավական հաջող հետաքննությունը, «Էրզենեկոն» ահաբեկչական կազմակերպության բացահայտումն ու դրանկատմամբ հետաքննությունը:

2010 թ. ապրիլին Թուրքիայի խորհրդարանի ներքին գործերի հանձնաժողովի ենթակոմիտեն վերականգնեց զենքի օրենքի նախագծում այնպիսի մի դրույթ, որը հնարավորություն էր տալու ԱԶԿ-ին առանց ԳՇ-ի և ՊՆ-ի թույլտվության՝ իր կարիքների համար ներկրել ծանր սպառազինություն: Նման քայլը բացասաբար ընդունվեց հատկապես ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական»

⁶⁸⁰ Stü` Ferhat Ünlü, "MİT'te iç çekişme entrikaya yol açtı", Sabah, 19.07.2007, <http://arsiv.sabah.com.tr/2007/07/19/haber,4D36E8C34C434B5880E8E8BE1D3FF328.html>.

կուսակցության կողմից⁶⁸¹: Այդ դրույթին դեմ էր հանդես գալիս ԳՇ-ը, ինչն էլ դեռ նախագծի քննարկումների ժամանակ լարվածություն էր առաջացրել կառավարության ու բարձրագույն սպայակույտի միջև⁶⁸²: Նման քայլը, մեծամասամբ, խորհրդանշական բնույթ էր կրում և միտված էր առաջին հերթին կառավարության կողմից ԱՀԿ-ին առավել շատ ինքնուրույնություն տալու և դա ԳՇ-ին ի ցույց դնելու հանգամանքով:

2011 թ. սկզբներին վարչապետ Էրդողանի հանձնարարությամբ աշխատանքներ սկսվեցին ԳՇ-ի Էլեկտրոնային համակարգերի հրամանատարությունը (Genelkurmay Elektronik Sistemler-GES) ԱՀԿ-ի ենթակայությանը կցելու համար: Այդ հրամանատարությունը հանդիսանում է Թուրքիայի ամենահագեցած Էլեկտրոնային հետախուզության ու գաղտնալուսումների ռազմաբազան և համարվում էր ԳՇ-ի «հետախուզության սիրտը»: Որոշում կայացվեց նաև ԱՀԿ-ի Էլեկտրոնային-տեխնիկական հետախուզության (*Elektronik Teknik İstihbarat*) միավորումը տեղափոխել այդ հրամանատարություն, ինչն էլ ավելի էր նպաստելու համակարգված ու արդյունավետ գործունեությանը⁶⁸³: Սա աննախադեպ քայլ էր, քանի որ ամբողջ բանակի մասշտաբով ամենակարևոր հետախուզական միջոցներից մեկն ուղղակի դրվում էր ԱՀԿ-ի վերահսկողության տակ, և զինվորականությունը զրկվում էր նման լծակից, որը տարիներ շարունակ կիրառել է նաև քաղաքական նպատակներով⁶⁸⁴:

⁶⁸¹ Sbu` Süleyman Demirkan, Turkish national intelligence, police department can import heavy weapons, Hürriyet Daily News, 22.04.2010, <http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=national-intelligence-and-police-department-allowed-to-import-heavy-weapons-2010-04-22>.

⁶⁸² Sbu` MİT ve polise, askeri silah ithali yetkisi istendi, Akşam, 25.12.2009.

⁶⁸³ Sbu` Genelkurmay Elektronik Sistemler Komutanlığı'nın MİT'e bağlanması için çalışma başlatıldığı öğrenildi, 09.03.2011, <http://www.internethaber.com/askerin-kalbi-mite-baglaniyor-333327h.htm>.

⁶⁸⁴ Այդ հրամանատարության հնարավորությունները զինվորականության կողմից հաճախ կիրառվել է քաղաքական գաղտնալուսումների համար: 1980 թ. ռազմական հեղաշրջման պլանավորումն ու կապի ապահովումն իրականացվել է այդ հրամանատարության միջոցով և հետագայում այն ստացել է հեղաշրջման պլանի անվանումը և առավելապես հայտնի եղել «Դրոշակ գարնիզոն» (Bayrak Garnizon) անվամբ:

Մասնավորապես՝ 2012 թ. սեպտեմբերին ԺՀԿ փոխնախագահ Ու. Օրանը, վերջին շրջանում ԶԲԿ-ի զինված գործողությունների աճն ու ահաբեկչության դեմ պայքարում ոչ լիարժեք հետախուզական տեղեկությունների ապահովման հարցը կապել էր ԳՇ-ի էլեկտրոնային համակարգերի հրամանատարությունը ԱՀԿ-ի ենթակայության ներքո դնելու խնդրի հետ՝ նշելով, որ 2012 թ. սկզբներից ԶՈԻ-ը հետախուզության տեսանկյունից դարձել են անկարող, «կույր և խուլ»⁶⁸⁵:

2013 թ. հունվարին թուրքական ԶԼՄ-ներում հայտնվեց տեղեկատվություն, որ ԱՀԿ-ի կազմում ստեղծվում է նոր ստորաբաժանում, որը պետք է ստանա, համակարգի և վերլուծի ԱԹՄ-ներից ստացված հետախուզական տեղեկատվությունը: Նախկինում սա գտնվում էր բացառապես ԳՇ-ի իրավասության ներքո, և այժմ այն փոխանցվում էր ԱՀԿ-ին: Ինչպես Թուրքիայի բանակում առկա «Heron», այնպես էլ մյուս ԱԹՄ-ների հետախուզական պատկերներն ու տեսաձայնագրություններն այսուհետ հավաքվելու էին ԱՀԿ-ի ներսում⁶⁸⁶: Ավելի ուշ արդեն ԱՀԿ-ն պայմանագիր ստորագրեց թուրքական «TÜBİTAK» գիտահետազոտական ընկերության հետ՝ սեփական կարիքների համար ԱԹՄ-ների արտադրության վերաբերյալ, որոնք կկիրառվեն հետախուզական ոլորտում: Բացի այդ, ԱՀԿ-ի և «TÜBİTAK»-ի միջև ստորագրվեց մեկ այլ պայմանագիր այդ ընկերության կազմում հետախուզական լաբորատորիայի ստեղծման վերաբերյալ, որտեղ կիրականացվի հետախուզական կառույցների համար անհրաժեշտ հատուկ սարքավորումների արտադրությունը: Շուրջ 220 մլն դոլար արժողության այդ արտադրական փա-

Stu` Genelkurmay Elektronik Sistemler (GES) Komutanlığı, tüm dinleme cihazlarıyla birlikte MİT'e evredildi, <http://www.internethaber.com/dinleme-ussu-mitin-kontrolune-gecti-367550h.htm>, 24.08.2011.

⁶⁸⁵ Stu` CHP'li Oran: Ordu istihbaratı kör ve sağır, Radikal, 24.09.2012.

⁶⁸⁶ Stu` Heron görüntüleri de MİT'e gelecek, <http://www.zaman.com.tr/gundem/heron-goruntuleri-de-mite-gelecek/2041162.html>.

թեթի ֆինասնասավորումն իր վրա վերցրեց Թուրքիայի ՊԱԳՎ-ն⁶⁸⁷: Մեկ այլ հրապարակման համաձայն՝ ԱՀԿ-ի տրամադրության տակ է դրվելու ՌԾՈւ-ին պատկանող նավ՝ ծովում և ցամաքում հետախուզություն իրականացնելու նպատակով⁶⁸⁸:

Թուրքական ՋԼՄ-ների համաձայն՝ վերջին տարիներին ԱՀԿ-ի բյուջեն շարունակական աճ է գրանցել: Հ. Ֆիդանի՝ ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում նշանակման ժամանակ այդ կառույցին պետբյուջեից հատկացվել էր 523 մլն ԹԼ: 2011 թ. ԱՀԿ-ի բյուջեն կազմել է 665 մլն, 2012 թ.՝ 750 մլն, իսկ 2013 թ.՝ 995 մլն ԹԼ: 2014 թ. պետական բյուջեից ԱՀԿ-ին հատկացվել է 1 մլրդ 58 մլն ԹԼ⁶⁸⁹: Նման աճի տեմպերը պայմանավորված են այդ կառույցում իրականացվող արդիականացմամբ ու նորագույն տեխնոլոգիական միջոցներով համալրմամբ⁶⁹⁰:

Մեծ հաշվով սրանք քայլեր էին, որոնք կազմակերպչական ու գործնական խնդիրներից բացի, նպատակ ունեն բարձրացնելու ԱՀԿ-ի ազդեցությունը անվտանգության համակարգում և ամրապնդելու բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը: Մյուս կողմից ԱՀԿ-ի վերահսկողության տակ են հայտնվում նաև նախկինում ԳՇ-ի ենթակայության ու իրավասության տակ գտնվող ռազմական հետախուզության կարևորագույն ոլորտները:

ԱՀԿ-ի գործունեության ու նաև կազմակերպչական-կառուցվածքային ոլորտում լայնամասշտաբ բարեփոխումների անհրաժեշտությունը բարձրացվեց Էմրե Թաների ղեկավարման տարիներին (2005-2010 թթ.): 2006 թ. նրա իսկ կողմից ԱՀԿ-ի բարեփոխումների աշխատանքներ էին նախաձեռնվել, որոնց նպատակն էր վերակազմակերպել ԱՀԿ-ի գործունեությունը ժամանակակից մարտահրավերներին ու զարգացումների համարժեք:

⁶⁸⁷ Sbu` MİT, TÜBİTAK'la anlaşdı, Cumhuriyet, 25.09.2013.

⁶⁸⁸ Sbu` MİT bütçesi neden bu kadar arttı?, <http://www.internethaber.com/mit-butcesi-neden-bu-kadar-artti-597723h.htm>.

⁶⁸⁹ Sbu` դոլարային համարժեքով՝ մոտ 534 մլն (2013 թ. հոկտեմբերի դրությամբ):

⁶⁹⁰ Sbu` MİT bütçesi neden bu kadar arttı?, <http://www.internethaber.com/mit-butcesi-neden-bu-kadar-artti-597723h.htm>.

ԱՀԿ-ի ղեկավար Է. Թաների պաշտոնավարման սկզբում նրա կողմից առաջ քաշվեց ազգային անվտանգության ապահովման ու ազգային շահերի պահպանման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հետախուզության գործառնությունների վերաձևման ու զարգացման անհրաժեշտության հարցը: 2007 թ. Թաների կողմից գրավոր հաղորդագրության մեջ նշվում էր, որ Թուրքիան իր թե՛ ռազմավարական և թե՛ աշխարհաքաղաքական կարևորության պատճառով երբեք չի կարող զարգացումների դիտորդի դերում լինել, և Թուրքիայի նման երկրին չի կարող բավարարել «պաշտպանական և սպասողական կեցվածքը»: Ոստի, ԱՀԿ-ն 21-րդ դարում պետք է երկրի շահերին ու անվտանգության խնդիրներին համարժեք գործունեություն ծավալի⁶⁹¹:

Նույն թվականի նոյեմբերին ԱՀԿ-ի բարեփոխումների անհրաժեշտության ու հետախուզական տեղեկատվության հավաքման ոլորտում ինքնուրույնության աստիճանը բարձրացնելու մասին էր խոսել 1992-1997 թթ. ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնն զբաղեցրած Սյոն-մեզ Քյոքսալը՝ գտնելով, որ պետք է կառուցվածքային ու գործնական փոփոխություններ իրականացվեն արդի իրավիճակին ու զարգացումներին համարժեք պատասխանելու համար⁶⁹²:

2008 թ. դեկտեմբերին ԱՀԿ-ի նախկին փոխսնօրեն Էրթուղրուլ Գյունեյը «Sunday's Zaman» պարբերականին տված հարցազրույցում նույնպես բարձրացրել էր Թուրքիայի հետախուզական համակարգի արդիականացման խնդիրը՝ նշելով, որ հետախուզական մեխանիզմների ոլորտում բացթողումներ ու թերություններ կան, քանի որ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները խանդով են վերաբերում միմյանց և տեղեկատվության փոխանակում չի լինում: Անհրաժեշտ է, որ կառավարությունը համակարգի հետախուզական մարմինների գործունեությունն ու ստեղծի համա-

⁶⁹¹ Sku` MIT'ten carpıcı mesajlar, http://www.hurriyet.com.tr/gundem/5727063_p.asp, 05.01.2007.

⁶⁹² Sku` Türk istihbarat yapısına eleştiri, 22.11.2007, <http://www.haber7.com/yorumlar.php?id=281986>.

կարգող մարմին⁶⁹³: Է. Գյունեյը անհրաժեշտ էր համարել տարանջատել ներքին ու արտաքին հետախուզական գործունեությունը և ԱՀԿ-ին լիազորել միայն արտաքին հետախուզություն իրականացնելու գործունեությունը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով կովկասյան, բալկանյան ու մերձավորարևելյան տարածաշրջաններում:

2009 թ. արդեն Թուրքիայում աշխատանքներ էին տարվում փոփոխություններ իրականացնել հետախուզական մարմինների գործունեության առաջնահերթություններում, ինչը կապված է միջազգային ժամանակակից իրադրությանն ու աշխարհաքաղաքական զարգացումներին համարժեք արձագանքելու և Թուրքիայի քաղաքականությունն ավելի արդյունավետ իրականացնելու անհրաժեշտության հետ: Նախ Թուրքիայում ռազմավարական նոր փոփոխություններ իրականացվեցին ներքին անվտանգության ու ահաբեկչության դեմ պայքարի ծառայությունների արդյունավետ գործողությունների համար, վերանայվեց ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարությունը և ստեղծվեց հատուկ համակարգող մարմին նշված ոլորտում: Հետախուզական գործունեության նոր ռազմավարության շրջանակներում՝ ԱՀԿ-ն իր գործունեության «ծանրությունը» կենտրոնացնելու էր արտաքին հետախուզության ոլորտում: ԱՀԿ-ի կառուցվածքում իրականացված փոփոխությունների շրջանակում վերանայվեցին և հստակեցվեցին նոր առաջնահերթությունները, որոնք վերաբերում էին արտաքին հետախուզությանը: Տարածաշրջանային, տնտեսական, քաղաքական, մշակութային ու ժողովրդագրական առումներով «առաջնահերթ թիրախներ» են ընտրվել Կովկասը, Բալկանները, Մերձավոր Արևելքը, Միջերկրական, Սև, Էգեյան ծովերը, Կասպայան ավազանը, ասիական-խաղաղակիանոսյան տարածաշրջանը, Աֆրիկան: Բացի անգլերենից, կարևորություն էր տրվելու արաբերեն, հայերեն, վրացերեն, հունարեն,

⁶⁹³ Stü` Lale Sariibrahimoğlu, Turkey needs an intelligence coordination mechanism, says Güven, 07.12.2008, Today's Zaman, http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action?load=detay&link=160856.

բուլղարաբեն, սերբերեն, ռուսերեն ու չինարեն լեզուներին⁶⁹⁴: ԱՀԿ-ի կողմից առաջնահերթություն ստացած 10 «ռազմավարական ոլորտներն» են.

1. Կովկաս. տարածաշրջանում Ռուսաստանի նոր ռազմավարությունները, Վրաստանի ձգտումները դեպի ՆԱՏՕ, Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը:
2. Մերձավոր Արևելք. Իրաքում և Լիբանանում կատարվող զարգացումները, իսրայելապաղեստինյան հարցը, Իրանի հաստատակամությունը միջուկային հարցի հետ կապված, տարածաշրջանի հարցերում Սիրիայի դիրքորոշումը, արաբական մի շարք էմիրություններում հնարավոր քաղաքական զարգացումներն ու իշխանափոխությունները:
3. Բալկաններ. նախկին Հարավսլավիայի մաս կազմող երկրների միջև հարաբերություններն ու լարվածությունը, Կոսովոյի անկախությունից հետո զարգացումները, եվրամիությանը Սերբիայի և Խորվաթիայի անդամությունը, ԵՄ-ին Մակեդոնիայի և Ալբանիայի ինտեգրմանն ուղղված ծրագրերը և ներդրումները, տարածաշրջանի երկրներում Հունաստանի ֆինանսատնտեսական ու հեռահաղորդակցության ոլորտում ներդրումները:
4. Մսծովյան տարածաշրջան. ավազանի արևելյան հատվածում նավթի պաշարներն ու որոնողական աշխատանքները, էներգետիկ ենթակառուցվածքները, ավազանի երկրների կողմից Սև ծովում ազդեցություն սահմանելու ձգտումները:
5. Միջերկրական ծով. Կիպրոսի հիմնախնդիրը, էներգետիկ պաշարները, Եգիպտոսի ու Կիպրոսի հանրապետության կողմից նավթագազային որոնողական աշխատանքներն ու պայմանագրերը, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան ու Սամսուն-Ջեյհան խողովակաշարերը:

⁶⁹⁴ Stü ` Dış istihbarata ağırlık verilecek, Sabah, 20.03.2009.

6. Էզեյան ծով. թուրք-հունական օդային հաղորդակցության տեղեկատվական գիծը և ցամաքային հատվածի խնդիրները:
7. Աֆրիկա. զինված հակամարտությունները, Թուրքիայի աֆրիկյան ռազմավարական նախաձեռնությունը, Հյուսիսային Աֆրիկայում թուրքական ներդրումներն ու կապալառուական ծրագրերը:
8. Կարմիր ծով, Ադենի ծոց. ռազմավարական ուղիների վերահսկողություն, նավթի ու գազի փոխադրումների անվտանգության ապահովում և թուրքական ռազմական նավի ներկայության ապահովում:
9. Միջին Ասիա և Կասպյան ավազան. նավթի ու գազի բաժանումը, բաշխումը, հնարավոր խողովակաշարերի կառուցումն ու ուղիները:
10. Հեռավոր արևելյան, ասիական, խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի տնտեսական մրցակցության ուժեղացումը, Չինաստանի ու Ճապոնիայի միջև մրցակցությունը տարածաշրջանային դերակատարության համար, Աֆղանստանում իրավիճակն ու ահաբեկչական գործողությունները: Տարածաշրջանի երկրների նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումը, Ռուսաստանի ու Չինաստանի միջև էներգետիկ պայմանագրերը, Կասպյան ավազանում նավթի ու գազի պաշարների արդյունահանումն ու ռազմավարական ծրագրերը:

Հարկ է նշել, որ Սառը պատերազմի ողջ ժամանակահատվածում թուրքական հատուկ ծառայությունների գործունեությունն ու առաջնահերթությունը պայմանավորված էր հիմնականում ԱՄՆ և ՆԱՏՕ-ի գերակայություններով, և սպառնալիքների ու գործունեության դաշտի հիմնական ուղեգծերը սահմանվում էին մեկ կենտրոնից: Ինչպես արևմտյան առանցքի շատ երկրներում, այնպես էլ Թուրքիայում հետախուզական մարմինների գործունեությունը

մեծամասամբ սահմանափակված էր ԽՍՀՄ-ի, սոցիալիստական ճամբարի երկրների ու կոմունիզմի դեմ պայքարի գերակայություններով: Ինչպես իր դոկտորական ատենախոսության մեջ իրավացիորեն նշել է ԱՀԿ-ի ներկայիս ղեկավար Հ. Ֆիդանը՝ Սառը պատերազմի շրջանում Թուրքիայում հիմնական ուշադրությունը կենտրոնացված էր երկրի ներքին զարգացումների վրա, մինչդեռ այդ պատճառով արտաքին հետախուզական տեղեկատվության ստացման կարիքը չէր զգացվում, և այն կախված էր մնում ՆԱՏՕ-ի դաշնակիցների կողմից ստացվող հետախուզությունից⁶⁹⁵: Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի համար առաջնահերթ դարձավ անվտանգության նոր միջավայրի, արտաքին քաղաքական հրամայականների ու մարտահրավերների վերաիմաստավորմամբ նաև հետախուզական գործունեության գերակայությունների «արդիականացումը»:

ԱՀԿ-ի արտաքին հետախուզության գործառույթների ընդլայնման անհրաժեշտությունը պայմանավորված է Թուրքիայի հավակնոտ արտաքին քաղաքականությամբ ու հատկապես իր հարևան տարածաշրջաններում ազդեցության հաստատման ու մեծացման ջանքերով: Բացի այդ, Թուրքիան ցանկանում է նվազագույնի հասցնել արտաքին հետախուզության ոլորտում այլ երկրներից ունեցած կախվածությունը և նրանց ազդեցությունը: Նման անհրաժեշտության առաջացավ հատկապես թուրք-իսրայելական լարված հարաբերություններից հետո, քանի որ հետախուզական ոլորտում այդ երկրների համագործակցությունը բավական սերտ էր, և Թուրքիան զգալի կախվածություն ուներ հատկապես քրդական հիմնախնդրի վերաբերյալ «Մոսադի» կողմից տեղեկատվության տրամադրումից: ԱԶԿ-ի իշխանության տարիներին թուրք-ամերիկյան հարաբերություններում սկսված անվստահությունն ու տարածաշրջանային զարգացումներում հաճախ դրսևորվող շահերի բախումները նվազագույնի հասցրեցին ամերիկյան ու թուրքական հատուկ ծառա-

⁶⁹⁵ Stü` MİT'i nasıl yöneteceğini yıllar önce yazdı, <http://www.haber7.com/ic-politika/haber/980454-miti-nasil-yonetecegini-yillar-once-yazdi>.

յությունների համագործակցությունը: Բազմակի անգամ Թուրքիան տարբեր մակարդակներով հայտարարել է, որ ԱՄՆ-ն ՔԲԿ-ի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն չի տրամադրում Թուրքիային: 2006 թ. ԱՀԿ-ի կողմից Իրաքում զարգացումների ու ՔԲԿ-ի վերաբերյալ պատրաստված զեկույցում նշվում էր, որ ԱՄՆ-ը և Իրաքը բավարար քայլեր չեն ձեռնարկում ՔԲԿ-ի դեմ Թուրքիայի հակահասահարեկչական պայքարում⁶⁹⁶:

Այս համատեքստում, բավական բնութագրիչ էր Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուի՝ 2011 թ. սեպտեմբերին «CNN Türk» հեռուստաալիքին տված հարցազրույցը, որտեղ նա բարձր էր գնահատել ԱՀԿ-ում իրականացվող բարեփոխումներն ու ռազմավարական հետախուզության աշխարհագրական ու գործնական ոլորտների ընդլայնման ուղղությամբ տարվող աշխատանքները. «Թուրքիան գտնվում է դինամիկ զարգացող միջավայրում և տարածաշրջանում փոփոխություններ են տեղի ունենում: Ինչի պետք է Թուրքիան նման հարցերում կախված լինի այլ երկրների հետախուզական ծառայություններից, եթե ԱՀԿ-ն ավելի լավ կարող է գործել: Թուրքական հետախուզությունը պետք է ի վիճակի լինի իր ձեռքը պահել զարկերակի վրա աշխարհի յուրաքանչյուր անկյունում»⁶⁹⁷: Հարկ է նշել, որ ոլորտի նախկին բարձրաստիճան պաշտոնյաներն ու փորձագետները հաճախ էին քննադատաբար մոտենում ԱՀԿ-ի գործունեությանն ու այլ երկրներից ունեցած կախվածությանը: Մասնավորապես՝ ԱՀԿ-ի նախկին ղեկավար Ս. Քյոքսալը 2007 թ. քննադատության ենթարկեց այդ կառույցին՝ նշելով, որ այն չի կարողանում ապահովել իր համար անհրաժեշտ հետախուզական տեղեկատվությունը հատկապես իր շրջակայքում քրդական անջատողականների ու նրանց առաջնորդների վերաբերյալ և ստիպված է դրանք ստանալ ԱՄՆ-ից: Միայն քայլերից խուսափելու

⁶⁹⁶ Stü` Hakan Dilek, MİT'in Tarihi, 04-12 Augustos, Takvim, s. 10, http://i.onbesyirmibes.org/pdf/20101126_mitin_tarihi.pdf.

⁶⁹⁷ Stü` Serkan Demirtaş, Ankara restructuring intelligence service, Hürriyet Daily News, 18.09.2011.

համար ռազմավարական հետախուզության ոլորտում Թուրքիան չպետք է կախում ունենա այլ երկրներից⁶⁹⁸: 2012 թ. հուլիսին Թուրքիայի «TÜRKSAM» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն, դոկտոր Ջելալթթօին Յավուզը, խոսելով թուրք-իսրայելական հարաբերությունների մասին, անդրադարձել էր նախկինում թուրքական հետախուզական մարմիններին իսրայելական հատուկ ծառայությունների կողմից ցուցաբերած օգնությանը՝ նշելով, որ «նախկինում ՔԲԿ-ի դեմ պայքարում իսրայելական «Մոսադ» ծառայությունը կարևոր հետախուզական օգնություն է ցուցաբերել Թուրքիային: *Միայն այդ ոլորտում է Թուրքիան դեռ զգում Իսրայելի կարիքը*»⁶⁹⁹: Հարկ է նշել, որ հատկապես վերջին տարիներին ՔԲԿ-ի դեմ պայքարի հարցերում Թուրքիայի անվտանգության համակարգում հաճախակի էին բարձրաձայնվում հետախուզական մարմինների բացթողումների ու թերությունների վերաբերյալ: Թուրքական հատուկ ծառայությունները, հատկապես ՔԲԿ-ի և ընդհանրապես քրդական զինյալների դեմ պայքարի հարցում, 1990-ական թթ. ակտիվ համագործակցության մեջ էին իսրայելական կողմի հետ⁷⁰⁰ և զգալի կախում ունեին հետախուզական տվյալների փոխանցման առումով: Թուրք վերլուծաբանի վերոնշյալ պնդումը վկայում է, որ մինչ օրս էլ թուրքական հատուկ ծառայությունները ինքնուրույնաբար չեն կարողանում ապահովել անհրաժեշտ հետախուզական տեղեկատվությունը ՔԲԿ-ի վերաբերյալ: Եվ իրականում

⁶⁹⁸ Տես՝ Türk istihbarat yapısına eleştiri, 22.11.2007, <http://www.haber7.com/yorumlar.php?id=281986>.

⁶⁹⁹ Տես՝ Ջ. Յավուզի հարցազրույցը Առաջին լրատվականին՝ http://lin.am/arm/armenia_interview_97186.html?from=interview:

⁷⁰⁰ Թուրք-իսրայելական անվտանգության, հատուկ ծառայությունների համագործակցության մասին տես՝ Neziha Tavlaş, Türk-İsrail Güvenlik ve İstihbarat İlişkileri, Avrasya Dosyası İsrail Özel Sayısı, cilt 1, sayı 3, Sonbahar 1994: Թուրքական և իսրայելական հատուկ ծառայությունների միջև համագործակցության հիմքերը դրվել են դեռևս 1958 թ.՝ Իսրայելի վարչապետ Դ. Բեն-Գուրիոնի և արտաքին գործերի նախարար Գ. Մեյերի Անկարա կատարած գաղտնի այցելության արդյունքում: Թուրքիան իր հետախուզական հնարավորությունները մեծացնելու և զարգացնելու համար ակտիվ կապերի մեջ էր Իսրայելի, ԱՄՆ-ի և Իրանի հետախուզական մարմինների հետ: Տես՝ Şimşek E., Bahar I., նշվ. աշխ., էջ 237-238:

խրայելական հատուկ ծառայությունները ավելի լավ են տիրապետում տարածաշրջանում և հատկապես Հյուսիսային Իրաքում քրդական շրջանների ու դրանցում զարգացումների վերաբերյալ հետախուզական տեղեկատվությանը:

Վերջին տարիներին քրդական զինյալների հաճախակի ու հուժկու հարձակումներն ակնհայտ դարձրեցին երկրի անվտանգության համակարգում առկա բացասական երևույթներն ու բացթողումները, ինչը մեկ անգամ ևս բարձրագույն ղեկավարության ու հրամանատարության համար պարզ դարձրեցին անվտանգության համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը: Այսպես՝ ՋՈւ ԳՇ-ի պետ Յ. Բյույուքանը ը 2009 թ. մայիսին Ստամբուլի Բեյքենթ համալսարանում հանդես եկավ հատուկ դասախոսությամբ, որտեղ քննադատության ենթարկեց անվտանգության մարմինների ոլորտում ոչ լիարժեք համակարգվածությունն ու փոխադարձ անվստահությունը, առկա բացասական երևույթները՝ նշելով, որ «եթե երկրի ներսում անվստահություն ու կասկածանք կա տարբեր պետական կառույցների միջև, ապա այդ երկիրը, խնդրահարույց, հիվանդ պետություն է»⁷⁰¹:

2008 թ. Թուրքիայի Ահաբեկչության դեմ պայքարի բարձրագույն խորհրդի (թուրք.՝ *Terörle Mücadele Yüksek Kurulu*) գումարված նիստում որոշում կայացվեց ահաբեկչության դեմ պայքարի գործողությունների համակարգման նպատակով անվտանգության համակարգում նոր կառուցվածքային փոփոխություններ կատարել: Ընդհանուր առմամբ, խնդիր էր դրված առավելագույն չափով ապահովել ԱՀԿ-ի, Ժանդարմերիայի ու ՆԳՆ-ի, ինչպես նաև անվտանգության այլ մարմինների միջև համագործակցությունն ու օպերատիվ տեղեկատվության արագընթաց փոխանակումը: 2010 թ. մարտին Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը վավերացրեց համակարգող հատուկ կառույցի ստեղծման ու գործունեության մասին օրենքը⁷⁰², որի պարտականությունն էր անընդհատ, օպերատիվ հանդիպում-

⁷⁰¹ Sıkı ' Büyükanıt: Devlet hasta, Hürriyet, 04.05.2009.

⁷⁰² Sıkı ' Gül'den Kamu Güvenliği Müsteşarlığı'na onay, Yeni Şafak, 03.03.2010.

ներ անցկացնել ԶՈՒ-ի ԳՇ-ի, ԱՀԿ-ի, Ժանդարմերիայի ու անվտանգության մարմինների բարձրաստիճան ղեկավարների հետ, լսել նրանց կարծիքներն ու առաջարկությունները, համատեղ մշակել իրականացվելիք գործողությունների ռազմավարությունն ու մարտավարությունը, անվտանգության մարմիններին ռազմավարական տեղեկատվությամբ ապահովել և նրանց միջև համակարգում հաստատել, հետախուզության կողմից ստացված տեղեկատվությունը գնահատել և համապատասխան կառույցներին տրամադրել⁷⁰³ : Բացի այդ, նույն օրենքով նախատեսվում էր ստեղծել Ահաբեկչության դեմ պայքարի համակարգման խորհուրդ՝ անվտանգության մարմինների ու այլ գերատեսչությունների միջև ահաբեկչության դեմ պայքարի համակարգումն ապահովելու ու գնահատումներ իրականացնելու նպատակով⁷⁰⁴:

ԱՀԿ-ի, ԳՇ հետախուզական վարչության, անվտանգության այլ մարմինների, բանակային հրամանատարությունների ու նախարարությունների առանձին ստորաբաժանումների միջև հետախուզության համակարգման թերությունների հարթման նպատակով արդիականացման գնալու անհրաժեշտության մասին է նշում նաև թուրք հետազոտող Ն. Այդընն իր «Կարմիր գիրք. ազգային անվտանգության քաղաքականությունը» վերտառությամբ գրքում⁷⁰⁵:

⁷⁰³ Stü` Kamu Düzeni Ve Güvenliği Müsteşarlığının Teşkilat Ve Görevleri Hakkında Kanun, <http://www.kdgm.gov.tr/index.snet?wapp=0DC304A2-A792-4265-9B43-07A7327BE9EC>; Kamu Düzeni ve Güvenliği Müsteşarlığı 2010 Yılı Idare Faaliyet Raporu, s. 8, <http://www.kdgm.gov.tr/source.cms.docs/kdgm.web.ce/rapor.pdf>. Այդ կառույցը հիմնականում գտնվելու էր քաղաքացիական իշխանությունների վերահսկողության տակ՝ պատասխանատու լինելով վարչապետի առջև: Ի դեպ, այդ գերատեսչությանը չէր վերապահվում օպերատիվ գործողությունների իրականացման լիազորությունը, այլ ուղղակի այն դիտվում էր որպես խորհրդակցական մարմին: ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում ստեղծված համանման կառույցները ամբողջովին լիազորված են իրականացնել նաև օպերատիվ գործողություններ: Stü` Teröre karşı Güvenlik Müsteşarlığı dönemi, <http://www.cnnturk.com>, 05.02.2009; Güvenlik Müsteşarlığı kuruluyor, Hürriyet 05.02.2009.

⁷⁰⁴ Stü` Gül'den Kamu Güvenliği Müsteşarlığı'na onay, Yeni Şafak, 03.03.2010.

⁷⁰⁵ Stü` Nurullah Aydın, Kırmızı kitap, Milli Güvenlik Politikası, İstanbul, Paraf yayımları 2011, s. 475.

Ամերիկյան մոդելի օրինակով վերակազմավորումների շրջանակում ԱՀԿ-ի տանիքի ներքո 2012 թ. ստեղծվեց Հետախուզության համակարգման կենտրոնը (*İstihbarat Koordinasyon Merkezi*), որի նպատակը հետախուզական ծառայությունների ու գերատեսչությունների միջև արդյունավետ համագործակցության ու հետախուզական տեղեկատվության համակարգման ապահովումն է: Այն, փաստորեն, դառնում է երկրի հետախուզական հանրային տեղեկատվության համակարգումն ապահովող մարմին: Կենտրոնը կազմված է ԳՇ-ի, Ժանդարմերիայի, Անվտանգության գլխավոր տնօրինության ու ԱՀԿ-ի կողմից հետախուզության համար պատասխանատու հինգական ներկայացուցիչներից: ԳՇ-ի, ոստիկանության, Ժանդարմերիայի և այլ գերատեսչություններից եկող հետախուզական տեղեկատվությունը հավաքվելու և գնահատվելու է այդ կենտրոնում: Փաստորեն, բոլոր մարմինների կողմից հետախուզական տեղեկատվության հավաքումն ու փոխանակումն իրականացվելու է ԱՀԿ-ի տանիքի ներքո⁷⁰⁶:

Ժամանակակից միջազգային հարաբերություններին ու զարգացումներին համապատասխան Թուրքիան քայլեր էր ձեռնարկում ավելի ընդլայնելու արտաքին հետախուզության աշխարհագրությունն ու բնագավառները: Բավական լուրջ ուշադրություն է դարձված էներգետիկ-կոմունիկացիոն խնդիրներին, որով Թուրքիան պատրաստվում է ավելի մեծ դերակատարություն ստանձնել տարածաշրջանային ու արտատարածաշրջանային էներգետիկ-տրանսպորտային ու քաղաքական-տնտեսական գործընթացներում: Դա հնարավորություն կտա ապահովել ոչ միայն սեփական անվտան-

⁷⁰⁶ Sıkı` Erdoğan'ın talimatıyla kurulan birimden nokta operasyon!, <http://www.samanyoluhaber.com/gundem/Erdoganin-talimatıyla-kurulan-birimden-nokta-operasyon/922694/>; İstihbarat birleşti yeni patron MIT, <http://www.timeturk.com/tr/2012/12/22/istihbarat-birlesti-yeni-patron-mit.html>.

գությունը, այլ նաև մեծացնել իր դերակատարությունը տարածաշրջանային ու միջազգային գործընթացներում⁷⁰⁷:

2010 թ. մայիսին ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում նշանակվեց վարչապետ Էրդոհանի մտերիմը համարվող Հաքան Ֆիդանը, որը մինչ այդ կարճ ժամանակ զբաղեցրել էր ԱՀԿ-ի ղեկավարի տեղակալի պաշտոնը⁷⁰⁸: Հ. Ֆիդանի պարագայում կարևոր է նաև այն, որ նա 2003-2007 թթ. զբաղեցրել է վարչապետի աշխատակազմի «Թյուրքական համագործակցության ու զարգացման գործակալության» (*Türk İşbirliği ve Kalkınma İdaresi Başkanlığı, TİKA*) ղեկավարի պաշտոնը, որի գործունեության հիմնական շրջանակն ու ուղղությունը վերաբերում է եվրասիական տարածաշրջանում թյուրքալեզու երկրներին ու ժողովուրդներին կրթական-մշակութային օգնությունը, սոցիալ-տնտեսական, հումանիտար ծրագրերի իրականացումը⁷⁰⁹: Թյուրք մասնագետների բնորոշմամբ՝ TİKA-ն հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում հիմնականում Եվրասիայի մի շարք տարածաշրջաններում ու երկրներում ստացավ «Թյուրքիայի արտաքին քաղաքականության իրականացման գործիքի դերը»⁷¹⁰:

Հ. Ֆիդանի նշանակումը որոշ թյուրքական լրատվամիջոցներ որակեցին որպես վարչապետ Էրդոհանի կողմից ԱՀԿ-ի նկատմամբ ամբողջական վերահսկողության հաստատմանն ուղղված քայլ, քանի որ նա համարվում էր նրա իսկ վստահելի մարդկանցից: Պաշ-

⁷⁰⁷ Տես՝ Լ. Հովսեփյան, Ռուսաստանի Դաշնությունում թյուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ, «Դրօշակ», No. 11 (1626), Նոյեմբեր 2010, էջ 31:

⁷⁰⁸ Տես՝ ԱՀԿ-ի պաշտոնական կայք, <http://www.mit.gov.tr/mustesar.html>, 25.08.2010; Sedat Ergin, A sensitive appointment to the top of the MIT, *Hürriyet Daily News*, 27.04.2010:

⁷⁰⁹ «TİKA»-ն ստեղծվել է 1992 թ. կառավարության որոշման համաձայն՝ ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ թյուրքալեզու երկրներին տարբեր օգնության ծրագրերի համակարգման ու իրականացման նպատակով: Այն սկզբնական շրջանում գործում էր որպես ԱԳՆ-ին կից կազմակերպություն, իսկ հետագայում միացվեց վարչապետի գրասենյակին: Տես՝ «TİKA»-ի պաշտոնական կայքը՝ <http://www.tika.gov.tr/tika-hakkinda/tarihce/1>:

⁷¹⁰ Տես՝ Tuncay Kardeş, Ramazan Erdağ, Bir Dış Politika Aracı Olarak TİKA, *Akademik İncelemeler Dergisi*, Vol. 7, Sayı:1, 2012, s.169.

տոնն ստանձնելուց հետո նա հայտարարեց, որ ԱՀԿ-ն հետագայում լինելու է ավելի բաց հասարակության առջև և չի լինելու քաղաքականացված, չի ծառայելու անհատներին կամ առանձին խմբերի շահերին⁷¹¹:

ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում Հ. Ֆիդանի մեկամյա գործունեության շրջանում արդեն մի շարք քեմալիստական ու ձախ ուղղվածության լրատվամիջոցներ շրջանառեցին «Intelligence online» պարբերականի հրապարակումը, ըստ որի՝ այդ գերատեսչությունում իրագործվել է «մաքրման» գործողություն, որի նպատակը երկար ժամանակ «հակախալամական ամբողջ» հանդիսացող այդ կառույցը Էրդողանի կառավարության լիակատար վերահսկողության տակ դնելն է: «Բանակի ազդեցության սահմանափակման նկատմամբ իրականացրած հաջող գործողություններից հետո Էրդողանն այժմ ցանկանում է վերահսկողություն հաստատել ԱՀԿ-ի վրա, և դա հանձնարարել է դրա ղեկավար Հ. Ֆիդանին»⁷¹²:

Դեռևս 2003 թ. ընթացքում Թուրքիայի կառավարությունը նախաձեռնել էր ԱՀԿ-ի օրենքում փոփոխությունների միջոցով բարեփոխումներ իրականացնել կառույցում: Ըստ այդ նախաձեռնության՝ ԱՀԿ-ն բաժանվելու էր և կազմվելու 2 առանձին միավորներից՝ համապատասխանաբար ներքին ու արտաքին հետախուզության ոլորտում, որոնց գլխավորելու էին առանձին նշանակված ղեկավարները⁷¹³: Բարեփոխումների հիմնական մոդել էր ընտրվելու ԱՄՆ-ում հետախուզական ծառայությունների կառուցվածքն ու գործունեությունը, որտեղ հստակ առանձնացված են ներքին ու արտաքին հետախուզական մարմինները՝ Հետաքննությունների դաշնային բյուրոն (ՀԴԲ) և Կենտրոնական հետախուզական վարչությունը (ԿՀՎ): ԱՀԿ-ի բարեփոխումների խնդիրը երկար ժամանակ

⁷¹¹ Stü` Turkey's intelligence agency to change image with appointment of new chief, Hürriyet Daily News, 28.05.2010.

⁷¹² Stü` "MİT'te temizlik operasyonu" iddiası, <http://haber.sol.org.tr/devlet-ve-siyaset/mitte-temizlik-operasyonu-iddiasi-haberi-40710>, 25.03.2011.

⁷¹³ Stü` MİT` in yapısı değişiyor, Yeni Şafak, 30.11.2003, <http://yenisafak.com.tr/arsiv/2003/kasim/30/p01.html>

հանդիսացել է մասնագիտական ու փորձագիտական քննարկումների առարկա, որի ժամանակ անխուսափելի էր համարվում թուրքական հետախուզության՝ ժամանակակից իրողություններին համապատասխան արդիականացնելու հրամայականը:

ԱՀԿ-ում կառուցվածքային ու գործառության ղեկավարներն արդեն իսկ իրողություն դարձան Հ. Ֆիդանի պաշտոնավարման սկզբնական շրջանում: 2010 թ. նոյեմբերին թուրքական ՁԼՄ-ները հրապարակեցին, որ կառավարության գաղտնի որոշմամբ ԱՀԿ-ում կառուցվածքային փոփոխություններ են իրականացվել: Հատկապես առանձնացվել են ԱՀԿ-ում ներքին հետախուզության ու արտաքին հետախուզության ոլորտները՝ կազմելով համապատասխանաբար առաջին և երկրորդ հետախուզությունները⁷¹⁴: Կազմակերպությունում հետախուզության համար պատասխանատու տեղակալների թիվն ավելացվել է, և հետախուզության ոլորտը համակարգելու են պետի երկու տեղակալները: Կատարված կառուցվածքային փոփոխություններով ԱՀԿ-ի ղեկավարը նախկին երեքի փոխարեն ունենալու է չորս տեղակալ: Ներքին հետախուզության հարցերով պատասխանատու տեղակալը համակարգելու է Անվտանգության հետախուզության վարչությունը (*Güvenlik İstihbarat Başkanlığı*) և Հակահետախուզության վարչությունը (*İstihbarata Karşı Koyma Başkanlığı*), իսկ արտաքին հետախուզության հարցերի պատասխանատու տեղակալը՝ Ռազմավարական հետախուզության վարչությունը (*Stratejik İstihbarat Başkanlığı*) և Բաց աղբյուրների վարչությունը (*Açık Kaynaklar Daire Başkanlığı*)⁷¹⁵:

Իրականացված կառուցվածքային այդ բարեփոխումների շրջանակում 2011 թ. ԱՀԿ-ի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվեց կադրային դիվանագետ, Ճապոնիայում Թուրքիայի դեսպան Աբդուռահման Բիլգիչը, որը պետք է ապահովեր ԱՀԿ-ի ու

⁷¹⁴ Տես՝ MİT ikiye bölündü!, Vatan, 12.11.2010, <http://haber.gazetevatan.com/mit-ikiye-bolundu/340367/1/Haber>.

⁷¹⁵ Տես՝ MIT Faaliyet Raporu 2010, s. 3, http://www.mit.gov.tr/faaliyet_raporlari/faaliyet_raporu2010.pdf.

Արտաքին գործերի նախարարության միջև համագործակցությունն արտաքին հետախուզության ոլորտում⁷¹⁶:

2013 թ. դեկտեմբերի 17-ին Թուրքիայում դատախազության ու ոստիկանության կողմից կաշառքի ու խարդախության գործով իրականացված ձերբակալությունները, Ֆ. Գյուլենի և վարչապետ Էրդողանի միջև սուր հակամարտությունն ու ծավալված ներքաղաքական զարգացումները, Էրդողանի ու բարձրաստիճան պաշտոնյաների գաղտնալսումները, Էրդողանի հեռախոսային գաղտնալսումների հրապարակումները, Ադանայում ԱՀԿ-ին պատկանող բեռնատար մեքենաների կանգնեցումն ու խուզարկումը ժանդարմերիայի կողմից ի ցույց դրեցին երկրի ներսում անվտանգության մարմինների նկատմամբ վարչապետի և կառավարության վերահսկողության թուլությունը: Այդ զարգացումները ցույց տվեցին, որ կառավարությունը չի կարողանում կամ մասամբ է վերահսկում երկրի անվտանգության համակարգը: Անվտանգության համակարգում գյուլենականների ազդեցությունն ու լծակները վերջին տարիներին զգալիորեն աճել են, որով էլ կարողանում են ազդել ներքաղաքական գործընթացների վրա:

ԱԶԿ-ն ձեռնամուխ եղավ ԱՀԿ-ի օրենսդրական փոփոխությունների կատարմանը և 2014 թ. փետրվարին ԹԱՄԺ-ին ներկայացրեց «Պետական հետախուզական ծառայությունների և Ազգային հետախուզական կազմակերպության մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, որով զգալիորեն ընդլայնվում էին ԱՀԿ-ի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հետախուզական գործունեության լիազորությունները: Մասնավորապես՝ օրենսդրական փոփոխություններով ԱՀԿ-ն հատկապես մեծ լիազորություններ է ստանում երկրում ներքին հետախուզական գործունեության ոլորտում, արտաքին ու ներքին գաղտնալսումների, հեռահաղորդակցային միջոցների վերահսկողության իրականացման հարցում դյուրացվում էր իրավական ընթացակարգը: ԱՀԿ-ի ծառայողների դեմ

⁷¹⁶ Stu՝ Diplomat appointed to Turkey's intel body, Hürriyet Daily News, 07.10.2011.

հետաքննության մեխանիզմներն էլ ավելի են բարդացվում⁷¹⁷ : Օրենսդրական փոփոխություններով մեծացվում է ԱՀԿ-ի պարտականությունների շրջանակը՝ ներառելով արտաքին անվտանգության, ազգային անվտանգության, ահաբեկչության, միջազգային հանցավորության դեմ պայքարի և կիբերանվտանգության ոլորտները: Մեծացվում է նաև «Ազգային հետախուզության համակարգող խորհրդի» լիազորությունն ու դերակատարությունը, դրա նկատմամբ երկրի վարչապետի ազդեցությունը, իսկ խորհրդի որոշումները ստանում են «պարտադիր» բնույթ⁷¹⁸:

ԱԶԿ-ն օրենսդրական այս նախաձեռնությունը բացատրում էր ազգային անվտանգության ու արտաքին քաղաքականության նոր խնդիրներին ու պահանջներին համահունչ հետախուզական ծառայություն ունենալու հանգամանքով, ինչը հնարավորություն կտար ԱՀԿ-ն վերակազմավորել ժամանակի պահանջներին համահունչ, ապահովել պետական այլ հաստատությունների միջև հետախուզական գործունեության համակարգման և հետախուզական գործունեության արդյունավետության բարձրացմանը⁷¹⁹:

ԱՀԿ-ի օրենքի լայնամասշտաբ փոփոխությունները, չնայած նշյալ հանգամանքներին, պայմանավորված էին քաղաքական գործոնով, որի հիմքում ընկած էր անվտանգության մյուս մարմինների նկատմամբ ԱՀԿ-ի դերակատարության բարձրացմանն ու լիազորությունների ընդլայնմանը՝ մեծացնելով վարչապետի և կառավարության վերահսկողությունը:

⁷¹⁷ 2012 թ. փետրվարին կառավարության առաջարկությամբ փոփոխություն իրականացվեց ԱՀԿ-ի օրենքում, որի համաձայն՝ ԱՀԿ-ի պաշտոնյաների և աշխատակիցների դեմ հետաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ էր լինելու երկրի վարչապետի թույլտվությունը: Այս փոփոխությունը անմիջապես նախաձեռնվեց այն բանից հետո, երբ ԱՀԿ-ի ղեկավար Հ. Ֆիդանը, ինչպես նաև ԱՀԿ-ի նախկին այլ պաշտոնյաներ, ՔԲԿ-ի հետ 2010 թ. Օսլոյում իրականացված բանակցությունների համար հարցաքննության էին հրավիրվել դատախազություն: MİT Kanunu'nda değişiklik yasalaştı, Radikal, 17.02.2012; Jet hızıyla imzalandı, Milliyet, 18.02.2012.

⁷¹⁸ Տե՛ս՝ ԱՀԿ-ի օրենքի նախագիծը՝ <http://www2.tbmm.gov.tr/d24/2/2-2011.pdf>

⁷¹⁹ Տե՛ս՝ Նույն տեղում:

ԱՀԿ-ի լիազորությունների մեծացման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությամբ Էրդողանը փորձում է անվտանգության մարմիններում, և ոչ միայն, սկսել «մաքրագատման» գործողություն՝ արդյունքում հասնելով այդ ոլորտների նկատմամբ կառավարության լիարժեք վերահսկողությանը:

ԱՀԿ-ի վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները էականորեն բարձրացնում են այդ կառույցի ինքնուրույունությունն ու նվազեցնում վերահսկելիությունը խորհրդարանի կողմից: Թուրքական փորձագիտական-վերլուծական ու ընդդիմադիր քաղաքական շրջանակներն այս օրենսդրական նախաձեռնությունը որակեցին որպես մի քայլ, որն ԱՀԿ-ին տալիս է մեծ անձեռնամխելիություն, մեծացնում անպատժելիությունն ու անվերահսկելիությունը՝ երկիրը տանելով դեպի «ռստիկանական պետություն»⁷²⁰:

ԱՀԿ-ին մեծ լիազորություններ տալով՝ Էրդողանի կառավարությունը քայլեր էր ձեռնարկում երկրի անվտանգության համակարգում իր վերահսկողական մեխանիզմներն ուժեղացնելու ուղղությամբ, ինչը միևնույն ժամանակ կարող է դառնալ երկրի հասարակական-քաղաքական կյանքի վերահսկման լուրջ գործոն: Կառավարությունը նման նախաձեռնության անհրաժեշտությունը պայմանավորում էր արդի չափանիշներին համապատասխան հատուկ ծառայությունների գոյության անհրաժեշտությամբ՝ հիմնավորելով երկար տարիներ զինվորականության ձեռքին հատուկ կառույց հանդիսանալու հանգամանքը:

2008 թ. սկզբից արդեն աշխատանքներ էին տարվում ԱՀԿ-ի ներսում ուսումնակրթական մասնագիտական բազայի զարգացման ուղղությամբ, որի շրջանակներում նախատեսված էր ստեղծել հատուկ ակադեմիա՝ անձնակազմի վերապատրաստման համար: Զուտ պրոֆեսիոնալ ուսումնական ծրագրերից բացի անձնակազմի

⁷²⁰ Stu՝ Turkey's Government Tries to Expand Intelligence Agency Powers, <http://www.voanews.com/content/turkeys-government-tries-to-expand-intelligence-agency-powers/1860895.html>; MİT kanununa siyasetçiler ve hukukçulardan ciddi uyarılar, Bugün, 27.02.2014

համար կազմակերպվելու էին օտար լեզուների դասընթացներ⁷²¹: Ըստ թուրքական ՁԼՄ-ների՝ 2009 թ. ԱՀԿ-ն աշխատանքի է ընդունել նոր աշխատակիցներ՝ հայերեն, վրացերեն, արաբերեն, սերբերեն, եբրայերեն, հունարեն, ռուսերեն լեզուների իմացությամբ, որոշ գործող աշխատակիցներ էլ տվյալ լեզուներով համապատասխան ուսուցում են անցել⁷²²: Հարկ է նշել, որ բարեփոխումների համատեքստում առաջնային պլան է մղված հետախուզական-վերլուծական գործունեության մեջ գիտական, ակադեմիական ոլորտի ներգրավվածության ու համակարգման ապահովման խնդիրը: Գիտահետազոտական ոլորտում աշխատանքներն ակտիվացնելու նպատակով 2011 թ. ԱՀԿ-ի ուսումնական կենտրոնի (*Milli Istihbarat Teşkilatı Eğitim Merkezi*) կազմում ստեղծվեց Հետախուզական ուսումնասիրությունների կենտրոն (*Istihbarat araştırmalar merkezi, ISAMER*) անունը կրող ակադեմիան, որի նպատակը ակադեմիական ուսումնասիրություններն են հետախուզության ոլորտում և անհրաժեշտ նորարարական առաջարկների պատրաստումը⁷²³: 2012 թ. հունիսին այն անցկացրեց իր առաջին համաժողովը՝ ակադեմիական ու անվտանգության ոլորտի մասնագետների ու պաշտոնյաների մասնակցությամբ, որի նպատակն էր վերհանել հետախուզական գործունեության մեջ վերլուծական բաղադրիչի, որոշումների կայացման գործում ռազմավարական վերլուծության դերի ու նշանակության տեսական գործոնները⁷²⁴: Ի դեպ, այդ համաժողովին մասնակցել է նաև թուրքական «Մերձավոր Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոն»-ի տնօրեն Հ. Քանբուլաթը⁷²⁵: Ակնհայտ է, որ արդեն իսկ ԱՀԿ-ի կողմից ուշադրություն է դարձվում երկրում գործող ռազմավարական հետազոտությունների

⁷²¹ Տես՝ MİT Akademisi kuruluyor, Akşam, 03.03.2008.

⁷²² Տես՝ MİT ikiye bölündü, NTV, 12.11.2010, <http://www.ntvmsnbc.com/id/25150946/#storyContinued>.

⁷²³ Տես՝ ԱՀԿ-ի պաշտոնական կայք՝ <http://www.mit.gov.tr/isamer.html>; MİT, istihbarat akademisi kurdu, Sabah, 19.08.2011

⁷²⁴ Տես՝ ԱՀԿ-ի պաշտոնական կայք՝ <http://www.mit.gov.tr/icinta.html>:

⁷²⁵ Տես՝ Tek istihbarata bağlı kalmamalı, Milliyet, 09.06.2012.

ուրտում գործող շրջանակներին: Վերջին տարիներին Թուրքիայի ԱԳՆ-ի կողմից երկրի վերլուծական-հետազոտական կենտրոնների ու փորձագետների հետ ինտենսիվ համագործակցության հաստատման ու շփումների օրինակով ԱՀԿ-ն նույնպես աստիճանաբար սերտ համագործակցություն կհաստատի երկրի վերլուծական-ուղեղային կենտրոնների (*think-tank*) հետ՝ դրանց մասնագիտական-կադրային ներուժն օգտագործելով ռազմավարական վերլուծական գործունեության մեջ:

Կան փաստեր, որ որոշ վերլուծական կենտրոններ ակտիվ համագործակցության մեջ են եղել ԱՀԿ-ի հետ: Դեռևս 2000 թ. ստեղծված *Եվրասիական ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնը* (*Avrasya Stratejik Araştırmalar Merkezi*) կապեր ուներ ԱՀԿ-ի ու ԱԱԽ-ի հետ: Այդ կենտրոնին կից 2001 թ. որպես անկախ հետազոտական մարմին ստեղծվեց *Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտը* (*Ermeni Araştırmalar Enstitüsü*), որի շրջանակներում կատարվում էին Հայկական հարցի ու Հայաստանի պատմական ու քաղաքական հարցերի ուսումնասիրություններ: Ինստիտուտի ստեղծման նախաձեռնությունը պատկանում էր Թուրքիայի ԱԱԽ-ին ու ԱՀԿ-ին:

ԱԱԽ-ի և ԱՀԿ-ի համակարգմամբ գործել են հակահայկական ուղղվածության այլ կառույցներ ևս: 2001 թ. մայիսին Թուրքիայի կառավարության շրջաբերականով ստեղծվեց «Անհիմն ցեղասպանության պնդումների դեմ պայքարի համակարգող խորհուրդը» (ASİMCKK) և հստակեցվեցին պետական մակարդակով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ արշավի ու հակահայկական գործողությունների հիմնական շրջանակները: Այդ խորհուրդը գործել է կառավարության աշխատակազմի և ԱԱԽ-ի վերահսկողությամբ: Դրանում ներգրավված են եղել ԱԱԽ-ի, ԱՀԿ-ի, ՆԳՆ-ի, ՊՆ-ի, ԱԳՆ-ի և այլ պետական հաստատությունների ներկայացուցիչներ⁷²⁶: Փաստորեն, խորհրդի նախագահությունը դրված

⁷²⁶ Տե՛ս՝ Kompozisyon Genelgesinin Sır Yönetmeliği,

<http://www.bianet.org/bianet/siyaset/27272-kompozisyon-gelgesinin-sir-yonetmeliği>.

է եղել փոխվարչապետի, իսկ ընդհանուր համակարգումը՝ ԱԱԽ ԳՔ-ի վրա: Վերոնշյալ խորհրդի գործունեությունը դիտարկվում էր որպես երկրի ազգային անվտանգության ոլորտում պետական քաղաքականության բաղկացուցիչ մաս:

Խորհուրդն իր գործունեությունը շարունակել է նաև ԱԶԿ-ի իշխանության տարիներին: 2003 թ. ապրիլին ԱԱԽ-ում կայացած խորհրդի նիստի շրջաբերականներից հայտնվել էին մամուլի էջերում, որոնք վերաբերում էին պետական մակարդակով իրականացվելիք գործողություններին: 2005-2007 թթ. արտաքին գործերի նախարարի պաշտոնում գտնվող Ա. Գյուլի նախագահությամբ ԱԱԽ-ում գումարված խորհրդի նիստերին կրկին ընդունվել են գործողությունների վերաբերյալ շրջաբերականներ⁷²⁷:

2002 թ. սեպտեմբերին ստեղծվում է հայկական թեմատիկայով զբաղվող ևս մի հատուկ կազմակերպություն՝ *Թուրք-հայկական հարաբերությունների ազգային կոմիտե* անվամբ, որի նպատակը Հայկական հարցի, հայկական մշակույթի, քաղաքականության, հասարակական, ժողովրդագրական պատկերի ու պատմության ուսումնասիրություններն ու գնահատումները, հայկական ուսումնասիրությունների լայն բազայի ստեղծումը, արտերկրների հայագետների հետ կապերի հաստատումն ու նրանց հետ տարվող աշխատանքներն էին⁷²⁸: Կոմիտեն սկզբնական շրջանում բաղկացած է եղել 15 անդամներից, որոնց կազմում աշխատել են Ազգային անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ԱԱԽ) ու ԱՀԿ-ի ներկայացուցիչները: Կոմիտեն հրատարակել է մի շարք աշխատություններ Հայկական հարցի թուրքական մոտեցումների վերաբերյալ, որոնք տարածվել են տարբեր երկրներում: Այդ կոմիտեում են ընդգրկված եղել թուրք հայտնի վերլուծաբաններ Ս. Լաչիներն ու Շ. Քան-

⁷²⁷ Տե՛ս՝ MGK'da Ermeni zirvesi,

<http://www.milliyet.com.tr/2006/02/25/guncel/gun09.html>; Ermeni iddialarına karşı yeni strateji, Hürriyet, 18.03.2005; R. Zarakolu, Yeni Hükümet ASIMKK-yi sürdürececek mi?, Özgür Gündem, 11.07.2011.

⁷²⁸ Տե՛ս՝ Türk Ermeni İlişkileri Milli Komitesi Yönetmeliği,

<http://yokmevzuati.com/ust%20kurullar%20PDF/5.pdf>.

թարջըն, որոնց հիմնական հետազոտական շրջանակը վերաբերում էր Հայկական հարցին ու տարածաշրջանային խնդիրներին: 2012 թ. հունիսին որոշում կայացվեց այդ կոմիտեի լուծարման վերաբերյալ⁷²⁹:

Ավելի վաղ՝ 1997 թ. ստեղծված *Ռազմավարական հետազոտությունների ու ուսումնասիրությունների ազգային կոմիտեի (Stratejik Araştırma ve Etüdler Milli Komitesi)* առջև խնդիր էր դրված հիմնականում թուրք-հունական հարաբերությունների, ինչպես նաև Թուրքիայի երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների, տարածաշրջանի խնդիրների հետ կապված պատմամշակութային, քաղաքական, տնտեսական, իրավական, սոցիոլոգիական ու աշխարհաքաղաքական հետազոտությունների կատարումը: 2001 թ. հունվարին կայացած նիստում որոշում կայացվեց մեծացնել ուսումնասիրությունների շրջանակը՝ ներառելով Բալկանները, Մերձավոր Արևելքը, Կենտրոնական Ասիան ու Կովկասը, սևծովյան ու միջերկրածովյան տարածաշրջանները: Կոմիտեում ընդգրկված էին 14 անդամներ, որից 2-ը երաշխավորված ԶՈՒ ԳՇ-ի, 1 բարձրաստիճան ներկայացուցիչ՝ ԱՀԿ-ի, 2-ը՝ ԱԳՆ-ի կողմից⁷³⁰: Նախաձեռնությունը պատկանում էր Թուրքիայի ԱԱԽ-ին, որի հսկողության տակ էլ գործում էին այդ կոմիտեները:

Պայմանականորեն, հանրապետական Թուրքիայում հատուկ-հետախուզական ծառայությունների կայացման ու զարգացման գործընթացը կարելի է բաժանել փուլերի: Առաջինը վերաբերում է 1920-ական թթ., երբ կարճ ժամանակահատվածում միմյանց հետևից ստեղծվում էին տարբեր կազմակերպություններ, որոնք գտնվում էին քաղաքական իշխանության, տվյալ պարագայում՝ Մ. Քեմալի հսկողության տակ և կառավարվում զինվորականների կողմից: Դրանք անկայուն, ապակենտրոնացված մարմիններ էին և չկար

⁷²⁹ Տես՝ 28 Şubat ürünü 'Ermeni Komitesi' lağvedildi, <http://www.agos.com.tr/28-subat-urun-u-ermeni-komitesi-lagvedildi-1243.html>.

⁷³⁰ Տես՝ Stratejik Araştırma ve Etüdler Millî Komitesi Yönetmeliği, <http://www.yok.gov.tr/content/view/450/183/lang,tr/>; 28 Şubat ürünü 'Ermeni Komitesi' lağvedildi, <http://www.agos.com.tr/28-subat-urun-u-ermeni-komitesi-lagvedildi-1243.html>.

միասնական կենտրոնացված ղեկավարում: Երկրորդը կենտրոնացված ու համակարգված միավորի ստեղծումն էր՝ 1926 թ. ԱԱԾ-ի հիմնումը, որը ղեկավարվում էր զինվորականների կողմից և նրանց վերահսկողությամբ: Երրորդ փուլը՝ արդեն օրենսդրական-ինստիտուցիոնալ առումով կենտրոնացված պետական հետախուզական մարմնի՝ ԱՀԿ-ի ստեղծումն էր 1965 թ.: Այս շրջանն ընդգրկում է մինչև 1990-ականների սկզբները: Տվյալ շրջանի ամենաբնորոշ գիծը թերևս այն էր, որ չնայած օրենսդրորեն ԱՀԿ-ն ենթարկվում էր քաղաքացիական կառավարմանը՝ վարչապետին, այդուհանդերձ, դրա ղեկավարումն ու վերահսկողությունը կենտրոնացված էր զինվորականության ձեռքում: Հաջորդ՝ այսպես ասած քաղաքացիականացման փուլն ընդգրկում է Օզալի բարեփոխումներից մինչև մեր օրերը: Այս շրջանն առանձնանում է ԱՀԿ-ի վերահսկողության «քաղաքացիականացմամբ» և զինվորականության դերի ու ազդեցության մեխանիզմների չեզոքացմամբ, որն ավելի նշանակալի բնույթ ստացավ հատկապես ԱԶԿ-ի կառավարման տարիներին:

4.4. Անվտանգության համակարգի ընդհատակյա, անօրինական գաղտնի կառույցներ ու կազմակերպություններ. բացահայտումների շարք

Թուրքիայի անվտանգության համակարգի առանձնահատկություններից մեկն այն է, որ տարիներ շարունակ անվտանգության պետական մարմիններից բացի ստեղծվել և գործել են ոչ օրինական դաշտում գտնվող գերգաղտնի անվտանգային-հետախուզական տարբեր մարմիններ ու կառույցներ: Նման կառույցների ու ստորաբաժանումների ստեղծումն ու գործունեությունն ակտիվ փուլ մտավ հատկապես 1990-ական թթ. և միայն վերջին տարիներին իրականացված հետաքննությունների արդյունքում է հնարավոր դարձել որոշակիորեն բացահայտել դրանց գոյությունն ու գործունեության որոշ դրվագներ: Մրանք պայմանավորված են հատկապես «Էրգենե-

կոն» խմբավորման դատական գործերով և ԱԶԿ-ի համառությանը, քանի որ նման կառույցների ու ստորաբաժանումների գոյությունն ուղղակի սպառնալիք էր ներկայացնում իսլամամետ կուսակցության համար:

Նման կառույցների առկայությունը Թուրքիայում պայմանավորված է եղել դեռ Սառը պատերազմի տարիներին ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի աջակցությամբ հիմնված մի քանի գաղտնի ստարաբաժանումների գոյությամբ, որոնց հիիմնական առաքելությունը երկրի ներսում ձախակողմյան շարժումների ու կոմունիստների դեմ պայքարն էր: Նման ստորաբաժանումներ գործում էին ՆԱՏՕ-ի անդամ մի շարք պետություններում: Թուրքիայում դրանց վերացման հետ մեկտեղ ի հայտ եկան նոր կազմակերպություններ, որոնց գործառույթային շրջանակները փոխվեցին սեփական անվտանգային մարտահրավերներին ու սպառնալիքներին համարժեք:

Դեռևս 1940-ական թթ. վերջերին Թուրքիայից մի խումբ զինվորականներ էին գործուղվել ԱՄՆ՝ հակակոմունիստական պայքարի վերապատրաստման նպատակով, որոնց մասնակցությամբ էլ հետագայում Թուրքիայում ստեղծվում է «Հատուկ պատերազմի բաժինը» (այսուհետ՝ ՀՊԲ, *Özel Harp Dairesi*) կամ ինչպես ընդունված է եղել անվանել՝ կոնտրգերիլլա խմբերը: 1952 թ. ներկայիս ԱԱԽ-ի նախատիպը հանդիսացող Ազգային պաշտպանության բարձրագույն խորհրդի որոշմամբ ԳԾ-ի կազմում ստեղծվում է «Մոբիլիզացիոն հետազոտության խորհուրդը» (*Seferberlik Tetkik Kurulu*), որը սկսում է գործել 1954 թ. սկսած: 1967 թ. այդ կառույցը անվանափոխվում է՝ դառնալով ՀՊԲ, որը յուրահատուկ գաղտնի «բանակ» էր հենց բանակի ներսում: Դրա հիմնական գործառույթը հակակոմունիստական պայքարի կազմակերպումն ու երկրի ներսում ձախերի դեմ տարվող պայքարն էր, ԽՍՀՄ-ի հնարավոր ազդեցության չեզոքացումը: Այդ կառույցի անվանումը կապված է մի շարք աղմակահարույց իրադարձությունների հետ: ՀՊԲ-ի նախկին հրամանատարներից գեներալ Սաբրի Յիրմիբեշօղլուն խոստովանել է, որ 1955 թ. սեպտեմբերի 6-7-ը Ստամբուլում և Իզմիրում տեղի ունեցած ան-

կարգությունների հրահրումն ու քրիստոնյաների դեմ գործողությունները կազմակերպված են եղել ՀՊԲ-ի կողմից՝ այն անվանելով «հոյակապ կազմակերպված գործ»⁷³¹:

ՀՊԲ-ը գործունեության լայն դաշտ ստացավ հատկապես 1960-ական թթ. վերջերին և 1970-ական թթ. ընթացքում, երբ Թուրքիայում բավական ակտիվացել էին ձախակողմյան տարբեր շարժումներն ու ծայրահեղական կազմակերպությունները: Երկրում կոմունիստական ու ձախակողմյան շարժումների դեմ պայքարող կոնտրգերիլլա հակապարտիզանական ստորաբաժանումների պայքարը համակարգող ՀՊԲ-ն սերտ կապերի մեջ էր ազգայնական ուժերի՝ մասնավորապես «գորշ գայլերի» հետ, ինչը նպաստեց նաև այդ ուժի հզորացմանը: ՀՊԲ-ն «գորշ գայլերին» դիտարկում էր որպես արդյունավետ միջոց ձախակողմյան շարժումների դեմ պայքարելու համար և սկսեց օգտագործել նրանց: 1960-ական թթ. վերջին ՀՊԲ-ի օժանդակությամբ ստեղծվեցին «գորշ գայլերի» «կոմանդոս ճամբարները», որոնք կարևոր դեր խաղացին դրանց ահաբեկչական գործունեության համար: ՀՊԲ-ի և «գորշ գայլերի» համագործակցության օրինակներից են 1977 թ. Ստամբուլի Թաքսիմ հրապարակի արյունոտ իրադարձությունները, երբ աշխատավորների մայիսմեկյան գանգավածային ցույցի ժամանակ «գորշ գայլերի» գործողությունների ու սադրանքների պատճառով զոհվեց 3 տասնյակ, վիրավորվեց 100-ից ավել մարդ⁷³²:

«Էրզենեկոն» խմբավորման գործով հետաքննության արդյունքում բացահայտվեցին Թուրքիայում տարբեր տարիներին գործած ընդհատակյա գաղտնի, անօրինական որոշ կառույցներ ու կազմակերպություններ, որոնք ներգրավված են եղել հակաօրինական գործողություններում: Դրանցից էր հանդիսանում «Ժանդարմերիայի հետախուզության և ահաբեկչության դեմ պայքարի կազմակերպու-

⁷³¹ Snu` Seferberlik Tetkik Kurulu nedir?,

http://www.radikal.com.tr/politika/seferberlik_tetkik_kurulu_nedir-971372, 27.12.2009.

⁷³² Snu` Արթուր Դումանյան, 1980 թ. ռազմական հեղաշրջումը Թուրքիայում. Պատճառը, ընթացքը, հետևանքները, անտիպատենախոսություն, Երևան 2007, էջ 45-50:

թունը» (*Jandarma Istihbarat ve Terörle Mucadele, JITEM*), որը ստեղծվել էր հիմնականում ՔԲԿ-ի դեմ պայքարի համար: Բացի ՔԲԿ-ի դեմ պայքարից, այն ներգրավված է եղել նաև հակաօրինական գործողություններում՝ թմրանյութերի և զենքի մաքսանենգություն, քաղաքական սպանություններ: Սրա մասին առաջին անգամ բարձրաձայնել է թուրք լրագրող Այսե Օնալը 1994 թ. հրապարակած իր հոդվածում: Շրջանառվող վարկածի համաձայն՝ այն հիմնադրվել է դեռևս 1971 թ. Վելի Քյուչուքի կողմից՝ որպես «խորքային պետության» կառույց⁷³³: Ի հայտ եկած նոր փաստաթղթերի համաձայն՝ «JITEM»-ը ստեղծվել է 1987 թ. օգոստոսի 27-ին Ժանդարմերիայի հետախուզական վարչությանը կից և սկզբնապես գործել Մարդինում, Սիլվիիում, Բաթմանում՝ իր կազմում ներառելով պահեստային զինվորականների, քաղաքացիականների և բանտերից հատուկ ազատված ՔԲԿ զինյալների⁷³⁴:

2009 թ. «Էրգենեկոնի» դատական գործի շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավված գնդապետ Արիֆ Դոդանի ձերբակալման ժամանակ, ում անվան հետ է կապվում «JITEM»-ի ստեղծումը, ի հայտ եկան նոր փաստեր ու տեղեկություններ: 1989-1991 թթ. և 1993-1997 թթ. վերաբերող առգրավված մի շարք փաստաթղթերում նշված է եղել «JITEM» անունը: Ա. Դոդանն իր պարզաբանումներում հաստատել է, որ այն ստեղծվել է իր կողմից և հետագայում դրա ղեկավարումը հանձնվել Վ. Քյուչուքին⁷³⁵:

Չնայած երկար ժամանակ ԳՇ-ը և Ժանդարմերիայի հրամանատարությունը հերքում էին նման կառույցի գոյությունը, «JITEM»-ի գործով դատախազության հետաքննության շրջանակներում 2011 թ. դրա գոյության վերաբերյալ հարցում է ուղարկվում ԳՇ-ին, Ժան-

⁷³³ Sıkı Michael Gunter, *Historical Dictionary of the Kurds*, Scarecrow press 2011, pp. 150-151.

⁷³⁴ Sıkı Bir var bir yok Hem var hem yok JİTEM, <http://www.hurriyet.com.tr/pazar/3542856.asp>, 20.11.2005 ; JİTEM'in belgesi ortaya çıktı !, <http://www.diyarbakirhaber.gen.tr/haber-193-JITEMin-belgesi-ortaya-cikti-.html>.

⁷³⁵ Sıkı Kurucusundan JİTEM gercekleri, <http://www.habervesaire.com/news/kurucusundan-jitem-gercekleri-1213.html>, 26.03.2009.

դարմերիայի հրամանատարությանն ու անվտանգության մյուս մարմիններին: Ստացված պատասխաններից հաստատվում էր «JITEM»-ի գոյությունը և այն, որ դա ստեղծվել է զուտ Ժանդարմերիայի հրամանատարության նախաձեռնությամբ, առանց ՆԳՆ-ի հավանության ու ԳՇ-ի իրազեկման՝ ահաբեկչության դեմ պայքարի նպատակով և 1990 թ. դադարել գոյություն ունենալ⁷³⁶: Ավելի ուշ առգրավված մեծ քանակությամբ փաստաթղթերի մեջ հայտնաբերվել են նաև այդ կառույցում մի շարք սպաների ծառայությունը փաստող ցուցակներ, որոնց համաձայն՝ տարբեր տարիներին դրանում ներգրավված են եղել թուրքական բանակի ու անվտանգության մարմինների բազմաթիվ գործող սպաներ⁷³⁷: «JITEM»-ի կազմում գործել է 21 անձից բաղկացած քաղաքացիական գործողությունների թիմը, որի ստեղծման հրամանը տրվել է Ժանդարմերիայի հասարակական կարգի գծով հրամանատարի կողմից: Գործել է նաև հատուկ գործողությունների թիմը, որը համալրված է եղել զինծառայողներով և կատարել հետախուզական և հատուկ առաջադրանքներ⁷³⁸:

Ի հայտ եկած տարբեր փաստեր վկայում են Թուրքիայում հատկապես 1990-ական թթ. բազմաթիվ կազմակերպված սպանությունների ու մահափորձերի մասին, այդ թվում՝ քաղաքացիական անձանց, բարձրաստիճան զինվորականների ու քաղաքական գործիչների:

2004 թ. Անկարայում ԱՄՆ դեսպանության աշխատակցի կողմից ԱՄՆ ուղարկված գաղտնի հեռագրում նկարագրվում է «JITEM»-ի հետ կապված որոշ դրվագներ, որոնք նա ստացել էր ռազմական հետախուզության ոլորտում երկար տարիներ աշխատած իր

⁷³⁶ Sbu` Ve devlet JITEM'i resmen kabul etti,

http://www.radikal.com.tr/turkiye/ve_devlet_jitemi_resmen_kabul_etti-1055684, 09.07.2011.

⁷³⁷ Sbu` JITEM'in A takımının belgesi ortaya çıktı, <http://haber.gazetevatan.com/jitemin-a-takiminin-belgesi-ortaya-cikti/457983/1/gundem>, 15.06.2012.

⁷³⁸ Sbu` JITEM'in sivil timi ortaya çıktı !, <http://www.sivilhaber.com/gundem/jitemin-sivil-timi-ortaya-cikti.htm>, 06.07.2012.

գաղտնի գրուցակցից: Թուրքական մամուլի կողմից հրապարակված այդ հեռագրից պարզ է դառնում, որ «JITEM»-ը հատուկ հրամանով ներգրավված է եղել երկրի արևելյան շրջաններում՝ «հայկական անջատողականության ու սպառնալիքի» բացահայտման գործերով՝ վեր հանելով հայկական ծագում ունցողներին ու այդ շրջանակներին⁷³⁹:

2012 թ. փետրվարին Մալաթիայի «Զիրվե» հրատարակչության գործով ⁷⁴⁰ դատաքննության ընթացքում առաջին անգամ նշվեց «Թուրքիայի ազգային ռազմավարությունների և գործողությունների վարչություն» (*Türkiye Ulusal Stratejiler ve Harekat Dairesi, TUSHAD*) գաղտնի կառույցի մասին: ԱՀԿ-ին և մեջլիսին ուղարկված տարբեր իրազեկող նամակներում հաստատվում էր նման կառույցի գոյությունը: Սակայն ԶՈւ ԳՇ-ը պաշտոնապես հերքում էր «TUSHAD»-ի գոյության փաստը: Ըստ տեղեկությունների ու ձեռք բերված փաստաթղթերի՝ այդ կառույցը ակտիվ գործել է մինչև 2008 թ. և «Էրգենեկոնի» դատավարությամբ ու բացահայտումներով պայմանավորված ընդհատել իր գործունեությունը⁷⁴¹: Այն տարբեր տարիների ենթարկվել է վերակազմավորումների, և դատական ցուցմունքներից մեկի համաձայն՝ 1999 թ. այն «քաղաքացիականացվել» է ու ներգրավվել քաղաքական որոշ գործընթացներում: Դրան է վերագրվում 2007 թ. գարնանը Թուրքիայի նախագահական ընտրություններում Ա. Գյուլի թեկնածության և ԱԶԿ-ի դեմ կազմակերպված «Հանրապետության հանրահավաքները»⁷⁴²:

⁷³⁹ Տես՝ Amerikan gizli belgelerinde 'JITEM'den nasıl bahsediliyor?,

<http://istihbaratonline.com/News.aspx?newsID=39>.

⁷⁴⁰ Տես՝ 2007 թ. ապրիլին Մալաթիայում դաժանաբար սպանվում են Զիրվե հրատարակչության երեք քրիստոնյա աշխատակիցներ:

⁷⁴¹ Տես՝ Şok!!! Tushad belgeleri ortaya çıktı,

http://www.kontrgerilla.com/mansetgoster.asp?haber_no=5166, 08.03.2013.

⁷⁴² Տես՝ Tolon Paşadan JİTEM'le ilgili ilginç sözler,

<http://www.haber7.com/guncel/haber/1030195-tonon-pasadan-jitemle-ilgili-ilginç-sozler>, 23.05.2013. 2007 թ. ապրիլ-մայիս ամիսներին հիմնական ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցության ու մի քանի այլ կուսակցությունների նախաձեռնությամբ Թուրքիայի խոշոր քաղաքներում կազմակերպվեցին բազմահազարանոց

«Զիրվե» հրատարակչության գործով որպես ամբաստանյալ և վկա անցնող Իլքեր Չընարի ցուցմունքների համաձայն՝ «TUSHAD»-ը կազմավորվել է որպես «Էրզենեկոն» խմբավորման ռազմական թև և ազգային փոքրամասնությունների և քրիստոնյաների դեմ իրականացված գործողությունների հետևում կանգնած է եղել այդ կառույցը⁷⁴³: Ըստ մեղադրական եզրակացության՝ այդ կառույցն ստեղծվել է 1993 թ. Ջուլի կազմում որպես գերգաղտնի ստորաբաժանում գեներալ Հուրշիթ Թուլունի կողմից և 2007 թ. Մալաթիայում «Զիրվե» հրատարակչության աշխատակիցների սպանությունը պլանավորվել և հանձնարարվել է Թուլունի կողմից: Մեղադրական եզրակացության համաձայն՝ «JITEM»-ը գործել է «TUSHAD»-ին կից⁷⁴⁴:

2012 թ. փետրվարին, հարցաքննության ժամանակ Ի. Չընարը հայտարարել և մանրամասներ էր հրապարակել Թուրքիայի Թուրքիայի 8-րդ նախագահ Թ. Օզալի մահվան հանգամանքների հետ կապված՝ նշելով, որ նա թունավորվել է «TUSHAD»ի սպիտակ ուժեր (*Beyaz kuvvetler*) կոչվող ստորաբաժանման կողմից⁷⁴⁵: 2013 թ. ապրիլին Թ. Օզալի մահվան հանգամանքների հետաքննության մեղադրական եզրակացությունն ուղարկվել է դատարան, որում որպես կասկածյալ է ներգրավվել «Էրզենեկոնի» գործով մեղադրյալ գեներալ Լեվենթ Էրսյոզը: Մեղադրական եզրակացության համաձայն՝ Օզալը կազմակերպված ձևով սպանվել է Լ. Էրսյոզի կողմից և դրա հետևում կանգնած է եղել ՀՊԲ-ն: Որպես կասկածյալ նշվում է նաև

ցույցեր՝ նախագահի պաշտոնում Ա. Գյուլի թեկնածության ու ընդհանրապես ԱԶԿ-ի դեմ:

⁷⁴³ Տես՝ TUSHAD örgütün silahlı kanadı, <http://haber.stargazete.com/politika/tushad-orgutun-silahlı-kanadı/haber-753768>, 14.05.2013.

⁷⁴⁴ Տես՝ Katliamı TSK'nın gizli örgütü TUSHAD yaptı!, <http://www.medyafaresi.com/haber/82709/guncel-katliami-tsknin-gizli-orgutu-tushad-yapti.html>, 24.06.2012.

⁷⁴⁵ Տես՝ Gizli tanık, 'Özal'ı TUSHAD'ın Beyaz Kuvvetleri zehirledi', <http://www.internethavadis.com/hayatin-icinden/52020.html>, 01.12.2012.

Հ. Թուրնի անունը և նրա կողմից ստեղծված «TUSHAD» կազմակերպությունը⁷⁴⁶:

Փաստորեն, ստացվում է, որ «JITEM»-ն ու «TUSHAD»-ը բանակում և անվտանգության մարմիններում «Էրգենեկոնի» կողմից ստեղծված հատուկ ստորաբաժանումներ էին, որոնք ուղղորդվում ու կառավարվում էին մեկ կենտրոնից: Առաջինի հիմնական գործունեության թիրախում է գտնվել քրդական հարցը, իսկ երկրորդի՝ Թուրքիայի ազգային փոքրամասնությունները, ոչ մուսուլմաններն ու միսիոներական առաքելությունները: Տրապիզոնում կաթոլիկ հոգևորականի, Մալաթիայի սպանությունների ու Հ. Դինքի սպանության պլանավորումն ու իրականացումը եղել է այդ երկու միավորումների համատեղ համակարգմամբ⁷⁴⁷: «JITEM»-ի գործողությունները համակարգվել և վերահսկվել են «TUSHAD»-ի կողմից:

2013 թ. սկզբներին ԱՀԿ-ն թուրքական խորհրդարանի Հեղաշրջումների գործով հանձնաժողովին է ուղարկել մի շարք փաստաթղթեր, որոնց համաձայն՝ Թուրքիայի ԶՈւ-ի Հատուկ նշանակության ուժերի (բոսորագույն սաղավարտներ) «Մոբիլիզացիոն հետազոտության խորհրդին» կից գործել է «Կապի, որոնողափրկարարական ստորաբաժանումը» (MAK), որը բացի իրեն վերապահված լիազորություններից (ՔԲԿ-ի հետ համագործակցող տարրերի չեզոքացումն ու մեկուսացումը), գործել է անօրինական դաշտում: Այդ ստորաբաժանման հետ է կապված 2007 թ. նախագահական ընտրություններից առաջ Ա. Գյուլի, Բ. Արընչի և այլոց դեմ մահափորձերի ծրագրման միջոցով երկրում քառսային իրավիճակի ստեղծման փորձը, քաղաքական հետախուզության իրականացումը: Այդ ստորաբաժանումը Թուրքիայի մի շարք նահանգներում հասարակությանը առանձնացրել է թիրախային երեք խմբերի մեջ⁷⁴⁸: Այդ ստ-

⁷⁴⁶ Sıkı İste Özal dosyasındaki isimler,

http://www.kontrgerilla.com/mansetgoster.asp?haber_no=5265, 29.04.2013.

⁷⁴⁷ Sıkı Ergenekon'un Yeni Jitem'i: Tushad, <http://www.aktifhaber.com/ergenekonun-yeni-jitemi-tushad-622958h.htm>, 25.06.2012.

⁷⁴⁸ Sıkı MAK ve TUSHAD, <http://www.sabah.com.tr/Yazarlar/ilicak/2013/01/25/mak-ve-tushad>, 25.01.2013.

որաբաժանման մեջ կամ դրան կից, բացի սպաներից ու զինվորականներից, աշխատել է 650 քաղաքացիական անձ, իրենց հատուկ ծածկանուններով: Ըստ ԱՀԿ-ի հրապարակած տվյալների՝ այդ ստորաբաժանման ստեղծման նպատակը եղել է ՔԲԿ-ի դեմ պայքարը⁷⁴⁹: Հետաքննության ընթացքում ի հայտ եկած փաստաթղթերը ցույց են տվել, որ այս ստորաբաժանումը բավական ակտիվ գործել է հատկապես Թուրքիայի հարավ-արևելյան շրջաններում և իրականացրել սպանություններ, ինչի հետ կապված եղել են սպանությունների կազմակերպման պատրաստի ցուցակներ: Մալաթիայի ծանր հանցագործությունների դատարանում «Ջիրվե» հրատարակչության գործով դատաքննության ընթացքում ի հայտ եկած փաստերը վկայել են Հ. Դինքի, Սանտորիո հոգևորականի և «Ջիրվե» հրատարակչության ներկայացուցիչների սպանության գործում այդ ստորաբաժանման դերակատարությունը⁷⁵⁰:

Ինչպես իրավացիորեն նշել է շվեյցարացի հետազոտող Դ. Գենսերը՝ Թուրքիայում «Էրգենեկոն» խմբավորումն ու կից կառույցները Սառը պատերազմի տարիներին եվրոպական երկրներում և Թուրքիայում ստեղծված «Gladio» գաղտնի հակակոմունիստական բանակների ուղղակի շարունակությունն են, սակայն նախկին թուրքական կոնտրգերիլաների փոխարեն ստացել են պայքարի նոր դաշտ ու ոլորտներ⁷⁵¹:

Թուրքիայի ԶՈւ ԳՇ-ի ենթակայության տակ տարբեր ժամանակներում ստեղծվել և գործել են մի շարք աշխատանքային-հետազոտական խմբեր, կոմիտեներ ու կենտրոններ, որոնց մեծ մասը դուրս է եղել ԶՈւ-ի իրավասությունների շրջանակից: Դրանք հիմ-

⁷⁴⁹ Տե՛ս՝ Muhabere Arama Kurtarma birimi PKK'ye karşı kurulmuş, <http://www.ajansafirat.net/news/guncel/muhabere-arama-kurtarma-birimi-pkk-ye-karthy-kurulmuth.htm>, 09.01.2013.

⁷⁵⁰ Տե՛ս՝ Zirve Yayinevi davasında Özel Kuvvetler, <http://www.demokrathaber.net/guncel/zirve-yayinevi-davasinda-ozel-kuvvetler-h16355.html>, 07.03.2013.

⁷⁵¹ Տե՛ս՝ Gladio, Turkish Counter-Guerilla and Ergenekon, a devilish trio, http://www.todayzaman.com/newsDetail_getNewsById.action?load=detay&link=133013,01.02.2008.

նականում ստեղծվել և գործել են 1990-ական թթ.: Դրանց մի մասը վերաբերում էր ազգային անվտանգության ու արտաքին քաղաքականության ոլորտներին, ինչպես օրինակ՝ Կիպրոսի ու Հունաստանի հետ հարաբերությունների ուսումնասիրման «Հունաստան-Կիպրոս բաժինը» (*Yunanistan-Kıbrıs Dairesi*), անվտանգության խնդիրների հետազոտությունների «Վստահության աշխատանքային խումբը» (*Güven Çalışma Grubu*), հարևան երկրներում հրթիռային ոլորտում սպառազինումն ուսումնասիրելու և հակաքայլեր ձեռնարկելուն նպատակաուղղված «Բարբարոս աշխատանքային խումբը» (*Barbaros Çalışma Grubu*), քրդերի դեմ պայքարի «Արևելյան խումբը» (*Doğu Çalışma Grubu*) և այլն⁷⁵²: Սակայն ԳՇ-ի ենթակայության տակ ստեղծված մի քանի աշխատանքային նման խմբերի գործունեությունը դուրս էր մնում բանակի իրավասության շրջանակից, որոնք վերաբերում էին արտաքին քաղաքականությանն ու ներքաղաքական գործընթացներին: 1990-ական թթ. սա պայմանավորված էր Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում բանակի հրամանատարության ունեցած մեծ ազդեցությամբ, և ԳՇ-ն իրեն էր վերապահում երկրում մի շարք հիմնախնդիրների վերահսկողությունն ու որոշումների կայացումը: Դրանցից էին նույն այդ ժամանակաշրջանում ստեղծված ԵՄ-ի հետ հարաբերությունների ուսումնասիրման «ԵՄ աշխատանքային խումբը», Կովկասում տեղի ունեցող գործընթացների հետազոտության «Կովկասի աշխատանքային խումբը» և երկրի ներսում հետադիմականության ու քաղաքական իսլամի դերակատարությանը հետևելու նպատակով հիմնված «Արևմտյան աշխատանքային խումբը» (*Batı Çalışma Grubu*):

Այս խմբերի մեջ առանձնանաում էր հատկապես «Արևմտյան աշխատանքային խումբը», որը ստեղծվել էր 1997 թ. փետրվարի 28-ի հետմոդեռն հեղաշրջման ընթացքն ու ԱԱԽ-ի որոշումների կատարմանը հետևելու նպատակով, և գործունեությունն ուղղված էր երկրում հետադիմական գործընթացներին հետևելուն և իսլամա-

⁷⁵² Ştu` Müge Aknur, TSK'nin Dış Politika Üzerindeki Etkisi, Türkiyenin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010., s. 138.

կան ուժերի դեմ պայքարելուն⁷⁵³: 2003 թ. այդ խմբի փակվելուց հետո, դրա փոխարեն Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարության հետախուզական վարչության կազմում ստեղծվում է քաղաքական իսլամի ուսումնասիրման և ԱԶԿ-ի գործունեությանը հետևող «Հանրապետություն աշխատանքային խումբը» (*Cumhuriyet Çalışma Grubu*): Այս խմբի ուշադրության կենտրոնում են եղել Թուրքիայի զինվորականության համար անվտանգության սպառնալիք ներկայացնող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին ԵՄ-ի հետ հարաբերությունները, Կիպրոսի, Հյուսիսային Իրաքի հիմնախնդիրները, քաղաքական իսլամն ու հայկական լոբբիի գործունեությունը, որի շրջանակներում էլ պատրաստվել են համապատասխան զեկույցներ⁷⁵⁴: 1997 թ. փետրվարի 28-ի հետմոդեռն հեղաշրջման գործով անցկացվող հետաքննության արդյունքում բացահայտվել են «Արևմտյան աշխատանքային խմբին» վերաբերող փաստաթղթեր ու արձանագրություններ, որոնց համաձայն՝ այդ խմբի նիստերին մասնակցել են բարձրաստիճան զինվորականներ՝ այդ ժամանակաշրջանում ԳՇ պետի տեղակալի պաշտոնն զբաղեցրած գեներալ Չեվիք Բիրի գլխավորությամբ⁷⁵⁵:

«Էրզենեկոն» խմբավորման, վերոնշյալ կազմակերպությունների ու ստորաբաժանումների բացահայտումը տանում է դեպի վերջին տարիներին ուսումնասիրությունների ուշադրության կենտրոնում գտնվող «խորքային պետության» գաղափարին, որը ոչ ավելի ինստիտուցիոնալ կառույց կամ մարմին է, այլ Հանրապետական Թուրքիայում գոյություն ունեցած շահային տարբեր շրջանակների ու խմբերի հավաքական անվանումը, որոնց միավորել է ընդհանուր գաղափարախոսությունն ու գործողությունների միասնությունը:

⁷⁵³ Sbu ` Batı Çalışma Grubu'nun fişlediği mağdurlar CÇG'ye tepkili, http://www.zaman.com.tr/gundem_bati-calisma-grubunun-fisledigi-magdurlar-ccgye-tepkili_700231.html, 10.06.2008.

⁷⁵⁴ Sbu ` Müge Aknur, TSK'nin Dış Politika Üzerindeki Etkisi, Türkiyenin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efeğil, Ankara, Nobel yayın, 2010, ss. 139-140.

⁷⁵⁵ Sbu ` BÇG toplantısında hükümeti devirme planı, <http://gundem.bugun.com.tr/bcgden-hukumeti-devirme-plani-haberi/222780>, 15.02.2013.

«Էրզենեկոնի» և վերջին տարիներին Թուրքիայում գործող տարբեր գաղտնի կազմակերպությունների ու ստորաբաժանումների բացահայտումն ու հետաքննությունը ակնհայտ դարձրեցին «խորքային պետության» ուղղորդմամբ ու համակարգմամբ գործող ուժերի ու կառույցների միջև սերտ կապերը⁷⁵⁶: Վերոնշյալ բոլոր կառույցներն ու ստորաբաժանումները, փաստորեն, իրենցից ներկայացնում են ցանցային մի համակարգ, որի հետևում կանգնած են եղել «խորքային պետության» ազդեցության խմբերն ու ներկայացուցիչները՝ բարձրաստիճան զինվորականների գլխավորությամբ:

Հատկապես «Էրզենեկոնի» գործով հետաքննության ու դատավարության ընթացքում բացահայտված այս գաղտնի կառույցներն ու ստորաբաժանումները խոր արմատներ ունեն Թուրքայի հանրապետությունում, որոնք գալիս են դեռ Սառը պատերազմի սկզբներից: Ժամանակի ընթացքում այդ կառույցները նորովի են վերակազմավորվել՝ իրենց պայքարի հիմքում դնելով նոր մարտահրավերներն ու խնդիրները: 1990-ական թթ. հատկապես դրանց գործունեության մեջ հիմնական տեղ էին զբաղեցնում ՔԲԿ-ի դեմ գործողությունները, անջատողականության ու հետադիմական ուժերի դեմ պայքարը, քաղաքական անցանկալի տարրերի մեկուսացումը և այլն: Այդ ժամանակաշրջանում զինվորականության ազդեցիկ դերը երկրի քաղաքական կյանքում և ազգային անվտանգության հայեցակարգերի սահմանած սպառնալիքներն ուղղակի այդպիսի կառույցներին գործունեության դաշտ էին ապահովում: ԱԶԿ-ի իշխանության գալն այդ շրջանակների կողմից ընկալվում էր որպես առաջնային սպառնալիք աշխարհիկ հանրապետության համար: ԱԶԿ-ի բավական սահուն գործողություններն ու բարեփոխումները զինվորականության դերի նվազեցման հարցում հնարավորություն տվեցին բացահայտել առաջին հերթին հենց այդ ուժի համար սպառնալիք ներկայացնող տարրերին ու ուժերին:

⁷⁵⁶ Տես՝ Արսեն Ավագյան, Թուրքիայում խորքային պետության և Էրզենեկոնի կապի շուրջ, Արմենպրես, 03.05.2011:

ԱՄՓՈՓՈՒՄ

20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին Թուրքիան վերածնակերպեց ինչպես իր արտաքին քաղաքականությունը, այնպես էլ՝ պաշտպանական քաղաքականությունը՝ համապատասխանեցնելու նոր աշխարհաքաղաքական իրողություններին ու մարտահրավերներին: ԶՈւ-ի համալիր արդիականացման ռազմավարությունն աննախադեպ էր հանրապետական Թուրքիայի պատմության մեջ, քանի որ թուրքական բանակը համալրվում էր ժամանակակից սպառազինությամբ ու դրանում էական դերակատարություն ստանձնում ազգային ռազմաարդյունաբերական համալիրը: Արդիականացման ծրագրերն ու իրականացված քայլերը մեծ հաշվով Թուրքիան տարածաշրջանում ամենաազդեցիկ ու գերիշխող ռազմական ուժ դարձնելու նպատակ են հետապնդում, ինչը պայմանավորված է այդ երկրի աշխարհաքաղաքական հավակնություններով:

Հանրապետական Թուրքիայի պաշտպանական համակարգի կայացման ու զարգացման գործում բավական մեծ է եղել ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի անդամ երկրների աջակցությունը: Հենց ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո այդ երկրի ԶՈւ-ը կազմավորվեցին ամերիկյան օրինակով ու շարունակաբար սկսեցին համալրվել արևմտյան ռազմական տեխնիկայով: Թուրքիայի ԶՈւ-ի զարգացման գործում առանձնապես մեծ է եղել հատկապես ԱՄՆ-ի դերը:

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի պաշտպանական ու անվտանգային քաղաքականությունն էական վերափոխումների ենթարկվեց, ինչը պայմանավորված էր նոր աշխարհաքաղաքական իրողություններում Թուրքիային ուղղված մարտահրավերների, սպառնալիքների վերագնահատմամբ: Թուրքիան 90-ական թթ. բավական լարված հարաբերությունների մեջ էր իր որոշ հարևանների հետ և նրանց դիտարկում էր որպես ռազմական սպառնալիք ներկայացնող երկրներ: Նման իրավիճակում Թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավի համար առաջնահերթ

խնդիր էր դիտվում երկրի բազմաճակատ պաշտպանությունը, ըստ այդմ էլ՝ պաշտպանության համակարգի զարգացումն ու հզոր և գերսպառազինված ՁՈւ-ի առկայությունը, ինչի նպատակով էլ նախաձեռնվեցին արդիականացման լայնամասշտաբ ծրագրեր:

1990-ական թթ. նախաձեռնված բանակի արդիականացման գործընթացը նոր աշխարհաքաղաքական փոփոխություններին համարժեք պատասխանելու գործընթաց էր: Բացի այդ, մի շարք զարգացումներ ցույց տվեցին, որ Թուրքիայի ՁՈւ-ը պատրաստ չեն ժամանակակից ռազմական գործողությունների իրականացմանը: 1990-ականների սկզբից Թուրքիայի ՁՈւ-ի արդիականացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները բավական արդյունավետ եղան, ինչը հնարավորություն տվեց թուրքական բանակն ապահովել ժամանակակից սպառազինությամբ, իրականացնել կառուցվածքա-կազմակերպչական բարեփոխումներ, համապատասխանեցնել արդի չափանիշներին: 1990-ական թթ. Թուրքիայի ՁՈւ-ի սպառազինության արդիականացման շրջանակում հիմնականում ԱՄՆ-ից ու եվրոպական երկրներից ձեռք բերված ռազմական տեխնիկան և սպառազինությունը կարելի է համարել ժամանակակից և պահանջված, ինչը զգալիորեն բարձրացրեց թուրքական բանակի մարտունակությունը:

1970-ական թթ. վերջերից Թուրքիայում առաջնային դարձավ տեղական, ազգային ռազմաարդյունաբերության զարգացման խնդիրը, իսկ 1980-ական թթ. կեսերից պետական հատուկ ռազմավարության շնորհիվ հնարավոր դարձավ դնել ռազմաարդյունաբերական համալիրի հիմքերը: Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի ենթակառուցվածքների ստեղծման ու տեխնոլոգիական աջակցության առումով մեծ է եղել ՆԱՏՕ-ի անդամ երկրների ու հատկապես ԱՄՆ-ի աջակցությունը:

Արդեն 1990-ական թթ. բանակի արդիականացման գործում մեծ դերակատարություն ունեցավ տեղական ռազմաարդյունաբերական համալիրը, որի զարգացումը մեծ հաշվով նպատակ ուներ նվազեցնելու երկրի կախվածությունն արտաքին մատակարարնե-

րից և սեփական բանակի կարիքներն ապահովելու տեղական միջոցներով: Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումն ու այդ ոլորտում գրանցած հաջողությունները պետական հստակ ռազմավարության ու ներդրումների արդյունք էր: Ռազմական արդյունաբերության ուղղությամբ Թուրքիայի կողմից իրականացված քաղաքականությունը կարելի է համարել հաջողված: Ձեռքբերումներն այդ ոլորտում բավական ակնհայտ են: Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը ոչ միայն հնարավորություն է տալիս Թուրքիային ապահովել իր բանակի ռազմատեխնիկական կարիքների մի մասը, այլ նաև դուրս գալ սպառազինության միջազգային շուկա: Ռազմական ներուժն ու ռազմաարդյունաբերական համալիրի ձեռքբերումները զուգորդվում են Թուրքիայի տարածաշրջանային, արտաքին քաղաքական ու ռազմաքաղաքական հավակնություններով:

Պաշտպանության ու անվտանգության համակարգում իրականացված կազմակերպակառուցվածքային, գործառության ղեկավարման փոխումները պայմանավորված են անվտանգության մարմինների գործունեության ոլորտում առկա թերություններով ու բացթողումներով: Անվտանգության մարմինների միջև փոխգործակցության համակարգման ուղղությամբ իրականացված քայլերը զգալիորեն կրարձրացնեն անվտանգության մարմինների գործունեության արդյունավետությունն ու ոլորտի համակարգումը:

Հատկապես 2000-ական թթ. առաջին տասնամյակի Թուրքիայի ռազմական արդիականացման նախագծերն ու ծրագրերը, ձեռքբերվող սպառազինության փաստերը բերում են կարևոր հետևություն: 1990-ականների վերջերից սկսված լայնամասշտաբ արդիականացման ռազմավարությունը և ավելի ուշ արդեն գործադրված քայլերը աննախադեպ են Թուրքիայի սպառազինման առումով: Նույնիսկ Մառը պատերազմի ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի կողմից տրամադրվում էր հսկայական ֆինանսական ու նյութատեխնիկական ռազմական օգնություն, դրանով հանդերձ թուրքական բանակը գուտ ռազմատեխնիկական, արդիական սպա-

ռազինության առումով բավական թույլ էր և զիջում էր ՆԱՏՕ-ի շատ անդամների: Չնայած զգալի հագեցվածությանը՝ թուրքական բանակի սպառազինության հիմնական մասը բավականաչափ հնացած էր և ժամանակի առումով չէր համարվում արդիական: Ձեռնարկված արդիականացման քայլերը, ձեռքբերված և դեռ սպասվող սպառազինությունն արդեն թուրքական բանակին տալիս են նոր որակ՝ ժամանակակից սպառազինության առումով և զգալի գերակայություն իր հարևանների նկատմամբ:

Թուրքական բանակի արդիականացումն ավելի ակնառու է դառնում հատկապես ՌՕՈՒ-ում: Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը, կարևորելով ռազմական ավիացիայի դերը ժամանակակից ռազմական գործողություններում, առանձանահատուկ ուշադրություն դարձրեց հատկապես ռազմական ավիացիայի արդիականացմանը: Ի տարբերություն նախորդ ժամանակների՝ հատկապես 2000-ական թթ. առաջին տասնամյակում արդեն թուրքական օդուժի արդիականացման ծրագրերի արդյունքում հնարավոր կլինի այն մոտեցնել ժամանակակից մարտահրավերներին համապատասխան լիովին արդիական չափանիշներին:

Թուրքիայի սպառազինման առումով բավական հավակնոտ ծրագրեր առաջադրվեցին հատկապես իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման տարիներին: Թուրքիայի ԶՈՒ-ի արդիականացման տեսանկյունից էական ու հիմնարար նշանակություն ունեցող նախագծերի մեկնարկն ու պայմանագրերի ստորագրումը՝ ազգային տանկերի արտադրություն, 5-րդ սերնդի կործանիչների ձեռքբերում, հեռահար ՀՕՊ համակարգի զարգացում, տիեզերական հետախուզության համակարգերի ստեղծում, միջին հեռահարության հրթիռների արտադրություն և այլն, առաջադրվեցին և մեկնարկեցին հենց ԱԶԿ-ի կառավարման տարիներին:

Թուրքիայի ռազմական ներուժն ու ազգային ռազմաարդյունաբերական համալիրը Թուրքիային մեծ հաշվով հնարավորություն են տալիս հանդես գալու որպես ռազմական մատակարար, ինչը լուրջ

հաղթաթուղթ է դիտվում այդ երկրի ռազմաքաղաքական հավակնությունների իրականացման ճանապարհին: Տարբեր երկրներին ռազմական օգնության տրամադրումն առաջին հերթին գուգորդվում է Թուրքիայի տարածաշրջանային, ռազմաքաղաքական հավակնություններով, ինչն առավել պարզորոշ է դառնում Ադրբեջանի, Վրաստանի ու թյուրքալեզու երկրների պարագայում: Եթե մի կողմից Արևմտյան զարգացած երկրների հետ իր ռազմական համագործակցության մեջ Թուրքիան ինքն էր հանդիսանում սպառազինության ոլորտում դեռևս մեծ կախում ունեցող երկիր և օգտվում այդ երկրներից թե սեխնուղղիական, և թե ռազմական տեխնիկայի ուղղակի մատակարարումներից, ապա հատկապես վերջին տարիներին, շնորհիվ իր ռազմաարդյունաբերության զարգացման, ինքն է փորձում դառնալ այնպիսի երկրների մատակարար, որոնց նկատմամբ ռազմատեխնիկական առումով ունի զգալի գերակայություն և ռազմաքաղաքական հավակնություններ:

Թուրքիայի աննախադեպ սպառազինման միտումներն ու գեր-ռազմականացումը հղի են բավական լուրջ մարտահրավերներով տարածաշրջանային կայունության ու անվտանգության համար: Իր անմիջական հարևանների նկատմամբ ռազմական գերակայությունն ու ռազմականացման տեմպերը կարող են տարածաշրջանում բերել նոր սպակայունացում ու ռազմական բախումներ: Հատկապես վերջին շրջանում իր որոշ հարևանների ու տարածաշրջանի երկրների՝ մասնավորապես Կիպրոսի Հանրապետության ու Սիրիայի Արաբական Հանրապետության հետ ռազմական վերջնագրերի լեզվով խոսելը պայմանավորված են նրանց նկատմամբ ռազմական ուժերի գերակայությամբ ու հնարավորություններով: Այս համատեքստում՝ նկատի ունենալով Թուրքիայի անվտանգային քաղաքականության անկանխատեսելիության բարձր աստիճանը, կառավարող շրջանակների ագրեսիվ վարքագիծը, ռազմաքաղաքական հավակնությունները և իր մի շարք հարևանների հետ ոչ բարիդրացիական հարաբերությունները՝ կարելի է եզրակացնել, որ

Թուրքիայի կողմից ռազմական ուժի կիրառման հավանականությունը բավական բարձր է:

Իշխանության գալուց հետո ԱԶԿ-ի համար առաջնահերթ դարձավ բանակ-քաղաքականությունն փոխհարաբերությունների վերաձևումը, ինչն այդ քաղաքական ուժի հետագա կենսագործունեության լայն դաշտ կարող էր ապահովել: Այն ուղղակի հրատապ պահանջ էր, իսկ ԱԶԿ-ն բավական ճկուն գտնվեց այդ հարցում: Առաջին հերթին ԵՄ-ին անդամակցությամբ պայմանավորված պարտավորությունների կատարման հրամայականով ԱԶԿ-ն, առանց լուրջ դիմակայության մտնելու բարձրագույն զինվորականության հետ, կարողացավ էականորեն սահմանափակել զինվորականության դերակատարությունը քաղաքական գործընթացներում, ինչն աննախադեպ էր հանրապետական Թուրքիայում: Առանցքայինն այս հարցում ԱԱԽ-ի բարեփոխումներն էին, որով զինվորականությունը զրկվեց կարևորագույն դեր ունեցող իր լծակից: ԱԶԿ կառավարությանը իր կառավարման ավելի քան տասը տարիների ընթացքում հաջողվեց անվտանգության համակարգը դնել քաղաքացիական իշխանությունների վերահսկողության տակ և հաշվետու դարձնել նրա առաջ: Անդրադառնալով ԱՀԿ-ի «քաղաքացիականացմանը» և վերջին տարիներին ձեռնարկված արդիականացման քայլերին, կարելի է փաստել, որ դրանք ուղղված էին մի կողմից այդ կազմակերպությունը լիովին դնելու քաղաքացիական իշխանությունների վերահսկողության ներքո, մյուս կողմից էլ դրա կառուցվածքային ու գործառնական փոփոխություններով համապատասխանեցնել Թուրքիայի արտաքին քաղաքականության հրամայականներին ու աշխարհաքաղաքական գործընթացներին: ԱՀԿ-ի համակարգում կատարվող բարեփոխումներին զուգահեռ Թուրքիայի կառավարության կողմից 2010 թ. իրականացվեցին նաև որոշ բարեփոխումներ արտաքին գործերի նախարարությունում՝ հատկապես կառուցվածքային առումով: Թուրքիայի գործող կառավարության նախաձեռնությամբ հատկապես հետախուզական մարմինների ու ԱԳՆ-ի համակարգում իրականացվող կառուցվածքային-

կադրային փոփոխությունները միտված են նաև կարծրատիպային թե գործառնական, և թե աշխարհայացքային հին մոտեցումներից ձերբագատվելու, նոր «հրամայականների» ու «առաքելությունների» համար կարող ու գաղափարապես պատրաստված մասնագիտական-կադրային ներուժի մոբիլիզացմանը:

Այն, ինչ թեկուզ մեկ տասնամյակ առաջ աներևակայելի կլիներ, ԱԶԿ-ն կարողացավ կենսագործել բավական սահուն և ճկուն:

**Թուրքիայի ռազմաարդյունաբերության և սպառազինության
ձեռքբերման ոլորտում որոշումների կայացման ընթացակարգն
ու մեխանիզմները**

Ներկայում Թուրքիայում ռազմաարդյունաբերության և սպառազինության ձեռքբերման ոլորտում որոշումների կայացման գործընթացն ու մեխանիզմները գործում են դեռևս 1985 թ. հաստատված մեխանիզմներով:

Պաշտպանական արդյունաբերության բարձրագույն համակարգող խորհուրդը (*Savunma Sanayii Yüksek Koordinasyon Kurulu*) գումարվում է առնվազն տարին 2 անգամ երկրի վարչապետի և խորհրդի 13 անդամների մասնակցությամբ, կառավարության կողմից հաստատված ընդհանուր ռազմավարական ծրագրին համապատասխան իրականացնում ծրագրավորումն ու համակարգումը, տալիս հանձնարարականներ և ՁՈւ ԳՇ-ի ռազմավարական ծրագրի շրջանակներում որոշում կայացնում անհրաժեշտ սպառազինության մատակարարման մեխանիզմների ու եղանակների հարցում:

Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն (*Savunma Sanayii İcra Komitesi*) երկրի վարչապետի, ՁՈւ ԳՇ պետի և պաշտպանության նախարարի մասնակցությամբ որոշում է կայացնում անհրաժեշտ զինատեսակների տեղական արտադրության կամ ուղղակի արտերկրից գնումների ճանապարհով դրանց մատակարարման վերաբերյալ, հայտարարում հայտամրցութենք, ինչպես նաև ձեռքբերվելիք սպառազինության ուսումնասիրման, արտադրության, նախատիպի ստեղծման, երկարաժամկետ պատվերների ու այլ ֆինանսատնտեսական խնդիրների հետ կապված ՊԱԳՎ-ին տալիս հանձնարարականներ:

Մյուս մարմինը Ռազմաարդյունաբերության աջակցման հիմնադրամն է (*Savunma Sanayii Destekleme Fonu*), որը հանդիսանում է

ռազմաարդյունաբերական ու ռազմատեխնիկական նախագծերի ֆինանսավորողը:

Պաշտպանական արդյունաբերության վերահսկողության խորհուրդը (*Savunma Sanayii Denetleme Kurulu*), որի անդամները նշանակվում են կառավարության աշխատակազմի, ՊՆ-ի ու Ֆինանսների նախարարության կողմից 2 տարի լիազորությունների ժամկետով, իրականացնում է ՊԱԳՎ-ի ու հիմնադրամի բոլոր գործառույթների վերահսկողությունը⁷⁵⁷:

ՊԱԳՎ-ի հիմնական գործառույթներն են՝ արտադրական ոլորտի հնարավորությունների վերակազմակերպումն ու միավորումը պետական հստակ քաղաքականության շրջանակներում, ռազմական արդյունաբերության պետական ու մասնավոր հատվածի պլանավորման աշխատանքները, ռազմաարդյունաբերական նախագծերի զարգացմանն ու նախատիպերի մշակմանն աջակցությունը, տեխնիկական ու տնտեսական գնահատումների ու որակի վերահսկողության իրականացումը, պետության անունից ոլորտի ընկերությունների հետ պայմանագրերի ստորագրումն ու արտադրական գործընթացի օժանդակությունը, արտադրանքի արտահանման և առևտրային ծրագրերի համակարգումը⁷⁵⁸:

Թուրքիայի ԶՈւ-ի կարիքների ապահովումն իրականացվում է ինչպես ուղղակի արտասահմանյան գնումների, այնպես էլ տեղական ռազմաարդյունաբերության միջոցով: Այդ գործընթացն անցնում է կառավարման հատուկ համակարգի մի քանի փուլեր: Նախ, ԶՈւ-ի կարիքների ապահովման համար որևէ նախագիծ որոշվում և հավանության էր արժանանում ԳՇ-ի կողմից, որից հետո հաստատվում Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում: ԳՇ-ի, ՊՆ-ի ու ՊԱԳՎ-ի համագործակցությամբ կազմվում է նախագծի պլանավորման ու բյուջեի համակարգը, որից

⁷⁵⁷ Sıkı ` Savunma Sanayii M¼steřarlięı 2008 Yılı Faaliyet Raporu, ss. 14-17.

⁷⁵⁸ Sıkı ` Defence 21, Savunma Sanayii M¼steřarlięı, Mart 2008,

http://www.ihracat.ssm.gov.tr/.../SAVUNMADERGILERI/DEFENCE21_DERGISI_Mart_2008.doc.

հետո գնման կամ արտադրական գործընթացը կառավարում և իրականացնում է ՊԱԳՎ-ն⁷⁵⁹:

Ազգային պաշտպանության ծրագրավորման գործողություններն (*Milli Savunma Planlama Faaliyetleri*) Ազգային պաշտպանական ռազմավարության հայեցակարգի ու այլ հիմնարար փաստաթղթերի հիման վրա, իրականացվում են անհրաժեշտ սպառազինության ձեռքբերմանն ուղղված պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման համակարգին համապատասխան: Պլանավորման նախնական գործընթացում հստակեցվում են ԶՈւ-ին անհրաժեշտ սպառազինության կարիքները, կազմվում դրանց ապահովմանն ուղղված ռազմավարական նպատակային պլան, ծրագրավորման գործընթացում արդեն կազմվում Մատակարարման տասնամյա ծրագիրը (*On Yıllık Tedarik Programı*), իսկ հետո՝ նախագծի բյուջեն:

⁷⁵⁹ S&u` Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, Stratejik Yol Haritasi, 2007, http://www.ssm.gov.tr/TR/kurumsal/Documents/SSM_SP_2007_2011.pdf.

Հապավումների ցանկ

- ԶՈՒ-Զինված ուժեր (թուրք. Silahlı Kuvvetler)
- ՊՆ-Պաշտպանության նախարարություն (թուրք. Savunma Bakanlığı)
- ԳՇ-Գլխավոր շտաբ (թուրք. Genel Kurmay)
- ՑՈՒ-Ցամաքային ուժեր (թուրք. Kara Kuvvetleri)
- ՌՕՈՒ-Ռազմաօդային ուժեր (թուրք. Hava Kuvvetleri)
- ՌԾՈՒ-Ռազմածովային ուժեր (թուրք. Deniz Kuvvetleri)
- ԺԳՀ-Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարություն (թուրք. Jandarma Genel Komutanlığı)
- ԱԳՏ-Անվտանգության գլխավոր տնօրինություն (թուրք. Emniyet Genel Müdürlüğü)
- ԱԱՀ-Առափնյա անվտանգության հրամանատարություն (թուրք. Sahil Güvenlik Komutanlığı)
- ՆԳՆ-Ներքին գործերի նախարարություն (թուրք. İçişleri Bakanlığı)
- ԱԱԽ-Ազգային անվտանգության խորհուրդ (թուրք. Milli Güvenlik Kurulu)
- ԱԱՔՓ-Ազգային անվտանգության քաղաքական փաստաթուղթ (թուրք. Milli Güvenlik Siyaset Belgesi)
- ԱՀԿ-Ազգային հետախուզական կազմակերպություն (թուրք. Milli Istihbarat Teşkilatı)
- ԲՌԽ-Բարձրագույն ռազմական խորհուրդ (թուրք. Yüksek Askeri Şura)
- ԹԱՄԺ-Թուրքիայի Ազգային մեծ ժողով (թուրք. Türkiye Büyük Millet Meclisi)
- ԱԶԿ-Արդարություն և զարգացում կուսակցություն (թուրք. Adalet ve Kalkınma Partisi)
- ՊԱԳՎ-Պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչություն (թուրք. Savunma Sanayii Müsteşarlığı)
- ԹԶՈՒԶՀ-Թուրքիայի զինված ուժերի զարգացման հիմնադրամ (թուրք. Türk Silahlı Kuvvetleri Güçlendirme Vakfı)

ՌԱԱՀ - Ռազմաարդյունաբերության աջակցման հիմնադրամ
(թուրք. Savunma Sanayii Destekleme Fonu)
ՀՕՊ-Հակաօդային պաշտպանություն (թուրք. Hava Savunma)
ՀՀՊ-Հակահրթիռային պաշտպանություն (թուրք. Füze Savunma)
ԱԹՄ-Անօդաչու թռչող սարք (թուրք. İnsansız Hava Aracı)
ԵՍԶՈՊ-Եվրոպայում սովորական զինված ուժերի պայմանագիր
(թուրք. Avrupa'da Konvansiyonel Silahlı Kuvvetler Antlaşması)
ԶՈԶ-Զանգվածային ոչնչացման զենք (թուրք. Kitle Imha Silahı)
ԶՄ-Զրահամեքենա (թուրք. Zırhlı aracı)
ՀՄՄ-Հետևակի մարտական մեքենա (թուրք. Piyade savaş aracı)
ՀԿՌՀ-Համազարկային կրակի ռեակտիվ համալիր (թուրք. Roket atar sistemi)
ՌՏԿ-Ռադիոտեղորոշիչ կայան (թուրք. Radar istasyonu)

Левон Овсепян

Модернизация оборонного комплекса и реформы в сфере безопасности Турции

Резюме

В последнем десятилетии модернизация оборонного комплекса и реформы в сфере безопасности Турции приняли системный характер. Модернизация турецкой армии, программы вооружения и шаги к развитию местного оборонно-промышленного комплекса получили новый виток, особенно в годы правления партии “Справедливость и развитие” (ПСР). Параллельно с этим, были предприняты серьезные, не имевшие аналога в истории республиканской Турции, шаги по реформированию системы безопасности. Принимая во внимание геополитические процессы, нестабильную обстановку и очаги напряжения в регионе, выявление и анализ военно-технической политики Турции становится актуальным. Это дает возможность оценить военную мощь Турции и степень ее влияния, при непредсказуемом развитии событий.

Изучение темы связано со стратегией национальной безопасности и военной доктриной Республики Армения. В стратегии национальной безопасности Армении в качестве внешней угрозы указано, что при опасности применения силы со стороны Азербайджанской Республики в отношении Республики Армения и Нагорно-Карабахской Республики, Турцкая Республика, будучи стратегическим союзником Азербайджана, может также представлять серьезную угрозу.

В военной доктрине Республики Армения в качестве внешней угрозы военной безопасности указаны процессы неконтролируемого вооружения и перевооружения, гонка вооружений, создания войсковых подразделений у границ Республики Армения, крупные скопления войск и их передвижение, в том числе под видом проведения военных учений. Создание военных коалиций против Армении, их укрепление и расширение, в частности, военный союз Турции и

Азербайджана, а также стремление Азербайджана к усилению блокады Республики Армения, что также может рассматриваться как применение силы, - все эти процессы могут таить в себе серьезную угрозу для военной безопасности Армении.

Становится очевидным, что крупномасштабные проекты военной модернизации со стороны Турции становятся причиной новой гонки вооружений в регионе. Кроме того, тесное военное и военно-техническое сотрудничество между Турцией и Азербайджаном представляют прямую угрозу национальной безопасности Армении.

В книге детально представлены становление и развитие оборонной системы Турции после членства страны в НАТО, а также серьезная поддержка и роль стран западного блока в этом процессе. После вступления в НАТО, Турция стала носителем и последователем геополитических интересов этой военной системы. В частности представлены проекты военно-технической, материальной и финансовой поддержки Турции со стороны США и стран НАТО в годы «холодной войны». Это способствовало военно-техническому оснащению и системному становлению турецкой армии.

После окончания «холодной войны» перед политическими и в особенности военными кругами Турции встал вопрос необходимости пересмотра и прояснения внешней и оборонной политики, а также стратегии безопасности. Геополитические перемены и развития, начавшиеся окончанием «холодной войны», заставили Турцию более осторожно и последовательно прояснять новые вызовы и приоритеты международной, региональной безопасности и оборонной политики.

В этой главе дается анализ основным тенденциям, преобразованиям вызовов и концепции оборонной политики и политики безопасности Турции после окончания «холодной войны». Итак, после «холодной войны» оборонная политика Турции стремится приспособиться к новым региональным и геополитическим реалиям и в какой-то мере прояснить возможности самообороны в контексте новых вызовов. В этот период основным принципом оборонной политики Турции было последовательное усиление ВС и достижение военного доминирования в регионе.

После окончания «холодной войны» нестабильность у турецких границ и неопределенность вынудили военную верхушку Турции создать мощную военную машину для противостояния новым вызовам и курдскому сепаратизму, угрожающему унитарности Турецкого государства. Уже в начале 1990-ых годов командование армии начало разрабатывать долгосрочные проекты по всесторонней модернизации армии. Именно модернизацией армии и закупками вооружений было обусловлено постепенное увеличение военных расходов Турции в 90-ых. После окончания «холодной войны» на Западе стали проявляться тенденции сокращения вооружений, а в Турции наоборот – вооружение армии поднялось на новый уровень. Если в промежутке 1985-1996гг. в европейских странах НАТО военные расходы сокращались в год на 1%, то в тот же период оборонные расходы Турции увеличивались в год в среднем на 4%. Интересно, что в 1992-1996гг. Турция была абсолютным лидером среди стран НАТО по импорту вооружений, а на Среднем Востоке уступала лишь Саудовской Аравии. В 1996г. военные круги Турции опубликовали 30-летний широкомасштабный план модернизации турецких ВС стоимостью в 150 миллиардов долларов.

В общей сложности, параллельно с растущей гонкой вооружений на Ближнем Востоке и милитаризации Греции, Турция стремится к увеличению собственной базы вооружений ВС. В частности развитие ракетных технологий Ирана, тенденции вооружения Сирии и Греции серьезно беспокоят Турцию, которая, в свою очередь, в противовес этому, стремится создать военно-политические союзы и увеличить военно-техническую базу.

Сегодня турецкий оборонно-промышленный комплекс играет большую роль в модернизации турецкой армии. В 1970-ых годах развитие собственного оборонно-промышленного комплекса стала основной задачей для турецкого военно-политического руководства, а в середине 1980-ых под особой опекой государства в Турции положили основу развития оборонно-промышленного комплекса. Огромной была роль стран НАТО и, в частности, США в создании инфраструктур комплекса и технологической поддержке. Сегодня оборонно-промышленный комплекс Турции успешно развивается, что подт-

верждается цифровыми показателями. Уже в 1990-ых годах в модернизации армии большая роль была отведена именно оборонно-промышленному комплексу, развитие которого имела цель снизить зависимость страны от внешних поставщиков и обеспечивать собственную армию местными ресурсами. Развитие оборонно-промышленного комплекса и успехи в этой области связаны с четкой государственной стратегией и инвестициями. Предпринятые шаги Турции в развитии оборонно-промышленного комплекса можно считать успешными. Это развитие позволяет Турции не только обеспечивать часть военно-технических нужд армии, но и выйти на международный рынок вооружений. Если в 2003 г. уровень обеспечения военных нужд ВС с помощью местной промышленности составил 25%, то в 2008 г. он достиг 44,2%, в 2009г. – 45,7%, а в 2010 уровень обеспечения превзошел все ожидания властей, достигнув 52,1%, в 2011г. – 54%. Большая роль отведена экспорту турецкой военной продукции и шагам, предпринимаемым в этом направлении. Согласно официальным данным, в конце 2012 г. экспорт продукции оборонно-промышленного комплекса и гражданского авиастроения превысил 1 миллиард 300 миллионов долларов, что на 52% больше прошлогоднего показателя.

В годы правления партии “Справедливость и развитие” в течение более 8 лет 90% плана модернизации ВС, стоимостью в 24 миллиарда долларов, была осуществлена с помощью местного оборонно-промышленного комплекса. То есть импорт готовой военной продукции из-за рубежа достиг 10%.

В данной работе детально представлены также проекты и планы модернизации конкретных видов вооружений, основные тенденции, довольно амбициозные аэрокосмические проекты и т.п. И сегодня в сфере обороны и безопасности предпринимаются шаги к реформированию вышеуказанных проектов, цель которых создать и системно обеспечить эффективные службы и подразделения безопасности в соответствии с вызовами.

Целью осуществляемых реформ в сфере обороны является обеспечение Турции военного доминирования в регионе и создание современной и мощной военной машины. Планы и проекты модер-

низации ВС Турции и закупаемые вооружения в первом десятилетии 2000-ых годов приводят к интересному выводу. Стратегия широкомасштабной модернизации и шаги, предпринятые позже, беспрецедентны в контексте процесса вооружения Турции. Даже в годы «холодной войны», когда США и НАТО предоставляли огромную финансовую и материально-техническую помощь, турецкая армия с точки зрения военно-технической оснащенности и современного вооружения была довольно слабой и уступала многим странам НАТО. Несмотря на хорошую оснащенность, основные вооружения турецкой армии были довольно устаревшими и не считались современными. С точки зрения современных вооружений и существенного доминирования над своими соседями, предпринятые шаги по модернизации и ожидаемые вооружения поднимают турецкую армию на новый уровень.

Модернизация турецкой армии особенно видна на примере военно-воздушных сил. Военное руководство Турции, придав особое значение военной авиации в современных военных действиях, обратило особое внимание модернизации военной авиации. В отличие от прошлого, в основном первого десятилетия 2000-ых годов, сегодня в результате модернизации турецких ВВС, станет возможным приблизить авиацию к современным меркам, в соответствии с современными вызовами.

Довольно амбициозные планы по вооружению были разработаны в годы правления партии «Справедливость и развитие». Основные проекты и соглашения, которые имели особое и важное значение с точки зрения модернизации ВС Турции – производство национальных танков, приобретение истребителей 5-го поколения, развитие дальнебойных систем ПВО, создание систем космической разведки, производство ракет средней дальности, были разработаны именно при правлении ПСА.

Военная мощь и национальный оборонно-промышленный комплекс по большому счету дают возможность Турции выступать в роли поставщика вооружений, что считается серьезным козырем в деле реализации военно-политических амбиций этой страны. Оказание военной помощи разным странам в первую очередь ассоциируется

с региональными, внешнеполитическими и военно-политическими амбициями Турции, что видно на примере Азербайджана, Грузии и тюркоязычных стран.

Если раньше в сфере военного сотрудничества с развитыми странами Запада Турция имела большую зависимость от них и прямо импортировала технологическую и военную продукцию этих стран, то в последние годы, благодаря развитию оборонной промышленности, сама пытается стать поставщиком для стран, по отношению к которым имеет значительный военно-технический перевес и военно-политические амбиции.

Современные тенденции милитаризации и сверхмилитаризации Турции чреваты довольно серьезными вызовами для региональной стабильности и безопасности. Военный перевес над соседями и темпы милитаризации могут стать причиной новой нестабильности и военных столкновений в регионе. В последнее время Турция все чаще начала использовать ультимативный язык со странами региона, особенно с Кипром и Сирией, что обусловлено военным преимуществом над этими странами.

Посему, принимая во внимания непредсказуемость политики безопасности Турции, агрессивную риторику руководства страны, военно-политические амбиции и не очень добрососедские отношения с некоторыми соседними странами, можно сделать вывод, что вероятность применения военной силы со стороны Турции довольно высока.

Параллельно с этими процессами были предприняты шаги к осуществлению реформ и модернизации в сфере безопасности страны. После прихода к власти для ПСР стал приоритетным вопрос ослабления связи армия-политика, что могло обеспечить почву для жизнедеятельности этой политической силы в будущем. Это была просто злободневная проблема, и ПСР действовала довольно умно. В первую очередь, в связи с обязательствами для вступления в ЕС, ПСР смогла без особого сопротивления со стороны военного руководства существенно ограничить роль военных в политике, что является беспрецедентным случаем в истории республиканской Турции. Ключевыми стали законодательно-институциональные реформы,

связанные с Совбезом, в результате которых военные круги лишились самых главных рычагов. В течение 10 лет своего правления ПСР удалось поставить под контроль гражданских властей системы безопасности. Касаясь темы НРО (Национальная разведывательная организация) и предпринятых в последние годы шагов по реформированию службы, можно сказать, что эти шаги были также направлены на установление полного контроля над спецслужбами со стороны гражданских властей, а с другой стороны в результате структурных изменений она должна соответствовать требованиям внешней политики Турции и новым геополитическим реалиям.

Levon Hovsepyan

TURKEY'S DEFENSE SYSTEM MODERNIZATION AND SECURITY SECTOR REFORMS

Summary

Modernization of Turkey's defense system and reforms of security sector became intensive in the last decade. Modernization of Turkish Armed Forces (TAF), armament programs and steps aimed at the development of local defense industry gained momentum especially in the years of management of ruling "Justice and Development" Party (JDP). In parallel with that, serious steps were taken in security sector reforms, which were unprecedented in the history of Republican Turkey.

The study of modernization of TAF and defense policy is related to National Security Strategy of the Republic of Armenia and Military Doctrine.

In this book establishment and development of Turkey's defense system, major support and role of western countries in that process after joining NATO are represented.

Geopolitical changes and developments which began after the end of Cold War made Turkey to clarify regional security, defense policy priorities and new challenges more carefully and consistently. In this subchapter main tendencies, conceptual terms, transformations of challenges of Turkey's Security and Defense Policy in Post Cold War era are analyzed.

In Post Cold War area, on the basis of Turkey's Defense Policy lay the principle of continuous strengthening of TAF and achievement of military superiority in the region.

After the end of Cold War, instability and uncertainty in the borders of Turkey made building of powerful military machine priority for Turkish military elite in order to resist emerging new regional challenges and internal Kurdish separatism that threatens unitarism of Turkish state.

Already in the 1990s. Army Command developed long-term plans in the sphere of army's complex modernization.

Turkish national military-industrial complex has a great role in modernization of TAF. Nowadays Turkish defense industry registers successes as numerical parameters show. Policy implemented by Turkey towards defense industry can be considered successful. Development of defense-industrial complex not only gives an opportunity for Turkey to supply military and technical needs of the army, but also go to international arms market.

If in 2003 the rate of needs supply of armament of TAF through local arms industry was 25%, in 2011 it was 54%. Great importance is given to the export of Turkish military product and steps aimed in that.

According to official data, at the end of 2012 the rate of export of product of Turkish defense industry and civil aviation industry was more than 1 billion and 300 million \$, which was 52% higher than the rate of previous year.

During more than 8 years of management of ruling JDP, 90% of modernization programs provided for the needs of military-industrial needs of the TAF and having the total cost of 24 billion dollars are implemented with the participation of local defense-industrial complex, i.e. the import of ready-made armaments from abroad has reached up to 10%.

In this work modernization programs and projects of specific combat arms, main tendencies, aerospace project considered pretentious and etc., are also represented in quite detailed way.

Nowadays also steps are taken in Defense and Security Systems in the sphere of their reforms, the goal of which is the creation of effective security bodies and sub-unit locations and provision of coordination which are equivalent to challenges.

The goal of modernization in security sector is to provide Turkey's military supremacy in its surrounding and create modern powerful military machine. Especially defense modernization projects and programs, facts of acquired armament in the first decade of the 2000s lead to important conclusion.

Taken steps of modernization, acquired and still expected armament already gives new quality to Turkish army in terms of modern armament and significant supremacy towards its neighbors. Modernization of Turkish army becomes more prominent especially in the Air Force.

Highlighting the role of military aviation in modern military operations, Turkey's military and political leadership paid special attention to modernization of military aviation.

Unlike previous times, especially in the first decade of the 2000s. as a result of modernization programs of Turkish Air Force it would already be possible to bring it closer to fully modern standards corresponding to modern challenges.

In terms of Turkey's armament, quite pretentious programs were put forward especially in the years of management of ruling "Justice and Development" party.

From the perspective of modernization of TAF, the start of and conclusion of programs projects having essential and fundamental meaning such as production of national tanks, acquisition of 5th generation fighters, development of long-range air defense systems, creation of space intelligence systems, production of medium-range missiles, etc., were put forward in the years of management of JDP.

Turkey's military potential and national defense-industrial complex enables Turkey to act as a military supplier to a great extent, which is regarded as a major trump card in the way of implementation of military and political pretensions of that country.

Provision of military assistance to other countries is first combined with Turkey's regional, foreign political and military and political pretensions, which becomes clearer especially in the cases of Azerbaijan, Georgia, and Turkic-speaking countries.

Turkey's unprecedented armament tendencies and super-militarization contain serious challenges for regional stability and security. Especially recently, using military ultimatum against its neighbors and regional countries such as the Republic of Cyprus and the Syrian Arab Republic, is due to supremacy of military forces and capabilities towards them.

In this context, taking into consideration high level of unpredictability of Turkey's Security Policy, aggressive behavior of managed circles, military and political pretensions and non friendly relations with its several neighbors, it can be concluded that the probability of the use of military force by Turkey is quite high.

In parallel with these processes, key steps were taken in the sphere of reforms in county's security sector and modernization.

After coming into power, redesign of civil-military relations became prime for JDP, which would provide wide field for future vital activities of that political power.

It was just urgent demand and JDP had enough flexibility on this issue. First, with the demand of the implementation of obligations, JDP could essentially limit military's role in political processes without going to serious confrontation with supreme military, which was unprecedented in Republican Turkey.

The key issues in this matter were legal-institutional reforms related to National Security Council, as a result of which army lost its lever having most important role. During more than 10 the years of its management, JDP managed to put security system under the control of civil authorities and hold it accountable for that.

Touching upon "civilianization" of National Intelligence Organization and steps of modernization taken in recent years, it can be stated that on the one hand, they were aimed at putting that organization under the control of civil authorities, and on the other hand, make it correspond to Turkey's demands and geopolitical processes with its structural and functional changes.

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

Պաշտոնական փաստաթղթեր, տեղեկագրեր, ելույթներ

1. Almanak Türkiye 2006-2008: Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. A. Bayramoğlu, A. Insel, Istanbul, TESEV, Temmuz 2009.
2. Almanak Türkiye 2005, Güvenlik Sektörü ve Demokratik Gözetim, ed. Ümit Cizre, DCAF-TESEV Güvenlik Sektörü Çalışmaları Dizisi Özel Yayın, Mayıs 2006, TESEV.
3. Almanak Türkiye 2006,
<http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/kitaplar/turkiye2006/turkey/244-245.htm>.
4. Alnımızın AKİyla 8,5 yıl, AK Parti, Tanıtım ve Medya Başkanlığı, Nisan 2011, <http://www.akparti.org.tr/icraat.pdf>.
5. ALTAY Projesi, Milli imkanlarla Modern Tank Üretimi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayi Müsteşarlığı, Temmuz 2008.
6. Aselsan: Faaliyet Raporu 2008,
http://www.aselsan.com.tr/userfiles/documents/518_2008_TR.pdf.
7. Jandarma Teşkilat, Görev ve Yetkileri Kanunu,
<http://www.mevzuat.adalet.gov.tr/html/603.html>
8. Kamu Düzeni ve Güvenliği Müsteşarlığı 2010 Yılı Idare Faaliyet Raporu.
9. Kamu Düzeni ve Güvenliği Müsteşarlığının Teşkilat ve Görevleri Hakkında Kanun, <http://www.kdgm.gov.tr/index.snet?wapp=0DC304A2-A792-4265-9B43-07A7327BE9EC>;
10. Makina İmalat Sanayii Özel İhtisas Komisyonu Raporu, Sekizinci Beş Yıllık Kalkınma Planı, Ankara 2000.
11. Makina ve Kimya Endüstrisi Kurum Genel Müdürlüğü 2008 yılı Faaliyet Raporu.
12. Makina ve Kimya Endüstrisi Kurum Genel Müdürlüğü 2011 yılı Faaliyet Raporu.

13. Milli Gemi Projesi, Denizaltı Savunma Harbi ve Keşif Karakol Gemisi, Savunma Sanayii Gündemi, Savunma Sanayii Müsteşarlığı, Sayı 2, Ekim 2007.
14. MGK ve MGK Genel Sekreterliği Kanunu, <http://www.mgk.gov.tr/Turkce/kanun.html>
15. Savunma Sanayii Politikası ve Stratejisi, Vizyon 2023 Projesi, Savunma, Havacılık ve Uzay Paneli, Panel Raporu, Ek-12, TÜBİTAK, Ankara, Temmuz 2003.
16. Savunma Sanayii Müsteşarlığı Stratejik Plan 2007-2011, Ankara 2007.
17. Savunma Sanayii Müsteşarlığı 2012-2016 Stratejik Plan, Ankara 2012.
18. Savunma Sanayii Müsteşarlığı 2008 Yılı Faaliyet Raporu, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2008%20Yılı%20Faaliyet%20Raporu.pdf>.
19. Savunma Sanayii Müsteşarlığı 2010 Faaliyet Raporu, http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2010/files/ssm_2011.pdf.
20. Savunma Sanayii Müsteşarlığı 2011 Faaliyet Raporu, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2011%20Yılı%20Faaliyet%20Raporu.pdf>.
21. Savunma Sanayii Müsteşarlığı Faaliyet Raporu 2012, <http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/Faaliyet%20Raporlar/2012%20Y%C4%B1%20Faaliyet%20Raporu.pdf>.
22. Türk Savunma, Havacılık ve Uzay Sektörü Değerlendirmesi, Vizyon 2023 Projesi, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-4, TÜBİTAK, Ankara, Temmuz 2003.
23. Savunma Sanayii İcra Komitesi Toplantısı Basın Açıklaması, 15 Aralık 2010, <http://www.ssm.gov.tr/anasayfa/hizli/duyurular/PressReleases/Sayfalar/2010Aralikssikbasinaciklamasi.aspx>.
24. Savunma Sanayii İcra Komitesi Toplantısı Basın Açıklaması, 17 Temmuz 2012,

- http://www.ssm.gov.tr/anasayfa/hizli/duyurular/PressReleases/Sayfalar/17072012_SsikBasinAciklamasi.aspx.
25. Türk Savunma Sanayii 2010 Yılı Performansı, Savunma Sanayii Gündemi, Sayı 15, 2/2011,
http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/SSM%20Dergisi/SSM_15.pdf.
 26. Türk Uzay Sektörüne İlişkin Değerlendirme, Savunma Havacılık ve Uzay Sanayii Panel Raporu/Ek-5, TÜBİTAK, Ankara, Temmuz 2003.
 27. TÜRK SİLAHLI KUVVETLERİ İÇ HİZMET KANUNU,
<http://kanunlar.biz/kanunlar/1044.html>.
 28. 2009-2016 Savunma Sanayii Sektörel Strateji Dokümanı, Savunma Sanayii Mustesarlığı, Nisan 2009.
 29. 2008 Yılı MGK Toplantılarının Basın Bildirileri, 21 Ekim 2008,
http://www.mgk.gov.tr/Turkce/Yazdirilabilir%20Surum/Basin%20Bildirileri/2008/21_Ekim_2008.pdf.
 30. 2010 Yılı MGK Toplantılarının Basın Bildirileri, Ekim 27,
<http://www.mgk.gov.tr/Turkce/basinbildiri2010/27ekim2010.html>.
 31. A List of Treaties and other International Agreements of the United States in Force on January 1, 2010, United States Department of State,
<http://www.state.gov/documents/organization/143863.pdf>.
 32. A Statement by TAFF, Defence Turkey, Vol. 2 Issue: 7, 2007.
 33. Defence White Paper 2000, Ministry of National Defence of Turkey,
<http://www.msb.gov.tr>.
 34. FNSS A Leader Company in Armored Combat Vehicles / Interview with Mr. Nail Kurt, Defence Turkey, Volume: 2, Issue:10, 2008.
 35. Human Rights Watch World Report 1997: Events of 1996, USA.
 36. Luncheon Remarks by General Ilker Başbuğ, Deputy Chief of Turkish General Staff,
http://www.tsk.tr/eng/konusma/gnkurIIncibsk_atckonusmasiogleyemegi_eng_06062005.htm.
 37. Military Expenditure, Armaments, Disarmament and International Security, SIPRI Yearbook 2011, Oxford University Press, 2011.

38. Missile Defense and NATO's Lisbon Summit,
<http://fpc.state.gov/documents/organization/154176.pdf>.
39. OECD Science, Technology and Industry Outlook 2008,
[http://www.inovacao.unicamp.br/report/inte-OECD
ScienceTechnologyIndustry_Outlook081215.pdf](http://www.inovacao.unicamp.br/report/inte-OECD ScienceTechnologyIndustry_Outlook081215.pdf).
40. Secretary Gates Press Conference with Turkey's Ministry of Defense,
February 28, 2008,
<http://www.defense.gov/transcripts/transcript.aspx?transcriptid=4162>.
41. SIPRI Arms Transfers Database,
http://www.sipri.org/contents/armstrad/at_data.html.
42. SIPRI Yearbook 2006, Stockholm International Peace Research Institute,
Oxford University Press, 2006.
43. The Security of the Caspian Sea Region, ed. G. Chufrin, SIPRI, Oxford
University Press, 2001.
44. The Military Balance 2009, International Institute of Strategic Studies,
London: Routledge 2009.
45. The Military Balance 2010, International Institute of Strategic Studies,
London: Routledge 2010.
46. Treaty on Conventional Armed Forces in Europe,
<http://www.osce.org/library/14087>.
47. Turkey, Defense: Weapons Production Program, 11 U.S.T. 1322,
<http://photos.state.gov/libraries/turkey/461177/pdf/11t1322.pdf>.
48. Turkey Export-import Trade and Business Directory, International
Business Publications, USA, Vol. 2, 2007.
49. Turkey, The General Directorate of Press and Information, GAYE
Matbaacılık Sanayi ve Ticaret AŞ, Ankara, October 1990.
50. Turkey 2008 Progress Report,
[http://ec.europa.eu/enlargement/pdf/press_corner/key-
documents/reports_nov_2008/turkey_progress_report_en.pdf](http://ec.europa.eu/enlargement/pdf/press_corner/key-documents/reports_nov_2008/turkey_progress_report_en.pdf); Turkey:
2012 progress
report,[http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2012/package
/tr_rapport_2012_en.pdf](http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2012/package/tr_rapport_2012_en.pdf).

51. Turkey 2013 Progress Report, Brussels, 16.10.2013,
http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2013/package/tr_report_2013.pdf.
52. Weapons Transfers and Violations of Laws of War in Turkey, Human Rights Watch Arms Project, USA 1995.
53. Ռ. Թ. Էրդողանի Էլույթը 2008 թ. «Altay» տանկերի արտադրության պայմանագրի ստորագրման հանդիսավոր արարողության ժամանակ՝ <http://www.netizle.tv/video/13443/milli-tank-altay-2011-de-silahli-kuvvetlere-katiliyor>.
54. 7. UYUM YASALARI..., <http://www.belgenet.com/yasa/k4963.html>
55. Вооруженные силы и военная экономика стран Азии// Информационно-аналитический справочник-М., Институт Востоковедения РАН, 2000.
56. Современная Турция, справочник, Москва. Изд. восточной литературы. 1958.
57. Современная Турция, справочник, Москва. Изд. «Наука». 1965.
58. Турецкая Республика, справочник. Москва. Изд. «Наука», 1975.
59. Турецкая Республика, справочник, Москва, Изд. «Наука», 1990.
60. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, Հայկական բանակ, Հատուկ թողարկում, 2007:
61. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին, <http://www.mil.am/files/mil-doctrine-arm.pdf>:

Գրքեր և հոդվածներ

62. Աղաջանյան Մ., Թուրքիայի ազգային անվտանգությունը. հայեցակարգերն ու սկզբունքները, Վերլուծական նյութեր 1, Եր.: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2007:
63. Այվազյան Ա., Հայաստանի պաշտպանական հայեցակարգը, Ռազմավարության և անվտանգության հարցեր, Ա. Այվազյանի խմբ.,

- «Հայրենատիրություն» մատենաշար 2, «Արարատ» ռազմավարական կենտրոն, Եր. 2007:
64. Այվազյան Ա., Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Մաս I-Եր.: Հեղ. հրատ., 2003:
 65. Ավազյան Ա., Բանակի դերը Թուրքիայի տնտեսական համակարգում, Հայկական բանակ, թիվ 4, 2006:
 66. Ավազյան Ա., Թուրքիայում խորքային պետության և Էրզենեկոնի կապի շուրջ, Արմենպրես, 03.05.2011:
 67. Ավազյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում 1920-1971 թթ. /Եր.: Հեղ. Հրատ., 2011:
 68. Գաբրիելյան Հ., Էգեյան հակամարտությունը թուրք-հունական հարաբերություններում, Հանրապետական-թիվ 11(86), 2010:
 69. Դումանյան Ա., 1980 թ. ռազմական հեղաշրջումը Թուրքիայում. պատճառը, ընթացքը, հետևանքները, անտիպատենախոսություն, Երևան, 2007:
 70. Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը.-Եր.: Հեղ. հրատ. 2010:
 71. Հովսեփյան Լ., Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 90-ական թթ. որպես եվրասիական քաղաքականության կարևորագույն ուղղություն: Ձեռքբերում, թե՞ ճախողում, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 5, Երևան, 2008:
 72. Հովսեփյան Լ., Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդն արդի բարեփոխումների համատեքստում, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Ռ. Սաֆրաստյանի խմբ., Հ. 4, Եր., 2006:
 73. Հովսեփյան Լևոն, Եվրասիականությունը և աշխարհագրական դետերմինիզմի հիմնավորումները թուրքական զինվորականության շրջանակներում / Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXVIII-Եր.: Զանգակ-97, 2011:

74. Հովսեփյան Լ., Թուրքիայի հակաահաբեկչական պայքարի նոր ռազմավարությունը, Հայ զինվոր, թիվ 49, 13-20 դեկտեմբերի 2008:
75. Հովսեփյան Լ., Թուրքիայի նոր մարտահրավերները, Առավոտ, 25 հոկտեմբերի 2008:
76. Հովսեփյան Լ., Ռուսաստանի Դաշնությունում թուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ, Դրօշակ, Նոյեմբեր N. 11, 2010:
77. Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ: Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում –Երևան: «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն», 2012:
78. Մելքոնայն Մ., Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման հիմնախնդիրները, Հայ զինվոր, թիվ 7, 20-27 փետրվար 1999:
79. Մինասյան Ս., Իսրայելա-թուրքական ռազմաքաղաքական համագործակցությունը քրդական հիմնախնդրի համատեքստում, «21-րդ դար», Թիվ 4 (14), Երևան, 2006:
80. Մինասյան Ս., Թուրքական հանրապետության զինված ուժերը, Թուրքիա. Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները.-Եր.: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր, թողարկում 1, 2007:
81. Պետրոսյան Վ., Թուրքիան և ռազմականացումը, Հայ զինվոր, թիվ 14, 10-17 ապրիլի 1999:
82. Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21 րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև...: Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային հովվություններում: (2001-2003 թթ. հոդվ. ու հարցազրույցներ), Երևան : Զանգակ-97, 2003:
83. Քոթանջյան Հ., Չիլինգարյան Դ., Ավետիսյան Վ., Մինասյան Ա., «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք, Հայկական բանակ, Հ. 1-2 (59-60), 2009:

84. Akça İsmet, Türkiye’de Askeri-İktisadi Yapı: Durum, Sorunlar, Çözümler, TESEV Yayınları, İstanbul, Haziran 2010.
85. Akiner Tolga, Milli tank 'altay' için yola çıkıldı, Radikal, 30.07.2008
86. Aknur Müge, TSK’nin Dış Politika Üzerindeki Etkisi, Türkiye’nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efegil, Ankara, Nobel yayın, 2010.
87. Aksu Fuat, Türk-Yunan İlişkilerinde Güvenlik ve Güven Artırma Cabaları, <http://www.yildiz.edu.tr/~faksu/Fuatyayinlar/trgr-guvenlik.pdf>.
88. Arıs Hakkı, Sünneci İbrahim, Mavi Vatan En İyi Şeklinde Savunmak, Savunma ve Havacılık, Sayı 148, 2012.
89. Arı Tayyar, Ege Sorunu ve Türk-Yunan İlişkileri: Son Gelişmeler Işığında Kara Suları ve Hava Sahası Sorunları, <http://dergiler.ankara.edu.tr/dergiler/42/468/5378.pdf>.
90. Aydın Nurullah, Kırmızı kitap, Milli Güvenlik Politikası, İstanbul, Paraf yayınları 2011.
91. Balcı Ali, 1990 sonrası Türk Dış Politikası Üzerine Bazı Notlar: Avrupa Birliği ve Kıbrıs Örneği, Türkiye’nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efegil, Ankara, Nobel yayın, 2010.
92. Çevikalp Mesut, Havada dijital kuş devri!, Aksiyon, 11.06.2012.
93. Dilek Hakan, MİT’in Tarihi, 04-12 Agustos, Takvim, http://i.onbesyirmibes.org/pdf/20101126_mitin_tarihi.pdf.
94. Dönmez Ahmet, 28 Şubat’ın askerî ihaleleri Anayasa Mahkemesi’nde, Zaman 11.10.2011.
95. Efegil Ertan, TDP Yeni Bir Karar Verme Modeli Önerisi, Türkiye’nin Değişen Dış Politikası, Der.: C. Yenigül, E. Efegil, Ankara, Nobel yayın, 2010.
96. Erdem Ali Kemal, Türkiye füze tugayı kurdu, <http://www.haberturk.com/yasam/haber/89938-turkiye-fuze-tugayi-kurdu>, 07.08.2008.
97. Gerger Haluk, Türk Dış Politikası’nın Ekonomi Politikası: Soğuk Savaş’tan Yeni Dünya Düzeni’ne, İkinci Baskı, İstanbul, Belge Yayınları, 1999.

98. Görgüç Serdar, Savunma Sanayiinde Kara Platformu, Savunma Sanayii Gündemi, Temmuz 2008,
<http://www.ssm.gov.tr/anasayfa/kurumsal/SSM%20Dergisi/2008-7-ssm-dergi.pdf>.
99. Hıçyılmaz Ufuk, MİT'in yeni vizyonu istihbarat, Aksiyon, 15.01.2007,
<http://www.aksiyon.com.tr/aksiyon/haber-19155-34-mitin-yeni-vizyonu-istihbarat.html>.
100. Kardaş Tuncay, Erdağ Ramazan, Bir Dış Politika Aracı Olarak TİKA, Akademik İncelemeler Dergisi, Vol. 7, Sayı 1, 2012.
101. Kısıklı Emine, Milli mücadele başlangıcında, Mustafa Kemal Paşa'nın milli hareketi, İttihat ve Terakki faaliyetlerinden uzak tutma teşebbüsleri, Atatürk Yolu Dergisi, II/5, 1990.
102. Külebi Ali, Türkiye'nin Askeri Stratejisi, Gücü ve Geleceği, Türkiye Stratejik Araştırmalar Merkezi (TUSAM), 02.08.2004.
103. İpekesen Erdal, Yeni savunma sanayi profili,
http://www.tempodergisi.com.tr/kose/erdal_ipekesen/05665/.
104. Oktay Selçuk, "ARGE-100", Turkish Time, Ağustos 2007, Sayı 64,
http://www.turkishtime.org/files/Arastirmalar/Ar-Ge/Ar-ge_100_2007.doc.
105. Şenesen Gülay Günlük, Türk Silahlı Kuvvetleri'nin Modernizasyon Programının Bir Değerlendirmesi, Türk Dış Politikasının Analizi, Faruk Sönmezoglu, DER yayınları, İstanbul-2001.
106. Şimşek E., Bahar I., Türkiye'de İstihbaratçılık ve MIT, Kum Saati Yayıncılık, İstanbul, 2004.
107. Stoddard Hendrick Philip, Teşkilat-I Mahsusa, Osmanlı Devleti ve Araplar 1911-1918: Teşkilat-I Mahsusa Üzerine Bir Ön Çalışma, İstanbul, Arma yayınları 2003.
108. Tavlaş Nezh, Türk-İsrail Güvenlik ve İstihbarat İlişkileri, Avrasya Dosyası İsrail Özel Sayısı, cilt 1, sayı 3, Sonbahar 1994.
109. Turhan Talat, Doruk Operasyonu, Sorun Yayınları, İstanbul 1989,
<http://www.sosyalistarsiv.com/S-A/doruk%20operasyonu.pdf>.

110. Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 1, (1919-1980), İstanbul, İletişim yayınları 2002.
111. Türk Dış Politikası, Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar, Ed. Baskın Oran, Cilt 2, (1980-2001), İstanbul, İletişim yayınları 2002.
112. Ünlü Ferhat, "MİT'te iç çekişme entrikaya yol açtı", Sabah, 19.07.2007, <http://arsiv.sabah.com.tr/2007/07/19/haber,4D36E8C34C434B5880E8E8BE1D3FF328.html>.
113. Yılmaz Sait, Dünya Ordularındaki Değişim ve Türk Ordusunun Profesyonelleşmesi, [http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESI\(3a4b\).pdf](http://orkam.aydin.edu.tr/ORDUNUNPROFESYONELLESMESI(3a4b).pdf).

114. Агаджанян М., Минасян С., Асатрян Э. Азербайджан против народа Карабаха: политико-правовые последствия агрессии и их влияние на перспективы региональной безопасности. Ер., 2006.
115. Арешев А. Вооруженные силы и внешнеполитический курс Турции на современном этапе, Դազմալարութիւնն և անվտանգութիւնն հարցեր, Ա. Այվազյանի խմբ., «Հայրենասիրություն» մատենաշար 2, «Արարատ» ասոցիացիայի կենտրոն, Եր., 2007.
116. Арутюнян А. История создания турецких секретных служб и их деятельность на современном этапе, Турция: проблемы безопасности и обороны, Институт политических исследований, Ереван, 2007.
117. Атаев Т. США, НАТО и Турция, Изд. Прогресс, Москва 1973.
118. Вихрев М. "Военные профессионалы Турецкой Республики как резерв государственного управленческого аппарата", Офицерский корпус ближневосточных государств (сборник статей), ИИИиБВ, М., 2004.

119. Гельман З. «Анка»-в воздухе. Независимое военное обозрение, No. 32, (27 Августа-2 Сентября), 2010.
120. Гурьев А. Новая концепция национальной безопасности Турции, ИИИиБВ, <http://www.iimes.ru/rus/stat/2005/07-11-05.htm>, 07.11.2005.
121. Гурьев А. Турция-Израиль: по пути укрепления военного сотрудничества, ИИИиБВ, <http://www.iimes.ru/rus/stat/2006/24-01-06.htm>.
122. Гурьев А. О новом вертолетном тендере в Турции. ИИИиБВ, <http://www.iimes.ru/rus/stat/2005/11-03-05.htm>.
123. Гурьев А. О российско-турецком военно-техническом сотрудничестве, ИИИиБВ, <http://www.iimes.ru/rus/stat/2004/27-11-04.htm>.
124. Исламов В. Беспилотники: сто лет в воздухе// Независимое военное обозрение. № 32, 11-17 Сентябрь 2009.
125. Косиков А. Военно-политический потенциал Турции// Восточный сборник. Вып. 2, Москва 2001.
126. Костюхин А. Военно-промышленный комплекс государств Центральной Азии и их военно-техническое сотрудничество с зарубежными странами в 1990-е годы // Зарубежное военное обозрение. № 5, 2009.
127. Лавров А. Хронология боевых действий между Россией и Грузией в августе 2008 года. Танки августа. Сборник статей. (Барабанов М., Лавров А., Целуйко В.) Москва, Центр анализа стратегии и технологий, 2009.
128. Мартов М. Военно-экономическая политика Турецкой Республики и ее сотрудничество с зарубежными странами// Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии. (сборник статей), ИИИиБВ, М., 2002.
129. Минасян С. Азербайджан против РА и НКР: военно-политический баланс, оценки боеспособности и перспективы развития вооруженных сил // Ռազմավարության և անվտանգության հարցեր / ժողովածու, Ա. Այվազյանի խմբ., Եր.: 2-րդ հրատ.: Լուսակն, 2007.

130. Минасян С. «Пятидневная война» августа 2008г.: военно-политический анализ // Кавказ-2008. Ежегодник Института Кавказа. Ер., 2010.
131. Новичев А., Турция. Краткая история, Изд. Наука, Москва, 1965.
132. Овсепян Л. Основные тенденции и перспективы российско-турецкого военно-технического сотрудничества // Центральная Азия и Кавказ, том 14, вып. 3, SA&CC Press, Швеция, 2011.
133. Овсепян Л., Иванов В. Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии. Динамика и основные тенденции развития-Ер.: Институт политических исследований, 2010.
134. Поцхверия Б., Внешняя политика Турции в 60-х-начале 80-х годов XX в., «Наука», Москва, 1986.
135. Сардановский С. Аспекты политической безопасности Черноморья. <http://www.bsarg.crimeainfo.com/03-Sardanovsky.rtf>.
136. Сваранц А. Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, Академия гуманитарных исследований, Москва, 2002.
137. Сомов Н. Состояние и перспективы развития ВВС Турции// Зарубежное военное обозрение. № 4, 2009.
138. Туран И. Турция на подъеме. От неразвитой страны к региональной державе, Россия в глобальной политике, том 9, № 5, Москва, 2011.
139. Федин А.. Военно-морские силы Турции// Зарубежное военное обозрение. № 5, 1997.
140. Ситуация в Турции: июнь 2010 г., ИИИБВ, 28.06.2010, <http://www.iimes.ru/rus/stat/2010/14-07-10a.htm>.
141. Чотоев З. Влияние Турции на развитие государств Центральной Азии // Центральная Азия и Кавказ, № 2 (26), SA&CC Press, Швеция, 2003.
142. Штайнбах У. История Турции, Москва, 2006.

143. Abou-El-Fadl Reem, Turkey's Accession to NATO: Building a 'Little America',
[http://www2.lse.ac.uk/europeanInstitute/research/ContemporaryTurkishStudies/Paper RA.pdf](http://www2.lse.ac.uk/europeanInstitute/research/ContemporaryTurkishStudies/Paper%20RA.pdf).
144. Allison B. George, Daugherty W. Brian, The Turkish Navy's Quest for Modernisation, *The DISAM Journal*, Spring 1995.
145. Altunışık B. Meliha, Özlem T., Turkey: challenges of continuity and change, London: Routledge Curzon, 2005.
146. Arapoglou Stergios, Dispute in The Aegean Sea. The Imia/Kardak Crisis, A Research Report Submitted to the Faculty, Air Command and Staff College, Air University, April 2002.
147. Aras Damla, Turkey's Ambassadors vs. Erdoğan, *Middle East Quarterly*, Winter 2011
148. Athanapoulos Haralambos , Greece, Turkey and the Aegean Sea, A Case Study in International Law, Mcfarland Publishers 2001.
149. Aydinli Ersel, Özcan Nihat Ali, Akyaz Doğan, The Turkish Military's March Toward Europe, *Foreign Affairs*, January/February 2006,
<http://www.foreignaffairs.org/20060101faessay85108/ersel-aydinli-nihat-ali-ozcan-dogan-akyaz/the-turkish-military-s-march-toward-europe.html>.
150. Aydın Mustafa, Contemporary Turkish-Greek Relations: Constraints and Opportunities, *Turkish-Greek Relations: The Security Dilemma in Aegean*, Ed. M. Aydın and K. Ifantis, London-New York: Routledge 2004.
151. Barkey J. Henri, Turkey and The New Middle East, A Geopolitical Exploration, *Reluctant Neighbour, Turkey,s Role in the Middle East*, ed. Henri J. Barkey, Washington, United States Institute of Peace Press, 1996.
152. Baykal Sanem, Turkey-EU Relations in the Aftermath of the Helsinki summit: An Analysis of Copenhagen Political Criteria in Light of the Accession Partnership, National program and the Regular Reports, *Ankara Review of European Studies*, vol. 2, No. 3, 2002.

153. Bilgin Pinar, Turkey's changing security discourses: The challenge of globalisation, *European Journal of Political Research* 44, 2005.
<http://www.bilkent.edu.tr/~pbilgin/Bilgin-EJPR2005.pdf>.
154. Bir Çevik and Sherman Martin, *Formula for Stability: Turkey Plus Israel*, *Middle East Quarterly*, Fall 2002.
155. Birand Mehmet Ali, *Shirts of Steel, An Anatomy of the Turkish Armed Forces*. London-New York 1991.
156. Burns L.Nathan, *Turkey, the Caspian Region, & the Clash of Civilizations*, *The University of Central Florida // Undergraduate Research Journal*, Vol. 2, August 22, 2007,
http://www.urj.ucf.edu/docs/URJmanuscript_Burns_080509.pdf.
157. Çagaptay Soner, *European Union Reforms Diminish the Role of the Turkish Military: Ankara Knocking on Brussels' Door*, *The Washington Institute of Near East Policy*, *PolicyWatch#781*, August 12, 2003,
http://www.ciaonet.org/pbei/winep/policy_2003/2003_781.html.
158. Davutoğlu Ahmet, *Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007*, *Insight Turkey*, Vol. 10, No. 1, 2008.
159. Demirel Süleyman, *Turkey And NATO At The Threshold Of A New Century*, *Perceptions*, *Journal of International Affairs*, Volume IV - Number 1, March-May 1999,
<http://sam.gov.tr/wpcontent/uploads/2012/02/SuleymanDemirel.pdf>.
160. Dokos P.Thanos, *Tension-Reduction and Confidence-Building in Agean*, *Turkish-Greek Relations: The Security Dilemma in Agean*, Ed. M. Aydın and K. Ifantis, London-New York: Routledge 2004.
161. Drohobycky Maria, *Crimea: dynamics, challenges and prospects*, Rowman & Littlefield Publishers Inc., USA, 1995.
162. Durch J.William, *Constracting Regional Security: The Role of Arms Transfers, Arms Control, and Reassurance*, *The Century Foundation Inc.*, PALGRAVE, 2000.
163. Duygu Bazoğlu Sezer, *Turkey and the Western Alliance in the 1980s, Political and Socioeconimc Transformation of Turkey*, Ed. by Atila

- Eralp, Muharrem Tünay, Birol Yeşilada, Praeger Publisher, Westport, 1993.
164. Eaton Mark, Major trends in military expenditure and arms acquisitions by the states of the Caspian region, *The Security of the Caspian Sea Region*, ed. Gennady Chufrin, SIPRI, Oxford University Press 2001.
165. Elekdağ Şükrü, 2 ½ War Strategy, Perceptions, *Journal of International Affairs*, Vol. 1, March-May, 1996, <http://www.sam.gov.tr/perceptions/Volume1/March-May1996/212WARSTRATEGY.pdf>.
166. Ergüvenç Sadi, Turkey's Security Perceptions, *Journal of International Affairs*, Vol. 3, N. 2, June-August 1998, <http://sam.gov.tr/wp-content/uploads/2012/02/SadiErguvenc.pdf>.
167. Enginsoy Ümit, Turkish defense industry grows by 19 percent in 2010, <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=turkish-defense-industry-grows-by-19-percent-in-2010-2011-05-03>.
168. Evaghoras L. Evaghorou, *The Economics of Defence of Greece and Turkey: A Contemporary Theoretical Approach for States Rivalry and Arms Race*, Center for International Politics Thessaloniki, <http://files.mgkworld.net/cipt/docs/CIPTEvaghorouDefEcoGRTR.pdf>.
169. Flanagan J. Stephen, Brannen J. Samuel, *Turkey's Shifting Dynamics, Implications for U.S.-Turkey Relations*, Center for Strategic and International Studies, CSIS, June 2008.
170. Forster Anthony, *Armed Forces and Society in Europe*: New York, Palgrave Macmillan, 2006.
171. Gabelnick Tamar, Hartung D. William, and Jennifer Washburn, *Arming Repression: U.S. Arms Sales to Turkey During the Clinton Administration*, Joint Report of the World Policy Institute and the Federation of American Scientists, October 1999, <http://www.fas.org/asmp/library/reports/turkeyrep.htm>.
172. Ganser Daniele, *NATO's Secret Armies. Operation Gladio and Terrorism in Western Europe*, Frank Cass Publishers, New York 2005.

173. Gilby Nicholas, *Turkey and the Arms Trade 1998-2002: A Precis, Nurturing Turkey's War Machine*, CAAT, London, March 2003.
174. Goksel Isyar Omer, *An Analysis of Turkish-American Relations From 1945 to 2004: Initiatives and Reactions in Turkish Foreign Policy, Alternatives: Turkish Journal of International Relations*, Vol. 4, No. 3, Fall 2005.
175. Grimmett F. Richard, *U.S. Defense Articles and Services Supplied to Foreign Recipients: Restrictions on Their Use*, CRS Report for Congress, Congressional Research Service, Updated March 14, 2005.
176. Gundogdu Ayten, *Identities in Question: Greek-Turkish Relations in a Period of Transformation?*, *Middle East Review of International Affairs*, Vol. 5, No. 1-March 2001, <http://meria.idc.ac.il/journal/2001/issue1/gundogdu.pdf>.
177. Gunter Michael, *Historical Dictionary of the Kurds*, Scarecrow press 2011.
178. Hale Wiliam, *Turkish Foreign Policy, 1774-2000*, London-Portland, Frank Cass 2002.
179. Hen-Tov Eliot, *The Political Economy of Turkish Military Modernization*, *Middle East Review of International Affairs*, Vol. 8, No. 4 (December 2004).
180. Hickok Robert Michael, *Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization*, US Army War College, Parameters(Summer 2000), <http://www.carlisle.army.mil/USAWC/parameters/Articles/00summer/hickok.htm>.
181. Ilhan Suat, *Geopolitical Developments and the Turkish World*, *Eurasian Studies, TIKA*, Vol. 2, N. 3, 1995.
182. Inbar Efraim, *The Strategic Glue in the Israeli-Turkish Alignment, Turkey in World Politics, An Emerging Multiregional Power*, ed. Barry Rubin, Kemal Kirisci, Colorado-London: Lynne Rienner Publishers, 2001.

183. Jung Dietrich, Piccoli Wolfgang, *Turkey at the Crossroads, Ottoman Legacies and A Greater Middle East*, London & New York, 2001.
184. Karaosmanoğlu Ali, *The Evolution of the National Security Culture and the Military in Turkey*, *Journal of International Affairs*, Vol. 54, No. 1, Fall 2000.
185. Kazan Isil, *Turkey Between National and Theatre Missile Defense*, *Bulletin No. 25-Herbst 2001*,
<http://www.hsfk.de/abm/bulletin/pdfs/kazan1.pdf>.
186. Keskin Funda, *Turkey's Trans-Border Operations in Northern Iraq: Before and after the Invasion of Iraq*, *Research Journal of International Studies- Issue 8*, November 2008.
187. Kirisci Kemal, *Post Cold-War Turkish Security and The Middle East*, *Middle East Review of International Affairs*, Vol. 1, No. 2 - July 1997,
<http://meria.idc.ac.il/journal/1997/issue2/jv1n2a6.html>.
188. Kirisci Kemal, *Turkey and the United States: Ambivalent Allies*, *Middle East Review of International Affairs*, Vol. 2, No. 4 - November 1998.
189. Knudsen V. Bertil, *The role of the military in Turkish politics*, *Copenhagen Un.*, Jan. 2005, <http://www.videt.dk/miliduty.pdf>.
190. Kogan Eugene, *Cooperation in the Israeli-Turkish Defence Industry; Conflict Studies Research Centre; Middle East Series 05/43*, *Defence Academy of the United Kingdom*,
[http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05\(43\)-EK](http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05(43)-EK), 24 p.
191. Korkmaz Goksel, *An Analysis of Turkey's Defense Systems Acquisition Policy*, *MBA Professional Report*, *Naval Postgraduate School*, *Monterey, California*, March 2009.
192. Külebi Ali, *Defense Concept of Turkey is Changing*, April 2008,
<http://www.eurasiacritic.com/articles/defence-concept-turkey-changing>.
193. Laçiner Sedat, *Turgut Özal Period in Turkish Foreign policy: Özalism*, *USAK Yearbook of International Politics and Law 2009*, ed. S. Laçiner,

- M. Özcan ets., Vol. 2, International Strategic Research Organization, Ankara, USAK 2009.
194. Larrabee F. Stephen, Turkey as a US Security Partner, Prepared for the United States Air Force, RAND Corporation, 2008, http://www.rand.org/pubs/monographs/2008/RAND_MG694.pdf.
 195. Leicht Justus, Turkey: Reform limits some military powers, <http://www.wsws.org/articles/2003/aug2003/turk-a19.shtml>.
 196. Lerner Daniel, Robinson D. Richard, Swords and Ploughshares: The Turkish Army as a Modernizing Force, World Politics, Vol. 13, No. 1, Oct.-1960.
 197. Lesser O Ian, Bridge or Barrier? Turkey And The West After The Cold War, Prepared for the United States Air Force and the United States Army.", RAND, 1992.
 198. Mayall V. Simon, Turkey: Thwarted Ambition, Institute For National Strategic Studies, Washington, McNair Paper 57, January 1997.
 199. McDermott Roger, Turkish Military Assistance to Kazakhstan Highlights Western Dilemma, Eurasia Daily Monitor, Vol. 2, Issue 115, The Jamestown Foundation, 15 June 2005.
 200. Mimikos Spyridon, Strategic Implications of Expanded Turkish-Israeli Military Relation, Thesis, Naval Postgraduate School, Monterey, California, December 1999, <http://www.dtic.mil/cgi-bin/GetTRDoc?AD=ADA374018>.
 201. Müftüler-Bac Meltem, Turkey's Role in the EU's Security and Foreign Policies, Security Dialogue, Vol. 31, No. 4, December 2000.
 202. Müftüler-Bac Meltem, Turkey and Israel: An Evolving Partnership, ACPR Policy Paper, No. 47, 1998, <http://www.acpr.org.il/pp/pp047-meltemE.pdf>.
 203. Nachmani Amikam, What Says the Neighbour to the West? On Turkish-Greek Relations, TURKEY in World Politics: An Emerging Multiregional Power, ed. Barry Rubin and Kemal Kirişçi, Lynne Rienner Publishers 2001.

204. Nachmani Amikam, Turkey: facing a new millenium: coping with intertwined conflicts, Manchester University Press, 2003.
205. Nativi Andy, Ankara bulks up industry and export, Defense Technology International, Vol. 1, No. 7, September 2007.
206. Oğuz Mustafa, Turkey's Defense Policy Making Process and its Effects on Weapons Procurement, A thesis submitted to the Graduate School of Social Sciences of Middle East Technical University, September 2009.
207. Oznobishev Sergey, Missile Proliferation and Missile Technologies, http://icnnd.org/Documents/Oznobishev_03vi09.pdf.
208. Özbudun Ergun, Democratization Reforms in Turkey, 1993-2004, Turkish Studies, Vol. 8, No. 2, June 2007.
209. Özdag Ümit, Aydınli Ersel, Winning A Low Intensity Conflict: Drawing Lessons From The Turksih Case, Democracies and Small Wars, ed. Efraim Inbar, London, Frank Cass 2003.
210. Prager Rachel, Turkish-American Relations: Historical Context and Current Issues, Georgetown University 2003, <http://www.tusiad.us/content/uploaded/Prageltusiadsubmission.pdf>.
211. Safrastyan Ruben, The Concept of Eurasia and Turkey's Regional Strategies, 24.05.2005, <http://www.globalpolitician.com/2761-turkey>.
212. Sakallioğlu Umit Cizre, The Military and Politics: A Turkish Dilemma, Armed Forces in the Middle East: Politics and Strategy, ed. Barry M. Rubin, Thomas A. Keaney, Frank Cass Publishers, 2002.
213. Salmoni Barak, Turkey's Summer 2003 Legislative Reforms: EU Avalanche, Civil-Military Revolution, or Islamist Assertion?, Strategic Insight, Vol.3, issue 9 (Sept. 2003), <http://www.ccc.nps.navy.mil>.
214. Sami Türk Hikmet. Turkish Defense Policy. The Washington Institute For Near East Policy, March 3, 1999, <http://www.washingtoninstitute.org/media/samiturk.htm>.
215. Sariibrahimoğlu Lale, Turkey confident of stop-gap deal for US AH-1Ws, Jane's Defence Weekly, vol.46, issue 25, June 2009.

216. Sergei Kandaurov, Russian Arms Exports to Greece, Cyprus and Turkey, Moscow Defense Brief, <http://mdb.cast.ru/mdb/2-2001/at/raegct/>.
217. Shaw Ed, The Sky is the Limit: Turkish Air Force Modernization, The DISAM Journal, Spring 1995.
218. Sönmezoğlu Faruk, Turkey and the World in the 21st Century, Turkish Foreign Policy in Post Cold War Era, ed. Bal Idris, USA, BrownWalker Press, 2004.
219. Şahin Afşin, Çetinkaya Murat, New Evidence for Turkey on the Relationship between Defense Spending and Aggregate Output, European Journal of Social Sciences – Volume 13, Number 3, 2010.
220. Tatli Erdal, Turkey Turns Cold to European Defense: Implications for Western Security, The Washington Institute for Near East Policy, Policy Watch #1376, June 2 2008, 3 p.
221. Tolbert Steve, Defense Industrial Cooperation, The DISAM Journal, Spring 1995.
222. Turkey's Gendarmerie: Reforming a Frontline Unit in the War on Terrorism; <http://www.jamestown.org>, November 25, 2008.
223. Udum Şebnem, Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defence, Turkish Studies Institute, Vol. 4, N. 3, 2003.
224. Uslu Nasuh, The Turkish-American Relationship Between 1947 and 2003: The History of a Distinctive Alliance, Nova Science Publisher Inc., New York, 2003.
225. Uslu Nasuh, The Cooperation Amid problems: Turkish-American Relations in the 1980s, The Turkish Yearbook of International Relations, Ankara Universitesi, Cilt:27, 1997, <http://dergiler.ankara.edu.tr/dergiler/44/1569/17034.pdf>.
226. Uslu Nasuh, Turkish foreign policy in the post-cold war period, New York: Nova Publishers, 2004.
227. USAK Yearbook of International Politics and Law 2009, ed. S. Laçiner, M. Özcan ets., International Strategic Research Organization, Ankara, USAK 2009.

228. Yeşilada Birol, Turkish Foreign Policy Toward the Middle East, Political and Socioeconomic Transformation of Turkey, Ed. by Atila Eralp, Muharrem Tünay, Birol Yeşilada, Praeger Publisher, Westport, 1993.
229. Weitz Richard, Reducing its Dependence on Foreign Arms Suppliers, Turkey Enhances Its Strategic Autonomy, Turkey Analyst, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program Joint Center, Vol. 3, No. 14, 2010, <http://www.silkroadstudies.org/new/inside/turkey/2010/100830B.html>.
230. Zanotti Jim, Turkey-U.S. Defense Cooperation: Prospects and Challenges, Congressional Research Service, April 8, 2011.

231. اورکلی ج، استراتژی امنیت ملی ترکیه، شماره ۷/۳، وزارت فرهنگ و آموزش عالی، پڑو ہشکده مطالعات راہبردی، تهران، ۱۳۸۰، ۱۸ ص.

Պարբերականներ

232. Akademik Incelemeler Dergisi-2012
233. Aksiyon-2007, 2012
234. Akşam-2005, 2006, 2009, 2011
235. Aselsan-2007-2009
236. Atatürk Yolu Dergisi-1990
237. Bugün-2013
238. Cumhuriyet-2008, 2013
239. Hürriyet-2005-2013, 2014
240. Hürriyet Daily News-2000, 2009-2011
241. Milliyet-2005-2009, 2012
242. Ortadoğu-2005
243. Radikal-2004-2006, 2008, 2009-2012
244. Sabah-2003, 2005-2006, 2008-2013

245. Savunma ve Havacılık-2010-2012
246. Sözcü-2013
247. Star-2007-2009, 2011, 2013
248. Takvim-2010
249. Taraf-2009-2012
250. Tercüman-2009
251. Today's Zaman-2008
252. Turkish Daily News-2006-2008
253. Vatan-2010, 2012
254. Yeni Şafak-2003, 2007-2011
255. Zaman-2006, 2008-2011

256. Առաւիտ-2008
257. Դրօշակ-2010
258. Հայ զինվոր-1999, 2008
259. Հայկական բանակ-2006, 2010
260. 21-րդ դար-2006-2010

261. Взгляд-2009
262. Востокведный сборник-2001
263. Зарубежное военное обозрение-1997, 2009
264. Независимое военное обозрение-2003, 2009-2010
265. Проблемы национальной стратегии-2010
266. Центральная Азия и Кавказ-2001, 2003, 2009, 2011

267. Alternatives: Turkish Journal of International Relations-2005
268. Defense Technology International-2007
269. Defence Turkey-2007-2008
270. Defense Daily-1990

271. Eurasian Studies (TIKA)-1995
272. European Journal of Social Sciences-2010
273. European Journal of Political Research-2005
274. Foreign Affairs-2006
275. Jane's Defence Weekly-2009
276. Journal of International Affairs-2000
277. Insight Turkey-2008
278. International Business Publications-2007
279. Middle East Review of International Affairs (MERIA)-1997-1998, 2001, 2004
280. Middle East Quarterly-2002, 2011
281. Middle East Series-2005
282. Moscow Defense Brief-2001
283. Parameters-2000
284. Perceptions, Journal of International Affairs-1996, 1998-1999
285. Policy Watch-2003
286. Research Journal of International Studies-2008
287. Savunma Sanayii Gündemi-2007-2009
288. Security Dialogue-2000
289. Strategic Insight-2003
290. The DISAM Journal-1995
291. The Turkey Analyst-2010
292. Turkish Studies-2003, 2007
293. Undergraduate Research Journal, The University of Central Florida-2007
294. World Politics-1960

Լրատվական գործակալություններ

295. Արմենպրես
296. Regnum
297. HaberTürk
298. Anadolu

Պաշտոնական կայքեր

- 299. <http://www.ssm.gov.tr> (Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության պաշտ. կայք)
- 300. <http://www.sasad.org.tr> (Թուրքիայի ռազմաարդյունաբերողների միավորման պաշտ. կայք)
- 301. <http://www.tsk.mil.tr> (Թուրքիայի ՋՈՒ Գլխավոր շտաբի պաշտ. կայք)
- 302. <http://www.msb.gov.tr> (Թուրքիայի Ազգային պաշտպանության նախարարության պաշտ. կայք)
- 303. <http://www.tubitak.gov.tr> (Թուրքիայի Գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդի պաշտ. կայք)
- 304. <http://www.tskgv.org.tr> (Թուրքիայի ՋՈՒ զարգացման հիմնադրամի պաշտ. կայք)
- 305. <http://dpt.gov.tr> (Թուրքիայի պետական պլանավորման կազմակերպության պաշտ. կայք)
- 306. <http://www.jandarma.gov.tr> (Թուրքիայի Ժանդարմերիայի գլխավոր հրամանատարության պաշտ. կայք)
- 307. <http://www.tika.gov.tr> (Թյուրքական համագործակցության և համակարգման գործակալության պաշտ. կայք)
- 308. <http://www.mit.gov.tr> (Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության պաշտ. կայք)

Թուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունների կայքեր

- 309. <http://www.fnss.com.tr>
- 310. <http://www.nurolmakina.com.tr>
- 311. <http://www.aselsan.com.tr>

- 312. <http://www.havelsan.com.tr>
- 313. <http://www.kocsavunma.com>
- 314. <http://www.mkek.gov.tr>
- 315. <http://www.sage.tubitak.gov.tr>
- 316. <http://www.roketsan.com.tr>

Լրատվական-վերլուծական կայքեր

- 317. <http://www.haber3.com>
- 318. <http://www.haber7.com>
- 319. <http://www.turkishpress.com>
- 320. <http://www.cnnturk.com>
- 321. <http://www.etikhaber.com>
- 322. <http://www.netizle.tv>
- 323. <http://www.izvestia.ru>
- 324. <http://www.army-guide.com>
- 325. <http://www.armyrecognition.com>
- 326. <http://www.army-technology.com>
- 327. <http://www.caat.org.uk>
- 328. <http://www.acig.info>
- 329. <http://www.eurasiacritic.com>
- 330. <http://www.defensenews.com>
- 331. <http://www.aktifhaber.com>
- 332. <http://www.kontrgerilla.com>
- 333. <http://istihbaratonline.com>

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ
ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ**

Համակարգչային ձևավորումը՝ **Կ. Չալաբյանի**
Կազմի ձևավորումը՝ **Մ. Լալայանի**
Տեխ. խմբագրումը՝ **Լ. Հովհաննիսյանի**

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ 22,5:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

Լևոն Հովսեփյան-Պատմական գիտությունների
թեկնածու, թուրքագետ: Երեք մենագրություննե-
րի և ավելի քան երկու տասնյակ գիտական հոդ-
վածների հեղինակ է: Զբաղվում է Թուրքիայի ար-
տաքին քաղաքականության, պաշտպանության և
անվտանգության ոլորտների հիմնախնդիրների
ուսումնասիրությամբ: